

5-99

h2

Հ
Ե
Ն
Ե
Ր



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

К. М. МУРАДЯН

ГРИГОРИЙ
НАЗИАНЗИН
В
ДРЕВНЕАРМЯНСКОЙ
ЛИТЕРАТУРЕ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1983

Ն Ն Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1722 թ. Կ. Պոլսում լույս տեսավ Գրիգոր Նազիանզացու «Ի սուրբ ծնունդն Քրիստոսի» ճառը՝ «Գիրք և ճառ հոգեշահ» ընդհանուր խորագրի տակ¹: Հրատարակիչը թեև որևէ հաղորդում չի անում հայերեն հին թարգմանությամբ հայտնի այդ հուշարձանի և նրա հեղինակի մասին (որա համար պետք էին ծանոթագրություններ և առաջաբան), այդուհանդերձ՝ հրատարակումն ինքնին դիտելի է իբրև Գրիգոր Նազիանզացու գրական վաստակի նկատմամբ եղած հետաքրքրության դրսևորում: Այնուհետև, որքան մեղ հայտնի է, մինչև նոր հայկազյան բառարանի հանդես գալը Նազիանզացուն վերաբերող, նրա մատենագրական ժառանգությունն արժարժող որևէ հրատարակում չի կատարվել մեզանում:

Այս առումով համեստ է նաև բառարանագիրների աշխատանքը. նրանք ձեռքի տակ ունեցել են Նազիանզացու «Առ ոքս» և «Քրիստոս ծնեալ» գիրք-ժողովածուները և բառական հղում-բացատրությունները բնականաբար կատարել են միայն այդ գրքերի սահմաններում: Ուստի և նշված գրքերի բովանդակության կամ դրանց հեղինակի մասին պատմաբանասիրական հաղորդում գտնելու ակնկալությունը մեծ չպետք է լինի: Այդուհանդերձ՝ բառարանագիրները թողել են մեկ-երկու ընդհանուր դիտողություն օգտագործած ձեռագիր գրքերի հայերեն թարգմանությունների բնույթի ու ժամանակի մասին: Այսպես, օրինակ, նրանք գտնում են, որ «Առ ոքս» ճառաշարքը «է թարգմանութիւն հին՝ կէս մի հայկաբան, և կէս մի հելլենախօս»²: Իսկ ինչ վերաբերում է «Քրիստոս ծնեալ» գրքին, բառարանագիրներն այն համարում են «գործ առաջին թարգմանչաց՝ քաջ հայկաբան՝ խառն ընդ հելլենախօսութեան» (ՆՀԲ, Ա, 9):

Այս կարծիքների ընդունելի կամ վերապահելի լինելուց անկախ, բառարանագիրների հիմնական նպաստը Նազիանզացու երկու գիրք-ժողովածուների բառագանձի վկայակոչություն-քննությունն էր, որով փաստորեն կատարվում էր ճառերի բազմաթիվ հատվածներ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելու փորձ:

¹ Գրքում հրատարակված է նաև նույն ճառի լուծմունքը: Հրատարակության նկարագրությունը տե՛ս սույն աշխատության համապատասխան բաժնում:

² ՆՀԲ, Ա, Առաջաբան, էջ 9:

Նազիանզացու կյանքի ու գործունեութեան, նրա մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունների առաջին ամենասեղմ գնահատությունը պատկանում է Գ. Զարբհանալյանին³: Մատենագրի ուսումնառության և գործունեության ընդհանուր պատկերը ուրվագծելուց հետո հետազոտողը անդրադառնում է նրա որոշ ճառերի (Ի պասքա, Առ Յուլիանոս, Առ հայրն իւր, Առ Գրիգոր Նիւսացի, Առ Կեսարոս, ի Գորգոնիա քոյր իւր, Յաղագս աղքատասիրութեան, ի Բասիլիոս Կեսարացի և այլն) և մեկ-երկու պարբերությամբ գնահատում դրանք:

Տասնամյակներ անց, հիմնականում Հայկազյան բառարանագիրների հրատարակած օրինակ-հղումների համեմատության եղանակով, Նորայր Բյուզանդացին գրեց «Մովսէս Խորենացի եւ թարգմանութիւնք իւր»⁴ ուսումնասիրության «Մովսէս Խորենացի եւ Գրիգոր Նազիանզացի» բաժինը⁵: Ն. Բյուզանդացու հրատարակումը Նազիանզացու ճառերը հայագիտական խնդիրների առնչությամբ քննելու առաջին փորձն էր, թեև հետազոտողի նպատակից դուրս էր մասնավոր ուսումնասիրությունը: Նա թվարկում է թարգմանական մատենագրության յոթ հուշարձան (այդ թվում և Գր. Նազիանզացու ճառերը) և գտնում, որ «այս թարգմանութիւնք աշխատասիրեալք են ի ձեռն Խորենացւոյ»⁶: Ն. Բյուզանդացին վկայակոչում է Խորենացու «Հայոց պատմության» և Նազիանզացու ճառերի ընդհանրության տասնյոթ օրինակ, որոնք այսօր էլ կարևոր են սկզբնավորման շրջանի հայ մատենագրության վրա Նազիանզացու ճառերի ազդեցություններն ու հետքերը գնահատելիս:

Գրիգոր Նազիանզացու մասին հաջորդ տեղեկանքը կազմել է Գ. Զարբհանալյանը⁷: Հայագետի հիմնական նպատակը Նազիանզացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների մատենագիտական ցանկի հրատարակումն էր, ուստի և խնդրի այդ շրջանակներում են կատարվել մասնակի բացատրություններն ու այս կամ այն գործին վերաբերող անհրաժեշտ ծանուցումները: Հետազոտողը Նազիանզացուն ներկայացնում է մեկ պարբերությամբ, ուր, Նորայր Բյուզան-

³ Տե՛ս նրա՝ «Պատմութիւն մատենագրութեան յունաց, հռովմայեցոց և հարց եկեղեցւոյ», Վենետիկ, 1856, էջ 740—753:

⁴ Տե՛ս «Քննասէր», Ստոքհոլմ, 1887, պրակ Բ, էջ 29—63:

⁵ Նույն տեղում, էջ 56—62: Ն. Բյուզանդացու՝ «որչափ ինչ կարելի է ի Ստոքհոլմ նստելով՝ առանց գրչագրաց և առանց ամենայն տպագրաց՝ այսպիսի կարեւոր քննութիւն մի ի գլուխ հանել» դիտողությունը վերաբերում է նշված ուսումնասիրությանն ընդհանրապես (տե՛ս նշվ. աշխ., էջ 34):

⁶ Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ 32:

⁷ Տե՛ս Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1889, էջ 346—358:

դացու հրապարակած ընդհանրության օրինակները նկատի ունենալով, ընդունում է, որ Խորենացին է նազիանզացու ճառերի թարգմանիչը մեղանում:

Զարբհանալյանի մատենագիտական ցանկը (քառասուներկու անուն) կազմվել է հայերեն ձեռագրական հավաքածուների այն ժամանակվա հնարավորության սահմաններում, ուստի և, հասկանալի պատճառով, ցանկից դուրս են մնացել առանձին ճառեր, թղթեր և շափածո ստեղծագործություններ:

Իր բնույթով նորայր Բյուզանդացու հրապարակումն է հիշեցնում Գր. Խալաթյանցի «Մովսէս Խորենացի և իւր աղբիւրները» հոդվածը⁸: Այն վերաբերում է նազիանզացի-Խորենացի առնչակցությանը և պարունակում է նմանության երեսունվեց օրինակ (ներառյալ Բյուզանդացու բացահայտածները): Խալաթյանցի քննությունն ունի երկու առավելություն. ա) համեմատությունը կատարվել է ըստ էջմիածնի և Վիեննայի Մխիթարյանների ձեռագրատների որոշ գրչագրերի, բ) հրապարակումն օժտված է նազիանզացուն ներկայացնող սեղմ առաջաբանով: «Խորենացու փոխառությունների ծագման սկզբնապատճառները» իր քննության նպատակից դուրս համարելով հանդերձ՝ Գր. Խալաթյանցը մերժեց նորայր Բյուզանդացու վարկածը. «համամիտ շենք յարգելի հայկաբանի այն ժամանակ յայտնած կարծիքին—հետևցնել այդ փոխառություններից՝ յիշեալ հեղինակների Խորենացու ձեռքով թարգմանուած լինելը»⁹:

Գր. Խալաթյանցը նազիանզացի-Խորենացի առնչակցությանը երկրորդ անգամ անդրադառնում է 1903 թ. հրապարակած իր մեկ այլ աշխատությամբ¹⁰: Հետազոտողը այս անգամ նազիանզացու «Ի հայրն իւր», «Յինքն և ի բանս երկրորդ», «Ի քոյրն իւր» և «յԱթանասիոս եպիսկոպոս Աղէքսանդրացի» ճառերից եկող ընդհանուր բառեր ու արտահայտություններ է մատնացուցում Խորենացու «Ողբ»-ում¹¹: Սակայն այս

⁸ Տե՛ս «Արարատ», 1897, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 531—539:

⁹ «Արարատ», 1897, էջ 531: Նազիանզացի («Առ որս») Խորենացի ընդհանրության երկու օրինակ էլ հղում է Ն. Ակինյանը (տե՛ս նրա «Քրիստոնէութեան մուտքը Հայաստան և Վրաստան», Վիեննա, 1949, էջ 137):

¹⁰ «Армянские Аршакиды» (часть II, материалы), М., 1903, стр. 140—143.

¹¹ Հավանաբար Գր. Խալաթյանցի սույն հրապարակումները նկատի ունենալով է, որ հետագա հայագիտական գրականության մեջ, առանց որևէ օրինակ մատնացուցելու, երբեմն հիշատակվում է Գրիգոր Նազիանզացու ճառերից Մովսէս Խորենացու օգտվելու պարագան (տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 17, Պ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ—ԺԷ դդ.), Երևան, 1969, էջ 16) և այլն:

դեպքում էլ վկայակոչված օրինակների ընդհանրութեան բնույթի հետ կապված որևէ քննութիւն չի կատարում:

Հայագետ Ե. Տեր-Մինասյանն իր պատմաբանասիրական հետազոտութիւններում տարբեր առիթներով հիշատակում է Գրիգոր Նազիանզացուն, իսկ 1908 թ. լույս տեսած «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն» աշխատութեան մեջ, մեկ էջի սահմաններում, ներկայացնում է նրա կյանքի ու գործունեութեան հիմնական շրջանները: Նա փաստորեն վերաշարադրում է Նազիանզացու «Վարքի» հրատարակված տարբերակի հաղորդումները՝ ժամանակագրական նույն հաջորդականութեամբ:

Աստվածաբանութեան քաջագիտակ Կ. Տեր-Մկրտչյանը «Կնիք հաւատոյ»¹² ժողովածուի ընդարձակ ներածականում անդրադառնում է նաև Գրիգոր Նազիանզացուն: Նախորդ հայագետների նման նա համառոտակի հիշեցնում է Նազիանզացու ուսումնառութեան և եկեղեցական գործունեութեան հայտնի դրվագները, հիշատակում նրա ճառերի, ինչպես նաև որոշ թղթերի և շափածո գործերի հայերեն թարգմանութեան մասին: Սակայն իրականում նշված հրատարակութեամբ Նազիանզացու ճառերի նոր ու ավելի ընդարձակ հատվածներ հրատարակ եկան: Հրատարակիչը նյութերի ընտրութիւնը կատարել էր Մխիթար Այրիվանեցու Ճառնետրից (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1500): Դրանք մեծ ու փոքր քաղվածքներ են հիմնականում «Առ որս» և «Քրիստոս ծնեալ» գրքերից¹³:

Ընդհանուր առմամբ սրանք են այն բնագրական հրատարակումներն ու հետազոտութիւնները, որոնցում Նազիանզացու ժառանգութիւնից քաղումներ կամ դրանց հեղինակի գնահատութեան օրինակներ կարելի է գտնել:

Կան հայագիտական հետազոտութիւններ էլ, որոնցում Նազիանզացին հիշատակվում է ինչ-որ խնդրի քննութեան առիթով կամ հատված-համադրութեան թելադրանքով: Այսպես, Ն. Ակինյանը «Դաւիթ վարդապետ Քորայրեցու» գրական և մեկնողական վաստակը գնահատելիս անդրադառնում է նաև Նազիանզացուն և նրա «Քրիստոս ծնեալ» գրքի հայերեն մեկնութիւններին¹⁴: Վ. Հակոբյանը դիտողութիւններում Նազիանզացուն վերագրվող կանոնների մասին: Նա մասնավորապես նկատում է, որ «կեղծ» բնորոշմամբ հայտնի այդ «կանոնախումբը

¹² «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ», հրատարակութիւն Կարապետ Եպիսկոպոսի, ս. էջմիաճին, 1914, էջ XLV—XLVI:

¹³ Նույն տեղում, էջ 31—40, 276, 287, 309—310, 349—353:

¹⁴ Ն. Ակինեան, Մատենագրական հետազոտութիւններ, Ա, Վիեննա, 1922, էջ 54—63:

հանդես է եկել IV դարում՝ մինչև 431 թ. Սփեսոսի ժողովրդ¹⁵: Ի վերջո՝ Գ. Մանուկյանը «Արիստակէս վարդապետի ասացեալ՝ Ի նոր կիրակէն» ճառի հեղինակային պատկանելութիւնը ճշտում է Նազիանզացու համանուն գործի և Արիստակէս Լաստիվերցու Պատմութեան որոշ հատվածների համադրութեան եղանակով¹⁶, ուստի և այդ առիթով համառոտ վերլուծութեան է ենթարկում Նազիանզացու ճառը, դիտելով վերջինիս հետքերը Լաստիվերցու երկում¹⁷:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք ներկայացված հետազոտութիւններում մեզ հետաքրքրող խնդրի արտացոլումները, ապա պիտի նկատել, որ դրանք հիմնականում ընթացել են երկու ուղղութեամբ. ա) Նազիանզացու «Վարքի» հրապարակված տարբերակից նույնութեամբ գրքից դիրք են փոխանցվել կենսագրական որոշ դրվագներ, բ) հրապարակվել են Նազիանզացի-Խորենացի առնչակցութեան օրինակներ: Ասում ենք «օրինակներ», որովհետև այդ կապակցութեամբ որևէ քննութիւն չի կատարված: Եղած գրականութեան մեջ իր բնույթով առանձնանում է Գ. Զարբհանալյանի մատենագիտական տեղեկանքը:

Բյուզանդական մատենագրութեան նշանավոր ներկայացուցչի և նրա գրական ժառանգութեան նկատմամբ հետաքրքրութիւնը մեզանում ձևավորվել է հայոց հին գրականութեան սկզբնավորման շրջանում և շարունակվել ամբողջ միջնադարի ընթացքում: Դրա լավագույն ապացույցը նրա գրական ժառանգութեան հայերեն թարգմանութեան առկայութիւնն է, ինչպես նաև դրանց արձագանքը՝ սկզբնավորման և հետագա շրջանի հայ մատենագիրների գործերում: Նազիանզացու երկերի նկատմամբ եղած տեղական ու ընդգրկուն հետաքրքրութեան ապացույցներից մեկն էլ դրանք բովանդակող ձեռագրերի պատկառելի քանակութիւնն է: Պահպանվել են Նազիանզացու ոչ միայն գրական ժառանգութեան, այլև «Վարքի» տասնյակ ընդօրինակութիւններ: Դրանց համեմատական քննութիւնը հնարավորութիւն է տալիս լրացնելու և վերանայելու ավանդական դարձած հաղորդումները: Այս առումով օգտակար շատ լրացում-ճշգրտումներ են պարունակում Նազիանզացու թղթերը, մանավանդ ինքներգական և կենսագրական բնույթի նրա շափածո ու արձակ ստեղծագործութիւնները:

¹⁵ «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրութեամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1971, էջ LXXI—LXXII:

¹⁶ Գ. Մանուկյան, Արիստակէս Լաստիվերցի, Երևան, 1977, էջ 263—273:

¹⁷ Նազիանզացու հայերեն թարգմանութիւնները հայոց հին գրականութեան առնչութեամբ հետազոտելու առումով հիշատակելի է մեր «Древнеармянский перевод „Эпитафий“ Григория Назианзина» հրապարակումը (տե՛ս «Кавказ и Византия», II, Ереван, 1980, с.р. 155—161):

Հայերեն գրչագրերի նյութերի համադրութեան եղանակով հնարավոր է ճշտել նազիանզացուն վերագրվող գործերի (ճառեր, հարցումներ) հեղինակային պատկանելութեան խնդիրը, ուրվագծել «երեք մեծ կապադովկացիների» մատենագրական վաստակի բնագրային փոխանցումների ենթադրվող սահմաններն ու փոխադարձ կապը: Հիշյալ խնդիրներին անդրադառնալիս աշխատել ենք գտնել հայերեն թարգմանութեամբ պահպանված այն բնագիրը, որից կարող էին առաջանալ մնացած խմբագրութեաններն ու վերագրվող տարբերակները: Բանասիրական այդ կարգի ճշգրտումներ կատարելիս հաճախ դիմել ենք հայ մատենագրութեամբ ավանդված նյութին, որի նշանակութեանը բավականաչափ ծանրակշիռ է:

Նազիանզացու ճառերի՝ հայկական միջավայրում կազմված գիրք-ժողովածուները և դրանց խմբագրութեանները գնահատելիս աշխատել ենք լիարժեք օգտագործել ձեռագրական-մատենագիտական առկա նյութը, այլև պատճառաբանել ժողովածուները տարբեր խմբագրութեաններով ունենալու անհրաժեշտութեանը: Քաղում-հղումների եղանակով վկայակոչել ենք այդ նպատակին ծառայող գրեթե բոլոր հիմնական հիշատակարանները, հիշատակագրութեանները և մյուս գրառումները: Հեղինակի քառասունհինգ ճառերում արժարժված խնդիրները մեկամեկ ներկայացնելու անհրաժեշտութեան շտեմանելով՝ աշխատել ենք դերանցապես ծանրանալ այն գործերի վրա, որոնցով կարելի է այս կամ այն գիրք-ժողովածուի մասին ընդհանուր պատկերացում կազմել:

Գրիգոր Նազիանզացու մատենագրական ժառանգութեան հանդեսը հայկական միջավայրում եղած լայն հետաքրքրութեան լավագույն ապացույց են մեկնութեանները: XVIII դ. առաջին կեսի մատենագիր Մեսրոպ Գանձակեցին խոստովանում է, որ ջանացել է հասկանալ նազիանզացուն, սակայն «յընթեռնուն ոչ կարէի իմանալ զօրութիւն սորա»: Այդ նշանակում է, թե դրանց մեկնութեամբ կարող էին զբաղվել առավել հմուտ մատենագիրներ: Մեկնութեանների, պատճառների և լուծմունքների Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագրերի համեմատութեանը և ըստ խմբերի դասդասումը ցույց տվեց, որ դրանց հեղինակները (Հովհաննես Սարկավազ, Ներսես Շնորհալի, Վարդան Հաղբատեցի, Եղիա Ասորի, Դավիթ Քոբայրեցի, Գրիգոր Աբասյան, Մխիթար Գոշ և այլք) միաժամանակ նազիանզացու մատենագրական ժառանգութեան խորագիտակ գնահատողներն են մեզանում:

Նազիանզացու մատենագրական ժառանգութեան հայերեն մեկնութեանները քննելիս հիմնականում աշխատեցինք ամփոփ տեսքով ներկայացնել ձեռագրական նյութն իր բոլոր առնչակցութեաններով: Բնա-

կանաբար, քննության միջոցին առաջացան բանասիրական անհրաժեշտ համադրության բազմակի օրինակներ, որոնց օգնութեամբ հնարավոր դարձավ պատկերացում կազմել մեկնությունների հայ մատենագրության մեջ ունեցած դերի ու նշանակության մասին: Քննվող նյութի մատենագիտական տեղեկանքը ամբողջական ներկայացնելու նպատակով խմբավորեցինք բոլոր այն գրչագրերը, որոնցից ուղղակի օգտվելու հնարավորություն ենք ունեցել: Ինչ վերաբերում է մեկնությունների բուն նյութի մատուցմանը, ապա նկատելի է, որ հիմնական քաղում-հղումների եղանակով շրջանառության մեջ ենք դրել մուտք-առաջաբանների դրույթները որպես հայ մեկնիչ մատենագիրների ուղղակի գնահատություններ: Հասկանալի է, որ ճառերի առանձին հատված-միավորների, արտահայտությունների ու կապակցությունների մասնավոր բացատրությունների վրա այս առումով հատուկ ուշադրություն չէինք կարող դարձնել: Այս ամենին նայել ենք որպես ժամանակի կրթական շրջանների համար պատրաստվող հատուկ նյութի, որի հեղինակներն ու հոգացողները հայ մատենագրության երևելի անուններ էին: Բավական է հիշել թվարկված անունների ցանկը, որպեսզի պարզ դառնա նազիանզացու ճառերին վերաբերող մեկնությունները հեղինակելով և ձեռքից-ձեռք ընդօրինակելով Հովհ. Սարկավագից Մեսրոպ Գանձակեցի հասցվեր: Հասկանալի է, որ միայն մշտական անհրաժեշտությունը կարող էր պատահել նման տեական ուշադրություն մեղանում:

Գրիգոր Նազիանզացուն վերաբերող հայ մատենագիրների տեղեկությունները հավաքելիս պարզվեց, որ եղած հրատարակությունների այդօրինակ հաղորդումների թերին լրացվում, նազիանզացու կյանքի ու գործունեության պատկերն առավել ամբողջական է դառնում ձեռագիր նյութերի նոր հայտնաբերումների շնորհիվ: Ինչ ժանրով էլ արտահայտված լինեն դրանք, բովանդակության առումով միասնական են դառնում, թեև վերաբերում են մերթ «երեք մեծ կապաղովկացիներին» առհասարակ, երբեմն էլ՝ նազիանզացուն մասնավորապես: Նազիանզացու առանին գործունեությունը, մանավանդ դավանական խնդիրներին վերաբերող նրա ճառերն ու թղթակցություններն այնքան ընտանի են եղել հայ մատենագիրների համար, որ դրանցում հայազգի ուսանողությանը վերաբերող մեկ-երկու անհաջող արտահայտությունները կամ հանդիմանության հատվածները առանձնակի ուշադրության չեն առնվել:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Հայաստանում բյուզանդական նշանավոր մատենագրի գործերի նկատմամբ հետաքրքրությունն առաջացել է տակավին V դարում և շարունակվել ողջ միջնադարի ընթացքում: Պարզվեց, որ նազիանզացու ճառերը հայերեն թարգմանու-

թյամբ գիտեն Կորյունը, Խորենացին, Հովհան Մանդակունին, Կոմիտաս Կաթողիկոսը, Ստեփանոս Սյունեցին, Ասողիկը, Հովհաննես Սարկա-վազը, Գրիգոր Տղան, Ներսես Շնորհալին, Վարդան Այգեկցին և այլք: Նազիանզացու և նշված մատենագիրների ընդհանրության մեր ունեցած ոչ բոլոր օրինակները հնարավոր եղավ այստեղ հրապարակել կամ հրա-պարակվողները համապատասխան աղբյուրագիտական քննությամբ օժ-տել: Ընդամին՝ ընդհանրությունների մատենագիտություն կազմելը չի եղել մեր նպատակը, այլ գերազանցապես այն իրողությունների բա-ցահայտումն ու համադրությունը, որոնցով հնարավոր է թարգմանու-թյան ժամանակի, բնույթի, ազդեցության, գաղափարական-քաղաքա-կան հետաքրքրությունների շուրջ որոշակի պատկերացում կազմել: Այդ իմաստով եթե Կորյունի ծանոթությունը «Դամբանականին» թարգմա-նության ժամանակ է ճշտում, ապա Գրիգոր Տղայի և Վարդան Այգեկ-ցու լավատեղյակությունը Նազիանզացու թղթերին ապացույց է նրան-ցում եղած արժարժումների կենսունակության, այդ թվում և հայոց մի-ջավայրում «ընդդէմ երկաբնակաց և ամենայն հերձուածողաց» պալ-քարելիս:

Նազիանզացու երկերի հայերեն թարգմանությունների ուսում-նասիրությունը հայոց հին գրականության աղբյուրագիտական շատ խնդիրներ է պարզում, ուստի սույն մենագրությունը միտում է լուսա-բանելու և «զուտ հայագիտական» հարցադրումներ:

Այդուհանդերձ, հակված շենք կարծելու, թե ներկայացվող ուսում-նասիրության բոլոր հարցադրումներն են հավասարապես վերջնական լուծում ստացել: Հիմնականում անտիպ սկզբնաղբյուրների հիման վրա գրված ամեն մի ուսումնասիրություն, ինչպես և սույն մենագրությունը, ենթակա է ձեռագրական նոր հայտնաբերումներով պայմանավորված լրացում-ճշգրտումների, ինչպես նաև նորորակ փաստական սրբադրում-ների:

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՁԱՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ

IV դարի բյուզանդական նշանավոր մատենագիր Գրիգոր Նազիանդացին¹ սկզբնաղբյուրներում և մասնագիտական գրականության մեջ հավասարապես անվանվում է նաև Գրիգոր Աստվածաբան²: Անվան դուրահեռ ձևերի առկայությունը առանձին հրատարակություններում որոշ շփոթի հնարավորություն է ստեղծել³:

Նազիանդացու կյանքի ու գործունեության ուսումնասիրության համար կան մի շարք սկզբնաղբյուրներ: Դրանք են՝ նրա «Վարքը»⁴, Բար-

¹ Նազիանդացի անվանումը գրչագրերում հանդիպում է գրության ամենատարբեր ձևերով՝ Նազազացի, Նազիանդենցի, Անձիանձի, Ազազի, Անցիանցի, Ազիւզոյ, Աղիազու և այլն: Մեր օրերում երբեմն միաժամանակ կիրառվում են Նազիանդացի-Նազիազանցի ձևերը (տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1978, էջ 1345, հմմտ. էջ 1388): Ծիշտը վարքի բնագրում եղած Նազիանդացի գրությունն է, որին և հետևում ենք: Գրիգոր Նազիանդացու մանրանկար պատկերը տե՛ս ձեռ. № 6988, էջ 2ր «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա», Բ, կազմեց Հ. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 289բ, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Թեհրանի», կազմեց Հրաչեայ Աճառեան, Վիեննա, 1936, էջ 7ա:

² Աստվածաբան անվանումը հայկական աղբյուրներում ունի տարբեր բացատրություններ: Դրանցից հիմնականները երկուսն են՝ մեկը «Պատճառաց գրքի» հեղինակի հետևյալ մեկնաբանությունն է. «Գրիգորը բազումք էին... յաղագս այսորիկ Աստուածաբան ասելով նա առանձին ցուցանէ զսա որիշ յայլոցն» (ձեռ. № 1879, էջ 159ա, հմմտ. ձեռ. № 472, էջ 65բ): Առավել համոզիչ է Փարպեցու պատճառաբանումը՝ «յաղագս առաւելեալ ի նմա շնորհի ուղղափառ գիտութեան Աստուածաբան յորչորչեցաւ» («Ղազար Փարպեցոյ Պատմութիւն հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տիփլիս, 1904, էջ 192, հմմտ. ՆԶԲ, Ա. 321, Վ. Ըստկարեան, Եկեղեցական պատմութիւն, Վիեննա, 1872, էջ 154, Հոսսիկ Եպիսկոպոս, Անապատականներ և վանականութիւն, Վաղարշապատ, 1906, էջ 52):

³ Այսպես, Խորենացու («Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց», Տիփլիս, 1913, էջ 375), ինչպես նաև Ասողիկի հրատարակություններում («Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ս. Պետերբուրգ, 1885, էջ 422) Նազիանդացին և Աստվածաբանը տարբեր անձնավորություններ են դիտվել: Նույն կերպ է վարվել նաև Մ. Արեղյանը (տե՛ս Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 113, ծան. 13):

⁴ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են Նազիանդացու «Վարքի» մոտ երեք տասնյակ ամբողջական և թերի ընդօրինակություններ: Համեմատությունը ցույց է

սեղ Կեսարացու մասին իր իսկ գրած «Դամբանականը»⁵, ձեռնադրության առիթով ասված իր մի ճառը՝ «Յինքն եւ ի հայրն եւ ի ժողովուրդն պատասխանի յետ ձեռնադրութեան իւրոյ յերիցութիւն»⁶, ինքներգական բնույթի երկու ստեղծագործությունները՝ «Յինքն յագարակէ անդրէն ե-

տալիս, որ դրանք բաժանվում են երեք խմբի՝ ա) համառոտ խմբագրություն, բ) ընդարձակ խմբագրություն, գ) միաժամանակ երկու խմբագրություններից քաղված հատվածական ընդօրինակություններ: Հունարենում, ինչպես և սպասելի էր, կա մեկ վարք՝ Βίος τοῦ ἐν ἁγίοις πατρὸς ἡμῶν Γρηγορίου τοῦ θεολόγου, ἐπισκόπου Ναζιανζηνῶν. συγγραφείς ὑπὸ Γρηγορίου πρεσβυτέρου (տե՛ս Migne, Patrologia Graeca, t. 35, էջ 243—304): Հայերեն ձեռագրերի մի խմբում, որը վերևում կոչեցինք ընդարձակ խմբագրություն, ունենք հունարենին համապատասխան խորագիր և բովանդակություն. «Վարք եւ քաղաքավարութիւն սրբոյ հաւրն մերոյ Գրիգորի Աստուածարանի Ազիադու եպիսկոպոսի, զոր գրեաց քահանայն Գրիգոր Կեսարու Կապադովկեցոյ եկեղեցոյն, [զոր թարգմանեաց սուրբ դիտապետն հայոց Գրիգորիոս Վկայասէրն ի յունականէն ի մերս]» (ձեռ. № 993, էջ 136բ—146ա, հմմտ. ձեռ. № 1523, էջ 145ա—158բ, ձեռ. № 7489, էջ 54ա—62ա: Գ. Զարբհանալեան. Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 721): Այս ձեռագրախմբի հիման վրա կատարված հրատարակությունը հունարենին ոչ միշտ է համընթաց (հմմտ. «Վարք եւ վկայարանութիւնք սրբոց», Ա, Վենետիկ, 1874, էջ 284—316: Համառոտ խմբագրությունը տե՛ս էջ 278—283): Որոշ ձեռագրերում Գրիգոր Վկայասերը հանդես է գալիս ոչ թե թարգմանիչ, այլ պատվիրատու՝ «թարգմանեցաւ Պատմութիւն սուրբ և փառաւոր հայրապետիս Գրիգորի Աստուածարանի ի հինգ հարիւրերորդի յիսներորդի (=1101) թուականութեանս մերում, հրամանաւ նախասացեալ սուրբ և Վկայասէր հայրապետին Գրիգորի» (Բարկեն կարողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1957, էջ 15, հմմտ. Գառեգին Ա կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 283): Հավանաբար այս զուգահեռ վկայությունների թելադրանքով է, որ մասնագետները երբեմն հիշատակում են երկու կարծիքները միաժամանակ՝ «թարգմանէր կամ թարգմանել տուեր է» (Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 36) կամ պարզապես ընդունում են «յաւուրս Գրգիորի Վկայասիրի՝ վերակացութեամբ նորին» (ՆՀԲ, Ա, 19):

⁵ Տե՛ս «Кавказ и Византия», т. II, Ереван, 1980, էջ 161—217: Սույն բնագրից վկայակոչություններ կատարելիս, կրկնակի հղումից խուսափելու նպատակով նշելու ենք համապատասխան հատվածի պարբերությունը միայն, որը երկու դեպքում էլ նույնն է: Զեռքի տակ ունեցել ենք հունարեն հետևյալ հրատարակությունը. «Εἰς τὸν μέγαν Βασιλειον, ἐπίσκοπον Καισαρείας Καππαδοχίας, ἐπιτάφιος (տե՛ս PG, Migne, t. 36, էջ 493—605):

⁶ Տե՛ս ձեռ. № 1500, էջ 773բ—774ա, հմմտ. Վիեննայի ձեռ. № 217, էջ 105ա—107ա (տե՛ս «Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 550—551), Երուսաղեմի ձեռ. № 429, էջ 229—231 (տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», Բ, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղեմ, 1967, էջ 388), ձեռ. № 877, էջ 68—70 (տե՛ս Ն. Պողարեան, Մայր ցուցակ..., Գ, Երուսաղեմ, 1968, էջ 373), ձեռ. № 1414, էջ 42—45 (տե՛ս Ն. Պողարեան, Մայր ցուցակ..., Ե, Երուսաղեմ, 1917, էջ 71) և այլն:

կեանք»⁷, «Յինքն եւ ի բանս երկրորդ»⁸, ինչպես նաև թղթերը⁹, որոնցից քիչ բան է հայերեն թարգմանված կամ պահպանված:

Հայտնի է, որ Գրիգոր Նազիանզացին ծնվել է 328 թ.¹⁰, Նազիանդից¹¹ ոչ հեռու գտնվող Արիանզ¹² գյուղում (Կապադովկիա): Բայց քանի որ ուսումնառության հասակից սկսած մինչև իր կյանքի ավարտը ապրել ու աշխատել է Նազիանզում, նրա վարքագիրը ծննդավայր է դիտում Նազիանզ քաղաքը¹³:

Գրիգոր Նազիանզացու ծնողները եղել են հեղինակավոր ու հարգված անձնավորություններ: Այդ պարագան շի վրիպել նաև Նազիանզացու ուշադրությունից, ուստի մի առիթով նա գրել է՝ «մին արանց լեալ դարդ և միւսն՝ կանանց. և ոչ դարդ միայն, այլև առաքինութեան օրինակը»¹⁴:

7. Տե՛ս ձեռ. № 823, էջ 152ա—164ա, հմմտ. ձեռ. № 1500, էջ 874բ—877բ, ձեռ. № 6988, էջ 128ա—139բ, ձեռ. № 2615, էջ 79բ—86բ: Այլ օրինակներ կան նաև Վիեննայում (ձեռ. № 217, էջ 201ա—205բ), Երուսաղեմում (ձեռ. 429, էջ 446—455, ձեռ. № 1414, էջ 314—328), նոր Զուղայում (ձեռ. № 393, էջ 138ա—139բ) և այլուր:

8. Ձեռ. № 823, էջ 164ա—171ա, հմմտ. ձեռ. № 1500, էջ 877բ—879ա, ձեռ. № 6988, էջ 139բ—146բ, ձեռ. № 2615, էջ 86բ—91ա:

9 «Творения иже во святых отца нашего Григория Богослова», архиепископа Константинопольского, часть вторая, СПб., 1912, стр. 411—554

10 Ծննդյան թվականներ են առաջադրվել 326 (տե՛ս «Христианское чтение» СПб., 1886, էջ 317), 329, երբեմն էլ 330 թվականները (տե՛ս А. Агапит, Жизнь св. Григория Богослова архиепископа Константинопольского и его пастырская деятельность, СПб., 1870, стр. 6, Ф. Фаррар, Жизнь и труды св. отцов и учителей церкви, СПб., 1891, стр. 381, А. В. Круглов, Григорий Богослов, М., 1899, стр. 4—5, «Святой Григорий Богослов», сост. Н. Р., СПб., 1895, стр. 5, Вл. Цветков, Житие св. Григория Богослова, М., 1900, стр. 45):

11 «Որ հուպ է ի Կեսարիայ» («Սոկրատայ Սքրիպտիկոսի եկեղեցական պատմութիւն»), Վաղարշապատ, 1897, էջ 312, հմմտ. «զի Ազիազուն Կեսարիայ Կապադովկացուց երկիրն է, որ այժմ ասի Ղալսարիայ» (ձեռ. № 1466, էջ 2ա):

12 տե՛ս «Прибавление к творениям святых отцов», ч. I, М., 1843, стр. 6, «Христианское чтение». СПб., 1886, стр. 322, «Святой Григорий Богослов», СПб., 1909, стр. 3, «Творения иже во святых отца нашего Григория Богослова», հրատ. «Русский паломник» за 1912, стр. 3.

13 «Վարք եւ վկայարանութիւնք», էջ 285, հմմտ. էջ 278, PG, t. 35, էջ 245, «ἡ δευτέρα τῶν Καππαδοκῶν, πόλις δὲ Ναζιανζός»: Նազիանզացու «Վարքի» բնագրում և նրա հայերեն թարգմանություններում բացակայում է «եւ վասն զի մայր նորա արու զավակ ոչ ունէր...» սկսվածքով հատվածը, որը պահպանվել է համառոտ խմբագրությունում (տե՛ս «Վարք եւ վկայարանութիւնք», էջ 278, հմմտ. ձեռ. № 4803, էջ 94ա, ձեռ. № 8179, էջ 289ա, ձեռ. № 7357, էջ 255ա և այլն):

14 Ձեռ. № 4234, էջ 27բ, հմմտ. Ф. Фаррар, նշվ. աշխ., էջ 380—381:

Նրանք բավականաչափ ունևոր են եղել (Արիանոզ գյուղում կալվածք ունեին)¹⁵: Հայրը (նույնպես Գրիգոր) սկզբնական շրջանում եղել է հեթանոսական հավատի հետևորդ, բայց Նազիանզացու մոր՝ Նոնայի խորհրդով ու ազդեցությամբ ընդունել է քրիստոնեություն և «Հովիւ հանճարեղ հաստատեցաւ շնորհօք հոգւոյն սրբոյ յեկեղեցի Անձիան-ձու»¹⁶, իսկ նրա մայրը էր «սուրբ և ի սուրբ նախնեաց»¹⁷: Նրանք երկուսն էլ հավասարապես հոգածու էին երեխաների դաստիարակության, հիմնավոր կրթություն ապահովելու խնդրում¹⁸:

IV—V դդ. ուսումնառություն-դաստիարակության մասին խոսելիս նկատելու է, որ այն քրիստոնեության հետևորդ ընտանիքում ընթանում էր հիմնականում երկու ուղղությամբ՝ «հոգևոր՝ ընտանիքում, եկեղե-

¹⁵ Այդ մասին տե՛ս «Христианское чтение», 1886, էջ 317—318, հմմտ. Փ. Փարրար, նշվ. աշխ., էջ 379: Նազիանզացին երբեմն հոգս ու հետաքրքրություն է ի հայտ բերում հայրական ժառանգության հետ կապված իրավական առանձին խնդիրների նկատմամբ: Տե՛ս „Творения иже во святых отца нашего Григория Богослова“, часть вторая, СПб, 1912, թուղթ 30(105), հմմտ. թուղթ 53(20):

¹⁶ «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 286, հմմտ. PG, t. 35, էջ 248, „ἐπειτα δὲ καὶ ποιμὴν ἐπιστήμων τῆς Ναζιανζοῦ καταστάς Ἐκκλησίας“:

¹⁷ Նույն տեղում, հմմտ. PG, t. 35, էջ 248՝ „ἱερά τε καὶ ἐξ ἱερῶν τῶν προγόνων“:

¹⁸ Նազիանզացու ծնողներն ունեին երկու տղա և մի աղջիկ: Կրտսեր տղան՝ Կեսարիոսը նույնպես կրթված անձնավորություն է եղել: Ուսանել է Ալեքսանդրիայում, ուներ բժշկի մասնագիտություն: Վարել է դանազան պաշտոններ, եղել է Հուլիանոսի պալատական ավագ բժիշկը (այդ մասին տե՛ս «Христианское чтение», 1886, стр. 318, հմմտ. А. Агапунт, նշվ. աշխ., էջ 52), Փ. Փարրար, նշվ. աշխ., стр. 406. «ունէր զգիմոսական իշխանութիւն ի թագաւորացն, այսինքն ի վերայ շտեմարանաց դանձուցն» («Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 293): Նազիանզացին 361 թ. եղբորը գրած թղթով դժգոհում է Հուլիանոսի գահակալության օրոք պալատական ժառանգություն ընտրելու նրա վճռի դեմ (տե՛ս թուղթ 7(17): Մեկ այլ թղթում (ձեռ. № 966, էջ 294ա—բ) նա աստվածապաշտության խրատ է տալիս եղբորը և ավելի հաճախ աշխարհիկ կյանքից հրաժարվելու կոչ անում (տե՛ս թուղթ 22(16): Եղբոր մահվան առիթով (մահացել է 369 թ.) գրած «Դամբանականում» («Ի Կեսարիոս եղբայրն իւր», տե՛ս ձեռ. 1500, էջ 780 բ—783 բ, ձեռ. № 4234, էջ 12ա—25 բ և այլն) Նազիանզացին ստեղծել է օժտված ու կարող վաղամեռիկ մարդու կերպարը:

Նազիանզացու քույրը՝ Գորգոնիան, նույնպես կրթված և բարեպաշտ կին է եղել: Մահացել է 40 տարեկան հասակում: Տվյալ առիթով գրված Նազիանզացու մահախոսական-ճառում («Ի քոյրն իւր», տե՛ս ձեռ. № 1500, էջ 783 բ—786 բ, ձեռ. № 4234, էջ 25 բ—36 բ և այլն) վեր են հանվել նրա գործունեության բոլոր մանրամասները: Այլ բնորոշմամբ՝ Գորգոնիան «կուրաց աչք և մերկաց զգեստ և հիւանդաց բժիշկ և քաղցելոց կերակուր էր...»: Գորգոնիայի ավագ դուստրը (ունեցել է երեք աղջիկ) ամուսնացած է եղել գրասեր բարձրաստիճան զինվորականի հետ, որը և առաջինը ձեռնարկեց Նազիանզացու թղթերը ժողովածուի տեսքով հավաքելու գործը (տե՛ս А. Агапунт, նշվ. աշխ., стр. 96):

ցում, հաճախ նաև վանքում և գիտական՝ քերականների, ճարտասանների ու փիլիսոփաների դպրոցներում»¹⁹։

Գրիգոր Նազիանզացին սկզբնական կրթությունը (գրաճանաչության սահմաններում) ստացել է տնային պայմաններում՝ մոր և քեռու՝ Ամփիլոքիոսի օգնությամբ²⁰։ Այնուհետև, ինը տարեկանում Նազիանզացին հաճախում է Կեսարիայի դպրոցը²¹, ուր դասավանդում էին շատ նշանավոր ճարտասաններ և առհասարակ դպրոցը մեծ հեղինակություն էր վայելում։ Այդ մասին կան բազմաթիվ հավաստի սկզբնաղբյուր վկայություններ, որոնց թվում նաև Գրիգոր Նազիանզացու նկարագրությունը։ Ահա այն. «Ձայս ասեմ զերեւելիս եւ զմերս, վասն զի իմոց բանիցս սա առաջնորդ եւ վարդապետ է, որ ոչ ինչ նուազ բանից մայրաքաղաք, քան եթէ քաղաքաց, քան զորս գեր ի վերոյ կա եւ յորոց վերայ ունի զիշխանութիւն, զոր եթէ ոք ի բանիցն զաւրութենէ զրկիցէ ի բաց բառնայ եւ զառանձին զգեղեցկութիւն, վասն զի այլք ի քաղաքացն այլովքն զուարճանան պանծունաւք հնովք եւ կամ նորովք, որպէս թուի ինձ, զպատմութիւնսն ունելով եւ կամ զերեւելեացն բանիւն զծանաւթութիւն իբրեւ ի զէնսն եւ կամ յարարուածսն զնշանաւորսն» (Դամբ., ԺԳ)²²։

Ընդունելի է այն պնդումը, ըստ որի Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու ծանոթությունը տեղի է ունեցել Կեսարիայի դպրոցում ուսանելու տարիներին²³։ Այլոց հավաստիացումներին համընթաց՝ ունենք նաև Նազիանզացու գրառումն այդ մասին. «Նա (խոսքը Աթենքի մասին է—Կ. Մ.) ինձ զայրն ծանոյց կատարելապէս՝ եւ ոչ յառաջագոյն անծանաւթացեալ» (Դամբ., ԺԴ)²⁴։

¹⁹ В. Плотников, История христианского просвещения в его отношении к древней греко-римской образованности (տե՛ս «Православный собеседник», 1885, Казань, стр. 118).

²⁰ «Святой Григорий Богослов», СПб., 1909, стр. 6., հմմտ. «Святой Григорий Богослов», сост. Н. Р., СПб., 1895, стр. 6:

²¹ «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 287, հմմտ. PG, t. 35, էջ 248:

²² Աղոնցը իրական է նկատում Սերեոսի այն տեղեկությունը (տե՛ս «Պատմութիւն Սերէոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Արգարյանի, Երևան, 1979, էջ 158), ըստ որի Աղեքսանդրիայի, Աթենքի և այլ քաղաքների հետ իբրև գիտական կենտրոն հիշատակվում է Կեսարիան (տե՛ս Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948, էջ 501):

²³ Տե՛ս «Прибавление к творениям святых отцов», стр. 12—13.

²⁴ Հմմտ. ձեռ. № 1879, էջ 193 ա, «Христианское чтение», 1886, стр. 318. «Святой Григорий Богослов», 1909, стр. 6, А. Агапит, նշվ. աշխ., էջ 12. Կ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 35, ծան. 31:

Նազիանզացու ուսումնառութեան հետագա ընթացքի մասին վարքագիրը նկատում է. «յոյժ քաղծայր հոետորական իմաստից»²⁵, ուստի և «եկեալ յԱղէքսանդրիա և յայլ քաղաքսն»²⁶ մասնագիտանում էր ճարտասանութեան ուղղութեամբ, իսկ եղբայրը՝ բժշկութեան²⁷:

Հայագիտութեան մեջ իրարամերժ կարծիքներ կան Նազիանզացու Անտիոքում ուսանելու, մասնավորապես Լիբանիոսին աշակերտելու մասին: Չեռագրերում շափազանց տարածված է այն տեղեկութիւնը (ասված «երեք մեծ կապաղովկացիների» մասին), թե «Հանդիպեցան հանճարեղ վարդապետի, որում անուն էր Լիբիանոս և ուսան ի նմանէ զՀոմերոսի ստորոգութիւնսն ի հոետալորականս շարամեկնել»²⁸: Ն. Ակինյանը ընդունում է, որ Լիբանիոսի «աշակերտներու թուին մէջ նշանաւոր հանդիսացած էին Յովհ. Ոսկեբերան, Մեծն Բարսեղ, Գրիգոր Նազիանզացի»²⁹: Սույն տեղեկանքը վերաշարադրելուց հետո Հր. Աճառյանը գրում է. «Այս բոլորը հաստատելու համար ոչ մի դրական ապացույց կամ վկայութիւն չկա»³⁰: Ի լրումն Հր. Աճառյանի առարկութեան՝ Ե. Տեր-Մինասյանը գրում է. «Ոչ միայն այդ բոլորը հաստատելու համար մի դրական ապացույց կամ վկայութիւն չկա, այլև հիշված անձերից

²⁵ «Վարք եւ վկայարանութիւնք», էջ 287, հմմտ. PG, t. 35, էջ 248՝ «ῥητορικῆς ἐφιέμενος»:

²⁶ «Վարք եւ վկայարանութիւնք», էջ 287, հմմտ. PG, t. 35, էջ 248՝ «Κάκειθεν ἐπὶ τὴν Ἀλεξάνδρου ἀφικνεῖται»:

²⁷ Տե՛ս «Прибавление к творениям...», стр. 13, «Святый Григорий Богослов», стр. 67, հմմտ. А. В. Круглов, նշվ. աշխ., էջ 6: Ուսումնասիրողներից Ֆարարը գտնում է, որ հայրենի կեսարիա քաղաքում ուսումնառութեան ավարտից հետո Նազիանզացին «вступил в знаменитую тогда Кесарийскую риторическую школу в Палестине» (նշվ. աշխ., էջ 382), հմմտ. «Христианское чтение», СПб., 1886, стр. 325: Այդ մասին գրառում ունի ինքը՝ Նազիանզացին. «Ես ի Պաղեստինացոցն մնացի ի վարժանոցս ծաղկեալսն յայնժամ ըստ ատենականացն ցանկութեան» (ձեռ. № 1500, էջ 781ա):

²⁸ Ձեռ. № 4150, էջ 59բ: Տեղեկութիւնս պարունակող ձեռագրերի ցանկը տե՛ս Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 33, ծան. 26: Գ. Արզարյանը նկատել է, որ այստեղ «ամենայն հավանականութեամբ» Հոմերոսի փոխարեն Հիմերիոս պիտի լիներ (տե՛ս նրա «Об армяно-грузинском изводе «Физиолога» и древнеармянском переводе «Шестоднева» Василия Кесарийского» («Кавказ и Византия», II, Ереван, 1980, стр. 100, ծան. 7):

²⁹ Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 97, հմմտ. «Հանդէս ամսօրեայ», 1935, էջ 506: Ակինյանը նկատում է, որ «ասոնց թուին մէջ խառնուած էր հաւանօրէն, իբր 380-ին, նաև Մաշտոց» (նշվ. աշխ., էջ 98):

³⁰ Հր. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 76:

Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Նազիանզացին առհասարակ Անտիոքում Լիբանիոսի մոտ շեն առել իրենց ուսումը»³¹։

Վերջին առարկությունը կտրուկ է հավանաբար այն պատճառով, որ Նազիանզացու «Վարքի» բնագրում բացակայում է Անտիոքում ուսանելու և առհասարակ Լիբանիոսին աշակերտելու վարկածը։ Մի կողմից թողնելով ձեռագրերի և շատ հետազոտողների միաբերան պնդումն այն մասին, որ «երեք մեծ կապաղովկացիները» աշակերտել են հիշյալ նշանավոր ճարտասանին, նորից հարկ է հիշել Բարսեղի և Լիբանիոսի փոխադարձ նամականին³², որը հիրավի «դրական ապացույցներ» է բովանդակում³³։ Լիբանիոսին ուղղված նամակ ունի նաև Նազիանզացին, ուր ուսուցչի և աշակերտի փոխհարաբերության մատնացուցելի դրվագ կա³⁴։

Գրիգոր Նազիանզացին որքան էլ աշակերտեր ուղղված քաղաքների նշանավոր ճարտասաններին, այնուամենայնիվ, IV դարում դժվար էր պատկերացնել ավարտուն ուսումնառություն առանց Աթենքի համալսարանի։ Ուստի և Նազիանզացին «խորհեցաւ գնալ յԱթէնս, քանզի զայս իսկ պատուէր հրաման ունէր ի մօրէն իւրմէ»³⁵։ Ձեռագրերում պահպանվել են Աթենքում ուսանելու հետ կապված զանազան տեղեկություններ։ Ահա դրանցից մեկը. «Եւ բնակեցան Գրիգոր և Բասիլիոս ի միասին, հասակակիցք միմեանց և ուսան զամենայն հանճարս իմաստասիրութեան արտաքին գրոց. ուսան և զԱստուածաշունչ գիրս պատուիրանացն

31 Ե. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 451։

32 Չարրհանալյանը նկատում է. «Դարուն ամենէն անուանի իմաստակ և հոետորն սեպուի Լիբանիոս, որ հեթանոս էր և մնաց, անոր համար պատուեցաւ ի Յուլիանոսէ. այս հոետորս ալ իր նամակաց մէջ գովութեամբ կը յիշէ զՊրոյերեսիոս» («Հայկական հին դարութիւն», Վենետիկ, 1897, էջ 264)։

33 Խնդրի բնութեանն անդրադարձել ենք Բարսեղ Կեսարացու մասին գրած մեր ուսումնասիրության մեջ (տե՛ս Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 32—34)։ Ավելորդ չէ հիշատակել նաև հետևյալ վկայությունը. «Քանզի սոքա մանկունս գոլով, և յԱթենս հասնալք, որոց յայնժամ աճեցելոցն իմաստակացն, Իմեռի և Պոռեոեսի լսողք եղեալք։ Եւ յետ այսորիկ յԱնտիոքայ Ասորւոց ի Ղիբանիոս հպեալք, ծայրագունարար զճարտասանականն վաստակեցան...» (տե՛ս «Սոկրատայ սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն...», աշխատասիրութեամբ Մեսրոպ վ. Տեր-Մուլսէսեան, Վաղարշապատ, 1897, էջ 360—361)։

34 Թուղթ 238 (203)։

35 «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 287, հմմտ. PG, t. 35, էջ 248՝ «τὴν μητέρα τῶν λόγων τὰς Ἀθήνας μεταδίωξει» ..., հմմտ. «Прибавление к творениям...», стр. 13, «Христианское чтение», 1886, стр. 319, A. Aganum, նշվ. աշխ., էջ 16։

աստուծոյ, եղեն և ժուժկալք ի ճգնութիւնս»³⁶: Քերականութեան, քառասանութեան, փիլիսոփայութեան ուղղութիւններով հիմնական մասնագիտացմանը զուգահեռ պատշաճ տեղ էր հատկացվում նաև ճշգրիտ գիտութիւններին: Նազիանզացու գործերի մեկնութիւններէց մեկում կարդում ենք՝ «Աթէնացոց մանգունքն, որ ի դպրոցի լինէին, ոմանք զերկրաշափութիւն և այլ զերաժշտականութիւն և կէսք զհամարողականն և այլք զաստեղաբաշխականն ուսանէին»³⁷: Ինչ վերաբերում է ճշգրիտ գիտութիւններին նկատմամբ Նազիանզացու ունեցած հետաքրքրութեանը, Բարսեղ Կեսարացու մասին ասված ստորև բերվող տեղեկութիւնը հավասարապես վերապահելի է նաև իրեն՝ Նազիանզացուն. «զաստեղաբաշխութենէ եւ զերկրաշափութենէ եւ թուոցն յարմարութեան այնքան էառ հանգամանս, որքան ոչ ինչ խոտորումն ընդունել յայնցանէ, որք յայնպիսիսն պանծալիք էին, յաւելորդացն ի բաց փախեալ իբրեւ յանպիտանից բարեպաշտելն կամողաց: Մինչ զի առաւել ընդունելն, քան զթողուլն լեալ սքանչելագոյն եւ առաւելագոյն եւս քան զառեալն թողեալն, բժշկել եւ զմարմնոյ հիւանդութիւնս եւ զախտաժէտութիւնս» (Դամբ., ԻԴ):

Բարսեղ Կեսարացու մեկնելուց հետո, նկատում է վարքագիրը, Նազիանզացին ամենևին չի կամենում մնալ Աթենքում, բայց մնում է «...վասն զի և ոչ իսկ տային թոյլ ելիցն նորա, այլ կալ անդէն և խրատել զնոսա յաստուածայինսն այլ և յոյժ աղաչէին զնա ընդունել զաթոռ իմաստութեանն Աթենացւոց»³⁸:

Աթենքի համալսարանում Նազիանզացուն որպես աշխատակից պահելու պնդում-հավաստիացումներն այնքան հիմնավոր էին, որ ընդդիմացումն անհնարին է դառնում: Սակայն դժվար է ստույգ զնահատել

³⁶ Ձեռ. № 4803, էջ 94ա, հմմտ. ձեռ. № 437, էջ 314ա, ձեռ. № 3275, էջ 147բ, ձեռ. № 4150, էջ 59բ: Այս դրվագն անհամեմատ ավելի սեղմ է ներկայացնում Բարսեղի վարքագիրը՝ «Քանզի էր նորա (= Բարսեղի—Վ. Մ.) աշակերտակից Գրիգորիոս Մեծն» (ձեռ. № 948, էջ 148բ): Նազիանզացին նկատում է, որ Աթենքում իրեն և Բարսեղին գիտեին որպես համերկրացիների և որ ինքը Աթենքի համալսարանի ուսանող էր, երբ Բարսեղը եկավ. «Ունէին զմեզ Աթէնք արինակ իմն իբրև զհոսանս գետոյ ի միողէ բաժանեալ յաղբերէ՝ ի գաւառէն... եւ ունէին զիս փոքր ինչ յառաջագոյն» (Դամբ., ԺԵ):

³⁷ Ձեռ. № 437, էջ 108 ա, հմմտ. «Прибавление к творениям...», стр. 16, ժան.:

³⁸ «Վարք եւ վկայարանութիւնք», էջ 291, հմմտ. PG, t. 35, էջ 257՝ «μήτε τὴν ἕξοδον αὐτῶ συγχωροῦσι, ... τὸν τε σοφιστικὸν θρόνον παρακαλοῦσι δέχεσθαι», «Прибавление к творениям...», стр. 19, А. Агапит, նշվ. աշխ., էջ 27, «Святой Григорий Богослов», СПб., 1909, стр. 10, В. Цветков, նշվ. աշխ., էջ 11:

վարքագրի «սուղ ինչ կացեալ անդէն»³⁹ արտահայտությունը տեակունության առումով: «Վարքի» այս դրվագը կարող է լրացվել Նազիանզացու համապատասխան բացատրությամբ. «Եւ ես մնացեալ յԱթէնս, էր ինչ, որ հիւանդացեալ, քանդի ասասցի ճշմարիտն՝ էր ինչ մատնեալ ի նմանէ հաւանեցուցանելով թողուլ, ոչ ներել եւ տեղի տալ իրաց նախքան զլինել ոչ հաւատարիմ: Եւ լինէր որպէս եւ միոյ մարմնոյ յերկուս հատումն եւ երկոցունց մեռելութիւն, եւ կամ ամոլից ի միասին սնեցելոց, եւ լծակցաց բաժանումն՝ ողբալով բշել առ իրեարս եւ ոչ բերել զաւտարութիւն» (Դամբ., ԻԵ)⁴⁰: Այլևս հասկանալի է, որ նման պայմաններում Նազիանզացին շէր կարող երկար մնալ Աթենքում: Բացի այդ՝ ունենք Նազիանզացու ուղղակի պատասխանը այս հարցում. «...մնացեալ իմ յԱթէնս ժամանակ ոչ բազում» (Դամբ., ԻԵ):

Վարքագրի այն արտահայտությունը, թե՛ «էր այնուհետև ամաց իբրև երեսնից յորժամ եկն առ ծնողսն իւր»⁴¹ հնարավորություն է տալիս ասելու, որ Նազիանզացու ուսումնառության ավարտը կամ Աթենքից վերադառնալը թվագրելի է մինչև 360 թ., որովհետև, վերոբերյալ հաղորդումից զատ, հայտնի է, որ նշված թվականից սկսած Նազիանզացին Բարսեղ Կեսարացու հետ գործունեության նույն ոլորտում էր և մշտապես առնչակցության մեջ⁴²:

Աթենքի փառաբանված համալսարանն ավարտելուց հետո, Գաթրրճյանի բնորոշմամբ՝ «Դարձան երկոքին ի հայրենի աշխարհն լի մըթերօք գիտութեանց»⁴³: Պատրաստության զանազանությունը, ինչպես նկատվել է, նրանց նախասիրությունների տարբերությամբ է պայմանավորված եղել. Բարսեղ Կեսարացին առանձնանում էր «մտքի խորությամբ և փիլիսոփայական գիտությունների նկատմամբ ունեցած հակումով»⁴⁴, իսկ Գրիգոր Նազիանզացին «Ամենից շատ սիրում էր բանահյուսական գիտելիքները, իր մեջ զգում էր խոսքի պարզևը և զարգացնում էր այն որպես ղեն»⁴⁵:

³⁹ «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 291, հմմտ. PG, t. 35, էջ 258, A. Aganum, նշվ. աշխ., էջ 27, «Святый Григорий Богослов», СПб., стр. 9, В. Цветков, նշվ. աշխ., էջ 11:

⁴⁰ Հմմտ. ձեռ. № 6036, էջ 205բ:

⁴¹ «Վարք եւ վկայաբանութիւնք» էջ, 291, հմմտ. «և յորժամ եղև և ամաց զնաց ի դաւանն իւր» (ձեռ. № 8179, էջ 290ա, ձեռ. № 621, էջ 258):

⁴² Նազիանզացու ուսումնառության ավարտը, ավելի ստույգ՝ Աթենքից վերադառնալը ըստ Ֆարարի եղել է մոտավորապես 356 թ. (տե՛ս Փ. Փարթար, նշվ. աշխ., էջ 391):

⁴³ Յ. Գարբրեհեանց, Տիեզերական պատմութիւն, Բ, Վիեննա, 1852, էջ 344:

⁴⁴ «Святый Григорий Богослов», стр. 9.

⁴⁵ Նույն տեղում, էջ 10:

Նազիանզացու պատրաստվածութեան, պատշաճ ուսումնառութեան մասին խոսելիս, անշուշտ, ճիշտ չի լինի եղած դրականը վերադրել միայն Աթենքի համալսարանին: Նկատելու է, որ ճարտասանութեան հրմտութեան գործում քիչ չէ Կեսարիայի դպրոցի դերը, իսկ պլատոնական փիլիսոփայութեան իմացութեան համար՝ Ալեքսանդրիայում ստացած ուսումնառութիւնը⁴⁶:

Նազիանզացու ծնողները առանձնահատուկ ջերմութեամբ ընդունեցին ուսումնառութիւնից վերադարձող որդուն (Նազիանզացին Աթենքում մնաց շուրջ տասը տարի): Հայրը նույն՝ 360 թ. նրան երեց ձեռնադրեց⁴⁷, մինչդեռ նա «Թողոյր զեկեղեցին, փախստական լինէր ի Պոնտոս առ մեծն Բասիլիոս»⁴⁸: Նազիանզացու մի թղթից որոշակի ըզգացվում է, որ նա Բարսեղ Կեսարացու հետ հայրենի միջավայրում գործելու հստակ ծրագիր ուներ, որը մտահղացել էր տակավին Աթենքում ուսանելու տարիներին⁴⁹: Արդ՝ ի՞նչը կարող էր հիմնավորապես ազդել նրանց վճռի վրա, երբ երկու դեպքում էլ ծնողների միջամտութիւնն անգամ էական ոչինչ չի փոխում: Հիմնական պատճառը Նազիանզացու (նաև Կեսարացու) անբավականութիւն-դժգոհութիւնն է քաղաքային միջավայրից: Նազիանզացուն ուղղված Կեսարացու մի թղթում Աթենքը թողնելու մասին ասված է. «Թողի զքաղաքիս կրթարանս իբրև զբիրուց շարեաց պատճառս»⁵⁰: Նույնաբնույթ, բայց շատ ավելի ընդարձակ բացատրութիւն ունի Նազիանզացու վարքագիրը. «Թողեալ զքաղաքաց գոեհս, զիմաստնոց հպարտութիւն, զիշխանաց խստութիւն, զդատապարտելոց հակառակութիւնս, զգողոց զդավաճանութիւնս, զհրապարակս սուտս, զմեծատանց ագահութիւնս, զվաճառողաց զերդմունս, զփարթամաց գոռոզութիւնս... և պղտորեալ մթացուցանեն զմիտս և

⁴⁶ Այդ մասին տե՛ս Փ. Փարրար, նշվ. աշխ., էջ 391:

⁴⁷ Հմմտ. Ե. Տեր-Մինասեան, Հնդհանուր եկեղեցական պատմութիւն, Ա, էջմիածին, 1908, էջ 269: Կրուգլովը երեց ձեռնադրվելու թվական է ընդունում 361-ը (տե՛ս A. B. Крылов, նշվ. աշխ., էջ 12):

⁴⁸ «Վարք եւ վկայարանութիւնք», էջ 292, հմմտ. PG, t. 35, էջ 260՝ „καὶ γενόμενος ἐν Πόντῳ μετὰ Βασιλείου τοῦ πᾶντο φιλοσοφεῖ“, „Прибавление к творениям...“, стр. 26. Մինչև Պոնտոսի մենաստանը մեկնելը Գրիգոր Նազիանզացին համերկրացիների խրնդրանքով մեկ-երկու դասախոսութիւն կարդաց. «Իսկ ես անդրէն ձգեալ զօրացայ, որքան զամենայն Կեսարեայ առաւելագոյն պատուական ծնօղացն զմաղթանսն լնուլ և դաւառի զփոխարէն պարտն զիմ ինքեան զանձուկն առնուլ» (ձեռ. № 4234, էջ 16ա):

⁴⁹ Թուղթ 1(5):

⁵⁰ Ձեռ. 5595, էջ 345բ:

ու ի տան թոյլ ընդունել զմուտս մարութ լուսոյն»⁵¹: Հիմք շունենք կասկածելու, որ բերված բացատրությունները ճշմարիտ են ներկայացնում IV դարի առաջին կեսի իրավիճակը: Այլադրյուր վկայություններից բացի՝ «երեք մեծ կապաղովկացիների» թղթերն ու մյուս ժանրի գործերը բավարար նյութ են պարունակում այս առումով: Բայց անապատական կյանքի ձգտումը սոսկ իրական դժգոհություններ թելադրող պատճառներով բացատրելը ճիշտ չի լինի: Անապատականությունը Ս. Գրոց և հայրախոսական գրականության հիմնավոր ուսումնասիրման միջավայր էր դարձել⁵²: Միաժամանակ այս առումով պիտի նայել IV դարում բավական լայն ընդունելություն գտած այդ շարժմանը, ինչպես նաև նազիանզացու և Կեսարացու՝ Պոնտոսում առանձնանալու իրողությունը⁵³:

Հայտնի է, որ նազիանզացու և Կեսարացու այս շրջանի համատեղ գործունեության արդյունքը եղան «Ս. Գիրքը և նրա մեկնաբանը՝ Օրիգենեսը» աշխատությունը և մի շարք կանոններ⁵⁴: Նազիանզացու եղբոր անակնկալ մահը ստիպում է նրան վերադառնալ հայրենի հարկ: Ուստի և նա «... ոչ ի կամաց, սակայն վասն պատուիրանի հնազանդութեանն՝ եկն առ նա»⁵⁵, տարեց հոր մոտ և միառժամանակ անց՝ կրրկին Պոնտոս վերադառնալու միտք է հղանում՝ «... զմտաւ ածեալ զիազաղական կենցաղս Պոնտոսի՝ կամէր դառնալ անդրէն»⁵⁶:

Սակայն արիոսականության⁵⁷ տարածումը հիմնավոր վտանգ էր ըստեղծում քրիստոնեական Արևելքի համար, մանավանդ որ հովանավորվում էր վաղես կայսեր (364—378) կողմից: Վաղեսի այս շրջանի գործունեության նկարագիրը առավել հստակ է պատկերել նրա ժամանակակից Գրիգոր Նազիանզացին. «Այլ գայր դարձեալ առ մեզ քրիստոսա-

⁵¹ «Վարք եւ վկայարանութիւնք, էջ 291, հմմտ. PG, t. 35, էջ 257—260՝ „καταλιπὼν πόλεις, ἀγοράς, ἠέατρα, σοφιστῶν τῦφον... τῷ καὶ ἀρῶ τάτω φωτὶ οὐκ ἐπιτρέπει τὴν εἰσοδόν“:

⁵² Այդ մասին տե՛ս Հուսիկ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 44—54:

⁵³ Տե՛ս «Духовная беседа», т. II, СПб., 1874, стр. 104.

⁵⁴ Նշված առաջին աշխատությունը Տիանի Թեոդոր Եպիսկոպոսին նվեր ուղարկելու մասին է խոսում նազիանզացին իր մի թղթում՝ 145 (87), հմմտ. «Прибавление к творениям...» стр. 24, А. Агапун, նշվ. աշխ., էջ 38, «Святый Г. игорий Богослов», СПб, 1895, стр. 11, Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 44: Այլ մեզ չի հասել (տե՛ս Otto Bardenhewer, Geschichte der altkirchlichen Litteratur, B. II, Freiburg 1903, S. 70).

⁵⁵ «Վարք եւ վկայարանութիւնք», էջ 293:

⁵⁶ Նույն տեղում, հմմտ. PG, t. 35, էջ 260:

⁵⁷ «Յազագս Արիոսի շարափառի» բնագիրը (ձեռ. № 3797, էջ 625ա—բ) Արիոսի գործունեությունը դատապարտող ուշագրավ գործ է: Այն, հավանաբար, հայկական միջավայրում ստեղծված աշխատանք է:

մարտ թագաւորն եւ հաւատոյն բռնաւորն՝ հանդերձ բազում ամբարըշտութեամբ եւ ջերմագոյն պատերազմաւ առ հակառակամարտն զաւրաւոր» (Դամբ., ԽԵ): Նազիանզացին, թեև ոչ ընդարձակ, բայց պատկերավոր ձևակերպումներով է ներկայացնում քրիստոսամարտ թագավորի գործունեության յուրաքանչյուր դրվագը. «Հալածումն էր եւ հալածանացն սարսափելի» (Դամբ., Ե), «...քրիստոնէիցն արհամարհեն իբրև զդրժող եւ զսխալական» (Դամբ., ԺԱ), «Այնպէս մոնչէր հակառակ եկեղեցոյ, զառիւծու զտեսակ զգեցեալ առիւծաբար եւ գոչէր» (Դամբ., ԽԹ) և այլն:

Նման պայմաններում ոչ միայն ինքնին վերանում է կրկին Պոնտոս վերադառնալու Նազիանզացու ձգտումը, այլև անհրաժեշտութիւնն է ըզգացվում կանչելու Բարսեղ Կեսարացուն⁵⁸: Այդ խնդրում շափազանց մեծ էր Նազիանզացու անելիքը: Նա 365 թ. գրած մի թղթով⁵⁹ Եվսեբիոս Կեսարացուն համոզում է վերանայել իր վերաբերմունքը Բարսեղի նկատմամբ: Նազիանզացին միաժամանակ համերաշխութեան կոչ է անում Բարսեղ Կեսարացուն⁶⁰ և պատվիրում Եվսեբիոս Կեսարացու հետ լինել իր մոտ⁶¹: Արդյունքը եղավ այն, որ Բարսեղ Կեսարացին վերադարձավ Կեսարիա և կազմակերպեց պայքարն ընդդեմ արիոսականութեան⁶²:

Դավանական վեճերի պայմաններում Բարսեղ Կեսարացու հեղինակութիւնը եկեղեցու շահերին ծառայեցնելու օրինակ է նաև 370 թ., Եվսեբիոս Կեսարացու մահից հետո Կեսարիայի թեմը Բարսեղի տնօրինութեանը հանձնելու պատմութիւնը, որի փաստական իրացնողը նույնպես Նազիանզացին էր⁶³: Նազիանզացին ունի հատուկ թուղթ⁶⁴, որով Բարսեղի թեկնածութիւնն է հիմնավորում: Մեկ այլ թղթ-

⁵⁸ Բարսեղի և Եվսեբիոս Կեսարացու ընդհարման մանրամասները ծանոթ են Նազիանզացուն, բայց նա գերադասում է շմտնել այդ պատմութեան մեջ՝ «Լինէր իմն առ այրն գծտութիւն առաջի իշխանի եկեղեցոյն, բայց ուստի՞ եւ կամ զիա՞րդ՝ լռել է լաւագոյն» (Դամբ., ԻԹ): Հարցի քննութիւնը տե՛ս Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 42—46:

⁵⁹ Թուղթ 12(20):

⁶⁰ Թուղթ 15(19):

⁶¹ Թուղթ 14(170): Նազիանզացու վարքապիւրը Եվսեբիոս Կեսարացու մասին գրում է. «Նա թէպէտ և պարկեշտ գոլով վարուք, սակայն ոչ ունելով զկրթութիւն աստուածաբանական իմաստից՝ ընդդէմ կալ հերեսիովտաց երկնչէր» («Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 297):

⁶² Այդ մասին տե՛ս Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 50—51: Կեսարացու պայքարի եղանակը այս կերպ է բնութագրել Նազիանզացին. «...ոչ տայր քուն աշաց եւ ոչ նիրհումն կոպոց, ծախէր զմնացեալ մարմինսն ընդ հոգսն՝ մինչև գտանիցէ շարին լուծումն» (Դամբ., ԽԳ):

⁶³ Տե՛ս «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 298, հմմտ. PG, t. 35, էջ 268:

⁶⁴ Թուղթ 35(23):

թուի⁶⁵ նա հանդիմանում է Բարսեղին՝ Կեսարիայի արքեպիսկոպոսի թափուր տեղի համար իր՝ Նազիանզացու թեկնածությունը առաջադրելու համար: Մի փոքր այլ առիթով, բայց նույն Բարսեղ Կեսարացուն Նազիանզացին հավատացնում է, որ ինքը ոչ թե ծուլության, այլ խառնվածքի պատճառով է, որ հրաժարվում է այս կամ այն պաշտոնը վարելուց⁶⁶: Բայց նա ամեն կերպ աշխատում է կանխել եկեղեցական պաշտոնավարության ձգտող պատահական մարդկանց մուտքը եկեղեցի: Հիմնավոր է նրա պատճառաբանությունը. «Ջարհուրեցայ յաւազակաց եւ ի գողոց՝ մի գուցէ դեր ի վերոյ, քան զգաւիթն ելանելով՝ կամ լըրբութեամբն կողոպտեսցեն եւ կամ խաբեութեամբն գողասցին, որպէս զի դենցեն եւ սպանցեն, եւ կորուսցեն յափշտակելով զյափշտակութիւնն զանձինս կերակրիցեն»⁶⁷: Նազիանզացին մասնավոր զգուշացում ունի նրանց մասին, «որք ոչ շուն կացին մնացին եւ ոչ հովիւք եղեն»⁶⁸: Կեսարացու գործունեության շրջանում չափազանց մտահոգողը վաղեսի նախաձեռնութեամբ Կեսարիայի թեմի բաժանումն էր երկու մասի⁶⁹: Հետագա հնարավոր անախորժությունները կանխելու համար Բարսեղը Սասիմայի եպիսկոպոս է ձեռնադրում Նազիանզացուն⁷⁰: Վերջինիս վարքագիրը բացատրում է, որ Նազիանզացին նշված պաշտոնից հրաժարվում էր երկու պատճառով. ա) ցանկանում էր լինել ազատ և որ՝ բ) Սասիմայի տեղը շատ էր անհարմար⁷¹: Սակայն խնդրի ճշմարիտ պատասխանը պիտի փնտրել Նազիանզացու հետևյալ բացատրության մեջ. «Սա եթէ մարդկային ինչ եւ փոքր իմանայի կամ աթոռոյս բաղձայի, կամ ի սկզբանն ի վերայ կացի ձեզ՝ հանդերձ վարուքս այսոքիւք եւ հաշեցելովք հիւանդութեամբ եւ ժամանակաւ անդամաւքս, վասն որոյ այժմ բերեմ զպատճառսս»⁷²:

⁶⁵ Թուղթ 33(21):

⁶⁶ Թուղթ 49(32), հմմտ. Թուղթ 50(31):

⁶⁷ Ձեռ. № 823, էջ 153բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 875ա, ձեռ. № 6988, էջ 129բ, ձեռ. № 2615, էջ 80բ:

⁶⁸ Ձեռ. № 823, էջ 154ա:

⁶⁹ Տե՛ս «Святой Григорий Богослов», стр. 19, հմմտ. А. Агапит, նշվ. աշխ., էջ 118: Բարսեղին գրած մի թղթում Նազիանզացին պատվիրում է կատարված վարչական փոփոխության պատճառով շատ շմտահոգվել (տե՛ս Թուղթ 43(25): Բարսեղ Կեսարացին ջանում էր վարչական փոփոխության պայմաններում պահպանել եկեղեցու (թեմի) միասնականությունը (տե՛ս Փ. Փարրար, նշվ. աշխ., էջ 417): Այդ մասին տե՛ս Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 51—53:

⁷⁰ «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 298, հմմտ. PG, t. 35, էջ 269:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Ձեռ. № 823, էջ 167բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 878ա, ձեռ. № 6988, էջ 142բ, ձեռ. № 2615, էջ 89ա:

Ինչպես նկատեցինք վերևում, Բարսեղին հասցեագրած թղթում Նազիանզացին Սասիմայի եպիսկոպոսությունից հրաժարվելը բացատրում է իր խառնվածքի մեղմությամբ, պաշտոնավարության նկատմամբ ունեցած անտարբերությամբ: Ուստի և շափազանց մեծ է վրդովմունքը հոր և Բարսեղի դեմ, որոնք այդ բոլորն իմանալով հանդերձ՝ ստիպում են նրան ստանձնել նշված քաղաքի եպիսկոպոսությունը⁷³: Այս առթիվ Նազիանզացին գրում է. «Բռնադատիմք, ով բարեկամք եւ եղբարք, քանզի առ ձեզ թէպէտեւ ոչ յայնժամ, այլ այժմ գոչեցից, հարստահարիմք ի ծերունս հաւրէս եւ ի սիրելոյ, զի շափաւորապէս ասացից ի բարոյ եւ ինձ աւգնեցէք»⁷⁴, և կամ՝ «Վասն այսորիկ այժմ ընդունիմ ընդ բարո հաւրս բերիլ զխնամակալութիւնս իբրեւ ընդ արծուոյ մեծի եւ բարձրաթռչի ձագ ոչ այնպիսեան մերձ ընդ նմա թռուցեալ եւ զկնի այսորիկ տաց հոգոյն զիմ զթեւսս բերեալ, ուր կամի եւ որպէս ախորժէ: Եւ ոչ ոք է, որ բռնադատէ, եւ ոչ արտաքս տանի այլ ուրեք՝ ընդ այսմիկ խորհիմ»⁷⁵:

Հայտնի է, որ Նազիանզացին թեև 372 թ. համարվում էր Սասիմայի եպիսկոպոս, բայց ամենևին չի եղել այնտեղ ոչ թե հոր և Բարսեղի կատարած ձեռնադրությանը ընդդիմանալու պատճառով, այլ, ինչպես նկատվել է⁷⁶, Տիանի եպիսկոպոս Անթիմոսը ամեն կերպ աշխատել է խափանել Բարսեղի թեմի ներկայացուցիչների մուտքը Սասիմա: Նման պայմաններում Նազիանզացու հայրը, իր տարեց լինելու հանգամանքը մեջտեղ բերելով, փորձում է Նազիանզի եպիսկոպոսությունը հանձնել Աստվածաբանի տնօրինությանը: Սակայն Նազիանզացին «...տրտմեալ շոգաւ ի Սելեկիայ, ի յանապատն Թէկղի, յամեալ ընդ ամք Բ, ապա եկն յիւր անապատն՝ տես ի յեղբարքն»⁷⁷: Հոր մահվանից հետո⁷⁸ Նազիանզի բնակիչները կրկին խնդրում են նրան ստանձնել իրենց քաղաքի եպիսկոպոսությունը՝ «... և եկն նախքան զայլսն Բասիլիոս և էած հա-

⁷³ «Բասիլիոս նստի յաթոռ եպիսկոպոսապետութեանն Կեսարու և ձեռնադրե զԳրիգորիոս զԱստուածաբանն եպիսկոպոս Սասիմայ» (ձեռ. № 8179, էջ 290բ, հմմտ. ձեռ. № 2695, էջ 15բ):

⁷⁴ Ձեռ. № 1500, էջ 773բ:

⁷⁵ Նույն տեղում, էջ 774ա:

⁷⁶ A. Azanut, նշվ. աշխ., էջ 128, հմմտ. Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 52:

⁷⁷ Ձեռ. № 1480, էջ 203ա, հմմտ. «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 299, PG, տ. 35, էջ 273՝ „καὶ καταλαβὼν τὴν Σελεύχειαν“: Ե. Տեր-Մինասյանը Նազիանզացու Սելեկիա մեկնելը հնարավոր է դիտում 375 թվականին, նրա հոր մահվանից հետո միայն (տե՛ս նշվ. աշխ., էջ 269):

⁷⁸ Նազիանզացու հայրը ապրել է մոտ 100 տարի, մահացել է 374 թ.:

ւանութիւն զԳրիգոր առնուլ զեպիսկոպոսութիւն»⁷⁹: Սակայն Նազիանդացու այս շրջանի գործունեությունը պատկերադնելու համար անհրաժեշտ է դիմել իր մի դիտողությունը: Նազիանդի եպիսկոպոսության ըստանձնումը ձգձգելու պատրվակով իրեն ուղղված հանդիմանություններին պատասխանելիս նա գրում է. «Փախուցեալ ի գաւառէ կոչիցեն՝ իբրև զի փոքունս խորհին վասն մեր: Ստուգապէս թշնամանողք եւ ատարացեալք է ինձ բոլորովին իսկ գաւառ աւդով բովանդակեալ, որում ամենայն գաւառ եւ ոչ մի»⁸⁰: Գավառի «օտարանալու» պատճառներից հիմնականը պայքարն էր ընդդեմ Կեսարիայի թեմի, որի ժամանակ «Առանձնապես անարգվում են Գրիգոր Աստվածաբանը և Բարսեղ Կեսարացին, ինչպես նաև Հովհան Ոսկեբերանը»⁸¹: Նազիանդացուն մտահոգողը բրիտոնեական Արևելքի անմխիթար վիճակն էր, դավանաբանական պայքարի պայմաններում հոգևոր դասի նեղ ու անձնական քաշքշուկները, եկեղեցին օտարամուտ ազդեցությունից հեռու պահելու դժվարությունները: Շատ հստակ է նրա պատճառաբանություն-բացատրությունը. «Եթէ պատրաստեսցի ի վերայ իմ ճակատամարտ ոչ երկիցէ սիրտ իմ, թէ յարիցէ ի վերայ իմ պատերազմ յայսմ ես յուսամ, այսքան հեռի եմ ահաւոր վարկանել ինչ ի մերձակայիցս, մինչ զի զհակառակ իմն թողլով՝ ողբամ զտրտմեցուցիչսն»⁸²:

Գրիգոր Նազիանդացու գործունեությունը շափազանց մոտ էր ու նման Բարսեղ Կեսարացու աշխատանքին, պայքարի նրա նախասիրած ձևերին, ուղղափառ հավատի համար պայքարի նրա նախընտրած միջոցներին: Հայկական միջավայրում, բնականաբար, Նազիանդացու հովվական գործունեությունը ևս գնահատության էր արժանանում. «Եւ

⁷⁹ Ձեռ. № 5254, էջ 110ա: Ըստ այլ տարբերակի՝ «Բարսեղ ոչ եկն, այլ ևղբայր նորին եւ վասն այսորիկ ի նմանէ էառ զեպիսկոպոսութիւն, բայց յետոյ եկն Բարսեղ» (ձեռ. № 1879, էջ 172ա): Նազիանդի եպիսկոպոսությունը ընդունելու հարկադիր անհրաժեշտությունը բացատրող թուղթ ունի Նազիանդացին 90(222):

⁸⁰ Ձեռ. № 823, էջ 161ա—բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 876բ, ձեռ. № 6988, էջ 136բ—137ա, ձեռ. № 2615, էջ 85ա:

⁸¹ Ե. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 215: Ե. Տեր-Մինասյանը խոսելով IV դարում դավանաբանական պայքարի ձևերի մասին, գրում է. «Առանձնապես այս ուղղությամբ աշխատում էին հերետիկոս կոչվածները, ինչպես, օրինակ՝ դոնատիստները, Արիոսը, Ասյոզիանոսի հետևողները և այլն» («Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 293): Այդ մասին հանգամանալից քննություն ունի Կարլ Կրոմբախը (տե՛ս նրա «Geschichte der Byzantinischen Literatur» (München, 1897) աշխատության «Dogmatik und Polemik» բաժինը, էջ 16—122):

⁸² Ձեռ. № 823, էջ 163ա—բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 877ա, ձեռ. 6988, էջ 138բ, ձեռ. № 2615, էջ 86ա:

սուրբն Գրիգոր աստուածաբանական բանիւք վարդապետութեամբ ուսուցանէր ժողովրդեանն զուղղափառ հաւատս և արմատախիլ առնէր զհեթանոսական հերձուածողացն զնոր բարբաջմունսն»⁸³: Կեսարացունման՝ Նազիանզացին ևս պայքարի դժվարություններից հարկադրված՝ դիմել է զանազան միջոցների, երբեմն նույնիսկ ոչ բարյացակամ պաշտոնատար անձանց (օրինակ՝ Հուլիանոսին)⁸⁴ կանխելու սպասվող շարիքը, շատարելու-չոգևորելու շարակամ նպատակադրում ենթադրող այս կամ այն ձեռնարկումը: Այնուամենայնիվ՝ շարախոսությունն ու դատափետանքը, անարգանքն ու նվաստացումը, կեղծ բարեկամությունն ու բամբասանքը մշտապես ուղեկցել են Նազիանզացուն⁸⁵: Պահպանվել է Նազիանզացու ինքնամեղադրանքը, որը իրականում շրջապատող իրականության դատափետանք է և ինքնահաստատման ինքնատիպ օրինակ. «...զայսոսիկ երկչոտս՝ ես հովիւս եւ կասկածոտս, եւ սորին աղագաւ սգուշութեամբ իբրեւ պղերգութեամբ բամբասիմ, վասն զի ոչ եմ հովիւ յայնցանէ, որք զկաթնն ուտեն եւ զասրն սգենուն, զգէրսն զենուն եւ զշարութիւնսն գործեն կամ որք վաճառեն եւ ասեն՝ աւրհնեալ է տէր եւ փարթամացաք»⁸⁶:

Նազիանզացու և Կեսարացու կապվածության և փոխադարձ նվիրվածության բազմաթիվ օրինակներ կան⁸⁷: Ուստի և հասկանալի է, թե Բարսեղ Կեսարացու մահը (379) ինչպիսի վիշտ կարող էր պատճառել Նազիանզացուն: Դիմենք նրա իսկ ուղղակի վկայությունը պարունակող թղթին. «Հարցանես զմերոյն կարի դառնապէս՝ զԲարսիղ ոչ ունիմ, զԿեսար ոչ ունիմ՝ զհոգևորական եղբայրն և զմարմնական: Հայր իմ և

⁸³ Ձեռ. № 4803, էջ 94բ: Այլ գնահատությամբ՝ «Սա այն Աստուածաբանն է, որ դամս երկոտասան հովուեաց զհօտն Քրիստոսի, եւ մաքրեաց զամենայն հերձուածսն Արիոսի, Ենոմիոսի, եւ Մակեդոնի, եւ այլոց բազմաց» (Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Ա, էջ 364):

⁸⁴ Թուղթ 57(166), հմմտ. Թուղթ 112(77), Թուղթ 124(88), Թուղթ 154(133), Թուղթ 156(135):

⁸⁵ Այս առումով բնորոշ օրինակ է երախտամոռ Մաքսիմիանոսը, որը «...լուեալ զհամբաւ Գրիգորի, եւ ցանկացաւ նմա, եւ եկն առ նա» (Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 228): Նրա մասին տե՛ս «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 303—306, հմմտ. PG, t. 35, էջ 280—285:

⁸⁶ Ձեռ. № 823, էջ 154ա—բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 874բ, ձեռ. № 6988, էջ 129ա, ձեռ. № 2615, էջ 81ա:

⁸⁷ Ահա այդ մտերմությունը ընդհանրացնող մի հիշատակագրություն. «Այս կրկին անձինք այնչափ իրարու բարեկամ եւ նման՝ սիրով անմեղութեամբ, միայնակեաց վարուք, գիտութեամբ, ճարտարխօսութեան ճշմարտին պաշտպանութեամբ, հովուական պաշտօնիւ, եկեղեցւոյ հսկողութեամբ, հալածանօք, սրբութեամբ...» («Պատկեր», 1893, № 19, էջ 449):

մայր իմ թողին դիս, ընդ Դաւթայ գոչեմ, մարմնոյքս շարաշար ունիմ, ծերութիւն՝ ի վերայ գլխոյս, հոգւոց շուրջ՝ պատմունք, իրաց ի վերայ ընթացմունք, բարեկամաց անհաւատութիւնք, եկեղեցականայքն անհովութիւն, ծորէ բարին, մերկ՝ շարիքն, նաւարկութիւն գիշերական, հրաշուցութիւն և ոչ ուրեք»⁸⁸։

Նման պայմաններում, մանավանդ Բարսեղ Կեսարացու մահվանից հետո, հասկանալի պատճառով դժվարանում են Նազիանզացու գործունեության պայմանները։ Սակայն որքան շատանում են ամբաստանություններն ու հերյուրանքները, այնքան ավելի հաստատուն ու հիմնավոր են դառնում Նազիանզացու պայքարի ձևերն ու միջոցները, է՛լ ավելի է բարձրանում նրա հեղինակությունը։ Արդյունքը լինում է այն, որ արիոսականության դեմ պայքարը կազմակերպելու նպատակով 379 թ.⁸⁹ Նազիանզացին հրավիրվում է Կոստանդնուպոլիս. «Եւ ապա յետ այնորիկ թագաւորն Մեծն Թէոդոս՝ մեծարեաց զնա յիւր քաղաքն, եւ եկաց ի ժամանակս նորա Պ. ամ, մինչեւ ի ժողովն մեծ...»⁹⁰։ Նազիանզացին ձեռք է բերում համընդհանուր ճանաչում և հեղինակություն⁹¹, ուստի և, եկեղեցուն սպառնացող նոր վտանգի պայմաններում, ժողովրդի խնդրանքով ու Թեոդոս թագավորի համաձայնութեամբ Կոստանդնուպոլսի 381 թ. երկրորդ տիեզերական ժողովում (մասնակցում էր 150 եպիսկոպոս) Նազիանզացին առաջադրվում է քաղաքի պատրիարք։ Ժողովին մասնակցում էին նաև Անտիոքի Մելիտոս եպիսկոպոսը (նախագահ) և Գրիգոր Նյուսացին։ Վերջինս ելույթով ողջունեց Նազիանզացու թեկնածությունը⁹²։ Նազիանզացին նույն այդ ժողովում հրաժարվել է արքեպիս-

⁸⁸ Զեռ. № 5607, էջ 82բ—83ա։

⁸⁹ Ենթադրվում է, որ Նազիանզացին մայրաքաղաք է հրավիրվել 378 թ. (տե՛ս «Христианское чтение», СПб., 1886, стр. 345)։ Իրականում կանչը տեղի է ունեցել Բարսեղ Կեսարացու մահվանից հետո, այսինքն՝ 379 թ.։

⁹⁰ Ն. Պողոսյան, Մայր ցուցակ..., Ա., էջ 430, հմմտ. «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն...», էջ 407, «Անանիա Շիրակացու մատենագրութիւնը», էջ 288, «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք եւ մատենագրութիւն», աշխատասիրութեամբ եւ ծանօթութեամբ ի լոյս ընծայեաց Լ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907, էջ ԺԴ։

⁹¹ Այդ մասին տե՛ս Փ. Փարրար, նշվ. աշխ., էջ 428։

⁹² Տե՛ս А. Агапур, նշվ. աշխ., էջ 220—221։ Մի գրչագիր տեղեկության համաձայն՝ Նազիանզացին «...ի Մելիտոսէ ձեռնադրի եպիսկոպոս Բիւզանդիոյ» (ձեռ. № 621, էջ 258)։ Ունենք տեղեկությանս մասամբ խմբագրված երկու տարբերակ ևս. ա) «...յորժամ հովուէր Գրիգոր Աստուածաբան ի Կոստանդնուպոլիս» (ձեռ. № 473, էջ 98բ, ձեռ. № 1879, էջ 266ա—բ, Լ. Տաշյան, Ցուցակ..., էջ 232, ձեռ. № 3937, էջ 68ա, բ) «...ի թագաւորութեան Մեծին Թէոդոսի, յորժամ գնաց Գրիգոր Աստուածաբան ի Կոստանդնուպոլիս եւ էր հովիւ, եւ առաջնորդ բանաւոր հօտին Քրիստոսի» (Լ. Տաշյան, Ցուցակ..., էջ

կոպոսութեան աթոռից⁹³: Այդ մասին ունենք նաև նրա վարքագրի բացատրությունը. «...իսկ նորա կացեալ ի մէջ ժողովոյն ասէ ցնոսա. ես, ով հովիւք և սուրբ հովուապետք, զիշխանութիւն քահանայապետութեանս ոչ այլ ինչ ինձ վարկանիմ՝ բայց միայն քիրտն և աշխատութիւն... Այլ և ես ոչ եթէ փառաց ցանկացող եմ և կամ բարձրագահ աթոռոյ և կամ թագաւորական քաղաքաւս երևելի լինել, այլ վասն սիրոյ և փափաքունաց հօտիդ և թագաւորական հրամանացն»⁹⁴: Փաստորեն «թագաւորական քաղաքի» «բարձրագահ աթոռից» հրաժարումը եղել է կամովին: Բայց հրաժարումը ունեւր ուղղակի պատճառ, այլապես հասկանալի չի լինի նրա նախապես տված համաձայնութիւնը: Նազիանզացու վարքագրի բացատրութեամբ՝ ժողովի մասնակիցներից «...կէսքն զԳրիգորիոս ասէին բարիոք լինել, որում և յառաջագոյն վիճակեցաւ, և այլք զայլ ոմանս»⁹⁵: Ե. Տեր-Մինասյանի գնահատութեամբ՝ «յուր պաշտոնը նացած դրեց՝ խիստ վշտացած ժողովի ընթացքից ու բռնած դիրքից»⁹⁶:

Հայտնի է, որ Կ. Պոլսի նշված ժողովից հետո Գրիգոր Նազիանզացիին վերջնականապես հրաժարվել է արտաքին աշխարհից և կյանքի վերջին տասնամյակը ապրել է կատարյալ մենութեան մեջ⁹⁷:

Նազիանզացիին մահացել է 389 թ.⁹⁸, հունվարի 25-ին, Արիանդում, թաղվել է Նազիանդում, ծնողների կողքին: Աղբյուրների վկայութեան համաձայն՝ 950 թ. «...բերաւ նշխարքն յետ աւուրց ի Կոստանդնուպօլիս և եղաւ ի մեծ եկեղեցւոջն Պետրոսի և Պօղոսի: Ի նոյն տեղոջ և եղաւ

228): № 7943 ձեռագրում կարդում ենք՝ «... եղև պատրիարզ Կոստանդնուպօլսի», էջ 265, հմմտ. Գ. Զարբհանալյան, Պատմութիւն մատենագրութեան, էջ 743, Հուսիկ Եպիսկոպոս, նշվ. աշխ. էջ 52:

⁹³ Թուղթ 80(15), հմմտ. Թուղթ 81(103), հմմտ. «Святой Григорий Богослов», 1895, стр. 35, Հուսիկ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 52:

⁹⁴ «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 315: Նազիանզացիին այդ հրաժարման շուրջ բացատրություններ է տալիս (տե՛ս Թուղթ 80(15): Մեկ այլ թղթում այն միտքն է հայտնում, որ Կ. Պոլսից հեռանալը իրեն մտահոգում է մտերիմ ընկերների միջավայրից կտրվելու առումով (տե՛ս Թուղթ 82(73): Նազիանզացու հրաժարվելու մասին տե՛ս «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացոյ վարք և մատենագրութիւնք», Վենետիկ, 1907, էջ ԺԶ, Ե. Տեր-Մինասյան, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Ա, էջ 269:

⁹⁵ «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 315, հմմտ. «Христианское чтение», 1886, стр. 321.

⁹⁶ Ե. Տեր-Մինասյան, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Ա, էջ 269:

⁹⁷ «Прибавление к творениям...», стр. 69, «Христианское чтение», стр. 193.

⁹⁸ Որոշ հետազոտություններում Նազիանզացու մահվան թվական է ընդունվում 390-ը (տե՛ս А. Агапит, նշվ. աշխ., էջ 287), Ե. Տեր-Մինասյան, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Ա, էջ 269, Հուսիկ Եպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 52: Գ. Խալաթյանցի առաջադրած 399 թվականը հավանաբար վրիպակ է («Արարատ», 1897, էջ 531):

Նշխարքն Յոհան Ոսկեբերանին»⁹⁹։ Նշխարների փոխադրումը կատարվել է «բարեպաշտ և բրիստոսասէր Կոստանդին» կայսեր նախաձեռնությամբ¹⁰⁰։

⁹⁹ Ձև. № 3937, էջ 59ր։

¹⁰⁰ «Կոստանդին Միրանաժին», թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 169, ծան. 39, հմմտ. «Прибавление к творениям...», стр. 72, «Святой Григорий Богослов», 1895, стр. 40, А. Агапит, նշվ. աշխ., էջ 287։ Հրաչ Բարթիկյանի նշված ծանոթագրությունից տեղեկանում ենք, որ մասնագիտական գրականության մեջ սույն վկայության հեղինակային պատկանելությունը վիճելի է համարվում (նույն տեղում, էջ 325, ծան. 39)։

ՆԱԶԻԱՆՁԱՑԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ

ա) ՆԱԶԻԱՆՁԱՑԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

«Երեք մեծ կապադովկացիները» հայ մատենագրության մեջ հիշատակվում են տարբեր առիթներով, բայց առավելապես հոգևոր խընդիրներ արծարծելիս կամ եկեղեցու նշանավոր հայերի հետ կապված հաղորդում կատարելիս: Ճիշտ նույնաբնույթ առիթներով է, որ Մովսես Խորենացին երկիցս վկայակոչում է Նազիանզացուն: Առաջին հիշատակությունը կապված է նրա հոր հետ՝ «...զԳրիգոր զհայր Գրիգորի Աստուածաբանի», իսկ երկրորդ վկայությունը հետևյալն է. «...եւ ժողովեալ սուրբ հարքն ի Թագաւորեալ քաղաքն Բիւզանդիոն, Դամասիոս Հռոմայ, Նեկտառիոս Կոստանդնուպօլսի, Տիմոթէոս Աղեքսանդրի, Մելիտոս Անտիոքու, Կիւրղոս Երուսաղէմի, Գրիգորիոս Նիւսիայ, Գեղասիոս Կեսարու, Գրիգորիոս Նաճիանձու...»¹: Խորենացու սույն տեղեկությունը վերաբերում է բյուզանդական Թեոդոս կայսեր գործունեության այն ժամանակաշրջանին, երբ ընդհանուր պայքար էր տարվում հեթանոսական մեհյանները քրիստոնեության երկրպագուների համար աղոթատեղ դարձնելու նպատակով: Բնականաբար, այդ պայքարում մեծ անելիքներ ունեին նշված հեղինակությունները (այդ թվում և Նազիանզացին), որոնք հավաքվել էին ժողովի և «...որք նզովեալ մերժեցին զՄակեդոն և զամենայն հոգեմարտս»²:

Մի փոքր այլ է «երեք մեծ կապադովկացիներին» հիշատակելու Փարպեցու նպատակը և ակնկալությունը: Փարպեցին ամենից առաջ դա անում է ինքնապաշտպանման միտումով, որովհետև, ի թիվս այլ մեղադրանքների, նրան ամբաստանում էին թե՛ «աղանդաւոր է»³: Եվ ահա

¹ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Տիղիս, 1913, էջ 297—298, հմմտ. «Անանիա Շիրակացու մատենագրությունը», էջ 388:

² Նույն տեղում, էջ 298, հմմտ. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 21—22:

³ «Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Սա. Մալխասեան, Տիղիս, 1904, էջ 192:

Փարպեցին հարկադիր բացատրության միջոցին, իրողությունը մատնացուցելու նպատակով գրում է. «Բայց իմ ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն և ըստ զօրելոյ տկարամտութեանս իմոյ կարդացեալ զըդիրս արանց սրբոց, որք վառեալք սուրբ Հոգւոյն զինու՝ զսուրս հոգեփողոտս աղանդաւոր ուսմանցն դարձուցանէին անդրէն ի սիրտս նոցունց, և զաղեղունս նոցա փշրեցին, և զփրկական վարդապետութիւնն՝ իւրեանց գրով մեզ աւանդեցին, հոգացեալ իբրև զարդարև ոգեսէր հարս՝ զամենայն տգէտ խորհուրդ մարդոց զօգուտն. զորոց յերկար ոք և ջերմ սիրով ընթերցեալ զգրեալս՝ անվնաս և դիւրազերծ կարէ լինել հրարձակ նետից շար ձգողացն. զսրբոցն ասեմ զԱթանասէ Աղեքսանդրացոյ, և զերկուց միանուն արանցն՝ զԿիւրղէ Աղեքսանդրացոյ և զԿիւրղէ Երուսաղեմացոյ, և զԲարսղէ Կեսարացոյ, և զԳրիգորէ Նազազացոյ... և զմերոյին առաքելանման նահատակին Գրիգորի, զվարդապետէն Հայոց և զնոցունց նմանեացն, որք զնոյն շաւիղ առողջամտութեանն հետևեալ վարդապետեցին»⁴:

Հասկանալի է, որ հունական եկեղեցու և մատենագրութեան նշանավոր ներկայացուցիչների անուն առ անուն թվարկումն ու «յունական ուսմանցն» պարապյալ լինելու հիշեցումն ապացույց են, թե աղանդավորութեան հետ պատմիչը առնչություն չունի⁵: Փարպեցու հավաստմամբ՝ նման ուսումնառություն-դաստիարակություն ստացած անձը այլախոհ կամ այլադավանութեան հետևորդ չէր կարող լինել:

Անանիա Շիրակացին Նազիանդացուն հիշատակում է «Պատմութիւն Անանիայի Շիրակայնոյ համարողի» երկում և «Ի յայտնութիւն տեառն» ճառում: Առաջին հիշատակությունը կատարվում է վաղես կայսեր օրոք քրիստոնյաների հալածանքներին անդրադառնալու իրողության հետ. «Եւ ի սոցունց աւուրս էին սուրբ վարդապետքն Գրիգոր Նիւսացի եղբայր Բարսղի, Բարսեղ Կեսարու եպիսկոպոս, Գրիգոր Նազազացի Աստուածաբան»⁶: Հաջորդ վկայությունը կապվում է հայ մատենագրութեան մեջ բավական տարածված այն տեղեկության հետ, որի համաձայն մինչև 381 թ. նշանավոր ժողովը Թեոդոս թագավորը Կոստանդնուպոլիս է հրավիրում Նազիանդացուն և նրա տնօրինությանը հանձնում քաղաքի

⁴ Նույն տեղում:

⁵ Փարպեցու Բյուզնադիայում ուսանելու, «երեք մեծ կապադովկացիների» մատենագրական ժառանգությանը ծանոթ լինելու խնդիրներին անդրադարձել են Ե. Տեր-Մինասյանը («Պատմա-բանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 323—324) և Մ. Աբեղյանը (Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 345, 666—667):

⁶ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 387:

հոգևոր թեմը. «... և տայր զտեղապահութիւնն Գրիգորի Աստուածաբանի մինչև ցհավաքել ժողովոյն»⁷:

Գր. Նազիանզացին Շիրակացու Հայտնության ճառում հիշատակվում է երկու անգամ: Ի տարբերություն նախորդ վկայությունների, այս անգամ գործ ունենք ուղղակի գնահատության հետ. «...բայց ես հավանիմ որով յոյնք պարծին, երանելեացն ասեմ Բարսղի եւ Գրիգորի Անձիանձու գիտեմ զնոսա սուրբս, ճշմարիտս, հոգևորս եւ հետեւողս առաքելոցն»⁸:

Սերբոսի Պատմության մեջ Գրիգոր Նազիանզացին հիշատակվում է հետևյալ դրվագում. «Սուրբ և ճշմարիտ կաթողիկոսն մեր Գրիգորիոս ի կեսարիա կապաղովկացւոց սնեալ և ուսեալ վարդապետեաց մեղ, յոր հիմնացեալ անշարժ կամք մինչև ցայժմ, և ի վերայ նորին ունիմք վարդապետս զսուրբ հարսն ճշմարտապատումս... Կիւրեղ Աղեքսանդրացի եպիսկոպոս, և Բարսեղ Կեսարու եպիսկոպոս, և Գրիգոր Նազիազու, և Գրիգորն Նէոկեսարու սքանչելագործ, և Գրիգոր Նիւսացի, եղբայր Բարսղի, և այլ անթիւ հովիւք ուղղափառութեան՝ համաբարբառք նոցին, որոց պատմութիւնքն յայտնի են»⁹: Սույն հատվածն ունի երկու ուշագրավ կետ. առաջինն այն է, որ հեղինակը հիշատակում է հայոց եկեղեցու, այսպես կոչված, ուղղադավանությունն՝ սկսած Գրիգոր Լուսավորչի կապաղովկյան Կեսարիայում ուսանելու-դաստիարակվելու պատմությունից, որի բուն՝ աղբյուրը, անշուշտ, Ագաթանգեղոսի Պատմությունն է¹⁰: Մյուս նկատելի կողմն այն է, որ պատմիչը նորովի է արձանագրում այն հայտնի իրողությունը, թե հայոց եկեղեցու դավանանքի առումով «հիմնացեալ անշարժ» լինելու գաղտնիքը եկեղեցու նշանավոր հայրերի, այդ թվում՝ «երեք մեծ կապաղովկացիների» ճշմարտապատում վարդապետութեանը հետևելու մեջ է:

Հայ մատենագրության մեջ Գրիգոր Նազիանզացին ավելի հաճախադեպ է հիշատակվում դավանաբանական վիճելի խնդիրներ արծարծելիս: Այս առումով ուշադրության արժանի նյութեր կան Ստեփանոս Սյունեցու թղթերում և, այսպես կոչված, հակաճառություններում: Նման քննություններում Սյունեցին, իբրև անառարկելի ապացույց, դիմում է

⁷ Նույն տեղում, էջ 388:

⁸ Նույն տեղում, էջ 286—287, հմմտ. «Անանիայի Շիրակունույ Մնացորդք բանից», ի լոյս ած Գ. Պ., Ս. Պետերբուրգ, 1877, էջ 9:

⁹ «Պատմութիւն Սերբոսի», աշխատասիրութեամբ Գ. Վ. Արգաւոյանի, Երևան, 1979, էջ 156:

¹⁰ Տե՛ս «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, էջ 417—418:

Նազիանդացու համապատասխան գործերի դրվագներին և խնդիրը մեկընդմիջտ լուծված համարում: Այսպես, օրինակ՝ «Բանն մարմին եղև և բնակեաց ի մեզ, որում վկայէ անպարտելի ախոյեանն Գրիգորիոս՝ անսկիզբն սկսանի, անեղն ելանի, անմարմինն մարմնանայ»¹¹, կամ՝ «...որում վկայէ Աստուածաբանն Գրիգոր՝ աստուած խաչեալ, արեղակն խաւարեալ և դարձեալ լուսաւորեալ»¹²:

Ստեփանոս Սյունեցու թղթերում բազմաթիվ քաղումներ կան բյուզանդական եկեղեցու գործիչ-մատենագիրների թղթերից, ճառերից, մեկնություններից և այլ գործերից: Հիմնականում շի հղվում գործի խորագիրը, բայց մշտապես հիշվում է հեղինակը համապատասխան գնահատությամբ: Սյունեցու այդօրինակ թղթերից մեկում՝ «Յաղագս ժողովոյն սուրբ հարցն...»¹³, Նազիանդացին վկայակոչվում է մի քանի անգամ: Ժողովի արծարծած խնդիրներից է նաև Քրիստոսի բնության հարցը, ուստի և իբրև առկա խնդրի բնորոշ բացատրություն Սյունեցին վերապատմում է Նազիանդացու հետևյալ միտքը. «Եւ Գրիգոր Աստուածաբան ի Պասեքին ճառի կատարեալ ասէ զՔրիստոս ոչ աստուածութեամբն միայն, քան զոր ոչ ինչ է կատարելագոյն, այլ յաղագս առեցելոյ մարմնոյն եւ աւծելոյ աստուածութեամբն»¹⁴: Համաբնույթ մեկ այլ առիթով Սյունեցին իբրև խնդրի պատասխան-լուծում առաջադրում է Նազիանդացու մի մեկնաբանությունը. նույն հատվածը, Սյունեցուց բոլորովին անկախ, մասնակի տարբերություններով վերապատմում է նաև Ասողիկը:

Համադրենք այդ դրվագները.

«Յաղագս ժողովոյն սուրբ հարցն
...բուրք երանելոյն Ստեփաննոսի
Սիւնեաց եպիսկոպոսի...»
Ձեռ. № 948 (1196 թ.)

«Ստ. Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական»,
Պետերբուրգ, 1885

«...որպես եւ Աստուածաբանն Գրիգոր մեկնէ զասացեալն զկամս իւր եւ զառաքչին հար, որ ըստ Փրկչին է իմանալ, քանզի նորա կամելն ոչ ընդդեմ աստուծոյ էր, քանզի աստուած էր բովանդակն, այլ ըստ մեզս իբրև մարդկային ախորժակացս, որ ոչ ամենայն

«Եւ Գրիգոր Աստուածաբան զկամացն այսպէս գրէ. զՓրկչին ասելն՝ ոչ զի զկամս իմ արարից. զի եթէ ոչ ի ստորինս իշելոյն յինքենէ այսոքիկ ասացեալ լինէին՝ ասէաք արդեօք, իբր ի մարդոյ տպաւորեալ զԲանն, որ ըստ Փրկչին իմանան. քանզի նորա կամելն ոչ ընդ-

¹¹ Ձեռ. № 571, էջ 65բ:

¹² Նույն տեղում, էջ 66բ:

¹³ Ձեռ. № 948, էջ 231բ—250բ, հմմտ. ձեռ. № 1525, էջ 192ա—205ա:

¹⁴ Ձեռ. № 948, էջ 238 ա:

իրաւք զհետ երթայ աստուածայնոյն,
այլ ընդդեմ կա եւ մարտնչի ահաւասիկ
մի կամս յայտ արար՝ աստուածային
միայն» (էջ 243ա—բ)։

դէմ Աստուծոյ է, այլ յԱստուծոյ բո-
վանդակն, այլ ըստ մեզ՝ իբրև մարդ-
կային ախորժակացս ոչ ամենայն իրօք
զհետ երթայ աստուածայնոյն» (էջ
216—217)։

Տարոնեցու պատմածը Սյունեցուց անկախ ենք դիտում այն պարզ
պատճառով, որ դրանք Նազխանդացուց կատարված քաղովի մեջ են
ընդհանուր, իրենց պատումի մեջ՝ միանգամայն տարբեր։ Բացի այդ՝ Ա-
սողիկի Պատմության մեջ ևս Նազխանդացու ճառերից քաղում կատարե-
լու նշված օրինակը միակը չէ, այլ կան ուրիշ հատվածներ ևս։ Անդրա-
դառնանք դրանցից մեկին։ Դավանական խնդիրներ քննելիս Ասողիկը
օգտվում է Նազխանդացու համապատասխան մեկնաբանություններից.
«Եւ զի ա՞րդ ոք յանդգնի ասել երկուս Աստուածս։ Քանզի Բանն և յառաջ
իսկ ունէր զաստուածութեանն անուն, և զի զկնի անճառ միաւորութեանն
և խառնելոյ զանխառնելի բնութիւնսն՝ և զառեալ մարմինն աստուածա-
ցոյց և եղև ըստ բնութեան առողին և ըստ զօրութեան, որպէս Գրիգոր
Աստուածաբան ասէ. և դարձեալ յայլում ճառի՝ եթէ զաստուածային
պատկերն ընդ մարդկային կերպարանն խառնեաց, և ծանեաւ տունն
Իսրայէլի, թէ Տէր և օժեալ զնա Աստուած արար. զոր մեկնեալ իւր նոյն
ինքն Աստուածաբանն, յոր դուքն պարծիք-ի մերն պարծանք...»¹⁵։

Դատելով հայ մատենագիրների վկայություններից՝ Նազխանդացին
մեզանում հիրավի մեծ համարում է ունեցել, իսկ նրա աշխատություն-
ները դիտվել են զորեղ կովաններ՝ հավատի շուրջ ծավալված վեճերին
մասնակցելիս։ Մատթեոս Ուռհայեցին Գևորգ Ուռհեցու մահվան հիշա-
տակի խոսքում չի վկայակոչում հանգուցյալի արժանավորության կամ
պատրաստվածության որևէ ապացույց, այլ պարզապես, իբրև գնահա-
տություն, նմանության զուգահեռ է անցկացնում նրա և Նազխանդացու
միջև. «Սա ուսմամբ և աստուածային շնորհօքն էր հաւասարեալ գիտու-
թեամբն իւրով առաջին աստուածախօս սուրբ վարդապետացն յունաց՝

¹⁵ «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», էջ 209։ Բար-
սեղ Կեսարացու «Քրիստոս ծնեալ» ճառից քաղված մի հատված («Աստուած ի մարմ-
նում ոչ առածոյ գործովք...», Ասողիկ, էջ 212) խաթարվածության պատճառով չի թարգ-
մանվել ռուսերենի (տե՛ս «Всеобщая история Степаноса Таронского», переведена
с армянского и объяснена Н. Эминым, Москва, 1864, стр. 150, հմմտ. ծան. 24)։
Ասողիկի Պատմության հայերեն բնագրի հրատարակիչը նշված հատվածը թողնում է
առանց միշամտության, իսկ ծանոթագրության մեջ (ծան. 118) «միաւորեալ ներկայա-
ցուցանելով զմարդն» կապակցությունը Նոր հայկազյան բառարանագիրների հետևու-
թյամբ կարդում է «զմիաւորեալն կացուցանելով մարմին» (ՆՀԲ, Ա, 282)։

Գրիգորի Աստուածաբանի ասեմ և Յովհաննու Ոսկեբերանի, Բարսղի և այլ նմանեաց նոցա»¹⁶։

Համեմատության եղանակով գնահատելու նույն միջոցին ենք հանդիպում նաև Գանձակեցու Պատմության մեջ։ Մեծ գովեստով խոսելով Հովհաննես Իմաստասերի աշխատությունների մասին՝ Կիրակոս Գանձակեցին գրում է. «...վասն զի յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ, նորա բանքն ամենայն իմաստասիրական ուճով, որպէս գրիգորի Աստուածաբանին, և ոչ գեղջուկ»¹⁷։ Պատմիչը նույն կերպ է վարվում նաև Ներսես Մեծի իմաստության, շրջահայացության և առհասարակ հռչակի մասին խոսելիս՝ նրան համեմատելով Գրիգոր Նազիանզացու հետ. «...զի նոր ոմն Գրիգորիոս Աստուածաբան յարուցեալ է»¹⁸։

Մի փոքր այլ է Ներսես Շնորհալու հղում-բաղումների բնույթը. սովորական վկայակոչություններից զատ, Շնորհալու անվան հետ են կապվում Նազիանզացու առանձին գործերի ընդօրինակության կամ ձեռքբերման միջոցին գրառված գնահատությունները, որոնք միաժամանակ պատկերացում են տալիս հայոց միջնադարյան ուսումնական հաստատություններում այդ ձեռագիր գրքերի կատարած դերի մասին։ Այսպես, «Առ որս» ճառաշարքի մի ընդօրինակության առիթով կարդում ենք. «Յայնմ ժամանակի Ս. Ներսէս Շնորհալի ի միջահասակի տիոցն գոլով, ախտակցաբար տրտմութեամբ գրէր՝ ի հնաւանդ օրինակի Առ որս գրոց Աստուածաբանին, զոր և գնիւք ասէ թափեալ ի Յունաց, որք կողոպեալ էին զայն»¹⁹։ Հետագա հիշատակագրությունը ցույց է տալիս, որ նշված ընդօրինակությունն այնուհետև անցել է Գրիգոր Տղային. «Յիշեսջիք և զԳրիգորիս եպիսկոպոս, զորդի եղեալ եղբար տեառն Ներսիսի, որ և

¹⁶ Մատթէոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 244, հմմտ. «Հանդէս ամսօրեայ», 1869, էջ 386—387։

¹⁷ Կ. Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 113։

¹⁸ Նույն տեղում, էջ 119։

¹⁹ «Միսուան», հաւաքեալ ի Ղ. Ալիշան, Վենետիկ, 1885, էջ 532։ Շնորհալու հիշատակարանի ընդօրինակությունը պահպանվել է № 4149 ձեռագրում. «Յետ յորունց ստացաւ զայն և զիս յիշեսջիք և Քրիստոս զներսէս անարժան գոլով եպիսկոպոս և եղբայր կաթողիկոսին Հայոց տեառն Գրիգորի, որ ստացա զսա գնիւք յաւարէն յունաց ի վանորէից Հայոց։ Յորժամ ել թագաւորն հռոմոց յաշխարհն Կիլիկիեցոց և առ զնա յիշխանէն Լեոնոյ, որ էր հայ ըստ ազգի և հաւատոյ։ Եւ աւերեաց զրազում վանորայս և զեկեղեցիս և զնշանս տէրունականս խորտակէին։ Եւ անհնարին հարուածս ազգի մերում հասուցանէին քինաբար և այս եղև ի թուականիս ԾՁԶ։ Եւ երկրորդ գալ նորին արքայի եղև ԾՂԲ...» (էջ 139բ), հմմտ. ձեռ. № 3495, էջ 76ա։

յետոյ կաթուղիկոս Հայոց, որում և զայս գիրս շնորհաց՝ ուսեալ ի նմանէ և վարժեալ»²⁰:

Քիչ շին նաև այն դեպքերը, երբ Շնորհալին ևս Նազիանզացու միտքը դիտում է իբրև արծարծվող խնդրի վերջնական ու ճշգրիտ լուծում. «Բազումք ի սրբոց վարդապետաց խաւսեցան ի բանս իւրեանց ընդդէմ զայսպիսի ասողաց... զմիոյն ասեմ՝ զՄեծին Գրիգորի Աստուածաբանի, զամենեցուն համարեսցուք ասել որպէս ի միոյ հոգւոյ շարժեցեալք, զոր և ասին յաղագս այսր խորհրդոյ այսպէս»²¹: Միանգամայն տեղին է Ալիշանի այն պնդումը, թե «... ս. Գրիգորի Աստուածաբանի և ս. Աթանասի վկայութեամբք կը հաստատէ Շնորհալին իր պարզաբանութիւնը»²²:

Շնորհալու գրական վաստակի մեջ հանդիպում են նաև շափածո գնահատության օրինակներ՝

Որպէս Դաւթեան Սաղմոսարան,
 Եւ Սողոմոն առակարան.
 Մեծն Գրիգոր Աստուածաբան
 Եւ սուրբ Եփրեմ Ասորական²³:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 8608 գրչագրում կա մի բնագիր՝ «Պատասխանի թղթոյն Զաքարիային, զոր գրեաց Յոհան վարդապետ»²⁴: Թղթի հեղինակը լավածանոթ է հունական եկեղեցու նշանավոր հայրերի գործունեությանն ու գրական գործերին և բնականաբար

²⁰ Ձեռ. № 4149, էջ 140ա, հմմտ. Գ. Ա. կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 356, նաև՝ էջ 580: Նախկինում ևս Գ. Հովսեփյանը անդրադարձել է սույն հիշատակարանին և որոշ երկմտանք է ունեցել Գրիգորիսի անձնավորության շուրջ. «... ո՞ր Գրիգորիսն է, դժուար է ճշդութեամբ որոշել. կարծում եմ Գրիգոր Վկայասէր կամ Գրիգոր Գ., ուրեմն ԺԱ.—ԺԲ դարու գիր» (Գաբեգին Յուլսէփեան, Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, Գ, Վաղարշապատ, 1913, էջ 29):

²¹ Ձեռ. № 579, էջ 62բ:

²² Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 142:

²³ Ն. Շնորհալի, Բանք շափաւ, Վենետիկ, 1928, էջ 240, հմմտ. «Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», կաղմեց՝ Մ. Քէշիշեան, Վիեննա, 1964, էջ 336: Ներսես Շնորհալու մատենագրական ժառանգության գնահատության առիթով Ղ. Ալիշանը կատարում է հետևյալ համեմատությունը. «Գալով մեր եկեղեցւոյ Հօր և Վարդապետին աստուածաբանական գիտութեան և արժէքին, շէինք կրնար պահանջել արժուական միտք մը անկէ՝ որ աղանոյ թևով կօղապարէ թէ և սուր և մօտ արժուեաց բոյներու. ոչ էր Գրիգոր Աստուածաբան մը ըստ սրատեսութեան...» (Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, էջ 433—434):

²⁴ Ձեռ. № 8608, էջ 201բ—240բ: Մասնավոր քննության խնդիր է, թե «Յոհան վարդապետին» ո՞ւմ հետ պետք է նույնացնել՝ Օձնեցո՞ւ, թե՞ Սարգավակի:

իր այս կամ այն թեզը հիմնավորելիս դիմում է նրանց թղթերին ու ճանարին և համապատասխան հղումներ կատարում: Հավանաբար այդ եղանակով են առաջացել նաև Նազիանզացու թղթերից կատարված քաղումները, որոնք ասվածը հավաստի, անկասկած դարձնելու միտում ունեն²⁵:

Նազիանզացու աշխատությունների վկայակոչությամբ մարդ-աստված խնդրին վերաբերող հղում ունի նաև Հովհաննես Երզնկացին: Նրա Մեկնություններից մեկում կարդում ենք. «...որպէս մեծն Գրիգոր Աստուածաբան վկայէ՝ և ի ձեռն այսոցիկ խոստովանի, եղեցի մարմնացեալ բանին աստուծոյ մի բնութիւն ոչ զէութիւն մարմնոյն բարձեալ՝ զի մի շփոթեացի անշփոթելի տնաւրէնութիւն Քրիստոսի, այլ զապակայութիւն բնութեան կորուսեալ, որով անճառելի միութիւն բանին աստուծոյ լինիցի: Եւ այս է, որ առնէ զհերձուածողացն մոլորութիւն կամ յանշփոթութեան հարկաւոր բնութեամբ բաժանել, որ է ուրացութիւն փրկութեան անձանց իւրեանց»²⁶:

Ի տարբերություն նախորդ մատենագիրների՝ Ստ. Օրբելյանը ոչ թե իր այս կամ այն միտքը հիմնավորելիս է դիմում Նազիանզացուն, այլ կոչ է անում կիրառել նրա դրույթները. «Պարտ էր նոցա զերանելեացն հարանց ի կիր առնուլ զամենապայծառ և զհրաշափառագոյն յաղագս մարմնաւորութեանն տեառն զասացուածս՝ զԱթանասի Աղեքսանդրացւոյ, զԲարսղի Կեսարացւոյ, զԳրիգորի Նազիանզացւոյ, զԳրիգորի Նէոկեսարացւոյ Սքանչելագործի, զԳրիգորի Նիւսացւոյ՝ եղբօր Բարսղի...»²⁷:

Հայտնի է, որ դավանական վեճերի ժամանակ հայոց եկեղեցու վարդապետները հաճախ էին հենվում հունական եկեղեցու նշանավոր հայրերի, այդ թվում Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու գործերի վրա: Ուստի և քիչ չեն այդ իրողությունը հավաստող-վերապատմող հիշատակարան-հիշատակագրությունները ևս: «Առ որս» գրքի ընդօրինակության առիթով 1463 թ. գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Փառք... որ ետ կարողութիւն իմոյ տկար և տարտամ անձինս հասանել խաղաղութեամբ յաւարտ հոգէլից և աստուածային գանձիս Առ Որսիս, որ յորդառատ շնորհիւ և աստուածային լցեալ հոգովն Աստուածաբանն Գրիգորիոս արարեալ աստուածաբանութիւն և ուղղափառ դաւանութիւն և ընդդիմադրութիւն ընդդէմ հերձախկոսացն, ընդդէմ Նոմիոսի և Ատիկոսի, ընդդէմ Արիոսի և Մակեդոնի և այլ ամենայն համախոհացն նոցա: Եւ ճշմարիտ և հաստատուն դաւանութիւն է մերոյ Հայաստանեաց եկե-

²⁵ Ձեռ. № 8608, էջ 219բ: Համարնույթ հղումներ կան նաև 219բ և 220ա էջերում:

²⁶ Ձեռ. № 2173, էջ 213բ, հմմտ. էջ 412ա:

²⁷ «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 121:

ղեցոյս. և ամրացեալ կայ մերս եկեղեցի ի վերայ սորին դաւանութեանն»²⁸:

Հայոց միջավայրում մեծ են եղել Նազիանզացու անձի ու գործի ճանաչումն ու համարումը, այլապես չէինք ունենա այն ղգուշացում-հիշատակագրութիւնները, որ կատարում էին նրա գրական վաստակը ընդօրինակողներն ի ուսումնառութիւն հանձնարարելիս. «... այլ եթէ խիստ գիտնաւոր շես, եպերանս մի դնել զի Աստուածարան է»²⁹: Ուստի և հասկանալի պիտի լինի Նազիանզացուն նմանվելու, մերձենալու այն ձգտում-հակումները, որ կան գրիչների հանձնարարութիւններում: Այսպես, օրինակ՝

Անուանակցին քո նըմանի
Գրիգորիոս Լուսաօրչի
Սքանչելագործ սբ. Գրիգորի
եւ Աստուածարան վարդապետի³⁰:

«Երեք մեծ կապաղովկացիներին» գնահատելու լավ օրինակ է № 5518 գրչագրի շափածո հիշատակարանը՝

Նիւսացիտ Գրիգորիոս, որ և անուամբ հրեշտակային
եւ սրբազանդ Բասիլիոս պատմեա գրիչ անճառ բանին
Սերտեալ ի սէրն աստուածային Գրիգորիոս Աստուածարան (էջ 117բ):

Հայոց միջավայրում հաճախ Նազիանզացիին շափանիշ է դիտվում այս կամ այն ազգային մտավորականի կյանքն ու գործը գնահատելիս: Այդօրինակ բնութագրման փորձ է Որոտնեցուն բնորոշող հետևյալ դրվավագր. «...եւ թողութիւն մեղաց հայցել առաջի զենման գառինն տեառն սորա՝ ժրաջան եւ տիեզերալոյս մեծ ըարունապետին Յոհաննու Որոտ-

²⁸ «ԺՅ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 190:

²⁹ «Յուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին», Բ, կազմեցին Ն. Ակիևեան, Հ. Ոսկեան, Վիեննա, 1971, էջ 121բ:

³⁰ «Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ», Ա, կազմեցին՝ Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 251: Մեկ այլ հիշատակարանում Նազիանզացիին վեհ է, իմաստուն և գովելի:

Աստուածարան հիանալի,
Վեհ, իմաստուն և գովելի,
Այսաւր մահու նա պարուրի (ԺՅ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ), Գ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 253):

նեցույ, որ եղել լուսաւորիչ երկրորդ Հայկազնեան ազգիս, եւ որպէս քաջ ախոյանսն՝ Աստուածաբանն Գրիգոր եւ զերանելին Կիւրեղ»³¹:

Համեմատութեան միջոցով գնահատելու, նշանավոր ս. Հայրերի դասին կարգելու համարնույթ օրինակ է Գրիգոր Տաթևացու «Քարոզ-գրքի» ընդօրինակման առիթով գրված սույն հիշատակարանը. «...գրեցաւ զիրք Քարոզութեանս առաջին հատորի, հաւաքեալ ձեռամբ սուրբ հաւրն մերոյ՝ երկրորդ լուսաւորչի, մեծ վարժապետի, քաջ հռետորի և անյաղթ փիլիսոփայի, արթուն անուն գերապատիւ սուրբ րաբունապետի Գրիգորի՝ աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ, որ էր աշխարհաւ Քաջբերունի, ի կարգէ աստուածաբան վարդապետաց սրբոց՝ երանելոյ՝ Գրիգորի Աստուածաբանի, Կիւրղի և Աթանասի...»³²:

Գրիգոր Նազիանդացու հեղինակութիւնն այնքան հաստատ ու տարածված է եղել, որ երբեմն եկեղեցու նշանավոր հայրերը աթոռազրկվելիս կամ նրանից հոժարակամ հրաժարվելիս օրինակ են բերում Նազիանդացուն. «Չեմ լաւ քան զԳրիգոր Աստուածաբան կամ զՅոհան և զայլս բազումս, զի ոմանք կամաւ և ոմանք ի բռնութենէ ի բաց կացին յաթոռոցն»³³: Կան գրառումներ, որոնցում այս կամ այն իրողութիւնը արդարացնելու փորձ է արվում՝ նույն Նազիանդացուն ի ցույց դնելու ճանապարհով. «Բամբասեն զՀայք, թէ զազգականս առնեն կրնքահայր. ահա Աստուածաբան Գրիգոր իւր հաւրն հոգևոր հայր եղև»³⁴:

Նազիանդացուն գնահատելու և ազգային եկեղեցու մեծավորների արատները դատապարտելու նպատակադրում ունի հետևյալ հիշատակութիւնը. «Սա այն Աստուածաբանն է, որ աղաշանօք մեծին Թէոդոսի թագաւորին նստաւ յաթոռն Կոստանդնուպօլսի, եւ յետ մաքրելոյն զյարեւմուտսն հրա[ժա]րեցաւ կամաւ ի պատուոյն, զի մի լիցի պատճառ

³¹ «Ժ՛ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 508: Ձեռագրերում հանդիպում են նաև ազգային մեծութիւններին (Ներսես Մեծ, Մեսրոպ Մաշտոց և այլք) Գրիգոր Նազիանդացու հետ համադրելու այլեւ-վայլ օրինակներ (տե՛ս ձեռ. № 732, էջ 319բ, «Ժ՛ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 147): Ձեռագրերում հաճախ կարելի է հանդիպել «ըստ մեծին Գրիգորի Աստուածաբանի...» (ձեռ. № 500, էջ 93բ), «զհրաման Աստուածաբանի սրբոյն Գրիգորի ի վկայութիւն ածեն...» (ձեռ. № 724, էջ 13ա, հմմտ. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 378, Գաբեգին կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթի-լիաս, 1951, էջ 301, նաև էջ 305), «բանիբուն վարդապետին է ասացեալ» (ձեռ. № 732, էջ 212ա), «ասէ Գրիգոր Աստուածաբանն» (Բարկէն կաթողիկոս, Յուցակ..., էջ 623—624) և նման այլ արտահայտութիւններ:

³² «Ժ՛ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 100—101:

³³ Ձեռ. № 500, էջ 62բ:

³⁴ Ձեռ. № 631, էջ 44բ:

խոռովութեան, եւ ոչ որպէս այժմն սպանանեն զմիմեանս, կաթուղիկոս՝ զկաթուղիկոս, պատրիարգ՝ զպատրիարգ, եպիսկոպոս՝ զեպիսկոպոս, կարգաւոր՝ զկարգաւոր, վասն մարմնաւոր մեծութեան...»³⁵:

Նազիանզացու մասին եղած վկայութիւններէ մեջ առանձնանում են շափածո ստեղծագործութիւնները: Ինչպես և սպասելի էր; բանաստեղծական մտահղացման նյութ են դարձել «երեք մեծ կապադովկացիներէ» կյանքի ու գործունեութեան առավել ոգևորող դրվագները, դավանական վեճերի պահին ցուցաբերած նրանց հաստատակամութիւնը, պայքարին դիմակայելու վճռականութիւնը և այլն: Այս առումով ուշադրութեան է արժանի «Գանձ Բարսեղի հայրապետի, (ի) յԱռաքել վարդապետէ» խորագրով բնագիրը³⁶: Առաքել վարդապետը, ինչպես նկատելի է բանասեր Ա. Քյոշկերյանը³⁷, Առաքել Բաղիշեցին է³⁸, որին պատկանում են մնացյալ գանձերը ևս՝ գրված եկեղեցական հայրերի (օտար և հայազգի) գործունեութիւնը լուսաբանելու և հիշատակի օրը փառաբանելու մղումով: Նույն միտումն ունի նաև խորագրով Կեսարացուն ձոնված, բայց հավասարապես նաև Նազիանզացուն վերաբերող նշված գանձը:

Առաքել Բաղիշեցու կրտսեր ժամանակակից Կարապետ Բաղիշեցու տաղերում և գանձերում ևս Գրիգոր Նազիանզացուն վերաբերող դրվատումներ կան³⁹: Ձեռագրերում նրա անվամբ հանդիպում են տաղ, ողբ, գանձ և այլ գործեր: «Առ որս» ժողովածուի ընդօրինակութեան առիթով

³⁵ «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», Ա, Երուսաղէմ, 1966, էջ 364: Այլուր ունենք այն հաղորդումը, թե՛ «...զհրամանս Աստուածարանի սրբոյն Գրիգորի ի վկայութիւն ածին, թե Յիսուս երեսնամեա մկրտի» (Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 751):

³⁶ Ձեռ. № 6527, էջ 204բ—206ա: № 6527 գրչագրի նյութերի ցանկը տե՛ս «էջմիածին», 1970, Ժ, էջ 50—55:

³⁷ «էջմիածին», 1970, Զ—է, էջ 98—103:

³⁸ Հմմտ. «Առաքել Բաղիշեցի», ուսումնասիրութիւն, քննական բնագրեր և ծանոթագրութիւններ Արշալույս Ղազինյանի, Երևան, 1971, էջ 156, ծանոթ.:

³⁹ «Կարապետ Բաղիշեցին տաղասաց է և գանձասաց, և սա Առաքել Բաղիշեցուն բոլոր գանձերը հաւաքած և օրինակած ըլլալով կասկած էլու տայ անոր աշակերտած ըլլալուն» («Բաղմավէպ», 1907, էջ 61): Կարապետ Բաղիշեցու գրական վաստակը հիմնականում անտիպ է: Մեզ ճանոթ է երեք տպագիր տաղ և մի ողբ (տե՛ս «Արարատ», 1895, էջ 130, Ն. Ակիևեան, Մատենագրական հետազօտութիւններ, Գ, Վիեննա, 1938, էջ 325—350, «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», Գ, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, 1968, էջ 250: Տաղերգուի կենսագրական առանձին դրվագների ճշգրտման և մի գանձի հեղինակային պատկանելութեան հարցերում նկատառելի են բանասեր Պ. Խաչատրյանի դիտողութիւնները (տե՛ս նրա «Հայ միջնադարյան պատմական ողբեր», (ԺԴ—ԺԷ դդ.), Երևան, 1969, էջ 92—98):

Կարապետ Բաղիշեցին հեղինակել է մի տաղ, ուր Գրիգոր Նազիանզացին գնահատվում է այսպես.

Գրիգորիոս Աստուածարան,
 Հովի՛ բարի, քաջ ախոյեան,
 Հերձուածողաց ընդդիմարան,
 Եւ շատադով ճշմարտութեան⁴⁰,

Այնուհետև տաղասաց-գրիչը ընդգծում-պատճառարանում է ընդօրինակվող «Առ որս» գրքի կարևորությունը՝ նրանից «զբան գիտութեան» սովորելը, նրանով «յոյժ քաջարան» դառնալը.

Անունդ Հսկող է արթնութեան,
 Արարէր զգիրս դայս աննըման
 Եւ մեղ ետուր շնորհաց մատեան:
 Սովաւ առնումք դրան գիտութեան,
 Հրճուեալ ցնծամք ուրախական,
 Սովաւ լինիմք յոյժ քաջարան,
 Յաղթեմք դասուցն արիոսեան.
 Ընդդիմանամք մաքառական,
 Չար ժողովոյն քաղկեդոնեան,
 Մակեդոնի, շար Նեստորեան
 Հերձուածողացն խմբից համայն⁴¹,

Մաշտոցի անվան Մատենադարանի № 5785 գրչագրում⁴² պահպանվել է նույն հեղինակի մի գանձը⁴³, որի բովանդակությունը կառուցված է Նազիանզացու վարքի հիմնական դրվագների վրա՝ դպրոց-ուսումնառությունից մինչև գործունեության ոլորտներն ու ավարտը: Ներկայացվող գործը բանաստեղծական առումով մի առանձին հմայք չունի: Նազիանզացու մասին եղած այլ շափածո գործերի նմանությամբ, սույն գանձի հեղինակը ևս Նազիանզացուն օգնական ունենալու նույն հույսն է փայփայում.

⁴⁰ «Մալր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», Գ, էջ 250:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Ձև. № 5785, էջ 113ա—115բ, հմմտ. «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», Բ, կազմեց Հ. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 661:

⁴³ Ինչպես նկատել է բանասեր Պ. Խաչատրյանը, հայագետ Ն. Ակինյանը նշված գանձը «...սխալմամբ վերագրում է 16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին հանդես եկած Կարապետ Փարխնդեցուն, որ անվանվել է նաև Կարապետ Բաղիշեցի» (Պ. Մ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբեր, էջ 97): Բայց կան ուղղակի կուլաններ, որոնք կանխում են այդ շփոթը: Այսպես, օրինակ՝ Գրիգոր Նազիանզացուն նվիրված գանձի հեղինակը և գանձարանի ընդօրինակողը գրիչ Կարապետ Բաղիշեցին է.

Տէր վարդապետ սուրբ Աստուածաբան
Քրիստոնէից դու զէն և վահան,
Բարձր պարիսպ եւ ամուր ապաստան
Ի նեղութեան մեր լեր աւզնական⁴⁴։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 7785 ձեռագիրը (ԺԴ դ.) գանձարան է, ուր նարեկացու, Շնորհալու, Լամբրոնացու և այլոց հայտնի ստեղծագործութիւնների կողքին կան նաև քիչ ծանոթ տաղերգուների գործեր⁴⁵։ Դրանցից է «Քարոզ Գրիգորի Աստուածաբանի՝ Մովսէս վարդապետի ասացեալ» շափածո խոսքը⁴⁶, որը գեղարվեստական առանձնակի հետաքրքրութիւն չի ներկայացնում, բայց ուշագրավ է հենց Նազիանզացուն ձոնված լինելու հանգամանքով։

Այստեղ անհրաժեշտ ենք նկատում ներկայացնել երկու բնագիր ևս։ Նախ՝ «Տաղ սրբոյն Բարսղի, Եփրեմի և Գրիգոր Աստուածաբանին» գործի մասին՝ ավանդված երկու ձեռագրերով⁴⁷։ Սույն տաղը երկու դեպքում էլ անանուն է։ Համեմատութիւնը ցույց է տալիս, որ № 7785 ձեռագրում եղած խորագրի դիմաց № 2672 գրչագրում բացակայում է Բարսեղի անունը և ս. Հայրերի գնահատութիւնն ավելի ընդհանուր տեսք ունի։ Մի բան որոշակի է, որ միջամտութիւնը երբ և ում ձեռքով էլ կատարված լինի՝ նպատակը մասնավոր բնութագրումներն ավելի ընդհանրական ներկայացնելն է եղել և ոչ թե Բարսեղին վերաբերող նկարագրութեան օտարումը։ Տաղն իր, այսպես կոչված, թե՛ նախնական և թե՛ միջամտված տեսքով ս. Հայրերի գործունեութեան և հայրախոսա-

Գանձ Գրիգորի Աստուածաբանին
Ի գծողէ այսմ գանձարանիս՝
յանմիտ Կարապետ Բաղիշեցոյ։ (Տե՛ս Ձեռ. № 5785, էջ 113)։

Բացի այդ՝ Հ. Ոսկյանը նույն գանձարանի այլ ընդօրինակութիւն նկարագրելիս որևէ հեղինակային շփոթ չի արձանագրում (տե՛ս Հ. Ոսկյան, Տուցակ..., էջ 661)։ Ի վերջո՝ տարիներ անց նույն գանձից հատված վկայակոչելիս ն. Ակինյանն այլևս չի անդրադառնում հեղինակային ինքնութեան խնդրին (տե՛ս ն. Ակինեան, Մատենադրական հետազոտութիւններ, Դ, Վիեննա, 1938, էջ 321, հմմտ. ն. Ակինեան, Բաղիշի դպրոցը (նպաստ մը հայոց եկեղեցւոյ պատմութեան և մատենագրութեան), Վիեննա, 1952, էջ 163—165)։

⁴⁴ Ձեռ. № 5785, էջ 115բ։

⁴⁵ Այս նույն գրչագրում առկա է նաև «Տաղ սրբոց քառասնիցն՝ Բարսղի ասացեալ» մեզ անծանոթ գործը (էջ 155բ—156բ)։

⁴⁶ Ձեռ. № 7785, էջ 97բ—101բ։ Մովսէս վարդապետի կյանքի ու գործունեութեան մանրամասները մեզ ծանոթ չեն։

⁴⁷ Ձեռ. № 7785, էջ 101բ—102ա, հմմտ. ձեռ. № 2672, էջ 59ա, Հ. Անասյան, Հայկական մատենագիտութիւն, Բ, Երևան, 1976, էջ 1387։

կան դրականության գնահատություն է՝ հայտնի անունների շրջանակներում:

Նրկրորդ բնագիրը՝ «Մեղեդի Գրիգորի Աստուածաբանի և Դրիգորի Սբանչելագործի»⁴⁸, նույնպես անանուն է: Սույն շափածո ստեղծագործության տողերի (ընդամենը 12 տող է) սկզբնատառերը հոդում են Գրիգոր, որը, հավանաբար, գրիչ-հեղինակի անունն է: Բանաստեղծական խորք ու երևակայություն դժվար է տեսնել նրանում, եղածը ջերմ գնահատության ցանկություն է:

Այսպիսով, վերևում շարադրվածը հնարավորություն է տալիս ասելու, որ Գր. Նազիանզացին հայ իրականության մեջ հիրավի լայն ճանաչման արժանացած հեղինակություն է եղել, թափանցել է մեր մատենագրության տարբեր ժանրեր և ներբողման արժանացել⁴⁹:

Պահպանված հիշատակությունները կարելի է խմբավորել ոչ միայն ժանրային առումով, այլև բովանդակությամբ: Դժվար չէ նկատել, որ գրեթե մինչև XII դ. ընդգրկող վկայություններում Նազիանզացին դերականացապես հիշվում է դավանական խնդիրների առնչակցությամբ և նրա գործունեությանը վերաբերող գնահատությունները համեմատաբար դուրսայ են:

Հետագա հղումներում, հատկապես հիշատակարաններում և շափածո գործերում շատ ավելի ընդգծված ու ընդարձակ են ներկայացվում

⁴⁸ Ձև. № 2672, էջ 89բ—90ա:

⁴⁹ Նազիանզացուն վերաբերող հիշատակագրություններ կան Գրիգոր Մագիստրոսի թղթերում (տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Աղէքսանդրապոլ, 1910, էջ 63, 148, 226), Գրիգոր Վկայասերի ճառերում (տե՛ս ձև. № 502, էջ 99բ, 95բ), Ներսես Լամբրոնացու թղթերում (տե՛ս ձև. № 502, էջ 130բ, 131բ, 136բ, 138ա), Կիրակոս Գանձակեցու Պատմության էջերում (էջ 142, 331, 340, 342), Բաղդասար Ղալիբի Ժամանակագրության մեջ (տե՛ս «Մանր ժամանակագրություններ», XIII—XVIII դդ., I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 337) և այլուր: Այսօրինակ նյութերն այնքան շատ են ու տարածված, որ, կարելի է ասել, դրանք ձեռքի տակ լրիվ ունենալու համար պիտինայել թեմային անմիջականորեն շանչվող հարյուրավոր ձեռագրեր: Մյուս դժվարությունն էլ այն է, որ այդ նյութերը բոլորովին օտար խորագրերի պատճառով դուրս են մնացել ձեռագրացուցակների այն թեմատիկ նկարագրություններից, ուր դրանք կփընտրեր մասնագետը: Բերենք մի օրինակ՝ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1522 ձեռագրում («Ճառընտիր, ԺԲ դար) կա մի անանուն բնագիր «Վասն արիանոսացն հերձուածողացն» խորագրով (էջ 385բ—386բ): Բայց իրականում այն ծայրից ծայր Բարսեղ Կեսարացու մասին է և, կարելի է ասել, հայկական միջավայրում ստեղծված այդ բընույթի գործերից լավագույնն է: Հավանաբար նշված պատճառով էլ այն դուրս է մնացել ուշագրությունից և նույնիսկ Հ. Անասյանի նկարագրությունից («Հայկական մատենագիտություն», Բ, էջ 1386—1387):

նրա գործունեության դերն ու մատենագրական վաստակի նշանակու-
թյունը:

Բ) ՀԱՅԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԶԻԱՆԶԱՅՈՒ ԵՐԿԵՐՈՒՄ

Նախորդ քննությամբ տեսանք, որ բազմաթիվ են ու այլազան հայ
մատենագիրների տեղեկությունները Գրիգոր Նազիանզացու մասին: Հա-
կառակ այդ իրողությունը՝ Նազիանզացու գրառումները հայերի մասին
ոչ միայն առատ չեն, այլև եղածներն էլ շափազանց սեղմ են և անո-
րոշ: Այս պարագայում հավանաբար նկատի պիտի ունենալ այն հանգա-
մանքը, որ Նազիանզի եպիսկոպոսությունը գործնական առնչություն
չունի Բարսեղ Կեսարացու թեմի ենթակայության տակ գտնվող Փոքր
Հայքի հոգևոր կենտրոնների հետ, ուստի Նազիանզացու գործերում
չունենք աշխատանքային ազդակներով թելադրված այն նյութը, որ հա-
տուկ է Բարսեղ Կեսարացու նամակներին:

Հայերին վերաբերող Նազիանզացու դիտողությունները կապված են
գերազանցապես աթենյան ուսումնառության շրջանի հետ: Հայտնի է, որ
Աթենքի ուսանողությունը բաղկացած էր տարբեր ազգության պատկա-
նող խմբերից: Հայոց շրջանում նույնպես «Գոյր սովորութիւն... առաքել
մանկունս ի քաղաքն աթենացւոց»¹: Ուսանողական ազգային խմբերը,
մասնագիտական ընդհանուր հետաքրքրություններից բացի, ունեին նաև
իրենց ազգային ավանդական նախասիրություններն ու ծրագրերը, ո-
րոնց հսկումն ու իրացումը օտար միջավայրում, ինչպես երևում է,
միշտ չէ, որ ընթանում էր խաղաղ. այն երբեմն իր հետ բերում էր տա-
րաձայնություն և վեճ: Պիտի ենթադրել, որ Աթենքի հայազգի ուսանո-
ղությունը Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու հետ անհաշտ
էր այդ հողի վրա: Անդրադառնալով այդ վեճերին, «Դամբանականում»
Նազիանզացին գրել է. «Οὐχ ἀπλοῦν γένος εἰρισχῶ τοὺς Ἀρμενίους, ἀλλὰ
καὶ λίαν χρυπτόν τι καὶ ὕφαλον»²:

Սույն դիտողությունը զանազան մեկնաբանությունների առիթ է
տվել: Այսպես, վանական վարդապետը տալիս է հետևյալ բացատրու-
թյունը. «Նախանձ ի վաղուց հետէ կայր ընդ ազգս. և յայտնի ի Բարսղի
յԱրձանականէն է. և պատճառ զայս իմացաք, որ սահմանակից է նոցա
աշխարհն Հայոց, և արութեամբ աւելի, և շատ ինչ յիշատակ քաջութեան

¹ Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Ա, Վենետիկ, 1794, էջ 775, հմմտ. Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 111—112:

² PG, t. 36, էջ 517, հմմտ. Թարգմանությունը՝ KB, II, էջ 173:

դրով ունին, և քան զայլ ազգս լեզուով սեպհական և յար յուսմունս նոցա փութով ծանօթանալ լինէր»³:

Մ. Չամչյանը, վերապատմելով «Դամբանականի» համապատասխան դրվագը, մակաբերում է հետևյալը. «...զի դժուարէին, թէ ինքեանք՝ որք վաղադոյն մտեալ էին յընթացս իմաստասիրութեան, շերեւսցին վերագոյն քան զԲարսեղ՝ որ նորոգ էր եկեալ»⁴: Ղ. Ալիշանը բավական հաշտ է նայում վանականի բերած մեկնաբանությանը և ընդունում է այն⁵:

Հետազոտողներից Չամչյանը ևս փաստորեն հետևում է վանականի վարկածին և խնդիրը բացատրում նախանձով: Իրականում վանական վարդապետի հաղորդումն ունի սրբագրելի կետեր: Ճիշտը այն է, որ քննվող խնդրի պատասխանը պիտի փնտրել «Դամբանականում», բայց ոչ այն հատվածում, որին դիմել են հարցով հետաքրքրվողները: Նազիանդացին անհրաժեշտ է նկատել վերոբերյալ բնորոշումը օժտել որոշ բացատրությամբ: Աթենքի հայազգի ուսանողությանը ներկայացնելիս նա գրում է. «Յայնժամ ի յոլովից նմա ի սովորականացնել ի սիրելեաց ոմանք առ ի հաւրէ եւ յառաջագոյն ընկերութենէն, վասն զի յայնմանէ ի դպրոցէ ելեալք հանդիպէին, մերձեցեալք առ նա (= Բարսեղ Կեսարացուն—Վ. Մ.) անդ ստեղծական բարեկամութեամբ, բացէին մախանք եւ ոչ բարեմտութեան մերձաւորութիւնք, փորձէին զնա վիճելով առաւել, քան եթէ բանականապէս եւ ի ներքոյ խոնարհեցուցանել զինքեանս» (Դամբ., ԺԸ): Սույն բացատրությունը պարզորոշ ցույց է տալիս, որ հայ և հույն ուսանողության վեճերը սկիզբ էին առել տակավին Կեսարիայի դպրոցում ուսանելու տարիներին և որ Աթենքում դրանք վերըսկըսվեցին: Համապատասխան բացատրություն ունի նաև Բարսեղ Կեսարացին: Նազիանդացուն ուղղված նրա մի թղթում⁶ կարդում ենք. «Ծս ինքն զոր ինչ մի անգամ առնեմ ի վերջնումս զայսոսիկ ի գիշերի և ի տուէ գրել ամաչեմ քանզի թողի զքաղաքայինսն կրթարանս իբրև զբիւրուց շարեաց պատճառս, իսկ զիս ինքն չև ևս կարացեալ ի բաց թողուլ:

³ Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 112, հմմտ. Ն. Ակիենեան, Դաւթի Հարբացի անյաղթ փիլիսոփայ, Վիեննա, 1959, էջ 39:

⁴ Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 776:

⁵ Տե՛ս Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 112—113:

⁶ «Թուղթ առ սուրբն Գրիգոր Աստուածաբան՝ եպիսկոպոս Նազիազու Յազգաս վարուց» (ձեռ. № 822, էջ 182բ—188ա): Բարսեղ Կեսարացու սույն թուղթը նրա «Պահոց գրքից» է: «Պահոց գիրքը» Կեսարացու ճառերից և թղթերից կազմված միջնադարյան ժողովածու է, բովանդակում է երեսուներեք բնագիր: Առկա հին ու նոր ընդօրինակությունների համեմատությամբ հրատարակության ենք պատրաստել այդ գրքի հայերեն թարգմանության քննական բնագիրը:

Այլ նմանապէս եմ որոց ի ծովու ի նաւորդութենէ անփորձութեան կորուսեցելոցն և ալեկոծին, որք մեծութեամբ նաւին դժուարանան, որպէս բազում տուողի շարժումն և անտի ի նաւակն փոփոխելով ամենայն ուրեք նաւեն և յամենայնի վարանին և յարեցեալ լինի ի նոսա նողկատումն և մաղձ: Այսպիսի իմն և մերս, զի զտնական զախտսն ընդ մեզ շուրջ բերելով ամենայն ուրեք ընդ նմանապէս վրդովմունսն եմք, որպէս թէ ոչ ինչ անապատութեամբս աւգտեցաք»⁷:

Բարսեղ Կեսարացու վրդովմունքը բացատրելու մի եղանակ կա. նա դժգոհում է Աթենքի համալսարանի հայ ուսանողութեան քննողական վերաբերմունքից⁸: Որ Նազիանզացու վերոբերյալ արտահայտութեան բուն պատճառը հայ ուսանողութեան անբարյացակամ վարմունքն էր Կեսարացու նկատմամբ՝ երևում է ձեռագիր մեկ այլ աղբյուրից ևս. «Մեծն Դաւիթ և Եզնակ Կողբացի շոգան յԱթէնս և լուան և տեսին բիծս ի վարս վարդապետացն և զայրացեալ մեղադրեցին, և նոքա զշարեալ ասեն զհայս կարճ ոգիս և շարաճճիկս և հակառակ և փորձող, զոր յիշէ Աստուածաբան»⁹: Ինչպես տեսնում ենք, «հակառակ և փորձող» արտահայտութեանը ստուգապես վերապահվել է Նազիանզացու հիշյալ բացատրութեանը:

Այսպիսով, քննվող խնդրին առնչվող սկզբնաղբյուրների վերլուծութեանը ցույց է տալիս, որ Նազիանզացու «ոչ պարզամիտ ազգ գտանեմ զհայոց...» միտքը արդյունք է Աթենքի (ինչպես նաև Կեսարիայի) համալսարանի հայ և հույն ուսանողութեան վեճերի թողած տպավորութեան (և ոչ հնուց եկող նախանձի), ուստի և բնավ չի առնչվում բուն ժողովրդի ազգային նկարագրին¹⁰:

⁷ Ձեռ. № 822, էջ 183ա:

⁸ Այդ մասին տե՛ս Կ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան»..., էջ 38—39:

⁹ Ձեռ. № 598, էջ 19բ: Հայտնի է, որ Աթենքի համալսարանի դասախոսների մեջ կային նաև հեթանոսութեան հետևորդներ: Եվ ահա վկայակոչված հատվածի լուան և տեսին բիծս ի վարս վարդապետացն» կապակցութեանը ակնարկ է ոչ քրիստոնյա դասախոսների հասցեին: Այդ մասին տե՛ս Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 38:

¹⁰ Հայկական ավանդութեանը ազգային որոշ անուններ (Դաւիթ, Մովսես, Մամբրե, Պողոս և այլն) ուսումնառութեան շրջանով փորձում է կապել «երեք մեծ կապադովկացիների» հետ: Մինչդեռ Ղ. Ալիշանը «Դաւիթ Անյաղթ յԱթէնս» բնագրական հատվածի հրատարակութեան առիթով իրավացիորեն ծանոթագրել է. «...այս սուրբ հայրապետքս (նկատի ունի «երեք մեծ կապադովկացիներին»—Կ. Մ.) գրեթէ դար մի առաջ էին քան զՄովսէս և զԴաւիթ թարգմանիչս մեր» («Հայապատում», էջ 195, ծան. 1): Մ. Օրմանյանը ներսես Մեծի և «երեք մեծ կապադովկացիների» ծանոթութեանը հնարավոր է համարում Կեսարիայի դպրոցից (տե՛ս «Ազգապատում», Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 164):

Հայերին վերաբերող Նազիանզացու հաշորդ տեղեկությունը ևս կապվում է Աթենքի համալսարանում ուսանելու տարիների հետ: Համալսարանի հռչակավոր դասախոսների թվում էր նաև հայազգի Պրոյերեսիոսը կամ Պարույր Հայկազնը¹¹, որին «...հռովմայեցիք արժանատր վարձք ընծայեցին... պղնձէ ամբողջ անդրի մը կանգնելով... և վրան դրելով, քազունին Հոռմ քազաւորի Բանին»¹²: Գրիգոր Նազիանզացու և Պրոյերեսիոսի աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունից բացի, հավանաբար, կապող-մտերմացնող օղակ էր համերկրացի լինելու հանդամանքը, թեև «Դամբանականում» և այլուր իր նշանավոր ուսուցիչներին հիշատակելիս Նազիանզացին որևէ մասնավորեցում չի կատարում: Պրոյերեսիոսի մասին գրված Նազիանզացու բանաստեղծությունը ևս դրվատում է ճարտասանության նրա հռչակը՝ ամենևին շոշափելով երբեմնի ուսուցչի անձի և գործի այլ կողմեր:

Եւ ընդհանուր կոկովարան իմաստակաց կոկոզ կաճառք՝
Տեղի ետուն Պրոյերեսեայ, տալ ետ տեղի եւ ինքն բաղդ¹³:

«Հայ» էթնոնիմը գործածելու Նազիանզացու հաշորդ դրվագը կապվում է Եվստաթիոս Սեբաստացու հետ: Հայտնի է, որ վերջինս Բարսեղ Կեսարացու թեմի դեմ գործող և արիոսականությունը Փոքր Հայքում տարածող ամենահեղինակավոր հայազգի եպիսկոպոսն էր¹⁴: Հասկանալի է, որ Գրիգոր Նազիանզացին չէր կարող հանգիստ նայել Եվստաթիոս Սեբաստացու արիոսական գործունեությանը, ուստի Նազիանզացին նրան անվանում է «բարբարոս հայ»¹⁵: Միանգամայն պարզ է, որ

¹¹ Նրա մասին տե՛ս Գ. Զարբհանալյան, Պատմութիւն հայերէն դպրութեանց, Վենետիկ, 1865, էջ 150—162, հմմտ. Նույնի «Հայկական հին դպրութիւն», Վենետիկ, 1897, էջ 256—265: Պրոյերեսիոսի մասին եղած հետագա տեղեկությունների հիմքը (տե՛ս «Բաղմավէպ», 1873, էջ 113, «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն», Վաղարշապատ, 1897, էջ 360, ծան. 2) Զարբհանալյանի առաջին աշխատությունն է:

¹² „Regina rerum Roma, Regi Eloquentiae“, հուն.՝ „Η βασίλισσα ‘Ρώμης, τοῦ ἀστλέως Δόζων“ (Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրութիւն, էջ 261—262): Զեակերպումն այս հայտնի է նաև այլ տարբերակով՝ «Հռովմ, թազուհին աշխարհի, պերճախոսութեան վարպետին (կձօնէ)» (տե՛ս «Լոյս», 1905, № 30, էջ 730):

¹³ Տե՛ս Գ. Զարբհանալյան, նշվ. աշխ., էջ 264:

¹⁴ Նրա մասին տե՛ս Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից, Երևան, 1951, էջ 20—26, 86, հմմտ. Կ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 113—118:

¹⁵ PG, t. 29, էջ XXIII, հմմտ. Նազիանզացու թուղթ 46(162), «Բաղմավէպ», 1877, էջ 323, Ա. Ալպոյանեան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Ա, Գահիրէ, 1937, էջ 291, «Հանդէս ամսօրեայ», 1968, էջ 392 և այլն:

այս արտահայտութիւնը ևս պայմանավորված է համապատասխան դիպվածով և չի վերաբերում հայ ժողովրդին: Եվ ընդհանրապէս՝ եթե Գրիգոր Նազիանզացու հիշյալ արտահայտութիւնները նման մեկնաբանութեան հնարավորութիւն տային, ապա շէինք ունենա ոչ միայն նրա մատենագրական վաստակի հայերեն թարգմանութիւնների երկու հարյուրից ավելի ընդօրինակութիւնները, այլև նրա անձի ու գործի շուրջ եղած հայկական գնահատութիւնները:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Ա.) ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԳՐՎԱԾՔՆԵՐ

Հայտնի է, որ Գրիգոր Նազիանզացին ամեն կերպ աշխատել է խուսափել առաջադրվող այս կամ այն հոգևոր վերակացուի պաշտոնից, նույն նպատակը հետապնդող հանդիպումներից, հրապարակային վեճերից, ինքնադրսևորման ղանազան միջոցներից և մշտապես ձգտել է որքան հնարավոր է տևական ժամանակով լինել առանձնույթյան մեջ: Այդ ամենի պատճառը լոկ ինքնամիտի խառնվածքով մեկնաբանելը արդարացի չէր լինի: Նազիանզացու թողած բացատրությունները նույնպես այս խնդրի շուրջ ուղղակի պատասխան չեն բովանդակում: Մինչդեռ հիմնական շարժառիթը, թվում է, ստեղծագործելու ձգտումն է եղել¹:

Գրիգոր Նազիանզացուց մեղ է հասել բավական հարուստ ու բազմաժանր գրական ժառանգություն. 50 ճառ, 158 բանաստեղծություն, 237 թուղթ և 30 դամբանական²:

Նազիանզացու ժառանգության նշանակալի մասը թարգմանվել է քրիստոնյա Արևելքի և Արևմուտքի ժողովուրդների լեզուներով (ասորերեն, ղպտերեն³, լատիներեն, հայերեն, արաբերեն, վրացերեն և այլն):

¹ Կարծիք կա, որ նրա շափածո ստեղծագործությունների գերակշռող մասը գրվել է Արիադնում առանձնանալու տարիներին (տե՛ս «Христианское чтение», СПБ. 1886, стр. 322):

² Միօրինակ չէ հետազոտողների կարծիքը Նազիանզացու թողած գրական վաստակի մասին. միաժամանակ ընդունվում է 45 քարոզ, 4 թուղթ, 157 բանաստեղծություն, 238 նամակ, 30 դամբանական (տե՛ս «Святой Григорий Богослов», сост. Н. Р., СПб., 1895, стр. 46): Ֆ. Ֆարարը վկայում է 129 դամբանական, 94 էպիգրամա (տե՛ս նշվ. աշխ., էջ 448):

Նազիանզացու մատենագրական ժառանգությունը լատիներեն ղուգադիր թարգմանությամբ առաջին անգամ հրատարակվել է 1630 թ. Փարիզում: Վերահրատարակվել՝ 1778 և 1842 թվականներին (այդ մասին տե՛ս «Святой Григорий Богослов», сост. Н. Р., стр. 46): Այդ հրատարակությունները հետադաշում կազմեցին նշանավոր «Patrologia Graeca» մատենաշարի 35—38 հատորները:

³ «Յաղագս պաւսիւն» ճառի ղպտական խմբագրության մասին տե՛ս Գի Լաֆոնտենի հաղորդումը «La version copte sanidigue du discours „Sur la pâgue“ de Grégoire de Nazianze», «La Muséon», t. 93, f. 1—2, 1980, էջ 37—52:

Գրանց թվում առաջնակարգ տեղ պիտի հատկացվի հայերեն թարգմանություններին, որոնք կատարված են մասամբ V դարում և մասամբ ավելի ուշ: Հասկանալի պատճառով, այսօր դժվար է դատողություն անել դրանց երբեմնի թվական քանակի շուրջ: Սակայն պահպանվածն էլ քիչ չէ և որոշակի պատկերացում է տալիս միջնադարյան Հայաստանում նազիանզացու գրական վաստակի ունեցած դերի ու նշանակութեան մասին: Թարգմանվել են նրա բոլոր ճառերը, ինչպես նաև մի քանի թղթեր, խրատներ, կանոններ, որոշ շափածո ստեղծագործություններ և այլն:

Քանի որ միաժամանակ և նույն միջավայրում էին հայերենի թարգմանվում, ձեռքից ձեռք ընդօրինակվում «երեք մեծ կապադովկացիների» գործերը, ուստի և նպաստավոր պայմաններ կային ընդօրինակման միջոցին շփոթելու նույնանուն երկերն ու համաբնույթ ստեղծագործությունները: Արդ՝ քննենք մեզ ծանոթ այդօրինակ փաստերից մի քանիսը:

1. «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» խորագրով ճառը ձեռագրերում հայտնի է երկու տարբերակով: Գրչագրերի մի խմբում հեղինակ է դիտվում Գրիգոր Նազիանզացին, մյուսում՝ Գրիգոր Նյուսացին: Երբ մերժվում է նազիանզացու հեղինակային պատկանելությունը, բնականաբար Նյուսացու աշխատասիրություն դիտելու վարկածը պնդելու փորձ է արվում: Ձեռագրերում հանդիպող համապատասխան հիշատակագրությունները խմբավորելի են հիմնականում հետևյալ երկու կետերում.

ա) «Ճառս այս ոչ է ասացեալ Աստուածաբանի, այլ Նիւսացի Գրիգորէ և յայտնի նկարագրութեան բանիցն է: Սակայն վասն կատարեալ սիրոյն առ միմեանս և աննախանձ բարուցն եղաւ յայս գիրս»⁴:

բ) «Սուրբ Գրիգոր... ասաց եւ ներբողեան ճառս վասն Մելիտոսի Անտիոքայ պատրիարգին, որ անդ Կոստանդնուպալիս վախճանեցաւ»⁵:

«Գիրք պատճառացում» նախապես ընդօրինակված Գրիգոր Նյուսացին, այլ ձեռքով փոխվել է Գրիգոր Աստուածաբան⁶: Հայտնի է, որ «Գիրք պատճառացի» նմանօրինակ ուղղումների հեղինակը Խաչատուր Կեղանցին է⁷, որը փոփոխություն է կատարել համապատասխան հիմք ընդօրին-

⁴ Ձեռ. № 4765, էջ 58ա, հմմտ. ձեռ. № 5596, էջ 39ա, ձեռ. № 621, էջ 244բ, ձեռ. № 4150, էջ 8բ, Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 228: Պահպանվել է տեղեկությանս նաև թեական տարբերակը. «...բայց ոմանք Նիւսացոյն ասեն, զի նկարագիր ճառիս նորայոցն է նման» (ձեռ. № 1480, էջ 223բ):

⁵ Ձեռ. № 1897, էջ 94բ, հմմտ. ձեռ. № 2615, էջ 7բ—8ա, ձեռ. № 3276, էջ 34բ, ձեռ. № 2909, էջ 105բ, Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 73, «Մայր ցուցակ... աթոռոյն էջմիածնի», Թիֆլիզ, 1865, էջ 111:

⁶ Ձեռ. № 1879, էջ 202բ—203ա:

⁷ Խաչատուր Կեղանցու գրառումները տե՛ս էջ 3ա, 11ա, 16ա, 42բ, 43բ և այլն:

նակության հետևությամբ⁸: Կան ձեռագրեր էլ, որոնցում նյութացու հեղինակությունը օժանդակ սկզբնաղբյուրներով մերժելու փորձ է արվում. «Ոմանք ասացին, թէ նիւսացի Գրիգոր է ասացեալ զճառս զայս, բայց Սոկրատ ցոյց է ի տալ, թէ Աստուածաբան է ասացեալ»⁹: Սույն դիտողության հիմքը Սեղբեստրոսի «Վարքի» հետևյալ դրվագն է. «...եւ Մեղիտոսի եկեալ յԱնտիոքայ ի Կոստանդնուպօլիս առ Գրիգոր գիտնաւոր աստուածաբան... Մեղիտոս վախճանի և Գլիգոր զգերեզմանական բան ասացեալ ի վերայ Մեղիտոսի և յուղարկեալ զնա ի հանգիստ յԱնտիոք, զնայր և Գրիգորիոս յիւր եկեղեցին»¹⁰: Ի վերջո՝ Գրիգոր նյութացու հեղինակությունը մերժելու երաշխիք է նաև այն, որ գրչագրերը «ի Մելիտոս եպիսկոպոս» ճառը ունեն Գրիգոր Նազիանզացու ճառերի շարքում՝ «...դի թէ շէր սորա՝ ի սորա գիրքս ոչ էր եղեալ»¹¹:

Այսպիսով, նման հաղորդումների թիվը թերևս ավելանա, եթե փորձենք հետամուտ լինել ձեռագրական հին ու նոր բոլոր տեղեկություններին: Հասկանալի է, որ դրանք բացառապես հայկական միջավայրի արդյունք են: Բյուզանդական մատենագրության մեջ «ի Մելիտոս եպիսկոպոս» ճառը հայտնի է իբրև Գրիգոր նյութացու գործ և դրա հեղինակային սլատկանելության շուրջ որևէ կասկած չկա: Այդ իրողությունը նկատառելու համար Գ. Զարբհանալյանը ծանոթագրում է. «Գրիգորի նիւսացոյ ընծայուած է ճառս ի յունաց»¹²: Նույն բովանդակությամբ հղում-ծանուցումներ են կատարել Հ. Տաշյանը¹³, Գր. Խալաթյանը¹⁴ և Տեր-Մինասյանը¹⁵ և նորերս՝ բելգիացի հայագետ Գի Լաֆոնտենը¹⁶: Գրիգոր նյութացու մատենագրական ժառանգության հրատարակիչները ևս

⁸ Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա, էջ XIII:

⁹ Ձեռ. № 627, էջ 73ա, հմմտ. ձեռ. № 59, էջ 106բ, ձեռ. № 437, էջ 99ա:

¹⁰ «Սոկրատայ Սրոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն... և Պատմութիւն վարուց արրոյն Սեղբեստրոսի եպիսկոպոսին...», Վաղարշապատ, 1897, էջ 497:

¹¹ Ձեռ. № 1897, էջ 94ա, հմմտ. ձեռ. № 5254, էջ 108բ:

¹² Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 355:

¹³ Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 1115:

¹⁴ Գ. Խալաթեան, Մովսէս Խորենացի եւ իւր աղբիւրները (տե՛ս «Արարատ», 1897, էջ 536, ծան. 3):

¹⁵ Ն. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 217, ծան. 6:

¹⁶ Տե՛ս «Le Musée», 1977, № 3—4, էջ 335: Նորայր Բյուզանդացին հետևում է նշված ճառը Նազիանզացու աշխատություն դիտելու ավանդական եղանակին և Նազիանզացի-Խորենացի առնչակցությանն անդրադառնալիս օրինակներ է վկայակոչում նաև «ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» ճառից (տե՛ս «Քննասեր», Բ, Ստոքհոլմ, 1887, էջ 60):

նշված ճառի հեղինակային պատկանելությունը կասկածի տակ չեն տուներ¹⁷:

Արդ՝ ո՞րն է նշված ճառը Նազիանզացուն վերագրող տեղեկությունների հիմքը, որից կարող էին առաջանալ ու հետագայում «խմբագրվել» միմյանց նկատմամբ տարբերակ դառնալ վերոբերյալ ձեռագրական հաղորդումները: Միակ ենթադրվող հավանական աղբյուրը, թվում է, Նազիանզացու «Վարքի» ստորև բերվող դրվագն է: Հայտնի է, որ Նազիանզացուն արքեպիսկոպոս ձեռնադրող Կ. Պոլսի 381 թ. ժողովը գումարվեց «... առաջնորդութեամբ սրբոյն Մելիտոսի եպիսկոպոսին Անտիոքայ, որ էր այր սուրբ և կատարեալ առաքինութեամբ»¹⁸: Միաժամանակ արձանագրված է, որ ժողովը ընթացքի մեջ էր, երբ «Վախճան հասանէր սրբոյն Մելիտոսի անդէն ի Կոստանդինուպօլիս... իսկ սուրբն Գրիգորիոս ի մէջ ժողովոյն բարիոք զարդարեալ վայելչացոյց զօր կատարման նորա, գերեզմանական բանիւք վարդապետութեամբ»¹⁹:

Ինչպես արդեն ասել ենք, հիշյալ ժողովին մասնակցում էր նաև Գրիգոր Նյուսացին: Այս փաստն էլ առիթ է եղել, որ Նյուսացի և Նազիանզացի Գրիգորները շփոթվեն²⁰:

2. «Առ այնոսիկ, որք ասեն եթէ՝ մեծ է Հայր քան զՈրդի» ճառը հանդիպում է միայն Նազիանզացու գործերը բովանդակող ձեռագրերում և գրեթե միշտ օժտված է հեղինակային պատկանելությունը հավաստող կամ ժխտող կից հիշատակագրությամբ: Այդ կարգի հաղորդումները բավական շատ են և խմբավորելի են հետևյալ շորս կետերում.

ա) «Թւի Նիւսացուն է բանս»²¹: բ) «Նիւսացո է նա (իմա՝ նշված ճառը—Կ. Մ.) և ի միջոցի աստ կարգեալ է՝ վասն զմի աւրինակ ունելոս

¹⁷ Տե՛ս «Patrologia Graeca», t. 44—46. «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» ճառի բնագիրը տե՛ս PG, t. 46, էջ 852—864:

¹⁸ «Վարք եւ վկայաբանութիւնք», էջ 314:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ «Գիրք պատճառացում» կատարված ուղղումը անմիջական աղերս ունի Նազիանզացու «Վարքի» վկայված դրվագի հետ: Ահա այդ հատվածը. «Վասն որոյ առին սուրբ հարքն հանդերձ թագաւորան սուգ անմխիթար և ապա հարկ արարեալ հարքն և թագաւորն Գրիգորի Աստուածաբանին բանալ զշնորհալից բերանն և խաւել բանս գովութեան վասն ննջեցելոյն» (ձեռ. № 1879, էջ 202բ—203ա): Ճառի խորագրում, ասիւց, նախապես ունեցել ենք «Գրիգորի Նիւսացոյ»:

²¹ Ձեռ. № 3284, էջ 27ա, հմմտ. Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 763, Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Գ, էջ 250, հատ. Դ, էջ 128: Տեղեկությանս տարբերակում ասված է. «Նիւսացոյն ասացեալ է ճառս, եւ Աստուածաբան եղ յիւր գիրքս՝ առեալ ի նմանէ» (Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Բ, էջ 388, հմմտ. ձեռ. № 5596, էջ 39ա, ձեռ. № 4765, էջ 58ա, ձեռ. № 4150, էջ 8բ):

մտացն»²²: դ) «Յունական իմաստունքն ոչ Աստուածաբանի ասացեալ զճառս զայս, այլ Նիւսացոյ Գրիգորի և նման իսկ է նորին բանիցն յարմարութեան, զոր իրաւացի վարկանիմք՝ զսա առեալ Աստուածաբան Գրիգորի շարադասէ ի կարգս ճառից իւրոց»²³: դ) «Աստուածաբանի ասացուք, զի այլ ուրեք ոչ գտանեմք զայլոց ասացեալ ճառ յայլում զիրս եղեալ»²⁴:

Նշված կետերից երեքում փաստորեն հաստատվում է այն միտքը, որ խնդրո առարկա ճառը հաստատապես Գրիգոր Նյուսացունն է: Զորորդ կետում Նազիանզացու հեղինակությունը հաստատելու փորձը մընում է թեական, որովհետև, ինչպես նախորդ ճառի դեպքում, այս անգամ էլ ունենք նույն բացատրությունը, թե՛ «Վասն կատարեալ սիրո և աննախանձ բարուցն, զոր ունէին առ միմեանս, եղան ի գիրս սորա»²⁵: ի վերջո՝ նկատելու է մի իրողություն ևս. նշված բոլոր հեղինակային վերագրումներն ու պատճառաբանելու բանասիրական փորձերը հայկական միջավայրի արդյունք են: Բյուզանդագիտական քննություններում և համապատասխան հրատարակություններում «Առ այնոսիկ, որք ասեն եթէ՛ մեծ է Հայր քան զՈրդի» ճառը ծանոթ է իբրև Գրիգոր Նյուսացու աշխատություն²⁶:

Այսպիսով, այս և նախորդ ճառերը Գրիգոր Նյուսացու հեղինակած գործերից են, բայց միջնադարյան բանասիրական գրառումներում դրանք Նազիանզացուն վերագրելու փորձեր են արվել: Զեռագրերում կան նաև հակառակ իրողության օրինակներ, երբ Նազիանզացու այս կամ այն ճառը ընդօրինակվել է Գրիգոր Նյուսացու անվամբ: Այս դեպքում բացակայում են համապատասխան հիշատակադրություններն ու հիմնավորելու փորձերը: Այսպես, Նազիանզացու «Խօսք ի Նոր կիրա-

²² Ձեռ. № 5254, էջ 141ա, հմմտ. ձեռ. № 5602, էջ 172բ, ձեռ. № 100, էջ 57ա, ձեռ. № 1466, էջ 82ա—բ, ձեռ. № 1480, էջ 179բ, ձեռ. № 4132, էջ 135ա, ձեռ. № 1931, էջ 220ա, ձեռ. № 58, էջ 239բ:

²³ Ձեռ. № 1480, էջ 178բ, հմմտ. ձեռ. № 5602, էջ 169բ, ձեռ. № 1931, էջ 218բ, ձեռ. № 58, էջ 237ա, ձեռ. № 100, էջ 53բ, ձեռ. № 1879, էջ 186բ, ձեռ. № 1466, էջ 63ա, ձեռ. № 4132, էջ 133բ, Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 226:

²⁴ Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 73, հմմտ. «...զոր օրինակ եղևալ է «Առ որս գիրքին» այն ճառ, որ ասէին թէ՛ Հայր մեծ է քան զՈրդի, նոյն Գրիգորի ասացեալ. ստոյգն այս է, որ Աստուածաբանն է ասացեալ զճառս, զոր եւ Սոկրատն այլ կու ասէ», (Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 228): Այս կետի տակ պիտի արձանագրել նաև այն գրչագրերը, որոնցում նշված՝ ճառը Նազիանզացու աշխատասիրություն է դիտվում՝ առանց օժանդակ պատճառաբանության (օրինակ տե՛ս ձեռ. № 1466, էջ 61բ):

²⁵ Ձեռ. № 5254, էջ 109ա:

²⁶ Տե՛ս PG, t. 46, էջ 553—576, հմմտ. «Le Muséon», t. 90, 1977, էջ 334:

կէն...»²⁷ ճառը Մաշտոցի անվան Մատենադարանի որոշ ձեռագրերում հայտնի է Գրիգոր Նյուսացու անվամբ²⁸:

№ 8191 գրչագրում Գրիգոր Նյուսացու անվամբ է հայտնի Նազիանդացու «Առ որս» գրքի առաջին ճառը՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոյ՝ Առ որս»²⁹: Վերագրման սույն փաստը կատարված պիտի լիներ մինչև VII—VIII դարերը, որովհետև Ստեփանոս Սյունեցին այն ընդունում է որպես Գրիգոր Նյուսացու գործ և բառացի վկայակոչություններ է կատարում իր մի թղթում³⁰: Հեղինակային պատկանելություն ցուցող Սյունեցու խորագիր-հղումները երկու բնույթի են. ա) «Եւ Գրիգոր Նիւսայա առ Եւնուսիոս...»³¹, բ) «Եւ Գրիգոր Նիւսայ յերկրորդ գիրսն, որ ընդդէմ Եւնուսիոսի»³²: Երկրորդ վկայակոչության «յերկրորդ գիրսն» արտահայտությունը «Առ որս» ժողովածուին պիտի վերապահել, որովհետև հայ իրականության մեջ ընդունված մատենագիտական տեղեկանքի համաձայն «Քրիստոս ծնեալը» առաջին գիրքն է, «Առ որսը»՝ երկրորդ: Իսկ դա նշանակում է, որ «Առ որս» ճառաշարքը ամբողջությամբ դիտվում է Գրիգոր Նյուսացու աշխատասիրություն³³:

Ի վերջո, № 1981 գրչագրում օտար մի ձեռք առաջարկում է (լուսանցքում) «Ի ժողովողն» ճառը ևս ընդունել որպես Գրիգոր Նյուսացու աշխատություն³⁴:

²⁷ Ձեռ. № 1500, էջ 741ա—742բ, բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 608—621:

²⁸ Ձեռ. № 4381, էջ 342, հմմտ. ձեռ. № 866, էջ 182ա: Վերջին ձեռագրում ունենք «Նորում կիրակէի նաւակատեաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» խորագիրը (տե՛ս էջ 182ա): Տարբերությունը խորագրից այն կողմ չի անցնում: Հետագայում Նազիանդացու հեղինակությունը հաստատող միջամտություն է կատարվել՝ ավելացվել է նրա անունը:

²⁹ Ձեռ. № 8191, էջ 213ա—բ: Եղած ընդօրինակությունը ընդարձակ հատված է ճառից:

³⁰ Ձեռ. № 576, էջ 149բ—161ա՝ «Եւսուք Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի և իմաստասիրի պատասխան թղթոյն Գերմանոսի պատրիարքին Կոստանդնուպոլսի»: Բնագիրը հմմտ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 373—395:

³¹ Ձեռ. № 576, էջ 154ա, նաև էջ 121ա, հմմտ. ձեռ. № 8194, էջ 148ա:

³² Ձեռ. № 576, էջ 153բ, հմմտ. ձեռ. № 8194, էջ 147ա, ձեռ. № 502, էջ 120բ:

³³ Որոշ ընդօրինակություններում «յերկրորդ գիրսն» կապակցության դիմաց ունենք «յերկրորդ գառին» (ձեռ. № 502, էջ 102ա, էջ 118բ, հմմտ. ձեռ. № 8194, էջ 143ա), որը հակված ենք դիտելու նախորդ արտահայտության գրչական վրիպում (հնարավոր է նաև՝ ուղղում), որովհետև մեզ հայտնի բոլոր ընդօրինակություններում այն համապատասխան գրքի առաջին գառն է, ուստի և երրորդ գառ կոչելու փորձերը մնում են շարդարացված:

³⁴ Ձեռ. № 1981, էջ 200բ:

Այսբանով ավարտվում է Նազիանզացի-Նյուսացի երկասիրությունների երկուստեք փոխանցումների շարքը:

Համարնույթ անցումներ, հեղինակային վերագրման փորձեր կան նաև Նազիանզացու և Կեսարացու գրական գործերի շրջանակներում: Ինչպես նկատել է Հ. Անասյանը, «Գրիգոր Նազիանզացու «Առ նալաուկուսին» ճառը... նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի № 102 ձեռագրում կրում է «Նորին Բասիլիոս Կեսարացի» խորագիրը»³⁵:

Բարսեղ Կեսարացու երկը Նազիանզացուն վերագրելու մեզ ծանոթ միակ տեղեկությունը Հովհաննես Երզնկացու հետևյալ հաղորդումն է. «Նոյնպէս և սուրբ Աստուածաբան Հնդդէմ Ապողինարի, որ մի բնութիւն ասէ Քրիստոսի...»³⁶: Հովհաննես Երզնկացին այլևայլ առիթներով անդրադառնում է հայրաբանական գրականութեան նշանավոր դեմքերի գործերին, այդ թվում և քաղումներ է կատարում Նազիանզացու և Կեսարացու ճառերից: Հաղիվ թե նա չիմանար, որ «Հնդդէմ Ապողինարի» հեղինակը Բարսեղ Կեսարացին է³⁷: Չի բացառվում ընդօրինակման միջոցին հիմք ձեռագրի Կեսարացի ընթերցումը Նազիանզացի փոխելու հնարավորությունը: Նման միջամտության դեպքեր, ինչպես տեսանք, այլուր ևս պատահում են:

«Երեք մեծ կապաղովկացիների» հեղինակային պատկանելության շփոթ պարունակող գործերի ցանկը թերևս չի սահմանափակվում վերը նշված օրինակներով: Կարելի է ակնկալել համարնույթ նորանուն վկայություններ: Որքան էլ կարևոր դիտվեն շփոթվող հեղինակների անվանական նույնությունն ու գործունեության համանման ոլորտները, հայոց միջավայրում հեղինակություններ լինելու և միաժամանակ թարգմանվելու պարագան, այդուամենայնիվ համողիչ է Դավիթ Քոբայրեցու այն պնդումը, թե նմանօրինակ հեղինակային փոխանցումները արդյունք են «վասն մի աւրինակ մտացն»³⁸: Սույն մտքին համահնչուն է Գրիգոր Աբասյանի պատճառաբանումը. «...վասն կատարեալ սիրոյն առ միմեանս և աննախանձ բարուցն»³⁹:

³⁵ Հ. Ա. Անասյան, Հայկական մատենագիտություն, Բ, Երևան, 1976, էջ 1388:

³⁶ Չեռ. № 2173, էջ 123ա:

³⁷ Նշված աշխատանքը ձեռագրերում և բանասիրական գրականության մեջ հայտնի է «Հնդդէմ Ապողինարի» կամ «Վիճաբանութիւն ընդ Ապողինարի» տարբերակներով. (հրատարակությունը տե՛ս «Կնիք հաւատոյ», էջմիածին, 1914, էջ 84—98):

³⁸ Չեռ. № 5602, էջ 8բ:

³⁹ Չեռ. № 1879, էջ 202բ—203ա:

Բոլորովին այլ են Նազիանզացուն վերագրվող ճառերի բնույթն ու վերագրման պատճառը: Նախ անդրադառնանք Նազիանզացու անվամբ հայտնի կեղծ գրությունների խնդրին: Հայագիտության մեջ վաղուց նկատված է, որ Գրիգոր Նազիանզացուն վերագրվող կանոնախումբը կեղծ է: Հ. Տաշյանը այդ կանոնները կոչեց «կեղծ». «Ծրանելոյն Գրիգորի Աստուածաբանի Նաճիանձու եպիսկոպոսին կեղծ տիտղոսը կրող կանոններու մէջ կըսուի»⁴⁰: Հայագետի մեկ այլ բնորոշման մէջ կարդում ենք. «Վերջապէս ուրիշ կեղծ կանոնադրութեան մը մէջ ալ՝ որ Սահմանք կանոնադրութեան երանելոյն Գրիգորի Աստուածաբանի Նաճիանձու եպիսկոպոսի վերնագիրը կը գրէ...»⁴¹: Հ. Տաշյանի կարծիքը հաստատող համապատասխան օրինակներ բերելուց հետո Վ. Հակոբյանը, այնուամենայնիվ, գտնում է, որ «...կեղծողը այդ բանը կատարել է բավական նուրբ կերպով, կամ էլ Գրիգոր Աստուածաբանի առանձին գրավածքներից նա քաղվածաբար այնպես է օգտվել, որ առաջին դեմքով գրելու ձևը պահվել է»⁴²:

Քաղվածաբար օգտվելու եղանակով բնագիր ստեղծելու լավագույն օրինակ է «Հարցումն Բարսեղի և սուրբ Գրիգորի Աստուածաբանին» խորագիրը կրող երկն իր զույգ տարբերակներով, որը միջնադարյան գրականության մեջ հայտնի է նաև Հաբջում կարճառոտ անվամբ⁴³: Սույն

⁴⁰ Յ. Տաշեան, Վարդապետութիւն առաքելոց..., Վիեննա, 1896, էջ 72: Կանոնների կեղծության մասին կարող է վկայել նաև հեղինակային պատկանելության երկակի վիճակ ներկայացնող սույն խորագիր-հաղորդումը. «Կանովն Բարսղի եպիսկոպոսի կեսարու. ՄԸ. Գրիգորի ասացեալ» (ձեռ. № 732, էջ 37ա—41ա):

⁴¹ Նույն տեղում, էջ 149:

⁴² «Կանոնագիրք հայոց», Բ, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1971, էջ LXXII: Ուշագրավ է հետազոտողի այն դիտողությունը, թե դարերի ընթացքում «...օգտագործել են նաև կեղծ կանոնախմբերը և գրությունները՝ առանց կասկածելու դրանց վավերականության վրա» (նույն տեղում, էջ CXVII): Նազիանզացուն վերագրվող կանոնները տե՛ս նույն տեղում, էջ 181—199:

Ինչ վերաբերում է «Նազիանզեան հաւատացելոց Պատարագների» հեղինակային պատկանելության խնդրին, ապա Հ. Գաթրճյանը գտնում է, որ «սուտ անունները թօթափելով յայտնի կը նշմարուի թէ՛ հոն մէկ հոգի շնչած, մէկ գրիչ քալած է» (Հ. Գաթրճեան, Սրբազան Պատարագամատոյցք Հայոց», Վիեննա, 1897, էջ 219): Հետազոտողը գտնում է, որ «Գրիգոր Նազիանզացի է հեղինակը» (նույն տեղում):

⁴³ Հարցումը միջնադարի ամենատարածված դրական ժանրերից էր: Հարց ու պատասխանի եղանակով քննվում-բացահայտվում էին ամենաբազմազան ու վիճելի դավանաբանական խնդիրները, երբեմն նույնիսկ տիեզերքի առեղծվածի հետ կապված այլևայլ հարցեր: Պարզվում է, որ առօրյա գործածության անհրաժեշտության թելադրանքով

Հարցումի հեղինակային պատկանելության շուրջ ունենք երկու տարբեր կարծիքներ: Իրանցից մեկը «Գիրք պատճառացում» առկա հետևյալ գնահատությունն է. «Այսպիսի հարցուածքս և պատասխանիքս արանցն աստուածողգեստից ոչ հակառակ են, եթէ իմասցուք խոհեմաբար: Մակայն ոչ անգիտութեամբ Հարցումն, քանզի կատարեալք յիմաստս երկորեան և հաւասարք միմեանց և խնդիր ի մէջ առնուն ապագայից ժամանակաց և լուծումն տարակուսանաց տգիտաց»⁴⁴: Դատելով սուլն տեղեկանքի և առհասարակ մատենագիտական այդ շարքի այլուր պահպանված ամբողջությունից, պիտի ասել, որ հաղորդմանս հեղինակը Դավիթ Քորայրեցին է: Սուլն վկայությունից հետևում է, թե խնդրո առարկա Հարցումի հեղինակային պատկանելության շուրջ կասկած չեն ունեցել «Գիրք պատճառացի» կազմող Գրիգոր Աբասյանը, ինչպես նաև Դավիթ

եկեղեցու նշանավոր հայրերի համապատասխան գործերից Հարցումներ էին կազմվում: Երբեմն էլ այս կամ այն գործերի հարց ու պատասխան ենթադրող դրվագներն առանձնացվում էին, իհարկե, ոչ առանց միջամտության: Հայ իրականության մեջ այդպես են վարվել նաև նազիանզացո՝ «Առ որս» գրքի համապատասխան ճառերի հետ (տե՛ս ձեռ. № 729, էջ 168ա—215բ):

Դատելով առկա բնագրերից՝ հարցումի ժանրը բավական տարածված է եղել նաև հայ միջնադարյան մատենագրության մեջ: Այսպես, օրինակ, ունենք՝ «Հարցումն Արձանու թագաւորի և պատասխանի Եղնկայ վարդապետի Կողբացւոյ (ձեռ. № 3710, էջ 379ա—381բ, ձեռ. № 497, էջ 474ա—477ա), «Հարցումն Աշոտոյ Սմբատայ թագաւորի և պատասխանի Եղնկայ Հայոց վարդապետի» (ձեռ. № 6708, էջ 130ա—133բ), «Կոմիտասի Հայոց կաթողիկոսի և Պիոսի... պատրիարքի՝ Հարցաքննութիւն և վիճարանութիւն» (ձեռ. № 83, էջ 359ա—367բ), «Հարցմունք զանազան՝ արարեալ վանական վարդապետի և պատասխանի բարանարար» (ձեռ. № 45, էջ 106ա—115ա), «Հարցումն սուրբ վարդապետն Դաւթի մականուն Ալակա որդի» (ձեռ. № 5607, էջ 173ա—192բ), «Տեսանք ներսէսի արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ... Հարցումն պատրիարքին և պատասխանի սրբոյն ներսիսի» (ձեռ. № 732, էջ 315ա—324ա) և այլն: Կան նաև բազմաթիվ անանուն Հարցումներ: Այսպես, օրինակ՝ «Հարցմունք և պատասխանիք Հայոց վարդապետաց ընդդէմ երկարնակաց» (ձեռ. № 1556, էջ 198ա—210բ), «Հարցմունք և պատասխանիք ի գրոց սրբոց» (ձեռ. № 1495, էջ 85ա—87ա), «Հարցումն» (ձեռ. № 7443, էջ 511ա—512բ, 513ա—բ, 544ա—բ, ձեռ. № 8076, էջ 226ա—բ) և այլն:

Հրատարակված Հարցումներից մեզ ծանոթ են՝ «Ծղիշէի վարդապետի հարցմունք և պատասխանիք ի Գիրս ծննդոց», հրատ. ն. Ակիմեան, Վիեննա, 1928, ինչպես նաև «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթևի, դարձեալ հարցումն և պատասխանիք» բնագիրը (Լ. Խաչիկյան, Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցումը» որպես հայ մատենագրության երախայրիք, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 7, Երևան, 1964, էջ 315—328):

⁴⁴ Ձեռ. № 1879, էջ 256ա, հմմտ. ձեռ. № 4150, էջ 76ա: Պատճառի խորագիրը հետևյալն է. «Պատճառն ինն ու տասն ճառին՝ ի հարցուած Բարսղի առ Աստուածարան» (ձեռ. № 1879, էջ 256ա):

Քորայրեցին և Մխիթար Գոշը, ապա և նշված մատենագիտական աշխատանքում շտկում-փոփոխություն կատարող Խաչատուր Կեչառեցին:

Երկրորդ տեղեկությունը հետևյալն է: «...զճառս այս այլոց ոմանց փառամուլաց է՝ հարցումն և պատասխանի, և ոչ Բարսղի սրբոյ և Աստուածաբանի և սակս ընդունելութեան սոցա անուամբ են վերագրեալ»⁴⁵: «Սակս ընդունելութեան» թելադրանքով կատարված վերագրումներն առանձնապես բնորոշ են արևելյան գրականությանը (օրինակ՝ Խայամին են վերագրվել հարյուրավոր քառյակներ)⁴⁶:

Հայագիտական գրականության մեջ վերոհիշյալ Հարցումի հեղինակային պատկանելության շուրջ եղած միակ դիտողությունը պատկանում է Հ. Անասյանին: Բնավ շանդրադառնալով մատենագրական նշված տեղեկանքներին, Հ. Անասյանը «Տեսութիւն յաղագս հաւատոյ» աշխատության առիթով նկատում է. «Սույն գրվածքի հետ պետք չէ շփոթել «Հարցմունք սրբոյն Բարսղի Կեսարացոյ առ սուրբն Գրիգոր» խորագրով մի ուրիշ բնագիր, որը բոլորովին տարբեր է սրանից»⁴⁷: Այնուհետև, Բարսեղ Կեսարացուն վերագրվող գործերի մասին խոսելիս, Հ. Անասյանը այդ շարքն է դասում «Գրիգորիսի և Բարսղի հարցմունք անունը կրող անվավեր գրվածքը»⁴⁸:

Ինչպես կտեսնենք ստորև, Հ. Անասյանի հիշատակած սույն երկու Հարցումները իրականում մեզ հետաքրքրող նույն բնագրի տարբեր խումբ-

⁴⁵ Ձեռ. № 2549, էջ 183բ: Սույն տեղեկությունը վերաբերում է «Տեսութիւն յաղագս հաւատոյ...» բնագրին և ժամանակակից է ընդօրինակությանը (ԺԴ դ.): Սակայն նշված շարքի ոչ բոլոր ձեռագրերում է հանդիպում այն: Այդ իրողությունն էլ ինքնին նշանակում է, որ «Տեսության» խորագրի տակ եղածը նույնպես ենթարկվել է փոփոխությունների, հեղինակային վերագրումների: Սակայն, ինչպես կպարզվի հետագա քննութեամբ, «Տեսության» նախնական բնագիրն է այն հիմքը, որի շուրջ ձևավորվել են հետագա բոլոր խմբագրությունները:

⁴⁶ Այդ իրողությունը խորթ չէ նաև հայ ինքնուրույն (ոչ թարգմանական) մատենագրության համար: Մ. Արեղյանի պնդմամբ՝ «Սահակի կանոնները վերագրվել են ս. Գրիգորին, դրանց ավելի կարևորություն տալու համար (Մ. Արեղյան, Երկեր, Գ, Երևան, 1968, էջ 136): Ընդունելության նույն պատճառով Գրիգոր Պարթևին են վերագրվել «Յաճախապատում ճառք» և «Հարցումն եւ պատասխանիք» աշխատությունները, որոնց հեղինակը, ինչպես ընդունված է կարծել, Մեսրոպ Մաշտոցն է: Այդ մասին տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 301—330, Ա. Ն. Սրապյան, «Յաճախապատում» ճառերի հեղինակի հարցը, տե՛ս «Տեղեկագիր», 1962, № 5, էջ 25—38:

⁴⁷ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Բ, էջ 1356:

⁴⁸ Նույն տեղում, էջ 1388:

բազմություններն են, թեև ունեն գրեթե անհամադրելի, նմանության-
կարեր շունեցող բազմաթիվ հատվածներ: Ընդհանուրը, առավելապես
նյութի, հարցադրումների, արժարժվող խնդիրների առընթերությունն է,
բան շարադրանքի մերձավորությունը, թեև այդպիսի օրինակներ ևս
գտնվեցին: Եթե ամփոփենք հեղինակային պատկանելության խնդիրը,
այս ստացվում է, որ անվավեր դիտված գրվածքի վավերականությունն
առաջին խորագրի տակ ամենևին կասկածելի չէ: Սակայն իրողությու-
նըն այն է, որ նշված Հարցումը դավանաբանական որոշակի նկատառու-
մով հայկական միջավայրում ստեղծված բնագիր է: Ինչպես կտեսնենք,
այդ նպատակով օգտագործվել են Նազիանդացու և Կեսարացու նույնա-
բնույթ մի գործի առանձին դրվագներ: Ութ տասնյակից ավելի ընդօրի-
նակություններով հայտնի այդ բնագրի համեմատությունը ցույց է տա-
լիս, որ առկա ձեռագրերը հնարավոր խմբավորման են ենթարկվում
երեխ հիմնական խմբագրությունների շուրջ: Համադրական քննության
այդ միջոցը հնարավորություն է ընձեռում պարզելու Հարցումի խմբա-
գրությունների առնչակցությունները, ձեռագրական խմբերի փոխադարձ
կապը, հիմք բնագիր տանող հավանական ուղիները և այլն:

1. «Հարցումն Բարսեղի և սուրբ Գրիգոր Աստուածաբանին» խորա-
գրով հայտնի բնագրի ձեռագրերը բաժանված են երեք խմբի.

ա) Ամբողջական կամ ընդարձակ խմբագրություն (ձեռ. № 527, էջ
90ա—95բ, ձեռ. № 613, էջ 92բ—97բ, ձեռ. № 3206, էջ 171ա—176բ՝ խո-
րագիրը փոխվում է՝ «Վարդապետութիւն սրբոյն Բարսեղի և Գրիգորի»:

բ) Թերի կամ համառոտ խմբագրություն, որը սկսվում է ընդարձակի
«քանի՞» եկաց Ադամ ի դրախտին» հարցումով (ձեռ. № 527, էջ 90բ):
Սույն ենթախմբի ընդօրինակությունների նյութը միօրինակ է, խորա-
գրերը՝ մասամբ տարբեր. «Հարցմունք» (ձեռ. № 9244, էջ 74ա—76ա, ձեռ.
№ 8076, էջ 224բ—225բ), «Հարցմունք Բարսեղի Կեսարացոյն ընդ սր-
բոյն Գրիգորի Նիսացոյ եղբօրն իւրում» (ձեռ. № 4288, էջ 219ա—236ա,
ձեռ. № 1127, էջ 117ա—125բ), «Հարցումն Բարսղի և պատասխանիք
Գրիգորի Աստուածաբանի» (ձեռ. 6708, էջ 251ա—257բ, ձեռ. № 6476,
էջ 285ա—բ):

գ) Թերի կամ համառոտ խմբագրություն, որն սկսվում է ընդարձակ
խմբագրության «յորոյ վերայ հաստատեալ է յերկիր» հարցումով (ձեռ.
№ 527, էջ 93բ): Այս ենթախմբի հիմնական գրչագիրն է Մաշտոցի ան-
վան Մատենադարանի № 527 ձեռագիրը (էջ 96բ—97ա, մի հատված էլ
տե՛ս ձեռ. № 3206, էջ 122բ): Ստացվում է այնպես, որ միևնույն բնագրի
երկու խմբագրություններն ունենք նույն ձեռագրում՝ կողք-կողքի: «Հար-

ցումն եւ պատասխանի» խորագրի տակ № 8507 գրչագրում ընդօրինակված բնագիրը (էջ 97բ—100բ) ևս նույն շարքից է, սակայն այնքան օտարացված ու հեռացված, որ նույնական են մնացել մի քանի հատվածներ միայն: Նմանօրինակ բնագիր է նաև № 3506 գրչագրի պարունակութունը «Հարցմունք և պատասխանիք ի գրոց սրբոց» խորագրի տակ (էջ 23բ—28բ): Ամբողջության մեջ տեքստի հետագա պատումավորումը ակնհայտ է:

2. «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի և Բարսղի ասացեալ» (ձեռ. № 2168, էջ 133ա—138ա, ձեռ. № 639, էջ 174բ—178բ, ձեռ. № 596, էջ 181ա—188բ, ձեռ. № 6608, էջ 159ա—164բ, ձեռ. № 697, էջ 102ա—114ա, ձեռ. № 3237, էջ 135բ—141ա, ձեռ. № 8261, էջ 222ա—229ա, ձեռ. № 2245, էջ 238բ—241ա. և այլն) խորագրով բնագիրը հանդիպում է ամենատարբեր վերտառության տակ, թեև բուն նյութը հիմնական մասով նույնական է:

ա) «Հարցումն սրբոյն Բարսղի և Գրիգորի և վարդապետութիւն» (ձեռ. № 706, էջ 10ա—14բ): Գրչագիրս վերջից թերի է, ավարտը՝ «Լուր Դավթի, որ ասէ՛ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ» Գրիգորի պատասխանն է (հմմտ. ձեռ. № 2168, էջ 137ա, ձեռ. № 2245, էջ 240բ):

բ) «Հարցմունք և վարդապետութիւն Բարսղին և Գրիգորին» (ձեռ. № 715, էջ 45բ—51բ): Վերջից թերի է, ավարտը՝ «Եւ ասպա ծագէ ի վերայ տիեզերաց» (հմմտ. ձեռ. № 2168, էջ 135բ):

գ) «Հարցումն Բարսեղայ առ սուրբն Գրիգոր» (ձեռ. № 1649, էջ 396ա—400բ, ձեռ. № 2004, էջ 55ա—60ա, ձեռ. 614, էջ 193ա—195ա, ձեռ. № 2191, էջ 143ա—145բ, ձեռ. № 7993, էջ 155ա—156բ, ձեռ. № 8461, էջ 42ա—43բ, ձեռ. № 3246, էջ 34բ—38բ, ձեռ. № 3406, էջ 96ա—101բ, ձեռ. № 8565, էջ 19ա—23բ, ձեռ. № 7102, էջ 221ա—223բ): Այս շարքին բնորոշ է մի իրողութուն. Գրիգոր անվան կողքին Նազիանդացի (Աստվածաբան) կոչումի բացակայությամբ սույն բնագիրը Գրիգոր Լուսավորչին վերագրելու հակում է նկատվում (թեև ունենք նաև այդպիսի ձեռագրախումբ): Այդ է հուշում սույն հիշատակարանը. «Քրիստոս Աստուած բարեխօսութեամբ սրբոյն Բարսղի յայրապետին և Գրիգոր մերոյ Լուսավորչին ողորմեայ...» (ձեռ. № 7102, էջ 223բ):

դ) «Հարցումն սրբոյն Բարսղի եւ պատասխանի սրբոյն Գրիգորի Աստուածաբանի» (ձեռ. № 728, էջ 23ա—28բ, ձեռ. № 6617, էջ 247բ—251ա, ձեռ. 9322, էջ 98ա—110բ, ձեռ. № 2566, էջ 150բ—157ա):

կ) «Բարսեղի [Եւ] Գրիգորի Հարցմունք է» (ձեռ. № 3680, էջ 177 ք—186ա):

դ) «Հարցմունք Բարսեղի Կեսարացոյն և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին» (ձեռ. № 3081, էջ 255ա—258ա, ձեռ. № 834, էջ 123ա—130ա, ձեռ. № 588, էջ 307ա—312ա, ձեռ. № 3422, էջ 242ա—250ք, ձեռ. № 3177, էջ 64ա—67ք, ձեռ. № 8398, էջ 1ա—32ք, Երուսաղեմի ձեռ. № 1455, էջ 104ք—108ք):

է) «Սրբոյն Բարսեղի Կեսարացոյ հարցմունք սրբոյն Գրիգորի՝ եղբօրն իւրոյ» (ձեռ. № 7697, էջ 1ա—14ա, ձեռ. № 7295, էջ 100ա—104ա, ձեռ. № 7276, էջ 237ա—241ա, ձեռ. № 737, էջ 37ա—39ա, ձեռ. № 6643, էջ 217ք—220ք, ձեռ. № 3413, էջ 4ա—12ք, ձեռ. № 8398, էջ 33ա—41ք, ձեռ. № 10310, 1ա—8ք, ձեռ. № 9416, էջ 7ա—17ք):

ը) «Հարցմունք Բարսեղի» (ձեռ. № 892, էջ 225ա—230ք):

թ) «Հարցումն պիտանի հոգեկիր վարդապետին ասացեալ» (ձեռ. № 9474, էջ 12ա—17ա, ձեռ. № 6146, էջ 18ք—24ա): Ի տարբերութիւն այս շարքի մյուս խմբագրութիւններէ, № 9474 և համեմատվող գրչագրերում հարցերը և պատասխանները խտացված են (երկու-երեք հարցը մեկի վերածված) և ընդհանուր բնագիրը որոշակի նպատակով համառոտված տարբերակ է ներկայացնում (խորագրի հարցումն պիտանի բնորոշումը ևս գործնական կիրառութիւն է մատնացուցում):

ժ) Անխորագիր (ձեռ. № 2251, էջ 157ք—158ա): Սույն ընդօրինակութիւնը ևս համառոտված տարբերակ է:

3. «Հարցմունք Գրիգորի Աստուածաբանի եւ սրբոյն Բարսեղի, քանզի Գրիգոր զՀայք հաստատէր եւ Բարսեղ՝ զՀռոմք» (ձեռ. № 487, էջ 94ա—96ք):

Վերոբերյալ ձեռագրախմբերի պարունակած մատենագիտական նյութի քննութիւնը այստեղ մեր նպատակից դուրս է: Ինչ վերաբերում է երեք խմբագրութիւնն ներկայացնող բնագրերին, ապա դրանցում առկա միջամտութիւններէ մասին կարելի է պատկերացում կազմել նույնիսկ խորագրերի փոփոխութիւններէ օրինակով: «Վարդապետութիւնը» հայտնի է տասը վերտառութեամբ, բնականաբար պիտի ենթադրել, որ բուն բնագիրը ևս անմասն չի մնացել տասնապատիկ փոխվելու, նոր երանգ ստանալու վտանգից: Արդյունքը եղել է այն, որ հիմք օրինակի հենքի վրա կողք-կողքի գոյացել են երեք խմբագրութիւններ: Բայց որ իրականում դրանք նույն բնագիրն են, երևում է սույն համագրութիւնից:

«Հարցումն Բարսեղի և սուրբ Գրիգոր Աստուածաբանին»
Չեռ. № 527 (1663 թ.)

Բարսեղ ասէ—Քանի՞ եկաց Աղամ ի դրախտին

Գրիգոր ասէ—Ընդ յառաւատն եմուտ և ընդ երեկոն ելաւ

Բարսեղ ասէ—Ո՞ր յերկիր եկաց յԱղամ յորժամ ելաւ ի դրախտէն

Գրիգոր ասէ—Երկիրն Քանանու յանդիմանն դրախտին (էջ 90բ, հմմտ. էջ 93ա՝ կրկնվում է)

Բարսեղ ասէ—Ո՞ր յերկիր եկաց տէրն մեր Քրիստոս

Գրիգոր ասէ—Երկիրն Եգիպտացոց

Բարսեղ ասէ—Քանի՞ յամ եկաց և կամ որ տան էր իջևանք նորա

Գրիգոր ասէ—Ի՞նչ ամ եկաց և զերկոյ տասան ամն եկաց առ կին մի ուրում, անունն Մուրակից

Բարսեղ ասէ—Ո՞ր Քաղաք է առանց հիմանց և պարխապն...

Գրիգոր ասէ—Քաղաք առանց հիմանց Նոյի տապանն էր (էջ 91ա)

«Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի և Բարսեղի ասացեալ»
Չեռ. № 2168 (ժէ դ.)

Բարսեղ ասէ—Յ՞՞ր երկիր է դրախտն

Գրիգոր ասէ—Ենդ ընդ արևելս

Բարսեղ ասէ—Ո՞վ ծնեալ և ծերացեալ

Գրիգոր ասէ—Աղամ ծնեալ և ծերացեալ, զի կրկնակի եմուտ յորովայն մօր իւրոյ՝ հող էր և ի հող դարձաւ

Բարսեղ ասէ—Ո՞վ է Քաղաք առանց հիման կամ ի՞նչ էր անխօս առաքեալ կամ թուխտ առանց գրոյ

Գրիգոր ասէ—Առանց հիման Նոյեան տապանն է և աղանձին և ձիթենի էր առանց գրոյ

«Հարցումն Գրիգորի Աստուածաբանի և սրբոյն Բարսեղի, քանզի Գրիգոր գնայք հաստատել և Բարսեղ՝ գնոտմք»
Չեռ. № 487 (1618 թ.)

Գրիգոր ասէ—Քանի՞ ամ եկաց Աղամ ի դրախտն

Բարսեղ ասէ—Ընդ առաւատն եմուտ և ընդ երեկոս ելաւ յիններորդ ժամուն

Գրիգոր ասէ—Յ՞՞ր երկիր գնաց յորժամ ելաւ ի դրախտէն

Բարսեղ ասէ—Երկիրն Մաղիամու յանդիմանն դրախտին (էջ 25բ),

Գրիգոր ասէ—Յ՞՞ր երկիր դնաց տէրն մեր

Բարսեղ ասէ—Եգիպտոս

Գրիգոր ասէ—Քանի՞ ամ եկաց անդ կամ յ՞՞մ տուն էին իջևանք նորա

Բարսեղ ասէ—Ժ՞՞ք ամ եկաց անդ և իջևանք նորա առ կին մի այրի ուրում անունն էր Մօրիկ (էջ 95ա),

Գրիգոր ասէ—Ո՞վ էր Քաղաք առանց հիման կամ անխօս առաքեալ կամ թուղթ առանց գրոյ

Բարսեղ ասէ—Քաղաք առանց հիման տապանն է Նոյի, անխօս առաքեալն՝ աղանձին և թուղթ առանց գրոյ՝ տերև ձիթենուին, զոր ունէր շիւղ ի բերանն:

Գրիգոր ասէ—Քանի՞ տունք էին ի տա-
պանն կամ քանի՞ սինեակք
Բարսեղ ասէ—Ե՛՛՛՛՛՛՛ տուն էին ի տապա-
նին և զձ՛՛՛՛՛՛՛ սինեակք

Գրիգոր ասէ—Քանի՞ ոգիք էին ի տապա-
նին
Բարսեղ ասէ—Շ քիւք
Գրիգոր ասէ—Ո՞վ էր, որ շինեաց և ոչ
շահեցաւ

Բարսեղ ասէ—որ գործեաց զտապանն
Նոյի (էջ 96ա):
Բարսեղ ասէ—որո՞վ պարծիս ի հայք
Գրիգոր ասէ—Ղու որո՞վ պարծիս ի
հոսք

Բարսեղ ասէ—խալին և թաղաւորու-
թեանքն

Գրիգոր ասէ—Ես պարծիմ ի հայք, զի
հայք զիսան ասուել տառունն և
փառաք ընդսինքն քան զհոսք:
Եւ հայք արևելեանք են և զրախտն
Ազաթա եղև յարևելս տնկեցա, և
սուրբ խան ճառագայթիւքն յա-
րևելից փայլէ: Եւ արեգակն և լու-
սինն և աստղքն առնայն յարևե-
լից ծագին: Եւ կենարարն մեզ
Քրիստոս փառաք խալիք յարևելից
Կալ՝ ընդ ամբս երկնից: Եւ հրեշ-
տակ զազգայն մաղոյ հոսի զէս

Բարսեղ ասէ—Քանի՞ տուն էր տապանն
կողքոց վրամբ յուսի
Գրիգոր ասէ—Ե՛՛՛՛՛՛՛ տուն էր տապանն և
Ո սնեակս
Բարսեղ ասէ—Քանի՞ ոգիք էին ի տա-
պանն

Գրիգոր ասէ—Շ քիւ (էջ 137բ):
Բարսեղ ասէ—Ո՞վ էր, որ գործեաց
և ոչ շահեցաւ

Գրիգոր ասէ—որ գործեաց զՆոյի տա-
պանն (էջ 138ա):
Բարսեղ ասէ—որո՞վ պարծին հայք
Գրիգոր ասէ—Ղալստեանք որդոյն առ-
տուծոյ և խալին, զի զիսան պա-
տիւ ունին հայք

Բարսեղ ասէ—որպէ՞ս

Գրիգոր ասէ—Ղալստեանքն. յորում գոյ
Քրիստոս յարևելից կողմանէ կանդ-
նել զզրախտն ծառ փրկութեան և
գեղեցիկ: Արդ՝ եթէ պարծին հայք
յիրաւի պարծին: Դու արարէր յէջ
ի միջի մերում (էջ 137բ):

Բարսեղ ասէ—Քանի՞ տունք էին ի տա-
պանն կամ քանի՞ սինեակք
Գրիգոր ասէ—Ե՛՛՛՛՛՛՛ տուն էին ի տապա-
նին և զձ՛՛՛՛՛՛՛ սինեակք էին

Բարսեղ ասէ—Քանի՞ ոգիք էին ի տա-
պանն
Գրիգոր ասէ—Շ
Բարսեղ ասէ—Ո՞վ գործեաց և ոչ շահե-
ցաւ

Գրիգոր ասէ—հիւսքն, որ զտապանն
գործէին (էջ 90ա—91բ):
Բարսեղ ասէ—որո՞վ պարծին հայք
Գրիգոր ասէ—Ղալստեանքն ճիստսի աշ-
խարհիս պարծին հայք ի մարդե-
ղութիւն և ի խալիքս (էջ 93ա):

716

յարևելս տանին, եթէ պարծիմ ես
իրատունս ունիմ (էջ 94ա),
Բարսեղ ասէ—մինչ յե՞րբ խաւսիս հա-
կառակութեամբ
Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ զու արա-
ւիք (էջ 95ա),

Բարսեղ ասէ—յսմէս յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր
Գրիգոր ասէ—բերբր հաստատեալ էք ի
մէջ Լոգոստոց մկիկը—հոս
մկիկը մեկ Լոգոս
Նոյն և խնայ հոսն հոսն հոսն և հոսն
Վիճիմ Լոգոսի մէջ Լոգոստոց մասն
զուր հաստատոց էք ի վիճիմ ջրոյ,
և խնայ հոսն և խնայ հոսն և խնայ հոսն
և խնայ հոսն և խնայ հոսն և խնայ հոսն

տոստոց Լոգոսի յսմէս—հոս
մկիկը քիչ Լոգ
միւս ջրոյ Լոգոսի մէջ Լոգոստոց—հոս
մկիկը քիչ Լոգ
Նոյն և խնայ հոսն և խնայ հոսն և խնայ հոսն
և խնայ հոսն և խնայ հոսն և խնայ հոսն
և խնայ հոսն և խնայ հոսն և խնայ հոսն

Գրիգոր ասէ—բարձր ի բարձրութիւն
երկնից կամ բարձր ի Լաւնութիւն
կամ բարձր ի Երկնայնութիւն, կամ
բարձր ջուր կալ ի ծովն, կամ բար-
ձր հատ պղպեղն անուշ է դժուր
Սարսեղ ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր
Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր

Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր
Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր

Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր
Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր
Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր
Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր

Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր
Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր
Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր
Գրիգոր ասէ—սկիզբն յիճոյ հաստոց
տեւալ կալի երկեր

Վկայակոչված հատված-համադրություններով շեն ավարտվում նույնական կամ նման նկարագրությունները: Այդպիսի նոր օրինակներ ևս հնարավոր է ի ցույց հանել: Սակայն էականը այս դեպքում ընդհանուր միավոր-օրինակների քանակը չէ, այլ նյութի նույնությունը: Այդ իմաստով առաջին հայացքից անհամադրելի թվացող նշված բնագրերում ընդհանրականը հողևոր-դավանաբանական, տիեզերագիտական-աստվածաբանական և մարդ-արարիչ ոլորտում արծարծվող ամենաբաղմազան խնդիրների նույնությունն է: Նկատելի խախտվածությունը ասելիքի հերթագայության անհետևողականության մեջ է: Մի բնագրի սկզբնամասում ներկայացվող հարցադրումը երկրորդի միջնամասը կամ ավարտն է ամփոփում: Կամ ասենք՝ այս կամ այն կարճառոտ բնորոշումը այլուր ընդարձակ նկարագրության տեսքով է մատուցվում, մի դեպքում առկա հարցադրումը մյուսում իբրև պատասխան է ընթերցվում կամ նույնիսկ՝ խսպառ բացակայում է և այլն: Ամենևին դժվար չէ օրինակների խմբավորումը այս կետերի շուրջ, թեև այդպիսիք հնարավոր է տեսնել նաև վերևում կող ի կող բերված հատվածներում: Հիմքեր կան մտածելու, որ հատվածների անհարկի կրկնությունն ու դրափոխությունը, օտարումն ու ներմուծումը, ընդարձակումն ու համառոտումը կատարվել են հետագայում: Իսկ դա նշանակում է, որ խմբագրությունների գոյացման շրջանում դո՛ւնե պիտի ունենայինք հեղինակային պատկանելության առումով թեև կեղծ, բայց համեմատաբար քիչ ընդմիջարկված տեքստեր: Այդ է վկայում № 5596 ձեռագրում (ԺԳ դ.) պահպանված «Նորին (= Բարսեղի—Կ. Մ.) հարցուած առ Գրիգոր Աստուածաբան» (էջ 88բ—89ա) պատճառ-բնագիրը, որն անհամեմատ մոտ է «Վարդապետությանը»: Դա միաժամանակ հիմք է տալիս մտածելու, որ «Հարցումի» և «Վարդապետության» բնագրերը երբևէ նույն տեսքն ունեին: Որ նշված երեք բնագրերն էլ նույն հիմքի վրա են գոյացել, թվում է, կասկածից վեր է:

Իբրև միջավայրի և նպատակի միասնականության օրինակ կարելի է մատնացուցել «Որով պարծին հայք» հարցադրումը՝ համապատասխան պատասխան-լուծումով:

Այլևս հետաքրքրում է մի հարց. հայերեն թարգմանությամբ պահպանվե՞լ է նադիանդացու և Կեսարացու աշխատության այն բնագրի, որի հենքի վրա գոյացել են նույն երեք խմբագրությունները և բաղմացվել ամենատարբեր խորագրերի ու հեղինակների անվան տակ: Մեր համոզմամբ՝ ենթադրվող հիմք-բնագիրը «Տեսութիւն յաղագս հաւատոյ՝ երանելեացն սրբոց եպիսկոպոսաց Բարսղի և Գրիգորի» վերտառությամբ

երկն է⁴⁹: Ասում ենք «ենթադրվող», որովհետև առ այդ շունենք բացահայտ ապացույցներ: Այդուհանդերձ կան հետևյալ կռահումները.

1. Բովանդակության առումով, այսպես կոչված, «Հարցումն Բարսեղի», «Վարդապետութիւն» և «Հարցմունք Գրիգորի» հետագա խմբագրություններն առաջացել են «Տեսութիւն յաղագս հաւատոյ» բնագրի հիմքի վրա, թեև բառացի նմանության օրինակներ դժվար է վկայակոչել (հմմտ. ձեռ. № 822, էջ 172ա, ձեռ. № 527, էջ 93ա, ձեռ. № 2168, էջ 133բ, ձեռ. № 487, էջ 95բ):

2. «Տեսության» ձեռագրեր կան (№ 3710, էջ 363ա—288բ, № 497, էջ 458ա—463բ), որոնք ընդօրինակվել են «Հարցումն Բարսեղի» խորագրի տակ, իսկ դա հնարավորություն է ստալիս մտածելու, որ դրանք բնագրական մերձավոր եզրեր են ունեցել:

3. Հայ մատենագիրներին անժանոթ են նշված երեք բնագրերը, մինչդեռ «Տեսության» հայերեն թարգմանությունը հիշատակում և բառացի վկայակոչություն է կատարում Ստեփանոս Ասողիկը.

«Տեսութիւն յաղագս հաւատոյ՝ Երանելիացն սրբոց եպիսկոպոսաց Բարսղի և Գրիգորի»

Ձեռ. № 822 (1285 թ.)

«Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885

«Բարսեղ ասէ—և ոչ մի զանազանութիւն ընդ գիտութեան տեսանի յինքեան և ի մարմնի

Գրիգոր ասէ—եթէ զանազանութիւն՝ աննմանութիւն, եթէ աննմանութիւն՝ ոչ պարզութիւն, եթէ ոչ պարզութիւն՝ ի բազմաց դրութիւն...» (էջ 168ա):

«Որպէս Գրիգոր Աստուածաբան սրբոյն Բարսղի պատասխանի առնէ ի հարցմանն վասն բնութեանցն զանազանութեան եթէ զանազանութիւն՝ ասէ, աննմանութիւն, և եթէ աննմանութիւն՝ ոչ պարզութիւն, և եթէ ոչ պարզութիւն՝ ի բազմաց դրութիւն, որ լինի բազում դրութիւն: Այլ զի ճշմարտութիւնն մի է և ո՛չ բազում բնութեամբ, ասէ Աստուածաբանն, իսկ ի բազումս բաժանելն՝ ստութիւն» (էջ 214):

Այսպիսով, վերորբերյալ քննությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ նախապես ունեցել ենք Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու Հարցումի մեկ թարգմանություն-խմբագրություն՝ «Տեսութիւն յաղագս հաւատոյ...» խորագրի տակ: Այս բնագրի ընդօրինակման-բազմացման ճանապարհով և հավանաբար գործնական անհրա-

⁴⁹ Հայերեն ձեռագրերի մատենագիտությունը տե՛ս Հ. Անաոյան, նշվ. աշխ., էջ 1355: Ի լրացումն «Հայկական մատենագիտության», կարելի է նշել հետևյալ ձեռագրերը՝ № 3710, էջ 363ա—368բ, № 2549, էջ 183բ—189բ, № 497, էջ 458ա—463բ:

ժեշտության թելադրանքով ժամանակին գոյացել են վերոհիշյալ երեք, այսպես կոչված, կեղծ խմբագրությունները, որոնք «սակս ընդունելութեան» վերագրվել են Բարսեղ Կեսարացուն և Գրիգոր Նազիանզացուն: Եվ դա հասկանալի է, որովհետև միջնադարյան Հայաստանում, մանավանդ դավանական հարցերի հետ կապված տևական վեճերի շրջանում (և առհասարակ) անվերապահ հեղինակություն էին «երեք մեծ կապադովկացիները»⁵⁰:

Բ) ՆԱԶԻԱՆԶԱՅՈՒ ԳԻՐԲ-ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ
ԽՄՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՄԱՏԵՆԱԴՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Պահպանվել են Գրիգոր Նազիանզացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանության ավելի քան երկու հարյուր հին ու նոր ընդօրինակություններ: Չեռագրական նյութի համեմատություն-դասդասումը ցույց է տալիս, որ դրանք ավելի շատ հայտնի են գիրք-ժողովածուներով, քան, ասենք, առանձին ճառերի, թղթերի, չափածո գործերի, խրատների, կանոնների տեսքով: Նազիանզացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունները հայտնի են չորս

⁵⁰ Կան նորօրյա վերագրումներ ևս. Մաշտոցի անվան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրացում» (Ա) «Յառ որս ճառից Գր. Աստուածաբանի» խորագրի տակ նկատի է առնվել № 2532 ձեռագրում («Ժողովածու», ԺԳ դ.) պահպանված երկու բնագիր (էջ 1ա—5բ, 5բ—35բ): Դրանցից առաջինը անխորագիր է, երկրորդը ընդօրինակվել է «Վասն մխիթարութեան՝ վաղճանելոցն ի Քրիստոս» վերտառության տակ: Նշված երկու բնագրերն էլ կապ չունեն Գրիգոր Նազիանզացու մատենագրական ժառանգության հետ: Նազիանզացու հետ բնավ չի առնչվում նաև № 3941 գրչագրում մատնացուցվող համարնույթ մի բնագիր: Իսկ 290ա էջում ընդօրինակվածը Բարսեղ Կեսարացու մեկ այլ գործի հարցման վերածված մի դրվագ է, որ նույնպես չի առնչվում Գրիգոր Նազիանզացու հետ: Նույն «Ցուցակ ձեռագրացում» № 4234 ձեռագրի («Ժողովածու», 1307 թ.) պարունակության առաջին մասը (էջ 1ա—100բ), ուր թերթերի թափվածության պատճառով հղած բնագրերի հեղինակը չի արտացոլված, վերագրվել է Բարսեղ Կեսարացուն: Սակայն իրականում դրանք Գրիգոր Նազիանզացու «Յաղթեցայ» գրքի ճառերն են պակասավոր վիճակով:

Բյուզանդագիտական գրականության մեջ Նազիանզացուն է վերագրվում «Չարչարյալ Քրիստոսը» ողբերգությունը, «но она вероятно не принадлежит ему» (Փ. Փարթար, նշվ. աշխ., էջ 448): Հայկական աղբյուրներում այս վերագրման շուրջ որևէ վկայություն մեզ ծանոթ չէ:

Նազիանզացուն վերագրվող՝ Սատանայի և Միքայելի մասին ղպտերեն մի բնագրի մասին տե՛ս G. Lafontaine, Une homélie copte sur le diable et sur Michel attribuée à Grégoire le Théologien, «Le Muséon», t. 92, f. 1—2, 1979, էջ 38—60: Հայերեն թարգմանությամբ նման բնագիր մեզ ծանոթ չէ:

անուն գրքերով: Գրքերի խորագիր-անվանումներն առաջացել են յուրաքանչյուր շարքի առաջին ճառի մուտքը անկախ ընթերցելու եղանակով: Այսպես, «Քրիստոս ծնեալ լինի փառաւորեցէք» սկզբնամասից ունենք «Քրիստոս ծնեալ» շարքի անվանումը, ինչպես նաև՝ «Առ որս բանիւ են պաճուճեալ բանս» — «Առ որս», «Յաղթեցայ և զպարտութիւն խոստովանիմ» — «Յաղթեցայ», «Որք յԾգիպտոսէն են ողջունեմ» — «Որք յԾգիպտոսէն են» կոչումները¹:

Ընդօրինակություններում նշված գրքերը մշտապես հանդիպում են նույն անվանական հղումներով: Սակայն որոշ ձեռագրերում, երբեմն նաև հայագիտական գրականության մեջ «Նաւարկութիւն» է կոչվում «Որք յԾգիպտոսէն են» գիրքը, իսկ «Յաղթեցայ»-ն՝ «Արձանական»: Այսպես, № 6988 գրչագրում ասված է՝ «Գրիգորի Աստուածաբանի զճոռոմական ճառսն, որ կոչի նաւարկութիւն և արձանական»²: Սույն հաղորդման մեջ առաջին դեպքում շարքի առաջին ճառի խորագրի վերջընթեր բառն է վերտառության վերածվել, իսկ «Յաղթեցայ» գիրքը բովանդակության թելադրանքով կոչվել է «Արձանական», որը շատ ավելի բանավոր դատողության արդյունք է, և սովորաբար կիրառվում է «Բասիլիոս Կեսարացի» գործը հիշատակելիս: Ուստի և միջնադարում ընդունված հիմնական խորագիրը «Յաղթեցայն» է, իսկ մյուս շարքի համար՝ «Որք յԾգիպտոսէն են»: Նկատելու է մի հանգամանք ևս. գիրք-ժողովածուների ինչպես տարանվանումները, այնպես էլ հիմնական խորագրերը շորս դեպքերում էլ զուտ հայկական միջավայրի հետևանք են:

Գրչագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ հայկական միջավայրում կատարված միջամտությունները շեն սահմանափակվում խորագիր-անվանումների շրջանակներով, այլ ըստ գործածության անհրաժեշտության ու ոլորտի Նազիանզացու առանձին գրքեր վերակազմվել ու վերախմբավորվել են: Այդպես է կատարվել նրա «Առ որս» շարքի հետ: Ունենք այդ շարքի «քաղուածոյ» տասնյակ ընդօրինակություններ, որոնք եթե ոչ ժանրային (առկա փոփոխությունը ժանր չի հուշում), ապա գոնե կրած փոփոխության առումով խմբավորելի են երեք հիմնական կետերում:

ա) «Աւարկութիւնք Եւնոմիանոսաց և Եղծմունք և ընդդիմադրութիւնք Գրիգորի Աստուածաբանի յԱռ որս գրոց» (ձեռ. № 1980, էջ 293

¹ Հմմտ. ՆԶԲ, Առաջաբան, էջ 9:

² Ձեռ. № 6988, էջ 425ա, հմմտ. ձեռ. № 823, էջ 1ա, 2. Տաշյան, Ցուցակ..., էջ 551, 552, Ն. Ակիենեան, Մատենագրական հետազոտութիւններ, Ա, Վիեննա, 1922, էջ 62, 2. Անասյան, Հայկական մատենագիտութիւն, Բ, Երևան, 1976, էջ 1386, «Le Musée», t. 90, 1977, էջ 286, 293, 326:

ա—340բ, ձեռ. № 2101, էջ 7ա—բ, ձեռ. № 706, էջ 195ա և այլն): Սույն խորագրին համընթաց հատվածներ են ընտրված շարքի ճառերից, թեև միշտ չէ, որ մատնացուցվում է ճառերի հերթակարգը ըստ գրքի:

բ) «Առարկութիւնք Ենոմիոսանց և Արիոսի՝ եղծմունք և ընդդիմադրութիւնք Գրիգորի Աստուածաբան[ի] յԱռ որս գրոց» (ձեռ. № 729, էջ 168ա—215բ, ձեռ. № 2101, էջ 7ա—21բ): Ոչ միայն խորագրով, այլև բովանդակությամբ որոշակի ընդհանրական կետեր ունի նախորդ ձեռագրախմբի հետ: Նկատելի առանձնացումն այն է, որ սույն բնագիրը նախորդ բովանդակության Հարցումի վերածված տարբերակն է: Հարցումներ են կազմված ամենատարբեր դավանաբանական խնդիրների շուրջ:

գ) «Առարկութիւնք «Առ որս գրոց» սրբոյն Գրիգորի Աստուածաբանի ասացեալ...» («Ցուցակ հայերէն ձեռագրաց նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի», Ա, կազմեց՝ Սմբատ Տեր-Ավետիսեան, Վիեննա, 1970, էջ 769բ):

դ) «Երանելոյն սրբոյն Գրիգորի Աստուածաբանի ասացեալ յԱռ որս գրոցն՝ հաւաքեալ աշխատասիրութեամբ ումեմն Աղէֆսանդրէ թշուառ ոգոյ» (ձեռ. № 1984, էջ 65բ—68բ, ձեռ. № 2271, էջ 108բ—110ա, ձեռ. № 3458, էջ 81ա—84բ, ձեռ. № 2220, էջ 197բ—201ա, Սմբատ Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց..., էջ 736բ և այլն): Այս խմբի ընդօրինակություններին էլ հատուկ է նյութի պարբերացումը (ոչ բնագրային պարբերացման մասին է խոսքը) որոշակի ընդհանրական խնդիրների շրջանակներում: Հավանաբար ըստ գործածության անհրաժեշտության «Առ որս» ճառերը միջնադարում բաժանվել են պարբերությունների: Հայտնի է, որ պարբերությունների բաժանման եղանակով գործածությունը դյուրացնելու փորձ է արվել Նազիանզացու մյուս գրքերի հետ ևս: Ավելին, այդ միջոցն այնքան հարկի է եղել Նազիանզացու գործերի համար, որ ունենք դրանց առասպելապատում դրվագների՝ «Ժողովարանք պատմութեանց առասպելացն...» հայերեն թարգմանությունների պարբերացման օրինակներ ևս: Այսպես, մի հիշատակարանի վկայության համաձայն՝ «Գրեցաւ առասպելս այս և աղճատանք հեթանոսականք, զորս յիշէ Գրիգոր Աստուածաբան առ ի խաղ առնել զնոսա. քսանևչորս գլուխ ի Դարձեալ իմ Յիսուս ճառին և ութևտասն ի Բարսղի արձանականն և այլն ի Յուլիանոսի և ի Կիպրիանոսի ճառսն. ընդ ամենայն հարիւր վաթսուն և եւթն գլուխ՝ ձեռամբ Յովանիսի յոգնամեղ կրանավորի ի թվին ՈՄԷ, ի հռչակեալս Սանահին»³:

³ Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 635, հմմտ. Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Վենետիկ, 1889, էջ 635, հմմտ. Գարեգին կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Ա,

Ունենք Նազիանզացու ճառերի քաղվածո օգտագործման այլ օրինակներ ևս. խոսքը տարբեր մատենագրական հուշարձաններից, այս դեպքում հիմնականում «երեք մեծ կապադովկացիների» գործերից որոշակի թեմատիկ ընտրությամբ քաղված դրվագների մասին է: Նազիանզացուն վերաբերող օրինակները ցույց են տալիս, որ ընտրվել են ճառերի ու թղթերի այն դրվագները, որոնք որոշակի հարցի էին պատասխանում: Կան դեպքեր, երբ քաղվածո նյութերը հավաքվել են մի գրքի սահմաններում, իսկ երբեմն էլ՝ բոլոր գրքերից և նույնիսկ գիրք շատած ճառերից:

ա) «Յաղագս տաւնի սուրբ խաչին՝ ասացեալ սուրբ վարդապետացն» (ձեռ. № 1324, ամբողջ նյութը՝ էջ 443ա—451բ, Նազիանզացու հատվածները՝ էջ 446բ—450ա): Օգտագործվել են միայն «Քրիստոս ծնեալ» գրքի նյութերը:

բ) «Քաղուածք ի բանից վարդապետաց» (ձեռ. № 462, էջ 24բ—25ա, ձեռ. № 600, էջ 33ա, 137ա, 138բ, 140ա—բ, 141բ—142ա, 143ա, 146ա, 147ա, 148ա, 149բ, 153բ, 162բ, 163ա—բ, 166ա—167ա, 169բ, ձեռ. № 1960, էջ 14ա, 17ա, 18ա, 21ա, 25ա, 31ա, 38ա, 46ա, 83ա, 85ա): Այս խմբի նյութերն ընտրվել են «երեք մեծ կապադովկացիների» գործերից, Նազիանզացու հատվածները՝ նաև գիրք շատած ճառերից:

գ) Անխորագիր հատվածներ (ձեռ. № 4207, էջ 126ա—բ, ձեռ. № 866, էջ 182ա, ձեռ. № 3651, էջ 281—282ա, ձեռ. № 3937, էջ 119բ—120ա, ձեռ. № 3078, էջ 15ա, ձեռ. № 8467, էջ 175բ—176ա, ձեռ. № 567, էջ 123բ, ձեռ. № 3076, էջ 124բ, ձեռ. № 3276, էջ 34բ, 35ա, ձեռ. № 4633, էջ 69բ—70բ, ձեռ. № 8191, էջ 213ա—բ, 214ա, ձեռ. № 6577, էջ 67ա—68բ, ձեռ. № 6577, էջ 67ա—68բ, ձեռ. № 4381, էջ 22բ—23բ, 37ա—38բ):

Անթիլիաս, 1951, էջ 739—740:

Արդի հայագիտությանը հայտնի են «Ժողովարանք պատմութեանց...» ավելի հին ու անաղարտ ընդօրինակությունները (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 598, ժողովածու, 1303 թ., էջ 22բ—54բ), քան Հ. Մանանդյանի հրատարակության հիմք ձևադրին է: Հրատարակությունը տե՛ս A. Manandian, Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, Marburg, 1903: Այն բովանդակում է Գրիգոր Նազիանզացու հինգ ճառերի առասպելական վկայությունների նոննոսի քննությունը. ա) «Ժողովարանք մեկնութեան պատմութեանց այնոցիկ, զորս յիշատակեաց Գրիգորի Աստուածաբան ի ճառին մկրտութեան տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի» (էջ 3—13), բ) «Հավաքումն մեկնութեան պատմութեանցն զորս յիշատակեաց Գրիգոր Աստուածաբան ի գերեզմանական բանի սրբոյն Բարսղի» (էջ 14—24), գ) «Մեկնութիւն այնոցիկ, որ և յառաջնում Արձանականին (Յուլիանոսի—Կ. Մ.) եղէն յիշեալ պատմութեանցն» (էջ 24—64), դ) «Նմանապէս պատմութիւն և այնոցիկ, որ յերկրորդում արձանականին (Յուլիանոսի—Կ. Մ.) (էջ 64—80), ե) «Յաղագս որոց ի սրբոյն Կիպրիանոսի ճառին գրեցան հեթանոսական իրաց բանք» (էջ 80—81):

Անխորագիր բնորոշումը վերաբերում է շարքին, այլապես Նազիանզացու (և այլոց) գործերից քաղված հատվածները հիմնականում ունեն համապատասխան աղբյուրը հուշող հղումներ⁴:

Գրիգոր Նազիանզացու գրական վաստակի հայերեն թարգմանություն-ընդօրինակությունների հետ կապված մյուս նկատելի միջամտությունը դրառաջը-հանձնարարականներով օժտելու փաստն է⁵: Գիրք-ժողովածուները կամ առանձին ճառերը ներկայացնելու այդ միջոցը ևս, թվում է, պայմանավորված է գործածության ոլորտ ենթադրող գործոններով: Համամտությունը ցույց է տալիս, որ նման հանձնարարություններն այս կամ այն աշխատությունը առ ուսումնառություն խրախուսելուց բացի՝ առաջին գնահատության փորձ էին միջնադարում:

«Առ որս» շարքում գրքի կազմողը մատենագիտական որոշակի նախընտրանքով հետևել է ճառաշարքի բովանդակության միասնականութ-թյանը և այդ իսկ պատճառով երբեմն վերացել է ընտրվող նյութերի ժանրային առանձնահատկության գործոնից՝ գիրք մուծելով նաև «Առ Եւ-նոմիացիս», «Առ Կղեղոնիոս» վերտառությամբ թղթերը, թեև միջնադա-րում՝ նշված ժողովածուի կազմության շրջանում և հետո, այդ բնագը-րերը հայտնի էին և շարունակում էին ընդօրինակվել թուղթ անվան տակ⁶: Այս իմաստով, իբրև միջնադարյան ժողովածուները գնահատելու արդարացի մոտեցում, հիշատակելու է Առաքել Դավրիժեցու սույն բա-ցատրությունը. «...սեռ, տեսակ և տարբերութիւն, և յատուկ, և պատա-հումն, և ստորասութիւն, և բացասութիւն, որոց բազմաց և յոլովից պա-տահեալ էք ի մէջ Պարապմանց գրոցն, և Գանձուց գրոցն, և Առ որս գրոցն, և այլոց այսպիսեաց, թէպէտ և ընթեռնումք և անցանեմք, այլ թէ զի՞նչ են սոքա, և սոցին հետևումքն, և բոլորն և մասունքն, և այլ որպիսութիւնքն մեք ոչ գիտեմք. և հարկ է վարդապետաց՝ որ սոցին ա-մենեցուն քաջ գիտակ գոլ... զի ամենայն իմաստութեանց և գրոց, ներածութիւնք սոքա են, եթէ նրբից և թէ արտաքնոց»⁷:

Հասկանալի պատճառով այսօր դժվար է հստակ որոշել այն ժամա-նակահատվածը և կրթական-մշակութային կենտրոնները, որոնց շրջա-նակներում կազմվել են Նազիանզացու գրքերն ու դրանց խմբագրու-թյունները: Եղած անուններն ու ձեռագիր հիշատակությունները X դարից

⁴ Ի տարբերություն նախորդ խմբի, այս դեպքում մատենագիտական ընտրանի հեղինակների թվում են նաև Գրիգոր Սքանչելագործը և Հովհան Ոսկեբերանը:

⁵ Ձեռ. № 5443, էջ 130ա—բ, ձեռ. № 1938, էջ 25ա—բ:

⁶ Հովհաննես Իմաստասերն այդպես էլ կոչում է՝ «Ի թուղթսն, որ առ Կղեղոնիոս» (ձեռ. № 8608, էջ 219բ, հմմտ. ձեռ. № 3458, էջ 83բ—84ա):

⁷ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցոյ», Վաղարշապատ, 1896, էջ 393:

այն կողմ շեն անցնում: Նկատի ունենք Ասողիկին⁸ և ապա ժԲ դարի մատենագիրներ Դավիթ Հաղբատեցուն, Ներսես Շնորհալուն, Եղիա Ասորուն⁹ և Դավիթ Քոբայրեցուն¹⁰, մի փոքր ավելի ուշ՝ Գրիգոր Աբասյանին¹¹ և Մխիթար Այրիվանեցուն, որոնք գիտեն Նազիանզացու գրական վաստակը ոչ միայն ընդօրինակության բերումով, այլև մեկնությունների թելադրանքով: Մատենագիտական ամփոփվածության առումով ուսանելի է Մխիթար Այրիվանեցու տեղեկանքը: Վերջինս Նազիանզացու գրքերը ներկայացնում է առանց որոշ ճառերի հեղինակային պատկանելությունը կասկածի տակ առնող հիշատակությունների և ճառերի միջնադարանում ընդունված (կամ հայտնի) հերթակարգը սլահպանելու նպատակով դրանք համարակալում է գիրք առ գիրք¹²: Ահա այդ գրքերի ցանկն ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1500 գրքազրի, որը հայագիտությանը ծանոթ է Մխիթար Այրիվանեցու ճառընտիր անունով¹³:

⁸ «Ստեփանոսի Տարօնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 228: Նոր հայկազյան ըստարանագիրները այդ կարգի որոշ լուսանցագիր գրառումներ նկատի ունենալով գրել են՝ «որք առաւել հային ի դարս կամբրոնացւոյն և Երզնկացւոյն. թող զոր ի յետին դարս» (ՆՀԲ, Ա, 13):

⁹ Ձեռ. № 621, էջ 251ա—258բ, ձեռ. № 1480, էջ 112ա—242ա:

¹⁰ Ձեռ. № 5602, էջ 1ա—272բ:

¹¹ Ձեռ. № 1879, էջ 159ա—229ա:

¹² Նազիանզացու երկերի հայերեն թարգմանությունների առավել լիակատար մատենագիտություն մեր օրերում հրատարակել է բելգիացի հայագետ Գի Լաֆոնտենը «La tradition manuscrite de la version arménienne des discours de Grégoire de Nazianze» (տե՛ս «Le Muséon», t. 90, 1977, էջ 281—340): Լաֆոնտենը միակ հայագետն է, որ թերթել է արտասահմանյան հավաքածոներում պահվող Նազիանզացու հայերեն թարգմանությունների բոլոր գրչագրերը և այդ առումով նրա աշխատանքը գրեթե անթերի է: Նույնը չի կարելի ասել Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Նազիանզացու ընդօրինակությունների օգտագործման մասին. ոչ բոլոր ձեռագրերին ծանոթ լինելու պատճառով, նրա կազմած մատենագիտությունից դուրս են մնացել որոշ քղրեր (տե՛ս ձեռ. № 941, էջ 172բ, ձեռ. № 993, էջ 141բ, ձեռ. № 5607, էջ 81բ—87ա), ճառեր (ձեռ. № 1712, էջ 210բ, ձեռ. № 5443, էջ 402ա—բ), շափածո ստեղծագործություններ (ձեռ. № 6051, էջ 30, ձեռ. № 7170, էջ 51ա—բ): Կան այլ բնույթի վրիպումներ ևս. № 7729 ձեռագրի («Մշո ճառընտիր») Լաֆոնտենի մատնացուցած էջերը (185—187) Նազիանզացուն բնավ չեն առնչվում, այլ «Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի...» մեկնությունն են արտացոլում: Նույնը պիտի ասել № 470 ձեռագրի մասին (էջ 61ա—76բ), որը ոչ թե Նազիանզացու, այլ Նեմեսիոսի «Յաղաքս բնութեան մարդոյ» գործն է (տե՛ս էջ 3ա—116ա) և այլն:

¹³ Շուրջ հարյուր տարի է, ինչ հայագիտության ուշադրության ոլորտում է գրանցվում Մխիթար Այրիվանեցու ճառընտիրը: Ձեռագրական այդ հազվագյուտ օրինակի մասին գրել և որոշ նյութեր շրջանառության մեջ են դրել շատ անվանի հայագետներ: Տակավին 1891 թ. «Հանդէս ամսօրեայի» № 6-ում Հ. Գ. Գ. [=հայր Գրիգոր Գալիմ-

1. «Քրիստոս ծնեալ» գիրքը հայտնի է քառասունվեց ընդօրինակությամբ (ներառյալ թերի և պակասավոր ձեռագրերը), որոնցից քսանմեկը (այդ թվում և հնագույնը՝ ձեռ. № 946, ԺԲ դ.) պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում:

ա) Գրիգորի Աստուածաբանի Անձիւնձու եպիսկոպոսի՝ խաւսֆ ի ծնունդն Քրիստոսի. «Քրիստոս ծնեալ լինի փառաւորեցէք, Քրիստոս յերկնից հանդիպեցարուք, Քրիստոս ի վերայ երկրի՝ բարձրացարո՛ւք...», էջ 724բ—727ա (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 312—333). Εἰς τὰ Θεοφάνια, εἰς τὸν Γενέθλιον τοῦ Σωτῆρος. «Χριστὸς γεννᾶται, ὁξάσατε· Χριστὸς ἐξ οὐρανῶν, ἀπαντήσατε· Χριστὸς ἐπὶ γῆς, ὀψώθητε».

բ) Նորին ի յայտնութիւն տեառն. «Դարձեալ իմ Յիսուս և դարձեալ խորհուրդ, ոչ մոլորեցուցիչ և ոչ անզար և ոչ ի հեթանոսական մոլորութենէն և յարեցութենէ...», էջ 727ա—729բ (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 336—360). Εἰς τὰ ἄγια Φῶτα. «Πάλιν Ἰησοῦς ὁ ἐμὸς, καὶ πάλιν μυστήριον μυστήριον ὡς ἀπατηλόν, ὡς ἄχριστον, ὡς τῆς Ἑλληνικῆς πλάνης, καὶ μέθης».

գ) Նորին ի մկրտութիւնն. «Երեկ զպայծառ լուսաւորութեանցն, դար տանեցար, քանդի և վայել էր իսկ գոհութիւն դնել ի փրկութեան

րեարյան] ստորագրությամբ տպագրվել է «Մխիթար Այրիվանեցի եւ իւր նորագիտ գրութիւնը» խորագրով հոդվածը (էջ 161—167), ուր խոսվում է նաև № 1500 Ճառնտրի մասին. «Այս մատեանս է ՃԻ (120) տետրակ, որ է 1200 թուղթ, մէկ թղաշափ թանձրութեամբ... Գրչութիւնն ամբողջ մատենին մէջ նոյն ձեռքէ չէ, եւ շատ անգամ եւ ոչ իսկ իւրաքանչիւր էջերու եւ երեսներու վրայ, որմէ ինքնին կը հետեւի թէ աշակերտաց գործակցութեամբը գրած է, ասով միայն կարելի է եղած 170 օրան մէջ գրել վերջացնել այսպիսի ստուար մատեան մը» (էջ 165): Այնուհետև Վիեննայի Մխիթ. Մատենադարանի № 217 գրչագիրը նկարագրելիս Հ. Տաշյանը անդրադառնում է մայր օրինակի խնդրին և այդ առիթով գտնում, որ Այրիվանեցու Ճառնտրիը «...գուցէ գործակցութեամբ աշակերտաց իւրոց յանգ հանեալ իցէ զբովանդակութիւն օրինակութեանս: Այս վերջին կարեւոր կէտն եւ ժամանակի հանգամանք կը ցուցնեն որ Մխիթար Այրիվանեցի է գրիչն կամ ճշդիւ իւր աշակերտաց գրել տուողն» (Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 557): № 1500 Ճառնտրին անդրադարձել են նաև Կար. Տեր-Մկրտչյանը («Արարատ», 1895, էջ 408, նաև «Կնիք հաւատոյի» Առաջաբանում. (Ս. էջմիածին, 1914, էջ XLV—XLVI), Գարեգին կաթողիկոսը («Խաղրակեանք կամ Պոռչեանք Հայոց պատմութեան մէջ», Անթիլիաս-Լիրանան, 1969, էջ 209), Մեսրոպ Տեր-Մովսեսյանը («История перевода Библии», СПб., 1902, стр. 239—242): Նոր և նորագույն հետազոտություններից հիշատակելի են Օգոստինոս Սեքուլայի «Նոր կտակարանի գրքերու կարգը հայոց բով» (Վիեննա, 1949, էջ 39—40), Հ. Անասյանի «Հայկական մատենագիտությունը» (Ա., էջ XI—XII) աշխատությունները և է. Հարությունյանի «Մխիթար Այրիվանեցու «Ճառնտրի» ժողովածուի առնչությունը «Սարկավագյան» ցուցակի հետ» հոդվածը (տե՛ս «Լրաբեր», 1976, № 12, էջ 68—77) և այլն:

յաւուրն մերոյ...», էջ 729բ—737ա (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 360—425). *Εἰς τὸ ἅγιον βάπτισμα. „Χθὲς τῆ λαμπρᾶ τῶν Φώτων ἡμέρα πανηγυρίσαντες (καὶ γὰρ ἔπρεπε χαρμόσυνα θέσθαι τῆς σωτηρίας τῆς ἡμετέρας...“.*

դ) Գրիգորի Աստուածաբանի Անձ[իանձի] եպիսկոպոսի խաւիք յամենաւարդ պապայ և ի հեղգութիւնն. «Յարութեան ար և սկիզբն աշողակ, պայծառասցուր տաւնիս և միմեանց գիրկս արկցուր...», էջ 737ա—բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 396—401). *Εἰς τὸ ἅγιον Πάσχα καὶ εἰς τὴν βραδυτῆτα. „Ἀναστάσεως ἡμέρα, καὶ ἡ ἀρχὴ δεξιᾶ, καὶ λαμπρυνθῶμεν τῆ πανηγύρει...“.*

ե) Նորին խաւիք ամենաւարդ պապայ աստուծոյ մերոյ. «Ի պահուիմով կացից, ասէ, սքանչելին Լիմբակով: Եւ ես ընդ նմա այսար տուեցելոյ ինձ ի հոգւոյն աստուծոյ...», էջ 737բ—741ա (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 624—664). *Εἰς τὸ ἅγιον Πάσχα. „Ἐπὶ τῆς φυλακῆς μου στήσομαι, φησὶν ὁ θαυμάσιος Ἀββακούμ. Κατὼ μετ' αὐτοῦ σήμερον, τῆς δεδομένης μοι παρὰ τοῦ Πνεύματος ἐξουσίας καὶ θεωρίας“.*

զ) Նորին խաւիք ի նոր կիրակէն ի Կեսարիայ Կապադովկացոց ի կատարման յիշատակի սրբոյ վկային Մամասայ, քանզի ի նորում կիրակէին կատարի միշտ կեսարացոց քաղաքին. «Նաւակատիք պատուեցին հին արեւքն և գեղեցկապէս կալեալ մանաւանդ թէ նորքս պատուեցին նաւակատեալք...», էջ 741ա—742բ (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 608—621). *Εἰς τὴν καινὴν Κυριακὴν. „Ἐγκαίνια τιμᾶσθαι, παλαιὸς νόμος καὶ καλῶς ἔχων· μᾶλλον δὲ, τὰ νέα τιμᾶσθαι δι' Ἐγκαίνιον“.*

է) Նորին ի Պենդելուսա. «Յաղագս տաւնիս դուքսարեայ իմաստասիրեսցուր, զի հոգևորապէս տաւնիցեմք...», էջ 742բ—744բ (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 428—452). *Τοῦ αὐτοῦ εἰς τὴν Πεντηκοστὴν. „Περὶ τῆς ἑορτῆς βραχέα φιλοσοφήσωμεν, ἵνα πνευματικῶς ἑορτάσωμεν“.*

ը) Նորին ի ժողովոյն. «Այսպէս ասէ Սաղմոսն Դաւթայ թագաւորի և մարգարէի՝ որդի ամենայն եկեղեցւոյ աստուծոյ...», էջ 744բ—748բ (բնագիրը տե՛ս PG, t. 10, էջ 988—1017). *Τοῦ ἐν ἁγίοις πατέρος ἡμῶν... „Γάδε λέγει Σαλομών, ὁ τοῦ Δαβὶδ βασιλέως καὶ προφήτου παῖς ἀπάση τῆ τοῦ Θεοῦ Ἐκκλησίᾳ“.*

թ) Նորին ի հայրն իւր լեւալ սգացեալ վասն հարուածոյ կարկտին. «Հնդէ՞ր լուծանէք զկարգ գովելի, հի՞մ բռնադատէք զլեզու արիւնայ ծառայել...», էջ 748բ—752ա (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 933—964). *Εἰς τὸν πατέρα σιωπῶντα διὰ τὴν πληγὴν τῆς χαλᾶζης. „Τί λύετε τάξιν ἐπαινουμένην; τί βιάζεσθε γλῶσσαν, νόμῳ δουλεύουσας;“.*

ժ) Նորին յաղագս աղբաւարութեան. «Արք եղբարք և աղբաւար կիցք, քանզի աղբաւար ամենեքեան եւ աստուածային շնորհին կարաւ-

տեղալք...», էջ 752ա—758ա (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 857—909).
 Περὶ φιλοπονωχίας, «Ἄνδρες ἀδελφοὶ καὶ συμπένητες, πτωχοὶ γὰρ ἅπαντες,
 καὶ τῆς θείας χάριτος ἐπιδεδεῖς».

ժա) նորին ի Կիպրիանոս եպիսկոպոս և վկայ յանդաստանէ եկեալ
 յետ միոյ ամուր յիշատակին. «Փոքր ինչ և Կիպրիանոս զերծանէր ի
 մէնջ...» էջ 758ա—760բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 1169—1193).
 Εἰς τὸν ἄγιον ἱερομάρτυρα Κυπριανόν, ἐξ ἄγρου μετὰ μίαν τῆς μνείας ἡμέραν
 ἐπανήκοντος. «Μικροῦ Κυπριανός διέφυγεν ἡμᾶς».

ժբ) նորին ի Մակարայեացի վկայսն. «Զի՞նչ և Մակարայեացիս,
 վասն զի սոցա և մերձաւոր տաւնս...», էջ 760բ—763ա (բնագիրը տե՛ս
 PG, t. 35, էջ 912—933). Εἰς τοὺς Μακκαβαίους. «Τί δὲ οἱ Μακκαβαῖοι;
 τούτων γὰρ ἡ παροῦσα πανήγυρις».

2. «Յաղթեցայ» գիրքը հայտնի է վեց ընդօրինակություններ: Երկու
 ամենահին գրչագրերը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարա-
 նում (ձեռ. № 1500, ձեռ. № 4234, համապատասխանաբար 1283 և 1307
 թթ. ընդօրինակություն): Մեկ գրչագիր պահվում է Վիեննայի Մխի-
 թարյան Մատենադարանում (№ 217՝ 1848—49 թթ. ընդօրինակություն),
 մնացյալ երեք ձեռագրերը Երուսաղեմի հայոց պատրիարքության մա-
 տենադարանի սեփականությունն են (ձեռ. № 1414՝ 1321 թ. ընդօրին-
 ակություն, ձեռ. № 429, ձեռ. № 877):

ա) Գրիգորի եպիսկոպոսի պատասխանի, յաղագս ի ձեռնադրութիւն
 անհաւանութեան և հրաժարելոյ. «Յաղթեցայ և զպարտութիւն խոստո-
 վանիմ, հնազանդեցայ տեառն և մաղթեցի զնա...», էջ 763ա—773բ
 (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 408—514). Τοῦ αὐτοῦ ἀπολογητικὸς τῆς
 εἰς τὸν Πόντον φυγῆς ἔνεκεν... «Ἦττημαι, καὶ τὴν ἦτταν ὁμολογῶ· ὑπετάγην
 τῷ Κυρίῳ, καὶ ἰκέτευσα αὐτόν».

բ) նորին յինքն և ի հայրն և ի ժողովուրդն պատասխանի յետ ձեռ-
 նադրութեան իւրոյ յերիցութիւն. «Զբերան իմ բացի և ձգեցի զհոգիս...»
 էջ 773բ—774ա (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 844—849). Εἰς τὸν πατέρα
 ἑαυτοῦ, ἡνίχ' ἐπέτρεψεν αὐτὸν φροντίζειν τῆς Ναζιανζοῦ Ἐκκλησίας. «Τὸ
 στόμα μου ἤνοιξα, καὶ εἴλχυσα Πνεῦμα».

գ) նորին այլ պատասխանի, յորժամ եպիսկոպոս ձեռնադրեցաւ.
 «Դարձեալ ի վերայ իմ ամենայն և հոգի, և դարձեալ ես սգացեալ և տրի-
 րեալ զնամ...», էջ 774ա—775ա (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 820—
 825). Ἀπολογητικὸς εἰς τὸν ἑαυτοῦ πατέρα Γρηγόριον... «Πάλιν ἐπ' ἐμέ
 χρίσμα καὶ Πνεῦμα· καὶ πάλιν ἐγὼ πενθῶν καὶ σκυθρωπάζων πορεύομαι».

դ) Նորին յԱրանասիրոս եպիսկոպոս Աղէֆսանդրացի. «*զԱթանաս-
սիրոս գովելոյս՝ զառաքինութիւն գովեցից...*, էջ 775ա—780ա (բնագիրը
տե՛ս PG, t. 35, էջ 1081—1128). *Εἰς τὸν μέγαν Ἀθανάσιον ἐπίσκοπον
Ἀλεξανδρείας. „Ἀθανάσιον ἐπαινῶν, ἀρετὴν ἐπαινέσομαι“.*

ե) Նորին ի Կեսարիոս եղբայրն իւր. «*Կարծէք զիս թերևս սիրելիք
և եղբարք և հարք քաղցր, և իրք և անուն, ողբս ի վերայ արկանել գնա-
ցելոյն...*», էջ 780բ—783բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 756—788).
Εἰς Καيسάριον τὸν ἑαυτοῦ ἀδελφὸν ἐπιτάφιος... „*Οἶσθε με ἴσως, ὦ φίλοι
καὶ ἀδελφοί, καὶ πατέρες, τὸ γλυκὺ καὶ προᾶγμα καὶ ὄνομα...*“.

զ) Նորին ի Բոյրն իւր. «*Ձրոյրն գովելոյ ընդ ընտանիս սրանշա-
նամբ...*», էջ 783բ—186բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 789—817).
*Εἰς τὴν ἀδελφὴν ἑαυτοῦ Γοργονίαν ἐπιτάφιος. „Ἀδελφὴν ἐπαινῶν, τὰ οἰκεῖα,
θαυμάσομαι“.*

է) Նորին ի հայրն իւր մերձ եղելոյ Բարսիլի. «*Այրդ աստուծոյ և
հաւատարիմ ծառայ և հաղարապետ աստուծոյ խորհրդոցն և այր ցան-
կութեանց հոգւոյն...*», էջ 786բ—792բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ
985—1044). *Ἐπιτάφιος εἰς τὸν πατέρα, παρόντος Βασιλείου. „Ἄνθρωπε
τοῦ Θεοῦ, καὶ πιστὲ θεράπον, καὶ οἰκονόμῃ τῶν τοῦ Θεοῦ μυστηρίων, καὶ
ἄνερ ἐπιθυμιῶν τῶν τοῦ Πνεύματος“.*

ը) Նորին ի Բասիլիոս Կեսարացի. «*Հանդերձեալ էր ուրեմն բազում
պատճառս մեզ բանից արաջի դնելոյ մեծ Բասիլիոս»,* էջ 792բ—803բ
(բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 493—605). *Εἰς τὸν μέγαν Βασίλειον...* ἐπι-
τάφιος. „*Ἐμελλεν ἄρα, πολλὰς ἡμῶν ὑποθέσεις τῶν λόγων ἀεὶ προτιθεὶς ὁ
μέγας Βασίλειος“.*

3. «Առ քոս» ժողովածուի ընդօրինակությունների թիվը հասնում է
երեսունհինգի (նկատի ունենք նաև պակասավոր ձեռագրերը): Տասնինը
ձեռագիր-ժողովածու պահպանվում են Մաշտոցի անվան Մատենադա-
րանում: Շարքի հնագույն ձեռագիրը (№ 4146) ընդօրինակվել է 1194 թ.,
նորագույնը՝ 1836 թ., հանդիսանում է Վիեննայի Մխիթարյան Մատե-
նադարանի սեփականությունը (ձեռ. № 316):

ա) Գրիգորի եպիսկոպոսի նագագացոս առ [Եւ]նովիացիս. «Առ քոս
բանին են պաճուճեալք բանս...», էջ 803բ—805ա (բնագիրը տե՛ս PG,
t. 36, էջ 12—25). *Κατὰ Εὐνομιανῶν προδιάλεξις. „Πρὸς τοὺς ἐν λόγῳ κομ-
ψοὺς ὁ λόγος“.*

բ) Նորին յաղագս հաւատոյ. «*Յորժամ տեսանեմ այժմ լիզուադա-
րութիւն, և զառարեա իմաստունս...*, էջ 805ա—806բ (բնագիրը տե՛ս

PG, t. 35, էջ 1065—1080). Քերի ծոցմատոս քալ քատատաթեոս էքիսքոքոն.
 „Օտան իծո տըն յոն ցլոսսաղիան, քալ տոնս ածոդմերոնոնս սոքոնս“.

դ) Նորին յաղաքս որդոյն [բան առաջին]. «Ձորս ինչ ասիցէ որ ար-
 դեաւր ի բաց հաստանելոյ դրանիցն նոցա դաւարաստութիւնն...», էջ
 806բ—810ա (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 73—104). Քերի Կոճ. „Ա մեն
 ոն է՛քո տոնս ան էքիսքոքոն տըն քերի տոն լոցոն ածոնս էտոյմոտըտ“.

դ) Առ աշնոսիկ, որք աւեն երէ՛ մեծ է հայր քան զորդի. «Ձոր ինչ
 ախտանան առ բաղմածաղիկս բուրաստանացն, որք աշնոցիկ են ցան-
 կացողք...», էջ 810ա—813ա (բնագիրը տե՛ս PG, t. 46, էջ 553—576).
 Կոճ ածոնս քերի թեոտըտոս... քալ էրքոմոն էոն տոն ծոցաոն Աքրաճաւ. „Օ՛տոն տո
 քասցոսսոն քրոնս տոնս քոլոսանթե՛նս տոն լեոմոնոնս ո՛ն տոն տոյոտոն քոլոթե՛սոնս“.

ե) Նորին յաղաքս որդոն՝ բան երրորդ. «Վասն զի քեզ ընդ խորհր-
 դոցն դարձուածս և մանուածս բաւականապէս անցի դարութեամբ հոգ-
 ւոյն...», էջ 813ա—816բ (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 104—133).
 Քերի Կոճ. „Էքեոծոն տոնս տան մեն էք տոն լոցոսմոն ստրոքաս քալ քոլոցանս էքանոնս
 ծեոսե՛սոնս տըն ծոնճաւոնս տոնս Քոնոմատոս“.

զ) Նորին յաղաքս սուրբ հոգոյն. «Արդ որ յաղաքս որդոյն բանն
 է աշուրան և աշուպէս դերձաւ ի քարկոծչացն անցանելոյ ընդ մէջ նո-
 ցա...», էջ 816բ—821ա (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 133—172). Քերի
 տոնս աղոսն Քոնոմատոս. „Օ մեն ծոն քերի տոնս Կոճ լոցոնս, տոյոտոնս քալ սոտո
 ծեոթեքոսքոնս տոնս լեոծճոնոնս, ծեոլոնոնս ծեո մեքոսսոնս ածոնս“.

է) Նորին յաղաքս աստուածաբանութեանն. «Եւ արդ վասն զի մար-
 քեցար բանի դաստուածաբանութիւնն՝ որպիսի ինչ գոյ պարտ էր՝ ան-
 ցանելոյ...», էջ 821ա—826ա (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 25—72).
 Քերի թեոլոցոս. „Էքեոծոնս անեքաոծոնս տըն լոցոնս տոն թեոլոցոնս, ո՛ն տե է՛նս
 չրոնս ծեոլոնոնս“.

ը) Նորին առ Արիանոս. «Ո՛ր արդեաւր իցեն, որք դադարաստու-
 թիւնս թշնամանեն և դմեծութիւնս հոշակեցոցանեն», էջ 826ա—828ա
 (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 213—237). Քրոնս Արեոսոնս, քալ էոնս էոստոն.
 „Քոնս քոտե էոնս, ո՛ն տըն քեոնսն դմեոնս ծեոլոնոնս, քալ տոն քոլոնստոն քոմքճոն-
 տե՛ս“.

թ) Առ Կղերոսիոս՝ [առաջին]. «Վամիմք ուսանել զինչ է նորածնու-
 թիւնք յեկեղեցոյ. զի իշխանութիւն իցէ ամենայնի կամողի...», էջ
 828ա—830ա:

ժ) Առ Կղերոսիոս՝ [երկրորդ]. «Վասն զի բազումք եկեալ քո եր-
 կեղածութիւնդ հաստաստութեան խնորհն յաղաքս հաւատոյ...», էջ 830ա
 —831ա*:

* «Առ Կղերոսիոս» առաջին և երկրորդ թղթերի բնագրերը ինչ-ինչ պատշաճան-

ժա) [Առ Կղեղոնիոս] նորին ի մարգարէական բանն. «Որովայն իմ, որովայն իմ ցաւէ և զգայարանք իմ ճմլին, ասէ ուրեմն յիւրում ի բանս յԵրեմիաս...», էջ 831ա—832բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 964—981). Πρὸς τοὺς πολιτευομένους Ναζιανζοῦ ἀγωνιῶντας. «Τὴν κοιλίαν μου, τὴν κοιλίαν μου ἀλγῶ, καὶ τὰ αἰσθητήρια τῆς καρδίας μου μαιμάσσει, φησί που τῶν ἑαυτοῦ λόγων Ἱερεμίας».

ժբ) Յաղագս բարեկարգութեան ի իսաւս. «Վասն զի եկիք ի միասին յաւտարութեամբ և բազմամարդ է տալնս...», էջ 832բ—836բ (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 173—212). Περὶ τῆς ἐν διαλέξεσιν εὐταξίας... «Ἐπειδὴ συνελθούθατε προθύμως, καὶ πολυάνθρωπος ἡ πανήγυρις».

ժգ) Խաղաղական ի միաբանութեան միայնացելոցն յետ լուրսեան. «Արձակէ ինձ զլեզուս յաւտարութիւնս և արհամարհեմ զմարդկային արէնսն յաղագս օրինաց հոգոյն...», էջ 836բ—839բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 721—752). Εἰρηνικὸς Α'. «Δύει μου τὴν γλῶτταν ἡ προθυμία, καὶ περιφρονῶ τὸν ἀνθρώπινον νόμον διὰ τὸν νόμον τοῦ Πνεύματος».

ժդ) Խաղաղական երկրորդ. «Զերմ է նախանձ, հեղձ հոգի, մարդասէր՝ սէր, մանաւանդ ինքն մարդասիրութիւն...», էջ 839բ—841բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 1152—1168). Εἰρηνικὸς Γ'. «Θερμὸς ὁ ζῆλος, πρᾶον τὸ Πνεῦμα, φιλόανθρωπον ἡ ἀγάπη, μᾶλλον δ' αὐτοφιλανθρωπία».

ժե) Խաղաղական երրորդ. «Խաղաղութիւն սիրելի՛ քաղցր և իրք և անուն, զոր այժմս ետու ժողովրդեանս...», էջ 841բ—843բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 1132—1152). Εἰρηνικὸς Β'. «Εἰρήνη φίλη, τὸ γλυκὺ καὶ πρᾶγμα καὶ ὄνομα, ὃ νῦν ἔδωκα τῷ λαῷ καὶ ἀντέλαβον».

4. «Որք Եգիպտոսէն են» գիրքը հայտնի է տասնմեկ ընդօրինակութեամբ: Գիտութեանը հայտնի ամենահին ձեռագիրը (№ 823) ընդօրինակվել է 1266 թ., նորագույնը (№ 2615)՝ 1850 թ., երկուսն էլ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում:

ա) Գրիգորի Աստուածաբանի Ազիագու Եպիսկոպոսի առ նախաղութիւնն. «Որք յԵգիպտոսէն են ողջունեմ...», էջ 844ա—845բ (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 241—256). Εἰς τοὺς Αἰγύπτου ἐπιδημήσαντας. «Τοὺς ἀπ' Αἰγύπτου προσφθέγγομαι...».

րով դուրս են մնացել Նագիանդացու մատենագրութեան ամփոփող «Patrologia Graeca» մատենաշարի 35—38 հատորներից: Սակայն Գի Լաֆոնտենի հիշյալ մատենագրութեանից տեղեկանում ենք (էջ 332—333), որ կա Նագիանդացու թղթերի առանձին հրատարակություն, ուր արտացոլվել են նաև այդ երկու բնագրերը: Նշված հրատարակությունը ձեռքի տակ չունենալու պատճառով «Առ Կղեղոնիոս» թղթերի հունարեն համապատասխանությունը շկարողացանք արտացոլել:

բ) նորին ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի՝ ասացաւ ի Կոստանդնուպոլիս. «Աճեցոյց մեզ զթիւ առաքելոցն նոր առաքելս, որ թուեցաւ ընդ մեկուսան առաքելսն...», էջ 845բ—847ա (բնագիրը տե՛ս PG, t. 46, էջ 852—864). Եւ այստեղ էպիտաֆիոս լոգոս էիս տօն մեղան Մելեւտիօն էպիսկոպոս Անտոքեիաս. «Իճէիսեւ իմն տօն արիւմօն տօն արօստօլօն օ նօս արօստօլօս, օ սոգադափիթօսիս մետա տօն արօստօլօն».

դ) նորին ի գալ եպիսկոպոսացն. «Զիւրդ ճեզ մերքս ով ճոլիւսուէրրդ և ճոլիւսակիցք, որոց գեղեցիկ են ոսք...», էջ 847ա—849ա (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 457—492). Տոնադարիս, էիս տիլ տօն... քարօսիան. «Իճօս օմն տա իմեւերա, օ փիլօի քօիմեւես քաի սօմքօիմեւես՝ օն օրաիօի մեւն օի քօճես».

դ) նորին ի Գրիգորիոս եպիսկոպոս [Նիւսայ]՝ Բարսիլի մերձ կացելիլ, յետ ճեղնադարձեանն և ի վկայսն. «Սիրելիլ ճուսարմի ոչիւն է իփիսանակ յէիցս և ոչիւն, և ոչ կշիւք ինչ գեղեցիկութեանն նորա...», էջ 849ա—850ա (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 832—841). Եւ այստեղ էիս Գրիգորիօն Նօսսից, տօն տօս մեղալօս Բասիլեիօս արձեւօն, էպիստանտա մետա տիլ չեւրօտօնիան. «Փիլօս քիստօս օնչ էստիւն անտալլաղաղա տօն օնտօն օնճեւն, օնճեւ տիս ստաիմօս տից քալլօնից արձեւ».

ե) նորին առ կոչեցեալս ի սղարանս և ոչ ճանդիպեալս յերիցուրեանն. «Զիւրդ ճեզգք ի մեր քանն, ով սիրելիք և եղբարք...», էջ 850ա—851ա (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 517—525). Իրօս տօս քալեւսանտա, քաի մի արանտիսանտա. «Իճօս Բրարձեիս էպի տօն իմեւերօն լօղօն, օ փիլօի քաի արձեւօլօի...».

զ) նորին ի Մաքսիմոս իմաստասէր եկեալ յարապօս սահմանելիլ. «Զիմաստասէրն գովեցից, թէպէտև աշխատիմ մարմնիլս... իլսան զի իմաստասէր է...», էջ 851ա—854ա (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 1197—1225). Եիս 'Իրօնա տօն փիլօսօփօն. «Են փիլօսօփօն էքալնէսօմաի, քաի էի քալմնօս արօ սօմաի՝ փիլօսօփօն ճար».

է) նորին ի քանս և ի ճուսարեցուցիլն. «Զիւնչ է մեւալորիթիւս զոր ի սիրոյս մեւադարմիք, զիւնչ է իմաստարիւս և ճանճար...», էջ 854ա—856բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 1044—1064). Եիս տօս լօղօս, ար էիս տօն էքիսօտիլն 'Իսուլիանօն. «Եից ի տրաննիս, իլն էք արգաթից արէ տրաննօս մեւա; տից ի էմի սօփիա քաի էքիստիլմի».

ը) նորին առ Յուլիանոս քալալար. «Զուարորք զայս արձեւայն աղգք, ունկնդիր լերորք արձեւեքեան, որ բնակեալ էք յաշխարհի...», էջ 856բ—869բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 532—664). Կադա 'Իսուլիանօս Բասիլեւօս Տիլիլտեւտիկօս քրօտօս. «'Աղօսադա տաւտա, քանտա տա էթնի, էնօտիսասթե քանտես ի քադօիկօնտես տիլն օիկօմեւնիլն».

բ) Առ նոյն բան երկրորդ. «Արդ այս մերոց բանիցս հանդէս կատարեցաւ և աւարտեցաւ...», էջ 869բ—874բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 664—720). Κατὰ Ἰουλιανοῦ Βασιλέως στυλιτευτικὸς δεῦτερος. «Οὗτος μὲν δὴ τῶν ἐμῶν λόγων ὁ πρῶτος ἀεὶλλος ἐκτετέλεσται καὶ διήγυσται».

ժ) Նորին յիմքն ի յազարակէ աւերէն եկեալ. «Անձկայի առ ձեզ, ով մանկունք, և փոխարեն անձկացեալ լինէի հաւասար շափովք...», էջ 874բ—877բ (բնագիրը տե՛ս PG, t. 35, էջ 1228—1252). Εἰς ἑαυτὸν, ἐξ ἀγροῦ ἐπανήκοντα μετὰ τὰ κατὰ Μάξιμον. «Ἐπόθουν ὑμᾶς, ὦ τέκνα, καὶ ἀντεποθούμην τοῖς ἴσοις μέτροις».

ժա) Նորին յիմքն և ի բանս երկրորդ. «Ծս սքանչանամ զինչ արդեալք իցէ, զոր առ իմ բանս արտացայք...», էջ 877բ—879ա¹⁴ (բնագիրը տե՛ս PG, t. 36, էջ 265—280). Εἰς ἑαυτὸν, καὶ πρὸς τοὺς λέγοντας ἐπιθυμεῖν αὐτὸν τῆς καθέδρας Κωνσταντινουπόλεως, καὶ εἰς τὴν τοῦ λαοῦ προθυμίαν, ἣν ἐπέδειξαντο εἰς αὐτὸν. «Ἐγὼ θαυμάζω, τί ποτέ ἐστὶν ὁ πρὸς τοὺς ἐμούς πεπόνθατε λόγους».

¹⁴ Նշված շորս ժողովածուներով չի սահմանափակվում Գր. Նազիանզացու գրական վաստակի հայերեն թարգմանությունների ցանկը: Այլ բնօրինակություններով հայտնի են նաև (ձեռ. № 7729, էջ 151ա—բ, ձեռ. № 8914, էջ 88բ, ձեռ. № 1523, էջ 5ա, ձեռ. № 7443, էջ 286բ, ձեռ. № 1525, էջ 88ա—բ, ձեռ. № 1712, էջ 210բ, ձեռ. № 3787, էջ 196ա—198բ, 316բ—317ա, ձեռ. № 996, էջ 463բ, ձեռ. № 993, էջ 241բ, ձեռ. № 1525, էջ 186ա—բ, ձեռ. № 5443, էջ 402ա—բ, ձեռ. № 948, էջ 37բ—42ա, ձեռ. № 2715, էջ 74ա—բ, ձեռ. № 1555, էջ 191ա—197բ, ձեռ. № 3797, էջ 325ա—326բ, ձեռ. № 114, էջ 149ա—151ա), քղբեր (ձեռ. № 941, էջ 172 բ, ձեռ. № 5607, էջ 81բ—86բ, ձեռ. № 1525, էջ 186ա, ձեռ. № 993, էջ 141բ, ձեռ. № 7729, էջ 198բ, ձեռ. № 996, էջ 294ա—բ, 294բ—295ա), շափածո ստեղծագործություններ (ձեռ. № 6051, էջ 30, ձեռ. № 7170, էջ 51ա—բ) և այլն:

Գիրք-ժողովածուների միջնադարյան ցանկը և Մխիթար Այրիվանեցու դասդասուվը պահպանելու նպատակով «Առ որս» և «Որք Նզիպտոսէն են» գրքերից շտարեցինք համապատասխանաբար շորրորդ («Առ այնսսիկ, որք ասեն...») և երկրորդ («Ի Մելիտոսս եպիսկոպոս...») ձառերը, որոնք, ինչպես տեսանք նախորդ քննությանմբ, պատկանում են Գրիգոր Նյուսացու գրչին:

Գրիգոր Նազիանզացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունները հիմնական մասով տակավին անտիպ են: Առ այսօր հրատարակվել է երկու ամբողջական ձև՝ «Գիրք և նառ հոգեշահ՝ արարեալ յուղղափառ և յաստուածաբան վարդապետաց եկեղեցւոյ, որ պարունակէ ներ ինքեան համառօտապէս զճառս յոգոնս խորհրդաւորս տերունական տօնից՝ սկսեալ ի ծննդենէ Քրիստոսի մինչ ի խաչ վերայ տօնն... ի թւին հայոց ՌՃՀԱ (=1722), [ի Կ. Պոլիս]: Սույն գրքում «Ի սուր ծնունդն Քրիստոսի» ձառին կից հրատարակված ենք գտնում նաև «Լուծմունք Քրիստոս ծնեալ նախապս...» գործը (էջ 29—48): Նազիանզացու մյուս հրատարակված աշխատանքը «Ի բարսիլոս Կեսարացի» դամբանական ձառն է (տե՛ս «Кавказ и Византия» (այսուհետև՝ KB), т. II, Ереван, 1980, էջ 161—217): Չափածո ստեղծագործություններից երի-

Հասկանալի պատճառով միշտ չէ, որ այս կամ այն խորագրի տակ պահանջվող բնագիրն է ամփոփված, այլ, ինչպես ցույց է տալիս համեմատությունը, պատահում են խորագրերի շփոթի կամ բնագրերի փոխանցման բաղմաթիվ դեպքեր: Այսպես, «Քրիստոս ծնեալ» ժողովածուի առաջին ճառը՝ «Խաւսք ի ծնունդն Քրիստոսի», հայտնի է նաև «Ի յայտնութիւն տեառն» (ձեռ. № 5443, էջ 130ա—133բ, հմմտ. ձեռ. № 4869, էջ 140ա—146ա, ձեռ. № 4676, էջ 12ա—17բ, ձեռ. № 3797, էջ 24ա—30ա), «Առաջին ատուրն Գրիգորի Աստուածաբանի ասացեալ՝ ի յայտնութիւն Քրիստոսի՝ Աստուծոյ մերոյ» (ձեռ. № 5406, էջ 6ա—14բ, հմմտ. ձեռ. № 1523, էջ 25ա—28բ և այլն) վերտառությամբ:

Շարքի երկրորդ ճառը՝ «Ի յայտնութիւն տեառն», որոշ գրչագրերում ընդօրինակված ենք գտնում «Խօսք ի մկրտութիւն տեառն» խորագրի տակ (ձեռ. № 1523, էջ 28բ—31ա, հմմտ. ձեռ. № 996, էջ 40բ—49բ, ձեռ. № 993, էջ 33ա—35ա, ձեռ. № 1525, էջ 16ա—18ա, ձեռ. № 3797, էջ 28բ—31ա և այլն):

Ի վերջո՝ նույն ժողովածուի «Խաւսք յամենասուրբ պասքայ և ի

ցըս հրատարակվել է Պրոյերեսիոսի մասին բանաստեղծությունը (տե՛ս Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեանց, Վենետիկ, 1865, էջ 161, հմմտ. նույնի՝ «Հայկական հին դպրութիւն», Վենետիկ, 1897, էջ 264, Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1956, էջ 192): Վերջին հրատարակության մասին շնորհակալությամբ տեղեկացանք գրականագետ Խ. Սամվելյանից: Համեմատությունը ցույց է տալիս, որ սույն հրատարակությունը մասնակի փոփոխությունների է ենթարկվել հավանաբար վիպասանի ձեռքով:

Նազիանդացուն վերագրվող կանոնների քննական-համեմատական բնագրի հրատարակությունն իրացրել է պրոֆ. Վ. Հակոբյանը (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Բ, Երևան, 1971, էջ 181—199): Ճառերի առանձին հատվածներ կան «Կնիք հաւատոյ» ժողովածուում (էջ 31—40, 276, 287, 309—310, 349—353): Ի վերջո՝ Նազիանդացու «Առ Յուլիանոս» առաջին ճառից մի ընդարձակ հատված հրատարակվել է Ն. Ակինյանի «Դասական հայերենը և Վիեննական Մխիթարեան դպրոցը» ուսումնասիրության մեջ (Վիեննա, 1932, էջ 242—243):

Հայտնի է, որ XIX դարում ևս փորձեր են արվել նորովի թարգմանելու Նազիանդացու որոշ գործեր: Պահպանվել է «Առ Յուլիանոս» առաջին ճառի Հ. Գաթրճյանի անավարտ թարգմանությունը, որից մի հատված հրատարակել է Ն. Ակինյանը (տե՛ս նրա «Դասական հայերենը...», էջ 242—243): Հավանաբար Հ. Գաթրճյանի թարգմանությունը պիտի դիտել նաև Պրոյերեսիոսի մասին գրված հիշյալ շափածո ստեղծագործությունը:

Բոլորովին վերջերս «Le Muséon»-ի (տ. 93, ֆ. 1—2, 1980) նոր գրականության ցանկից տեղեկացանք, որ Փարիզում, առանձին հատորով լույս են տեսել Նազիանդացու և շորս ճառեր. տե՛ս Justin Mossay et Guy Lafontaine, Grégoire de Nazianze, Discours 20—30 (Sources Chétiennes, 270), Paris, 1980, 325 էջ: Հանրապետության գրադարաններում չլինելու պատճառով այդ հրատարակությունը մենք չենք տեսել:

հեղգութիւնն» շորորդ ճառը պատահում է այլ խորագրերի տակ ևս. ա) «Գրիգոր Աստուածաբանի Անձիանձու եպիսկոպոսի ասացեալ ի յարութիւն Քրիստոսի» (ձեռ. № 3787, էջ 290ա—291ա), բ) «Նրանելոյն Գրիգորի Աստուածաբանի Նազիագու եպիսկոպոսի ասացեալ ի սուրբ զատկին» (ձեռ. № 7489, էջ 152բ—153ա):

Գիրք-ժողովածուները տարբերվում-առանձնանում են ոչ միայն բնագրային փոխանցումների իմաստով, այլև ձեռագրերի պահպանվածութեան կամ խաթարվածութեան առումով: Վաթսունվեց ընդօրինակութեամբ հայտնի «Քրիստոս ծնեալ» գրքին զուգահեռ «Յաղթեցայ» ժողովածուն ունենք վեց ընդօրինակութեամբ, որից մեր տրամադրութեան տակ եղած երկու ձեռագրերից միայն մեկն է ամբողջական: № 4234 գրչագիրը թերի է, բացակայում են առաջին երեք ճառերը և «յԱթանասիոս եպիսկոպոս Աղէքսանդրացի» բնագրի մի մասը: Պահպանված միակ հիշատակարանը հետևյալ խիստ համառոտ գրառումն է. «զմեղուցեալ ծրողս զհաշիկ սարկաւագ և սպասաւոր բանի յաղօթս յիշեցէ՛ք, ով սուրբ ընթերձողք և սխալանացն ներումն հայցեմ, զի այսօրն է կարմեր. ի թուիս ՉՄՁ (=1307) ի հրոտից Իժ» (էջ 36բ): Թվում է, հիմքեր կան ենթադրելու, որ № 4234 գրչագիրը ընդօրինակվել է № 1500 ճառընտրից: Նման ենթադրութեան հնարավորութիւնն են տալիս նույնական վրիպումները, բնագրերի զարդանշանների միօրինակութիւնը, գրքերի անվանումները հուշող կտորների ընդգծված ու առանձնացված գրութեան համանմանութիւնը և այլն: 2. Տաշյանի ուսումնասիրութիւնից գիտենք, որ նույն՝ № 1500 ճառընտրից է ընդօրինակվել նաև Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 217 ձեռագիրը¹⁵:

Քանի որ խոսք եղավ «Յաղթեցայ» գրքի մասին, ապա պիտի նկատել, որ Նազիանզացու մյուս ժողովածուների համեմատութեամբ այն ամենաբարդն է ու ինքնատիպը: Ներկա դեպքում ի մի են ձուլված վաղ քրիստոնեական վարքագրութեան, ինչպես նաև հին հունական օդայի, էլեգիայի և ճարտասանական ձևերի հիմնական բնորոշ գծերը: Հայտնի ժանրային միավորների ընդհանուր գումարը գրական մեկ տեպակի սահմաններում ինքնին պայմանավորում է այն նորը, որը հատուկ է թվարկված ժանրերից և ոչ մեկին առանձին վերցրած:

Գրքի ընդհանուր կառուցվածքից մասամբ առանձնանում են առաջին երեք բնագրերը: Դրանցից առաջինը ինքնադամբանական է (կա այդպիսի տերմին), մյուս երկուսը ինքներգական ստեղծագործութիւն-

¹⁵ 2. Տաշյան, Ցուցակ..., էջ 548—549: Շարքի վեց ձեռագրերից երեքը իրականում նույն հիմքն ունեն:

ներ են: Մնացած հինգ բնագրերը էպիտաֆիաներ (տապանագրեր) են՝ գրված ժանրին հատուկ տեսական նորմերի խստիվ պահպանմամբ: Պահպանվել է իր իսկ՝ Գրիգոր Նազիանզացու բնորոշումը. նա այս ժանրը մերթ կոչում է «գերեզմանական գովուրփին»¹⁶, մերթ էլ՝ «ողբ ի վերայ... գնացելոյն»¹⁷, որոնք երկու դեպքում էլ նույնանում են դամբանական ձևակերպման հետ: Այստեղ միմյանց առնչություն չունեցող բնագրերը ևս, ինչպես կտեսնենք, ունեն դամբանականին հատուկ որոշ առանձնահատկություններ: Եվ առհասարակ՝ «Յաղթեցայ» գրքի բնագրերի համեմատությունն այն տպավորությունն է թողնում, որ ասելիքի շափավորությունը պահպանելու, անհարկի բառ-ձևակերպումով այս կամ այն նկարագրությունը շքնդմիջարկելու Նազիանզացու հոգածությունն այնքան մեծ է, որ նույն ժողովածուի տարբեր բնագրերի շատ ձևակերպումներ գրեթե մերձենում են միմյանց: Արդ՝ փորձենք ասվածը հավաստել համապատասխան օրինակների վկայակոչությամբ:

Ի հոյրն իւր
Ձեռ. № 4234 (1307 ր.)

«Լքեալ էր այնուհետև և շնչէր զվերջին շունչն և պար շուրջ զնովաւ յայտնեացն և յօտարաց...» (էջ 35ր):
«Իսկ եթէ և զմեղ պատուեսցէ որ յետ ձեր հաւասարօրն ոչ ունիմ ասել...» (էջ 36ր):

Ի Բասիլիոս Կեսարացի
(KB, II, էջ 187, 217)

«Եւ ի վերջին շունչն էր, համարձակէր ի ճանապարհն՝ աւզնել ընտրութեան եւ վստահանայր ի հոգին...» (1Ը):
«Բայց զմեղ ով գովեսցէ յետ քո զկեանս լքանելով...» (2Գ):

(Համեմատության շարունակությունը տե՛ս հաջորդ էջում)

Խոսելով գիրք-ժողովածուների հայերեն ընդօրինակությունների պահպանվածության մասին, պիտի նկատել, որ այս կամ այն շարքի գերակշռող հարաբերության իրողությունը ամենևին էլ դիպվածաբար չի առաջացել, այլ պայմանավորված է գործածության անհրաժեշտությամբ: Ունենք «Առ որսի» ընդօրինակություններ, որոնք օժտված են համապատասխան ցանկերով¹⁸:

«Առ որս» ճառաշարքի հայկական միջնադարում ունեցած տարածման մասին են վկայում պահպանված բազմաթիվ հիշատակարան-հիշատակագրությունները¹⁹: Դրանց մի մասում կան գնահատության իրողու-

¹⁶ Ձեռ. № 4234, էջ 57ա: Այս բնորոշումը տրվում է «Ի հոյրն իւր» դամբանական ճառի առիթով:

¹⁷ Նույն տեղում, էջ 12ա («Ի Կեսարիոս եղբայրն իւր»):

¹⁸ Տե՛ս ձեռ. № 1466, էջ 379բ—384բ՝ «Յանկ մեկնութեան «Առ որսի» ոմանց գրված խաւորաց բանից՝ ժողովեալ առ ի դիւրութիւն ընթերցողաց»:

¹⁹ Տե՛ս ձեռ. № 60, էջ 1ա, ձեռ. № 115, էջ 2ա, ձեռ. № 3284, էջ 1ա:

- Յինքն և ի ճայրն և ի ժողովուրդն պատասխանի՝
յետ ձեռնագրութիւն իւրոյ
երիցութեան...
Ձեռ. № 1500 (1283) ք.)
- «Այս է յինէն բանս ձեզ,
ով արք, պարզարար և
հանդերձ ամենայն բարե-
մտութեամբք ասացեալ...»
(էջ 774ա)։
- «Ով սիրելի և պատուա-
կան ինձ գլուխ և Ահարո-
նին այնմիկ արժանա-
ւոր...» (էջ 773բ)։
- յԱրանասիս եպիսկոպոս
Աղէֆանդրացի
Ձեռ. № 4234 (1307 ք.)
- Ի Կեսարիոս Եղբայրն իւր
(Ձեռ. № 4234)
- «Այս քեզ և յինէն բանս
յինէն պատանք այսորիկ
իմոց բանից պտուղք...»
(էջ 20ա)։
- «Ռու մեզ յերկինս գնա-
ցեալ, ով աստուածային
և պատուական գլուխ...»
(էջ 20բ)։
- Ի Քասիլիոս Կեսարացի
(KB, II)
- «Այս քեզ ի մէնջ, ով Բա-
սիլիէ, ի հեշտալոյս քեզ
երբեմնի լեզուոյ...» (29)։
- «Բայց դու ի մեզ հայնա-
ցիս ի վերուստ, ով աս-
տուածային և պատուա-
կան գլուխ...» (29)։
- «Այլ ով սիրելի և բահա-
նայական գլուխ... դու ի
վերուստ ի մեզ հայնացիս
հաշտ...» (էջ 11բ—12ա)։

թյուններ. «Շնորհաւք ամենակալին սկսաւ և նորին ողորմութեամբն կատարեցի սուրբ և գերաշնչակ պատվական մարգարիտս և զգանձս աստուածականս, որ կոչի Առ որս Գրիգորի Աստուածաբանի, ի հայրապետութեան տեառն Գրիգորի և ի թագաւորութեան Հեթմոյ, ի մայրաքաղաքիս Եզնկայիս, առ սրբոյ կաթուղիկէիս: || Ի թվականիս Հայոց ԳԾԳ (1304), ի նոյեմբերի ԺԵ (15), ի խնդիր պատուելի և իմաստուն գերաշնչակ հարն Ահարոն վարդապետին...»²⁰: Եվ կամ՝ «... հասանել խաղաղութեամբ յաւարտ հոգէլից և աստուածային գանձիս Առ որսիս, որ յորդառատ շնորհիւ և աստուածային լցեալ հոգովն Աստուածաբանն Գրիգորիոս արարեալ աստուածաբանութիւն և ուղղափառ դաւանութիւն և ընդդիմադրութիւն ընդդէմ հերձտիկոսացն, ընդդէմ նոմիոսի և Ատիկոսի, ընդդէմ Արիոսի և Մակեդոնի և այլ ամենայն համախոհացն նոցա: Եւ ճշմարիտ և հաստատուն դաւանութիւն է մերոյ Հայաստանեաց եկեղեցոյս. և ամրացեալ կայ մերս եկեղեցի ի վերայ սորին դաւանութեանն»²¹:

Ի վերջո՝ ունենք հիշատակարանների մի ստվար խումբ ևս, որոնցում «Առ որս» ճառերը «ի վայելումն մանկաց Սիռնի ուղղասիրութեանցն դասի» ընդօրինակելու միտքն է հորդորվում²²:

Անդրադառնալով նազիանզացու գիրք-ժողովածուների միջնադարյան Հայաստանում ունեցած դերին, Կ. Տեր-Մկրտչյանը իրավացիորեն նկատում է. «Այս խմբերից ամենայարգին եղել է մեր մէջ «Առ որս» կոչուածը, որ յատկապէս աստուածաբանական բովանդակութիւն ունի, շատ անգամ արտագրուել է և ընտիր ձեռագիրներով պահուել, Գլաձորի, Տաթևի, Սեպուհ լերան և այլ վարդապետարաններում գործ ածուել իբրև ձեռնարկ աստուածաբանական բարձրագոյն ուսման»²³: Այդ նույնը վերաբերում է և մյուս գրքերին:

²⁰ «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 31: Համարնույթ հիշատակարաններ տե՛ս ձեռ. № 60, էջ 156ա, Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Ե, էջ 72—73, հատ. Գ, էջ 129, էջ 610, հատ. է, էջ 160—161: «Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ», Ա, կազմեցին Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան, Երևան, 1974, էջ 230—231:

²¹ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Բ, էջ 190, հմմտ. «Ցուցակ ձեռագրաց նոր Զուղայի ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի», Բ, կազմեց Լ. Գ. Մինասեան, Վիեննա, 1972, էջ 52ա—բ:

²² Ձեռ. № 112, էջ 182ա—բ, ձեռ. № 114, էջ 148բ, ձեռ. № 3495, էջ 141բ, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Գ, էջ 220—221, հմմտ. էջ 53, ձեռ. № 98, էջ 114բ, էջ 271բ, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Յակոբոս Տաշեան, Վիեննա, 1895, էջ 365—366, «Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ», Ա, էջ 668:

²³ «Կնիք հաւատոյ», ս. էջմիածին, 1914, էջ XLVI:

Այս առումով հիշատակելի է «Որք յԾգիպտոսէն են» գիրքը գնահատող հետևյալ վկայությունը. «Ասացեալ երից սրբոց՝ սրբյոն Գրիգորի Աստուածաբանի, Մեծին Գրիգորի Մագիստրոսի և երանելոյն Գրիգորի Վահրամայ վկայասիրի, առ որս գտանին բանք պիտանիք և օգտակարք, վարժապետութիւնք աստուածաբանականք և հոետորութիւնք փիլիսոփայականք և ուղիղ դաւանութիւնք քրիստոնէականք, օգտաւէտ և պիտանացու ի զարգացումն ուսումնատենչ անձանց և մանաւանդ մանկանց Սիօնի մօրս մեր Հայաստանեայց»²⁴: Այս բնույթի գնահատություն, ինչպես տեսանք, ունենք «Առ որս» ճառաշարքի առիթով ևս:

«Քրիստոս ծնեալ» գիրք-ժողովածուն գնահատելիս միջնադարյան գրիչը մասնավորապես նկատել է. «Ի գիր արձանացուցին ի յիշատակ յետագայիցն, յորոց ոմանք առ փրկութեան հոգւոց վերաբերին և ոմանք զառս կամ զկիրս սրբոց ոմանց և կամ այլոց պատմաբանեն, յորս ի ձեռն ընթերցանութեան իբր աշօք նկատեալ ի խոկումն նոցին դեգերիցիմք»²⁵:

Կան հիշատակագրության օրինակներ, որոնցում առկա գնահատությունը չի մասնավորեցվում այս կամ այն շարքի համար, այլ պարզապես վերաբերվում է Նազիանզացու գրքերին առհասարակ: Այսպես՝ «Արդ թէպէտ ի հանդիպիլն մեր ուրեք ուրեք ընթեռնուաք զգիրքս Աստուածաբանիս Գրիգորի և էկլեսիաստիկոս բեղօրի և կաթողիկեայց վարդապետի և եպիսկոպոսապետի Կոստանդնուպօլսի ի պատճառէ յիշատակարանիս եղաք և զմերս հետևումնս դաւանութեան ընդ նմին, զի իբրև զլոյս յաշտանակի ծանուցի սիրելեացդ...»²⁶:

Եթե մեզանում իսպառ բացակային Գրիգոր Նազիանզացու գիրք-ժողովածուների գնահատություն հանդիսացող հիշատակարան-հիշատակագրությունները, ապա միևնույն է, ընդօրինակությունների առատությունն ինքնին լավագույն ապացույցն է հայկական միջավայրում դրանց հարկավորության մասին: Արդ՝ փորձենք գնահատել Նազիանզացու գրքերն ըստ մատենագիտական առաջադրված հաջորդականություն²⁷:

²⁴ Ձեռ. № 6988, էջ 1ա: Գնահատությունս հավասարապես վերաբերում է Գրիգոր Մագիստրոսի տաղերին (էջ 151ա—193բ), ներբողներին (էջ 193բ—200ա), թղթերին (էջ 200ա—216ա), իմաստասիրական գործերին (էջ 216բ—218ա), ինչպես նաև վկայասերի գրական վաստակին:

²⁵ Ձեռ. № 7943, էջ 264:

²⁶ Ձեռ. № 114, էջ 151ա:

²⁷ Նազիանզացու ճառերը համապատասխան գիրք-ժողովածուներում հավանաբար ունեին կայուն, մասնագիտական շրջաններում ընդունված հաջորդականություն, որովհետև

Քրիստոսի հայտնությանն անդրադարձել են Սեբերիանոսը²⁸, Եփրեմը²⁹, Բարսեղը³⁰ և այլք: Նազիանզացու «Քրիստոս ծնեալ» ճառը ունի իր նախապատմություն-պատճառաբանումը՝ «Ասացեալ... հրամանաւ թագաւորին, զի բազում հերձուածս խօսէին ի Քրիստոսի...»³¹: Հիմնավորելու սույն եղանակը բնորոշ է առհասարակ շարքի համար:

Նազիանզացու հարցադրում-լուծումների թե՛ բնույթը և թե՛ շրջանակներն ամենևին նույնական չեն եկեղեցու այլ նշանավոր հայր-մատենագիրների արժարժումների հետ: Ավելին, այստեղ է, որ Բարսեղ Կեսարացու վարքագրի՝ Գրիգոր Նազիանզացուն տված «աստուածաբանութեամբն ճոխանայր»³² բնորոշումը դառնում է լիովին արդարացի:

Շարքում շոշափվող բազմադան խնդիրների թվում կենտրոնական տեղ է հատկացվում մարդ-աստված փոխհարաբերության գնահատմանը: Նազիանզացին փորձում է գերզգուշությամբ վարել «բանակցությունները» աստժո հետ, նրա ուշադրությանն արժանացնել երկրային արարածների, մասնավորապես մարդու հոգսերն ու հետաքրքրությունները, թերություններն ու առավելությունները, հրաշք բնության կատարելություններն ու թերի կողմերը և հարակից հարցեր: Ինչպես և սպասելի էր, զրույցի հեղինակը որքան էլ դիմում է «բանակցության» մեղմ ու ընտրովի եղանակի, այդուհանդերձ՝ աստժո անտեսանելի, անմերձենալի լինելու գաղափարը միջնադարի մտածողին գրեթե հանդիստ չի տալիս, ուստի և հասկանալի է հեղինակի բացատրությունն այդ առթիվ. «Լոյս մի անմերձենալի և անփոխանորդելի աստուած, ոչ սկսեալ և ոչ դադարեալ, ոչ շափեալ մշտապայծառ, երեքապայծառ...»³³: Այնուամենայնիվ Նազիանզացին ձգտում է ազատ զգալ կաշկանդող նախապաշարումից և խոսակցության միջոցին աշխատում է շթաքցնել «համատեղ գործելու» իր իսկ ձգտումը. «Ընկալ ի քեզ զբարին, որ յերեսին է

մեկնությունների գրչագրերում, ինչպես նաև «Գիրք պատճառացում» (ձեռ. № 1879, էջ 192բ) դրանք հաճախ հղվում են առանց համապատասխան խորագրի, այլ պարզապես ըստ հաջորդականության ցուցիչի:

²⁸ Ձեռ. № 993, էջ 5ա—6բ:

²⁹ Ձեռ. № 1524, էջ 54բ—56ա:

³⁰ Ձեռ. № 996, էջ 61բ—68բ, հմմտ. ձեռ. № 993, էջ 24բ—25ա:

³¹ Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Ա, էջ 430, հմմտ. «ընդդէմ ամենայն հերձուածողացն խօսեցաւ զՔրիստոս ծնեալն» (Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 755), հմմտ. «Զայս ճառս ասացեալ է ի ծերության իւրում, ի հաւաքման աստուածապահ ժողովոյն Կոստանդնուպօլսի ՃԾ հայրապետաց՝ ընդդէմ հոգեմարտիցն» (ձեռ. № 3937, էջ 60ա):

³² Ձեռ. № 948, էջ 147բ:

³³ Ձեռ. № 7943, էջ 117 (այսուհետև սույն գրչագրից կատարվող հղումները վկայակոչելու ենք բուն տեքստում):

միաւորութիւնն, առ իս զկռիւն առաքեա, ներեա ինձ նաւակառոյց լինել
և դու վարեցցիս նաւան, և եթէ այլ ոք նաւակառոյց է զիս առ իմով
ճարտարապետութեամբս և դու աստ բնակեա զգուշութեամբ և թէպէտ
ոչ ինչ տաժանեցար, ոչ ինչ նուազ բարւոքն նաւեսցես կամ բնակեցես
ի տան իմ զայնոսիկ պատրաստեալ» (էջ 84—85):

Նազիանզացիին մտավախությունն ունի, թե մարդիկ կարող են տիրոջ
նկատմամբ պատշաճ զգուշավորություն շունենալ և բնատուր միա-
մըտութեամբ աստվածությունը քննելու հանցավորություն ցուցաբերել. «Ես
երկնչիմ յարարածոցն, զի մի զաստուած կորուսից թշնամանօք և շարա-
շար հատմամբն կամ զորդի հատանելով ի հօրէ և կամ յորդույ զբնու-
թիւն հոգւոյն քանզի հրաշափառագոյն. զի ոչ արարած ի վերայ բերեալ
լինի միայն աստուծոյ յայնցանէ, որք շարաշար զաստուածութիւնն կըշ-
ռեն» (էջ 83): Եվ առհասարակ բյուզանդական մատենագրի համար ա-
մենեկն հասկանալի չէ մարդուն տեսնել շարությունը սատարելիս և
բարին անգոսնելիս, անմարդկային ու տմարդի գործունեությունը փա-
ռաբանելիս: Ուստի և Նազիանզացու հավաստիացմամբ՝ գերադասելի է
լույս աշխարհ չգալ, քան ապրել իր կոշումը շարդարացնելով: Նա գրում
է. «Ես վարկանիմ շարութեանն զայր այնպիսի, որ յոլովից անուանիցի
մանկանց հայր առանց հեզութեան կեցեալ ժամանակ երկայն ոչ ելից
բարութեամբ զանձն իւր... և լաւագոյն վարկանիմ զտարածամ յորո-
վայնէ մօր ի բաց անկեալ սաղմնն քան զնա...» (էջ 155):

Չարագործությունը առավել դատապարտելի է այն իմաստով, որ
վնասում, խաթարում է մարդկային ազնիվ փոխհարաբերությունները:
Երևույթը ինքնին մերժելի դիտելով, Նազիանզացիին գրում է. «Բայց մեծ
թշուառութիւն է մարդոյ շար գործել և ամայութիւն ի վերստին ստացօ-
ղէն, զի որք կենակիցք են և զբարեգործութիւնսն իւրեանց կրկնապա-
տիկս առնեն և զանախորշելի իրացն՝ զմրրիկս մխիթարեն» (էջ 152):

Շարունակելով իր դիտողություն-խորհրդածությունները մարդկային
փոխհարաբերությունների այլևայլ կողմերի շուրջ՝ Նազիանզացիին շարը
կանխելու, վերջինից խուսափելու եղանակ է դիտում նաև խելամիտ հա-
րաբերութեանն հետամուտ լինելու միջոցը, թշնամուն խորհրդակից շըն-
դունելու փորձված եղանակը: Խոսքն ուղղելով բանական արարածին,
Նազիանզացիին գրում է. «Բայց դու, ո՛վ մարդդ աստուծոյ, ծանիր զդա-
ւաճանութիւն հակառակամարտին, քանզի առ որ ունին և յաղագս մե-
ծամեծաց է կռիւս, մի առցես խորհրդակից զթշնամին, մի արհամար-
հեսցես լսել և լինել հաւատացեալ» (էջ 54): Առանձին դեպքերում, հա-
վանաբար այլ ելք չգտնելով, գուցե նաև շրջապատի փոխհարաբերու-
թյուններում առկա վատից խուսափելու ցանկութեամբ, Նազիանզացիին

հետացումի, մեկուսացման խորհուրդ է առաջադրում. «Եթէ կարողութիւն է, փախիր և ի հրապարակէն՝ հանդերձ բարի ճանապարհակցաւ, թեաւ արժուոյ քեզ ինքեան դիցես կամ աղանոյ, զի ընտանեգոյնս ասացից՝ զինչ կայ քո և կայսեր և կամ որք կայսեր են, մինչև դադարեսցես՝ ուր ոչ գոն մեղք և ոչ սևութիւնք» (էջ 56):

Արդարացի շէր լինի նազիանզացու առանձնանալու միտումը պայմանավորել սոսկ շրջապատի սևությամբ: Իրողությունն այն է, որ IV դարի մատենագրի համար շոշափելի տրամադրություն ստեղծող արգահատելի երևույթներից առավել (լինեն դրանք հասարակական, սոցիալական բնույթի) մարդը ինքնաբերաբար, երկրային առօրյա փոխհարաբերությունների միջոցին մեղքերի անսահման պաշար է կուտակում, ուստի և սխալական մարմնից ու մեղքերից ազատվելու ցանկությունն է պայմանավորում-տնօրինում համապատասխան հոգեվիճակ: Ահա թե ինչունման տրամադրության պարագայում նազիանզացին կոչ է անում «Փախչիմք ի տխրական և ի հալածիչ մեղացն և ի փարաւովնէ՝ յաներևոյթ բռնաւորէն և ի դառն գործավարացն... ի կաւոյն և ի յաղիւսոյ ազատիմք ի վրիպօղ և ի սխալական մարմնոյս այսորիկ բռնութենէ» (էջ 101):

«Քրիստոս ծնեալ» գրքում հեղինակը մեծ կարևորություն է տալիւմարդ-բնություն փոխհարաբերության բացահայտմանը, բնության ընձեռած հնարավորություններից մարդու օգտվելու կարողությանը: Այդ իսկ նպատակով, Բ. Կեսարացու նմանությամբ, նազիանզացին ևս ի ցույց է դնում մեղուների աշխատասիրության օրինակը: Ահա մի դրվագ «Խաւսք ի նոր կիրակէն» ճառի համապատասխան նկարագրությունից. «Այժմ գործասէր մեղու զթևսն արձակէ և ի մեղուոցացն ի բաց ելանէ, զիւր զիմաստութիւնն ցուցանէ, ի մարգսն թռչի և կապտէ պտուղ և ոմն աշխատի՝ առնելով ի մաղսն զվեց անկիւնիսն և զընդդիմադրեալ բջիջսն անկանելով և զուղղաձիգսն յանկեանցն որոշելով գործ միանգամայն զեղեցկութեանն և զգուշութեանն: Իսկ ոմն զմեղրն յամբարանոցն ամբարէ և մշակէ հիացելումն պտուղ քաղցր և անարօր...» (էջ 125):

Աշխատանքի դրվատումը, աշխատասիրության փառաբանումը նազիանզացին անմիջականորեն կապում է բնության հետ, վերջինիս զարթոնքը դիտում կյանքի և, առհասարակ, բուսականդանական աշխարհի հարատեւման հիմնական պայման. «Այժմ ծիծաղի ամենայն կենդանեաց ազգ և ամենայն զգայութեամբքս խրախճանամք այժմ. բարձրավիզ ձի և խըրոխտ ի տունսն դժուարի և կապն հարս: Թահարելով խայտայ ի դաշտս, և գետս գեղեցկանայ: Եւ զինչ այլքն այժմ վկայք յարագին և առաքին»

և կոչեն պայծառագնացիւք ի միասին զժողովուրդս քրիստոսասէրս...» (էջ 125):

Քննվող գրքում հեղինակի դատողություն-բացատրությունների ըզգալի մասը կառուցված է բարոյախրատական արժարժումների հենքի վրա: Նազիանզացին համապատասխան օրինակներով դատապարտում է արատավոր այս կամ այն երևույթը, ըստ անհրաժեշտության ի ցույց հանում դրա վնասաբեր բոլոր հետևանքները: Այս և նման եղանակով նա մերժում է մախանքը, բարկությունը, պճնամոլությունը, ընչեղության մոլուցքը, գինարբուքի հակումը և այլն: Խիստ է հարբեցողությունը դատապարտելու նպատակով նախընտրած համեմատության միջոցը. «Ընտրելի է սգալն՝ քան զարբենալն և մերձ լինել ի սգաւորսն՝ քան յարբեալսն և այսպէս կարողութիւն առնուլ զկենացս վախճան՝ ոչ զարհուրելով յայնցանէ, որ շուրջ զնովան են...» (էջ 156):

IV դարի եկեղեցական գործիչ-մտածողի մտահոգությունն ունի այլ կողմ ևս՝ փոխհարաբերությունների անսովոր ազատությունը նպաստավոր պայմաններ կարող է ստեղծել աշխարհիկ հետաքրքրությունների համար, մինչդեռ «...յոյժ աղօթելի է զսաստել միոյ իմաստնոյ ընդունել, քան ընդ ամենայն պարս վատթար մարդկանն և անառակ երգոցն լինել յսօղ, քանզի ընդունայնացեալ մարդկան ծաղր փշոց յոլովից սաստկապէս հրով այրեցելոց հնչմանն նմանեցաւ» (էջ 156):

«Քրիստոս ծնեալ» գրքում արժարժված խնդիրները բաղմաթիվ են ու այլազան: Դրանց քննությունը ներկա դեպքում դուրս է մեր բուն նպատակից: Այնուամենայնիվ, մի քանի խոսք սոցիալական, դասային հարաբերությունների որոշ մանրամասներ ի ցույց հանող Նազիանզացու նկատառումների մասին: Ամենից ակնհայտը, ինչպես նկատում է նա, սոցիալական երկու հակադիր վիճակների կողք-կողքի գոյության փաստն է: Մի դեպքում շվայտությունը, պճնանքը և արժաթասիրությունը սահման չեն ճանաչում. «Զի՞նչ առ այսոսիկ ասասցուք, որք ոչ ինչ վախճան գիտէք ստանալոյն, որք երկիր պագանէք ոսկոյն և արժաթոյ՝ որպէս Բահաղուն յայնժամ և Աստարտայ և Քարմովսայ՝՝ գարշելոյ, որք շուրջ փարեք զբաղմապատիկ քարամբքն և զկակուշ և զփաղփեալ պատմուճանօքն զցեցոյն ծախովք և աւազակաց բռնաւորաց և գողոց գանձարանօքն, որք յոլովութեամբ յոխորտիք ստրկաց և շորեքոտանեաց, որք դաշտօք ընդարձակէիք և լերամբք, զոմանս ունիք և զկէսսն առնուք և զայլսն հանդերձեալ էք...» (էջ 187): Մյուս կողմից, «Յաղագս աղքա-

* Իսհաղուն, Աստարտ, Քարմովս աստվածաշնչական անունների մասին համապատասխանաբար տե՛ս «Բառարան սուրբ գրոց», Կոստանդնուպոլիս, 1881, էջ 83—84, 54, 574—575:

տասիրութեան» ճառում նազիանզացին պատկերում է թշվառության մեջ խարխափող մարդկանց. «Եւ նորա թաւալին առ ոտս մարդկանն՝ յարևու և ի փոշւոջ: է երբէք և ի սառամանիս վայրագս և յանձրես և ի մրրիկս հողմոց թշուառացեալք այնքան ոչ կոխան լիեալք, ցորքան և մերձենալն ի նոսա դարշիմք»³⁴: Հակադիր պատկերների համեմատության եղանակով նազիանզացին փորձում է վեր հանել շրջապատող իրականության ընդհանուր նկարագիրը. «Այլ ոմանք արտաքոյ յարկաց թշուառանայցեն, իսկ մեք բնակիցեմք ի տունս պայծառ քարամբք ամենապատկաւք ծաղկեալս, ոսկւով և արծաթով փայլեալս և մանր յախճապակովք եղեալս և ազգի ազգի նկարագրութեամբք աչաց խաբեբայ պատրանաւքն»³⁵: Այլուր ևս նազիանզացին դիմում է համեմատության նույն միջոցին՝ «նորա այսպէս, իսկ մեք բազմեալք կամք պայծառք պայծառապէս ի վերայ բարձի բազմականի...»³⁶:

IV դարի եկեղեցական գործիչ-մատենագրին վրդովեցնողը ոչ այնքան ճոխ կենցաղավարությունն է, որքան դրանով պայմանավորված բարբերի անպարկեշտացումը, մարդկանց՝ միմյանց նկատմամբ ունեցած անտարբերության մեծացումը, ուստի և հասկանալի պիտի լինի նազիանզացու պատվիրանն այն մասին, թե՛ «Ճոխացիր մի ընչիւքն միայն, այլ և բարեպաշտութեամբ, մի ոսկւովն յատուկ, այլ և առաքինութեամբ օթեան լեր ընկերին պատուականագոյն և յերեւելն քաղցրագոյն, լեր թշուառացելումն աստուած ողորմութեանն աստուծոյ նմանելով...»³⁷: Այսօրինակ խրատ-խորհուրդը միայն մարդասիրական դրդումով չէր արտաբերվում եկեղեցու ունկնդիրների շրջանակներում, այլ միաժամանակ նպատակ ունեւր նպաստելու քրիստոնեության հաստատման պայքարին: Այդ առումով ավելի ազդու և համոզկեն միջոց էր ժամանակակից եկեղեցու նշանավոր հայրերի (կենդանի և հանգուցյալ) կյանքի ու գործունեության ուսանելի դրվագների վերապատմումըն ունկնդիրներին: Ճիշտ նույն նպատակադիր գործունեության թելադրանքով է առաջացել այդ ժանրի լավագույն գիրքը՝ «Յաղթեցայ» ժողովածուն³⁸:

Ուշագրավ է իր իսկ՝ նազիանզացու. կարծիքը խրատելու, բարին

34 Ձեռ. № 2600, էջ 193ա:

35 Նույն տեղում, էջ 195ա:

36 Նույն տեղում, էջ 195բ:

37 Նույն տեղում, էջ 207ա:

38 Սույն գրքի օրինակը ցույց է տալիս, որ նազիանզացին ընտրում է այնպիսի անձանց, որոնց կյանքի ու գործունեության մանրամասները ուսանելի շատ դրվագներ ունենին:

ուսուցանելու այս միջոցի մասին. «Եւ միանգամայն զբազումս ի նախանձ և ի նմանութիւնն նորին առաքինութեանն խրատեսցուք, վասն զի այս մեզ յամենայն բան և ի գործ փութացեալ լինի հաստատել, զորս հաւատացաքն»³⁹: Եթե դասդասելու լինենք «Յաղթեցայ» գրքում բարձրացված խնդիրները, ապա, առանց երկմտանքի կարելի է պնդել, որ հեղինակին ամենից շատ անհանգստացնողը կյանքի և մահվան հավիտենական առեղծվածն է: Եվ դա հասկանալի է նաև այն իմաստով, որ խորհրդածութեան առիթ է ներկայանում մահվան անխուսափելիութեան շուրջ: Բնականաբար վերհիշվում է ավարտված (կամ ընդհատված) կյանքն իր բոլոր կողմերով, և այդ նույն միջոցին կատարված խորհրդածութեանն ինքնին ողբերգական է. «Այսպիսի են կեանքս մեր, եղբա՛րք, կենդանեացս ժամանակեայք, այսպիսի ի վերայ երկրի խաղք, ոչ եղեալք լինել եւ լեալք անդէն լուծանել: Երազ եմք ոչ կայուն, երեւումն իմն ոչ ըմբռնելի, թռիչք հաւու անցելոյ, նաև ի վերայ ծովու հետս ոչ ունելով, փոշի, գոլոշի, առաւատնեայ ցաւդ, ծաղիկ ի ժամանակի բուսեալ եւ ի ժամանակի խամրեալ: Մարդոյ իրրեւ զխոտ աւուրք իւր, եւ իբրեւ զծաղիկ ի վայրի այնպէս ծաղկեսցի...» (էջ 21բ—22ա): Թվում է, կյանքի անցավորութեան սույն դրվագը որևէ մեկնաբանութեան անհրաժեշտութեան չի զգում:

Ըստ Նազիանզացու, առավել ողբերգականը ոչ այնքան մահվան փաստն է, այլ ապրելու միջոցին սուտ պատրանքներով հրապուրվելը. «Եւ զի՞նչ ի վերա ամենեցուն այսոցիկ՝ ունայնութիւն ունյանութեանց» (էջ 22ա): Նման խորհրդածութեան միջոցին, թվում է, Նազիանզացին հաշտութեան միջոց է տեսնում այլևս չգոյատևելու, չլինելու տխուր փաստի մեջ, ուստի և Կեսարիոսին նվիրված դամբանական ճառում նույնիսկ պարտադրում է. «Արդ մի սգասցուք զԿեսարիոս, յորպիսեաց ի բաց վճարեցաւ շարեացս գիտելով...» (էջ 22բ):

Սակայն աներկբայելի թվացող սույն խորհրդածութեանն ինքնին ալեկոծում է հեղինակի ներաշխարհը, ստիպում նրան դրամատիկ զգացողութեամբ անդրադառնալ անձի փրկութեան գաղափարին, թեև Նազիանզացու մեկնաբանութեամբ՝ անհանգստացնողը ոչ թե անձի կորուստն է, այլ աստծո արարչագործութեան նկատմամբ անփույթ վերաբերմունքի դրսևորումը: Ահա այսպիսին է հեղինակի բացատրութեանը. «...բայց յայնմանէ ոչ երկնչիմ մի գուցէ մարմինս ինձ այս ցնդեալ և

³⁹ Ձեռ. № 4234, էջ 26բ: Մոտավոր նմանութեամբ նույն պատճառաբանումն է ընդունում նաև Գրիգոր Աբասյանը. «Սովորութիւն էր սրբոց վարդապետացն զշարսն արձանացուցանել բանիւք, զի մի այլք այնպէս լինիցին, նոյնպէս և զսուրբսն, զի այլք նախանձաւորք լիցին նոցին գործոցն» (ձեռ. № 1879, էջ 208ա):

ապականեալ ամենևին կորիցէ, մի գուցէ աստուծոյ ստեղծուած փառաւորս, վասն զի փառաւոր է ուղղելովն, որպէս անպատուի ի մեղանշելովն, յորում բան, օրէնք, յոյս զնոյն ընդ անբանսն անարդութեամբ դատապարտեսցի...» (էջ 24բ)։ Այս նույն միտքը հեղինակին մտահոգում է շարքի յուրաքանչյուր ճառի առիթով և առհասարակ։

«Յաղթեցայ» գրքում որքան էլ ընդհանուր են կերպավորման միջոցները, սակայն ներկայացվող անձինք ոչ միայն նույնը չեն գեղարվեստական նկարագրի առումով, այլև նման չեն։ Եվ դա հասկանալի է, որովհետև գործ ունենք բոլորովին տարբեր անհատականությունների, յուրաքանչյուր դեպքում իր գործունեության ոլորտն ունեցող և ընդհանրացման իր հնարավորությամբ օժտված անհատների հետ։

Գորգոնիան հեղուսթյան, առաքինության, համակ բարության իրական մարմնացում է նազիանզացու համար։ Նույն տպավորությամբ է համակվում նաև ընթերցողը. «Ո՞ նուազ և աներևոյթ, և անհպելի պահեաց զինքն արանցն դիմաց, ո՞ առաւել գիտաց զչափ տխրութեան և զուարթանալոյ» (էջ 29բ)։ Մարդկանց օգնելու, նեցուկ լինելու անսահման հնարավորություններով է օժտված նազիանզացու հայրը՝ Գրիգորը, ուստի և նազիանզացու գնահատության հիմքը նրա առօրյա գործունեության դրվագներն են. «Գործ ո՛չ լռութեան արժանաւոր, մեծութեամբ առաւել քան զբազումս և գեղեցկութեամբ գրեթէ քան զամենեսեան» (էջ 56բ)։ Գրիգորը նախանձելի հետևությամբ «...զչարութիւն ատեաց կամ զառաքինութիւն պատուեաց ... ո՞ այնպէս թողացուցանէր յանցաւորացըն և կամ ընդ ուղիղ ընթացեալսն ընթացակից եղև» (էջ 46բ)։

Աթանասիոս եպիսկոպոսի կերպարն ընդհանրացնելիս նազիանզացին հիմնականում ծանրանում է քրիստոնեության հաստատության համար նրա մղած պայքարի արդյունավետության վրա։ Բայց քանի որ նա այդ բնագավառի առաջին և վերջին ներկայացուցիչը չէր, բնականաբար, հետևում է նորը պայմանավորող նազիանզացու համեմատություն-գնահատությունը՝ «Իւրով իմաստութեամբ նոր էր, յոյժ սքանչելի» (էջ 9ա)։ Աթանասիոս եպիսկոպոսի նկարագրին հատուկ է այլոց օգնելու, հոգ տանելու, նեցուկ ու ճշմարիտ խորհրդատու լինելու հատկանիշը. «...զկիսոց զհեղգութիւն ընդոստուցանէր և զայլոց զջերմութիւն արգելոյր, ոմանց զի մի գլորիցին կանխաւ հոգ տանէր և կիսոց՝ զի ուղղեսցին գլորեալքն։ Հնարէր պարզ բարուք բազմապատիկ առաջնորդութեամբ իմաստուն բանիւն, իմաստնագոյն ևս մտօքն...» (էջ 11ա—բ)։ Այս նույն չափանիշ-գնահատությունը հատուկ է շարքի բոլոր գործերին, բոլոր կերպարներին՝ ըստ գործունեության ոլորտի և կերպավորման առանձնահատկությունների։

Սակայն որքան էլ շատ լինեն շարքի տարբեր գործերում առկա ընդհանրական կետերը, այդուամենայնիվ, «Ի Բասիլիոս Կեսարացի» գործը վեր է ամեն մի համեմատությունից ոչ միայն «Յաղթեցայ» գրքի շրջանակներում, այլև դամբանական ժանրի գրականության մեջ առհասարակ: Մասնագիտական գրականության մեջ այն համարվել է «лучшее произведение этого рода во всей христианской литературе»⁴⁰:

Ո՞րն է Նազիանզացու հիմնական նպատակը, ի՞նչ խնդիրների է պատասխանում Բարսեղ Կեսարացու գործունեության հրապարակային պաշտպանությունը: IV դարի 80-ական թվականների արևելյան եկեղեցին օր-օրի ենթարկվում էր ահավոր փորձությունների, հարձակումների ու դավանական-գաղափարական ուղղակի ընդհարումների: Չկային եկեղեցու ամենահեղինակավոր ու փառաբանված սյուները՝ Բարսեղ Կեսարացին և Մելիտոս Անտիոքացին, որոնք ճշմարիտ հավատի պաշտպանության ճանապարհին պարտություն չգիտեին անգամ թագավորի պաշտոնակից մերձավորների հետ ընդհարվելիս: Գրիգոր Նազիանզացին ևս վեճերի այդ շրջանում քիչ դառնություններ չկրեց: Սակայն նրա և եկեղեցու մյուս հայրերի պաշտոնավարության հետ կապված դժվարություններն անհամեմատ մեծացան Բարսեղ Կեսարացու և Մելիտոս Անտիոքացու մահվանից հետո: Ուստի և առօրյա անհրաժեշտություն զգացվեց հրապարակային ընթերցանության նյութ դարձնել եկեղեցու նշանավոր հայրերի կյանքի ու գործունեության հիմնական դրվագները: Այս տեսանկյունից պիտի նայել Նազիանզացու «Ի Բասիլիոս Կեսարացի», Գրիգոր Նյուսացու «Ի Մելիտոս Անտիոքացի» դամբանական ճառերին և այդ ժանրի ստեղծագործություններին առհասարակ:

«Դամբանականում» կան դեմքեր, դեպքեր, մեծ ու փոքր իրադարձություններ, գործունեության ոլորտ և գործողության միջավայր, դրական և բացասական կերպարներ, ընդհարումներ և բախումներ, համընդ-

⁴⁰ «Христианское чтение», СПб., 1886, стр. 355—356: «Դամբանականի» գրության ժամանակի մասին կա հիմնականում երկու կարծիք, ա) ընդունվում է, որ այն գրվել է 379 թ., Բարսեղ Կեսարացու մահվան տարին (տե՛ս «Православный собеседник», Казань, 1886, приложение, стр. 26): բ) 381 թ. Կ. Պոլսի ժողովից (որի վճռից դժգոհ մնաց Նազիանզացին) տուն վերադառնալու ճանապարհին (տե՛ս «Прибавление к творениям святых отцов», часть I, Москва, 1843, էջ 66, հմմտ. «Святый Григорий Богослов», сост. Н. Р., СПб., 1895, стр. 23): Ճշմարտամոտ է երկրորդ տեսակետը. հայտնի է, որ Նազիանզացին չի կարողացել ներկա լինել Կեսարացու թաղմանը: Այդ մասին խոսք կա Գրիգոր Նյուսացուն գրած նրա մի թղթում՝ 70(37), հմմտ. «Ոչ ժամանեաց յօր թաղմանն, յետո դա և այսպիսի գեղեցիկ պատուանօք պատուէ զնա արժանի յիշատակի» (ձեռ. № 3937, էջ 68ա, ձեռ. № 621, էջ 255բ):

հանուր նպատակ և մասնավոր խնդիրներ, վեհ գաղափար և առօրյա հոգսեր: Եվ այդ բոլորը ուղղակի թե անուղղակի ճանապարհով կապվում են գործողությունների հիմնական առանցքի՝ Բարսեղ Կեսարացու հետ: Այսպիսին է Կեսարացու նկարագիրը. «Ամենայն ինչ էր ինքեամբ՝ խորհրդակից բարի, առաջամարտիկ յաշողակ, աստուածայնոցն մեկնիչ, գործոց առաջնորդ, ծերութեան ցուպ, հաւատոյն հաստատութիւն, ի ներբուստ հաւատարմագոյն եւ առ արտաքինսն գործականագոյն եւ միով բանիւ՝ այնքան ի բարեպաշտ մտութիւն, որքան ի թշնամութիւն յառաջագոյն կարծիցեալ լինէր» (Դամբ. 17):

Բարսեղ Կեսարացու գործունեութեան ամենատպալուրիչ շրջանը արիոսականութեան դեմ պայքարի հաջող կազմակերպումն էր, որը հանգամանորեն վերապատմում է նազիանզացին: Վերջինս երկխոսութեան երանգով անդրադառնում է այդ պայքարի դրամատիկական ավարտին՝ Մողեստոսի (Վաղես թագավորի ներկայացուցչի) և Բարսեղի գաղափարական վեճին: Արդյունքը լինում է այն, որ թագավորի ներկայացուցիչը ստիպված է լինում խոստովանել. «...յաղթահարեալ եմք, ասէր, ո՛վ թագաւոր, յայսր անուան վերակացուէ եկեղեցոյ» (Դամբ. 58): Թագավորի վերաբերմունքը նույնպես դրական է իր հակառակորդի նկատմամբ՝ «...ստգտանէր թագաւորն եւ գովութեամբք առն յաղթահարեալ սքանչանայր ընդ առնն ընդ արիութիւն» (Դամբ., 58):

Նազիանզացին Կեսարիայի թեմի արքեպիսկոպոսին օժտել է համընդհանուր հեղինակություններին հատուկ բոլոր բարեմասնություններով, ուստի այս դեպքում վերանում են ծանոթ լինելու, ճանաչելու, համոզվելու նպատակով տեսնելու և նմանօրինակ մանրախնդիր պատկերացումները: Այդ առումով ուշագրավ օրինակ է Կեսարացու թաղման նկարագրությունը. «Լի հրապարակք, սրահք՝ կրկնայարկք, եռայարկք, զնա յուղարկողաւքն առաջի երթողաւքն զկնի երթողաւքն շուրջ եղելովքն՝ ի վերայ իրերաց ելողաւքն: Բիւրք յամենայն ազգեաց եւ ի հասակէ ամենայնէ՝ ոչ յառաջագոյն ծանաւթիցն, սաղմոսիւք եւ աւրհնութեամբք՝ ողբովք առաւել յաղթելով եւ զիմաստասիրութիւն ախտիւն քակտելով» (Դամբ. 2Ա):

«Յաղթեցայ» գիրքը հեղինակային հոգեհարազատութեան առումով առանձնանում է նազիանզացու մյուս ժողովածուներից: Պատճառը, հավանաբար, մտերիմների մահվան տխուր փաստի մեջ պիտի փնտրել, որի վավերական փաստագրումն ինքնին ստիպում է հեղինակին խոստովանելու՝ «Ծղբարցն գերեզմանական բանից շտեմարանք եղաք»⁴¹:

⁴¹ Ձեռ. № 4234, էջ 36ա:

Կյանքի ու մահվան առեղծվածի, մարդու և բնության փոխհարաբերության բնափիլիսոփայական խնդիրները որքան էլ հիմնավորապես զբաղեցնեին Գրիգոր Նազիանզացուն, այնուամենայնիվ IV դարի եկեղեցական գործիչ-մատենագրի հետաքրքրություններից չէին կարող խամբեցնել հավատի և արարչագործության հարցերին վերաբերող նրա պատկերացումները: Սպասելի արժարժումները բազմաթիվ են ու այլազան: Դրանք հիմնականում ամփոփված են «Առ որս» ճառաշարքում: Ընդհանուր առմամբ՝ սույն գրքին հատուկ է ունկնդրի աստվածաբանական-դավանական հետաքրքրություններին հիմնականում խրատական բացատրություն տալու, «զբովանդակ գիտութիւն»-ը նրա ուշադրությանը ներկայացնելու միտումը: Ընդարձակ են ու ոչ միօրինակ աստվածապաշտության, հավատը էությամբ ճանաչելու և նրան նվիրվելու («Յաղագս հաւատոյ»), հոր և որդու փոխհարաբերությանը վերաբերող Նազիանզացու բացատրությունները («Յաղագս որդւոյ»):

Հայտնի է, որ Նազիանզացու եկեղեցական գործունեության շրջանում համախոհների որոշակի շրջանակ ձեռք բերեց արիոսականությունը: Բնականաբար, Նազիանզացին չէր կարող անտարբեր մնալ դավանական այդ խոտորման նկատմամբ: Ուստի և նա հատուկ ճառով («Առ Արիանոսս») դատապարտեց այդ ուղղությունը. «Ո՞ւր արդեաւք իցեն, որք զաղքատութիւնն թշնամանեն և զմեծութիւնն հռչակեցուցանեն, որք յոլովութեամբ զեկեղեցին սահմանեն և զսակաւութիւն արհամարհեն, որք զաստուածութիւնն շափեն և զժողովուրդն կշռեն, որք զաւազն պատուեն և զլուսաւորս թշնամանեն, զմարգարիտս քամահեն և զխիղճս գանձեն, քանզի և ոչ գիտեն իսկ եթէ այն, քան զաւազ, քան զաստեղս առատագոյն է և քան զքարինս՝ պայծառս խիճք»⁴²:

Արիոսականության էությունը մերկացնելու նպատակով Նազիանզացին կիրառում է բոլոր հնարավոր միջոցները, ինչպես նաև դիմում է իր դավանության առավելությունները հաստատելու եղանակին:

Արիոսականությունից ոչ պակաս թշնամական դիրքորոշում ունեւր «ապողինարությունը»: Նազիանզացին «Առ Կղեդոնիոս» առաջին թղթով ուղղակի սահմանում է Ապողինարի պաշտպանած տեսության բնույթը. «...զայն գիտել հարկաւոր է, զի Ապողինարոս զաստուածութեանն անուն սրբոյ հոգւոյն ետ և զզաւրութիւն աստուածութեանն ոչ պահեաց, քանզի ի մեծէ և յաւագէ և ի մեծագունէ ի միասին հաստատեալս ասէ զերրորդութիւն՝ որպէս ի լուսոյ և ի ճառագայթից և յարեգականէ...» (էջ 102ա):

⁴² Չեռ. № 60, էջ 88ա:

Առկա դավանական վնասաբեր վեճերն ու անհամաձայնությունները դատապարտելիս Նազիանզացին խնդիր առ խնդիր մատնացույց է անում ճշմարիտ հավատին հավատարիմ մնալու իրական ուղին. «Մի ընդ դառն գոռոզին. նա մարդասպան է ի սկզբանն, նա և զառաջին մարդն անհնազանդութեամբն վիրաւորեաց և զտաժանելի կեանս ի ներքս էած...» (էջ 111ա): Բարեգործության ուղին, ըստ Նազիանզացու («Յաղագս բարեկարգութեան...»), դատարկությունը թշնամանելու և «բանիւք ճշմարտութեան խրատելու» ճանապարհով է հասանելի, այլապես «...դինչ վատթարագոյն և վնասակար, քան զերկպառակութիւն» (էջ 113ա—բ)⁴³:

«Առ որս» ճառերում առկա հոգևոր արժարժումները, ինչպես և սպասելի էր, հաճախ ուղեկցվում են առօրյա փոխհարաբերություններին վերաբերող օգտակար խոհախրատական ցուցումներով: Դրանցում հեղինակը ձգտում է աստժո արարած մարդուն տեսնել եթե ոչ անթերի, ապա դոնև հանապաղօրյա վրիպումներից զերծ, ուստի և կոչ է անում՝ «...որքան ինչ է վնասակար ի բաց փախիցուք՝ միոյն ի դանդաղանացն և ի միւսոյն ի յանդռնութենէն, զի մի պակասութեամբն իցեմք անսլտուղք և մի առաւելութեամբն վտանգեալք» (էջ 115բ):

Քննվող շարքում կան ճառեր էլ (նկատի ունենք «խաղաղական» կոչված երեք ճառերը), որոնցում փառաբանվում են շրջապատող իրականությունը, բնությունն ու բնական փոխհարաբերությունները, աշխատանքն ու աշխատանքի մարդիկ: Բնականաբար նկարագրությունների այդ ճանապարհին դատապարտվում-մերժվում են խստասրտությունն ու նանրությունը և այն ամենը, ինչը չի նպաստում բարերար աշխատանքին. «Մարդիկ մինչև յե՞րբ էք խստասիրտք, ընդէ՞ր սիրէք զնանրութիւն և խնդրէք զստութիւն» (էջ 143ա): Նազիանզացին քննության միջոցին աշխատում է հետամուտ լինել նաև մերժելի երևույթների (ստասացություն, ատելություն, պատերազմ և այլն) բուն պատճառին և առաջադրում է հետևյալ բացատրությունը. «Յաղագս ճշմարտութեանն միմեանց ստեցաք, վասն սիրոյն յատելութեան կրթեցաք և վասն գլխոյն անկեանն քակտեցաք, յաղագս վիմին սասանեցաք... յաղագս խաղաղութեան պատերազմեցաք...» (էջ 130բ): Բոլոր պարագաներում, արդարացման հնարավորու-

⁴³ Նազիանզացու գործունեության շրջանում դատապարտելին հիրավի այնքան շատ էր, որ քննվող գրքի հայկական միջնադարյան մի գնահատության առիթով արձանագրվել է՝ «Զորս և ողբայ Գրիգորս Աստուածաբան՝ զհինն ընդ իւրով ժամանակի գտեալք ստամբակ գոռոզացեալք նմանեցեալք օդոյ ի լի և քահանայապետիցն և դպրացն և փարիսեցւոցն Արիոսի, Մակեդոնի և Նեստորի և նմանեաց նոցին...» (ձեռ. № 114, էջ 151ա):

թյունից ամենևին անկախ՝ Նազիանզացին փառաբանում է մարդկային անքեն փոխհարաբերությունները, անխարդախ բարեկամությունը, ուստի և առաջադրվող այս կամ այն հարցումը ամենևին էլ պատասխան ակընկալող հարց չէ, այլ ուսանելին մերժելիից զանազանելու համապատասխան եղանակ. «Ընդէ՞ր զայսոսիկ ախտանամք, ով այդպիսիքդ, և մինչև ցյո՞ր ժամ և ե՞րբ յարբեցութենէս թափիցիմք և կամ յաշաց բիժն ի բաց բարձցուք և առ ճշմարտութեանն լոյսն հայեսցուք. ո՞ր խաւար է այս, որպիսի՞ գիշերամտութիւն, զի՞նչ ակէկոծութիւն զբարեկամաց և զպատերազմողաց զգէմս ոչ որոշելով ընդէ՞ր եղեաք թշնամանք դրացեց մերոց» (էջ 150բ):

«Առ որս» գրքում քիչ չեն բնության կատարելությանը, բուսական-դանական աշխարհի բազմազանությանը, բնական գործոնների օրինաշափությանը վերաբերող նոր ու ինքնատիպ բացատրությունները, որոնց մասնավոր թվարկումն իսկ հեռուն կտաներ: Սակայն նման պարագաներում որքան էլ հեղինակի նպատակադրումը հրաշք արարչագործության մեծարումը լինի, այնուամենայնիվ բնաշխարհի բարեբանումն ինքնին ուշադրության արժանի իրողություն է:

Նազիանզացու աշխարհայացքի բնորոշման, փիլիսոփայական ըմբռնումների գնահատության առումով ուշագրավ նյութ կա նրա «Ուրբ յԵգիպտոսէն են» գրքում: Նա ընդունում է գոյացության երկու տեսակ՝ «զվերնագոյնն ճանաչեմ զտերութիւնն և զժառայութիւնն»⁴⁴: Այնուհետև, մեկնաբանության միջոցին, զանազանվում են հիմնականը և երկրորդականն իրենց բնորոշ կողմերով՝ «Յայնցանէ մին արարչական է և սկզբնական և անշարժ, իսկ միւսն արարեալ և ընդ ձեռամբ և փոփոխելի... Մին գեր ի վերոյ քան զժամանակ և մին ընդ ժամանակաւ» (էջ 5բ): Սույն բացատրությունից երևում է, որ Նազիանզացին, ինչպես և սպասելի էր, արարչին ժամանակի և տարածության փոխհարաբերությունից դուրս է դիտում, ուստի և համարում է անմերձենալի, անշարժ, անփոփոխելի: Մինչդեռ շրջապատող բնությունը, որ արարչագործության արդյունք է, փոփոխվում է ըստ ժամանակի և տարածության: Սակայն առկա դատապարտելի, անարդար երևույթները բնատուր չեն, ուստի և Նազիանզացին հնարավոր շփոթը կանխելու նպատակով զգուշացնում է՝ «...ոչ զորս առ մեզ զբնութիւնս եհար կամ աղքատութիւնն որոշեաց, այլ զորս բնութիւնն զատոյց» (էջ 5բ):

Բարսեղ Կեսարացու գործունեության շրջանում Գրիգոր Նազիանզացին և Գրիգոր Նյուսացին իրենց պատրաստությամբ ու պատրաստա-

⁴⁴ Ձեռ. № 823, էջ 5բ:

կամությամբ կեսարիայի թեմի արքեպիսկոպոսի համար ամենամերձավոր օգնականի պարտավորություն ունեին: Գրիգոր Նյուսացու նման գործունեության դրվատանք կա «Որք յԵգիպտոսէն են» գրքի շորրորդ ճառում («ի Գրիգորիոս եպիսկոպոսն»): Նազիանզացին շի վկայում նրա հետ առնչվող ինչ-որ դրվագ, համատեղ պայքարի որևէ փաստական կողմ, բայց բուն ճառը ծայրից ծայր նվիրվածության գովք է, բարեկամության գնահատություն: Ահա նրա բնորոշման մի քանի օրինակներ. «Բարեկամ հաւատարիմ՝ դանձ կենդանի, բարեկամ հաւատարիմ՝ առաւել քան զոսկի և զքար պատուական բազում: Բարեկամ հաւատարիմ պարտ է զփակեալ աղբիւր, կնքեալ ըստ ժամանակի բացեալ և ճաշակեալ, բարեկամ հաւատարիմ՝ նաւահանգիստ հանգստեան միանգամայն և իմաստութեամբ դանաղանեալ» (էջ 27բ):

«Ի Մաքսիմոս յիմաստասէր» ճառում, ինչպես և սպասելի էր, նախ փառաբանվում են մարդկային առաքիլների փոխհարաբերությունը, ողջախոհությունը, ժուժկալությունը և հաշտ ու խաղաղ բանականությունը, որոնց դեմ են գործում բոլոր վեճերն ու անհաշտ ձեռնարկումները: Նազիանզացու վրդովմունքն անհամեմատ մեծ է, երբ «...խոռովութիւնն հակառակ եկեղեցւոյ առնէր, մրրիկք շարութեան և լրումն ամբարշտութեան լեզէոնացւոց հակառակ Քրիստոսի լեզուն, որք զշարութիւնն ի բարձունս խաւսէին միտք» (էջ 42բ—43ա): Նազիանզացին առավել վրդովմունքով է խոսում հավատի սպասավորների միջավայրում ծայր առած իրարամերժության դեմ, դրա պատճառ համարելով արիոսականներին. «Քահանայ հակառակ քահանայից զինէին և ժողովուրդ ժողովրդեանս ի վերա մոլէին, թագաւորն ամբարշտութեանն տայր համարձակութիւն և հակառակ ուղղափառութեանն արինադրէր» (էջ 42բ): Հատվածի երկրորդ կեսը ակնարկում է Հուլիանոսին: Քանի որ խոսք եղավ նրա մասին, ապա պիտի նկատել, որ Նազիանզացու ստեղծած բացասական կերպարների շարքում Հուլիանոսը, կարելի է ասել, ամենահաջողվածն է: Գաղտնիքը, հավանաբար, նրա կյանքի ու գործունեության բոլոր դրվագների (ուսումնառությունից մինչև նրա մահը՝ 27 հունիսի 363 թ.) Նազիանզացու լավածանոթ լինելն է: Հակակրանքը Հուլիանոսի նկատմամբ եղել է ի սկզբանէ՝ «...զոր տեսեալ Գրիգոր և մարգարէաբար ասաց Յուլիանոսի՝ ով պատանի, ոչ երևին ի քեզ շնորհք աստուածային»⁴⁵: Հուլիանոսը դահակալության տարիներին (361—363) «Հրամայեաց, զի որդիք քրիստոնէից մի ուսանիցին զհանճարս իմաս-

⁴⁵ Ձեռ. № 84, էջ 253ա, հմմտ. ձեռ. № 621, էջ 55ա, ձեռ. № 3275, էջ 147բ:

տուժեան արտաքին գրոց»⁴⁶: Եվ ահա, այս վճռի դեմ ընդդիմանալու նպատակով «գրեաց սուրբն Գրիգոր ճառս յանդիմանութեան առ Յուլիանոս. եւ եցոյց զարտաքին գիրսն անգէտ բարբանջմունս»⁴⁷:

Հուլիանոսին դատապարտող երկու ճառ ունի Նազիանզացին: Առաջինը (ընդարձակ) ժանրային-ձևական առումով ունի պատմական ողբին հատուկ կողմեր. «Լուարուք զայս ամենայն ազգք, ունկնդիր լերուք ամենեքեան, որ բնակեալ էք յաշխարհի, քանզի կոչեմ զամենեսեան իբրև ի բարձր դիտանոցէ ումեքէ... լուարուք ժողովուրդք, ցեղք, լեզուք, ամենայն ազգք մարդկան և հասակք... լուր երկին. և ունկն դիր երկիր...» (էջ 64բ): Սույն ընդհանուր կանչից հետո մեկ առ մեկ հիշատակվում են բոլոր այն մանրամասները, որոնց հիման վրա ձևավորվում-ամբողջանում է Հուլիանոսի բացասական կերպարը: Նազիանզացին, անհրաժեշտության թելադրանքով, երբեմն դիմում է նաև երկրորդական թվացող փաստական նյութի օգտագործմանը: Եվ պիտի ասել, որ այդ եղանակը էպպես նպաստում է կերպարի գործունեությանը հետևելու և ամբողջության մեջ պատկերացնելու խնդիրներին: Նազիանզացու Հուլիանոսը բոլոր պարագաներում հեթանոսության նույն մոլեռանդ պաշտպանն է. «...զի մեծավայելութիւն նորա ամբարշտութիւն իցէ՝ բռնադատել ժողովուրդ և հարստահարել զաւանդութիւն» (էջ 92բ):

Հուլիանոսի մասին գրված Նազիանզացու երկրորդ ճառը («Առ նոյն բան երկրորդ») գերազանցապես վերաբերում է նրա կայսերական գործունեությանը, որի շրջանում «զամենայն քրիստոնէից ազգ դատապարտեալ դիւացն» եղան (էջ 132բ—133ա): Սակայն արդարացի կլինի նկատել, որ Նազիանզացին թուղթ ունի, որով Հուլիանոսի օգնությունն է հայցում, իսկ դա նշանակում է, թե եղել է հարաբերությունների նաև խաղաղ շրջան, որին Նազիանզացին չի անդրադառնում: Նա ընթերցողին է նեոկայացնում Հուլիանոսի գործունեության տխուր հետևանքները, նրա կյանքի անփառունակ վախճանը՝ նզովքի արժանացնելով գերեզմանն անգամ. «...գերեզման պեղծ և արհամարհելի և ոչ տեսութիւն

⁴⁶ 2. Տաշյան, Ցուցակ..., էջ 73:

⁴⁷ Նույն տեղում: Ֆ. Ֆարարը գտնում է, որ Հուլիանոսին ամբաստանող Նազիանզացու երկու ճառերն էլ գրված պիտի լինեն նրա մահվանից հետո (տե՛ս նշվ. աշխ., էջ 407): Նրա հանդեպ հակակրանքը հայկական միջավայրում այնքան ընդգծված է եղել, որ երբեմն որոշ բնագրերի նրան վերաբերող դրվագները, համապատասխան մշակումից հետո, առանձին բնագրի տեսքով ու նոր խորագրով բաղմացվել են: Այդպես են վարվել Բարսեղ Կեսարացու «Վարքի» Հուլիանոսին ամբաստանող հատվածի հետ. (տե՛ս ձեռ. № 84, էջ 254բ—255բ՝ «Վասն սատակմանն Յուլիանոսի»), Գրիգոր Նազիանզացու «Առ Յուլիանոս ճառի» հետ (տե՛ս ձեռ. № 1138, էջ 351ա—բ՝ «Գրիգոր Աստվածաբանի վասն Յուլիանոսի»):

բարեպաշտաց դիմացն» (էջ 138ա)։ Հուլիանոսի դահակալության տարիներն աչքի առաջ ունենալով՝ Նազիանզացին նրա մահվանից հետո ընկած շրջանն ամփոփելիս նկատում է. «Մի՛ մոռացուք զալէկոծութիւն ի հանդարտութեանս և մի՛ ղհիւանդութիւն ի ժամանակի առողջութեանս...» (էջ 147ա)։

Այսպիսով, սույն քննությամբ փորձեցինք գնահատել Նազիանզացու շորս գիրք-ժողովածոններում արժարժված հիմնական խնդիրները։ Իհարկե այդ ժողովածոներից դուրս մնացած երկերում ևս կան ուշադրության արժանի հաղորդումներ ու դրվագներ, բայց դրանց կանգրահանանք մասնավոր հարցեր արժարժելիս⁴⁸։

⁴⁸ Մյուս գործերը շնորհյալացնելու համար կա նաև այլ պատճառ. գիրք-ժողովածոներից դուրս մնացած ճառերը հարցադրման իմաստով էական նոր բան գրեթե չեն ավելացնում։ Ինչ վերաբերում է շափածո ստեղծագործություններին, ապա դրանց մասին կան մասնագիտական լուրջ ուսումնասիրություններ (տե՛ս А Перфирий, О стихотворениях св. Григория Богослова (տե՛ս «Труды Киевской духовной академии», Киев, 1863, том I, стр. 400—430), А. Говоров, св. Григорий Богослов как христианский поэт (տե՛ս «Правословный собеседник», февраль, Казань, 1886, стр. 3—64, апрель, стр. 65—95, май—август, стр. 118—288, Сентябрь—декабрь, стр. 289—320) և այլն)։ «Նազիանզեան հաւատացելոց Պատարագների» հետ կապված պատմարանասիրական հարցերի քննությունը կատարել է Հ. Գաթրճյանը (տե՛ս նրա «Սրբազան Պատարագամատոյց Հայոց» աշխատությունը, Վիեննա, 1897, էջ 219—275)։

Նազիանզացու թղթերը շունեն այն ընդհանուր արևելագիտական նյութը, որ հատուկ է Բարսեղ Կեսարացու նույն ժանրի գործերին, էլ չենք խոսում Հայաստանին և հայերին վերաբերող տեղեկությունների մասին, որ գրեթե բացակայում են այս դեպքում։ Այդուհանդերձ՝ այդ թղթերում ևս քիչ չեն IV դարի եկեղեցական վեճերին, դավանական խնդիրներին, սոցիալ-տնտեսական հարաբերություններին վերաբերող տեղեկությունները։ Սակայն այդ հաղորդումների էական մասը օգտագործել ենք տարբեր առիթներով, ուստի և հնարավոր կրկնությունից խուսափելու նպատակով առանձին քննությամբ այլևս չանդրադարձանք։

ՆԱԶԻԱՆՁԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ

Ա) «ԴԱՄՐԱՆԱԿԱՆԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ,
«ԴԱՄՐԱՆԱԿԱՆԸ» ԿՈՐՑՈՒՆԻ ԱՂԲՅՈՒՐ

Հայագիտության մեջ առայսօր շունենք Նազիանզացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանություններն արժեքավորող հետազոտություն: Եղած առանձին գնահատությունները կատարվել են հիմնականում հարակից խնդիրների բերումով: Այսպես, նոր հայկազյան բառարանի հեղինակներն իրենց բուն խնդրի հնարավորության սահմաններում երբեմն գնահատել են նաև Նազիանզացու մատենագրական վաստակի հայերեն թարգմանությունները. «Տօնական ճառք և բեմբասացութիւնք Գրիգորի Աստուածաբանի, գրեալք ուրոյն, կամ սփռեալք ի ճառընտիրս, որպէս ի ծնունդ և ի մեկնութիւն տեառն ի պասեքն կամ ի պասքայն, ի նոր կիրակէն, ի Պէնտէկոսէն, ի խաչն, և ի Մակաբայեցիս, և ի Կիպրիանոս, և Յաղագս կարկտի, և Աղքատասիրութեան, որպէս և Մեկնութիւն ի ժողովոյն, գործ առաջին թարգմանչաց՝ քաջ հայկաբան՝ խառն ընդ հելլենախօսութեան»¹: Այս բնութագրությունը փաստորին վերաբերում է նաև «Առ որս» ճառաշարքին. «...է թարգմանութիւն հին՝ կէս մի հայկաբան, և կէս մի հելլենախօս»²: Դատելով առկա վկայություններից, նրանք ձեռքի տակ ունեցել են Նազիանզացու «Առ որս» և «Քրիստոս ծնեալ» գրքերը, ուստի և թարգմանության բնույթ ու ժամանակ մատնացուցող նրանց բնորոշումներից առաջինը վերաբերում է «Քրիստոս ծնեալ» ճառաշարքին, իսկ երկրորդը, ասվեց արդեն, «Առ որս» գրքին:

Գ. Զարբհանալյանը Նազիանզացու ճառերի հայերեն թարգմանության մատենագիտության առիթով նկատում է. «... այլ և այլ ընտիր գրուածոց թարգմանութիւնն ունինք ի նախնեաց, անդստին ի հինգերորդ

¹ ՆՀԲ, Ա, էջ 9:

² Նույն տեղում:

դարէ: Թարգմանիչն հաւանականաբար մին ի կրտսերագոյն թարգմանչաց, և ըստ կարծեաց հմտագունից՝ նա ինքն Մովսէս Խորենացի, որ ի գրուածոց մէջ անոնցմէ յիշատակութիւն, և մերթ նաև իմաստից և հատուածոց փոխառութիւն ալ կրնէ, և ի մասնաւորի յՈղբսն»³: Գ. Զարբհանալյանի ենթադրած թարգմանութեան ժամանակն ու թարգմանիչը վերաբերում են միայն «Դամբանականին», որովհետև նորայր Բյուզանդացու, ինչպես նաև Գրիգոր Խալաթյանցի համապատասխան հրապարակումներից հետո հայագիտութեան մեջ նման կարծիք արմատավորվեց, թեև ոչ պակաս բացորոշ ընդհանուր տեղիներ կան Խորենացու Պատմութեան և «Յաղթեցայ» գրքի ալ ճառերում:

Ը. Տաշյանը Աղեքսանդրի վարուց դասական ուսումնասիրութեան մեջ ունի այսպիսի բնորոշում. «Լեզուի կողմանէ առանձին ուշադրութեան արժանի գործը մըն է Կալիսթենէս: Հինգերորդ դարու վերջին կիսուն այն գրութեանց կարգէն է, որոնք թէև չեն պահած մեսրոպեան նախնական դպրոցին անխառն նկարագիրը, բայց որոնց քով լեզուն իւր կորովը պահած է. ուստի այն գրքերէն՝ որոնց խումբն «արծաթի դարու» անուամբ կը յորջորջենք»⁴: Մեծանուն հետազոտողի այս սահմանումը, միանգամայն ընդունելի է Ակինյանի համար: Ավելին՝ այն նույնութեամբ վկայակոչելուց հետո Ակինյանը գրում է. «...ըստ ամենայնի նոյն արուեստով թարգմանուած են նաև Գրիգոր Աստուածաբանի գրութիւնները. որոնց եթէ թարգմանիչը նոյն չէ Աղեքսանդրի վարուց թարգմանչին հետ, բայց հաւանօրէն ժամանակակից է թարգմանութիւնը: Տեղւոյս չէ մանր քննել այս խնդիրը. բայց կարելոր է խմբաւորել այս եւ նման գրութիւններն եւ մանրախոյզ քննութեամբ ուսումնասիրել զանոնք եւ դասաւորել»⁵:

Ն. Ակինյանը փորձում է պատճառաբանել մի հանգամանք ևս, նա գտնում է, որ հետդասական թարգմանութեանները, նախորդ շրջանի թարգմանութեանների համեմատութեամբ, ալ էին ոչ միայն լեզվական առումով, ալ նաև թարգմանվող նյութի բնույթով. «Ուշադրութիւն կը գրաւէ նաև թարգմանութեանց բովանդակութիւնը. չեն սիրէր զուտ մեկնողական գրուածքներ, ալ աւելի հռետորական-փիլիսոփայական-դաւանարանական ճառեր (Գրիգոր Աստուածաբան). քայլ մը աւելի յառաջ

³ Գ. Զարբհանալյան, Մատենագրան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 346:

⁴ Ը. Տաշեան, Ուսումնասիրութիւնք ստոյն-կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 199—200:

⁵ Ն. Ակինեան, Դասական հայերէնը եւ Վիեննական Միթարեան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 68—69:

երթալով՝ անգամ հեթանոս վէպեր, որպիսի է Աղեքսանդրի վարքը, կը ձեռնարկեն հայացնել»⁶: Հայագետն այս շրջանի թարգմանությունների լեզվական նկարագիրը հետևյալ կերպ է բնութագրում. «Չկան հոս լեզուի այն վայելչութիւնը, վսեմութիւնը եւ թարգմանելու ճարտարութիւնը, որոնք կը փայլէին դասական շրջանի մատենագրութիւններու մէջ»⁷: Հետազոտողը գտնում է, որ Նազիանզացու մատենագրական վաստակը հայերեն թարգմանութեամբ պիտի գոյութիւն ունենար մինչև Փարպեցին, որովհետև «...ինչպէս կերեւայ Ղազար կարդացած է նաեւ Գրիգոր Աստուածաբանի եւ ուրիշ Ս. Հայրերու գրութիւնները հայերէն թարգմանութեամբ. իր թուղթին մէկ տեղիքը այսպէս մտածել կու տայ»⁸:

Ե. Տեր-Մինասյանը «Հայոց հին գրաբար գրականության ծագումն ու ծաղկման շրջանը» քննելիս, բնականաբար, անդրադառնում է մեր մատենագրության սկզբնավորման շրջանում հունարենից և ասորերենից կատարված թարգմանությունների հարցին: Նա գրում է. «...ասորական գրականությունն իր հարստութեամբ ու բազմազանութեամբ ոչ մի կերպ չի կարող համեմատվել հունականի հետ: Եթե հունարենից կարող էին թարգմանվել և իրոք թարգմանվել են Աթանաս Աղեքսանդրացու, Կիւրեղ Երուսաղեմացու, Եվսեբիոս Կեսարացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նազիանզացու (Աստվածաբանի), Հովհան Ոսկեբերանի... և շատ ուրիշների աշխատությունները՝ լինելն նրանք ճառեր, քարոզներ, մեկնաբանություններ, դավանաբանական, փիլիսոփայական գրվածքներ, թե այլ բովանդակություն ունենային,—ի՞նչ կարող էր թարգմանվել ասորերենից»⁹: Ինչ վերաբերում է Նազիանզացու գրական վաստակի հայերեն թարգմանությունների ժամանակին, Ե. Տեր-Մինասյանը նույնպես ընդունում է տարբեր առիթներով կրկնվող V դարը¹⁰:

Արդ՝ հայագետների նմանօրինակ պնդումների համար կա՞ն ըսկրզբնադրյուր վկայություններ: Որքան մեզ հայտնի է, այս առումով վկայակոչվել է միայն Փարպեցու հետևյալ հաղորդումը. «...բայց իմ ըստ կարի պարապեալ յունական ուսմանցն»¹¹, սակայն սույն արտա-

⁶ Ն. Ակիւնյան, նշվ. աշխ., էջ 64:

⁷ Նույն տեղում, էջ 63—64:

⁸ Նույն տեղում, էջ 61:

⁹ Ե. Գ. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 288:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 302: Համարնույթ նկատողություններ կան Մ. Օրմանյանի («Աղգապատում», Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 283), Ն. Պողարյանի («Հայ գրողներ», Երուսաղեմ, 1971, էջ 14—15) և այլոց հետազոտություններում:

¹¹ «Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տիֆլիս, 1904, էջ 192:

հայտնության տակ նազիանզացու հայերեն թարգմանությունները տեսնելու միտքը կարող է վերապահելի դիտվել:

Թարգմանության ժամանակ և թարգմանչի ինքնություն հուշող մեր ունեցած հաղորդումները նույնպես շատ չեն: Ահա դրանցից մեկը. «Երանելին Մովսէս թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ՝ որդւոյ սրբոյն ներսէսի յետ Ճ և Ժ ամի սրբոյն Գրիգորի եղև սկիզբն թարգմանութեան, առաքէ զսուրբն Մաշտոց ի նազիաղ քաղաք և տայ բերել զՍերմնաւրհնէսն, զԿալ և զՀնծան, զոր արարեալ և Աստուածաբանին»¹²: Սահակի և Մաշտոցի թարգմանական գործունեության հետ կապվող սույն դրվագը մեկնաբանության և մասնավորեցման հարկ չունի, որովհետև այդ երախտավորների թարգմանական գործունեության մասին շատ է գրվել:

Մեր տրամադրության տակ եղած մյուս տեղեկանքը հետևյալ կարճառոտ հաղորդումն է. «Քրիստոսի ծնունդն Դավթի թարգմանեալ է...»¹³: Ասվածը հավասարապես կարող է վերաբերել և՛ համանուն գիրք-ժողովածուին ընդհանրապես, և՛ նույն խորագրով ճառին՝ մասնավորապես: Սակայն նախապատվությունը պիտի տալ առաջին ենթադրությանը այն պարզ պատճառով, որ նշված գրքի բոլոր ճառերն առհասարակ նույն նշանակությունն ունենին հայոց եկեղեցու համար: Սակայն փաստական նյութի պակասի հետևանքով դժվար է դատողություն անել Դավթի թարգմանչի անձնավորության ու ժամանակի շուրջ: Մի բան պարզ է, որ խոսքը Դավթի Քոբայրեցուն չի վերաբերում, որովհետև նրանից շատ առաջ նազիանզացու երկերի հայերեն թարգմանություններն արդեն մատենադրական շրջանառության մեջ էին: Դավթի թարգմանիչը, ըստ երևույթին, որոնելի է V—VII դդ. շրջանակներում¹⁴:

Այսպիսով, հայագետների վերոբերյալ դիտողությունները գերազանցապես ենթադրական են, իսկ մատենադրական վկայություններն առանձնապես կարևոր հաղորդումներ չեն բովանդակում: Այդ դեպքում՝ ո՞րն է այն հնարավոր ուղին, որով կարելի կլինի հին թարգմանություն-

¹² Ձեռ. № 3260, էջ 178ր: Պահպանվել են տեղեկությանս մասամբ խմբագրված բազմաթիվ տարբերակներ, տե՛ս Հ. Թօփնյան, Ցուցակ..., էջ 340, Հ. Ոսկյան, Ցուցակ..., էջ 924, Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Գ, էջ 76—77, Թ. Գուշակյան, Ցուցակ..., էջ 69ա—բ:

¹³ Ձեռ. № 598, էջ 7ա:

¹⁴ Կան նաև ուշ շրջանի որոշ տեղեկություններ: Այսպես, օրինակ, նազիանզացու «Պատարագի» թարգմանության մասին մի հիշատակագրության մեջ ասված է. «Նորապէս թարգմանեալ ի Հելլենականէ առ Հայկական բարբառ ի Մխլայիմ զատէ Գէորգ վարդապետէ» (Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Գ, էջ 35):

ների ժամանակին ու բնույթին վերաբերող հարցերում շոշափելի հրատակության հասնել:

Իրողությունն այն է, որ ելքը հուշարձանի բառագանձի, լեզվաոճական ինքնատիպության և առհասարակ քերականական նորմերի, դրանց այլուր եղած զուգահեռների բացահայտումն է: Ընդամին՝ անկարելի է պատկերացնել նման քննություն՝ առանց ձեռագիր ընդօրինակությունների համեմատության ու բնագրի և թարգմանության համադրության: Նազիանզացու որևէ ստեղծագործության առիթով հայագիտության մեջ նման փորձ չի կատարվել: Դրա հիմնական պատճառը, հավանաբար, ոչ միայն թարգմանական բնագրերի հրատարակություն չունենալն է, այլ նաև ձեռագիր ընդօրինակությունների ցրվածությունը: Ուստի և եղած առանձին կռահումներն առաջացել են այս կամ այն թարգմանական մերձավոր հուշարձանի փաստական քննությունից մակաբերվող օրինաչափությունները մասնագիտական հետազոտություններից դուրս մնացած Նազիանզացու գործերի վրա տարածելու ճանապարհով:

«Դամբանականը» V դ. երկրորդ կեսի թարգմանություն է դիտվել հունարանության թելադրանքով, Տաշյանի արտահայտությամբ ասած՝ «...մեսրոպյան նախնական դպրոցին անխառն նկարագիրը»¹⁵ չունենալու պատճառով: Վերևում տեսանք, որ խնդրին որոշ վերապահությամբ է մոտենում Ակինյանը: Ըստ նրա՝ «Կարևոր է խմբաւորել այս (նկատի ունի Աղեքսանդրի վարքը—Կ. Մ.) եւ նման գրութիւններն եւ մանրախոյզ քննութեամբ ուսումնասիրել զանոնք եւ դասաւորել»¹⁶: Այս դիտողությունը վերաբերում է նաև «Դամբանականին», որովհետև Ակինյանը նույն թարգմանությունների թվին է դասում այն:

Եթե ընդհանուր առմամբ բնորոշելու լինենք «Դամբանականի» հայերեն թարգմանությունը, ապա պիտի նկատել, որ այն, բացառությամբ մի երկու դեպքի, բառական թարգմանություն է, չկան իմաստակիր հավելումներ, ինչպես նաև բացթողումներ, հատվածական օտարումներ, թարգմանչի միջամտություններ և այլն:

Սակայն այս թարգմանության հատկորոշ կողմերը միայն թվարկվածները չեն: Նրանում կան հունարենի այս կամ այն բառ-տերմինի, բայական, անվանական կապակցության հայերեն համարժեքը ստեղծելու դեպքեր, հունարենին ընտանի կամ հայերենում տակավին գրական գործածության ոլորտ չգտած բառակապակցությունների գրաբար համապատասխան բառաձևեր կերտելու և հունարենի նմանությամբ

¹⁵ Հ. Տաշյան, նշվ. աշխ., էջ 200:

¹⁶ Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 69:

հաստատելու, երբեմն էլ բնագրի հետևությունները գրադարձելու իրողություններ: Արդ՝ փորձենք խմբավորել քննվող հուշարձանի թարգմանությունն ինքնատիպությունները:

1. Կան բառեր և բառակապակցություններ, որոնք ծանոթ չեն ըսկզբնավորման շրջանի մեր ինքնուրույն մատենագրությանը, հետևաբար նոր հայկազյան բառարանագիրներին: Այդ կարգի բառերից կարելի է մատնացուցել հետևյալ օրինակները՝

ա) «Իմաստակամոլին յԱթենացոցն...» (ԺԵ)— „Σειστομανοῖσιν Ἀθηναίων“ (IE’).

Բառարանագիրները գիտեն իմաստակ բառի մի քանի կիրառություններ՝ իմաստակական, իմաստականություն, իմաստակարծ և այլն (ՆՀԲ, Ա, 847), բայց ոչ իմաստակամոլ: Դատելով համարաբառային գրականության առկա հնարավորություններից, այն առաջին անգամ ներկայանում է սույն կիրառությամբ:

բ) «Խաղժիցն եւ Ելիսինա դաշտացն արժանաւորս արարին հելլենացիքն...» (ԻԴ)— „λειμώνων καὶ Ἑλισίων πεδίων ἡξίωσαν Ἑλληνας“ (ΚΓ’): Սույն խաղժիցն (ուղղ. խաղժ) ընթերցումը, եթե աղավաղման ճանապարհով առաջացած միավոր չէ, ապա, հունարեն λειμών (= մարգագետին, առտավայր)¹⁸ բառի նշանակությունից դատելով, հայերենում ևս նույն իմաստը պետք է ունենա:

գ) «Յուղարկական բանք...» (ԻԵ)— „ἐξιτήριοι λόγοι“ (ΚΔ’): ՆՀԲ-ում վկայակոչված «յուղարկ երթալ կամ լինել» և «յուղարկաւոր» բոլոր օրինակ-հղումներում և ծանոթ բացատրություններում հուշարկավորման արարողության հետ կապված իմաստն է մատնացուցվում, մինչդեռ «Դամբանականի» նշված «յուղարկական բանք» կապակցությունը վերաբերում է Աթենքի համալսարանավարտ սաներին ատենախոսությամբ, այսօրվա տերմինով ասած՝ հրաժեշտի խոսքերով ճանապարհելու արարողություն-սովորույթին: Կապակցությունս նման նշանակությամբ առաջին անգամ է ներկայանում:

դ) «Բարեպարիշտ այրն...» (ՄԵ)— „ἀνὴρ εὐσεβῆς“ (ΝΔ’): Այս բառարարողումը ևս նորույթ է: Կիրառությանս համեմատաբար իմաստամոտ է բարեբար բառի (բարեսիրտ, հանդարտ) բացատրությունը: «Դամ-

¹⁷ Հղումները մասնավորեցնելու նպատակով «Դամբանականի» հայերենը և հունարենը հղում ենք ըստ պարբերությունների: Հայերեն վկայակոչությունները կատարել ենք մեր հրատարակած բնագրից (տե՛ս KB, II, էջ 161—217), իսկ հունարեն համապատասխանությունները ըստ «Migne»-ի հրատարակության (տե՛ս PG, t. 36, էջ 493—606):

¹⁸ „Древнегреческо-русский словарь“, т. I, М., 1958 (այսուհետև՝ DPC).

բանականի» համապատասխան հատվածում բարեպարիշտ բառն ունի արդար, առափինի, աստվածավախ նշանակությունները:

Ե) «Քանզի զոր կորակայրութիւնս եւ զյագեցմունս յանբանագոյնսն ընկեաց»... (ԿԲ)— „Τὰς μὲν γὰρ πλιττισονὰς καὶ τοὺς κόρους τοῖς ἀλογωτέροις ἀπέριψε“ (ΞΛ'): Հնդեւած ընթերցման որևէ այլ կիրառութիւն կամ բառարանային բացատրութիւն չհաջողվեց գտնել: Արտաքուստ թվում է, թե այն մատենագրութեամբ ավանդված կոր և կայրին բառերից ըստեղծված բարդութիւն է: Բայց իրականում «կորակայրութիւն» ընթերցումը հունարենի «πλιττισονή» (= լցում, լիացում, կշտացում, հագեցում, բավականացում)¹⁹ բառի իմաստն ունի հայերենում և հոմանիշ է «յագեցմունս» կիրառութեանը: Այս մեկնաբանութիւնը բնագրային հիմնավորում ևս ունի: Խոսքը Բարսեղի և նրա աշակերտների մենաստանում ստանալիք բովանդակութեանը՝ հագեցվածութեանն է վերաբերում:

զ) «Հստ լծակցութեան եւ հանգստակցութեան...» (ԿԴ)— „κατὰ συζύγιαν τε καὶ συνουσίαν“ (ΞΓ'): Դատելով բառարարդման սույն օրինակից՝ «հանգստակցութիւն», հախապես այն տպավորութիւնն է ըստացվում, թե բարդութեան առաջին բաղադրիչը նույնիմաստ է մատենագրական բաղադրիչ օրինակներով ավանդված հանգիստ բառին, որն ունի նինջ, քուն, նաև՝ շիրիմ, տապան (ՆՀԲ, Բ, 37) նշանակությունները: Մինչդեռ «Դամբանականի» այս կիրառութիւնը հեռու է այդ իմաստը բովանդակելուց: Այն ուղղակի թարգմանութիւնն է հունարեն «σύνουλος»²⁰ (միասին ապրող, բնակվող, բնակակից) բառի:

Ձ. «Դամբանականի» հայերեն թարգմանութեանը բնորոշ է մեկ այլ իրողութիւն ևս. կան դեպքեր, երբ բնագրի այս կամ այն բառը կամ տերմինը թարգմանիչը հայերենի է փոխանցում պարզապես գրադարձման եղանակով: Ունենք այս բնույթի երեք օրինակ՝

ա) «Ոչ կենտաւրոսի ոմամբ ամբարտաւանեցելով նոցին ինքեանց դիցազանցն վարդապետաւ» (ԺԲ). „οὐδὲ τινα Κένταυρον ἀλαζόνα τῶν κατ' αὐτὸν ἰρώων διδάσκαλον“ (IB'): Հայերենում առկա կենտաւրոսի ընթերցումը բացատրութեան երկու հնարավոր եղանակ ունի. այն հունարենի «κενταυρέα» (կապույտ տերեփուկ, նաշտ)²¹ կամ էլ «Κενταύρειος» (մարդաձի) բառի գրադարձումն է: Ճիշտը երկրորդ բացատրութիւնն է: «Դամբանականում» խոսքը Բարսեղ կեսարացու հոր վարդապետական կարողութիւնների գնահատութեանն է վերաբերում, որին աշակերտել են

¹⁹ ДРС, II, 1330.

²⁰ ДРС, II, 1555.

²¹ ДРС, I, 934.

թե՛ կեսարացին և թե՛ նազիանզացին: «Դամբանականի» մեկնությունները որևէ պարզաբանություն չեն տալիս:

բ) «Եւ Հոադամանթիւս, զորս ասիտիւնիւն...» (ԻԴ)— «καὶ ὁ Παδάμαυος, ὅς ἀσσιόδειων»²² (ΚΙ'): Բառարանական որևէ բացատրություն կամ այլուր ավանդված համադրելի կիրառություն չգտանք ընդդիմած ընթերցման համար, ուստի և առայժմ դժվարանում ենք որևէ մեկնարանություն տալ: Մի բան պարզ է, որ այն գրադարձման եղանակով առաջացած ընթերցում է:

դ) «Այս քեղ ի մէնջ, ով Բասիլիէ...» (ՁԳ)— «Ταῦτά σοι παρ' ἱμῶν, τῷ Βασίλειε» (ΠΒ'): «Բասիլիէ» ընթերցումը փաստորեն հունարենի կոչական հոլովածն է նույնությամբ փոխանցված հայերենի:

3. Կան բայական կապակցություններ (անդեմ և դիմավոր), որոնք բնագրի համապատասխան հարադրությունների բառացի թարգմանությունն են: Ահա այդօրինակ մի քանի կիրառություններ.

«հաց անձրեւել»²³ (է)— «ἄρτον ὀμβροῦσαι» (Ζ')

«առընթեր ընթացեալ» (ԺԲ)— «παραθέων ἐγγύθεν» (ΙΒ')

«գործակիցս ունել» (ԺԳ)— «συνεργούς ἔχειν» (ΙΓ')

«բանիքն հրահանգեալ» (Իէ)— «λόγοις ἐμμελετήσας» (ΚΓ')

«լեզուան կործանէր» (ԽԻ)— «ἀπὸ γλώσσης καταστρεφόμενος» (ΜΓ')

«ցամաք նաւեալ» (ԽԶ)— «νῆσοί τε ἀρπαζόμεναι» (ΜΕ')

«ծով մտրակեալ» (ԽԷ)— «θάλασσα μαστιζομένη» (ΜΕ')

«լեզուաւ պոռնկել» (ԽԸ)— «γλώσση πορνέουσι» (ΜΖ)

«խորհուրդ խորհէր» (Սէ)— «βουλὴν βουλεύεται» (ΝΓ')

«անդունդք անդնդոց կոչելով» (ԿԸ)— «ἄβυσσον ἀβύσσω προσκαλούμενος» (ΞΖ')

«լուսով լոյս գտեալ» (ԿԹ)— «φωτὶ φῶς εὐρίσκων» (ΞΖ')

«լեզուաւ բերել» (Կէ) հմմտ. «լեզուաւ բերեմ» (ԿԸ)— «γλώσσης φέρων» (ΞΓ'), հմմտ. «γλώσσης φέρω» (ΞΖ')

«մատակարարել դրանս» (ԿԹ)— «οἰκονομεῖν δὲ τοὺς λόγους» (ΞΗ')

4. Քննվող հուշարձանում կան բաղմաթիվ անվանական կապակցություններ, որոնք դարձյալ հունարենի հենքի վրա են ստեղծվել և բառական թարգմանության ինքնատիպ օրինակներ են.

²² ДРС, II, 255.

²³ Արտահայտությունս հանդիպում է նաև նազիանզացու «Ի սուրբ պատրիարքայ» «Անպատ ընտանացի, ծովն բաժանեսցի, փարաւոն ընկղմեսցի, հաց անձրեւացի, վէմ աղբիւրացի... ոչ զինուք միայն, այլ և անպատերազմօղ ձեռք» (ձեռ. № 948, էջ 209բ, ձեռ. № 7943, էջ 56բ) և «Առ Յուլիանոս» ճառերում՝ «հաց անձրեւել յանպատին, խորտիկ յերկնուստ առաքել...» (ձեռ. № 1500, էջ 858ա):

- «Կենդանի վկայք» (b) — «ζῶντες μάρτυρες» (E')
- «շնչաւոր արձանք» (b) — «ἐμπνοοὶ στῆλαι» (E')
- «լռութեամբ քարոզութիւնք» (b) — «σιγῶντα κηρύγματα» (E')
- «առաքինութեան գործարան» (ժԲ) — «ἀρετῆς ἐργαστήριον» (IB')
- «վարկպարագի գործ առնս» (ՀԸ), հմմտ. (ժԴ) — «πάρεργα τοῦ ἀνδρός» (OZ), հմմտ. (ID)
- «քրիստոսամարտ թագաւորն» (ԽԵ) — «χριστομάχος βασιλεύς» (MΔ')
- «զձեռագիր ամբարշտութեան» (ԽԷ) — «χειρόγραφα τῆς ἀσεβείας» (MG)
- «ախտն ծանախագոյն» (ՄԳ) — «πάθος γνωρίζεται» (NB')
- «ամենեցուն արինադիրն» (ՄԷ) — «ἅπασιν νομοθέτην» (NG')
- «միայնական բնութեան» (ԿԳ) — «μοναδικῆς φύσεως» (ΞB')
- «ձայն բանի» (ՀԶ) — «φωνή Λόγου» (OE')

5. «Դամբանականի» հայերեն թարգմանութեանը բնորոշ առանձնահատկութիւններէն են բառարարութիւնները պատճենելու, երբեմն հունարենի նմանութեամբ բառ ստեղծելու իրողութիւնները: Ահա այդ բնութի թարգմանութիւններէ մի քանի օրինակներ՝ համապատասխան կիրառութիւններով.

ա) «Քանզի զնոսին բազմամանկունս եւ գեղեցկամանկունս առաւ-պելքն թերեւս ունիցին: (Թ), բնագիր. «Τοὺς γὰρ αὐτοὺς πολὺπαιδας καὶ καλλίπαιδας, μῦθοι μὲν ἴσως ἔχουσιν» (Θ')

բ) «առ հալառալադիրս ձիրնթացս, զձիաւէրսն եւ զաեսաւէրսն» (ժԵ), բնագիր. «περὶ τὰς ἀντιθέτους ἵπποδρομίας, τοὺς φιλίππους τε καὶ φιλοθεάμονας» (IE')

գ) «զբազմապանեացն կրեմ կիրս» (Ի), բնագիր. «πολυπόδων πείσομαι» (IΘ')

դ) «իսկ զիս հարց երկեղ եւ ծեռապաժութիւն» (ԻԶ), բնագիր. «Εγὼ δὲ πατέρων εὐλάβεια, καὶ γηροχομία» (KE')

ե) «ոչ կենդանագիր» (ԻԷ), բնագիր. «οὐδὲ ζωγράφος» (KG')

զ) «սակայն ախտանայր իմն առ նա մարդկաւէն» (ԻԹ), բնագիր. «ὅμως δὲ τι παθόντι πρὸς ἐκεῖνον ἀνθρώπινον» (KH')

է) «թագաւորն ոսկեւէր եւ քրիստոսապետեաց» (ԼԱ), բնագիր. «βασιλεύς ὁ φιλοχρυσότατος, καὶ μισοχριστότατος» (Λ')

ը) «զհամապատասխան զմիածնին» (ԼԱ), բնագիր. «τὴν ὁμοτιμίαν τοῦ Μονογενοῦς» (Λ')

թ) «ոչ այլ ինչ ի փոքրուց, եւ ի ձեռագործաց» (ԼԲ), բնագիր. «οὐδέ τι τῶν μικρῶν καὶ χειροποιήτων» (ΛΑ')

ժ) «որքան ի յառաջ աւացելոցն ի կարեմտութիւն» (ԼԲ), հմմտ.

«այլ լինել կարեմտութեան ժամանակ» (ԼԲ), բնագիր. «ὅσον τῆ τῶν προ-
επιτημένων μικροβουλία» (ΛΑ'), հմմտ. «ἄλλοι μὲν εἶναι μικροβουλίας καιρὸν»
(ΛΑ')

ժա) «ոչ ունէր զնախամարտիկն» (ԼԲ), բնագիր. «οὐκ ἔχουσα τὸν
προαγωνιστήν» (ΛΑ')

ժբ) «եւ այլ երկայնամտութեան» (ԼԲ), բնագիր. «ἄλλοι δὲ μακροθυ-
μίας» (ΛΑ')

ժդ) «այնպէս նախաթոռութեան արժանի լինէր» (ԼԲ), բնագիր.
«ὅτω δὲ τῆς προεδρίας ἀξιωθείς» (ΛΗ')

ժդ) «կրօնատրանոցս եւ միայնանոցս շինելով» (ԿԳ), բնագիր.
«ἀσκητήρια καὶ μοναστήρια δευμάμενος μὲν» (ΞΒ')

ժե) «զրուին ի ձեռն առ նոսա անմարդութեան» (ԿԴ), բնագիր.
«κεφαλήν διὰ τῆς εἰς ἐκείνους ἀπανδρωπίας» (ΞΓ')

ժզ) «բարի մարդասիրութիւն եւ աղքատատաժութիւն» (ԿԴ), բնագիր.
«καλὸν φιλανθρωπία, καὶ πτωχοτροφία» (ΞΓ')

ժէ) «զառնն զյաւէտ մեծաձայնութիւն» (ԿԵ), բնագիր. «τοῦ ἀνδρός
μάλιστα μεγαλοφωνίας» (ΞΗ')

ժը) «բանագրեմ զառնն զառաքինութիւնն» (ԶԱ), բնագիր. «λογογραφῶ
τὴν τοῦ ἀνδρός πολιτείαν» (Π')

Այլևս հասկանալի է, որ հունարենի նմանությամբ թարգմանական
ճանապարհով բառաստեղծման օրինակներ են՝ բազմամանակ, գե-
ղեցկամանկուն, հակառակադիր, տեսաւէր, բազմոտանի, ծերատաժու-
թիւն, կենդանագիր, մարդկօրէն, ոսկեսէր, համապատութիւն, ձեռա-
գործ, կարեմտութիւն, նախամարտիկ, երկայնամտութիւն, նախաթոռու-
թիւն, կրօնատրանոց, միայնանոց, անմարդութիւն, աղքատատաժութիւն,
մեծաձայնութիւն, բանագրել բառերը:

6. Ի վերջո, առանձին խումբ են կազմում մի շարք բառեր, որոնք
թեև ավանդված են հայ մատենագրությամբ, բայց «Դամբանականի»
հիշատակությունն անհամեմատ հին է: Ահա այդպիսի մի քանի օրինակ-
ներ.

ա) «բացէին մախանք եւ ոչ բարեմտութեան մերձաւորութիւնք»
(ԺԸ), բնագիր. «φθόνος, δὲ ἦν, οὐκ εὖνοια τὸ προσάγον» (ΙΖ')

բ) «այլեւ յոյժ թաքուցանողք եւ նենգաժոտք» (ԺԸ), բնագիր.
«ἀλλὰ καὶ λίσαν κρυπτόν τι καὶ ὕφαλον» (ΙΖ')

դ) «բժշկել եւ զմարմնոյ հիւանդութիւնս, եւ զախտաժէտութիւն»
(ԻԴ), բնագիր. «Ἱατρικὴν μὲν γὰρ καὶ ἡ τοῦ σώματος ἀρρώστια, καὶ νοσο-
κομία» (ΚΓ')

դ) «ողբալով բշել առ իրեարս» (ԻԾ), բնագիր. «γερὸν μνησθέντων ἐπ' αἰ. τ. ο. ι. ε. ς» (ΚΑ')

ե) «ծառայն եւ ապստամբն» (Իէ), բնագիր. «ὁ δοῦλος καὶ ἀποστάτης» (ΚΓ')

զ) «Սաւուղ ի բացրեկեցիկն» (Իէ), բնագիր. «Σαούλ, ὁ ἀπόβλητος» (ΚΓ')

է) «Աղբատարութիւնք, ատարեկալութիւնք, կուսատածութիւնք, արէնսդրութիւնք, մնացելոց գրաւորականք եւ անգիրք» (ԼԾ), բնագիր. «πτοχοσοφίαι, ξενοδοχίαι, παροίενοχομίαι· νεμοθεσίαι μοναστῶν, ἔγγραφοί τε καὶ ἄγραφοί» (ΛΔ'): Ընդգծված երկու բառերն էլ շունի նոր հայկազյան բառարանը, բայց վկայված են Առձեռն բառարանում, երկրորդը «օտարակալութիւն» ձևով, բայց նույն նշանակութեամբ:

ը) «ամբարշտաբար նոցա կարծիքն» (ԿԹ), բնագիր. «ἀσ εἶδες ἐκείνοιο ὀπελαμβάνετο» (ΞΗ'):

Այսպիսով, հունարանությունների և հունարենի նորմերով բացատրվող օրինակների առատութիւնն ինքնին հնարավորութիւն է տալիս պնդելու, որ լեզվական հայտնի օրինաչափութիւնների, ժամանակի թարգմանութիւններին հատուկ բառաքերականական իրողութիւնների առումով «Դամբանականը» հիրավի առանձնանում է V դ. թարգմանութիւններից: Այստեղ դժվար է տեսնել դասական հայերենին հատուկ պարզութիւնը, մտքի, ասելիքի հստակ ձևակերպումը, բառական զուգահրոթիւնների շափավորութիւնը և այլն:

Քանի որ «Դամբանականը» շունի դասական հայերենի առանձնահատկութիւնները և նրա լեզուն հարուստ է մասամբ հունարան հայերենին հատուկ իրողութիւններով, ուստի և ժամանակի առումով այն կարող էր դիտվել միայն հետդասական թարգմանութիւն:

Սակայն «Դամբանականի» բնագրական քննութիւնը մեզ ստիպում է դուրս գալ թարգմանութիւնների դասդասման²⁴ ընդունված կադապարից և հենվել աղբյուրագիտական ավելի ստույգ տվյալների վրա:

«Դամբանականի» հայերեն թարգմանութեան ժամանակի ճշտորոշման հարցում շափազանց կարևոր է Կորյունի «Վարք Մաշտոցի» հետունեցած վերջինիս առնչակցութեան բացահայտումը:

Հայոց գրերի գյուտի խնդրին անդրադարձած հայ և օտարագէի

²⁴ Ն. Ակինյանն ընդունում է հին հայերենի հետևյալ շրջաբաժանումները. դասականը՝ մինչև 450 թ., հետդասականը՝ 450—472 թթ., հունարան հայերենը՝ 572—603 թթ. (տե՛ս նրա նշվ. աշխ., էջ 13—82): Դասական և հետդասական հայերենի առանձնահատկութիւնների մասին տե՛ս Վ. Դ. Առաքելյան, Դասական և հետդասական գրաբարը («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 1, էջ 255):

հետադոտողները, բնականաբար, միշտ էլ դիմել են «Վարք Մաշտոցի» բնագրին և երբեմն էլ բառառբառ քննել են այն: Առաջադրվել ու մերժվել են բաղմաթիվ վարկածներ²⁵: Այդուհանդերձ՝ բանասիրության մեջ շի մատնացուցվել մի բնագիր, որը ինչ-որ շափով սկզբնաղբյուր հանդիսացած լինելը Կորյունի երկի համար: Այս առումով միակ բացառությունը Կ. Մելիք-Օհանջանյանի կռահումն է: «Վարք Մաշտոցի» ուսերեն թարգմանության առաջաբանում նա իբրև Կորյունի աղբյուր հիշատակում է «Յաղագս պիտոյից»²⁶ գիրքը: Կ. Մելիք-Օհանջանյանը բերում է «Վարք Մաշտոցի» և «Յաղագս պիտոյից» գրքի ձևական-կառուցվածքային նմանության վեց կետ²⁷: Ամենևին շմերժելով Կորյունի ծանոթությունը «Յաղագս պիտոյիցին» և վերջինից որոշ ձևական կողմեր ընդօրինակելու հնարավորությունը, միաժամանակ նկատելի է մեկ այլ իրողություն ևս. Կ. Մելիք-Օհանջանյանի վկայած նմանության կետերը հատուկ են դամբանական-ներբողին առհասարակ և վերջինիս ժանրային առանձնահատկությունն են կաղմում: Ուստի որոշ ընդհանրություններ կարող են առաջանալ և ամենևին միմյանց անծանոթ, բայց ինչ որ շափով համարնույթ երկերում: Նաղիանդացին, օրինակ, առանց «Գիրք պիտոյիցը» ձեռքի տակ ունենալու էլ ներբողին հատուկ արտահայտամիջոցների կղիմեր «Դամբանականի» ժանրի թելադրանքով: Ի վերջո՝ ուշադրության է արժանի մի այլ պարագա ևս. հայտնի է, որ հնում Աթենքի, Կ. Պոլսի ուսումնական կենտրոններում բանաստեղծական-ճարտասանական արվեստի առանձնահատկություններն ուսումնասիրող դասընթացներ կային: Այնպես որ Կորյունի ծանոթությունը դամբանական-ներբողի առանձնահատկություններին կարող էր նաև այդ պարագայով թելադրված լինել: Հետևությունը այլ կլիներ, եթե «Վարք Մաշտոցի» և «Յաղագս պիտոյից» գրքի ձևական նմանության հետ ունենացինք բնագրային ընդհանրության օրինակներ ևս: Այս առումով, ինչպես մենք կփորձենք ապացուցել, «Վարք Մաշտոցի» միակ հնարավոր աղբյուրը Նաղիանդացու «Դամբանականի» հայերեն թարգմանությունն է: Մատենագրական այդ ինքնատիպ հուշարձանների աղերսը երկու բնույ-

²⁵ Կորյունի մասին եղած գրականության ամփոփ քննությունը տե՛ս Հր. Ահառյան, Հայոց գրերը, Երևան, 1968, էջ 5—68:

²⁶ «Սրբոյ հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1865, էջ 341—379: Այս աշխատությունը բաղկացած է 10 գրքից և 1 հավելվածից: Կ. Մելիք-Օհանջանյանը Կորյունի աղբյուր է դիտում հինգերորդ գիրքը՝ «Սահման ներբողինի»:

²⁷ Корюн, Житие Маштоца, Ереван, 1962, стр. 29—30, հմմտ. Կարապետ Մելիք-Օհանջանյան, «Վարք Մաշտոցի» ժանրը և պատմագրական նշանակությունը (տե՛ս «Բանբեր Մատենագրանի», № 7, 1964, էջ 49—59):

թի է: Մի դեպքում խոսքը «Դամբանականի» որոշ արտահայտություններ, ոճական ձևեր նույնությամբ ընդօրինակելու, համարնույթ բացատրություններում օգտագործելու մասին է: Ահա նման ընդհանրության մի քանի օրինակներ:

Նազիականացի

Կորյուն

1. «Հանդերձեալ էր ուրեմն բազում պատճառս մեզ բանից առաջի դնելով մեծն Բասիլիոս» (Ա):

„Εμελλεν ἄρα, πολλάς ἡμῖν ὑποθέσεις τῶν λόγων ἀεὶ προτιθεὶς ὁ μέγας Βασίλειος...“ (A’).

2. «...եւ ոչ ի յինքն այժմ մեզ առաջի դնել զպատճառ... առաջի կացուցէ...» (Ա):

«Առն, զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն...»²⁸,

«Արդ այսուհետեւ և խոստացեալն առաջի դիցի... հրաման հատուցեալ զարդարեսցի» (էջ 36):

„ἐαυτὸν νῦν ἡμῖν προτιθήσειν... ὑπόθεσιν προστησάμενος“ (A’)

3. «...մի՛ զայս փութացելոցն եւ ի յատուկ յայտուիկ քաջահաճոյ լինել ի պատճառսս ունիմք» (Ա):

«... ի վերայ հասելոց կամայական քաջութեամբ տարեալ և պայծառացեալ ծանօթական և հաճոյ լինէր...» (էջ 38):

„ἐν τούτῳ ἐσπουδαχόσι καὶ μόνον, ταῖς τοιαύταις ἐνευδοχιμαεῖν ὑποθέσεσιν. Ἐγὼ μὲν αὐτῶ περὶ τούτων...“ (A’).

4. «Արդէն իսկ առ նոյն ինքն երթալի է այսուհետեւ ի գովութիւն եւ զնոյն ինքն առաջի դնելով բանիս զնորա արժան» (Բ):

«... գրաւեալ անաշտ հրամանին հասելոյ, փութանակի և առանց յապաղելոյ զառաջի եղեալն մատենագրել» (էջ 22—24):

„Ἦδη δὲ πρὸς αὐτὴν ἡμῖν ἰτέον τὴν εὐφημίαν, αὐτὸν προστησαμένους τοῦ λόγου τὸν ἐκείνου Θεόν“ (B’).

5. «Քանզի նախ առաջին զաստուածային գիրսն ընթեռնոյր ժողովրդեանն²⁹, որ այնոցիկ էր մեկնիչ եւ զայն ոչ անարժան վարկանէր զկարգ աստիճանին...» (ԻԸ):

«Եւ անդէն ուշ եգեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ և թեւամուխ միջամուխ եղեալ յաստուածատուր հրամանացն հանգամանս...» (էջ 36):

²⁸ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 36: Այսուհետև սույն հրատարակությունից համագրության համար կատարված քաղամների էջը նշելու ենք բուն տեքստում:

²⁹ Նույն արտահայտությունը հանդիպում է նազիականացու «Առ Յուլիանոս թագաւոր» ճառում ևս՝ «մինչ զի և զաստուածային գիրս ընթեռնույ ժողովրդեան ոչ ինչ նուազ ի փառս ինքեանց զայն կարծէին լիեալ...» (ձեռ. № 823, էջ 75ա, հմմտ. ձեռ. № 1500, էջ 858բ, ձեռ. № 4234, էջ 153բ):

«Τὰς γὰρ ἱερὰς πρότερον ὑπαναγνώσκειν τῷ ἰαθ̄ βιβλίῳ... καὶ τούτῳ οὐκ ἀπαξιῶσαι τὴν τάξιν τοῦ βήματος» (KZ').

6. «Անդուսու նմա մին պարեզոտ եւ բանկոն եւ զետնախշտութիւն, եւ տրնութիւն³⁰, եւ առանց բաղանեաց կեանք: նորա պարկեշտութիւնք եւ հեշտալի բերբի՛՛ խորտիկ՛ հաց եւ աղ, նորա խահագործութիւնքն եւ ըմպելի ի զպատասցուցիչ եւ առատ, զոր մշակեն աղբիւրք ոչ ինչ աշխատելով» (ԿԲ):

«Բազում և ազգի ազգի վշտակեցութիւն ըստ աւետարանին կրէր ամենայն իրաց. ամենայն կրթութեամբ հոգեւորացն զանձըն տուեալ՝ միայնաւորութեան, լեռնակեցութեան, բաղցի և ճարաւոյ և բանջարանաշակութեանց, արգելանաց անլուսից, խարաղանազգեստ և գետնատարած անկողնոց» (էջ 38):

«Ἐνθὲςθὲν αὐτῷ τὸ ἐν χιτῶνι... ὁ γεωργὸς πηγαὶ μετ'ὅεν ποταμῆ-
νός» (ΞΑ').

7. «Եւ սա յանապատի բնակեաց, եւ սորա այծեա զգեստն ունէին գիշերքն անդիտացեալ, եւ ոչ ցուցեալ: եւ սա զհաւասար կերակուրն սիրեաց՝ աստուծոյ մաքրելով զինքն ի ձեռն ժուժկալութեան» (ՀԶ):

«Զորս ընդ ժամանակս ժամանակս իւրով իսկ անձամբն օրինակ ցուցանէր. առեալ զոմանս յաշակերտաց իւրաքանչիւր մենաստանացն և երթեալ լեռնակեաց, սորամուտ ծակախիթ եղեալ՝ զառօրէական զկերակուրն խոտարուտ ճաշակօքն վճարէին» (էջ 80):

«Καὶ οὗτος ἔρημον ὄκησε· καὶ τούτῳ τρύχλον ἐπιτήρησεν εἶχον αὐτὸν νυκτὸς... Θεῷ καὶ αἰρών ἐαυτὸν διὰ τῆς ἐγκρατείας» (ΟΕ').

Վերոբերյալ յոթ հատվածներից հինգի ընդհանրությունը որևէ մեկնարանության անհրաժեշտությունն շունի, հաջորդ երկու համադրությունները կարոտ են մասնակի լուսարանության, թեև դրանց նմանությունը ևս ակնհայտ է: «Դամբանականի» «գետնախշտութիւն» բառ-ընթերցումը, որը բացատրված է «հողի վրա պառկելը»³¹, նույնիմաստ է Կորյունի «գետնատարած անկողնոց» հետ: Ինչպես նաև նույնիմաստության երանգ պետք է տեսնել վերջին հատվածների «զհաւասար կերակուր» արտահայտության և «զկերակուրն խոտարուտ» կապակցության միջև:

«Դամբանականի» հայերեն թարգմանությանը Կորյունի ծանոթու-

³⁰ Հմմտ. «պահս և զգետնախշտութիւնս և զտփնութիւնս...» (ձեռ. № 60, էջ 122ա՝ «Յաղագս բարեկարգութեան ի խօսս), «այսորիք զմերձաւորս զանոտնալուացս և զգետնախշտիս...» (ձեռ. № 823, էջ 96բ՝ «Նորին առ Յուլիանոս թագաւոր»), «սաստեսցէ բանիս, համարձակեսցի, տրնեսցէ, զետնախշտի լիցի (ձեռ. № 1500, էջ 876ա՝ «Յինքն ի յագարակէ անդրէն եկեալ»), «այսքան զբազում տփնութիւնս և զգետնախշտութիւնս պատուականագոյն...» (ձեռ. № 4234, էջ 11ա՝ «յԱթանասիոս եպիսկոպոս յԱղէքսանդրացի»):

³¹ ՆԶԲ, Ա, էջ 541:

թյանն անդրադառնալիս, անհրաժեշտ է քննել ընդհանրությունների երկրորդ խումբը ևս: Այս դեպքում իրողությունը մի փոքր այլ է. խոսքը երկու հուշարձանների ժանրային առանձնահատկության ու կառուցվածքի, կերպավորման նույնաբնույթ ձևերի, ընդհանուր միջոցների, գործունեության նմանության և առհասարակ ընդհանրականության՝ եզրեր ունեցող դրվագներին է վերաբերում:

«Դամբանականի» խորագիրը թարգմանության բոլոր գրչագրերում (թվով վեց), ի տարբերություն հունարեն բնագրի („Εἰς τὸν μέγαν Βασιλεῖον, ἐπίσκοπον Καισαρείας Καππαδοκίας, ἐπιτάφιος“ (A’), նույնն է՝ «Ի Բասիլիոս Կեսարացի»): Մինչդեռ նույն գործի պատճառ-լուծմունքների ձեռագրերը այս կետում բաժանվում են երկու խմբի՝ մի մասը նույնական են վեց ձեռագրերի հետ, մյուսները տարբերվում են և մոտ են Կորյունի աշխատության խորագրին: Այսպես, համապատասխանաբար ունենք՝ «Վասն Բարսղի մահուան»³² և Կորյունի մոտ՝ «Պատմութիւն մահուան... Մաշթոցի»: Խորագրերի մերձավորության այս պարագան հնարավորություն է տալիս մտածելու, որ Կորյունի ձեռքի տակ եղել է «Դամբանականի» մեզ հայտնի ընդօրինակություններից գոնե խորագրով տարբերվող օրինակ, որի հետ նմանության պարզորոշ եզրեր ունի նրա աշխատության խորագիրը: Բացի այդ՝ այլևս դժվար չէ կռահել, որ պատճառ-լուծմունքների երկրորդ ձեռագրաշարքը վերաբերում է «Դամբանականի» հայերեն թարգմանության այն ձեռագրախմբին, որը, ասվեց, խորագրով ընդհանրական է «Վարք Մաշտոցի» հետ:

Ընդհանուր տեղիներ կան նշված գործերի մուտք-առաջաբանների մեջ: Ասում ենք «առաջաբանների», որովհետև, ինչպես Կորյունի երկում, «Դամբանականում» ևս այն երկու մեծ և փոքր կեսերի կարելի է բաժանել, որոնցից առաջինը ավելի շուտ ասելիքը նախապատրաստող միտք է, որ կոչում ենք մուտք, երկրորդը՝ բուն պատմությունը պայմանավորող հանգամանքների ընդարձակ բացատրություն՝ առաջաբան: Նազիանդացին գործի նկատմամբ ունեցած պատասխանատվությամբ պայմանավորված մտավախություն ունի, ուստի և երկնչում է իր իսկ ծանրաբեռն ձեռնարկությունից (ԺԴ): Ավելին, կարծեք հնարավոր թերացումները արդարացնելու նպատակով նա իր կարողության սահմաններն է մատնացույց անում՝ «որպէս է կարողութիւն շափաւրապէս զայն առնել» (ԺԴ). „ὡς εἶόν τε μετρίως, τοῦτο ποιεῖν“ (IΔ’): Նույն պատճառ-իրողությունն է առկա նաև Կորյունի երկում. նա ևս տարամտում է,

³² Ձեռ. № 2101, էջ 17ա, հմմտ. ձեռ. № 598, էջ 28բ, ձեռ. № 7357, էջ 255բ, հմմտ. ձեռ. № 4150, էջ 19բ, հմմտ. ձեռ. № 1879, էջ 199ա, ձեռ. № 5254, էջ 102բ:

դիմում նույնաբնույթ արտահայտության՝ «մեր կարողացած շափով՝ կզրվի»³³:

«Դամբանականի» առաջաբանում նազիանզացին նախապատրաստելով հիմնական ասելիքը, գրում է՝ «առաջիկայ ցուցի, այսոքիկ են» (Բ') — «τῶν τῶν ἐνεσθησάμετων, τὰν τὰ ἐστίν» (B'): Կորյունի նախաբանելու նպատակը ևս հեռու չէ նույնը լինելուց, ինչպես նաև՝ կատարյալ արանց մասին գրելու կարելության ճշտում է՝ «արդ առեալ նախաբանեսցուի»³⁴:

Մեկ այլ դրվագում նազիանզացու բնութագրումը վերաբերում է Բարսեղի համընդհանուր ճանաչմանը, այլոց համար ևս հարգարժան այր լինելու հանգամանքի բնորոշմանը՝ «ամենեքեան համապատիւ յառնն գովութիւն» (Բ') — «πάντες ὁμότειμοι τῆν τοῦ ἀνδρός εὐφροσίαν» (B'): Կորյունի «Վարքի» համապատասխան հատվածում խոսքը դրվատության արժանի արանց բարեբանելու մասին է՝ «դառ ի միմեանց պատուեալ զգովութիւնս»³⁵: Այս բնութագրումներում համեմատության եզրերը «համապատիւ... գովութիւն» և «պատուեալ զգովութիւնս» արտահայտություններն են, որոնք և հնարավորություն են տալիս մտածելու, թե «Դամբանականի» հայերեն թարգմանությունն է ընդհանրության հիմքը: Թեև բացառելի չէ նաև այն հնարավորությունը, որ Կորյունը «Դամբանականի» բնագրից օգտվելու պարագայում նշված բնորոշումը, թարգմանչից բոլորովին անկախ, ընկալեր նույնական արտահայտությամբ: Սակայն համադրվող նախադասությունների երրորդ՝ ոչ բառական, այլ իմաստային ընդհանրությունը կասկածի տակ է առնում այդ հնարավորությունը: Խոսքը «ամենեքեան» և «զառ ի միմեանց» արտահայտություններին է վերաբերում: «Դամբանականի» հունարենից օգտվելու պարագայում Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում, հավանաբար, կունենայինք «πᾶντι-ին» իմաստամոտ (ամենուր, ամեն տեղ) բառը նորություն:

«Դամբանականի» և «Վարք Մաշտոցի» հունարենով շափյմանավորվող ընդհանրության առավել ուշագրավ օրինակ է հետևյալը. Բարսեղ Կեսարացու մահվան և թաղման մանրամասները նկարագրելիս նազիանզացին գրում է. «Բիւրք յամենայն ազգեաց եւ ի հասակէ ամենայն»

³³ Կորյուն, էջ 37, հմմտ. «և հայրենակատար մեծարեալ պայմանաւ... հաճեսցի» (էջ 36): Համեմատության նպատակով վկայակոչված օրինակներից միայն այս դեպքում նպատակահարմար գտանք Կորյունի բնագրի աշխարհաբար տարբերակը, որով ընդհանրության եզրերը ավելի նկատելի են դառնում:

³⁴ Կորյուն, էջ 24:

³⁵ Նույն տեղում, էջ 28:

նէ՝ ոչ յառաջագոյն ծանաւթիցն, սաղմոսիւք և աւրհնութեամբք՝ ողբովք առաւել յաղթելով եւ զիմաստասիրութիւն ախտիւն քակտելով» (Դամբ., ԶԱ): Մաշտոցի թաղման հանդիսակարգի Կորյունի նկարագրութիւնն ընդհանուր նմանութիւն ունի այս հատվածի հետ. «...հանդերձ աշխարհական ամբոխիւ, սաղմոսիւք և օրհնութեամբք և հոգեւոր ցնծութեամբք, կանթեղօք վառելովք և ջահիւք բորբոքելովք և խնկօք բուրելովք և ամենայն լուսաճաճանչ գնդիւն...»³⁶:

Նշված հատվածների հարաբերության հստակման առումով կարևոր է նախ համադրել Նազիանզացու հայերեն թարգմանությունը բնագրի հետ: Հունարենում ունենք. «μυριάδες γένους παντός, καὶ ἡλιχίας ἀπάσης, ὡς πρότερον γινωσκόμενα. Ψαλμοὶ δὲ ὑπερνικώμενα, καὶ τὸ φιλόσοφον τῷ πάθει καταλύμενον» (Π): Մեկնաբանություն պահանջող միակ տարբերությունը հետևյալն է. «Դամբանականի» ընդգծված «սաղմոսիւք և աւրհնութեամբք» շարակայության դիմաց հունարենում ունենք պարզապես «ψαλμοὶ» — սաղմոսերգութեամբ: Հունարեն նշված հասկացության հայերեն նման համապատասխանության օրինակ կա Նազիանզացու մեկ այլ՝ «Ի Կեսարիոս եղբայրն իւր» ճառում, ուր «ψαλμοὶ δὲ κοιμίζουσας τοὺς ὑπὸ γένους» կապակցության դիմաց հայերեն թարգմանությունում ունենք՝ «սաղմոսերգութեամբ դադարեցուցեալ զողբսն»³⁷: Մինչդեռ, ասվեց, «Դամբանականի» հայերեն թարգմանությունը և «Վարք Մաշտոցին» համապատասխանաբար ունեն՝ «սաղմոսիւք և օրհնութեամբք»³⁸: Ահա այս իրողությունն էլ իր հերթին հնարավորություն է տալիս պնդելու, թե «Վարք Մաշտոցի» անմիջական աղբյուրը «Դամբանականի» հայերեն թարգմանությունն է:

Բաղդատությունը ցույց է տալիս, որ քննվող մատենագրական հուշարձաններում կան համանման երանգ ունեցող բացատրություններ, նկարագրական համեմատելի տեղիներ, բառական որոշ նմանությամբ ուղեկցվող կառուցվածքային-ձևական ընդհանրության այլաբնույթ օրի-

³⁶ Նույն տեղում, էջ 94:

³⁷ PG, t. 35, էջ 773, հմմտ. ձեռ. № 4234, էջ 20ա: Նազիանզացու «Առ Կղեղոնիոս» թղթի թարգմանիչը տալիս է նույն բառի դիմավոր կիրառության մեկ օրինակ՝ «և մեք սաղմոսաբանեցումք և յոլովս գրեսցուք...» (ձեռ. № 60, էջ 99բ):

³⁸ Արտահայտությունս հանդիպում է Շուշանիկի Վկայաբանության մեջ. «...հանդերձ սաղմոսիւք և օրհնութեամբք և երգովք հոգեւորօք և շնորհօք...» (ՕՅԿԾ ՍՄՐԾՅՅԵԼԾ, ՃԻՐԾՅՈԼԾԾԵ ՊՊՄԾԵՅՈՅԵՍԻ, ԹԾ, 1978, էջ 119), ինչպես նաև Ն. Շնորհալու մի թղթում. «Յառաջագոյն մաքրել հոգեւորական երգովք, սաղմոսիւք և օրհնութեամբք և օծանել իբրև զղշխոյ և զհարսն...» («Ընդհանրական թուղթք», Երուսաղէմ, 1871, էջ 273):

նակներ: Կորյունի երկի շափանիշով եթե դատելու լինենք, ապա ասվածը հիմնականում վերաբերում է «Վարք Մաշտոցի» համառոտ և ընդարձակ առաջաբաններին, Մաշտոցի կերպավորման որոշ դրվագներին և ավարտին:

Արդարացի շէր լինի դիտված բառական, ոճական և ձևական-կառուցվածքային նմանություններին նայել որպես Կորյունի աշխատության արժեքը նվաստացնող օրինակների³⁹: «Վարք Մաշտոցի» երկն իր էությունամբ միանգամայն ինքնուրույն, կուռ, խտացված, ինքնօրինակ ու նպատակադիր աշխատանք է: Եղած ընդհանրական տեղիներին պիտի նայել թարգմանական մատենագրության դրական ազդեցության առումով միայն, մանավանդ որ սկզբնավորման շրջանի հայ մատենագիրները միաժամանակ առաջին թարգմանիչներն էին:

Այժմ անդրադառնանք կառուցվածքային-ձևական մի քանի ընդհանրությունների, որոնք արդյունք են նույնահիմք պատճառադրության: Հիմնավորելով իր իսկ ձեռնարկած գործի դժվարությունը, Նազիանզացին գրում է. «...դանդաղ էի ի բանն (Բ)—ὄκνησεν τὸν λόγον (B'), առ այդ բերելով նաև այլ բացատրություններ: Նույն միտքը Կորյունի մոտ՝ «...և առաւել քան զկար մեր»⁴⁰: Իրականում թե՛ Նազիանզացու և թե՛ Կորյունի բացատրություններից երևում է, որ երկու դեպքում էլ գրելիքից մտավախելու հիմնական պատճառը ձեռնարկված գործի նկատմամբ ունեցած պատասխանատվության մեծությունն է:

«Դամբանականի» վերջնամասում կա մի միտք, որը ընթերցողին հուշում է Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու մտերմության աստիճանը. «Այս քեզ ի մէնջ, ով Բասիլիէ... ի համապատուէ եւ հասակակցէ...» (29)— «Ταῦτά σοι παρ ἡμῶν, ὁ Βασίλειε... καὶ ὁμολογῶ, καὶ ἤλιχες» (ΠB'): Ասվածը հիշեցնում է մերձավորություն ենթադրող Կորյունի այն հաղորդումը, թե ինքը Մաշտոցի կրտսեր աշակերտն է. «Թէպէտ և էի կըրտսերագոյն...»⁴¹:

³⁹ Ամենևին արդարացի չէ նմանություն հասկացության տակ միայն հատվածական վերարձակեցումներ պատկերացնել կամ էլ այդ կարգի օրինակների բացակայության պայմաններում հնարավոր մերձավորությունն առհասարակ մերժել: «Դամբանականի» և «Վարք Մաշտոցի» առնչակցությանն այս առումով պիտի նայել: Որ գրական ազդեցությունները կարող են լինել նաև սոսկ բառերի և ժանրային համակարգի նմանության իմաստով, կարելի է համոզվել Յա. Լյուբարսկու «Михаил Пселл и Григорий Назанзин» քննությունում ևս (տե՛ս «ՃՈՅՁԵՆԵՐ ԼՈՂՈՅՄԻՈ ԵՇՈՅԸԵՅՈ», ԵՊՀ, 1978, էջ 93—98):

⁴⁰ Կորյուն, էջ 22:

⁴¹ Նույն տեղում:

Նազիանզացին այլևայլ առիթներով անդրադառնում է իր ուսումնառության, ինչպես նաև աշխատանքային գործունեության այն դրվագներին, որոնք ինչ-որ շափով նպաստում են Բարսեղ Կեսարացու կյանքի ու գործունեության համակողմանի բացահայտմանը: Այսպես, օրինակ, կարելի է հիշատակել Բարսեղի և Նազիանզացու Աթենքում հանդիպելու, առմիշտ կապվելու, այլախոհ (հավանաբար նաև այլադավան) ուսանողության միջավայրում մեկմեկու զորավիգության որոշ նկարագրություններ (ԺԷ, ԺԸ), որոնց թերևս այնքան էլ օտար չեն ուսումնառության նպատակով Կոստանդնուպոլիս մեկնող Կորյունի և նույն քաղաքում ուսանող Եզնիկ Կողբացու հանդիպման ու կապվածության շափազանց զուսպ նկարագրությունները⁴²: Եթե ընդհանրացնենք այս և նախորդ նմանության եզրերը, ապա պիտի նկատենք, որ Կորյունը, Նազիանզացու հետևության միաժամանակ տեղեկություններ է հայտնում նաև իր մասին:

Մոտավոր նմանության եզրեր կան Բարսեղի և Մաշտոցի դերի, գործունեության, մանավանդ առաքելության գնահատություններում: Ի մի բերելով Բարսեղ Կեսարացու պարապմունքի բոլոր երանգները, Նազիանզացին գրում է. «...զաշխարհ ամենայն լուսաւորէր» (ԻԶ): Նույնաբնույթ գնահատություն ունենք նաև Մաշտոցի աշխատանքի Կորյունի բնութագրման մեջ. «...վասն նորին լուսաւոր վարդապետութեան»⁴³:

Ի վերջո՝ նկատելի է նաև մեկ այլ իրողություն. «Դամբանականում» Նազիանզացին ընդհանրացրել, համահավաք տեսքի է բերել ոչ միայն իր իսկ հին ու նոր տեղեկություն-տպավորությունները, այլև ուրիշներից լսածներով լրացրել, հարստացրել ու ամբողջացրել է իր տպավորությունների թերին: Այսպես, օրինակ, ուղղակի վկայություն ունենք այն մասին, որ Նազիանզացին շի կարողացել ներկա լինել Բարսեղի թաղմանը⁴⁴, թեև այդ դրվագի նկարագրությունը ևս այնքան համողկեն է ու փաստալից, որ անմիջական ականատեսի շարադրանքի տպավորություն է թողնում: Երանելի ուսուցչի նկարագիրը առավել լիարժեք ու ամբողջական ներկայացնելու ցանկությամբ, փաստական նյութի թերին այլոց պատմած տեղեկություններով լրացնելու ձգտումով ևս Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը կապվում է Նազիանզացու «Դամբանականի» հետ⁴⁵:

⁴² Հմմտ. նույն տեղում, էջ 74—76:

⁴³ Նույն տեղում, էջ 22:

⁴⁴ Ձեռ. № 621, էջ 255բ:

⁴⁵ Հմմտ. Կորյուն, էջ 96—98:

Վերոշարադրյալը ամփոփելու դեպքում կունենանք հետևյալ պատկերը. եթե նշված մատենագրական հուշարձանների ոչ բառական նմանության եղրերը վերագրենք բացառապես նյութի, տվյալ դեպքում վարքագրական բնագրերին հատուկ ժանրային առանձնահատկություններին (թեև այս պարագայում այդպես վարվելու հիմք չունենք), ապա նույնը չի կարելի ասել այն ընդհանրական մասերի, նույնական բառ-արտահայտությունների մասին, որոնք տեղ են գտել համադրվող բնագրերում: Եթե ստույգ է նշված մատենագիրների առնչակցության պարագան, ապա, ինքնարերարար, «Դամբանականի» հայերեն թարգմանության ժամանակը առնչվում է «Վարք Մաշտոցի» գրության շրջանին:

Հայտնի է, որ Կորյունի երկի գրության ժամանակի մասին ուղղակի վկայություններ չկան: Կորյունը հաղորդում ունի այն մասին, որ Մաշտոցի մահվանից երեք տարի հետո Վահան Ամատունին հուշարձանական գնեցրեց երանելու գերեզմանի վրա. «Իսկ յետ երից ամաց անցելոց յաջողեցան Վահանայ Ամատունույ քրիստոսասէր փութով խորան սրանչելի կանգնել տաշածոյ վիմօք քանդակելովք...»⁴⁶: Այս վկայությունը հնարավորություն է տալիս պնդելու, որ «Վարք Մաշտոցին» կարող էր գրվել 443 թ. հետո միայն (Մաշտոցը մահացել է 440 թ. փետրվարի 17-ին): Մ. Աբեղյանը Կորյունի երկի գրության ժամանակի մասին գրում է. «Դա հորինված է 443—451 թվականների մեջ: Կաթողիկոսական տեղապահ Հովսեփը, որ հրամայել է Կորյունին գրել Մաշտոցի կենսագրությունը, Ավարայրի ճակատամարտից (451) քիչ հետո բռնվել, տարվել է Պարսկաստան և այնտեղ նահատակվել, այսինքն քրիստոնեության համար սպանվել»⁴⁷:

Այսպիսով, եթե ընդունելի են Կորյունի երկին հատկացվող գրության ժամանակն ու «Դամբանականի» հայերեն թարգմանությունից օգտրվելու պարագան, ապա հետևում է, թե նազիանզացու երկի հայերեն թարգմանությունը կատարված պիտի լինի նախքան հայ ինքնուրույն մատենագրության առաջին գործի հեղինակվելը, այսինքն մինչև 443—451 թթ.:

Ավելորդ չի լինի անդրադառնալ «Դամբանականի» հայերեն թարգմանության առաջադրվող ժամանակին նպաստ բերող մեկ այլ իրողության ևս. խոսքը «Դամբանականի» աստվածաշնչական հղումների հայերեն թարգմանությանն է վերաբերում: Կան քաղում-արտահայտություններ, որոնք գրեթե նույնն են Աստվածաշնչի հայերեն թարգմա-

⁴⁶ Նույն տեղում, էջ 94:

⁴⁷ Նույն տեղում, էջ 8:

նութեան հետ և այն տպավորութիւնն են թողնում, թե ժամանակին ուղղակի վերցվել են նրանից: Այսպես.

- ա) «զաղբատս սորա լցուցից հացիւ» (Սաղմ., ՃԼԱ, 15) «Եւ յագեցուցանէր զաղբատսն հացիւ» (Դամբ., ԼԶ)
 „καὶ χορτάζει πτωχοὺς ἄρτων“ (ΛΕ')
- բ) «կերակրել զնոսա ի սովի» (Սաղմ., ԼԲ, 19) «Եւ սնուցանէր զնոսա ի սովին» (Դամբ., ԼԶ)
 „καὶ διατρέφει αὐτοὺς ἐν λιμῶ“ (ΛΕ')
- գ) «որ խնայէ զցորեան... հրապարականէժ լիցի» (Առակք, ԺԱ, 26) «որ խնայէ ցորեան հրապարականէժ լիցի» (Դամբ., ԼԵ)
 „οὐδ' ὅτι ὁ συνέχων σίτον ὀνηροκατάρατος“ (ΛΔ')
- դ) «ոչ սով հացի, և ոչ ծարաւ ջրոյ» (Ամովս, Ը, 11) «ոչ զսով հացի, եւ ոչ զծարաւ ջրոյ» (Դամբ., ԼԵ)
 „ὁ λιμὸν ἄρτων, οὐδὲ δίψαν ὕδατος“ (ΛΓ')
- ե) «ցեց ոսկերաց սիրտ հոգած» (Առակք, ԺԴ, 30) «ցեց ոսկերաց սիրտ հոգացող» (Դամբ., ԽԳ)
 „ἐπειδὴ σῆς ὀστέων καρδία αἰσθητικὴ“ (ΜΒ')
- զ) «սէր ամբարտաւանից հակառակ կայ» (Առակք, Գ, 34) «ամբարտաւանիցն հակառակ կայ» (Դամբ., ԾԸ)
 „ὁ τοῖς ὑπερηψάνοις ἀντιτασσόμενος“ (ΝΖ'):

Ի տարբերութիւն Հին կտակարանային այս վկայութիւններէ, նոր կտակարանի թղթերից կատարված քաղումները բառացի չեն և տպավորութիւնն այն է, որ դրանք հիմնականում նոր թարգմանութիւն են՝ կատարված «Դամբանականի» թարգմանչի ձեռքով: Ահա այդ կարգի մի քանի օրինակներ.

- ա) «յանկարծակի յական թօթափել ի փող յետին» (Կորն. I, ԺԾ, 52) «քանզի, թուի ինձ, եթէ ոք եղել եւ կամ լինիցի փող» (Դամբ., ԿԶ)
 „Οἶμαι γὰρ, εἰ τις ἐγένετο, ἢ γενήσεται σάλπιγγι ἐπὶ πολλῶ τῶν ἄόροσ φθάνουσα“ (ΞΕ')
- բ) «ամենքովք հանդերձ, որ կարդան զանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն տեղիս նոցա և մեր» (Կորն. I, Ա, 2) «Եւ ստուգապէս կատարեալ, զամենայն բննել, եւ զխորսն աստուծոյ» (Դամբ., ԿԶ)
 „Πάντα μὲν ἐρευνᾶν. καὶ τί βίβη τῶ Θεοῦ“ (ΞΕ')

յանցից տարբերվում էին ոչ միայն թարգմանվող բնագրերի ընտրութեամբ ու թարգմանիչների պատրաստութեամբ, այլև լեզվական իրողություններով:

V դարում հունաբան թարգմանությունների առկայութեանն ավելի հավանական է բացատրել թարգմանիչների անհատական մոտեցումնախասիրութեամբ, քան ենթադրվող թարգմանական դպրոցների դոյութեամբ: Ավելի հնարավոր ու հավանականն այն է, որ թարգմանական յուրաքանչյուր հուշարձանին բնորոշ լեզվաքերականական և բառադարձվածային առանձնահատկությունների տակ պետք է տեսնել այս կամ այն թարգմանիչ-հետադոտողի նախասիրած ոճը, լեզվի առանձնահատկություններից օգտվելու հնարավորությունները, բառաբարդմանբառաստեղծման (թարգմանական ճանապարհով) միջոցները, այս կամ այն միտքը թարգմանելիս արտահայտչամիջոցների զուգադիր ձևերից ճիշտ օգտվելու կարողութեանը և այլն:

բ) ՆԱԶԻԱՆԶԱՑՈՒ ԳԻՐՔ-ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՂԲՅՈՒՐ

Նազիանզացու ճառերի և թղթերի հայերեն թարգմանությունների հետքերը շատ ավելի որոշակի են Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» մեջ: Ի տարբերություն «Վարք Մաշտոցի», այստեղ հույն մատենագրի ճառերից եկող առանձին բառական, սեղմ ոճական, ինչպես նաև ձևական-կառուցվածքային մանրերանգ նմանութեան օրինակներ չպետք է փնտրել, քանի որ հաճախադեպ են բառացի և համեմատաբար ընդարձակ քաղումները: Եթե «Վարք Մաշտոցի» ընդհանրութեան եզրերը յուրաքանչյուր համեմատութեան դեպքում մեկ-երկու բառական միավորընթերցումից այն կողմ շանցան, ապա Խորենացու Պատմութեանից հանված և՛ օրինակներն են շատ (դրանք հասնում են հինգ տասնյակի), և՛ ընդհանրական հատվածներն են ցայտուն: Ընդհանուրն այն է, որ երկու դեպքում էլ ո՛չ Նազիանզացին է հիշատակվում, ո՛չ էլ նրա որևէ ճառի անունը տրվում: Սակայն, ի տարբերություն Կորյունի երկի, Նազիանզացի-Խորենացի առնչակցութեան խնդիրը տեականորեն զբաղեցրել է հայագիտութեանը՝ Խորենացու աղբյուրների բացահայտման թելադրանքով: Այդ բնույթի առաջին կռահումները պատկանում են Նոր հայկաղյան բառարանի հեղինակներին, որոնց կատարած հղում-համեմատութեանները գրավեցին Նորայր Բյուզանդացու ուշադրութեանը¹: Չեռքի տակ շունենալով Նազիանզացու ճառերի որևէ ընդօրինակութեան, նա հնարա-

¹ Տե՛ս «Քննասէր», Բ, Ստոքհոլմ, 1887, էջ 56—62 (այսուհետև՝ «Քննասէր»):

վորութիւնն չի ունեցել բառարանագիրների վկայակոչութիւնների շրջանակներից դուրս ճշտելու այս կամ այն հատվածի որ ճառից քաղված լինելը, ուստի և հասկանալի պիտի լինեն նրա վերապահումները՝ «չգիտեմ յոր նառէ», «յիմ քաղուածոյս նշանակած շեմ զվերնագիր նառին»: Բառարանագիրները նույնպես հաճախ բավարարվել են ճշգրտում պահանջող ընդհանուր հղումով՝ «առեալ ի բանից Աստուածաբանին»:

Հայտնի է, որ բառարանագիրները ձեռքի տակ ունեցել են միայն «Առ որս» և «Քրիստոս ծնեալ» ժողովածուների հայերեն թարգմանութիւնները, ուստի Ն. Բյուզանդացու ճշգրտելիքը նշված գրքերի սահմաններում պիտի կատարվեր:

Նաղիանդացու ճառերից կատարված հղումների քննության և մանավանդ նոր ընդհանրութիւնների բացահայտման առումով կարևոր են Գրիգոր Խալաթյանցի երկու հրապարակումները²: Սակայն Գ. Խալաթյանցը չի ճշտել Նորայր Բյուզանդացու համեմատութիւնները՝ ըստ ճառերի, այլ և ինքն էլ երբեմն չի մասնավորեցնում նոր նկատված այս կամ այն հատվածի որ ճառից քաղված լինելը և իբրև աղբյուր հիշատակում է «Առ որս» գիրքն առհասարակ³:

Ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ Նաղիանդացու և Խորենացու առնչակցութեան քննության ուղղութեամբ Ն. Բյուզանդացու և Գ. Խալաթյանցի կատարած աշխատանքը ամենևին էլ քիչ չէ: Բայց, այդուհանդերձ, այսօրվա հետազոտողի անելիքը չի սահմանափակվում եղած անհասցե հղումների տեղերի ճշտումով ու նոր օրինակ-համադրութիւնների հարստացմամբ միայն: Նախ՝ անհրաժեշտ է նկատված ընդհանրութիւնները և նոր օրինակները ներկայացնել հնարավորին շափ հին ու անաղարտ ձեռագրերի համեմատութեամբ (Խորենացու հատվածները վկայակոչելու ենք ըստ առկա քննական հրատարակութեան)⁴: Եվ ասլա՛

² Տե՛ս նրա «Մովսէս Խորենացի և իւր աղբիւրները» («Յաւելուած Արարատի», 1897 թ. նոյեմբեր և դեկտեմբեր, էջ 531—539, այսուհետև՝ «Արարատ»), հմմտ. Г. Хатъянц, Армянские Аршакиды в „Историй Армений“ Моисея Хоренского՝ часть II, М., 1903, էջ 51, 61, 65, 67, 69, 70, 81, 142, 143 (այսուհետև՝ «Арм. Аршакиды»):

³ Տե՛ս «Արարատ», էջ 531, 534: Ն. Ակինյանի «Մ. Խորենացույ Ողբը Ղեւոնդ Երէցի Պատմութեան վերջաբանն է» ընդարձակ քննութիւնը (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1930, № 1—2, էջ 7—41) Նաղիանդացի-Խորենացի ընդհանրութեան իմաստով նորույթ չի պարունակում: Այդ հոդվածում Նյուաացի-Խորենացի առնչակցութեան նոր օրինակներ կան:

⁴ Բառարանագիրները «Առ որս» և «Քրիստոս ծնեալ» գրքերի իրենց ձեռքի տակ եղած ընդօրինակութիւնների մասին որևէ հաղորդում չեն կատարում: Գր. Խալաթյանցը օգտվել է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 96 (1700-ից առաջ), № 217 (1848—1849 թթ.) և էջմիածնի գրատան № 908 (արդի՝ № 823, 1266 թ.) ձեռագրերից:

շրջանառության մեջ եղած հատվածները քիչ չեն, բայց չի կատարվել դրանց աղբյուրագիտական գնահատման փորձ՝ մատենագիրների ժառանգության ուսումնասիրության դիտակետով: Նախ հետևենք համեմատություններին, որ բերվում են ըստ Նազիանզացու գիրք-ժողովածուներ մտած ճառերի ընդունված հերթականության⁵:

«Ի վերադարձն հասարակաց»
Ձեռ. № 1500 (1283 թ.)

«Մուխիսի Խորենացայ Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1913

«Մի՛ անարժան վարկցիս ընդունել մկրտութիւն ընդ աղքատին՝ ճոխդ, քաջատոհմիկդ ընդ վաքարազգոյն»
(էջ 733բ):

«աւաղելով զինքն, իբր թէ չքնաղագեղ ընդ վատակերպոյ և քաջատոհմիկ ընդ վաքարազգոյ բնակէ» (էջ 195):

Հմմտ. «Առ Արիանոսս»
Ձեռ. № 1500

Հմմտ. «ի քաջատոհմիկ և ի գլխաւոր աշխարհէ» (էջ 221):

«Ամենայն քաջատոհմիկ է, որ զնա պահեաց առաքինութեամբ» (էջ 827բ):
«և վաքարազգի... աղքատաց հարց»
(էջ 827բ):

«նախ վասն քաջատոհմիկ աղգին Պահլակաց» (էջ 322):

Ձեռ. № 60 (ԺԴ դ.)

«և ազգ բարէտոհմն կամ յոյժ փարթամ, կամ այժմ փքացեալ և վաքարազգի»* (էջ 93բ):

«Ի ժողովողն»
Ձեռ. № 1500 (1283 թ.)

«Զժառայս⁶ ի վերա ձիոց⁷ բերեալս»
(էջ 748ա):

«Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալf...» (էջ 72):

«Պարտ և արժան է առն առաքինւոյ առ հանճարեղս բանի զիմաստութիւնն զօրացուցանել: Բայց ես ձեռ եմ և ընդ երկայն կենաց անցի ժամանակ, աշխա-

«Բայց թէ ասիցէ որ, պարտ է մեզ զասացեալսն մեծին Սահակայ ի Պարսից հրապարակախօսութեանն գրել՝ գիտացէ... Զի և ես այր եմ ծերացեալ եւ

Խալաթյանցի հողվածի 534 էջում հիշատակված № 216 ձեռագիրը, թվում է, վրիպակ է և պիտի լինի № 217:

⁵ Մեր համադրած օրինակները ներկայացնում ենք աստղանիշով: Ի դեպ՝ «Ի Բասիլիոս Կեսարացի» դամբանական ճառի հրատարակության առաջաբանի Նազիանզացի-Խորենացի ընդհանրության օրինակներից երկուսը (առաջինը և երրորդը, տե՛ս KB, II, էջ 160) առկա են Գր. Խալաթյանցի մոտ (հմմտ. «Արարատ», էջ 532, 535): Այդ իրողությունը վրիպել է մեր ուշադրությունից:

⁶ Հմմտ. ՆՀԲ, Ա, 227, «Քննասէր», էջ 56՝ զժառայս + մեղաց

⁷ Հմմտ. ՆՀԲ, էջ 227՝ ձիոյ

տեղա ի գտանել զաստուծոյ զհաւնոյսն ի ձեռն նշմարտութեան խորհրդոցն» (էջ 748բ, հմմտ. ձեռ. № 946, էջ 143բ):

Հմմտ. «Ի Բասիլիոս կեսարացի»
(KB, II, էջ 216)

«...վասն զի ի քեզ վստահանալով յազազս քո զբանս հաստատեցի: Ապա թէ հեռի եւ յոյժ ի բացեայ յուսոյն, զի՞նչ պարտ է ինձ կրել ծեռութեամբ եւ հիվանդութեամբ, եւ քո անձկով հաշեցելումս...» (Դամբ., 27):

«Ի ժողովողն»
Ձեռ. № 1500

«Զի՞նչ պանունանացն յայնցանէ բարի իցէ և՞ կամ ո՞ր օգուտ ի՞նչ բաղում բանիցն, ուր շատխօսութեանն հոսանք իբրև յաղբիւրէ՞¹⁰ դիմեն յանսգաութենէն» (էջ 745բ):

Հմմտ. «Առ Եւնովիացիս»

«Յաղագս այդպիսեացդ շատխօսութեան և պանունեալ ընդիմամարտութիւն...»* (էջ 803բ):

«բայց որպէս ես ասեմ՝ շատխօսութիւն և բանդագուշանաց...»* (էջ 804բ):

«յԱրանասիոս եպիսկոպոս Աղէքսանդրացի»

«և շատխօսութիւն ուսումն կարծեցաւ» (էջ 776բ):

«Յաղագս սուր հոգոյն»
Ձեռ. № 60 (ԺԴ դ.)

«ամարմնոցն հոյլք անբան և շատախօսութեան անգունդք...»* (էջ 72ա):

հիւանդոտ և անպարապ ի թարգմանութեանց, և զերագելն միայն խոկացի... զի և քո կամքդ կատարեսցին, և ես նորոպրեցայց ի քոց հարկեցուցանող բանից և աղաչանաց» (էջ 353):

«ուր շատխօսութեանն հոսանք իբրև յաղբերէ դիմեն...» (էջ 249):

⁸ «Արարատ», էջ 533՝ և]

⁹ «Արարատ», էջ 533, «Արմ. Արշակիդ», էջ 69՝ ի] է

¹⁰ «Արարատ», էջ 533, «Արմ. Արշակիդ», էջ 70՝ յաղբերէ

«Պատասխանի յաղագս ի ձեռնադրութիւն
անհաւանութեան եւ հրաժարելոյ»
Ձեռ. № 1500 (1283 թ.)

«...որո՞վ սպառազինութեամբ առ ի շա-
րին խարդախութիւնս զինեցայց, ո՞ր
Մուսէս այսմ յաղթեցէ... ո՞ր Յեսուս
յետ նորա զօրավարութեամբ աստուա-
ծաին պատերազմացն հանդերձ մէք
պատերազմեսցի...¹¹ ոչ ևս¹² և Յորո-
բուլամ...» (էջ 771ա):

«բայց զի՞նչ արդօք¹³ ասիցէ որ վասն
սնափառութեան և կամ վասն իշխա-
նասիրութեան զանիրաւութիւն ի բար-
ձունս խօսողացն... ո՞չ ընդդէմ [Մ]ուսի-
սի, այլ ճշմարտութեան զինեցելոց և ա-
ռողջութեան վարդապետութեան հակառակ
յարուցելոց, որք երրորդ մասինն յա-
ղագս¹⁴ անխրատութեան և որ զհետ
նորին երթան խրատութեան յախուռն
ամենայն բանիւ դիմեն վարազական
ախտին և կոխեն զգեղեցիկ մարգա-
րիտս ճշմարտութեան, որք միանգամ և
ոչ մի ինչ ինքեանց կարծիս բերեն ...
այլ երբեմն յայլմէ դանդաշեալք¹⁵ և
շրջեալք և ամենայն բանիւ քակտեալք
և կոխեալք յոլոլովս փոփոխեն վարդա-
պետս և բազում գիրս, որպէս փոշի
հողմովք դիւրագոյն ի բաց անկեալք...»
(էջ 767ա):

«Ո՞վ անբանութեանս. առ ամենայն բան
նմանապէս դժարին և շար օրինակ
ինքեանց գրեն զայն, զի¹⁶ ծիծաղելն
զմեք և¹⁷ զարհամարհելն իբրև զանհաս-
տատնով և որ ոչ¹⁸ ինչ առողջագոյնս

«Զի ոչ որպէս ի հնումն ժողովուրդն այն,
այլ առաւել մերս է թշուառութիւն: Վասն
զի Մովսէս բարձեալ լինի, և Յեսուս ոչ
յաջորդէ՝ առաջնորդել յերկիրն Աւետե-
աց: Ռորովամ մերժեցաւ յիւրմէ ժողո-
վըրդենէն...» (էջ 360):

«Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւն ընդդէմ
առողջ վարդապետութեան հակառակ յա-
րուցելոցն, որք ամենայն բանիւ քակ-
տեալք և քայքայեալք՝ յոլոլս փոփո-
խեն վարդապետս և բազում գիրս» (էջ
362):

«առ ամենայն բան նմանապէս դժուա-
րին, և շար օրինակ անձանց գրեն զայն՝
զծիծաղելն զմեօք և զարհամարհելն
իբրև զանհաստատնով, և որ ինչ պի-
տանացու ունիցի արուեստ» էջ 362):

¹¹ «Արարատ», էջ 537, «Հանդէս ամսօրեայ», էջ 28՝ պատերազմեսցէ

¹² «Արարատ», էջ 537՝ ևս]

¹³ «Արարատ», էջ 538՝ արդօք]

¹⁴ «Արմ. Аршакиды», էջ 142՝ յաղագս]

¹⁵ «Արարատ», էջ 539, «Հանդէս ամսօրեայ», էջ 29—30՝ դանդաղեալք

¹⁶ «Քննասէր», էջ 62, «Հանդէս ամսօրեայ», էջ 29—30՝ զի], զծիծաղելն

¹⁷ «Արարատ», էջ 539՝ և]

¹⁸ «Արարատ», էջ 539, «Արմ. Аршакиды», էջ 142՝ ոչ]

ունիցի, և դ՛աւատովն դանցանեն անհաննարարար յասողացն ի բանս...» (էջ 767ա)։

«Յիւնքն եւ ի հայրն եւ ի ժողովուրդն
այատասխանի յետ ձեռնադրութեան
իւրոյ երիցութիւն»

«Մին պատուէ զփախուստն և զլերինս
և զամայութիւնս և զհանդարտութիւն
զհոգոն¹⁹ և զմարմնո և զմտացն յինքեանս
երթալ զնալ և անդրէն դառնալ ի
սգաութեանց, որպէս զի խօսիցի առանց
աղտոյ ընդ աստուծոյ...» (էջ 774ա)։

«Եթէ սլարտ իցէ զՍողոմոնին ասել
պսակել, զհօտս տարակուսեալ և²⁰ ի
վայր անկեալ տեսանեմ, որքան լի
տրմութեամբ և տխրանօք, ոչ ևս ի տեղոջ
դալարոյ հանգուցեալ և ոչ ի ջուրս
հանգստեան սնեալ՝ խնդրէ գահավիժու-
րիւնս և ամայութիւնս...» (էջ 786բ)։

«ՅԱրանասիոս եպիսկոպոս Աղէֆ-
սանդրացի»

«Եւ երէ ախորժես՝ բանին զքաջահա-
նոյն ի բանին... առաւելեաց» (էջ 775բ)։

«Այսմ կատաղութեանս սկիւրն արար Ա-
րիոս... որ և դատաստան ետ զանարգել
լեղւոյն²¹ ի գարշելի տեղիսն ընկալեալ
զսատակումն» (էջ 776բ)։

«Մին համակամ և աթոռակից, իսկ միւս
ընդդիմափառ²² և հակառակաբոռ, և
մին դանուռն, բայց միւսն ճշմարտու-
թիւն ունէր զփոխանորդութեանն»²³ (էջ
776ա)։

«Սիրեաց զլերինս և զամայութիւն և
զհանդարտութեամբ մտաց յինքեան կե-
ալ, որպէս զի խօսեցի ընդ Աստուծոյ
անդրադապէս» (էջ 242)։

«Ոչ ևս տեսանեմ զբանաւոր քո հօտ ի
վայրի դալարոջ և ոչ ի ջուրս հան-
գստեան սնեալ..., այլ ցրուեալ անա-
պատաց և գահավիժութեանց» (էջ 358—
359)։

«Այլ քէ ախորժես առասպել՝ և Շա-
միրամ քար առաջին քան զնիրէ» (էջ
56)։

«որ ըստ արժանեաց իւրոց ամբարիշտս
այս Արիոս ի գարշելիսն ընկալաւ զսա-
տակումն» (էջ 239)։

«տուեալ յաթոռ եպիսկոպոսապետու-
թեանն զայլ ոմն ասորի, Շամուէլ ա-
նուն, զի լիցի ընդդիմափառ մեծին Սա-
հակայ և հակառակաբոռ» (էջ 350)։

¹⁹ «Արարատ», էջ 533՝ զհոգւոյ, «Արմ. Аршакиды», էջ 67՝ զհոգւոյ

²⁰ «Արարատ», էջ 536, «Հանդէս ամսօրեայ», էջ 28՝ և]

²¹ «Քննասէր», էջ 57, «Արարատ», էջ 533, «Արմ. Аршакиды», էջ 65՝ լեզուայն

²² «Արարատ», էջ 535՝ ընդդիմափառ (հավանաբար վրիպակ է)

²³ «Արարատ», էջ 535՝ զփոխանորդութիւն

«Ո՞ր որ յԵրեմիաս ողբացէ զմեր զը-
խանակութիւնս և զխաւարս, որ միայնն
գիտէր հաւասարեցուցանել զողբս ախ-
տիցն...» (էջ 776բ):

Հմմտ. «Ի Բառիլիոս Կեսարացի»
(KB, II, էջ 217)

«...բայց զմեզ ով գովեսցէ յետ քո
զկեանս լքանելով»* (Դամբ., 29):

«Ի Կեսարիոս եղբայրն իւր»
Ձեռ. № 4234 (1307 Թ.)

«Եւ յորժամ հակառակ Պարսից զնա ի-
րաւունքն գեղեցկապէս զինեցին, եկն առ
մեզ փախստական երանելին...» (էջ 18բ):

«Ոչ զարդարի Պղատոնի և Արիստոտե-
լի և Պիլոտոնի և Դեմոկրիտեա ոմամբք²⁴
...որք ի պանծալի նեմարանէն են և յԱ-
կադիմեայ» (էջ 23ա):

Հմմտ. «Ի Մաքսիմոս իմաստասէր»
«Վասն այսորիկ զԱրիստոտելականս և
զԱկադիմացիսն և զպանծալի նեմա-
րանն...» (էջ 130բ):

«Ի քոյրն իւր»
Ձեռ. № 4234

«Եւ յիս սարսափումն²⁵ իմն ի ներքս
ընթանա և արտօւր միանգամայն յիշե-
լով զսքանչելիսն» (էջ 35բ):

Հմմտ. «Պատասխանի յազագս ի
ձեռնադրութիւն անհասանութեան
և հրաժարելոյ
«Լուայ և ձայնս ոմանս ի յԵրեմիայէ

«Ո՞վ մեզ յայսոսիկ նառակցէ հաւասա-
րելով տրամութեանս, և օգնեսցէ ախ-
տակցելով ասիցս... Չարթի՛ր Երեմիաս,
զարթի՛ր և ողբա՛ հանդերձ մարգա-
րէանալով որ ինչ թշուառացարս և որ
ինչ թշուառանալոցս եմք...» (էջ 363):

«Եւ յորժամ զնա ընդդէմ Պարսից իրա-
ւունքն զինեցին, և անցեալ ընդ Կիւլի-
կիայ հասանէր ի Միշազետոս» (էջ 271):

«առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ
զմեզ առաքեցին յԱղեքսանդրիայ՝ ի լե-
զու պանծալի, ի ստոյգ յօդանալ նեմա-
րանին վերաբանութեան» (էջ 343):

«Ձմտաւ զայսոսիկ ածելով՝ հառաչումն
յիս ի ներքս ընթանայ և արտօւր, և
կամեցուցանէ բարբառել բան ախրական
և սգաւոր» (էջ 362):

²⁴ Ոմամբք + «և Հերակլիտա և Անաբազորի, Կլէանթեա և Եպիկուրացոցն և ոչ զի-
տեմք որովք ոմամբք» հատվածը, որ ունի № 4234 գրչագիրը, Խալաթյանցի հրատա-
րակման մեջ բացակայում է (տե՛ս «Արարատ», էջ 535):

²⁵ Ձեռագրում՝ սարսափումն: Ըստ № 1500 ձեռագրի (էջ 786ա) կարդում ենք սար-
սափումն:

տխրական և սգաւոց, որովք յամա-
յանալ քաղաքին Երուսաղէմացոց ող-
բայր»

«Ի Բասիլիոս Կեսարացի»

(ԿԵ, II, էջ 165, 180, 190, 201, 206,
216)

«Եղչերուք... յոյժ քաջամեծք, և սաստ-
կապէս դէրք» (Դամբ., է):

«Ոչ գողանայր զիշխանութիւնն և և ոչ
յարշտակէր և և ոչ զհետ ընթանայր
զսպառուսյն, այլ պատիւն զկնի դայր»
(Դամբ., ԻԸ):

«Վտանդեալ լինէր մանուկ քագաւորին»^{*}
(Դամբ., ԾԵ):

Հմմտ. «նոյն և զմանուկ քագաւորին
հարկանէր»^{*} (Դամբ., ԾԵ):

«Երեւադոյնս նաւէր ընդ կենցաղոյս
ծով» (Դամբ., ԿԱ):

Հմմտ. «Երեւապէս գեր ի վերոյ քան
զհերձուածողսն նաւելով...»

«Դագաղանան լեզուք շարք և անաւ-
րէնք» (Դամբ., ԿԸ):

«Եթէ ինչ արդեալք տացուք զովորեանց
բանից արժանաւոր»^{*} (Դամբ., ԶԳ):

Հմմտ. «Ի Կեսարիոս Եղբայրն իւր»
Ձեռ. № 4234 (1307 թ.)

«Եթէ այսպիսեաց արդեք ծնողաց այս-
քանեաց զինքն ետ զովորեանցն արժա-
նաւոր»^{*} (էջ 14ա):

«Առ Եւնոմիացիս»

Ձեռ. № 1500 (1283 թ.)

«Եւ պատշաճ վարկանին²⁶ դամենայն
հրապարակսն²⁷ շուրջանակի հնչեցուցա-

«Պեղեալ երկուս հորս յոյժ քաջախոս և
սաստկապէս լայնս» (էջ 296):

«որք ոչ զպատիւն յինքեանս ձգէին, այլ
պատիւն զհետ նոցա ընթացաւ» (էջ
221):

«զհէ՞քն իմ մանուկ և քագաւոր» (էջ
362):

«Թերեակի ընդ խորս դիւանին նաւալ՝
անցար...» (էջ 344):

«Դագաղացան մոգուցն լեզուք» (էջ 351):

«ամենեցուն քան զքեզ նախագունիցն
ճանաչիս վեհագոյն, և բարձրագունից
արժանաւոր զովորեանց» (էջ 6):

«այլ յաղագս փառաց մարդկայնոց, և
ճայթեցուցանելով հնչեցուցանեն ի լսե-

²⁶ «Արարատ», էջ 534, «Арм. Аршакиды», էջ 70՝ համարիմ

²⁷ «Արարատ», էջ 534, «Арм. Аршакиды», էջ 70՝ հրապարակն

նել այսպիսի²⁸ բանիւք զամենայն գինարքուն զկծեցուցանել շատխաաութեամբ և սղճատանօք» (էջ 803բ)։

Հմմտ. «ի սգի երկրաշափութիւն և ի գինարքուն արտասուք»* (էջ 804ա)։

«Պատասխանի յաղագս ի ձեռնադրութիւն անհաւանութեան և հրաժարելոյ»

«ի հրապարակս, ի գիներքուն, ի խրատութիւնս, ի սուգս»* (էջ 770բ)։

«Յաղագս աստուածարանութեանն»

«իբր ի գինարքուն հասարակաց բնութիւնս»* (էջ 825ա, հմմտ. ձեռ. № 60, էջ 83ա)։

«Ի մարգարէական բանն»

«Պատուեա՛ զբնակցութիւնն, պատկանեա՛ ի սկսբնատպէն» (էջ 832ա)։

«զկատարելագոյն պատնառն յետոյ հատուցում, յորժամ յաղագս ոչ գրեցելոց խօսիցիմք»

«Առ Արիանոսս»

«Կեամք այսպէս պարզարար և անպանունարար» (էջ 827ա, հմմտ. ձեռ. № 60, էջ 91բ)։

«Որպէս կամք են ասել իմոյ բանի» (ՆՀԲ, Ա, 1043)։

«Աշակերտք հեղգ առ ի²⁹ յուսումն և փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զդտեսութիւնն աստուածարանք» (ՆՀԲ, Ա, 321)։

«Ի բանս և ի հաւասարեցուցիչն»
Ձեռ. № 4234 (1307 բ.)

«Եղիցուք մաքուրք արարչին, պատուեցումք զպատկերն, պատկանեցումք ի կոչմանէն, փոխադրեսցուք զկեանսս» (էջ 140բ)։

լիս մարդկան.. և զկծեցուցանեն զամենայն գինարքուն և զհրապարակս» (էջ 249)։

«պատուեաց զպատկերն, պատկանեաց ի կոչնականէն» (էջ 355)։

«զորոյ զպատնառն յետոյ հատուցուք» (էջ 16)։

«չրջելով անպանունարար և առանց անելորդաց» (էջ 234)։

«որպէս կամք են իմոյս ասել բանի» (էջ 220)։

«Աշակերտք հեղգք առ ուսումն և փոյթք առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն աստուածարանք» (էջ 364)։

«պատուեաց զպատկերն, պատկանեաց ի կոչնականէն, փոխանորդեաց զկեանսն» (էջ 355)։

²⁸ «Արարատ», էջ 534, «Արմ. Аршакиды», էջ 70՝ այնպիսի

²⁹ «Արմ. Аршакиды», էջ 143՝ ի], ուսումն

«Որդիք մարդկան, մինչև յե՞րբ³⁰ յան-
բասիրտք, նախաշաղկեմ առ ձեզ ի մե-
ծաձայնէն Դաւթայ, ընդէ՞ր սիրէք զճան-
րութիւն և խնդրէք զստութիւն»³¹ (էջ
139բ)։

Հմմտ. «Ի Կեսարիոս եղբայրն իւր»

«Որդիք մարդկան, վասն զի փոփոխի
առ ձեզ բանս, մինչև յե՞րբ ծանրասիրտ
և թանձրացեալ մտօք, ընդէ՞ր սիրէք
զճանրութիւն և հայցէք զստութիւն» (էջ
24ա)։

«Խաղաղական երկրորդ»

Ձեռ. № 60 (ԺԴ դ.)

«Որդիք մարդկան մինչև յե՞րբ էք խըս-
տասիրտք, ընդէ՞ր սիրէք զնանրութիւն և
խնդրէք զստութիւն»* (էջ 143ա)։

«Առ Յուլիանոս քաղաւոր»

Ձեռ. № 4234 (1307 բ.)

«Աւրէնք են թագաւորականք... բայց
Հռոմայեցոց և³² յոյժ³³ ի փութալեացն
պատկերօք և³⁴ և բազմամարդութեամբն³⁵
սլատուել զթագաւորս։ Քանզի ոչ բա-

«Արք Արամեանք, մինչև յե՞րբ էք ծան-
րասիրտք, ընդէ՞ր սիրէք զճանրութիւն և
զանաստուածութիւն» (էջ 247)։

«...զՏիրան արձակէ յիւր աշխարհն և
տայ զիւր պատկերն նկարեալ ի տախ-
տակս, յորում և ի դիւաց զոմանս ընդ
նմա. և հրամայէ յեկեղեցւոջ կանգնել

³⁰ «Արարատ», էջ 533, «Արմ. Аршакиды», էջ 69՝ ցե՞րբ + էք։ Նորայր Բյուզան-
դացին (տե՛ս «Քննասէր», էջ 57) և Գրիգոր Խալաթյանցը («Արարատ», էջ 533,
«Արմ. Аршакиды», стр. 69) Խորենացու նմանութեամբ կապակցութիւնս կարդում են
«մինչև յե՞րբ էք» ձևով։ Սակայն նշված հատվածը առանց օժանդակ բայի ունեն նա-
զիանդացու ճառի հնագույն ձևագրերը (Հմմտ. ձեռ. № 1500, էջ 854բ)։

³¹ Այս հատվածի կապակցութեամբ Գր. Խալաթյանցը գրել է. «Նոյնը տե՛ս և Սաղ-
մոս Դ, 3, որ ունի սակայն «խստասիրտք» փոխ. Գր. Աստուածաբանի «ծանրա-
սիրտքի» («Արարատ», էջ 533)։ Պարզվում է, որ Սաղմոսից քաղված նույն հատվածը
առանց նշված բառական տարբերութեան պահպանվել է նազիանդացու մեկ այլ՝ «Խա-
ղաղական երկրորդ» ճառում։ Փաստորեն նույն միտքը կրկնվում է նազիանդացու երկր-
տարրեր ճառերում։

³² «Արարատ», էջ 534, «Արմ. Аршакиды», էջ 81՝ և]

³³ «Արմ. Аршакиды», էջ 81՝ յոյժ

³⁴ «Արարատ», էջ 534, «Արմ. Аршакиды», էջ 81՝ և]

³⁵ «Արարատ», էջ 534, «Արմ. Аршакиды», էջ 81՝ բազմամարդութեանն։ Գ. Խա-
լաթյանցը գտնում է, որ «բազմամարդութիւնը» Խորենացին փոխել է եկեղեցի»։ Հռոմա-
րենում առաջին դեպքում ունենք «δημοσίας» (տե՛ս «δημοσίαις τιμαῖσθαι τοὺς βασιλεύον-
τας», PG, t. 35, էջ 605), երկրորդ հատվածում՝ «δήμοις» (տե՛ս «δήμοις καὶ πόλεσι»,
PG, t. 35, էջ 608) և երկու դեպքում էլ նշանակում է ժողովրդական, հասարա-
կական, պետական (DPC, I, էջ 360)։

ւականք պսակքն և թագն և ծիրանեացն ծաղիկն³⁶... այլ պարտ վարկանին և գերկրպագութիւնն ևս ի նոցանէ... Իսկ նա զի՞նչ հնարէր և կամ զի՞նչ քրիստոնէից հաստատութեան կացուցանէր նենգութիւն... և ի մի ածէր զօրէնս Հռոմայեցոցն և զկոոցն երկրպագութիւն: Եւ յաղագս այնորիկ առ պատկերսն մերձ գրէր զդէսն և իբրև զայլ ինչ ի սովորական գրեցելոցն առաջի դնէր բազմամարդութեանն և քաղաքաց...» (էջ 172բ—173ա):

«Եթէ ոչ գեղեցկապէս կերակրեաց արեամբն այնուիկ³⁷ և վիրան, զոր ի փորոտիսն ընկալաւ» (էջ 177ա):

Հմմտ. «և կէսք ցանէին ի վերա փորոտեացն...»* (էջ 176բ):

(Ձեռ. № 1500 (1283 թ.))

«... զի և ոչ ունէր իսկ բնութիւն ինձ ի բաց դնել զխայտուցս և կամ երոպացոյն զսեռութիւնն և կամ հուր զայրելն, կամ շարն զմարդատեցութիւնն՝ ի ըսկըզբանն մարդասպան հանդիպեալ և կամ զայն շարութիւն, որով հակառակ մեզ դիմեաց, այլ որպէս ի յաղագս գետնառուծուն է բան՝ ամենայն դիւրաւ լինել և զամենայն փոփոխել և առնուլ զգոյնս, բայց ի միոջէ՝ ի սպիտակութենէն...» (էջ 862ա):

«Եւ եթէ հանդերձ արուեստիւ զինիցի և հաւանեցուցանելովն զբռնութիւնն գուլնիցէ, իբրև կարթիւ շուրջ զգէշն պատելով...» (էջ 861բ):

«Վիշապացն ահաւոր բերանաբացութեամբք շնչեցեալք և ձգմամբ փողփողեալք մանուածովքն խայտարղէտ անկուածովքըն...» (էջ 862բ):

յարեկից կուսէ. ասելով, թէ որք միանգամ ընդ Հռոմայեցոց տէրութեամբն հարկին՝ դոյնպէս առնեն: Զոր յանձին կալեալ Տիրանայ՝ առեալ բերէ, ոչ ածելով զմտաւ, թէ խարէութեամբ՝ դիւաց երկրպագին պատկերք» (էջ 271—272):

«Յետ այսր ամենայնի ամբարիշտն Յուլիանոս ըստ արժանի խորհրդոցն վէր ընկալեալ ի փորոտիսն՝ սատակի ի Պարսս» (էջ 275):

«Բայց զոր աստուածային բանն առ Երայեցիսն անհնարին համարեալ շարութեանն փոփոխումն՝ նոյն և աստանօր պատահի. ընձու անկարելի է զխայտուցսն փոխել, և երովպացայ զթխութիւն, նոյնպէս մարդոյ ամպարշտի՝ դրարսն» (էջ 236—237):

«Բազմադիմի ջանայր շիջուցանել զհաւատ քրիստոնէութեան, բայց ոչ բռնութեամբ հաւանեցուցանէր, այլ խորամանկեալ հնարէր, զի... դեք երկրպագեսցին» (էջ 271):

«Բայց զվիշապացն մանուածս, ահագին բերանաբացութեամբ ուռուցեալ³⁸ ի փըշմանէ օդոյն» (էջ 303):

³⁶ «Арм. Аршакнды», էջ 81՝ ծաղիկք

³⁷ «Արարատ», էջ 535՝ այնուիկ

³⁸ Հմմտ. ՆՀԲ, Ա, 483՝ ստուցեալ

Հմմտ. «Ձի գորինակ վիշապի շարժեցելոյ մանուածին ոմանք անտէն արագագոյն ամբառնան...» (ձեռ. № 4234, էջ 181ա):

«Առ Յուլիանոս» [բան երկրորդ]

«Եթէ նշմարտութիւն այսորիկ ից են և եթէ առասպել, որ ցուցանիցէ զնշմարտութիւնն ստեղծմամբք» (էջ 874բ):

«Անհաւատասցի մի ոք, քանզի և ոչ այլոց աստուծոյ դաւրութեանցն» (էջ 870ա):

«Իրրե տեսի ևս դայրն, վաղվաղակի ասացի, որպիսի շար հոռմայեցոցն սնանի» (էջ 872ա):

Եթե փորձենք դասդասել Նազիանզացու ճառերից քաղված հատվածները ըստ գիրք-ժողովածուների, ապա պարզվում է, որ օրինակների կան նրա բոլոր գրքերից: «Յաղթեցայ» և «Առ ոքս» ժողովածուները հանդես են գալիս վեցական բնագրերով, «Որք Եգիպտոսէն են» գիրքը՝ չորս, իսկ «Քրիստոս ծնեալը»՝ երկու: Արձանագրելին այս պարագայում ճառերի նման փոխհարաբերումը չէ, այլ այն, որ Խորենացու «Հայոց պատմության» հետ ընդհանրական կետեր ունեն Նազիանզացու բոլոր գրքերը: Նմանությունների բնույթն ինքնին հնարավորություն է տալիս պնդելու, որ բոլոր դեպքերում դրանք առաջացել են Նազիանզացու ճառերի հայերեն թարգմանություններին ծանոթ լինելու ճանապարհով և ոչ թե համապատասխան հունարեն բնագրերը ձեռքի տակ ունենալու հետևանքով: Մաշտոցի թարգմանիչ-աշակերտների համար հունարենից օգտվելու հնարավորությունն ինքնին հասկանալի էր: Սակայն Խորենացու վերոբերյալ նմանությունները հունարենի ճանապարհով բացատրելու դեպքում պիտի ենթադրել, որ Նազիանզացու նշված տասնութ ճառերի թարգմանիչը (կամ թարգմանիչները) և Խորենացին միմյանցից բոլորովին անկախ կիրառում են նույնաոճ արտահայտություններ և բառեր: Սա դժվար, նույնիսկ անկարելի ենթադրություն է: Նազիանզացու ճառերի թարգմանություններից քաղված այդ կարգի օրինակները կարելի է բաժանել երկու խմբի:

«Արդ՝ զայսուսիկ այլ ոք թէպէտ առասպելս, թէպէտ նշմարտութիւն հաշուեալ համարեսցի՝ բայց որպէս ես հաւանեալ եմ, բաղում ինչ նշմարիտ է (էջ 24):

Հմմտ. «Մի՞ արդեօք յունական պերճ և ողորկ առասպելին իցեն հանդերձ պատճառաւ, որք զնշմարտութիւն իրաց այլարանարար յինքեանս ունին թաքուցեալ» (էջ 89—90):

«Մի ոք անհաւատասցի, քանզի և մեղէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի» (էջ 120):

«Բայց Երուանդայ զմտաւ ածեալ, թէ որպիսի շար նորա թագաւորութեանն սնանի ի Մարս» (էջ 163):

ա) Բառեր, որոնք թարգմանական և սկզբնավորման շրջանի հայոց մատենագրության մեջ եթե հնագույն օրինակները չեն, ապա գոնե եղած հին վկայություններից են (վատքարազգի, շատխոսութիւն, ամայութիւն, դալար, գահավիժութիւն, գարշելի, տխրական, սաստկապէս, գովութիւն, գինարբուֆ, անպանունարար և այլն):

բ) Կան բառեր էլ, որոնք Նոր հայկազյան բառարանին ծանոթ են կամ միայն խորենացու Պատմութեամբ, կամ նաև հետագա շրջանի հայինքնուրույն և թարգմանական մեկ-երկու հուշարձանի վկայութեամբ: Սակայն այդ նույն բառերը համապատասխան կապակցություններով պահպանվել են Նազիանզացու «Յաղթեցայ» և «Որք Եգիպտոսէն են» գրքերում: Այս դեպքում արձանագրելին այն է, որ նշված ժողովածուների օրինակներն ավելի հին են, քան խորենացու և հետագա մատենագիրների երկերից քաղված օրինակները: Սակայն ներկա քննության համար կարևորը Նազիանզացու թարգմանություններից քաղված օրինակների հին լինելը չէ, այլ այն, որ խորենացու «Հայոց պատմությունից» քաղված համապատասխան արտահայտությունների հիմքը Նազիանզացու «յԱթանասիոս եպիսկոպոս Աղէֆսանդրացի» և «Առ Յուլիանոս քաղատր» ճառերն են: Բայց որովհետև բառարանագիրները ձեռքի տակ չեն ունեցել սույն ճառերը (և առհասարակ՝ «Յաղթեցայ» և «Որք Եգիպտոսէն են» գրքերը), ուստի և որոշ բառերի վկայակոչության սկզբնաղբյուրը, ասվեց, համարվել է խորենացու Պատմությունը կամ ուշ շրջանի այլ երկ: Ահա այդ բառերից մի քանիսը՝ հունարեն համապատասխանություններով հանդերձ.

1. Ընդդիմափառ (ՆՀԲ, Ա, 769):

Նազիանզացի

Խորենացի

«Իսկ միւս ընդդիմափառ և հակառակաթոռ» (ձեռ. № 1500, էջ 776ա):

«զի լիցի ընդդիմափառ մեծին Սահակայ և հակառակաթոռ» (էջ 350):

Բնագիր՝ „τὸ δὲ ἀντιδρῶν καὶ ἀντίθρονον“ (PG, t. 35, էջ 1089):

2. Հակառակաթոռ—սույն բառի բացատրության համար ևս բառարանագիրների ընտրած օրինակներից առաջինը ընդդիմափառ բառի առիթով վկայված խորենացու նույն հատվածն է, իսկ երկրորդը՝ Թովմա Արծրունու Պատմությունից առնված նմանօրինակ մի կիրառություն:

3. Փոքոտի—ի տարբերությունն նախորդ օրինակների, սույն բառի բացատրության համար բառարանագիրների վկայությունները շատ են:

կարևորն այն է, որ խորենացու վկայությունը նորից կապվում է Նազիանդացու հետ, թեև կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» գրքից վերցված օրինակը ևս նույնքան համընթաց է խորենացու հետ (տե՛ս նշԲ, Բ, 957): Նկատելի տարբերությունն այն է, որ կյուրեղ Երուսաղեմացու դատափետանքը Արիոսին է վերաբերում, իսկ Նազիանդացու և խորենացու քննադատությունը՝ Հուլիանոսին: Դրանով էլ վերջին երկու հեղինակների կապն ավելի հավանական է: Ահա այդ հատվածները.

Նազիանդացի

Խորենացի

«որ ի փորոտիսն ընկալաւ» (ձեռ. № 4234, էջ 177ա):

«վէր ընկալեալ ի փորոտիսն (էջ 275):

Բնագիր՝ *ἵν' αὐτὰ τῶν σπλάγγων ἐδέξατο* (PG, t. 35, էջ 616):

Փորոտիք—հոգնակին բառարանագիրներին հայտնի է Գրիգոր Նյուսացու «Յաղագս կազմութեան մարդոյ» գործից, որը VIII դարի թարգմանություն է: Նույն բառը միևնույն նշանակությամբ կիրառված է Նազիանդացու «Առ Յուլիանոս թագաւոր» ճառում, հետևյալ նախադասությամբ՝ «և կէսք ցանէին ի վերա փորոտեացն»³⁹, հմմտ. *„τοῖς σπλάγγουσιν αὐτοῦ ἐπιστειραντες“* (PG, t. 35, էջ 616):

4. Բերանաբացութիւնք—սույն բառի բացատրության համար բառարանագիրների ունեցած երկու օրինակներից առաջինը քաղված է խորենացու Պատմությունից, երկրորդը՝ Անանիա Նարեկացու ճառերից: Այսպիսի տեսք ունի Նազիանդացու համապատասխան հատվածի համադրելի մասը.

Նազիանդացի

Խորենացի

«վիշապացն ահաւոր բերանաբացութեամբ շնչեցեալք...» (ձեռ. № 1500, էջ 862բ):

«զվիշապացն մանուածս, ահագին բերանաբացութեամբ ուտուցեալ...» (էջ 303):

Բնագիր՝ *„ὅσα τε ὀραχόντων φρεσῶν χάσμασιν ἱμπνεόμενα“* (PG, t. 35, էջ 588):

Վկայակոչված շորս օրինակների համար էլ, ինչպես տեսնում ենք, հատկանշական է Նազիանդացու բնագրի և թարգմանության հարադատությունը, ինչպես նաև խորենացու քաղումների մերձավորությունը Նա-

³⁹ Ձեռ. № 4234, էջ 176բ:

զիանզացու օրինակներին: Այս կարգի նմանություններին հետամուտ լինելու դեպքում (իսկ դրանք բավական շատ են) հնարավոր է ենթադրել, թե հունարեն այս կամ այն արտահայտությունը հեշտությամբ կարող էր Նազիանզացու ճառերում և Խորենացու Պատմության մեջ նույն ձևակերպումը ստանալ, եթե ենթադրվեր, որ Խորենացին է նշված ճառերի թարգմանիչը: Սակայն այս ուղղությամբ ապացույցներ փնտրելուց առաջ, երբ նայում ենք Նազիանզացու ճառերի թարգմանություններին՝ լեզվական միօրինակությունների տեսակետից, դժվար չէ նկատել, որ դրանք բառագանձի ու քերականական նորմերի առումով տարբեր իրողություններ են: «Առ ուս» և «Յաղթեցայ» ժողովածուների համեմատությունը ցույց է տալիս, որ առաջին գրքի ճառերի թարգմանության լեզվին հատուկ են պարզությունը, հստակությունը, հայերենի նորմերով բառկազմելու հետևողականությունը: Ընդհանուր նկարագրով «Առ ուս» ժողովածուի լեզուն ավելի շատ հիշեցնում է Բարսեղ Կեսարացու «Վեցաւրեայի» հայերենը: Ինչ վերաբերում է «Յաղթեցայ» գրքի լեզվին, ապա այս դեպքում ունենք բոլորովին այլ վիճակ. լեզվաոճական բարդ մտածողությունն ու հունարենի նմանությամբ բառ կազմելու իրողություններն են հատուկ այս շարքի համար: Դրանից հետևում է, թե նշված գրքերը նույն ձեռքով չէին կարող թարգմանված լինել:

Հայագիտության մեջ Խորենացու թարգմանական գործունեության մասին շատ է խոսվել, և դա հասկանալի է այն իմաստով, որ Խորենացին թարգմանության համար ընտրված Մաշտոցի աշակերտներից ամենաերևելին էր իր պատրաստությամբ և կա նրա իսկ վկայությունն այդ մասին. «Ծս այր եմ ծերացեալ... և անպարապ ի թարգմանութեանց»⁴⁰: Հավանաբար այս հանգամանքը նկատի առնելով և մանավանդ Նազիանզացի-Խորենացի ընդհանրությունների իր ունեցած մեկ տասնյակ օրինակների թելադրանքով, Ն. Բյուզանդացին եզրակացրել է. «...բայց ոչ ոք մտաբերած էր ըսել, թե թարգմանիչ Փիլոնի եւ Նազիանզացու է նոյն իսկ Խորենացին Մովսէս»⁴¹:

Եթե հետևելու լինենք նշված մատենագիրների նման տեղիների թվական գերազանցությանը, ապա դրանք այսօր հինգ տնգամ ավելի են, քան Ն. Բյուզանդացու ժամանակ: Բայց, այդուհանդերձ, եղած ընդհանրությունները հիմք չեն տալիս Խորենացուն համարելու Նազիանզացու ճառերի թարգմանիչ: Նախ՝ այդ մասին գոյություն չունի որևէ սկզբնաղբյուր հիշատակություն: Իր ձեռքի տակ եղած աղբյուրներն անուն

⁴⁰ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», էջ 353:

⁴¹ «Քննասէր», էջ 30—31:

առ անուն հիշատակող խորենացին ոչ միայն չի վկայում նման բնույթի տեղեկություն, այլև Գրիգոր Նազիանզացուն վկայակոչում է ընդամենը երկու անգամ՝ հոր առիթով և «զՄակեդոն և զամենայն հոգեմարտս»⁴² մերժող ժողովի կապակցությամբ: Խորենացու Պատմության մեջ առհասարակ բացակայում են Նազիանզացուն գնահատող այն հաղորդումները, որ կան Ղ. Փարպեցու թղթում: Եվ ապա՝ նրա պատմության որոշ ձևակերպումներ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ խորենացին առանձնապես հոգ չի տանում Նազիանզացուն հիշատակելու, թեև առիթը ներկայանում է: Նրա գործերի թարգմանիչը լինելու դեպքում խորենացին հաստատ կիմանար, որ քաղումը Նազիանզացուց է:

Նազիանզացի

«ուր շատխօսութեանն հոսանք իբրև յաղբիւրէ դիմեն յանսգաութենէն» (ձեռ. № 1500, էջ 745բ):

«յուրովս փոփոխեն վարդապետս և բազում գիրս...» (ձեռ. № 1500, էջ 767ա):

«...ոչ գողանայր դիշխանութիւն եւ ոչ յարշտակէր, եւ ոչ զհետ ընթանայր ըզպատուոյն, այլ պատին զկնի դայր» (KB, II, էջ 180):

Խորենացի

«ուր շատխօսութեանն հոսանք իբրև յաղբերէ դիմեն, որպէս ասաց ոմն ի հնոցն» (էջ 249):

«յուրովս փոփոխեն վարդապետս և բազում գիրս, որպէս ասաց ոմն ի հարցն» (էջ 362):

«որք ոչ զպատին յինքեանս ձգէին, այլ պատին զհետ նոցա ընթացաւ, որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» (էջ 221):

Ագաթանգեղոս

«Արդ՝ մարդոյն եղաւ փոքր պատուէր — ի ծառոյն շնաշակել. զի այնու ի մեծ պատիւ ձգեալ հասցէ...»⁴³:

Նազիանզացի-խորենացի ընդհանրությունը ներկայացնող մեզ ծանոթ բոլոր օրինակներից միայն այս երեք դեպքում է, որ խորենացին ակնարկում է դրանց հեղինակի մասին, թեև առաջին երկու հատվածներում եղած հիշատակությունը որոշակի չէ: Համեմատությունը պարզում է, որ Ագաթանգեղոսի անվան հիշատակությունն էլ տեղին չէ, որովհետև քաղումը կատարված է Նազիանզացու «Ի Բասիլիոս Կեսարացի» ճառից: Իրականում ստացվում է, որ խորենացուն Նազիանզացու ճառերի թարգմանիչ ընդունելու դեպքում միաժամանակ պիտի հաշտվի

⁴² «Մովսիսի խորենացույ Պատմութիւն Հայոց», էջ 298:

⁴³ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տիգրիս, 1909, էջ 145 (ընդգծումը մերն է—Վ. Մ.):

այն մտքի հետ, թե թարգմանիչը դժվարանում է հիշել իր թարգմանած տասնութ ճառերից որևէ մեկի խորագիրը և դրանց հեղինակին կոչում է «ի հնոցն» և «ի հարցն» անորոշ եղանակներով և երրորդ անգամ շփոթում Ազաթանգեղոսի հետ:

Արդ, ինչպե՞ս բացատրել Նազիանզացի-Խորենացի քնդհանրությունների (հաճախ՝ բառացի) իրողությունը:

1. Իբրև հոգևոր գործիչ և մատենագիր Խորենացին քաջածանոթ է Նազիանզացու մատենագրական ժառանգությանը, որին նա կարդացել է թե՛ ուսումնառության տարիներին, և թե՛ գործունեության շրջանում: Նազիանզացին պատկառելի հեղինակություն է մեր պատմիչի համար, ուստի իր ունեցած ապրումներին, կատարելիք բնութագրումներին ու նկարագրություններին համահնչուն դրվագները նա փնտրում և դտնում է Նազիանզացու երկերում, քաղում ու վերաշարադրում դրանք: Խորենացին սկզբնաղբյուրների հղումները կատարում է փաստական քաղումներ կատարելիս, պատմական իրադարձություններ նկարագրելիս, մինչդեռ Նազիանզացու գործերից եկողները այդպիսիք չեն:

2. Խորենացին օգտվում է Նազիանզացու հայերեն թարգմանություններից, ուստի հաճախ նրա քաղումները բառացի են և նույնական թարգմանությունների հետ: Բայց և կան դեպքեր, երբ պատմիչը հիշողությամբ է կատարում գրառումը, ուստի դժվարանում է մասնավորեցնել նրա հեղինակային պատկանելությունը:

3. Նազիանզացու երկերի նշանակալի մասը, գեթ այն գրքերը, որոնցից օգտվում են Կորյունն ու Խորենացին, V դարի կեսերին արդեն թարգմանված էին հայերենի, բավականաչափ տարածված էին Հայաստանում ու ճանաչելի, ուստի անհրաժեշտություն չի զգացվել հիշեցնելու, որ այս կամ այն դրվագը նրանից է քաղված: Առհասարակ միջնադարում քաղման բառացի ճշգրտությունն ու պատկանելությունը մատնացուցելը գրական շարադրանքի պարտադիր նորմ չի դիտվել:

4. Խորենացու քաղումները բնագրական երկուստեք ճշգրտումների հնարավորություն են տալիս, որ նկատի պիտի ունենալ թե՛ նրա և թե՛ Նազիանզացու երկերը գիտական հրատարակության պատրաստելիս:

ՆԱԶԻԱՆՁԱՑՈՒ ՃԱՌԵՐԻՑ ԵՎ ԹՂԹԵՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԵՏԱԳԱ
ՔԱՂՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒՅԹԸ

Հայ մատենագրության հետ ունեցած նազիանզացու ճառերի և թղթերի ընդհանրության մեղ ծանոթ բոլոր օրինակների համեմատությունը հնարավորություն է տալիս հաստատապես պնդելու, որ դրանք իրենց բնույթով միանգամայն տարբեր են: Ինչպես տեսանք, նման չեն նույնիսկ սկզբնավորման շրջանի հայ մատենագրության մեջ եղած արտացոլումները¹:

Բոլորովին այլ է հետագա քաղումների բնույթը. կիրառվում է երկու եղանակ՝ մերթ վերապատմվում է ինչ-որ խնդրի շուրջ տված նազիանզացու բացատրությունը, երբեմն էլ հատված առ հատված բառացի քաղումներ են կատարվում նույն մատենագրի ճառերից կամ թղթերից: Առանձին դեպքերում հոգ է տարվում հիշելու ոչ միայն հեղինակի անունը, այլև համապատասխան աղբյուրի խորագիրը:

Սակայն միջնադարյան հղում-վկայակոչումները հաճախ անորոշ են և նշված տեղում նույնությամբ գտնելու ակնկալությունը մեծ չպետք է լինի այն պարզ պատճառով, որ դրանք ընդօրինակողների ձեռքով զանազան փոփոխություններ կրելուց առաջ որոշակի միջամտությունների էին ենթարկվում վկայակոչող մատենագիրների ձեռքով: Այս իմաստով հետաքրքիր է Շիրակացու մի դիտողությունը. «Այդ վկայութիւնս իմն առնուն ի նորա (Գր. նազիանզացու—Կ. Մ.) ասացուածից եւ ըստ իւրեանց կամացն ձեւացուցանեն...»²:

Միաժամանակ պիտի նկատել, որ միօրինակ չեն նաև հղումների բնույթը. առանձին ուղղակի հղումներին զուգահեռ պատահում են պաշտպան ընդհանուր, ավելի ստույգ՝ անորոշ ցուցումներ, որոնք ոչնչով

¹ Եթե «Վարք Մաշտոցի» ընդհանրության եզրերը յուրաքանչյուր համեմատության դեպքում մեկ-երկու բառական միավոր ընթերցումից այն կողմ շանցավ, ապա Խորենացու Պատմությունից հանված և՛ օրինակներն են շատ, և՛ ընդհանրություններն են ընդգծված:

² Ա. Արահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 287:

չեն կարող նպաստավոր լինել այս կամ այն վկայության սկզբնաղբյուրը գտնելու հարցում: Այսպես, օրինակ, Անանիա Շիրակացին երբեմն հղման եղանակ է ընդունում «երանելի Աստուածաբանն Գրիգոր յիշէ» (էջ 2) արտահայտությունը, Կոմիտաս կաթողիկոսը՝ «որպէս Նազիանզունն Գրիգոր Աստուածաբանն ասէ»³, Ներսես Շնորհալին՝ «յայլում վայրի ասէ այսպէս» կամ՝ «ասէ սուրբ Աստուածաբան»⁴, Գրիգոր Տղան՝ «այլուր ասէ»⁵, Հովհաննես Երզնկացին՝ «որպէս և ասէ սուրբ հայրն ... Գրիգորիոս»⁶ և այլն: Պատահում են դեպքեր, երբ միևնույն քաղվածքի համար իբրև աղբյուր հիշատակվում են տարբեր ճառեր: Այդ կարգի հղման օրինակ է Ստ. Սյունեցու թղթերից մեկում եղած մի հատվածը, որի տպագիր տարբերակում սկզբնաղբյուր է մատնացուցվում Նազիանզացու «Ի սուրբ պասքայ»⁷ ճառը, իսկ ձեռագիր օրինակում՝ «Ի ծնունդն Քրիստոսի»⁸:

Ի վերջո՝ ունենք նաև խորագիր սահմանելու եղանակով հղման օրինակներ: Քաղվածաբար կազմված անանուն մի բնագրում Նազիանզացուց հատված է վկայված՝ «Նորին՝ (ի) յաղագս առափնուրեան բանէն» ձևակերպման տակ⁹: Նույն կերպ է վարվում նաև Վարդան Այգեկցին՝ «Գրիգորի Աստուածաբանի ի Զատուցեալ ճառէն»¹⁰ վերնագրի տակ ընդօրինակելով մի հատված: Հասկանալի է, որ առաջարկվող խորագրերի հետքերով բնագիր փնտրելը անիմաստ կլինի, որովհետև այդպիսիք իրականում չկան: Այդ իմաստով էլ ամենևին զարմանք չպիտի առաջացնի այն փաստը, որ երբեմն դժվար է լինում գտնել առաջադրվող հատվածի բնագիր համապատասխանությունը:

Նազիանզացին քաղվածաբար հիշատակվում է Անանիա Շիրակացու տարբեր ճառերում զանազան առիթներով: Այդ երևույթն իրավացիորեն արձանագրել է Շիրակացու բնագրերի հրատարակիչը¹¹: Սակայն համեմատությունը ցույց է տալիս, որ նշված մատենագիրների գործերում ընդհանրական հատվածները իրականում շատ ավելի հաճախադեպ են, քան դա երևում է սոսկ անվանական հիշատակության փաստից: Ընդ-

³ «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 213:

⁴ «Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ», էջ 250, հմմտ. էջ 309:

⁵ Ձեռ. № 500, էջ 323բ:

⁶ Ձեռ. № 2173, էջ 112բ:

⁷ Հմմտ. «Գիրք թղթոց», էջ 380:

⁸ Ձեռ. № 576, էջ 154ա:

⁹ Ձեռ. № 579, էջ 128ա:

¹⁰ Ձեռ. № 3295, էջ 357ա:

¹¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 168:

հանրության օրինակներ կան Շիրակացու «Սակս բացայայտութեան թուոց», «Ի յայտնութիւն տեառն...», «Ի Զատիկն տեառն», «Առ խոստացեալսն» ճառերում¹² և այլուր¹³: «Հետազա քաղումների» շարքում Շիրակացու թվարկված ճառերը ինքնատիպ վիճակ են ներկայացնում այն իմաստով, որ դրանցում շատ շեն ընդարձակ քաղումների օրինակները: Շիրակացին նազիանզացու ճառերին դիմում է իր այս կամ այն բացատրությունը առաւել հաստատուն դարձնելու նպատակով, այդ պատճառով էլ դրանցից վերցնում է հիմնականում առանձին արտահայտություններ, բնորոշ ձևակերպումներ և ոչ թե նազիանզացու բացատրությունը նույնությամբ ներկայացնում իբրև առաջադրվող խնդրի պատասխան: Աղբյուրագիտական առումով կարևորն այն է, որ կան երկուստեք սրբագրելի բառեր և արտահայտություններ: Արդ՝ հետևենք համեմատությունների ընթացքին.

«Ի նոր կիւրակէն...»
Ձեռ. № 946 (ԺԲ դ.)

«Ձի որպէս առաջին արարածն սկիզբն ի կիւրակէէն առնու՝ յայտ է թէ¹⁴ յայսմանէ եւթներորդ շարաթն լինի հանգիստ գործոյն: Նոյնպէս եւ երկրորդն դարձեալ ի սմանէ¹⁵ սկսանի՝ առաջին լինելով յետ նորա եւ ուրբերեակ¹⁶ յայնցանէ, որք նախրան զնա¹⁷ բարձրագոյն քան զբարձրըն, վասն զի ի վերին կայեանսն բերէ» (էջ 132բ, հմմտ. ձեռ. № 948, էջ 216 ա—բ, ձեռ. № 1500, էջ 741բ):

«Անանիայի հայոց վարդապետի սակս բացայայտութեան թուոց»

«Որպէս ասէ Աստուածաբան՝ Առաջին միայնակն կատարեալ և ծնաւղ կատարեալ տասնեակ տարորոշ թուոյն. զի շարագրելով ծնանի դտասնն և յինքն անդրէն դառնայ: Եւ դարձեալ ասէ՝ զսա առաջին լեալ և ուրբերեակ, մանաւանդ թէ մի և անբակտելի, զի ի վերին կայանսն բերի. մի և անլուծելի, զի ոչ կարաւտանայ փոխանորդութեան տեղի տալ երկրորդի, այլ մշտնջենաւոր կայ և մընայ յերկարածգեալ ընդ էսսն» (էջ 239—240):

¹² Նշված ճառերի համեմատությունը կատարել ենք ըստ Ա. Աբրահամյանի հրատարակության, իսկ «Ի յայտնութիւն տեառն» ճառից քաղված հատվածները միաժամանակ համագրել ենք Ք. Պատկանյանի հրատարակության հետ («Անանիայի Շիրակունույ Մնացորդք բանից», Ս. Պետերբուրգ, 1877): Թեև հիշյալ ճառի նշված հրատարակությունների մայր օրինակը Մաշտոցի անվան Մատենադարանի նույն № 2679 ձեռագիրն է, այդուհանդերձ առկա հրապարակումների մեջ կան տարբերություններ:

¹³ Տե՛ս «Տիեզերագիտութիւն և տոմար», էջ 2, «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ», Վենետիկ, 1881, էջ 9:

¹⁴ Ձեռ. № 948, ձեռ. № 1500՝ թէ]

¹⁵ Ձեռ. № 948, ձեռ. № 1500՝ նմանէ

¹⁶ Ձեռ. № 948՝ ութերեակ

¹⁷ Ձեռ. № 948՝ զսա

«Ի յայտնութիւն տեառն»¹⁸
Ձեռ. № 948 (1196 թ.)

«Եւ զերկնայինսն եւ իմաստքն գործ լինէին բանիւ կատարեալ եւ հոգւով լցեալ, եւ այնպէս գոյացան պայծառութիւնք երկրորդ՝ ըսպասաւորք առաջնոյ պայծառութեանն... Կամիմ ասել՝ եթէ անշարժք են ի շարութիւնն եւ միայն ունին ի բարիսն շարժումն, որ առ աստուած է եւ յառաջինս յաստուծոյ առեալսն, քանզի, որ աստուած է, երկրորդ ի պայծառութեանն է...» (էջ 181ա)։

«Ի մկրտութիւնն»
Ձեռ. № 946 (ԺԲ դ.)

«Զայս ինչ եւ զայս¹⁹ բաղբաղես եւ պատճառես զպատճառս մեղաց։ Մնամ յայտնութեանն Տեառն, յարութեանն Տեառն, աւր է ինձ պատուականագոյն, Պե[ն]տեկոստէին անսամ՝ ընդ Քրիստոսի լուսաւորել լաւագոյն է, ընդ Քրիստոսի յառնել ի յարութեանն աւուր, ըզհոգոյն պատուել զերեսումն եւ ապա զի՞նչ. եկեցէ վախճանն յանկարծակի յաւուր՝ յորում ոչ կարծիցես եւ ի ժամու՝ յոր²⁰ ոչ գիտիցես» (էջ 57բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 733ա)։

«Երիս ծնունդս գիտէ մեզ բանս որ ի մարմնոցն²⁴ եւ ի մկրտութեանն եւ ի²⁵

«Որպէս ասէ հայրն Աստուածաբանից, երկրորդ պայծառութիւն զիմանալեացն դասս, քանզի, որ աստուած է, յերկրորդ պայծառութեան է և երրորդ լոյս զմարդն ասէ յերիս կատարեալ թիւս բարգաւաճեալ, սահմանէ զբանականս» (էջ 241)։

«Անանիայի Երակայնոյ Համաբողի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ»

«Զայս վկայէ եւ Մակարայ Աստուածաբանն Գրիգոր յաղագս յերիս տալնս առնելոյ մկրտութիւնն, ի ճառի մկրտութեանն, բամբասելով զհեղգացեալսն ի մկրտութիւն, ասէ այսպէս։ Զայս ինչ եւ զայս բաղբաղես²¹, եւ պատճառես մեղաց պատճառս, ասես, անսամ Յայտնութեանն Տեառն, Յարութեանն Տեառն, աւր²² է ինձ պատուականագոյն Պենտեկոստէին²³ անսամ, ընդ Քրիստոսի լուսաւորել լաւագոյն է. ընդ Քրիստոսի յառնել Յարութեանն աւուրն. զհոգոյն տալնել զերեսումն։ Եւ ապա զի՞նչ. եկեցէ վախճանն յաւուր յորում ոչ գիտիցես. եւ ի ժամանակի յորում ոչ կարծիցես...» (էջ 284—285)։

«Արդ աղի գիտեայ²⁶ ինձ եւ զայն բան որ ի ճառի մկրտութեանն ասէ այսպէս.

¹⁸ Ճառիս խորագիրը շփոթված է, պիտի լինի՝ «Խաւսք ի ծնունդն Քրիստոսի»։

¹⁹ Ձեռ. № 1500՝ զայս և զայս ինչ զայս

²⁰ Ձեռ. № 1500՝ յորում

²¹ Հմմտ. Պատկ., էջ 6՝ բաղբաղիս

²² Հմմտ. Պատկ., էջ 6՝ որ

²³ Հմմտ. Պատկ., էջ 6՝ Պենտեկոստիս

²⁴ Ձեռ. № 1500՝ մարմնոցն

²⁵ Ձեռ. № 1500՝ ի]

²⁶ Հմմտ. Պատկ., էջ 10՝ գիտեաց

յարութենէ: Եւ յայսցանէ մին գիշերա-
յին է եւ աղախին, եւ ախտաւոր» (էջ
26ա):

«Չայսոսիկ զծնունդս զամենեսեան ին-
քեամբ պատուեալ իմ Քրիստոս երեւի:
Զմի²⁸ փշմամբ առաջնովն եւ կենդա-
նականաւ, եւ զմիւսն մարմնանալովն
եւ մկրտութեամբն²⁹: Եւ³⁰ զմիւսն յարու-
թեամբն, զոր ինքն սկսաւ (էջ 26բ) որ-
պէս եղեւն անդրանիկ ի բազում եղ-
բարս, նոյնպէս եւ անդրանիկ ի մեռե-
լոց³¹ արժանաւոր արարի:

Արդ՝ յաղագս երկուց ծննդոցն³³ առաջ-
նոյն ասեմ եւ վերջնոյն իմաստասիրել
ոչ է մերձակայ ժամուս, բայց վասն
միջնոյս եւ որ այժմ մեզ է հարկաւոր,
որոյ եւ անուանակից է լուսաւորութեանս
աւր իմաստասիրեսցուր: Լուսաւորութիւն
ողուց պայծառութիւն» (էջ 27ա):

«Ի սուրբ պատգայ»
Ձեռ. № 946

«Քանզի փրկութեան շարշարանացն զա-
նունս զայս լիեալ³⁴ ոմանք կարծեցին
եւ ապա հելլենացի արարեալ զձայնն
զփիւրն ի պէ փոխեցին, եւ³⁵ պասքա
զաւր փրկչին անուանեցին, եւ առեալ
սովորութեանն զձայնն հզաւրագոյն ա-
րար³⁶ ընթացուցանելով ի յոլովից լսե-

երիս ծննունդս²⁷ մեզ գիտէ բանս, որ ի
մարմնոյ է, եւ ի մկրտութենէ եւ յա-
րութենէ. եւ զնովիմբ ածեալ ասէ. զայ-
սոսիկ զծնունդս զամենեսեան պատուե-
ալ իմ: Քրիստոս երեւի, զմին³² փշմամ-
բըն առաջնով եւ կենդանականաւ. եւ զը-
միւսն մարմնանալովն եւ մկրտու-
թեամբն, որով ինքն մկրտեցաւ. իսկ
զմիւսն յարութեամբն զոր ինքն սկսաւ,
որպէս եղեւն անդրանիկ ի բազում եղ-
բար, նոյնպէս եւ անդրանիկ լինել ի
մեռելոց արժանաւոր արարի:

Արդ՝ յաղագս երկուց ծննդոց, առաջ-
նոյն ասեմ եւ վերջնոյն, իմաստասիրել
ոչ է մերձակայ ժամս. բայց վասն միջ-
նոյս եւ որ այժմ մեզ է հարկաւոր, որ-
ոյ եւ անուանակից է լուսաւորութեանս
աւր» (էջ 287—288):

«Անանիայի Շիրակայնոյ Համարողի
ասացեալ ի Զատիկն տեառն»

«Ոմանք կարծեցին զանունս զայս փրկ-
կութեան շարշարանաց լիալ³⁷ եւ ապա
հեղղենացի³⁸ արարեալ զձայնն զփիւրն
ի պէ փոխեցին, եւ զկենն ի քէ, պասքա
զաւր փրկչին անուանեցին. ըստ բանին
Մովսէսի³⁹, որ յերկրորդում աւրինացն
ասէ այսպէս...» (էջ 294):

27 Հմմտ. Պատկ., էջ 10՝ ծնունդս

28 Ձեռ. № 1500՝ զմին

29 Ձեռ. № 1500՝ մկրտութեամբն + որով ինքն մկրտեցաւ

30 Ձեռ. № 1500՝ իսկ

31 Ձեռ. № 1500՝ մեռելոց + լինել

32 Հմմտ. Պատկ., էջ 10՝ զմեծ

33 Ձեռ. № 1500՝ ծն[ն]դեանն

34 Ձեռ. № 1500՝ լեալ

35 Ձեռ. № 948՝ եւ]

36 Ձեռ. № 1500՝ արարին

37 Հմմտ. Պատկ., էջ 18՝ լեալ

38 Հմմտ. Պատկ., էջ 18՝ հելլենացի

39 Հմմտ. Պատկ., էջ 18՝ Մովսէսի

լիս՝ որպէս բարեպաշտագոյն բանիւ
(էջ 104ա, հմմտ. ձեռ. № 1500, էջ 738ա,
ձեռ. № 948, էջ 202բ):

«Որպէս եւ Գրիգորի Աստուածաբանի
հաճոյ թուեցաւ ասել, վասն այնորիկ եւ
հրամայեցին մեզ հարքն՝ մի տաւնել ի
լրմունս եբրայեցւոցն, այլ յինչ ա-
ւուրց շաբաթուն դիպեսցի շորեքտասան
լուանի, պահել զշաբաթն զի երթիցէ հաս-
ցէ ի կիւրակէն Յարութիւնն Տեառն, եւ
լցցէ զխորհուրդն, եւ ի շաբաթու շար-
շարանացն պահեսցէ: Վասն այնորիկ եւ
պասքայ կոչեցին, որ թարգմանի շար-
շարանաք...» (էջ 297):

Նազիանզացու ճառերի առանձին արտացոլումներ կան Ստեփանոս
Սյունեցու դավանաբանական խնդիրներ արծարծող մի թղթում: Եթե վե-
րանանք բառացի համեմատության հնարավորություն տվող օրինակ-
ներին, դարձյալ պիտի նկատել, որ թղթի ընդհանուր ոգին, պատաս-
խան-առարկությունների ներքին տրամաբանությունն առհասարակ նկա-
տելի մերձավորություն ունեն Նազիանզացու համարնույթ աշխատասի-
րությունների հետ: Ինչ վերաբերում է արարչագործության հետ կապ-
ված առանձին ելակետային բացատրություններին, ապա Սյունեցին
հիմնականում առաջնորդվում է ըստ Նազիանզացու սահմանումների:
Այսպես, օրինակ՝

«Ի սուր պասքայ»
Ձեռ. № 946 (ԺԲ դ.)

«Յաղագս ժողովոյն սուր հարցն Արա-
նաքի, Բարսղի, Աստուածաբանի, Նի-
սացոյ... բուրք երանելոյն Ստեփան-
նոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատաս-
խանի քղբայն հոռոմոց Գերմիանոսի
պատրիարքի Կոստանդինուպոլսի...»⁴²
Ձեռ. № 948 (1196 թ.)

«Եւ կատարեալ ոչ վասն աստուածութե-
անն միայն քան, զոր ոչ ինչ է կատարե-
լագոյն, այլ եւ յաղագս առելոյն եւ աւ-
ծելոյ աստուածութեամբն եւ եղելոյ՝
որպէս⁴⁰ եաւծն եւ համարձակիմ ասել
զոյգ⁴¹ աստուած» (էջ 107բ—108ա,
հմմտ. ձեռ. № 948, էջ 204բ, ձեռ.
№ 7943, էջ 52ա):

«Կատարեալ, ասէ, զՔրիստոս ոչ աս-
տուածութեամբն միայն քան, զոր ոչ
ինչ է կատարելագոյն, այլ յաղագս ա-
ռեցելոյ մարմնոյն եւ աւծելոյ աստուա-
ծութեամբն եւ եղելոյ՝ որպէս որ էաւծն
եւ համարձակիմ ասել զուգ աստուած»
(էջ 238ա, հմմտ. հրատ., էջ 380):

⁴⁰ Ձեռ. № 948՝ որպէս + որ

⁴¹ Ձեռ. № 948՝ զուգ

⁴² Թուղթն ամբողջությամբ տե՛ս էջ 231բ—250բ: Ստ. Սյունեցու նշված թղթի հրա-
տարակված տարբերակը տե՛ս «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 373—395: Գոյություն

«Ի յայտնութիւն տեառն»
Ձեռ. № 948 (1196 թ.)

(Ո՛վ նոր խառնմանն, ո՛վ զ[u]ֆանչելի խառնուածոյն, որ էրն լինի եւ ըստացիչն ըստացանի» (էջ 183բ)։

«Ի ծնունդն Քրիստոսի»

«Յովաննէս դոշեսցէ՛ պատրաստ արարէք զճանապարհս Տեառն, եւ ես դոշեցից պաւուրս զաւրութիւն։ Անմարմինն մարմնանայ, բանն թանձրանայ, անտեսանելին տեսանի, անշաւշափելին շաւշափի, անժամանակն սկսանի, որդին որդի լինի, Յիսուս Քրիստոս երեկ եւ այսաւր նոյն եւ յաւիտեալս» (էջ 177բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 724բ)։

«Ի սուրբ սլաւֆայ»
Ձեռ. № 946 (ԺԲ դ.)

«Յուրովագոյնք եւն ժամանակիս այսորիկ սրանշելիք՝ աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ եւ դարձեալ լուսաւորեալ, վասն զի պարտ եւ արժան էր ընդ արարչին շարշարակից լինել եւ արարածոցս» (էջ 126ա, հմմտ. ձեռ. № 948, էջ 213ա—բ. ձեռ. № 1500, էջ 740բ, ձեռ. № 7943, էջ 54բ)։

«Ընդ որ եւ դարմացեալ Աստուածաբան Գրիգոր ասէ՛ ո՛վ նոր խառնմանն, ո՛վ սֆանչելի խառնուածոյն նորածեւ առնեն բնութիւնքն» (էջ 238բ, հմմտ. հրատ., էջ 380)։

«Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի եւ ուղղափառ վարդապետի հակաճառութիւն ընդդէմ այնոցիկ, որք զմի եւ զանբաժանելի բնութիւն որդոյն ժպրհին յանդրգնաբար ֆակել եւ երկուս հատանել...»
Ձեռ. № 571 (Ժէ դ.)

«Զի բանն անտեսանելի եւ անշոշափելի է, եւ աստուած՝ բանն ասէ՛ անմարմինն մարմնանայ, բանն թանձրանայ, անտեսանելին տեսանի, անշոշափելին շոշափի, որդին աստուծոյ որդի մարդոյ լինի եւ ոչ այլ ոմն շոշափելին թանձրացեալ, եւ այլ ոմն բանն ի մարմնի, այլ միւնոյն, վասն որոյ ի վերայ բերէ Յիսուս Քրիստոս երեկ եւ այսօր նոյն եւ յաւիտեանս»⁴³ (էջ 78բ—79ա)։

«Եթէ մարմինն, որ ի մէնջ, էառ ի հրեշտակաց երկրպագութիւն, առնու, որում վկայէ Աստուածաբանն Գրիգոր՝ աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ եւ դարձեալ լուսաւորեալ. աստուած զմարմինն ասէ զնիւթն աննիւթին բնութեամբն կոչէ, զի խաչիլն եւ շարշարիլն մարմնոյն է աստուածաբար» (էջ 66բ, հմմտ. էջ 81բ)։

ունի նաև հնատիպ հրատարակութիւն (տե՛ս «Գիրք ժողովոց...», Նոր Զուղա, 1688, էջ 300—375), որի մասին մեզ տեղեկացրեց ասպիրանտ Ազատ Բողոյանը։ Հրատարակութեան և ձեռագիր տարբերակի միջև կան էական տարբերութիւններ։ Տպագիր տարբերակը ավելի մոտ է № 576 (Ժէ դ.) ձեռագրում պահպանված ընդօրինակութեանը։

⁴³ Ստ. Սյունեցոյ այս թուղթը (էջ 61ա—84ա) ունի ենթախորագրեր։ Վկայակոչված հատվածի ենթավերնագիրն է. «Ընդդէմ այնոցիկ, որ երկուս ասեն բնութիւն»։ Նույն հատվածի սկզբնամասը խմբագրված-փոփոխված տեսքով հանդիպում է այլուր ևս. «...որում վկայէ անպարտելի ախտեան Գրիգորիոս՝ անսկիզբն սկսանի, անեղն եղանի, անմարմինն մարմնանայ, բանն թանձրանայ, որդին որդի լինի» (էջ 65ա—բ)։

Նազիանզացուն վերագրվող գործերը քննելիս տեսանք, որ Ստեփանոս Ասողիկը օգտվել է Նազիանզացու և Կեսարացու թարգմանված երկի այն օրինակից, որի հայկական հետագա խմբագրությունները տակավին չկային կամ ծանոթ չէին Ասողիկին: Նազիանզացու ճառերի հետքերի քննությունը ցույց է տալիս, որ Ասողիկը ծանոթ է և հատվածաբար օգտվում է նրա «Ի Բասիլիոս Կեսարացի», «Ի սուրբ պասքայ» ճառերից ևս: Առաջին ճառից կատարվող քաղումները շունեն այն նույնականությունը, որ հատուկ է երկրորդ գործից կատարված փոխադրումներին: Եվ առհասարակ՝ «Ի Բասիլիոս Կեսարացի» բնագրից եկող բոլոր անցումներն են մանրերանգ ու ոչ ընդգծված: Դրա համար, հավանաբար, եղել է մի ընդհանուր պատճառ, որի շուրջ այժմ դժվար է դատողություն անել:

«Ի Բասիլիոս Կեսարացի»
(KB, II, էջ 204, 194—195)

«Եւ սակայն զի՞նչ քան զայս հրաշափառագոյն՝ զԱստուած խաչեալ տեսանել եւ զնոյն ընդ աւաղակս, եւ ի մերձ անցողաց ծաղր լեալ, անըմբռնելոյ եւ քան զրկել ինչ ախտս բարձրագունին» (Դամբ., ԿԵ):

«Գեր ի վերոյ քան զսպառնալիս է այրըն, բանիցն հաստատութեամբ՝ քան զհաւանութիւն զաւրագոյն, զայլ ոք փորձել ի վատթարագունիցն» (Դամբ., ՄԲ):

«Ի սուրբ պասքայ»
Ձեռ. № 946 (ԺԲ դ.)

«Յոլովագոյնք են ժամանակիս այսորիկ սքանչելիք՝ աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ եւ դարձեալ լուաւորեալ, վասն զի պարտ եւ արժան էր ընդ արարչին շարշարակից⁴⁴ լինել եւ արարածոցս» (էջ 126ա, հմմտ. ձեռ. № 948, էջ 213ա—բ, ձեռ. № 1500, էջ 740բ, ձեռ. № 7943, էջ 54բ):

«Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885

«Զի՞նչ քան զայս հրաշափառագոյն, ասէ՝ զԱստուած խաչեալ տեսանելով և զնոյն՝ ընդ աւաղակսն, և ի մերձ անցողացն ծաղր լեալ անըմբռնելոյն, և քան զրկել ինչ ախտս բարձրագունին» (էջ 228):

«Բայց քանզի սաստելն ոչ է մեծ, դիւրին է և յոյժ վատթարագունացն, որպէս ասէ Գրիգոր Նանձիանձու» (էջ 203):

«Եւ Աստուածարանն ի պասքի ճառին՝ Աստուած խաչեալ, ասէ, և արեգակն խաւարեալ, զի ընդ Արարչին պարտ էր և արարածոցս շարշարիլ» (էջ 227—228):

⁴⁴ Ձեռ. № 7943՝ շարշարանակից

«Հրաման առաք⁴⁵ իրաւացի, զի զոր ոչն պահելով ի բաց ընկեցաք, պահելով այսրէն աոցուք, կարատացաք աստուծոյ մարմնաւոյն եւ մեռանելոյ» (էջ 125բ, հմմտ. ձեռ. 948, էջ 213ա, ձեռ. № 7943, էջ 59բ)։

«Զի մի ուրեք խորհրդովն թիւրեցիս արիւն աստուծոյ եւ շարշարանս լսելով եւ մահ՝ մի՛ ուրեք ի վայր անկցիս⁴⁶ անաստուածաբար՝ իբրեւ⁴⁷ աստուծոյ ջատագով»⁴⁸ (էջ 116բ, հմմտ. ձեռ. 948, էջ 208բ, ձեռ. № 7943, էջ 56ա)։

Ասողիկի Պատմութեան հրատարակիչը (Ստ. Մալխասյան) «Դամբանականից» քաղված առաջին հատվածի առիթով նկատել է, որ այն ուսերեն թարգմանությունից դուրս է մնացել. «Մ. էմին արտաքս ընկենու իբրև անիմանալի զհատուածդ»⁴⁹։ Ստ. Մալխասյանը Ասողիկի մոտ անվանական հիշատակությունը նկատի առնելով՝ արձանագրել է հիշյալ մտքի պատկանելությունը՝ «բանից Աստուածաբանին»։ Հատվածի և բնագրի համեմատությունը կասկած չի թողնում, որ Ասողիկը օգտւել է «Դամբանականի» հայերեն թարգմանությունից։

Մի փոքր այլ է «Ի սուրբ պասքայ» ճառից եկող ընդհանրությունների բնույթը։ Դրանք, կարելի է ասել, բանաձևային բնորոշման առանձին կտորներ են և գալիս են Նազիանզացու հայերեն թարգմանությունից։

Նազիանզացու մատենագրական ժառանգության հայերեն մեկնությունների քննության առիթով կտեսնենք, որ Հովհաննես Սարկավազը նույնպես ծանոթ է բյուզանդական նշանավոր մատենագրի հայերեն թարգմանություններին և մեկնություն է թողել «Քրիստոս ծնեալ»

⁴⁵ Ձեռ. № 948, ձեռ. № 7943՝ ընկալաք

⁴⁶ Կապակցությունս («մի... անկցիս») նույն շարադասութեամբ Ասողիկի մոտ տարրնթերցում ունենալն, ինչպես նաև № 7943 ձեռագրի նմանութեամբ «իբրեւ»-ի փոխարեն «որպէս» ընթերցման առկայությունն ինքնին ձեռագրախմբի մերձավորություն են հուշում (հմմտ. Ասողիկ, էջ 228, ծան. 1)։

⁴⁷ Ձեռ. № 7943՝ որպէս

⁴⁸ Սույն մեկնարանության հետ մասնակի նմանություն ունի Ասողիկի մեկ այլ հաղորդում ևս. «տես, ոչ ես, այլ ամենայն եկեղեցւոյ վարդապետն անաստուածածանութիւն ասէ ոչ խոստովանողացն Աստուծոյ զարիւն և զշարշարանսն և զմահն» (Ասողիկ, էջ 228)։

⁴⁹ Ասողիկ, էջ 385, ծան. 128, հմմտ. «Всеобщая История Степаноса Таронского», переведена с армянского и объяснена Н. Эминым, М., 1864, стр. 227.

ճառաշարքի մասին: Պարզվում է, որ Սարկավագը ձեռքի տակ ունեցել է նաև «Առ որս» գիրքը և այդ շարքի «Առ Կղեդոնիոս» թղթից քաղումներ է կատարել: Նազիանզացու նշված աշխատանքը պատասխանում է դավանաբանական այլազան խնդիրների: Սարկավագի գործը ևս համապատասխան արժարժումներ ունի: Թղթերում հանդիպող «գիտեմ», «զի ասէ», «պատասխանեմ», «խոստովանիմ», «ասեն ոմանք», «եւ դարձեալ ասէ» և նման հաճախադեպ ձևակերպումները այլադրյուր վկայություններ են հուշում, որոնցից օգտվել է Հովհաննես Սարկավագը:

Ստորև համադրաբար ներկայացվող հատվածները հիմնականում դավանաբանական ձևակերպումներ են, վերջին երկուսը՝ կանոնական սահմանումների տեսքով: Ահա դրանք.

«Առ Կղեդոնիոս»

Ձեռ. № 4149 (1304—1305 թթ.)

«զնոյն ինքն երկնաւոր և երկրաւոր, տեսանելի և իմանալի, տարեալ և անտանելի, զի բաւանդակ ի նմին մարդ իցէ և աստուած՝ բանն մարդ ցուցաւ անկեալ ընդ մեղաւք» (էջ 141բ):

«Եւ եթէ պարտ է համառատագոյնս ասել այլ և այլ, յորոց փրկիչն, եթէ ոչ նոյն է աներևոյթն և երեւելին և անժամանակն և ընդ ժամանակամ, ոչ այլ ոք և այլ մի լիցի, վասն զի երկոքեան մի խառնելովն՝ աստուծոյ մարդանալոյն և մարդոյ աստուածանալոյ, կամ որպէս արդևք ոք անուանիցէ և ասեմ այլ և այլ ընդդէմ նմին յերրորդութեանն ունի, քանզի անդ այլ ոմն է» (էջ 142ա):

«եթէ ոք ի ներքս ածիցէ երկուս որդիս՝ զմին յաստուծոյ և ի հաւրէ և զերկրորդն ի մաւրէ, այլ ոչ զմի և զնոյն, յորդէգրութենէն արտաքս անկցի, զոր խոստացաւ ուղիղ հաւատացելոցն» (էջ 142ա):

«Յովհաննէս վարդապետէ»

Ձեռ. № 8608 (1686—1687 թթ.)

«զնոյն ինքն երկնաւոր և երկրաւոր, տեսանելի և անիմանալի, տարեալ և անտանելի, զի բովանդակն ի նմին ի մարդն իցէ և յաստուած»⁵⁰ (էջ 232 ա—բ):

«Եւ, դարձեալ ասէ, եթէ պարտ իցէ համառոտագոյնս ասել յայլ և այլ, յորոց փրկիչն, եթէ ոչ նոյն է աներևոյթն և երեւելին և անժամանակն և ընդ ժամանակաւ[ն], ոչ այլ ոք և այլ մի լիցի, վասն զի երկոքեանն մի խառնելովն՝ աստուծոյ մարդանալոյ և մարդոյ աստուածանալոյ»⁵¹ (էջ 219ա—բ):

«եթէ ոք այլ և այլ ասասցէ, այլ ոչ զմի և զնոյն, յորդէգրութենէն արտաքս անկլցի, զոր խոստացաւ ուղիղ հաւատացելոցն» (էջ 219բ—220ա):

⁵⁰ Հովհաննես Սարկավագի միևնույն թղթում սույն հատվածը առանց միջամտության օգտագործված է մեկ անգամ ևս, տե՛ս էջ 219ա՝ «զնոյն ինքն երկնաւոր...»:

⁵¹ Սույն հատվածը «Եւ դարձեալ ասէ երանելի Աստուածաբանն Գրիգորիոս» սկզբվածքով հանդիպում է նաև այլուր. հմմտ. էջ 233ա—բ:

«Եթէ որ իբրև ի մարգարէի ասիցէ ըստ շնորհի գործիլ, այլ ոչ ըստ բնութեան միաւորեալ և ստեղծեալ ընդ նմին եղիցի ունայն ի լաւագոյն զաւրութենէն, մանաւանդ եթէ լի հակառական... Եթէ որ յետ մկրտութեանն կամ յետ ի մեռելոց յարութենէն որդէգրութեանն արժանաւոր լիեալ ասիցէ, որպէս զորս հեթանոսք թերի գրով ի ներքս ածեն, նզովեալ եղիցի» (էջ 142բ):

«Եթէ որ իբրև ի մարգարէի ասիցէ ըստ շնորհի գործեալ, այլ ոչ ըստ բնութեամբ միաւորեալ և ըստեղծեալ ընդ նմին եղիցի ունայն ի լաւագոյն զօրութենէն և մանաւանդ լի հակառական: Եթէ որ յետ մկրտութեանն և կամ յետ ի մեռելոց յարութենէն յորդէգրութեանն արժանաւոր լեալ ասիցէ, նզովեալ եղիցի» (էջ 219բ):

Միջնադարյան Հայաստանում հաճախ անհրաժեշտություն էր զգացվում պայքարելու ոչ միայն արտաքին թելադրումների դեմ, այլ շափավորելու ներքին անհամաձայնությունները, նույն եկեղեցու ու դավանանքի միջավայրում ծնունդ առնող դժգոհություններն ու պայքարի առանձին դրսևորումները: Ընդհանուր համաբնույթ խնդիրների թելադրանքով են գրվել ներսես Շնորհալու որոշ թղթեր, այդ թվում նաև «Թուղթ՝ գրեալ եպիսկոպոսութեան իւրում...» հանձնարարականը⁵², ուր հեղինակն անհրաժեշտ քաղումները կատարելուց առաջ համառոտակի պատճառաբանում է համաբնույթ բացատրությունների շարքում Նազիանզացուն նախընտրելու հակումը: Նա գրում է. «Բազումք ի սրբոց վարդապետաց խաւսեցան ի բանս իւրեանց ընդդէմ զայսպիսիս ասողաց... բայց զմիոյն ասեմ՝ զՄեծին Գրիգորի Աստուածաբանի...»⁵³:

Նազիանզացու համապատասխան բացատրություններն արտացոլելու երկու եղանակ է ընտրում Շնորհալին. ա) վերապատմում կամ պարզապես հիշատակում է բյուզանդական մատենագրի առանձին մեկնարանություններ⁵⁴, բ) բառացի քաղումներով պատասխանում է ինչ-ինչ հարցադրումների:

Երկրորդ բնույթի քաղումները Շնորհալին կատարել է «Ի յայտնութիւն տեառն», «Ի սուրբ պասքայ» ճառերից և «Առ Կղեղոնիոս առաջին» թղթից: Արդ՝ համադրենք նմանօրինակ մի քանի հատվածներ.

⁵² Հրատարակությունը տե՛ս «Ընդհանրական թուղթք սրբոյն ներսիսի Շնորհալույ», Երուսաղէմ, 1871, էջ 240—307:

⁵³ Ձեռ. № 579, էջ 62բ:

⁵⁴ Այդ կարգի ընդհանրության օրինակ է «և զիարդ արիւն Աստուծոյ ասէ՛ սուրբն Աստուածաբանս» («Ընդհանրական թուղթք», էջ 309, հմմտ. նաև էջ 278) հիշատակությունը, որը Ասողիկի Պատմությամբ վկայված նույնանուն բառացի վկայակոչության հետ ուղղակի առնչություն չունի:

«Ի յայտնութիւն տեառն»
Ձեռ. № 948 (1196 թ.)

«Քանզի առաքեցաւ այլ իբրեւ զմարդ,
զի կրկին էր, ըստ որում վաստակեցան
եւ երկեալ...» (էջ 185ա):

«Եւ իբրեւ զմարդ մեռեալ եւ իբրեւ զաս-
տուած յարուցեալ եւ ապայ ի վեր ամ-
բարձեալ եւ որ գալոցն է» (էջ 186ա):

«Ի սուրբ պատգայ»
Ձեռ. № 946 (ԺԲ դ.)

«Եւ յառաջինն երթալ ելանել զթու-
թեամբ ողորմութեանն⁵⁵ աստուծոյ հաւր
մերոյ, որ ոչ ներեաց տուժել զայն,
քան⁵⁷ գործ իւրոյ ձեռին զմարդն⁵⁸, զի-
արդ վերստին ստեղծանի, եւ զի՞նչ լինի
զսաստկութեան⁵⁹ բժշկութեանն ոչ առ-
նու ի կիր, որպէս եւ ոչ հարկանելն եւ
հիացուցանելն էր կարող յաղագս ժա-
մանակեայ ամբարտաւանութեանն, այլ
ընտանի եւ մարդասիրագոյն բժշկութե-
ամբ⁶⁰ եւ⁶¹ մատակարարէ առ ի յուղղու-
թիւնսն՝ զի եւ ոչ զտունկ ինչ ընկողմ-
նեալ՝ յուղղութիւն բերել⁶² յանկարծակի
փոփոխելով եւ բռնութեամբ ձեռին ա-
րագ արագ ի միւս կողմն բեկանել՝ քան
եթե ուղղելն լինի: Եւ ոչ զձի խստե-
րախ հանդարտեցուցանել բռնութեամբ
սանձուց՝ առանց ողորջանաց և զդաստա-
ցուցանող ձայնից»:

«Տ. Ներսիսի կարուղիկոսի բուղբ՝ զըր-
եալ յեպիսկոպոսութեան իւրում՝ հրա-
մանաւ տեառն Գրիգորիսի կարուղիկոսի՝
եղբօր իւրոյ...»⁵⁵

«Ասէ Աստուածաբանն Գրիգորիոս ի
Մենդեան ճառին. իբրեւ զմարդ մեռեալ
և իբրեւ զաստուած յարուցեալ. ոչ ոմն
մեռեալ և ոմն յարուցեալ, այլ բանն
ասէ՝ որ միացաւ ի մարմնի, ըստ մարդ-
կայնոն մեռեալ և ըստ աստուածայնոյն
յարուցեալ...» (էջ 256, հմմտ. ձեռ.
№ 579, էջ 37բ):

«Ի վերստին ստեղծանելն զմեզ՝ զսաստ-
կութիւն բժշկութեանն ոչ առնու ի կիր-
զի ոչ հարկանելովն և հիացուցանելովն
էր կարողութիւն յաղագս ժամանակեայ
ամբարտաւանութեան, այլ ընդանի և
մարդասիրագոյն բժշկութեամբն մատա-
կարարէ առ ի յուղղութիւն: Որպէս և
ոչ զտունկ ինչ ընկողմանեալ՝ յուղղու-
թիւն բերեալ բռնութեամբ ձեռին ի
միւս կողմն փոխելով, յորմէ բեկանել՝
քան թէ ուղղել լինի: Եւ ոչ զձի խստե-
րախ հանդարտեցուցանել բռնութեամբ
սանձուց՝ առանց ողորջանաց և զդաստա-
ցուցանող ձայնից»:

⁵⁵ Թուղթն ամբողջութեամբ տե՛ս «Հնդհանրական թուղթ», էջ 240—289:

⁵⁶ Ձեռ. № 948՝ ողորմութեամբն

⁵⁷ Ձեռ. № 948, ձեռ. № 7943՝ զայս

⁵⁸ Ձեռ. № 948՝ զմարդս, ձեռ. № 7943՝ զմարդ

⁵⁹ Ձեռ. № 948, ձեռ. № 7943՝ զսաստկութիւն

⁶⁰ Ձեռ. № 948՝ բժշկութիւնն

⁶¹ Ձեռ. № 948՝ եւ]

⁶² Ձեռ. № 7943՝ յուղղութիւն բերել]

⁶³ Ձեռ. № 7943՝ անձանցն

⁶⁴ Ձեռ. № 948՝ բռնաւորութիւնն

և «դաստապուցանող ձայնից» (էջ 106 ա—բ, հմմտ. ձեռ. № 948, էջ 203բ—204ա, ձեռ. 7943, էջ 51բ)։

«Առ Կղեղոնիոս»

Ձեռ. № 4149 (1304—1305 թթ.)

«Իսկ ի վաղճանի և դմարդն էառ վասն մերոյ փրկութեան՝ շարշարելի մարմնով, անշարշարելի աստուածութեամբն, բաւանդակելի մարմնովն, անբաւանդակելի հոգւով, զնոյն ինքն երկնաւոր և երկրաւոր, տեսանելի և իմանալի, տարեալ և անտանելի» (էջ 141բ)։

«Զի էթէ առանց հոգոյ էր մարդն, զայս և Արիանոսքն աւեն, զի յաստուածութիւնն զշարշարանսն բերցեն, որպէս ի շարժաւզ դմարմինն զայն և զշարշարեալ» (էջ 143բ)։

«Եւ դարձեալ յայլումն վայրի ասէ այսպէս՝ շարշարելի մարմնով՝ անշարշարելի աստուածութեամբն. նոյն ինքն երկնաւոր և երկրաւոր, տեսանելի և անիմանալի, տարեալ և անտանելի» (էջ 250, հմմտ. ձեռ. № 579, էջ 37բ)։

«Զի թէ առանց հոգւոյ էր, ասէ, մարդն, և զայս Արիանոսքն աւեն, զի և յաստուածութիւնն զշարշարանսն բերցեն, որպէս ի շարժող դմարմինն զայն» (էջ 244—245, հմմտ. ձեռ. № 579, էջ 31բ—32ա)։

Գրիգոր Նազիանզացու ճառերին առնչվող երկու թուղթ ունի Գրիգոր Տղան։ Երկուսն էլ վերաբերում են Հաղբատ-Սանահնի միաբանությանը։ Թղթերից առաջինն այդ միաբանության անդամ Տուղեորդու թղթի պատասխանն է, ուր փորձ է արվում ի ցույց դնելու նրա ձեռնարկումների «ոչ խաղաղաբար, այլ խռովարար» բնույթը, բացահայտելու «թշնամանասէր. ոչ իրաւացի» վարմունքի փաստացի և հնարավոր տխուր հետևանքները։

Զնայած «Հայոց հյուսիսային կողմանց» վարդապետներին ուղղված Գրիգոր Տղայի բացատրություններին ու հարաբերությունները կարգավորելու պնդումներին, առկա լարվածությունը մեղմել չի հաջողվում։ Նա մեղադրում է, որ «անլուր են նոքա ի բանից սրբոյն Գրիգորի Աստուածաբանի. ո՞չ ընթեռնուն իւրական բանիւն յաւուր տօնի ծննդեանն Քրիստոսի զառ ի նմանէ խօսացեալ զաստուածաբանական ճառն»⁶⁵։

«Ի Բասիլիոս Կեսարացի»
(KB, II, էջ 191)

«Պատասխանի քղրոյն վարդապետին Տուտէորդոյն կոչեցելոյ ի մայրավանսն Հաղբատ գրեալ ի տէր Գրիգոր կարողիկոսէ Հայոց, եղբաւ որդոյ սրբոց կարողիկոսացն Գրիգորիսի եւ Ներսէսի, որ յորջորջէր մականունութեամբ Տղայ անուանի»։

Ձեռ. № 500 (1293—1305 թթ.)

⁶⁵ «Ընդհանրական թուղթք», էջ 317։

«Բայց նա այնպիսեացս ոչ ումեք կա-
տատանայր ի հակառակ մեզ զինուո-
րելն...» (Դամբ., ԽԶ):

«Ի Կեսարիոս եղբայրն իւր»
Ձեռ. № 4234 (1307 թ.)

«Թռչնոցն բնութեամբ աշխատասիրու-
թեամբն յաղթեաց և... մտացն արագու-
թեամբ...» (էջ 15ա):

«Ո՞ր հասակակցացն քաջուշեղագոյն»
(էջ 14բ):

«Եւ ոչ ասել որ կարէ որքան գերազան-
ցեաց քան զբազումս...» (էջ 14բ):

«յորս նա արագութեամբ և մեծութեամբ
քնութեանն և ոչ ասել որ կարէ որքան
գերազանցեաց քան զբազումս» (էջ
14բ):

«Ի յայտնութիւն տեառն»
Ձեռ. № 948 (1196 թ.)

«Քրիստոս ծնեալ լինի փառաւորեցէք:
Քրիստոս⁶⁷ յերկնից հանդիպեցարուք,
Քրիստոս ի վերայ երկրի բարձրացա-
րուք, երգեցէք տեառն երգ նոր... Քր-
իստոս ի կուսէ... և ճշմարտութիւնն ի
ներքս մտանէ, Մելքիսեդեկ ժողովի,
անմայրն անհայր լինի, անմայր՝ յա-
ռաջնումն, անհայր՝ յերկրորդումս: Աւ-
րէնք բնութեանս քակտին, ամենայն հե-
թանոսք կայթեցէք ձեռաւք, զի մանուկ
ծնաւ մեզ որդի եւ տուաւ մեզ...: Ան-
մարմինն մարմնանա, բանն թանձրա-
նա⁶⁸ անտեսանելին տեսանի, անշաւ-
շափելին շաւշափի, անժամանակն սկսա-

«յաղագս սուր բնութեան իւրոյ յաս-
տուածայինս ոչ էր կարօտ քաջալերել
յուսեք⁶⁶ (էջ 323բ):

«Յաղագս սուր բնութեան իւրոյ առ ուս-
մունս աստուածայնոցն յաղթահարեաց
զամենայն հասակակիցս իւր» (էջ 323բ,
հմմտ. հրատ. էջ 43):

«քնութիւնք մեծամեծք և սուրք են պատ-
ճառք տրտմութեան» (էջ 323բ, հմմտ.
հրատ. էջ 43):

«զարմանայի, ասէ, զի մեծ քնութեամբն
իւրով զիջանէր առ խոնարհս» (էջ 323բ,
հմմտ. հրատ. էջ 43):

«Տեառն Գրիգորի Պատասխանի վարդա-
պետացն Հայոց հիւսիսային կողմանցն»⁶⁹

«Եթէ Քրիստոս ծնեալ լինի, և Քրիստոս
յերկնից, և ի մարմնի, և ի Կուսէ, և ի
վերայ երկրի. և զի ի ցնծութիւն կոչէ զա-
րարածս յաղագս երկնաւորին, և ապա
երկրաւորիս. անմայր՝ յառաջնումն, ան-
հայր՝ յերկրորդումս, լուծանելով զօ-
րէնս բնութեանն, որով ծնաւ մեզ մա-
նուկ և տուաւ մեզ որդի: Անմարմինն
մարմնացեալ և բանն թանձրացեալ և
անտեսանելին երեւեալ և եկեալ ի շօշա-
փումն, և անժամանակն սկիզբն առեալ
ժամանակի. և որ յառաջն որդի էր ծո-
ցածին, այժմ եղեն որդի կուսածին, օ-
ծեալ և Փրկիչ և ի հօրէ անբաժանելի,

⁶⁶ Հմմտ. «Գրիգոր կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի», Վենետիկ, 1838, էջ 43: Սուլյն հրատարակության և № 500 ձեռագրի մեջ կան բառային և քերականական տարբերություններ: Համեմատության համար ձեռագիր տարբերակը հարմար նկատեցինք:

⁶⁷ Ձեռ. № 1500, ձեռ. № 7943՝ Քրիստոս + ի

⁶⁸ Ձեռ. № 7943՝ բարձրանա + անտանելին տարեալ լինի

⁶⁹ Տե՛ս «Ընդհանրական թուղթք», էջ 312—329:

նի, որդին որդի լինի, Յիսուս Քրիստոս երեկ և այսօր, նոյն⁷⁰ և յաւիտեանս: Հրեայք դայթակղեցին, հեթանոսք ծիծաղեցին, հերետիկոսք լեզուազարեսցին: Յայնժամ հաւատասցեն յորժամ տեսցեն յերկինս երթեալ և Եթէ⁷¹ ոչ յայնժամ, այլ յորժամ⁷² յերկնից եկեսցէ և իբրև⁷³ դատաւոր նստցի... Քանզի երեւցաւ աստուած՝ մարդ ծննդեամբ, որ էրն և միշտ է ի միշտ⁷⁴ էն ատուել քան զպատճառ և զքան, զի և ոչ է իսկ քան զքան գեր ի վերոյ է քանն, բայց յաղագս մեր լեալ զկնի» (էջ 177 ա—բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 724բ, ձեռ. № 7943, էջ 5ա—բ):

Նազիականդացու ճառերից և թղթերից կատարված հետազոտ 2րջանի քաղումների մեջ առանձնանում է Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» ժողովածուն, որը Հ. Անասյանի գնահատությամբ՝ «Նրա գրական աշխատանքների մեջ, որպես ժամանակաշրջանի պատմա-հասարակական իրադրության արտահայտիչ, մի իսկական գլուխ-գործոց է»⁷⁵: Ժողովածուի կազմության նպատակի, այն պայմանավորող քաղաքական-դավանաբանական հետաքրքրությունների հանգամանալից գնահատությունը տվել է ինքը՝ Վարդան Այգեկցին. «Հաւաքեցի զայս աստուածաբնակ տառս ընդդէմ երկբնակաց և ամենայն հերձաւածողաց, ուր և գտանէի վկայութիւն»⁷⁶: Մի փոքր ավելի մասնավորեցնելով սույն խնդիրը, նա գրում է. «Ընդդէմ հերձաւածողացն իւրաքանչիւր ժամանակս ուղիղ դաւանութիւն հաւատոյս՝ հետեւելով առաջին սրբոց հարցն»⁷⁷:

Այգեկցու հիշատակության համաձայն՝ «Արմատ հաւատոյի» նյութերի հավաքումը ավարտվել է 1205 թ.՝ «Եւ կատարեցի զսա ի թուականին Հայոց ՈՍ և Դ-ին, ի հայրապետութեան տեառն Յոհաննիսի և ի թագաւորութեանն Հայոց Լևոնի յընդհինեանց»⁷⁸: Այգեկցին այս

որպէս երէկ՝ նոյն և այսօր և յաւիտեանս յաւիտենից: Որք ոչ հաւատացին զգեցման մարմնոյն՝ դայթակղեցին, և որք ի մարմնոյն տկարացան ծիծաղեցին. իսկ որք թերակատար մտօք շատագույք լինին նորասքանչ գործոյն՝ լեզուազարեսցին յանհուն անդունդս լիղալով: Վասն զի եղև նոր զարմանք, և երեւցաւ Աստուած մարդ ծննդեամբ, որ էրն և միշտ էն, և որում գեր ի վերո էր մարդկայնոյս բանի և պատճառի գոլն, յաղագս մեր եղև» (էջ 317—318):

⁷⁰ Ձեռ. № 7943՝ նոյն + ինքն

⁷¹ Ձեռ. № 7943՝ և Եթէ]

⁷² Ձեռ. № 7943՝ յորում + միւսանգամ

⁷³ Ձեռ. № 7943՝ իբրև + զաստուած

⁷⁴ Ձեռ. № 7943՝ ի միշտ]

⁷⁵ Հ. Ս. Անասյան, Վարդան Այգեկցին որպես համերաշխության գաղափարախոս (տե՛ս «Էջմիածին», 1969, է—Ը, էջ 53):

⁷⁶ Ձեռ. № 3295, էջ 338ա:

⁷⁷ Նույն տեղում:

⁷⁸ Նույն տեղում:

կերպ է ընդհանրացնում ժողովածուի առօրյա գործածության անհրաժեշտությունը. «Եւ արարի քեզ առ ձեռն պատրաստ զէն»⁷⁹: Այգեկցու աշխատանքի քննությունը, հասկանալի պատճառով, մեր նպատակից դուրս է: Սակայն անհրաժեշտ ենք նկատում անդրադառնալ Նազիանզացուց կատարված քաղումների որոշ առանձնահատկություններին միայն: Ի տարբերություն նախորդ վկայակոչությունների, Այգեկցին ոչ թե իբրև պատասխան առաջադրված քաղվածքով հարցն ավարտված է համարում, այլ միաժամանակ կես առ կես շարադրում է իր նկատառումները: Եվ որովհետև այդ նկատառումների առիթով ենթադրվող առարկությունները որոշակի պատկերացնում է հեղինակը, ուստի և ինքնաբերաբար ծնվում է բուն նյութի հետ կապված մասամբ օժանդակ բացատրություն:

Մյուս նկատելի առանձնացումն այն է, որ Այգեկցին աշխատում է մասնավորեցնել Նազիանզացու մոտ «ասեն» ընդհանուր եղանակով վկայակոչված աղբյուրները: Օրինակ՝ «Առ Կղեդոնիոս առաջին» թղթում ասված է՝ «այլ բաւական էր, ասեն, աստուածութիւնն փոխանակ մըտաց»⁸⁰: Նույնը «Արմատ հաւատոյի» հեղինակը բերում է իբրև Ապողինարի բացատրություն՝ «Ապողինար ասէ՝ այլ արդ բաւական էր աստուածութիւնն փոխանակ մտաց»⁸¹: Իհարկե ճիշտ չէր լինի կարծել, որ վարդան Այգեկցին դավանաբանական գրականության բոլոր նշանավոր դեմքերի հիմնական առարկությունները մեկ առ մեկ գիտեր և դրանք հղում է ըստ համապատասխան աղբյուրների: Իրականում դրա անհրաժեշտությունը հայկական վանական հաստատությունների համար չկար էլ, որովհետև համընդհանուր ճանաչում և ընդունելություն գտած հայրաբանական-դավանաբանական գրականությունը ունկնդիրների, թե ընթերցողների շրջանում հիմնական առարկությունների մասով ավելի քան հասկանալի էր: Գոնե վարդան Այգեկցին չէր կարող չիմանալ, որ Բարսեղ Կեսարացին հատուկ առարկություն ուներ ընդդեմ Ապողինարի և մերժում էր Եվստաթիոս Սեբաստացու գործունեությունն առհասարակ: Նույն անհրաժեշտությամբ Այգեկցին ծանոթ պիտի լիներ նաև Կեսարացու և Նազիանզացու «Յաղագս հաւատոյ» տեսությանը, ուր հիմնական առարկությունները դարձյալ ապողինարության դեմ են: Այս առումով պիտի նայել վարդան Այգեկցու մասնավորեցումներին:

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Ձեռ. № 4149, էջ 144ա:

⁸¹ Ձեռ. № 3295, էջ 348բ:

«Առ Կղեղոնոս»,

Ձև. № 4149 (1304—1306 թթ.)

«Քնութիւնք երկուք, քանդի աստուած և մարդ և զի հոգի և մարմին,

բայց որդիք ոչ երկուք և ոչ աստուածք:

Ձի և ոչ աստ երկու մարդք, քէպէտև այսպէս Պաղոս զներքին մարդոյն և զարտաքին անուանեաց»:

«Եւ եթէ սլարտ է համառատագոյնս ասել այլ և այլ յորոց Փրկիչն եթէ ոչ նոյն է աներևոյքն և երևելին և անժամանակն և ընդ ժամանական ոչ այլ ոք և այլ մի լիցի, վասն զի երկոքեան մի» (էջ 142ա):

«Գրիգորի Աստուածաբանի ի թղթէն, որ առ Կլոդոնոս»

Ձև. № 3295 (ԺԸ դ.)

«Քնութիւնք երկուք, քանդի աստուած և մարդ, քանդի հոգի և մարմին: Ասաց Ապօղինար, թէ Աստուածաբանն ի կուսէն զմարմինն միայն առեալ առանց հոգոյ և մտաց: Հարկի Աստուածաբան և զրէ բնութիւնք երկուք տեառն կատարեալք. աստուած կատարեալ և մարդ կատարեալ, քանդի մարդոյն կատարելութիւնն ի հոգոյ և ի մարմնոյ է: Քանդի ասէ իսկ թէ՛ հոգի և մարմին, զի ոչ կարէ մարդ առանց հոգոյ գոյանալ և բանն աստուած առ ի մէնջ զհոգի և զմարմինն և ընդ ինքեան միացոյց և ոչ ըստ շար կարծեացն Ապօղինարի: Բայց որդիք ոչ երկուք և ոչ աստուածք: Արդ՝ աստուած և մարդ ասաց, զի մի կարծեսցեն յերկուս բաժանել ի զմի և զնոյն Քրիստոսն զնէ, թէ ոչ երկու որդիք և ոչ երկու արարածք, քանզի և աստ ոչ երկու մարդ, քէպէտև Պաղոս ներքին և արտաքին ասէ տեսանես: Թէպէտև երկուք է մարդս ըստ Առաքելոյ բանի՝ հոգի և մարմին ասէ վարդապետս, բայց ոչ ասի երկու բնութիւն, այլ՝ մի մարդ և մի բնութիւն: Վկայեալ յարտակքնոցն և ի վարդապետաց եկեղեցոյ նոյնպէս ասացին և ցուցին մեզ զմարդանալ բանին աստուծոյ յերկուց օտար բնութեանց մի եղեալ անշիոթ, այլ և այլ յորոց Փրկիչն և արդ մի թէ ոչ նոյն է, այսինքն մի երևելին և աներևոյքն, անժամանակն և որ ընդ ժամանակաւ ոչ այլ ոք և այլ, այս մի լիցի երկոքեան մի: Տես նախ յամօթ արար զԱպօղինար, որ ընդ մարմինս միայն ասաց միանալ բանին աստուծոյ և երկու բնութիւն ասաց տէր աստուած կատարեալ և միացաւ ընդ կատարեալ բնութիւն մարդոյս՝ ընդ հոգի՝ ընդ միտս և ընդ մարմին: Ահա երկու բնութիւն անթերիք աստուծոյն և մարդոյն նախ (էջ 348ա) օտարք միմեանց, իսկ յարկանդի կուսին Մարիա-

«խառնելովն աստուծոյ մարդանալոյն և մարդոյ աստուածանալոյ: Կամ որպէս արդևք որ անուանիցէ և ասեմ այլ և այլ ընդդէմ նմին յերրորդութեանն ունի» (էջ 142ա):

«Եթէ ոք իբրև ի մարգարէի ասիցէ ըստ շնորհի գործիլ, այլ ոչ ըստ բնութեան միատրեալ և ստեղծեալ ընդ նմին եղիցի ունայն ի լաւագոյն զաւրութենէն, մանաւանդ եթէ լի հակառական: Եթէ ոչ որ երկիր պագանիցէ խաշելոյն նզովեալ եղիցի...» (էջ 142բ):

«Եթէ ոք յանմիտ մարդ յուսացաւ առանց մտաց արդարև է և ոչ արժանաւոր բաւանդակ ապրել, քանզի ոչ առեալն անբըծըշկելի է և որ միաւորին ընդ աստուծոյ նոյն և փրկի: Եթէ կէս սխալեաց Ադամայ և կէսն և առաւ և ապրեցաւ: Ապա թէ բաւանդակն՝ բաւանդական բոլոր փրկեցաւ» (էջ 143բ):

«Այլ բաւական էր, ասեն, աստուածութիւնն փոխանակ մտաց: Եւ զի՞նչ առ իս այն, քանզի աստուածութիւնն հանդերձ մարմնով միայն ոչ է մարդ, այլ և ոչ հոգի միայն և ոչ երկոքին առանց մտացն, որք և մանաւանդ մարդ պանեն զմարդն և մեծագոյն զաստուածութիւնն, զի զիս կատարելապէս գործեցէ, այլ ոչ տանէր զերկուս կատարեալս: Քանզի և ոչ իսկ եթէ մարմին տեսանիցես, զի ա-

մու մի եղև բնութիւն անշիոթ ըստ որում և ասէ վարդապետ թէ՛ երկոքեանն մի են խառնելովն և մարդոյն աստուածանալով: Արդ՝ երարձ զերկուութեանն կարծիս, զոր ասաց ընդդէմ Ապողինարի, վասն որոյ խառնեալ և մի լեալ ասէ: Արդ՝ բերեմ քեզ այլ վկայ սոյն բարիս, որով հաւանել ունիս: Բարսեղ և Գրիգոր Աստուածարան երբեմն ի բնութեան խնդրիս եղեալ ասեն՝ ոչ մի ասեմք բնութիւն յաղագս զմիւսն կորուսանելոյ և ոչ երկուս ասեմք բաժանեալս, այլ յերկուց բնութեանց մի եղեալ ասեմք զՔրիստոս անբաժանելի՛ մի անձն և մի պատկեր, և մի բնութիւն սքանչելի միաւորութեամբ ի վեր քան զմիտս եղելոց (էջ 348բ):

«Եթէ իբր ի մարգարէի ասիցէ ըստ շնորհի գործեալ, այլ ոչ ըստ բնութեան միատրեալ և ստեղծեալ ընդ նմին եղիցի ունայն ի լաւագոյն զօրութենէն և որ հետ մկրտութեան որդեգրութեան արժանանալ ասէ նզովեալ եղիցի»:

«Եթէ ոք յանմիտ մարդ յուսացաւ անմիտ է, քանզի ոչ առեալն անբժշկելի է, եթէ կէսն սղալեաց Ադամայ կէսն առաւ և ապրեցաւ և եթէ բովանդակն սղալեաց՝ բովանդակն առաւ և ապրեցաւ»:

«Ապողինար ասէ. այլ արդ բաւական էր աստուածութիւնն փոխանակ մտաց: Զի՞նչ առ իս այն, զի աստուածութիւնն հանդերձ մարմնովն ոչ է մարդ, այլ և ոչ զհոգի միայն առ և ոչ երկոքեանն առանց մտացն, որք և մարդ պանեն ըզմարդն և մեծագոյն զաստուածութիւնն, զի զիս կատարելապէս գործեցէ: Տես երկարնակ այս եղև պատճառ ասել նախ երկու բնութիւն, զի ցուցցէ, թէ

ման միոյ շափոյ ոչ տանի երկուս շափս
և ոչ մարմնոյ միոյ՝ տեղի երկուս և կամ
առաւել ևս մարմինս» (էջ 144ա):

աստուած ընդ բոլոր մարդս միացաւ
ընդ միտս ընդ հոգի և ընդ մարմին և
եղև մի, զի մեք կատարեալ առցուք
ղփրկութիւն և ոչ ընդ մարմինս միայն՝
ըստ շար կարծեացն Ապօղինարի» (էջ
348բ):

Նաղիանդացու ճառերից և թղթերից քաղումներ կատարած մատենադրների ցանկը չի ավարտվում թվարկված անունների շրջանակներում: Համեմատությունը պարզում է, որ այդ կարգի ընդհանրության բաղմաթիւ օրինակներ կան նաև հետազա մատենագիրների գործերում: Այսպես, իր ճառերում և մանավանդ բնափիլիսոփայական բնույթի գործերում Հովհաննես Երզնկացին բավական հաճախ է դիմում Գրիգոր Նաղիանդացու և այլոց (Բարսեղ, Եփրեմ, Աթանաս, Ոսկեբերան) ճառերի և թղթերի հայերեն թարգմանություններին և օգտվում դրանցից՝ մերթ բառացի քաղումների տեսքով, երբեմն էլ վերապատմելու եղանակով: Նաղիանդացուն վերաբերող հատվածների համեմատությունը ցույց է տալիս, որ վերաշարադրելու փորձերը համեմատաբար շատ չեն. այդպիսիք կան «Յոն[անէս] վարդապետի Եզնկայեցոյ ի տօնի ծննդեան եւ մկրտութեան Քրիստոսի» բնագրում⁸², ինչպես նաև իր ուսուցչի՝ Վարդան Արևելցու, հետ կազմած աշխատանքում⁸³ և այլուր: Եզնկացուցական մատենագրության նշանավոր դեմքերի առանձին դրույթներ ընդհանրացնելիս Հ. Երզնկացին գրում է. «Այսպէս սուրբ հարքն զբանս իւրեանց պայծառացուցին՝ ճշմարտելով զանփոփոխութիւնն ընդ նմին միանգամայն և զանքակ միաւորութիւնն, զի ի խոնարհել բանին աստուծոյ ի մարդկային կիրս զանփոփոխութիւն ցուցանէր մարդկայնոյն»⁸⁴: Ասվածը հավասարապես վերաբերում է նաև Գրիգոր Նաղիանդացու ճառերի և թղթերի այն բացատրություններին, որոնց դիմում է նա:

Սակայն Նաղիանդացի-Երզնկացի առնչակցությունն առավել բնութագրելի է բառացի քաղումների, մեծ ու փոքր հատվածների նույնությամբ: Եթե Երզնկացու «Ի մեծութիւն ուրբաթին, ի խորհուրդ խաչելութեանն» և «Յաղագս Վարդավառի տօնին» գործերում մատնացուցելի է նմանության մեկական օրինակ, ապա նույնը չի կարելի ասել նրա «Ի

⁸² Տե՛ս ձեռ. № 2173, էջ 66ա—86ա, հմմտ. «որպէս դատապարտեաց Քրիստոս ի մարմնի իւրում...» հատվածը (էջ 82ա):

⁸³ Տե՛ս ձեռ. № 2173, էջ 404ա—424բ:

⁸⁴ Նույն տեղում, էջ 125ա:

բան մարգարէին Դաւթի»⁸⁵ և «Վասն ննջեցելոց»⁸⁶ աշխատանքների մասին: Առաջին գործերում Երզնկացին այլևայլ խնդիրների վերաբերող զանազան դիտողութուններ ունի: Սակայն նրան զբաղեցնող հիմնական հարցը շրջապատող իրականության, «հիմանալի աշխարհի» և մարդու փոխհարաբերության բացահայտումն է, թեև Նազիանզացու «houf ի ծնունդն Քրիստոսի» ճառից քաղված հատվածները գերազանցապես արարչագործության սահմանումներին են վերաբերում:

«Վասն ննջեցելոց» ճառում Երզնկացին հիմնականում անդրադարձել է կյանքի և մահվան առեղծվածին, կյանքի անցավորությանն ու մահվան հավիտենականությանը, ճիշտ այն նույն հարցերին, որոնք արժարծվել են Գրիգոր Նազիանզացու «Ի Կեսարիոս եղբայր իւր» դամբանական ճառի երկրորդ կեսում: Սակայն Երզնկացու ճառի նմանութունը պայմանավորված չէ հարցադրումների նույնությամբ, այլ արդյունք է Նազիանզացու նշված ճառի հայերեն թարգմանության ուղղակի ծանոթության: Ահա այսպիսի տեսք ունեն վերևում հիշատակված ճառերի համադրելի մասերը.

«Ի ծնունդն Քրիստոսի»
Ձեռ. № 1500 (1283 թ.)

«Ո՞վ նոր խառնմանն, ո՞վ սքանչելի խառնուածոյն, որ էրն լինի և ստացիչն ստացանի և անտանելին տարեալ լինի միջոցաւ հոգով աստուածութեանն, միջնորդելով և մարմնոյ թանձրագունի» (էջ 726ա, հմմտ. ձեռ. № 2600, էջ 6ա, ձեռ. № 948, էջ 183բ—184ա):

«Անհասութեամբն սքանչելի երևի և սքանչելի երևեալ առաւել ևս փափաքելի է և փափաքելի լեալ սրբէ, իսկ սրբեալն աստուածատեսս գործէ» (էջ 725ա, հմմտ. ձեռ. № 948, էջ 179բ):

«Յոհանէս վարդապետի Եզնկայեցոյ՝
ի բան մարգարէին Դաւթի»
Ձեռ. № 2173 (ԺԴ դ.)

«Ո՞վ նոր խառնմանն, ո՞վ սքանչելի խառնուածոյն, որ էրն լինի և ստացիչն ստացանի և անտանելին տարեալ լինի միջոցաւ հոգոյն աստուածութեանն, միջնորդելով և մարմնոյ թանձրագունի» (էջ 111բ):

«Անհասութեամբն սքանչելի երևի և սքանչելի երևեալ փափաքելի է, իսկ փափաքելի լեալ սրբէ, իսկ սրբեալն աստուածատեսս գործէ» (էջ 112բ):

⁸⁵ «Յոհանէս վարդապետի Եզնկայեցոյ ի բան մարգարէին Դաւթի» (տե՛ս ձեռ. № 2173, էջ 101ա—131բ):

⁸⁶ «Նորին Յոհանէս Եզնկայեցոյ] վասն ննջեցելոց ի Քրիստոս և խորհուրդ ստեղծման մարդոյն և մահու» (տե՛ս ձեռ. № 2173, էջ 320ա—336բ):

«բոստ որում վաստակեցան և երկև և արտասուեաց և քաղցեն և ծարաւեցաւ օրինօք մարմնոյն» (էջ 726բ, հմմտ. ձեռ. № 948, էջ 185ա):

«Յաղագս որդույ, քան Գ.»

Ձեռ. № 4149 (1304—1305 քք.)

«անուանցն լծակցութիւն և ատաբուրիւն անուանցն յաղագս խառնմանն» (էջ 59ա):

Հմմտ. «Ի յայտնութիւն տեառն»

Ձեռ. № 1500 (1283թ.)

«զի և ոչ յաղագս անուանցն լծակոխիւ լինիմք» (էջ 728ա):

«Առ Կղեղոնիոս»

Ձեռ. № 4149 (1304—1305 քք.)

«Բնութիւնք երկուք՝ քանզի աստուած և մարդ և զի հոգի և մարմին, քայց որդիք ոչ երկուք և ոչ աստուածք» (էջ 142ա, հմմտ. ձեռ. № 60, էջ 98ա):

«Ի սուրբ պատգայ»

Ձեռ. № 946 (ԺԲ դ.)

«Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ եւ դարձեալ լուսաւորեալ, վասն զի պարտ եւ արժան էր ընդ արարչին շարշարակից լինել եւ արարածոցս⁸⁷ վարագոյր պատառեալ, արիւն եւ ջուր ի կողիցն հեղեալ՝ մին իբրեւ⁸⁸ մարդոյ եւ միւսն իբրեւ⁸⁹ առաւել քան զմարդ՝ իբրեւ աստուծոյ»⁹⁰ (էջ 126ա, հմմտ. ձեռ. № 948, էջ 213ա—բ, ձեռ. № 1500, էջ 740բ):

«վաստակեցաւ և երկեաւ և արտասուեաց և քաղցեաւ և ծարաւեցաւ օրինօք մարմնոյն» (էջ 120ա):

«այս է, որ առնէ զհերձուածողացն զբնորութեան, որպէս ասէ Աստուածաբանն՝ անուանցն լծակցութիւն և օտարութիւն լծակցելոցն անուանց» (էջ 126ա):

«բնութիւնք երկուք՝ քանզի աստուած և մարդ, քայց որդիք ոչ երկուք» (էջ 123ա):

«Յոհանէս վարդապետի Եզնկայեցոյ ի մեծութիւն ուրբաքին, ի խորհուրդ խաչելութեանն»

«Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ և դարձեալ լուսաւորեալ, արիւն և ջուր ի կողիցն բխեալ՝ մինն իբրեւ ըզմարդոյ և միւսն առաւել քան զմարդոյ, զի եւ ջուր ի կողից նորա իբրեւ զմարդոյ, զի ի մեռեալ մարմնոյ ջուր ելանէ: Եւ միւսն առաւել քան զմարմնոյ, զի եւ ի նմանէ արիւն կենդանական, որ առաւել էր քան զմարդոյ, այլ աստուածութեամբն միշտ կենդանոյ: Կէս նորա ի ծովն, որ առաջին և կէս նորա ի ծովն երկրորդ» (էջ 143ա):

⁸⁷ Ձեռ. № 1500՝ արածոցն

⁸⁸ Ձեռ. № 948՝ իբր

⁸⁹ Ձեռ. № 948, ձեռ. № 1500՝ իբրեւ]

⁹⁰ Ձեռ. № 948, ձեռ. № 1500՝ իբրեւ աստուծոյ]

«Ի Կեսարիոս եղբայրն իւր»

Ձեռ. № 4234 (1307 թ.), հմմտ. ձեռ.
№ 1500 (1283 թ.), էջ 780բ—783բ

«Որքան ինչ աստ շարշարիցիմք եւ ո՛չ ամենայն մարդկան կեանք երկայնք՝ առ աստուածային՝ բնութիւնն անվախճան համեմատեալք, թող թէ կենաց նշխարք եւ մուտքս՝ որպէս ասիցեմք մարդկան շնչոյս եւ ժամանակէ ի ասպարիսիս վերջինք: Ո՛րքան ինչ քան զմեզ յառաջ ժամանեաց Կեսարիոս, քանի՞ ինչ եւս զզնացեալս սգասցուք: Ո՛չ ապաքեն ի նոյն ճեպիմք յաւթեան, ո՛չ նոյն ի վերայ դնի մեզ վաղվաղակի կափարիչ, ո՛չ նոյն փոշի յետ սակաւ ինչ եղիցուք: Ո՛չ այսքան շահ ի փոքունս յայսոսիկ յաւուրս, որքան զառաւել շարիս՝ զոմանս տեսանելով եւ զկէսս կրելով, զայս եւ գործելով: Թերեւս սպաս տարեալ բնութեանս արինաց զհասարակաց հարկն. զանշարժելի եւ ոմանց զհետ գալ, եւ քան զոմանս յառաջ երթալ, եւ զայլսն լալ, եւ յայլոցն ողբացեալ լինել, եւ ոմանց փոխարէն առնուլ, զոր յառաջագոյն ի ներքս բերաք՝ այլոց զարտասուացն հանկանակ» (էջ 21բ):

«Այսպիսի⁹¹ են կեանքս մեր, եղբա՛րք, կենդանեացս ժամանակեայք, այսպիսի ի վերայ երկրի խաղք, ոչ եղեալք լինել, եւ լեալք անդէն լուծանել: Երազ եմք ոչ կայուն, երեւումն իմն ոչ ըմբռնելի, թո՛ւչք հաւու՝ անցելոյ, նաւ ի վերա ծովու հետս ոչ ունելով, փոշի, գոլոշի, առաւատնեայ ցաւդ, ծաղիկ՝ ի ժամանակի բուսեալ եւ ի ժամանակի խամրեալ: Մարդոյ՝⁹² իբրեւ զխոտ աւուրք իւր, եւ իբրեւ զծաղիկ ի վայրի այնպէս ծաղկեսցի գեղեցկապէս⁹³: Աստուածայինն

«Վասն նեջեցելոց...»

«Ո՛րքան ինչ աստ շարշարիցիմք եւ զի ոչ ամենայն կեանք մարդկան առ աստուածային բնութեան անմահութիւնն համեմատեալք: Թող թէ կենաց նշխարք եւ մուտք՝ որպէս ասիցեմք մարդկան շնչոյս եւ ժամանակէ ի ասպարիսիս վերջինք: Ո՛րքան ինչ, քան զմեզ, յառաջեաց վաղխճանեալս: Ո՛չ ապաքէն եւ մեք ի նոյն ճեպիմք յաւթեան. ո՛չ նոյն ի վերա դնի մեզ կափարիչ. ո՛չ նոյն փոշի յետ սակաւուց եղիցուք: Զի՞նչ շահիմք ի փոքունս յայսոսիկ յաւուրս, քան զառաւել շարիս՝ զոմանս տեսանելով եւ զկէսս կրելով եւ զայլս եւ գործելով: Թերեւս սպաս տարեալ բնութեանս արինաց զհասարակաց զհարկն զանշարժելին եւ ոմանց զհետ գալ, եւ քան զոմանս յառաջ երթալ, զայլսն լալ եւ յայլոց ողբացեալ լինել, եւ յայլոց փոխարէն առնուլ, զորս յառաջագոյն ի ներքս բերաք՝ այլոցն զարտասուաց հանկանակս» (էջ 333ա):

«Այսպիսին են, եղբա՛րք, կեանք մեր կենդանեացն ժամանակեայք, այսպիսի ի վերա երկրի խաղս, ոչ եղեալք լինել, եւ լեալ անդէն լուծանիլ: Երազ եմք ոչ կայուն, երեւումն իմն ոչ ըմբռնելի, թո՛ւչք հաւու անցանելոյ ընդ աւդ, նաւ ի վերա ծովու հետս ոչ ունելով, փոշի, գոլոշի, առաւատնեայ ցաւդ, ծաղիկ՝ ի ժամանակի բուսեալ եւ ի ժամանակի խամրեալ: Մարդոյ՝ իբրեւ զխոտ աւուրք (էջ 333ա) իւր՝ իբրեւ զծաղիկ ի վայրի այնպէս ծաղկեալ գեղեց-

91 Ձեռ. № 1500՝ այնպիսի:

92 Ձեռ. № 1500՝ մարդ:

93 Արևելագիտութեան ինստիտուտի հանձնարարութեամբ սույն ուսումնասիրութեանը հրատարակութեան երաշխավորելիս, բանասիրական գիտութեաների դոկտոր Արմենուհի Մրապյանը «այսպիսի են կեանքս մեր... գեղեցկապէս» հատված-քաղվածքի առիթով

Դաւիթ յաղագս տկարութեանս մերոյ իմաստասիրեաց ևւ այնոքիւք դարձեալ բանիւք: Ձնուազութիւն աւուրց իմոց պատմեա ինձ, և թլաւ շափով զմարդկային դաւուրս⁹⁴ սահմանէ» (էջ 21բ—22ա, հմմտ. ձեռ. № 1500, էջ 782բ):

«Արդ՝ մի՛ սզասցուք զ՛եսարիոս, յորպիսեաց ի բաց վճարեցաւ շարեացս դիտելով, այլ զմեղ ինքեանս, յորպիսիս մնացեալ եմք» (էջ 22բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 783ա):

«Լքանելով զերկիր՝ հոգովք բերեալք վերնայնոցն հարազատապէս զհետ երթիցեմք: Նոքին ևւ վտանկաւորք կարճամտացն, և թեթևք առաքինեաց մըտաւք» (էջ 22բ, հմմտ. ձեռ. № 1500, էջ 783ա):

«...ոչ եւս տրտմել պարտ է: Հակառակ նմին տխրեցուք պանախտութեանս երկայնութեամբ ըստ աստուածայնոյն Դաւթայ, որ խորանս խաւարի ևւ տեղի շարշարանաց, ևւ տիղմ անդընդոց, ևւ ստուերս մահու...» (էջ 24ա—բ, հմմտ. ձեռ. 1500, էջ 783ա):

Այլևս հասկանալի է, որ Նազիանզացու և Երզնկացու տարրեր ճառերից քաղված հատվածները հիմնականում նույնական են և որևէ բացատրության անհրաժեշտություն չեն պարտադրում: Առանձին հեռացումներ կարելի է արձանագրել «Ի Կեսարիոս եղբայրն իւր» և «Վասն ննջեցելոց» բնագրերում: Սակայն իբրև տարբերություն առանձնացվող միավորները բառեր են, որոնք, բացառությամբ մեկ-երկու դեպքի (խոբանս-խոնարհ), համատեղելի են նույն իմաստի շրջանակներում (օրինակ՝ նշված բնագրերում համապատասխանաբար ունենք՝ անվախճան—

կապէս: Աստուածայինն Դաւիթ յաղագս տկարութեանս մերոյ իմաստասիրեաց ևւ այնոքիկ դարձեալ բանիւք: զնուազութիւնն աւուրց իմոց պատմեա ինձ, և թլաւ շափով զմարդկային կեանս սահմանէ» (էջ 333բ):

«Մի՛ սզասցուք, որ ի բաց վճարեցաւ ի շարեացս, այլ զմեզ՝ յորպիսիս մնացեալ եմք ի շարիս» (էջ 333բ):

«Լքանելով զերկիր՝ վերնայնոյն հարազատապէս զհետ երթիցուք: Նոքին վտանգաւորք կարճամտացն և թեթևք առաքինեացն» (էջ 333բ):

«Ոչ է տրտմելի վաղխճանն, այլ ընդ պանդխտութենէս երկայնութիւնն», զոր Դաւիթ խորանս խաւարի կոչէ՝ այս են վրանք Կեղարու և տեղի շարշարանաց ըստ այնմ խոնարհ արար ի տեղի շարշարանաց, տիղմ անդընդոց և ստուերք մահու» (էջ 333բ):

նկատեց, որ նույն միտքը հանդիպում է նաև Հ. Երզնկացու մոտ (հմմտ. Ա. Մրապյան, Հովհաննես Երզնկացի, ուսումնասիրություն և բնագրեր, Երևան, 1958, էջ 126): Համեմատությունը ցույց տվեց, որ ընդհանրական եղբերը շատ ավելի են, քան ենթադրվում էր: Թվում է, հնարավոր կլինի նոր օրինակների շարքը ընդարձակել, եթե գտնվի Երզնկացու ճառի ավելի ամբողջական ընդօրինակություն: № 2173 գրչագիրը թափված և վերադասավորված թերթեր ունի. այդ մասին նշումներ կան բնագրի լուսանցքներում: Ահա կորած էջերին վերաբերող ծանուցումը. «այս տեղս ևս պակաս է, բայց ոչ գոյ և ոչ գտանիք» (ձեռ. № 2173, էջ 333բ):

⁹⁴ Ձեռ. № 1500՝ աւուրս:

անմահութիւն, յառաջ ժամանեաց—յառաջեաց, կեսարիոս—վախնանեալս, որքան—քան, ոմանց—յայլոց, զաւուրս—կեանս և այլն): Երզնկացու ճառում կան նաև առանձին արտահայտութիւններ զաւարման դեպքեր: Բայց հենց այդ տարբերութիւններն էլ հիմք են տալիս ասելու, որ Երզնկացու ձեռքին եղել է Նազիանզացու ճառի հայերեն թարգմանութեան մի այնպիսի օրինակ, որը պատկանել է Մխիթար Այրիվանեցու ընդօրինակութեան խմբին:

Գրիգոր Նազիանզացու մատենագրական ժառանգութեան հայերեն թարգմանութիւններից կատարված քաղումների համեմատում-դասդասումը ցույց է տալիս, որ ձեռագրերում կան նաև անանուն բնագրեր, որոնցում կարելի է գտնել Նազիանզացու ճառերից և թղթերից կատարված առանձին քաղումներ: Այդ բնույթի աշխատանք է, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի № 579 ձեռագրում պահպանված «Վկայութիւնք սրբոց հարցն ուղղափառաց» խորագիրը կրող բնագիրը⁹⁵, ուր հատվածներ կան Աթանաս Աղեքսանդրացու, Գրիգոր Նեոկեսարացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Հովհան Ոսկեբերանի և ուրիշների երկերից: Կազմողը Նազիանզացուց ընտրել է դավանական խնդիրներ արծարծող մեկ թուղթ և մեկ ճառ:

«Առ Կղեղոնիոս»

Ձեռ. № 4149 (1304—1305 թթ.)

«Եթէ ոչ որ երկիր պագանիցէ խաչելոյն նզովեալ եղիցի և կարգեսցի ընդ աստուածասպանսն» (էջ 142բ):

«Ի սուրբ պատմայ»

Ձեռ. № 946 (ԺԲ դ.)

«Արիւն աստուծոյ եւ շարշարանս լսելով եւ մահ մի՛ ուրեք ի վայր անկցիս անաստուածարար՝ իբրեւ աստուծոյ ջատագով⁹⁶, այլ առանց ամալթոյ եւ յերկուանալոյ կե՛ր զհացն, ա՛րբ զարիւնն՝ եթէ կենաց փափագես» (էջ 116բ, հմմտ. ձեռ. № 948, էջ 208բ—209ա, ձեռ. № 7943, էջ 56ա):

«Վկայութիւնք սրբոց հարցն ուղղափառաց»

Ձեռ. № 579 (1276 թ.)

«Եթէ որ ոչ երկրպագէ խաչեցելոյն նզովեալ եղիցի և կարգեսցի ընդ աստուածասպանսն» (էջ 128ա):

«Արիւն աստուծոյ և շար[շար]անս լսելով և մահ մի՛ ուրեք ի վայր անկցիս անաստուածարար՝ որպէս աստուծոյ ջատագով, այլ առանց ամալթոյ և յերկուանալոյ կե՛ր զհացն, ա՛րբ զարիւնն՝ եթէ կենաց փափագիցես» (էջ 128ա—բ):

⁹⁵ Ձեռ. № 579, էջ 118ա—131բ:

⁹⁶ «Արիւն... ջատագով» հատվածը նույնությամբ ունի նաև Ասողիկը (տե՛ս էջ 228), սակայն շարունակութեան տարբերութիւնն ինքնին նշանակում է, թե սույն քաղումը կատարվել է Նազիանզացու ճառի թարգմանութեան օրինակից և չի կապվում Ասողիկի Պատմութեան հետ:

Անշուշտ, Գրիգոր Նազիանզացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանություններից կատարված քաղում-հղումների ցանկը չի ավարտվում ո՛չ բերված հեղինակների անուններով, ո՛չ էլ համեմատված օրինակներով: Համեմատությունները շարունակելու դեպքում ընդհանրության օրինակներ կարելի է գտնել «Տեառն Կոմիտասու Հայոց կաթողիկոսի վասն հաւատոյ» թղթում⁹⁷, Վարդան Արևելցու «Նախադրութիւն ծննդոց մեկնութեան...»⁹⁸ բնագրում, Հակոբ Ղրիմեցու⁹⁹ գործերում և այլուր¹⁰⁰: Այսպես, Կոմիտաս կաթողիկոսը «Վասն հաւատոյ» խնդիրներ արժարժելիս անդրադառնում է համաբնույթ հարցերին լավատեղյակ հիմնական հեղինակությունների գրեթե բոլոր բացատրություններին: Նա աշխատում է ամփոփ ներկայացնել հայ մատենագրության ընձեռած նյութը դավանական քիչ թե շատ վիճելի արժարժումների առումով ևս: Ինչպես և սպասելի էր, հոր և որդու փոխհարաբերությանը, նրանց բնույթին վերաբերող մեկնաբանություն առաջադրելիս նա մերժում է Ապողինար կաթողիկեցու և այլոց տեսությունները և այդ նպատակով դիմում եկեղեցու նշանավոր հայրերի քննություններին՝ Նազիանզացու ճառերի հայերեն թարգմանություններին: Սակայն հայ մատենագրության մեջ եղած նման դրվագների լիակատար մատենագիտություն կազմելը մեր նպատակից դուրս է, մանավանդ որ դրանով մեր բացահայտած փաստերից մակաբերվող եզրակացությունը չի փոխվի: Ուստի «Հետազոտ քաղումներ» խորագրի տակ փորձեցինք ներկայացնել VII—XIII դդ. հայոց մատենագրության մեջ եղած այն հիմնական վկայությունները, որոնք պատկերացում են տալիս բյուզանդական մատենագրի գրական վաստակի մեղանում ունեցած նշանակության մասին: Նշված ժամանակահատվածում եղած ընդհանրությունների համեմատությունը ցույց է տալիս, որ շրջանառության մեջ են գտնվել Նազիանզացու տարբեր ճառեր և թղթեր, ժառանգության նշանակալի մասը: Ասվածից հետևում է, թե Նազիանզացու մատենագրական վաստակի «կենսագործունեությունը» սուկական է եղել:

Քաղումների արձանագրելի ընդհանրություններից մեկն այն է, որ դրանք հայկական աղբյուրների շրջանակներում երբեք միմյանցից չեն սերում: Դրանում համոզվելու համար պետք է համեմատել Ստ. Սյունե-

⁹⁷ Տե՛ս «Գիրք թղթոց», էջ 212—219:

⁹⁸ Տե՛ս ձեռ. № 1267, էջ 23ա—բ, 24ա, 25բ, 28ա, 32բ և այլն:

⁹⁹ Տե՛ս ձեռ. № 7189, էջ 28բ:

¹⁰⁰ Գրիգոր Նազիանզացու ճառերից քաղված հատված կա նաև Ուխտանեսի Պատմության «Յաղագս թագին երանելոյն Կոստանդիանոսի...» գլխում (տե՛ս նրա «Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 109—110):

ցի— Ստ. Ասողիկ («եթէ մարմինն...»), Ստ. Սյունեցի—Գր. Տղա («զի բանն անտեսանելի...»), Ստ. Սյունեցի—Ստ. Ասողիկ—Հ. Երզնկացի («աստուած խաշեալ...»), Ստ. Սյունեցի—Հ. Երզնկացի («ո՞վ նոր խառնըմանն...»), Ստ. Ասողիկ—Անանուն («զի մի ուրեք...») մատենագիրների որոշ նմանութիւնն ունեցող առաջարկվող հատվածները: Հայ մատենագիրների բնագրերում նշմարվող ընդհանրական վկայակոչութիւնները առանձին-առանձին գալիս են Նազիանզացու ճառերի կամ թղթերի հայերեն թարգմանութիւններից: Իսկ դա հնարավորութիւն է տալիս ասելու, որ բյուզանդական մատենագրի գրական վաստակը ճանաչողական լայն ընդգրկում ունենալուց բացի, նույն գնահատութիւն-արժեքավորումն ունի տարբեր հաստատութիւններում:

Նազիանզացու ճառերից և թղթերից քաղված օրինակների հիման վրա կատարված հայ մատենագիրների ընդհանրացումներն առաջին հերթին պիտի արժեքավորել դրանք վկայակոչող հեղինակների աշխարհայացքի գնահատման առումով: Քիչ չէ նաև դրանց զուտ աղբյուրագիտական կարևորութիւնը համապատասխան բնագրերը քննական հրատարակութեան պատրաստելիս: Թվարկված աղբյուրները (բացառութեամբ Ստ. Սյունեցու մի թղթի, Ասողիկի Պատմութեան և Շնորհալու ու Գր. Տղայի թղթերի) հիմնականում անտիպ են և չքննված, թեև մեկ-երկու ձեռագրերի հիման վրա կատարված հրատարակութիւնները ևս տեքստի ճշգրտութիւն չեն երաշխավորում: Այս առումով ուշագրավ օրինակ է Ստ. Սյունեցու՝ «Յաղագս ժողովոյն սուրբ հարցն...» թուղթը: Վերջինս հրատարակվել է երկու անգամ, բայց, այդուհանդերձ, համեմատութիւնը ցույց է տալիս, որ այն առանց համապատասխան սկզբնաղբյուրների համեմատութեան ու պահանջվող ճշգրտումների թերի է: Այդ առումով օգտակար կարող է լինել Գր. Նազիանզացու «Ի սուրբ պասխայ» ճառը, որից օգտվել է Սյունեցին: Հասկանալի է, որ նման բնագրերի հետ աշխատելիս առաջին հերթին անհրաժեշտ է հին ընդօրինակութիւնները համեմատելու ճանապարհով գրչական ընդմիջարկութիւնները հայտնաբերել և սրբագրել: Այդ իմաստով ևս կարևոր է ձեռագրական այլ խմբերից եկող քաղումների դերը: Հայ մատենագիրների բնագրերն էլ իրենց հերթին նույն միջամտութիւն-սրբագրումը կարող են առաջադրել Նազիանզացու հայերեն թարգմանութիւնների բնագրերը հրատարակութեան պատրաստելիս:

ՆԱԶԻԱՆՁԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XVIII դ. առաջին կեսի մատենագիր Մեսրոպ Գանձակեցին հետևյալ կերպ է պատճառաբանում նազիանզացու «Առ որս» ճառերը մեկնելու անհրաժեշտությունը. «Ի բազում դժուարահաս գրոցն և ի գիտութեանց մինն էր այս գիրքս Գրիգորի Աստուածաբանի, որ կոչի Առ որս, զի վիճէ ընդդէմ Եւնոմիանոսացն և Արիանոսացն և հոգեմարտ հերձուածողացն, վասն որոյ ես՝ անբանս ի բանականաց և տրգէտս ի գիտնոց, յերկրէն Աղուանից, մեղապարտ Մեսրոպ անարժան քահանայ և կրօնաւոր յընթեռնուլն ոչ կարէի իմանալ զօրութիւն սուրա, և իմ խնդրեալ և որոնեալ աստ և անդ թերևս գտանէին լուծմունս ինչ և կամ մեկնութիւնս»¹: Հասկանալի է, որ եթե Մեսրոպ Գանձակեցու համար անհասկանալի էին Գրիգոր նազիանզացուն հետաքրքրող հարցերի շրջանակները, ապա ընթերցող լայն շրջանների համար դրանց մեկին լինելու մասին խոսք չէր կարող լինել: Ուստի և անհրաժեշտութեան թելադրանքով գրվել են մեկնություններ, պատճառներ և լուծմունքներ: Նշված երեք անվանումներն էլ թեև միևնույն գրական նպատակն ունեն, այդուամենայնիվ դրանցից յուրաքանչյուրը օժտված է առանձնահատուկ կողմերով, գոնե ձևական-կառուցվածքային առումով: Պատճառները սովորաբար ունենում են որոշ վարքագրական հաղորդումներ, տեղեկանք տվյալ գործի ուղղակի պատճառի մասին: Պատճառի հեղինակը արտացոլում է նաև իր վերաբերմունքը քննվող խնդրի շուրջ: Պատճառի կազմողը որոշակի մատենագիտական գիտելիք ու հմտություն պիտի ունենա: Սովորաբար այդ կարգի նյութերը մատուցվում են տեսութիւն ընդհանուր խորագրի տակ: Մի խոսքով՝ պատճառը նպաստում է այս կամ այն մատենագրական հուշարձանի տարածմանը, ճանաչում ձեռք բերելուն, իսկ լուծմունքը բնագրի անհասկանալի մասերը մեկին դարձնելուն:

Լուծմունքը, ինչպես նաև մեկնությունը, ուղեկցվում է մուտք-առաջաբանով, ուր ներկայացվում են հեղինակը (բնագրի), բուն գործը, երբեմն նաև ընդհանրապես ժանրը: Լուծմունքի հեղինակը ինքն է ընտ-

¹ Ձեռ. № 1466, էջ 1ա:

րում բացատրության կարոտ արտահայտություններն ու հատվածները: Լուծմունքի և պատճառի փոխադարձ անցումներ կան ձեռագրերում: Այսպես, օրինակ, XII դ. երկրորդ կեսի մատենագիր Եղիա Ասորու լուծմունքներից մեկը կոչվում է «Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի պատճառ Քրիստոս ծնեալ ճառին»², բայց իրականում այն լուծմունք է: Ավելին՝ Եղիա Ասորու նույն աշխատությունը մի դեպքում հանդիպում է «Պատճառ Յաղթեցայ գրոցն»³, մեկ այլ դեպքում՝ «Լուծմունք Յաղթեցայ գրոց»⁴ խորագրերի տակ: Լուծմունքը ավելի ընդհանրական է մեկնության հետ: Մերձավորության այդ պարագան էլ երբեմն պայմանավորում է նոր տերմինի երևան գալը ձեռագրերում՝ «մեկնութիւն լուծումնաբար»⁵:

Առհասարակ մեկնությունների անհրաժեշտության, դրանց տեսակների տարբերակման ու գնահատության առումով ուշագրավ է միջնադարյան սույն բացատրությունը, «...ոմանք այլաբանօրէն և նսեմարար խօսին զնիւթոյ իմեքէ և առ բացատրութիւն իմաստիցն պէտս ունին մեկնութեան՝ որպիսիք են բանք Աստուածաշունչ գրոց: Եւ ոմանք թէպէտ բացայայտօրէն և լուսափայլ ունին զընթացս իմաստից, այլ վասն զյաճախութիւն աստուածային խորհրդոցն պարունակելոյ ոչ դիւրաւ ամենեցուն է որոճալի, ուստի սոքա ևս պէտս ունին մեկնութեան՝ որպիսիք են բանք նորոյ կտակարանին: Իսկ ոմանք են ամենեին պայծառագոյն, քանզի զբնաւս ի վերո գրելոց նսեմութեան բանից անտարակոյս յայտնի երեցուցանեն՝ որպիսիք են մեկնութիւն Սուրբ գրոց և Ճառք ներբողենից և այլ համօրէն վարդապետական բանք»⁶:

Նախորդ քննությամբ տեսանք, որ Գրիգոր Նազիանզացու մատենագրական ժառանգության նկատմամբ հայերի հետաքրքրությունը եղել է բավական մեծ ու տևական: Նման պարագայում, բնականաբար, ավելի է հաստատուն դառնում դրանք մեկնելու, պատշաճ բացատրություն-պարզաբանությամբ օժտելու անհրաժեշտությունը:

Մեկնություններ գրվել են Նազիանզացու բոլոր գիրք-ժողովածուներ-

² Ձեռ. № 621, էջ 259ա:

³ Ձեռ. № 1480, էջ 203ա: Եղիա Ասորու գործերը թեև ունեն «Մեկնութիւն ճառից...» կամ «Պատճառ ճառին...» խորագրերը, բայց իրականում այդ անվանումների տակ ընդօրինակված բոլոր բնագրերն էլ լուծմունքներ են (տե՛ս ձեռ. № 1480, էջ 112ա—242ա):

⁴ Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Բ, էջ 390:

⁵ Ձեռ. № 6362, էջ 85բ: Սույն քննության ընթացքում դրանք մեկնություն ենք կոչելու տերմինի ընդհանուր գործածությանը հետևելով: Իրականում, ասվեց, կան նաև պատճառներ և լուծմունքներ:

⁶ Ձեռ. № 7943, էջ 265:

րի վերաբերյալ, թեև «Գր. Աստուածաբան հին ս. Հարց մէջ ամենէն անկի իմաստասիրաբար գրող և նրբախօսն է, քիչ բառով շատ բան իմացնող. սակայն նույն իսկ կարճարանութեամբն ալ իմաստքն մթանան և դժուարիմաց են. անոր համար գրեթէ անհրաժեշտ հարկաւոր է մեկնութիւնն ալ»⁷:

Ավելի բան երեք տասնյակ ընդօրինակություններով են հայտնի նաղիանդացու մատենագրական ժառանգության հայերեն մեկնությունները: Քննությունները հիմնականում կատարվել են ըստ գիրք-ժողովածուների: Պատահում են նաև առանձին ճառերի մեկնություններ, որոնք, ինչպես ցույց է տալիս համեմատությունը, համապատասխան գրքերից բաղված միավորներ են և ոչ թե անկախ մտահղացումներ: Մեկնությունների նպատակը մատնացուցող «ի վայելումն» հիշատակարանային բնորոշումը բավական հաճախադեպ է ձեռագրերում: Մեկնիչները նույնարևույթ սկզբնաղբյուրներում սովորաբար կոչվում են «բացայայտող այսմ տառի»⁸:

Գրիգոր Նաղիանդացու մատենագրական ժառանգության հայերեն մեկնությունները պատահում են երկու տեսքով՝ հեղինակավոր և անանուն: Նաղիանդացու գործերի մեկնությունների հեղինակներ են հանդես գալիս Ներսես Շնորհալին, Վարդան Հաղբատեցին, Եղիա Ասորին, Դավիթ Քորայրեցին, Հովհաննես Իմաստասերը, Գրիգոր Աբասյանը, Մխիթար Գոշը, Գևորգ Երզնկացին, Թովմա Մեծոփեցին և Մեսրոպ Գանձակեցին: Թվարկված ոչ բոլոր մատենագիրների մեկնություններն են հասել մեզ: Այսպես, ուղղակի վկայություն ունենք այն մասին, որ Վարդան Հաղբատեցին⁹ «երեք մեծ կապաղովկացիների» գործերի պատճառներին «տեղեկացաւ ի ներսէսի կաթողիկոսի յօրինակէն»¹⁰: Վարդան Հաղբատեցու տեղեկանքը վերաբերում է միայն «Առ որս» ճառաշարին, մինչդեռ Ղ. Ալիշանի պնդմամբ՝ «Դարձեալ սոյն վարդապետս»

⁷ Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 264:

⁸ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Գ., կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, էջ LXXXVII:

⁹ Ըստ Ն. Ակինյանի՝ Վ. Հաղբատեցին մահացել է 1191—94 թթ., (տես նրա Մատեն. հետազոտ., Ա, էջ 68—77), ըստ Հ. Մարգարյանի ճշգրտման՝ 1193 թ. (տե՛ս «Լրարեր», 1975, № 11, էջ 54, ծան. 34):

¹⁰ Ձեռ. № 3937, էջ 59բ, հմմտ. «տեղեկացեալ ի ներսէս կաթող[իկոս]է և յաւրինակի գտ գրեալ զայս և է այսպէս» (ձեռ. № 437, էջ 116ա—բ): № 3937 ձեռագրում սույն խորագիր-հաղորդումը անմիջականորեն նախորդում է Գրիգոր Նյուաացու գործերի մեկնություններին (էջ 59բ—69բ), բայց իբրև քննության ընդհանուր խորագիր վերապահելի է նաև անմիջական շարունակությանը՝ «Առ որս» (էջ 69բ—70բ) և «Պահոց գիրք» (էջ 74ա—77ա) ժողովածուների մեկնություններին:

Վարդան խնդրէր էր ի Շնորհալույ՝ Գրիգոր Աստուածաբանի «Քրիստոս ծնեալ» ըստած ճառին մեկնութիւնը¹¹: Ավելին, Ղ. Ալիշանը գտնում է, որ Վարդանը Շնորհալու աշխատասիրության հիման վրա «գրեց Լուծմունք, որ և գտնուի հիմայ, թէ և հեղինակաց անունն նշանակուած չըլլայ»¹²: Նշված հաղորդմանը հետեւելիս հեղինակային նշում չունեցող լուծմունքների շարքում պիտի փնտրել Վարդան Հաղբատեցու ենթադրվող աշխատանքը: Սակայն այդ կերպ վարվելու դեպքում արդյունքը այս կամ այն բնագրի շուրջ կատարվող ենթադրությունից այն կողմ չի անցնի, որովհետև համեմատության համար ձեռքի տակ չունենք Շնորհալու հիմք աշխատությունը: Եթե բնագրի բացակայության պայմաններում հնարավորություն չունենք գնահատելու Շնորհալու մեկնությունը¹³, ապա նույնը չի կարելի պնդել Վարդան Հաղբատեցու մասին. որը, ասվեց, միաժամանակ գրել է «Առ որս» շարքի պատճառներ:

Վարդան Հաղբատեցին լավատեղյակ է «երեք մեծ կապադովկացիների» կյանքի ու գործունեության մանրամասներին, անուն առ անուն գիտե ոչ միայն Նազիանզացու մատենագրական վաստակը, այլև նրան ներկայացնում է որպես գրական մեկենասի: Այս ամենով էլ Վարդանի տեղեկանքը ինքնատիպ է և հնարավոր է, որ ունի ներսես Շնորհալուց եկող մաս¹⁴:

Պահպանված պատճառների շարքում Վարդան Հաղբատեցու «Պատճառ յաղագս Առ որս գրոց» աշխատությունը իր բնույթով մասամբ առանձնանում է: Դատելով մեր տրամադրության տակ եղած ձեռագրի

¹¹ Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 264, հմմտ. Ն. Ակիմեան, Մատենագրական հետազոտութիւններ, Ա, Վիեննա, 1922, էջ 70:

¹² Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 264—265: Մեր համոզմամբ՝ Վարդան Հաղբատեցու այդ լուծմունքների շարքը պիտի դասել առաջին հերթին «Ի Բասիլիոս Կեսարացի» հայտնի դամբանական ճառի անանուն լուծմունքը, որը մեղ ծանոթ է Ծսայի նշեցու ընդօրինակութեամբ (տե՛ս ձեռ. № 437, էջ 107ա—109բ): Նշված բնագիրը այլ խմբագրություն—ընդօրինակությունների համեմատութեամբ հրատարակության ենթ պատրաստել:

¹³ Համապատասխան բնագիրը (Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 317) ձեռքի տակ չունենալու պատճառով չենք կարող գնահատել նաև Թովմա Մեծոփեցու հավելումը «Քրիստոս ծնեալ» ճառի լուծմունքին, որ հաղորդվում է ըստ հեղինակի հիշատակության. «...դնուաստ վարդապետս Թովմա յիշել աղաչեմ, որ յետոյ գտայ եւ գրեցի ի գիրս ՊԶԳ (=1434) թվականիս ի սուրբ ուխտս Աստուածածնի, որ Մեծոփայ վերածայնի» (Ղ. Տաշյան, Ցուցակ..., էջ 755, հմմտ. «ԺՆ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Գ, էջ 376):

¹⁴ Գրիգոր Նյուսացու և Գրիգոր Նազիանզացու գրոց մեկնությունները ունեն հետևյալ ընդհանուր խորագիրը. «Պատճառք նիւսացո գրեանացն, զոր Վարդան վարդապետն տեղեկացաւ ի ներսեսէ կաթողիկոսի յօրինակէն» (ձեռ. № 3937, էջ 59բ):

(№ 3937, 1370 թ.) ընձեռած նյութից, հեղինակը ամենևին հակված չէ վերապատմելու ճառերի առանձին դրվագներն ու դրանց առնչվող օտար հաղորդումները և ոչ էլ իր իսկ դատողությունները ձուլելու հեղինակային բացատրություններին: Սեղմ է ու հակիրճ նրա ասելիքը: Ներկայացնելով «Յաղագս որդոյ» ճառը Վարդանը գրում է. «Աստ ընդդիմանա Արիոսի, Ենոմիոսի... ցուցեալ զօրինակն վասն որդո, որքան է կարողութիւն»¹⁵: Նույն կերպ են բնորոշվում նաև մյուս ճառերը՝ յուրաքանչյուրն ըստ բովանդակության հիմնական մասի՝ ըստ գրելու անհրաժեշտության, պատճառի:

Վարդան Հաղբատեցու վաստակը այս բնագավառում չի ավարտվում «Ա.ռ որս» գրքի պատճառի շարադրումով: Նա և աշակերտներ է պատրաստել, որոնք շարունակել են Գրիգոր Նազիանզացու աշխատանքների ուսումնասիրությունն ու մեկնությունը: Վարդան Հաղբատեցու աշակերտների թվում այդ իմաստով ամենաերևելի դեմքը Դավիթ Քոբայրեցին է, որի մեկնություններին կանդրադառնանք XII դ. երկրորդ կեսի մատենագիր Եղիա Ասորու լուծմունքները գնահատելուց հետո:

Եթե դատենք պահպանված ընդօրինակություններով, ապա Եղիա Ասորին միակ մատենագիրն է, որի՝ Նազիանզացու շորս գիրք-ժողովածուների մասին գրած բոլոր լուծմունքներն էլ հասել են մեզ: Մեծ չէ պահպանված ձեռագրերի թիվը՝ ձեռ. № 5254 (1280 թ., էջ 145բ—161ա)¹⁶, ձեռ. № 437 (ԺԴ դ., էջ 119ա—121բ), ձեռ. № 1480 (1617 թ., էջ 112ա—242ա), ձեռ. № 621 (ԺԷ դ., էջ 251ա—328բ): Թվարկված գրչագրերն ունեն հեղինակային պատկանելության համապատասխան ցուցում, և համեմատությունը ցույց է տալիս, որ ամենաամբողջականը № 1480 ձեռագիրն է, № 621-ը համառոտ ցանկի տպավորություն է թողնում, իսկ № 5254 ընդօրինակությունը միջամտված տարբերակ է ներկայացնում: Բոլոր ընդօրինակությունները, բացառությամբ № 5254 ձեռագրի, հիմնականում համընթաց են № 1480 ձեռագրի հետ: № 5254 և № 1480 ձեռագրերի համեմատությամբ պարզվում է հետևյալը.

ա) կան պատճառներ, որոնք նույնական են. նկատի ունենք, օրինակ, «Դարձեալ իմ Յիսուս» ճառի պատճառը (տե՛ս ձեռ. № 5254, էջ 149ա—150ա, ձեռ. № 1480, էջ 123բ—127ա).

բ) կան բնագրեր էլ, որոնք բոլորովին օտար տեքստի տպավորություն են թողնում¹⁷ (օրինակ՝ «Ի պասքա և ի հեղգութիւն», ձեռ. № 5254, էջ 150բ—151ա, հմմտ. ձեռ. № 1480, էջ 136ա—145բ).

¹⁵ Ձեռ. № 3937, էջ 69բ:

¹⁶ Հմմտ. Ն. Պողոսյան, Մայր ցուցակ..., Բ, էջ 390—391:

¹⁷ Կարելի է մատնանշել այլ տարբերություններ ևս. իրար հաջորդող բնագրերից:

գ) որոշ ճառերի պատճառներ նման են ընդհանուր բովանդակությամբ միայն: Այդ բնույթի օրինակներից վկայակոչենք երկուսը.

ա) «Նղիայի ասացեալ ասորոց լարդապետի պատճառ վերլուծութեան ի խառն սրբոյն Գրիգորի Աստուածաբանի»

Ձեռ. № 5254 (1280 թ.)

«Արդ Քրիստոս ծնեալ ճառդ զկնի ժԸ ճառի համարոյն է ասացեալ, իսկ ըստ գրոց նախադասի վասն տանախմբութեան: Եւ է ասացեալ զսա ի Կոստանդինուպոլիս, յորժամ հերձուածն Արիոսի և Մակեդոնի ճարակէր ի թագաւորական քաղաքին և ոչ ոք մնաց յուղղափառութեան բայց միայն թուով արք Ը և կարծեալ ուղղափառացն ըստ հերձուածողաց կարծեացն կործանեալ: Յայնժամ յղէ թագաւորն Թեոդոս առ Մեծըն Բասիլիոս և ծանուցանէ նմա ըզկործանումն առ ի հերձուածողացն...» (էջ 145բ):

բ) «Պատճառ նաւակատեաց նառիւն»

«Աւրէն էր սրբոց հարցն ըստ առաքելական սահմանադրութեանց ի սրբոց հարցն, որ ի Նիկիա: Յամենայն ամի երիցս անգամ ժողովել ի միասին վասն հոգևոր կարգաց եկեղեցո և քննութեան հաւատո և կրանից յեկեղեցիս մայրաքաղաքացն ի դարնանային, յաշնանային, ձմեռնային ժամանակս: Արդ՝ այս պատճառաւ Գրիգոր Աստուածաբան ի նորում կիրակէիս առ Բարսեղ եկն ի մայրաքաղաքն Կեսարիա» (էջ 154ա):

«Նղիայի ուղղափառի և իմաստասիրի Ասորոյ մեկնութիւն նառից մեծի հոնտորին Գրգիորի Աստուածաբանի...»

Ձեռ. № 1480 (1615—1617 թթ.)

«Յառաջ քան զթագաւորել Մեծին Թեոդոսի Գրիգոր Աստուածաբան երթեկս առնէր ի Կոստանդնուպոլիս Ը ամ յեկեղեցին Անաստասիոն կոչեցեալ: Եւ ապա յետ այնորիկ թագաւորեալ Մեծ Թեոդոս մեծարեաց զնա յիւր քաղաքն և եկաց ի ժամանակս նորա Դ ամ՝ մինչև ի ժողովն մեծ: Եւ զճառս զայս յէտ ժԸ ճառի է ասացեալ անդի յայտնութիւն տեառն հրամանաւ թագաւորին, զի բազում հերձուածս խօսէին ի Քրիստոսի տնօրէնութիւնն ի հրէից և ի հեթանոսաց հարկեցաւ խաւսել» (էջ 112ա—բ):

«Յաղագս նաւակատեաց նառիս այսպէս իմացում...»

«Սովորութիւն էր յառաջ ըստ առաքելադիր սահմանին վերադիտաց եկեղեցոյ երիցս ի տարոջն ի միասին ժողովել առ մայրաքաղաքացին, ընթանալ... սակս քննութեանն հաւատոյ և կրօնից՝ առ ի յուղղութիւն թերացելումն և ի հաստատութիւն բարեպաշտ աւանդից: Այսր աղագաւ Մեծս Գրիգորիոս Աստուածաբան գայ ի նորումն կիրակէի առ սուրբ եպիսկոպոսապետն Բասիլիոս ի մայրաքաղաքն Կեսարացոց» (էջ 145բ—146ա):

Հիմնականում սրանք են այն արձանագրելի կետերը, որոնք բխում են համեմատության ընթացքից: Սակայն դժվարանում ենք № 5254 գրչագրի պարունակության համար հիմնավոր բացատրություն առաջադրել: Հավանաբար գործ ունենք որոշակի նպատակով պատրաստված, դավանական առօրյա վեճեր հարուցող բնագրերից զերծ խըմ-

մեկի հեղինակը արտացոլված է, մյուսինը՝ ոչ, կան թերի պատճառներ, իսկ որոշ ճառերի պատճառներ էլ առհասարակ բացակայում են:

բազմաթիվ տարբերակի հետ: Բոլոր պարագաներում՝ ընդհանրություն-տարբերությունների բնույթը հնարավորություն է տալիս պնդելու, որ № 5254 ձեռագրի պատճառները ընդօրինակման ճանապարհով առաջացած սովորական տարբերակ կոչելու որևէ հիմք չունենք:

Եղիա Ասորու լուծմունքներն ունեն ընդարձակ մուտք-ներածական մաս, ուր արծարծվում են դանազան խնդիրներ, որոնք ուղղակի կամ միջնորդավորված ճանապարհով կապվում են բուն լուծմունքի հետ: Լուծմունքների հեղինակը կարևոր տեղեկություններ է հաղորդում Նադիանդացու այս կամ այն դործի ստեղծագործական պատմության, երբեմն նաև այն պայմանավորող պարագաների անհրաժեշտության, լուծմունքի հարկավորության և այլնի մասին: Եղիա Ասորին հասկանալի պատճառով անդրադառնում է նաև IV դարի դավանական վեճերին ու քաղաքական իրադարձություններին, հոգևոր և աշխարհիկ անձանց դործունեության այն դրվագներին, որոնց հետ անմիջական կապ կամ առնչություն է տեսնում: Արդ՝ ասվածի մասին պատկերացում կազմելու նպատակով յուրաքանչյուր գրքի մուտք-առաջաբանից ներկայացնում ենք երկուական հատված ըստ № 1480 գրչագրի:

ա) Պատճառ դարձեալ իմ Յիսուս և առին. «Յորժամ Քրիստոս ծնեալ ճառն կատարեաց և հրաշաքանութեամբ զփառաւորութիւն աւարտեաց, լուեալ թագաւորն հանդերձ բազմութեամբ զառացեալսն՝ զարմացեալ հիանայր ընդ լուսափայլ իմաստս հոգոյն, որով աստուածախօսն էր: Իսկ ի մտանել արեգականն հրամայէ ի մէջ քաղաքին գիտել՝ զի՞նչ արդևք ասիցեն հերձուածողքն, որ ոչ ինչ վիճաքանեցին ընդդէմ Գրիգորի: Եւ դարձեալ ի վաղիւն պատմեցին զքրիստոնէական փիլիսոփայիցն, եթէ՞ զպարտութիւն խոստովանեցան» (էջ 123բ):

բ) Նորին ի ժողովոյն. «Զայս ծանէաք ճառիս պատճառ այսմ, զի յոլովք ի յունականացն վարկպարազի վարկանէին և առանց յարմարութեան բան. զԺողովողիս շարակարգութիւն բանից վասն յայլ և այլ դէմս տեսակի բանից՝ որպէս թէ շիցէ հնար ի մի դիտաւորութիւն բանի հայեցուցանել, որք ի ներքս իցին իմաստիցն յեղանակք: Վասն որոյ սուրբս այս և կատարեալ իմաստութիւնն հարկաւորի յայսմանէ տուն առ տուն...» (էջ 155ա):

գ) Յաղագս աղբատասիրութեան. «Գրիգորիոս Աստուածաբան սովորաբար եկեալ ի Կեսարիայ առ Մեծն Բասիլիոս՝ սիրելութեան, սննդակցութեան և հնազանդութեան օրինօք և տեսանէ զնա զաղքատասիրութեանն՝ հաստատելով զօրէնս, զանմարդասիրութիւն, խստասիրութիւն անողորմիցն ի բաց դարձուցանելով զայնոսիկ, ոյք զուրուկն և զպատագրոսն արտաքս վարէին անգորով և տմարդի կամօք: Եւ հրա-

մայէ աստուածայինն այր յամենայն տեղիս ուրկանոցս շինել՝ ի քաղաքավայրս, ի շէնս և յաւանս, և ըռճիկս կարգէ նոցա... Զոր տեսեալ սրբոյս այսորիկ զայն կարգ ուղղութեանն գայ յիւրային վիճակեալ եկեղեցին և զնոյն օրէն հաստատէ ողորմածութեանն» (էջ 158բ)։

դ) Առ Եւնովիանոսն. «Եւ եթէ բանի ցանկանայցէք ունիք պատճառս բանիւ ըմբերանել զհեթանոսացն առասպելս և զունայնաձայնութիւնս, նաև զէակացս տեսակս։ Իսկ յաղագս աստուծոյ պակասէ իմաստ և բան. այնքան իմանալ և ասել, որքան մեզ է օգտակար և շահ։ Եւ զի Ե[ւ]նովիացիքն ունէին յԱրիոսի աղանդոյն, ունէին և ի Մակէդոնին և քաջալեզուք էին և պաճուճաբանք։ Վասն այն զառաջինն առ նոսա խօսի բան» (էջ 162ա—բ)։

ե) Յաղագս սրբոյ հոգոյն. «Հարկ է այժմ ախոյանիս մեծի ընդդէմ հոգեմարտիցն զինել այնց, որք նուազ և ծառայական ասացին զհոգոցն անձնաւորութիւն և փոքր քան զհայր և զորդի։ Եւ խնդրէին ի գիրս սուրբս աստուածական անուն գտանել հոգոյն սրբոյ...» (էջ 186բ—187ա)։

զ) Յաղագս աստուածաբանութեան առ Արիանոսն... «Ի ժամանակի յորում կոչեցեալ եղև նա ի Կոստանդնուպօլիս ի Թեոդոսէ Մեծէ, և եկաց նա անդ աթոռակալ ի նմին տեղոջ զամս երկոտասան։ Եւ մաքրեաց զքաղաքն ի շար աղանդոյն արիանոսացն և հոգեմարտիցն։ Եւ տակաւին մաքառէին ընդ նմա՝ որպէս ոչ սեփհական ունողի, զի իշխանութիւն և ի փոքր քաղաքէ եկեալ։ Եւ զթագաւորն ևս բամբասէին որպէս զբռնազբօսող իշխանութեամբ արտաքս վտարող զնոսա։ Այսոցիկ ասողաց պատասխանի առնէ իրաւադատ բանիւք» (էջ 192ա)։

է) Խաղաղական միաբանեցելոցն... «Մերձ ի թագաւորարնակ քաղաքն էր միաբանակեցայց յոլովից ի յեղբարց, յորոց միջի բնակէր սուրբս Աստուածաբանն։ Եւ եղև հակառակութիւն ի մէջ նոցա, թէ՛ մեղադրելի են արիանոսքն, թէ՛ ոչ։ Ոմանք զայս ինչ ասէին և կէսք՝ զհակառակն։ Եւ յայսմ դժնդակութեան լինելով, բաժանեցան ի միմեանց, և ինքեանք ամենայն վարուք առաքինութեամբ կատարեալք էին։ Վասն սորին պատճառի տրտմէր և հեռանայր ի սոցանէ Աստուածաբանն և լռութիւն տայր բանին։ Ապա ի միտս եկեալ նոցա, եթէ՛ վասն սնոտի հակառակութեան ընդէ՞ր քակտեցաք ի միմեանց, յորժամ վնաս ինչ ոչ էր ի միջի մերում, զղջացեալ վերստին առ միմեանս եկին սիրով... Գայ և նա [Աստուածաբանն—Կ. Մ.] և զլուեալն յառաջ բերէ բանիւ և ասէ, թէ՛ արձակէ ինձ լեզուս» (էջ 198 բ)։

ը) Առ Աթանաս. «Սուրբն Աթանաս կեցեալ եպիսկոպոս և ամ զկնի Աղէքսանդրի բազում պատերազմեալ ընդդէմ շարափառանց յաւուրս

Մեծին Կոստանդիանոսի... աքսորեալ վասն ուղղափառութեան և յուրով զրպարտեալ և համբերեալ բազում փորձանաց հանգաւ խաղաղութեամբ, զոր պատուէ սուրբս Գրիգոր Արձանական ճառիւ, զի առաջնոցն սովորութիւն էր սրբոցն յիշատակ թողուլ յաշխարհի, յօգուտ օրինակի մարդկան՝ ի փառս աստուծոյ» (էջ 209բ)։

Թ) Ի սուրբն Բասիլիոս. Յորժամ կատարեաց սուրբն Բարսեղ զկեանս ոչ ժամանեաց յօր թաղմանն։ Յետոյ զայ և այսպիսի գեղեցիկ պատուանօք պատուէ գնա արժանի յիշատակի, զոր ի ճառիս ուսանել ունիմք զզօրութիւն բանիցս... արդ ցուցանէ զնա շառաւիղ բարի... արմատոյ յառաջ եկեալ» (էջ 217բ—218ա)։

Ժ) Ի Մաքսիմոս իմաստասէրն. «Մաքսիմոս իմաստասէր էր ի շնականացն։ Եւ շնականք ասին ի փոխաբերութեան է շանց ցամաքի։ Էր սա ազգաւ եգիպտացի, քաղաքաւ՝ Ալէքսանդրացի, բարեպաշտից զաւակ։ Եւ վասն խստագոյն յանդիմանելոյ զհերձուածողսն ի վաղեսէ հատեալ եղև լեզուն և աքսորեցաւ յԱսիա, ամս Դ։ Եւ ի սատակմանն վաղէսի դառնայ և զայ ի Կոստանդնուպօլիս՝ առ Գրիգոր ի գնալն ի գաւառն իւր և ողջունի ի նմանէ։ Եւ խօսեցաւ զճառս» (էջ 226բ)։

Գրիգոր Նազիանզացու մատենադրական ժառանգության մեկնությունների շարքում առանձնանում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 5602 գրչագիրը, որը բովանդակում է «Քրիստոս ծնեալ» և «Առ որս» ճառերի մեկնությունները։ Թերթերի թափվածության պատճառով չի պահպանվել մեկնությունների հեղինակի անունը։ Սակայն հայագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ № 5602 ձեռագիրը XII դ. երկրորդ կեսի մատենագիր Դավիթ Քորայրեցու¹⁸ ինքնագիրն է՝ գրված 1177 թ.¹⁹։ Նման հետևության համար կա երկու հիմք. ա) վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 317 գրչագիրը 1363—70 թթ. ընդօրինակվել է նշված № 5602 ձեռագրից և ունի «Դարթի լուծմունք ճառից Աստուածաբանի» խորագիրը²⁰։ բ) Երկու դեպքում էլ պահպանվել է

¹⁸ Կիրակոս Գանձակեցին «վարդապետք երևելիք» բնորոշման տակ, ի թիվս այլոց, հիշատակում է նաև Դավիթ Քորայրեցուն (տե՛ս նրա «Պատմություն Հայոց», Երևան, 1961, էջ 171, հմմտ. «Ներսէսի Լամբրոնացույ Տարսոնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն եւ թողթ և ճառք», Վենետիկ, 1865, էջ 223։ Քորայրեցու ընդօրինակությունը որևէ առնչություն չունի Գրիգոր Նյուաացու ճառերի մեկնությունների հետ, ինչպես կարծում են Մաշտոցի անվան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրացի» (Բ, Երևան, 1970, էջ 143) հեղինակները։

¹⁹ Թվականի շուրջ կան տարբեր կարծիքներ։ Այդ մասին հատուկ քննություն ունի Հ. Մարգարյանը (տե՛ս А. Г. Маргарян, К хронологии восстания, возглавленного Иванэ Орбели, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4, էջ 147—153)։

²⁰ Նկարագրությունը տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 754—757։

Քոբայրեցու ընդարձակ հիշատակարանը, որի պատմամշակութային կարևորությանն անդրադարձել են մի շարք հայագետներ²¹: Մեզ հետաքրքրում են հիշատակարանի այն դրվագները, որոնք վերաբերում են Նազիանզացու «Քրիստոս ծնեալ» և «Առ որս» ճառաշարքերի մեկնություններին. «Յո՛ւֆնախոնջ ջանիւ ի յոլովից քննեալ իմաստնոց զգիրսս զայսոսիկ, զեղձամաբ սրտի ի գիւտս ճշմարտին մտաց և ի վերջէ հանդիպեալ իմ միւսոյ իմաստնացելոյ ի նոյն կրթութիւն, որ ի մէնջ իսկ սորին ըղձիւ ընթացեալ էր մերձ ի սահմանս Ասորաց և Կիւղիկեցւոց, Վարդան մակձայնեցելոյ, որոյ յոլով ժամանակս ի սակս քննութեան դեգերեալ առ դրան մեծի իմաստնոյ տեառն Ներսէսի Հայոց վերադիտողի, յորմէ մինչ եհասն առ մեզ, վերստին տեղեկացեալ իմ առ ի հաստատութիւն և ի լրումն առաջնոցն կրթութեանց, վստահ եղեալ հավանութեամբ նորին և այլոցս իմաստնոց, ձեռն ի գործ արկի ի մասնաւորս տարացոյց, մեկնութեան գրոցս երկոցունց մեծին սոփեստոսի Գրիգորի Աստուածաբանի, այնմիկ, որոյ սկիզբն ի ծնունդն Քրիստոսի, խորին իմաստիւք ասացեալ և ոյք յայլ տնաւրինականսն տեառն և միւսոյն ևս Առ որս բանիւն են պաճուճեալք...»²²: Սույն հաղորդումը, ինչպես տեսնում ենք, ակնարկ է այն կապի մասին, որ կար Նազիանզացու գործերը մեկնելու ճանապարհին Ներսես Շնորհալի—վարդան

²¹ Հ. Տաշյանը (տե՛ս Ցուցակ..., էջ 756—757) և Ն. Ալիևյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 57—59) այն հղում են ըստ Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 317 գրչագրի: Պ. Տեր-Պողոսյանը քաղում է Հ. Տաշյանի Ցուցակից (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1969, № 10—12, էջ 392), մյուս հայագետները վկայակոչում են № 5602 ձեռագիրը: Հիշատակարանի առաջին ամբողջական հրատարակությունը պատկանում է Գ. Հովսեփյանին (տե՛ս «Յիշատակարանք ձեռագրաց», Ա, Անթիլիաս, 1951, էջ 469—474, համտ. նույնի՝ «Խաղբակեանք կամ Պոռեանք Հայոց պատմութեան մէջ», Անթիլիաս-Լիրանան, 1969, էջ 3—6): Հիշատակարանի պահպանված մասի երկրորդ հրատարակությունը համապատասխան քննությամբ իրացրել է պրոֆ. Վ. Հակոբյանը (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1952, № 8, էջ 113—120): Տարիներ անց սույն հրատարակության խաթարված ընթերցումների սրբագրությամբ և Օրբելիների հովանավորած ապստամբությանը վերաբերող հատվածի վրացերեն թարգմանության աղբյուրագիտական ուսումնասիրությամբ հանդես եկավ Պ. Մուրադյանը (տե՛ս նրա «Об издании и переводе одного отрывка из памятной записи Давида Кобайрского», «Պատմա-բանասիրական հ հ հ հ հ», 1973, № 2, էջ 183—188):

²² «Տեղեկագիր», 1952, № 8, էջ 118 (ընդգծումները մերն են): Ընդգծված բառերի դիմաց Հ. Տաշյանի հրատարակությունում համապատասխանաբար ունենք՝ յոզնախոնջ, զգիրս, իմաստնոյ, Ասորաց, այլոց, մեկնութիւն, և], յորս (տե՛ս «Ցուցակ...», էջ 756—757): Տարբերություններ կան նաև Գ. Հովսեփյանի հրատարակության համեմատությամբ. այսպես, օրինակ, վկայված հատվածի իմաստնոց, Հայոց, տեղեկացեալ, այլոցս, գործ ընթերցումների փոխարեն Հովսեփյանի մոտ ունենք իմաստնոյ, Հայաց, տեղեկացեալ, այլոց գործ (տե՛ս նշվ. աշխ., էջ 469—474):

Հաղբատեցի—Դավիթ Քոբայրեցի անցման շրջանում: «Հավանութեամբ նորին և այլոցս իմաստնոց»²³ կապակցությունը հուշում է, թե Վարդան Հաղբատեցու հանձնարարությունը արժանացավ նաև մյուսների հավանությանը, «ձեռն ի գործ արկի» արտահայտությունը մեկնության հեղինակ է ներկայացնում իրեն՝ Դավիթ Քոբայրեցուն:

Առանց սույն հիշատակարանի մանրամասները քննելու երբեմն փորձ է արվել մերժելու կամ որոշ վերապահությամբ ընդունելու Դավիթ Քոբայրեցու հեղինակությունը: Ն. Ակինյանը գրում է. «...առանց տեղեակ ըլլալու յոյն մատենագրութեան կամ առ այն ձեռնտու ասորի գրականութեան, գրել յոյն Հօր մը գրուածոց պատճառներն, անըմբռնելի է, այնու մանավանդ, որ շատ տեղեր կը յիշատակուի նաեւ կարծեաց պէսպիսութիւն խնդրոյ մը շուրջը, թէեւ առանց անուան»²⁴: Ն. Ակինյանը Քոբայրեցու ձեռնարկումը հնարավոր է դիտում Վարդան Հաղբատեցու օժանդակությամբ. «Եւ Քոբայրեցին իւր ուսուցչին թէ բերանացի եւ թէ գրաւոր աւանդութենէն օգտուեցաւ: Վարդանայ ծանօթութիւնն յունարէնի եւ ասորերէնի կրնայ ենթադրուիլ, ի Կիլիկիա առիթ շէր պակսէր առ այս...»²⁵:

Գոյություն ունի նաև այլ ենթադրություն. № 5602 գրչագիրը դիտվել է Նազիանզացու հիշյալ երկու գրքերի մեկնություն՝ «Դավիթ Քոբայրեցու խմբագրությամբ»²⁶: Հիշատակարանի որոշ դրվագներ իրոք նման հետևության հնարավորություն տալիս են: Օրինակ՝ «Զի թէպէտ և տարորոշեալ է մեր զմեկնութիւնս ի բնաբանէ անտի, սակայն ի բազում տեղիս վերաշրջութիւն ոլորակ բանիցն ի մեկնութեան համարի եղեալ է»²⁷: Հատվածի «բնաբան» բառը այս դեպքում հասկանալու է բնագիր իմաստով (ունի նաև «բուն բանը սուրբ գրոցս» նշանակությունը):

Բնագրի համեմատությունից պարզվում է, որ Քոբայրեցին կատարել է հմուտ խմբագրի աշխատանք.

²³ «Քոբայրեցու վկայութիւնը, թէ Վարդան վարդապետի ցուցումներով է Գրիգոր Աստուածաբանի ճառերի մեկնութիւնը գրել, և նորա մեկնութիւնների Վարդան վարդապետի գրածների շարքում յիշեալ Տօնապատճառի մէջ գտնուիլը մի զօրեղ ապացույց է, որ նոյն իսկ այս Տօնապատճառի յիշատակարանում յիշուած Վարդանն է նորա ուսուցիչը, և ուրեմն Հաղբատեցին» («Կնիք հաւատոյ», էջ CXV):

²⁴ Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 56:

²⁵ Նույն տեղում, էջ 59:

²⁶ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ XV, ծան. 2:

²⁷ «Տեղեկագիր», 1952, № 8, էջ 118:

Ձեռ. № 1480 (1617 թ.)
(ԵՂԻԱ ԱՍՈՐԻ)

«Յառաջնում ճառին հանդիսացաւ ընդդէմ շարափառացն դհակառակ ունայնաճայնութիւնն զաղարեցուցանել զԵւնոմիանոսացն սուրբս Աստուածաբան» (էջ 166ա)։

«Ե ժամանակի յորում կոչեցեալ եղև նա ի կոստանդնուպօլիս ... զամս երկոտասան և մաքրեաց զքաղաքն ի շարաղանդոյն արիանոսացն և հոգեմարտիցն...» (էջ 192ա)։

«Այժմ եթէ գինչ է խաղաղութիւնն զսահմանն ճշմարիտ խաղաղութեան կամիցուցանել, նաև ըմբերանէ զայնոսիկ, որք ի սակաւ գիտութիւն նոցա ի վերայ յարձակեցան բամբասանօք, որք զի աստուածայինսն անտես արարին զսխալանսն զաստուածութիւն և զմեզ նմանապէս բամբասան» (էջ 199բ)։

«Յաղագս նորին իրի, յորոյ սակս առաջինքն գրեցան խաղաղականք և այս ի միարանել նոցին ասացեալ լինի Դարձեալ ասի յոմանց, թէ այս երրորդս թագաւորական քաղաքին առաջաւ, ոյք ի յոլոյս պատառեալ էին նախ։ Եւ նորին վարդապետութեամբ ի նոյնութիւն սիրոյ և դաւանութիւն եկին վերստին...» (էջ 201ա)։

Ձեռ. № 3937 (1370 թ.)
(ՎԱՐԴԱՆ ՀԱՂՐԱՏԵՑԻ)

«Յառաջնումն վիճել ընդդէմ Ե[ւ]նոմիոս. աստ հաստատէ զուղիղ դաւանութիւն ուղղափառութեան նախ ասելով, թէ չէ պարտ համարձակել ամէնեցուն» (էջ 69բ)։

«Յորժամ եղև ի կոստանդնուպօլ զամս երկոտասան, յաճախեաց տրտունջ զըմամանէ, զոր գտանես ի ճառիս։ Մարդարէարար իմացեալ խայտառակէ զնա աստ» (էջ 70ա)։

«Այժմ սահմանէ լխաղաղութիւն, թէ գինչ իցէ և վասն աճմանն ժողովրդեանն, որ ի ձեռն նորա եղև և առ սուրբ երրորդութիւնն» (էջ 70բ)։

«Յաղագս նորին իրաց սակս, որ առաջինքն գրեցան և ասի, թէ Գ ճառս ի թագաւորական քաղաքին ասաց, ոյք ի յոլով սլատառեալ էին նախ։ Եւ ի նոյն սէր նորին վարդապետութեամբն եկին» (էջ 70բ)։

Ձեռ. № 5602 (1177 թ.)
(ԴԱՎԻԹ ՔՈՒԱՅՐԵՑԻ)

«Յառաջնում ճառին հանդիսացաւ ընդդէմ շարափառացն դհակառակ ունայնաճայնութիւնն զաղարեցուցանել զԵւնոմիանոսացն սուրբս Աստուածաբան...» (էջ 128ա)։

«Ե ժամանակի յորում կոչեցեալ եղև նա ի կոստանդնուպօլիս... զամս երկոտասան մաքրեաց զքաղաքն ի շարաղանդոյ արիանոսացն և հոգեմարտիցն» (էջ 238բ)։

«Այժմ եթէ գինչ է խաղաղութիւնն զսահմանն ճշմարիտ խաղաղութեան կամիցուցանել, նաև ըմբերանէ զայնոսիկ, որք ի սակաւ գիտութեան նոցա ի վերայ յարձակեցան բամբասանաբ, որք զիրեանցսն անտես արարին զսխալանս զաստուածութիւնն և զմեզ նմանապէս բամբասան» (էջ 261բ)։

«Յաղագս նորին իրի, յորոց սակս առաջինքն գրեցան խաղաղականք և այս ի միարանել նոցին ասացեալ լինի Դարձեալ ասի յոմանց, թէ այս երրորդս թագաւորական քաղաքին ասացաւ, ոյք ի յոլովս պատառեալ էին նախ։ Եւ նորին վարդապետութեամբ ի նոյնութիւն սիրոյ և դաւանութեան եկին վերստին...» (էջ 265ա)։

Համարնույթ օրինակների թիվը կարելի է ավելացնել, սակայն դրանով չի փոխվի հատվածների համադրությունից արտածվող հետևության բնույթը: Անկասկած է, որ Դավիթ Քոբայրեցին ծանոթ է եղել և՛ Վարդան Հաղբատեցու, և՛ Եղիա Ասորու աշխատանքներին: Ընդհանրականությամբ առաջնորդվելու դեպքում նախապատվությունը Եղիա Ասորու լուծմունքներին պիտի տրվի, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը նկատի առնելիս՝ Վարդան Հաղբատեցու մեկնություններին²⁸: Միօրինակ չէ ավելացումների բնույթը: Կան դրվագներ, որոնցում Քոբայրեցու լրացումը բառական է, իսկ որոշ դեպքերում էլ ունենք համեմատաբար ընդարձակ բացատրության օրինակներ: Ասվածը հատկապես պիտի առնչել ոչ թե մուտք-առաջաբաններին, այլ բուն մեկնություններին: Առաջին դեպքում բառական նույնության տասնյակ օրինակներ կարելի է մատնացուցել, մինչդեռ մեկնությունների մասում երբեմն դժվարանում ենք բացորոշ համեմատության եզր դանել: Ասվածը պատկերացնելու համար ստորև համադրաբար վկայակոչենք մեզ ծանոթ նույնական առաջաբանների շարունակությունները մեկնությունների մասում:

Ձեռ. № 1480 (1617 թ.)
(ԵՂԻԱ ԱՍՈՐԻ)

Ձեռ. № 5602 (1177 թ.)
(ԴԱՎԻԹ ՔՈԲԱՅՐԵՑԻ)

[Բան]. «յորժամ տեսանեմ լեզուազարութիւն և դառօրեա իմաստունճդ: Լուծմունք. դորս և յառաջնումն ճառին դարսովեաց, որոց լի են ցաւօք լեզուք նոցա. ասէ՛ յորժամ տեսանեմ, որ առանց երկոց լինին աստուածարանք. լաւ ի կամարն վերինն:

[Բան]. և դձեռնադրողս աստուածարանքս:

Լուծմունք. կամելովն միայն:

[Բան]. ցանկամ վերնագոյն իմաստութեան:

Լուծմունք. որ է ընդ միտս և ընդ աստուած խօսել» (էջ 166բ):

«Յորժամ տեսանեմ լեզուազարութիւն և դառաւրեայ իմաստուննդ, դոր և յառաջնումն ճառին դրսովեաց, որոց լի են ցաւաւք լեզուք նոցա և դձեռնադրաւդ աստուածարանս կամելովն միայն ցանկամ վերնագոյն իմաստասիրութեանն, որ է ընդ միտս և ընդ աստուածոյ խաւսել» (էջ 128ա):

²⁸ Ուրիշ ձեռագրի առիթով, բայց նույն կապի մասին առաջին դիտողությունը կատարել է Հ. Անասյանը: «Դիրք պատճառացում» Քոբայրեցու բաժինը նկատի ունենալով նա գրել է. «...այնտեղ բացահայտորեն երևում են ԺԲ դարի երկրորդ կեսի հեղինակ Եղիա Ասորու դործերի ազդեցությունն ու հետքերը» («Հայկական մատենագիտություն», Ա, Երևան, 1969, էջ XV):

[Բան]. Երբ զաստուածութիւնն շա-
փեն, զժողովուրդն կշռեն:

Լուծմունք. ասեն, թէ աստուած անշափ
է, հարկ է, որ մեծ լինի եկեղե-
ցոյ ժողովուրդն և այնու արհամար-
հեն զմեր փոքրն:

[Բան]. որ զաւազն պատուեն:

Լուծմունք. ինձ թուի թէ դուք սոյնպէս
կամիք, որ զաւազն վասն շատու-
թեան պատուէք և զաստեղսն, որ
փոքր է քան զաւազ, թշնամանէք:
Նմանապէս և զմարգարիտն խո-
տան համարիք և զխիճս ժողովէք:
Զայս ոչ գիտէք, թէ որչափ աւազ
և խիճք առատ են, կրկին և ակն և
մարգարիտ և աստեղք պատուա-
կանագոյնք են, թէպէտև փոքր են:

[Բան]. թէպէտև աստ ծառայ առնես
զուգապատուիւն:

Լուծմունք. միթէ ծառայեցուցանել կա-
միս դրանս, որով զուգահաւասար
եմք, ապա թէ ոչ՝ ընկալ զյանդի-
մանութիւնս ի զրկեցիլոցս» (էջ
192ա):

[Բան]. «Խաղաղութիւն սիրելի իմ:
Լուծմունք. ոչ միայն անուանի սա, այլև
էութիւն է սեռական բարոյ և է և
անուանի:

[Բան]. ոչ գիտեմ եթէ յամենեցունց
զհարազատ ձայնն:

Լուծմունք. յորժամ ասացի խաղաղու-
թիւն ընդ ամենեսին չգիտեմ, թէ
ամենեքին ետուք զհարազատ ձայ-
նըն, որ է ընդ հոգոյդ քում» (էջ
201ա):

«Ուր արդեալք իցեն, որք զաղքատութիւն
թշնամանեն և զմեծութիւն հռչակեցու-
ցանեն: Ասէ թէ՛ մինչ մեք հալածեալն
լինէաք յամպարիշտ և ի շարափառ թա-
գաւորացն և ի սակաւութիւն ամփոփե-
ալք էաք վասն սակաւութեանն թշնամա-
նէին զմեզ արիանոսքն, իսկ այժմ ի
բազմանալս մերում ոչ զնոյն փոխարէնս
նոցա հատուցանեմք: Որք յուրութեամբ
ղեկեղեցին սահմանեն, այլ ոչ առաքի-
նութեամբ, որք զաստուածութիւնն շա-
փեն որպէս թէ յուրից կարաւտ է ժողո-
վըրդոց և զժողովուրդն կշռեն յուրու-
թեամբ և սակաւութեամբ, այլ ոչ բարն-
պաշտութեամբ» (էջ 239ա):

«Խաղաղութիւն սիրելի իմ, քաղցր քան
զմեղու խորիսխ և իրք և անուն: Ոչ մի-
այն անուանիս, այլ և էութիւն ես սե-
ռական բարոյ, զոր այժմս ետու ժողո-
վըրդեանն զքեզ և զփոխարէն առի զուն-
կընդրութիւն հնազանդութեանն: Ոչ գի-
տեմ եթէ յամենեցունց զհարազատ ձայնն:
Զգիտեմ ասէ, թէ ըստ «...բարազատ սի-
րոյ ունին զհնազանդութեանն ձայն և
զարժանաւոր հոգւոյն, զորն այն ընտրէ»
(էջ 265ա—բ):

Մտտավորապես նույն պատկերն ունեն նաև համեմատելի մյուս
հատվածները: Համադրության ընդհանուր պատկերը հնարավորություն
է տալիս ասելու, որ Եղիա Ասորու լուծմունքներին ծանոթ լինելով հան-
դերձ՝ Դավիթ Քոբայրեցին բուն մեկնությունների մասում նույնությամբ
չի հետևում սկզբնաղբյուրին, ինչպես դա կատարվում է մուտք-առա-
ջաբանների հետ: Առկա ընդհանրությունների և տարբերությունների
բնույթից ելնելով կարելի է պնդել, որ № 5602 գրչագիրը Քոբայրեցու

խմբագրություն կոչելու փորձը արդարացի է: Կան նաև այլ կուլաններ: Ունենք ձեռագրեր, որոնցում Քորայրեցին ներկայանում է որպես հավարող՝ «հաւաքումն ի Դարայ»²⁹: Կան բազմաթիվ գրչագրեր էլ, որոնցում հեղինակային պատկանելության ցուցումն առհասարակ բացակայում է: Համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց մի մասը նույնական է Քորայրեցու ինքնագրի հետ, երկրորդ խումբը, մասնակի միջամտություններով հանդերձ՝ նույն հիմքի վրա կատարված հետագա ընդօրինակություններ են և շեն առնչվում եղած անանուն մեկնություններին³⁰: Համոզվելու համար համադրենք որոշ ձեռագրեր:

Ձև. № 5602 (1177 թ.)

«Ճառս այս թէպէտև երրորդ է ի կարգի շարադասութեանս, սակայն երկրորդ է յետ առաջնոյն...» (էջ 172բ):

Ձև. № 1897 (ԺԲ դ.)

«Ճառս այս թէպէտև երրորդ է ի կարգի շարադասութեան, սակայն երկրորդ է յետ առաջնոյն...» (էջ 248բ):

Ձև. № 58 (Ժէ դ.)

«Ճառս այս թէպէտև երրորդ է ի կարգի շարադասութեանս, սակայն երկրորդ է յետ առաջնոյն...» (էջ 239բ):

Ձև. № 5602 (1177 թ.)

«Ոչ առ տգէտս, այլ առ պանծարանս արասցուք դրանս» (էջ 116բ):

Ձև. № 6362 (1181 թ.)

«Իմ բանս, որ ասեմ, ոչ է առ տգէտսն և կամ առ պարզամիտ ժողովուրդս» (էջ 126բ):

Ձև. № 437 (ԺԴ դ.)

«Իմ բանս, որ ասեմ, ոչ է առ տգէտսն և կամ առ պարզամիտ ժողովուրդս» (էջ 73բ):

Քորայրեցու պատճառները բովանդակող գրչագրերից է նաև «Գիրք պատճառաց» ժողովածուն³¹: Հ. Տաշյանը Վիեննայի № 317 գրչագրի նկարագրության առիթով գրում է. «Պատճառաց գրոց հաւաքիչն, որ Դարայ Մեկնչի անունը կը յիշէ տեղ տեղ, այս գործքէն առած է անշուշտ այս եւ յաջորդ մասերն»³²: Ն. Ակինյանը գտնում է, որ «Գրիգոր որդի Աբասայ իւր երկասիրութեան մէջ բառական ներս առած է Քորայրեցւոյ գրած բոլոր Պատճառները, բայց զարմանալի կերպով ա-

²⁹ Ձև. № 4132, էջ 278ա, հմմտ. Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Բ, էջ 389:

³⁰ Հմմտ. ձև. № 5254 (էջ 93բ—145բ), ձև. № 5596 (էջ 4բ—48բ), ձև. № 59 (էջ 42ա—153ա), ձև. № 1931 (էջ 195ա—237բ), ձև. № 4132 (էջ 273ա—353ա), ձև. № 621 (էջ 1ա—57բ, էջ 216ա—244բ), ձև. № 100 (էջ 1ա—131բ), ձև. № 4765 (էջ 42բ—69ա):

³¹ Ձև. № 1879, էջ 159ա—229ա: «Գիրք պատճառացի» մատենագիտական գիտահատությունը և նրա մասին եղած գրականության ցանկը տե՛ս Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ XIII—XVIII:

³² Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 755:

ուանց մատնանշելու աղբիւրն, զոր այլուր չի մոռանար նշանակել»³³։ Նույնարևույթ ձևակերպում ունի նաև աղբյուրագետ Հ. Անասյանը. «Գիրք պատճառացում» Քոբայրեցու հեղինակությունն են նաև Գրիգոր Նազիանզացու մի շարք այլ ճառերի և ամենայն հավանականությամբ բոլոր ճառերի պատճառները...»³⁴։ Ավելին՝ «Գիրք պատճառացում» Բարսեղ Կեսարացու (էջ 241բ—270բ) և Գրիգոր Նյուաացու (էջ 229բ—241բ) ճառերի մեկնությունները ունեն «ի Դավիթ վարդապետէ ասացեալ»³⁵ ցուցումը։ Իսկ Նազիանզացուն վերաբերող նյութերը (էջ 159ա—229ա) չունեն որևէ ծանուցում, թեև Գրիգոր Աբասյանի «...անմիջական աշխատակիցներն են եղել Դավիթ Քոբայրեցին և Մխիթար Գոշը»³⁶։

Նման պայմաններում պիտի ենթադրել Գրիգոր Աբասյանի այնպիսի միջամտություն (նկատի ունենք Նազիանզացու գրքերի պատճառները), որը բուն ժողովածուին աշխատակցելու պայմաններում հնարավորություն տար շրջանցելու դրանց իսկական հեղինակի՝ Քոբայրեցու, անունը։ Ն. Ակինյանը, առանց ուղղակի հետևության, փորձում է տարբերություն տեսնել «Գիրք պատճառացում» արտացոլված և Դավիթ Քոբայրեցու անվամբ հայտնի պատճառների ցանկում. «Գրիգորի քով կան նաև ի Կիպրիանոս եւ ի Մակարայեցիս ճառերու պատճառք, որոնք կը պակսէին թ. 317 ի մէջ»³⁷։ Սակայն վիեննայի № 317 գրչագրում նշված պատճառների շարքում ամենևին էլ ի սկզբանե բացակայություն չի նշանակում։ Ունենք գրչի գրառումն այդ մասին. «...յայսմ կարգի է Պատճառ ճառին Կիպրիանոսի եւ Մակարայեցուցն եւս, ի վերջ գրոցս գիտ եւ ընթերցիր»³⁸։ Եվ եթե այսօր չեն պահպանվել նշված պատճառները, ապա դա, հավանաբար, պիտի բացատրել ձեռագրի վիճակով կամ այլ գործոններով, մանավանդ որ Քոբայրեցու շարքի ձեռագրերում նշված պատճառներն իրենց տեղում են³⁹։

Դավիթ Քոբայրեցու հեղինակությունը հավաստող համապատասխան վկայություն չգտնելով № 1879 ձեռագրում, այդպիսիք փորձեցինք

³³ Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 60, տե՛ս նաև էջ 62, հմմտ. Պ. Տեր-Պողոսյանի ծանուցումը՝ «Դավիթ Քոբայրեցույ Լուծմունք եւ Պատճառք գրութիւնը... Գրիգորի կողմէ ազուցուած է իր երկին մէջ» («Հանդէս ամսօրեայ», 1969, № 10—12, էջ 392)։

³⁴ Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ XV։

³⁵ Ձեռ. № 1879, էջ 229բ։

³⁶ Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ XV։

³⁷ Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 60։

³⁸ Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 755։

³⁹ Ձեռ. № 5602, էջ 113ա—115բ, հմմտ. ձեռ. № 6362, էջ 125բ—126բ, ձեռ. № 621, էջ 227բ—228բ, ձեռ. № 59, էջ 71ա—72բ և այլն։

փնտրել այլ գրչագրերում: Պարզվում է, որ «Գիրք պատճառացի» հիմքի վրա է դրված նաև № 4150 գրչագիրը (ԺԳ գ.), իհարկե ոչ առանց միջամտությունների: Կան բնագրեր, որ բառ առ բառ նույնն են, փոխանցվել են նաև մատենագիտական օժանդակ գրառումները⁴⁰, որոշ նյութեր էլ ընդօրինակվել են լրացուցիչ տեղեկանքով: Նման մի հաղորդում ունենք նաև Նյուսացու ճառերի պատճառների՝ Դավիթ Քոբայրեցու հեղինակությունը հաստատող խորագրից հետո. «Հարկ եղև ի քննութիւն մտանել երից կատարեալ արանցն՝ սրբոյն Բարսղի Կեսարու և Գրիգորի Նիւսացոյ և Գրիգոր Աստուածաբանի, թէ որպէս բանքն առ միմեանս յարմարեսցին և ըստ բանիցն և նշանակեալ իմաստքն յարդարեսցին, զոր Մեծին Աստուածաբանի բան առ բան յեղաշրջեալ զրնութիւն բանիցն իւրացուցանելով և այնպէս գեղեցիկ զկարգն ունի»⁴¹: Ասվածը առաջադրվող մեկնության հարկավորությունը հավաստելուց բացի, հնարավորություն է տալիս մտածելու, որ «երեք մեծ կապադովկացիներ» գործերի քննությամբ զբաղվողը նույն հեղինակն է, այլապես Գրիգոր Նյուսացու սոսկ մի գործի պատճառի առիթով «երից կատարեալ արանց» վերաբերող նման ընդհանուր եզրակացություն անելու հարկ չէր լինի: Բացի այդ՝ նույն № 4150 գրչագրում կան Դավիթ Քոբայրեցու այնպիսի հիշատակագրություններ, որոնք ուսուցիչների վաստակը արժեքավորելու առումով մերձավոր են Նազիանզացու մատենագրության առիթով ասված համարնույթ գնահատությունների հետ. «Այսպէս լուաք ի հոգևոր վարժապետաց ի կենդանի նոցուն ձայնիցն»⁴², «Այսպէս լուաք ի գրոց և յուսուցչացն մերոց»⁴³:

Այսպիսով, առկա ձեռագրական նյութի համեմատական դասդասմամբ պարզվում է, որ № 5602 ինքնագրից, գրեթե նույն ժամանակահատվածում առաջացել են «Քրիստոս ծնեալ» և «Առ որս» գիրք-ժողովածուների մեկնությունների նոր ընդօրինակություններ մերթ պատճառների, երբեմն էլ լուծմունքների տեսքով⁴⁴:

⁴⁰ Հմմտ. ձեռ. № 1879, էջ 199ա—229ա, ձեռ. № 4150, էջ 6ա—22բ, ձեռ. № 4765, էջ 56բ—58ա և այլն:

⁴¹ Ձեռ. № 4150, էջ 43ա:

⁴² Նույն տեղում, էջ 52ա:

⁴³ Նույն տեղում, էջ 57ա:

⁴⁴ Դավիթ Քոբայրեցու խմբագրությամբ հայտնի ժողովածուն իրավամբ լայն ընդունելություն է ունեցել միջնադարյան Հայաստանում: Դրա լավագույն ապացույցը ոչ միայն «Գիրք պատճառացում» հայտնվելն է, այլև հետագա մեկնողական գրականության աղբյուր ծառայելը: Նկատի ունենք Հակոբ Կլայեցի կաթողիկոսի (1268—1286) մեկնությունները: Սամվել Անեցու շարունակողը հաղորդում է, որ «...այս տէր Յակոբ այր սուրբ և առաքինի և յոյժ գիտնական, որ արար զլուծմունս գրեանցն դժուարա-

Գրիգոր Նազիանզացու ճառերին, ինչպես ասվեց, անդրադարձել է նաև Հովհաննես Սարկավազը: Դատելով պահպանված խորագրից՝ «Լուծումն բանիցն Աստուածաբանի Սարկաւագին»⁴⁵, այն պիտի ընդգրկէր Նազիանզացու բոլոր գիրք-ժողովածուները: Իրականում ունենք միայն «Քրիստոս ծնեալ» ճառաշարքի ընդհանուր գնահատություն: Ի տարբերություն հետագա մեկնիչ-հեղինակների, Նազիանզացու կյանքին ու գործունեությանը վերաբերող տեղեկանքը այս դեպքում իսպառ բացակայում է: Այդ իրողությունը լուծմունքի բնույթով բացատրելու փորձը չի արդարանա, որովհետև կարելի է մատնացուցել լուծմունքը առաջաբանով օժտելու բազմաթիվ օրինակներ նույն Նազիանզացու մատենագրության առիթով: Ներկայացվող աշխատությունը շունի նաև լուծմունքին հատուկ ձևական կողմը:

Հովհաննես Սարկավազը բացատրության ընթացքում մշտապես դիմում է համեմատությունների, կատարում է ղանազան ընդհանրացումներ երկրի կառուցվածքի, բնության տարրերի, բարոյախրատական նորմերի, դավանաբանական հին ու նոր խնդիրների (տե՛ս «Ամենայն հեթանոսք կայսթեցէք...» հատվածը) և այլնի մասին: Նրա մեկնաբանություններից մեկում կարդում ենք. «Սև զոր արինակ մարմինն խառնեալ ընդ բանին եղև որ ինչ էր բանն և զմարմին լինելն ոչ կորոյս, այլ մնաց մարմինն ըստ ձևոյն և ըստ թանձրութեան բնութեանն: Ըստ նմին արինակի և աստուածութիւնն միացեալ ի մարմնի եղև մարդ առանց ապականացու կրից և պահեաց զիւր անիմանալի բնութիւնն անպարագրելի և անփոփոխելի...»⁴⁶:

Սարկավագի աշխարհայացքի գնահատման առումով որոշ խորհրդածություն հնարավորություն է տալիս հետևյալ բացատրությունը. «Սև որ ինչ հրաշագործեցաւ յաստուծոյ, որով խորտակեալ, զի այսպիսի ղանազան հարուածովք և կամ բարեգործութեամբք ոչ ուղեցաւ ազգ մարդկան և ոչ արինաւք և ոչ մարգարէիւք, մինչև ինքն արարիչն կա-

լոյս բանիցն» («Սամուելի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 151): Հ. Տաշյանի նկարագրած ձեռագիր տարբերակում ևս չեն մասնավորեցվում այն բնագրերը, որոնք զբաղեցրել են Հակոբ կաթողիկոսին (տե՛ս Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 293): Սակայն այլուր վկայություն կա, որ «Տեառն Յակոբա Հայոց կաթողիկոսի՝ լուծմունք գրենացն Բարսղի, զոր տեղեկացեալ է ի Դաւիթ վարդապետէ» (ձեռ. № 437, էջ 295ա), հմմտ. Պ. Տեր-Պողոսյանի ծանուցումը՝ «Դաւթի այս լուծմանց եւ պատճառաց գիրքն օգտագործած է Յակոբ Կլայեցի կաթողիկոս» («Հանդէս ամսօրեայ», 1969, № 10—12, էջ 393):

⁴⁵ Ձեռ. № 5596, էջ 98բ—111բ:

⁴⁶ Նույն տեղում, էջ 100ա:

տարած արար գալստեամբն իւրով»⁴⁷: Ի տարբերություն «Քրիստոս ծննալ» գրքի, Մեկնության մեջ նորն այն է, որ մեկնիչը վերանում է առաջադրվող բացատրության շրջանակներից և այլադրյուր վկայություններով է օժտում այն: Նկատի ունենք հատկապես բնության շորտարների ինքնատիպ կառուցվածքի, բնույթի, փոխադարձ կապի, առանձնահատկությունների մասին նրա բնափիլիսոփայական դատողությունները, որոնք երբեմն բառացի, հաճախ էլ վերապատմելու եղանակով հիշեցնում են Բարսեղ Կեսարացու «Վեցաւրեայի» հայերեն թարգմանության համապատասխան հատվածները: Բերենք այդ կարգի ընդհանրության մեկ օրինակ՝

«Արքայ Բարսղի եպիսկոպոսապետի
Կեսարոյ Կապադովկացոյ Յաղագս
Վեցաւրեայ ատուրց»⁴⁸

«Լուծումն բանիցն Աստուածարանի
Սարկաւագին»⁴⁹
Ձեռ. № 5596 (ԺԳ դ.)

«Եւ յայտ լիցի, թէ երկիր ցամաք է եւ
ցուրտ, եւ ջուր՝ խոնաւ եւ ցուրտ, եւ աւղ՝
ջերմ եւ խոնաւ, եւ հուր՝ ջերմ եւ ցա-

«Երկիր՝ ցուրտ և ցամաք, ջուր՝ ցուրտ
և խոնաւ, աւղ խոնաւ է և ջերմ, հուր
ջերմ է և ցամաք...: Եւ խառնեալ են

⁴⁷ Ձեռ. № 5596, էջ 109ա:

⁴⁸ Օգտվում ենք «Վեցաւրեայի» մեր պատրաստած քննական բնագրից:

⁴⁹ Սույն Լուծումնքին անդրադարձել է նաև Կ. Միրումյանը (տե՛ս նրա՝ «Հովհաննես Սարկավագի երկու իմաստասիրական գրվածքները և նրանց արժեքը», «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2; էջ 154—162): Հետադոտողի հիմնական նպատակը Սարկավագի նշված աշխատանքի քննությունը չէ, այլ դրա հենքի վրա անանուն «երկու իմաստասիրական գրվածքների» 2. Իմաստասերի հեղինակային պատկանելության հավաստումը: Հողվածում կան որոշ անճշտություններ և վերապահելի կետեր: Մասնավորապես՝ Սարկավագի նշված աշխատության մաս է դիտվել նաև քերականական մի ընդարձակ աշխատություն, որը որևէ առնչություն չունի Սարկավագի հետ (հմմտ. էջ 98բ—211բ): Այդ աշխատությունն ունի քսաներեք խորագրային բաժանում (օրինակ՝ «Յաղագս քերականութեան», էջ 112ա, «Յաղագս վերծանութեան», էջ 112ա—բ և այլն): Հավանաբար վերջընթեր բառացանկը (էջ 150բ—216բ) նույնպես այս բնագրի մասերից է:

Նազիանդացու «Ի սուրբ ծնունդն Քրիստոսի» ճառը «միակ գրվածքը» չէ, «որ հրատարակվել է հայերեն ամբողջությամբ» (նշվ. աշխ., էջ 155, ծան. 5): Այդ մասին տե՛ս սույն աշխատանքի 82—83 էջերի 14-րդ տողատակը:

«Յաղագս տարերաց բաղկացելոց յարարչէն» ճառի հեղինակային պատկանելությունը սոսկ «Լուծումն բանիցն Աստուածարանի Սարկաւագին» բնագրի նմանությամբ վճռելը վերապահելի է, որովհետև երրորդ սկզբնադրյուրի առկայությունը նոր ենթադրության դուռ կարող է բացել:

Իսկ ինչ վերաբերում է Արիստոտելի կամ Նեմեսիոս Եմեսացու գործերի հայերեն թարգմանություններից Սարկավագի օգտվելուն, ապա «Վեցաւրեայի» հայերեն թարգմանությունը եթե ոչ միակ, ապա գոնե հիմնական սկզբնադրյուրներից մեկը պիտի դիտել:

մաք... է երկիր ցամաք եւ ցուրտ, եւ միաբանի ընդ ջրոյ յանգութեամբ ցըրտութեանն... Նոյնպէս մերձաւոր է ջուր ցրտութեամբ ընդ երկրի եւ խոնաւութեամբ ընդ աւդոյ: Սոյնպէս եւ աւդ միջնորդութեամբն հաշտեցուցիչ է մարտին ջրոյ եւ հրոյ. ջրոյ՝ վասն խոնաւութեանն եւ հրոյ՝ վասն ջերմութեանն, եւ ի պատճառս սոցա երկոքին կապեալ կան ի նմա: Հուր ջերմ եւ ցամաք բնութիւն ունի, կապեալ կայ ընդ աւդոյ վասն ջերմութեանն, եւ հաղորդեալ ընդ երկրի...»:

այսպէս՝ երկիր ցամաքութեամբ ընդ հրոյ, իսկ ցրտութեամբ՝ ընդ ջրոյ: Զուր՝ ցրտութեամբ ընդ երկրի, իսկ խոնաւութեամբ՝ ընդ աւդոյ: Աւդ՝ խոնաւութեամբ ընդ ջրոյ, իսկ ջերմութեամբ՝ ընդ հրոյ: Դարձեալ ըստ մակդարձութեան եւ համբեկութեամբ այսպէս միաբանեալ են: Հուր ջերմ եւ ցամաք ջերմութեամբ ընդ աւդոյ միաբանեալ, իսկ ցամաքութեամբ՝ ընդ երկրի» (էջ 106 ա—բ):

Քանի որ խոսք եղաւ № 5596 գրչագրի մասին, պիտի նկատել, որ նույն ձեռագրում է պահպանվել նաև Մխիթար Գոշի մի պատճառը՝ «Քրիստոս ծնեալ գրոցն սակաւ ինչ պատճառ»⁵⁰: Եթե հետևելու լինենք սույն հաղորդմանը, ապա պիտի ակնկալել շարքի բոլոր ձառերին վերաբերող պատճառներ: Իայց իրականում ունենք միայն առաջին ձառին պատկանող մի քանի ամենասեղմ բացատրություններ՝ հիմնականում դավանական խնդիրների շուրջ: Գոշը ուշադրություն է դարձնում նաև քաղաքական անցուդարձերին, Նազիանզացու ունեցած առընչություններին, դավանական վեճերի շրջանում բյուզանդական կայսրության տարբեր դիրքորոշումներին: Նա լավատեղյակ է Նազիանզացու կենսագրության մանրամասներին, հիշատակում է կայսեր հետ ունեցած նրա առնչակցությունը, ընդգծում Կ. Պոլսում աշխատած տարիների կարևորությունը. «Իսկ յայնժամ Գրգիոր Աստուածաբան ի կոստանդինուպոլիս եպիսկոպոս փոխեալ լինէր՝ ի ներքս ի քաղաքն ի փոքր աղաւթանոցի լինէր: Յետոյ թագաւորն մեծ տուն շինէր առընթեր եւ անուանեցաւ Անաստասայ, եւ խնդիր արար թագաւորն վասն հաւատոյ...»⁵¹:

Մխիթար Գոշը անհրաժեշտ տեղեկանք ունի նշված ձառի գրության ժամանակի, պատճառի, շարժառիթի, գիրք-ժողովածուում ունեցած հաջորդականության մասին: Այս ամենով հանդերձ՝ Գոշի աշխատանքն այն տպավորությունն է թողնում, որ վերջինս բուն պատճառի նախապատրաստական մասն է, մուտքը՝ մատենագիտական-կենսագրական անհրաժեշտ տեղեկանքով:

Գրիգոր Նազիանզացու «Առ որս» գրքի լուծմունքներ ունի նաև

⁵⁰ Ձեռ. № 5596, էջ 95ա—98բ:

⁵¹ Նույն տեղում, էջ 97ա:

Գէորգ վարդապետ Երզնկացին (1350—1416)⁵²: Նրա լուծմունքները ընդօրինակվել են տարբեր խորագրերի տակ. ա) «Համառատ լուծմունք Գրիգորի Աստուածաբանին ի լուսաւոր բանից արդիւնական վարդապետի Յոհաննու Որոտնեցոյ՝ ...հաւաքեալ աշխատասիրութեամբ աշակերտի նորին Գէորգեայ Երզնկացոյ...»⁵³, բ) «Գրիգորի՝ աշակերտի Յովհաննու Որոտնեցոյ լուծումն համառատ դժուարիմաց բանից ի գիրս գրչութեան...»⁵⁴, գ) «Ծաղկափաղ մեկնութիւն ի լուսաւոր բանից... հաւաքեալ աշխատասիրութեամբ Գրիգորի, աշակերտի նորին շնորհալից վարդապետի»⁵⁵: Երեք շարքի համար էլ ընդհանուրը համառոտությունն է՝ նախորդող մեկնությունների ակնհայտ ծանոթությամբ: Ն. Պողարյանը Երզնկացու աշխատանքը բնութագրում է հետևյալ կերպ. «Խմբագրութիւն Գրիգոր Աստուածաբանի Առ որս գրոց լուծմունքին. Յովհ. Որոտնեցիի դասախօսութեանց հիման վրա»⁵⁶:

Պահպանվել է Մեսրոպ Գանձակեցու «Առ որս» ճառաշարքի մեկնության ինքնագիրը⁵⁷: Սակայն պիտի նկատել, որ այս դեպքում «համառոտ մեկնութիւն» բնորոշումը պայմանական է, որովհետև այն իրականում նադիանդացու գրքերի մասին գրված մեկնություններից ամենաընդարձակն է: Դատելով ճառերի խորագրերի մասնակի անճշտությունների նույնությունից, մեկնիչը ձեռքի տակ ունեցել է Մխիթար Այրիվանեցու Ճառընտիրը կամ նրանից ընդօրինակված գրչագիր: «Պարտ է գիտել, զի վարդապետք եկեղեցոյ երեք ասեմ» վերտառության տակ բացատրվում են առաջարկվող մեկնության հանգամանքներն ու աղբյուրների հետ կապված այլևայլ հարցեր: Մեսրոպ Գանձակեցին մաս-

⁵² Գէորգ Երզնկացին գրել է մեկնություններ, հարցումներ, հանելուկներ, խրատներ և այլ ժանրի գործեր (տե՛ս ձեռ. № 3006, էջ 6ա—11ա, ձեռ. № 2166, էջ 81բ—166բ, ձեռ. № 3276, էջ 50ա—53ա): Նրա մասին եղած գրականության Հր. Աճառյանի կազմած ցանկին (տե՛ս «Հայոց անձնանունների բառարան», Ա, Երևան, 1942, էջ 467—468) պիտի ավելացնել հետևյալ ուսումնասիրությունները. Գ. Զարբանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեան (Բ, նոր մատենագրութիւն, Վենետիկ, 1878, էջ 219—220), Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 239, Ա. Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980, էջ 127—128:

⁵³ Ձեռ. № 61, էջ 209ա—266ա, ձեռ. № 5657, էջ 155ա—207ա, ձեռ. № 5082, էջ 151ա—179ա, ձեռ. № 3939, էջ 104ա—139ա և այլն, հմմտ. Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 455, Հ. Ոսկյան, Ցուցակ..., էջ 159:

⁵⁴ Ձեռ. № 1649, էջ 3բ—8բ:

⁵⁵ Ձեռ. № 1131, էջ 2ա—35բ:

⁵⁶ Ն. Պողարեան, Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 407:

⁵⁷ Տե՛ս ձեռ. № 1466, էջ 1ա—354ա՝ «Համառոտ մեկնութիւն Գրիգորի Աստուածաբանի Առ որս գրոցն՝ ժողովեալ ձեռամբ տառապեալ ոգոյ Մեսրոպայ [Գանձակեցոյ]», հմմտ. Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., Ա, էջ 365:

նավորապես նկատում է. «Լուայ յոմանց, եթէ Դաւթի վարդապետին ևս ունի համառօտ լուծմունս՝ արարեալ Առ որսին, զի զյոլովս խնդրեցի և որոնեցի և ոչ գտի»⁵⁸:

Այնուամենայնիվ, մեզ ծանոթ մեկնություններից որևէ մեկին ծանոթ եղե՞լ է Գանձակեցին: Սույն հարցի ուղղակի պատասխանը գտնում ենք նույն բացատրականում. «Ոչ ուրեք գչի զկատարեալն, բայց միայն Գէորգեայ վարդապետի Եզնկացոյ համառօտ լուծմունքն և զայն յոյժ ծաղկաքաղ եղեալ և ընդարձակք այլափոխեալ»⁵⁹: Մեկնությունից օգտուվելը դյուրացնելու նպատակով հեղինակը այն բաժանել է գլուխների⁶⁰: Բաժանումը ձևական չէ, այլ պայմանավորված է արծարծվող հարցերի բնույթով: Այդ իսկ պատճառով էլ գլուխների անվան տակ առաջացել են տասնյակ հարցադրումներ ըստ ճառերի:


Նույնպիսի սկզբունքով է կազմված Գանձակեցու «Քրիստոս ծնեալ» մեկնությունը ևս (էջ 354ա—379ա): Տվյալ դեպքում «համառօտ մեկնութիւն» կոչումն արդարանում է այն իմաստով, որ հիշյալ գրքի ոչ բոլոր ճառերն են մեկնություններով օժտված: Գրչի հիշատակարանը այս առումով որևէ լրացնելիք չունի, այլ սովորական հաղորդում է ընդօրինակության ժամանակի ու առաջնորդության անձանց մասին. «Ժողովեցաւ համառօտ մեկնութիւնս ի թուականութեանս Հայոց հազար հարիւր իննսուն և ինն, ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին և առաջնորդութեանն տեառն Ղազարու հեզահոգի վարդապետին Կեսարու, որ է հովիւ Կարնոյ քաղաքին, ձեռամբ մեղապարտ Մեսրոպի, անարժան քահանայի և կրօնաւորի...»⁶¹:

⁵⁸ Ձեռ. № 1466, էջ 2ա:

⁵⁹ Ձեռ. № 1466, էջ 1ա, հմմտ. «զորս ի սրբոյն Գրիգորի Տաթևացոյ գրեանցն և զորս ի մեկնչաց մերոց վարդապետացն ժողովեցի և եղի աստ» (էջ 2ա):

⁶⁰ «Զիւրաքանչիւր ճառսն ի գլուխս բաժանեցի և հանդէպ բնաբանին զմեկնութիւնսն գրեցի և կարմիր գրով նշանեցի առ ի դիւրալուր լինելոյ բանն սուրբ վարդապետիս» (ձեռ. № 1466, էջ 2ա):

⁶¹ Ձեռ. № 1466, էջ 379ա: Գրիգոր Նազիանզացու գիրք-ժողովածուների, երբեմն էլ առանձին ճառերի տասնյակ մեկնություններ կան, որոնց հեղինակային պատկանելությունը հայտնի չէ, ուստի և սույն քննության սկզբնամասում դրանք կոչեցինք Անանուն մեկնություններ: Ժամանակագրական հաշորդականությունը պահպանելու դեպքում ճիշտ կլիներ նշված բնագրերի մեծ մասը ներկայացնել Գոշի գործերից հետո: Բայց որովհետև այդ ամենը ասվածին նոր ավելացնելիք չունի, ուստի և նպատակահարմար գտանք բավարարվել ձեռագրական նյութերի սոսկ թվարկմամբ. ձեռ. № 1204 (1231—1234 թթ., էջ 279ա—308բ), ձեռ. № 5443 (ԺԴ դ., էջ 126բ—130ա), ձեռ. № 626 (ԺԴ դ., էջ 28ա—133բ), ձեռ. № 1981 (ԺԴ դ., էջ 243բ—246ա), ձեռ. № 1131 (ԺԵ դ., էջ 149բ—150բ), ձեռ. № 3275 (1497 թ., էջ 2ա—71բ), ձեռ. № 1480 (1617 թ., էջ 109բ—112ա), ձեռ. № 3979 (1659 թ., էջ 161բ—164ա), ձեռ. № 5032 (ԺԷ դ., էջ 205բ—221ա), ձեռ. № 3276 (ԺԷ դ., էջ 44ա—49ա) և այլն:



Այսպիսով, Գրիգոր Նազիանզացու (328—389) մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների քննությանը նվիրված սույն մեկնության մեջ արժարժված խնդիրներն ամփոփելու դեպքում կարելի է եզրակացնել.

ա) Նախորդ սերնդի հայագետները տարբեր առիթներով արժարժել են Նազիանզացու կյանքի ու գործունեության հետ կապված առանձին հարցեր՝ ձեռքի տակ ունենալով նրա «Վարքի» տպագիր տարբերակը: Բյուզանդական մատենագրի «Վարքի» ձեռագիր խմբագրությունների, ճառերի, ինքներգական բնույթի գործերի համադիր քննությամբ ճշգրտվում ու լուսաբանվում են նրա ուսումնառության վայրերին (Կեսարիա, Անտիոք, Աթենք) և ուսուցիչներին վերաբերող մի շարք հարցեր, տարբերակվում ու քննության են առնվում նրա գործունեության հիմնական փուլերը:

բ) Նազիանզացին հայ մատենագիրների վկայություններում հիշատակվում է ամենատարբեր առիթներով: Այդ գնահատություն-վկայությունները ցույց են տալիս, որ նա հայոց շրջաններում ևս լայն ճանաչման արժանացած հեղինակություն է եղել: Մինչև XII դարն ընդգրկող տեղեկություններում Նազիանզացին գերազանցապես հիշվում է դավանական այլադան խնդիրների առնչությամբ, իսկ հետագա հղումներում, մանավանդ հիշատակարաններում և շափածո ստեղծագործություններում շատ ավելի ընդգծված ու ընդարձակ են ներկայացվում նրա գործունեությունն ու մատենագրական վաստակը:

գ) Հայերին վերաբերող Նազիանզացու տեղեկությունները հիմնականում կապվում են աթենյան ուսումնառության հետ: Նրա հանդիմանական մեկ-երկու արտահայտություններն արդյունք են Աթենքի համալսարանի հայ և հույն ուսանողության վեճերից ստացած տպավորության և շեն առնչվում էթնիկական նկարագրին: Բարսեղ Կեսարացու աջակից Նազիանզացին պայքարում էր հայազգի Եվստատիոս Սեբաստացու դեմ՝ արիոսականությունը Փոքր Հայքում տարածելու նրա հաջողությունից հարկադրված: Իր հայազգի նշանավոր ուսուցչի՝ Պրոյերեսիոսի մասին գրած նրա շափածո ստեղծագործությունը երախտավոր աշակերտի և հետևորդի խոսք է:

դ) Միաժամանակ և մշակութային նույն կենտրոններում էին հայերենի թարգմանվում և ձեռքից ձեռք ընդօրինակվում «երեք մեծ կապաղովկացիների» գործերը: Այս պարագան հող էր ստեղծում շփոթելու նույնանուն հեղինակների երկերը, իսկ երբեմն էլ այլանուն, բայց

համարնույթ ստեղծագործութիւնները Դավիթ Քորայրեցու արտահայտութեամբ՝ «վասն մի արինակ մտացն»: Գրիգոր Նազիանզացուն ինքն վերագրվել «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» և «Առ այնոսիկ, որք ասեն եթէ՝ մեծ է հայր քան զորդի» խորագրերով Գրիգոր Նյուսացու ճառերը: Ձեռագրերում «Խօսք ի նոր կիրակէն...», «Ի ժողովողն» և «Առ որս» շարքի ճառերը հանդիպում են Գրիգոր Նյուսացու անվամբ, մինչդեռ դրանց իրական հեղինակը Գրիգոր Նազիանզացին է: «Առ որս» գրքի նշված ճառի հեղինակային շփոթը կատարվել է մինչև VII—VIII դդ., որովհետև, ինչպես պարզվում է, Ստ. Սյունեցին ծանոթ է նշված ստեղծագործութեանը և այն համարում է Գրիգոր Նյուսացու գործ:

Ե) Մեզանում վաղ միջնադարում եղել է Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու «Հարցումն...» երկասիրութեան մեկ թարգմանութիւն-խմբագրութիւն՝ «Տեսութիւն յաղագս հավատոյ...» խորագրով: Հետագայում այդ բնագրի հիմքի վրա առաջացել և ութ տասնյակից ավելի ընդօրինակութիւններով բաղմացվել են երեք կեղծ խմբագրութիւններ, որոնք «սակս ընդունելութեան» վերագրվել են Բարսեղ Կեսարացուն և Գրիգոր Նազիանզացուն: Վաղ շրջանի հայ հեղինակները անծանոթ են հիշյալ կեղծ բնագրերին («Տեսութեան...» հայերեն թարգմանութիւնից օգտվում է Ստեփանոս Ասողիկը): Պիտի ենթադրել, որ նշված բնագրերի վերագրումը կարող էր կատարվել Ասողիկից հետո միայն:

զ) Ձեռագրական հավաքածոներում պահպանվել է Գրիգոր Նազիանզացու գրական վաստակի հայերեն թարգմանութիւնների ավելի քան երկու հարյուր հին ու նոր ընդօրինակութիւն: Հայաստանում դրանք առավելապես հայտնի են եղել շորս գիրք-ժողովածուներով՝ «Քրիստոս ծնեալ», «Առ որս», «Յաղթեցայ», «Որք յեգիպտոսէն են»: Գրքերի խորագրերը առաջացել են ըստ յուրաքանչյուր շարքի առաջին ճառի սկսվածքի: Ստեփանոս Ասողիկը, Դավիթ Հաղբատեցին, Ներսես Շնորհալին, Դավիթ Քորայրեցին, Գրիգոր Աբասյանը, Մխիթար Այրիվանեցին և հետագա մատենագիրներից շատերը ծանոթ են այդ ժողովածուներին: Դրանց կազմութեան ու գործածութեան մասին ավելի հին տեղեկութիւն մեզ հայտնի չէ: Մխիթար Այրիվանեցին Նազիանզացու գրքերը ներկայացնում է առանց որոշ ճառերի հեղինակային պատկանելութիւնը կասկածի տակ առնող առկա հիշատակութիւնների և, ճառերի՝ միջնադարում ընդունված (կամ հայտնի) հերթակարգը պահպանելու նպատակով, դրանք դասդասում է գիրք առ գիրք:

է) Գրիգոր Նազիանզացու մատենագրական ժառանգութեան հիմ-

նական մասը հայերենի է թարգմանվել գերազանցապես V—VII դդ.: Յավոբ, թարգմանիչների (Մովսես թարգմանիչ, Դավիթ թարգման, Գէորգ վարդապետ) ու թարգմանությունների մասին պահպանված գրառումները շատ չեն, ուստի այդ թարգմանությունների ժամանակին, բնույթին ու թարգմանիչների ինքնությանը վերաբերող խնդիրները կարող են արժարժվել տվյալ երկերի բառագանձի, լեզվաոճական ինքնատիպության, քերականական նորմերի, այլուր եղած դրանց զուգահեռների բացահայտման ճանապարհով:

Կորյունը ծանոթ է նազիանզացու «Դամբանականի» հայերեն թարգմանությանը և օգտվում է դրանից: Այս իրողությունը, ինչպես նաև Հին կտակարանից կատարված քաղումների համեմատությունը հնարավորություն են տալիս ասելու, որ «Դամբանականը» թարգմանվել է 443—451 թվականների ժամանակահատվածում: Ի դեպ, իր բնույթով այն հունարան թարգմանություն է (մանավանդ ըստ բառագանձի): Մենք վերանայելի ենք նկատում Ն. Ակինյանի այն պնդումը, թե մեզանում հունարան թարգմանությունները երևան են գալիս միայն 572—603 թվականների միջոցին: «Դամբանականի» հայերեն թարգմանությամբ ունենք մի շարք բառեր և կապակցություններ, որոնք բոլորովին անծանոթ են հայ մատենագրությանը:

ը) Խորենացին լավատեղյակ է նազիանզացու մատենագրական ժառանգությանը. նրա շորս գրքերի տասնութ ճառերի հայերեն թարգմանություններից երեք տասնյակից ավելի քաղումներ է կատարում իր «Հայոց պատմությունը» շարադրելիս: Այդուհանդերձ, հակառակ Ն. Բյուզանդացու և Գ. Զարբհանալյանի ենթադրության, Խորենացին նազիանզացու ճառերի թարգմանիչը չէ: Նազիանզացու թարգմանիչ հիշատակվող Մովսեսը և «անպարապ ի թարգմանութեանց» Խորենացին տարբեր անձնավորություններ են:

Խորենացու քաղումները շատ հաճախ բառացի են և նույնական նազիանզացու համապատասխան հայերեն թարգմանությունների հետ: Բայց կան դեպքեր, երբ պատմիչը թերևս հիշողությամբ ու վերապատմելով է օգտվում: Ընդ որում, պատմահայրը իր աղբյուրի հեղինակային հստակ մասնավորեցում չի կատարում:

Խորենացու քաղումները երկուստեք ճշգրտումների հնարավորություն են տալիս:

թ) Նազիանզացու ճառերի և թղթերի հետքերը, դրանցից կատարված վկայակոչությունները շատ ավելի հաճախադեպ են ու ընդարձակ VII—XIII դդ. հայ մատենագիրների երկերում (Ա. Շիրակացի, Ստ. Սյունեցի, Ստ. Ասողիկ, Հովհ. Սարկավազ, Ն. Շնորհալի, Գր. Տղա, Վ. 13—716

Այգեկցի, Հովհ. Երզնկացի): Մեր մատենագիրները հաճախ ստիպված են գրել «ընդդէմ երկաբնակաց և ամենայն հերձաժողաց», և Նազիանզուցուց կատարած բանաքաղությունները նման դեպքերում զորեղ կռվան են ծառայում: Ակներև է Նազիանզացու ճառերի և թղթերի թողած հետքերի զուտ մատենագրական նշանակութիւնը: Թվարկված հեղինակների որոշ գործեր դեռևս անտիպ են և սկզբնաղբյուրների ճշգրտման առումով շքննված, իսկ մեկ-երկու ձեռագրի համեմատութեամբ կատարված հրատարակութիւնները շատ հաճախ բնագրի ստուգութիւն չեն երաշխավորում: Այսպես, Ստ. Սյունեցու «Յաղագս ժողովոյն...» թուղթը երկու հրատարակութիւն ունենալով հանդերձ՝ թերի է: Պարզվում է, որ այն կարող է էական սրբագրութիւնների ենթարկվել «Ի սուրբ պասքայ» ճառի օգնութեամբ, որից ժամանակին օգտվել է Սյունեցին:

Հայ մատենագիրների բնագրերն էլ իրենց հերթին համաբնույթ ուղղում-լրացումներ կարող են առաջադրել Նազիանզացու ճառերի և թղթերի հայերեն թարգմանութիւնները քննական հրատարակութեան պատրաստելիս:

Ժ) Նազիանզացու գրական վաստակի օգտագործումն ու ընթերցումը դյուրացնելու նպատակով միջնադարյան Հայաստանում գրվել են մեկնութիւններ, պատճառներ, լուծմունքներ: Դրանց հեղինակներն են Ներսես Շնորհալին, Վարդան Հաղբատեցին, Եղիա Ասորին, Դավիթ Քոբայրեցին, Հովհաննես Իմաստասերը, Գրիգոր Աբասյանը, Մխիթար Գոշը, Գևորգ Երզնկացին, Թովմա Մեծոփեցին և Մեսրոպ Գանձակեցին: Թվարկված ոչ բոլոր հեղինակների մեկնութիւն-պատճառներն ու լուծմունքներն են հասել մեզ. Վարդան Հաղբատեցուն պատկանողները անանուն լուծմունքների մեջ փնտրելու համար նոր ու հիմնավոր կռվաններ են պետք:

Դավիթ Քոբայրեցու խմբագրութեամբ հայտնի ժողովածուն (ձեռ. № 5602, 1177 թ.) լայն ընդունելութիւն է ունեցել մեզանում և հաճախ նախօրինակ ծառայել հետագա մեկնիչների համար:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՂ ՃԱՌԵՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ԲՆԱԳՐԵՐԻ
ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Առաջարկվող բնագրերից առաջինը՝ «Յիևֆն յագարակէ անդրէն Կ-կեալ», պահպանվել է ութ ընդօրինակութեամբ, որոնցից շորսը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռ. № 823, 1266 թ., էջ 152ա—164ա, ձեռ. № 1500, 1283 թ., էջ 874բ—877բ, ձեռ. № 6988, 1763—64 թթ., էջ 128ա—139բ, ձեռ. № 2615, 1850 թ., էջ 154—168), երկուսը՝ Երուսաղեմի հայ պատրիարքութեան ձեռագրատանը (ձեռ. № 429, էջ 446—455, ձեռ. № 1414, 1321 թ., էջ 314—328) և երկուսը՝ Վիեննայի Մխիթարյան միաբանութեան Մատենադարանում (ձեռ. № 304, 1846—47 թթ., էջ 143բ—147ա, ձեռ. № 217, 1848—49 թթ., էջ 201ա—205բ)։

Երկրորդ՝ «Յիևֆն եւ ի բանս երկրորդ» ինքներգական ստեղծագործությունը ևս հայտնի է նույն ութ ընդօրինակութեամբ (ձեռ. № 823, էջ 164ա—171ա, ձեռ. № 1500, էջ 877բ—879ա, ձեռ. № 6988, էջ 139բ—146բ, ձեռ. № 2615, էջ 168—178, ձեռ. № 429 (Երուսաղեմ), էջ 455—642, ձեռ. № 1414 (Երուսաղեմ), էջ 328—338, ձեռ. № 304. (Վիեննա), էջ 147ա—149բ, ձեռ. № 217 (Վիեննա), էջ 205բ—208բ)։

Երրորդ՝ «Ի Կեսարիոս եղբայրն իւր» ճառը պահպանվել է վեց ընդօրինակութեամբ, որոնցից երկուսը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում (ձեռ. № 4234, 1307 թ., էջ 25բ—36բ), ձեռ. № 1500, էջ 780բ—783բ, մեկը՝ Վիեննայի Մխիթարյան Մատենադարանում (ձեռ. № 217, էջ 121բ—126ա), երեքը՝ Երուսաղեմի հայ պատրիարքութեան ձեռագրատանը (ձեռ. № 429, էջ 251—265, ձեռ. № 877, էջ 75—76, ձեռ. № 1414, էջ 68—82)։

Գրիգոր Նազիանզացու սույն ճառերի հայերեն թարգմանությունները հրատարակության պատրաստելիս ձեռքի տակ ունեցել ենք դրանց հունարեն բնագրերի «Patrologia Graeca» մատենաշարի հրատարակությունը։

ա) «Յիևֆն յագարակէ անդրէն Կկեալ» — („Eis éautón, éx áγροῦ ép α νήχοντα μετὰ τὰ κατὰ Μάξιμον“, (PG, t. 35, էջ 1228—1252) .

բ) «Յիևffen եւ ի քանս երկրորդ» — („Εἰς ἑαυτὸν, καὶ πρὸς τοὺς λέγοντας ἐπιθυμεῖν αὐτὸν τῆς καθέδρας Κωνσταντινουπόλεως, καὶ εἰς τὴν τοῦ λαοῦ προθυμίαν, ἣν ἐπεδείξαντο εἰς αὐτόν“, PG, t. 36, էջ 265—280).

գ) «Ի Կեսարիոս եղբայրն իւր» — („Εἰς Καισάριον τὸν ἑαυτοῦ ἀδελφὸν ἐπιτάφιος, περιόντων ἔτι τῶν γονέων“, PG, t. 35, էջ 756—788).

Համեմատության համար ընտրել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերը. առաջին երկու բնագրերի համար՝ ձեռ. № 823—A, ձեռ. № 1500—B, ձեռ. № 6988—C, ձեռ. № 2615—D, երրորդ բնագրի համար՝ ձեռ. № 4234—A, ձեռ. № 1500—B:

Առաջնորդվել ենք հետևյալ բնագրագիտական նորմերով.

ա) նախընտրված բառը համապատասխան տարրնթերցումներից անշատել ենք ուղղանկյուն փակագծով.

բ) յուրաքանչյուր ճիշտ նկատված բառից հետո ըստ ձեռագրախրմբերի ներկայացրել ենք նույն հիմքին վերաբերող բոլոր տարրնթերցումները.

գ) հատվածական այլընթերցումներն ամենուր արտացոլել ենք ամբողջական տեսքով: Անհարկի կրկնությունից խուսափելու, բայց միաժամանակ տարրնթերցման համապատասխանությունը ստույգ արտացոլելու նպատակով ճիշտ ձևերից պատկերել ենք միայն առաջին և վերջին բառերը.

դ) հավելում-ընդմիջարկություններն արտահայտել ենք գումարման նշանով, օտարում-կրճատումները՝ ուղղանկյուն փակագծով.

ե) նույն հիմքին վերաբերող հավելումները և տարրնթերցումները, անկախ հիմք ընթերցման արտացոլվածությունից, միմյանցից անշատել ենք ստորակետերով, այլահիմք տարրնթերցումները՝ միջակետերով.

զ) մասնակի աղավաղումներ ունեցող տարրնթերցումները արտացոլել ենք առանց ուղիղ ձևերի, եթե վերջինս դժվար կռահելի չէ:

Ա. Անձկայի առ ձեզ, ո՛վ մանկունք, եւ փոխարեն անձկա-
 ցեալ լինէի ի հաւասար շափովք: Քանզի հաւանիմ՝ պարտ է
 եւ հաւատ յաւելուլ ի բանս, այս ձերով պարծանաւքդ, զոր ու-
 5 նիմք ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր*, վասն զի զայս ինձ արար
 զերդումն հոգին սուրբ, որով առ ձեզ շարժեցաք, զի պատրաս-
 A 152v տեսցուք ժողովուրդ սեփհական՝ տեսանէք զհաւատն որքան
 է. եւ զիմ ինքեան հաւանիմ եւ յաղագս ձեր յերկարեմ: Եւ սքան-
 շելին ինչ ոչ: Քանզի որոց հասարակ է հոգին, հասարակ է եւ
 10 կիրքն, եւ որոյ կիրքն՝ հաւասար, զուգահաւասար՝ եւ հաւատալն:
 Զի ոչ որ ինչ կրեաց եւ ոչ այլում հաւատայ, բայց՝ որ կրեացն,
 ի հաւանութիւնն է պատրաստագոյն, վկայ աներեւոյթ կրիցն
 աւտար դիմաց իւրն հայելի եւ յաղագս այսորիկ ոչ ներէի ի
 բացն հեռանալ ի ձէնջ երկայնագոյն: Թէպէտեւ բաւականապէս,
 15 որովք աստ էի՝ դժուարէի եւ տաղտկայի: Ոչ որքան զքաղաքս
 բերեն միայն՝ բազմամարդութեամբք ամբոխիւք, կաճառիւք
 տեսարանաւք, շուայտութեամբք թշնամանաւք՝ ածեն եւ ածեալ
 լինին տուժողովքն եւ տուգանեցելովքն, սգացելովքն եւ սուգ
 արարովքն, լացելովքն եւ զուարճացելովքն, ամուսնացելովքն
 20 եւ թաղողաւքն եւ բարեբանողովքն, հայհոյչովքն, նիւթով շա-
 րութեամբ, աշխարհի եռանդամբ, արագադարձ փոփոխմամբք,
 իբրեւ դիրայեղութեամբք եւ հողմովք: Այլ եւ դոքումբք իսկ
 պարկեշտագունիւք եւ պատուականագունիւք, որք ի բեմիս
 յայսմ ասեմք եւ ի սուրբ սեղանս, յորում մեք իշխանութիւն
 A 153r ունել թուիմք եւ ի մերձաւորացն լեալք աստուծոյ, երկնչիմ
 մի գուցէ շարաշարք հպեալք՝ որպէս եղեգն հրով, ոչ ժուժալով
 հրոյն:

Բ Սակայն եկի վերստին առ ձեզ՝ բռնութեամբ ի բաց ըն-
 թացեալ, ոչ բռնութեամբ մերձ եկի, այլ եւ յաւժարութեամբ եւ

* Հմմտ. I Կորնթ., ԺԵ, 31:

9 հասարակ] հասարակաց B. հասարակ] հասարակաց B. 17 ածեալ] ածեալք B.
 19 լացողաւքն B. 20 հահողաւք B. 23 պատուականագունիւք] պատահականագու-
 նիւք B. 24 ասեմ B

ինքնակամ ոտիւք, բանի հոգւոյն՝ այսպէս ածեալ իբրեւ հոսու-
մըն ինչ ի զառ ի վերսն բռնադատեալ: Բայց ի զառ ի վայրսն ճե-
պեալ ստուգապէս ար մի կեանք մարդոյ, որք անձկով վտան-
գին: Քանզի Յակոբ այն ոչ այլազգ ունել ինձ երեւելի՝ իբրեւ
5 ամս շորեքտասան ծառայելով Ասորոցն Ղաբանու յաղագս եր-
կուց կուսիցն ոչ աշխատէր, վասն զի էին նմա, ասէ, ամենայն
աւուրքն իբրեւ զար մի՝ յաղագս սիրելոյն զնոսա: Թերևս զի
ի դէմս էր ցանկացեալն ճշմարտապէս, զի պատրաստն յիշ-
խանութիւնն դատարկէ ի ցանկութեանն՝ որպէս ոմն ասաց
10 նախքան զմեզ*: Արդ՝ յորժամ ես մերձն էի դուզնաքեայ յախ-
տիցս սգայի, իսկ յորժամ հեռացայ ծանեայ զանձկոյս զքաղց-
րութիւնն: Եւ նոր ինչ ոչ է, զի եթէ այնքան ողբայ անդիորդ
զզուարակ յանդոյն ի բաց որոշեալ, եւ հովիւ ոչխար մի պակա-
սեալ ի տասանց եւ հաւու զբոյնն, զոր առ սակաւ մի լքանիցէ,
15 որպէս ոմանց զփողսն առեալ՝ ի բարձրաւանդակ ինչ ելանելով՝
լնուն տրտմութեամբն զեղեգունսն եւ կոշեն վերստին իբրեւ
A 153v զբ/անաւոր զմոլորեալն: Եւ լուեալք՝ զուարճանան առաւել, քան
զամենեքումքք, միանգամայն այլովքն, որոց ոչն հոգացան եւ
ոմն ճռուղելով ի բոյնն հասանէ եւ ճճուղաց ձագուցն թռչի ի
20 վերայ եւ շուրջ արկանէ զթեւսն՝ որքան ինչ արդեալք իցէ աջո-
ղագոյն: Հովուի բանական պաճարք եւ յաղագս որոյ աշխատե-
ցան, վասն զի այնոքիկ ի սիրելութիւնսն յաւելուն:

Գ Որպէս ես երկեայ ի ծանր գայլոյն՝ մի գուցէ զխաւար-
շուտն մեր սպասելով՝ զհաւտդ աւցտիցեն բանիւք յափշտակողք
25 եւ բռնադատողք, վասն զի ի տարածամութիւնսն պահեն՝ յայտ-
նապէս զաւրութիւնսն ոչ ունելով: Զարհուրեցայ յաւազակաց
եւ ի գողոց՝ մի գուցե գեր ի վերոյ քան զգաւիթն ելանելով՝
կամ լրբութեամբն կողոպտեսցեն եւ կամ՝ խաբէութեամբն գո-
ղասցին՝ որպէս զի զենցեն եւ սպանցեն, եւ կորուսցին** յա-
30 փրշտակելով զյափշտակութիւնն զանձինս կերակրիցեն, որպէս

* Հմմտ. Մնունդք, Իէ, 26:

** Հմմտ. Յովհ., Ժ, 10:

2 բայց ի]ի BD. 2-3 ճեպեալ] ճեմեալ D. 4 երեւելի] երեւի B. 5 ասորոյն B, ասորւոյն CD. լաբանոն D. 9 ցանկութիւն D. 11 սգայի] զգայի CD. 11-12 զքաղ-
ցրութիւնն] զքաղցր բնութիւն B. 12 անդեորդ C. 13 հովիւ] + մի B. 17 լուեալք]
գտեալք CD. 19 ճռուղելով B. ճճուղաց ACD. 20-21 աջողագոյն] +ո B. 23 դայ-
լոյն] գալոյն D. 24 յափշտակողովք CD. 25 բռնադատողովք CD. ի] BD

- ասաց ոմն ի մարգարէիցն: Երկեայ ի մեծ դրանէն մի գուցէ ա-
 ոանց փակելոյ ուրուք գտեալ իբրեւ երեկ ի մերոցն եւ եռանդ,
 եւ ապա՝ իբրեւ զընտանի ի ներքս մտեալ՝ դրժիցէ իբր զաւտար:
 Վասն զի բազումք եւ ազգի ազգիք են այսպիսի գործովն խար-
 5 դախութիւնքն. եւ ոչ ոք այնպէս ի ճարտարապետացն, ոչ ոք ի
 A 154r բաղմազանիցն, իբրեւ զխաբեբայ շարութեանն ընդդիմակաց:
 Զարհուրեցայ եւ ի շանցն, հովիւս լինել բռնադատեցելոցն, որք
 հրաշափառագոյն, ինչ ոչ եւ հովվուականս ի ներքս մտեալք,
 խզեալ զվարսս զորս շարաշար խնամս տարան, որք ոչ շուն
 10 կացին մնացին, եւ ոչ հովիւք եղեն, բայց պառակտել եւ աւց-
 տել, եւ քակտել զաշխատութիւն զայլոյ: Վասն զի դիւրագոյն
 իսկ է ապականելն, քան զմիասին պահելն: Ծնանի մարդ աշ-
 խատութեամբ*, ասէ Յոք, եւ նաւագործի նաւ եւ տուն շինի, բայց
 սպանանել կամ քակտել, կամ այրել ախորժողին է ամենայնի:
 15 Որպէս զի այժմ մի ինչ մեծամեծս խորհեսցին, որք հաւտիս ի
 վերայ զշունսն յարուցին, որք զոչխար զմի ոչ ունին ասել՝ իբ-
 րեւ թէ մերձեցուցին կամ ապրեցուցին, քանզի եւ ոչ ուսան
 իսկ բարի առնել՝ ի շարութեանն հրահանգեալք: Եւ եթէ զհա-
 ւատն խոովեցուցեն՝ զայս եւ ալէկոծութիւն փոքր, սոյն եւ
 20 ախտ սակաւ, զայս եւ գաղան մի՝ յանկարծակի ի վերայ անկեալ:
 Արդ՝ կացցեն որք իւրեանց ամաւթովն մեծամեծս պարծին եւ
 դադարեսցին ի շարութենէ, եթէ արդեալք կարիցեն՝ երկիր
 պագցին եւ անկցին առաջի տեառն արարչին իւրեանց եւ ի
 հաւտս խառնեսցին, որք ոչ ամենեւին անբժշկելիքն են:
- A 154v Դ Զայսոսիկ երկշոտս ես հովիւս եւ կասկածոտս, եւ սո-
 րին աղագաւ զգուշութեամբ իբրեւ պղերգութեամբ բամբասիմ:
 Վասն զի ոչ եմ հովիւ յայնցանէ, որք զկաթնն ուտեն եւ զասրն
 զգենուն, զգէրսն զենուն եւ զշարութիւնսն գործեն, կամ որք
 վաճառեն եւ ասեն՝ աւրհնեալ տէր եւ փարթամացաք, որք զին-
 30 քեանսն հովվեն եւ ոչ զոչխարսն: Եթէ ինչ զմարգարէական
 զձայնսն յիշել իցէ պարտ, որովք նոքա զշար հովիւսն վարին,

* Հմմտ. Յովբ., Ծ, 7:

3 [բրեւ] որպէս BD. 4 [գործովն] + էի B. 7 [հովիւս լինել] D. 11 [այլոց] C. զի
 + եւ B. 12 [զմիասին] զի միասին CD. 14 է] ACD. 16 ոչ] ինչ B. 18 [շարութիւնն
 D. 19 [խոովեցուցանեն] B. 20 [անկեալ] հասեալ D. 22 [դադարիցեն] B. 25 եւ] B. 26
 [զգուշութիւնս] B. 28 [սգենուն] B

- այլ յայնցանէ առաւել, որք կարեն ասել ընդ Պաւղոսի՝ ո՞ հի-
 ւանդանայ եւ ոչ ես հիւանդանամ, ո՞ գայթակղի, եւ ոչ ես տա-
 պանամ հոգւովն: Քանզի ոչ հայցեմ զձերն, այլ զձեզ եղէ բո-
 ցակիզեալ խորշակաւ ի տուրնջեան, եւ սառնամանեալք ի գի-
 5 շերի վտանգեալ հայրապետին ձայն հովուի, որոյ նշանաւոր ոչ-
 խարք եւ անդուստ աւազանաւքն յղանալ հրահանգելոցն: Արդ՝
 այսպէս եւ սորին աղագաւ եկի առ ձեզ եւ այնպէս ունին: Եւ
 վասն զի հասի առ ձեզ տացուք բան բարի՝ ոչ բանի միայն եւ
 գործոց, այլ եւ ամենայն ժամանակի եւ ժամուս այսմիկ դուզ-
 10 նաքեայ վայրկենիս եւ անաւորագունի թուիք պահանջել բան ի
 մէնջ: Դուք պատմեցէք ինձ զգործն ձեր, եւ ես ի մէջ եղից ըստ
 հանդարտութեան՝ զինչ յիս ինքեան լինելով իմաստասիրեցի:
 A 155r Ե // Տեսութիւն իմն ի բարձրագունիցն, զոր յինէն առեալ
 պահիցէք եւ կամ ի ձէնջ ինքեանց ընձայիցէք կամ վասն աս-
 15 տուածաբանութեան եւ կամ յաղագս այլոց աւանդից, զո՞րս
 բազումս յոլով անգամ ձեզ աւանդեցի: Եւ հայցեմ ոչ զփոխն
 միայն, այլ եւ զվաշխն, ոչ զտաղանդն եւեթ, այլ եւ զգործն մի
 գուցէ թաղեաց եւ ծածկեաց* զհաւատացեալն եւ եւս ստիցէ
 զհաւատողէն, իբրեւ զխստէ եւ զաւտարացն ցանկացողէ: Զինչ
 20 գործս ի գովելեացն, զոր եւ ոչ ձախն ծանեալ**, պտղաբերի-
 ցէք, մինչ զի պայծառանայ լոյսն ձեր առաջի մարդկան*** եւ
 զի ի պտղոյն ծառնն ցուցցի**** եւ աշակերտաւքն վարդապետն
 ծանիցի, եւ ասիցէ որ ընդ ակամբ հայողացն մեզ (յոլովք են
 որք յաղագս քաջահաճոյութեան եւ բազումք), որք քննողու-
 25 թեամբ թէ արդարեւ աստուած ի ձեզ է ոչ առողջաբար քարո-
 զեալ միայն, այլ եւ պաշտեցեալ: Զի, զոր արիւնակ՝ ոչ է ա-
 ռանց հաւատոյ գործ ընտրեալ (զի եւ փառաց աղագաւ յոլովք
 բարիս գործեն՝ բնութեանն այնպէս ընկալեալ), նոյնպէս եւ
 հաւատ առանց գործոց մեռեալ է*****: Մի՛ որ զձեզ խաբեսցէ
 30 սնտի բանիւք, որք զամենայն թռչուն պատրաստաբար յաղագս
 միոյ ամբարշտելոյ յաւանդութիւնսն եւ վատթարն հաւաքեն՝

* Հմմտ. Մատթ., ԻԵ, 18:

** Հմմտ. Մատթ., Զ, 3:

*** Հմմտ. Մատթ., Ե, 16:

**** Հմմտ. Մատթ., Է, 16:

***** Հմմտ. Յակոբ., Բ, 26:

7 այսպէս] սոսա D. 9 գործոյ B. 13 յինէն] B. 17 տաղանդաւնն B. 23 հայե-
 ցողացն B. 24 քաջահաճութեան B. 31 ամբարշտելոց B

A 155v վարձ ընդ շար իրացն: Արդ՝ ցուցէք ի գործո||ցն զհաւատսն
 դերկրիդ, ձերոյ զարգաւանդութիւն, եթէ ոչ ընդունայն սերմա-
 նեցաք, եթէ աւրայք են ի ձեզ, որ առնել ալիւր զաւրութիւն
 ունին եւ շտեմարանացն արժանաւորք: Զի եւս յաւթարամտա-
 5 դոյնս եւս ձեզ մշակեսցուք. ո՞ զհարիւր պտուղն ծնանի, ո՞
 զվաթսունն եւ ո՞ զվերջինն՝ զերեսունն*, ի վաթսունն յա-
 ոաջ եկեալ (վասն զի ունիմք եւ զայս յԱւետարանացն. զկարգ),
 կամ ո՞ ի հարիւրաւորն կատարեցաւ, զի յառաջադիմելով իբ-
 րեւ զիսահակ մեծ լինիցի*** գնալով ի զաւրութենէ ի զաւ-
 10 րութիւն եւ զերգս ի վերայ աստիճանացն երգիցէ եւ զի վերելսն
 ի սրտին դնիցէ:

Զ Հայցեմ զպտուղն զառաւելեալ ի բանն ձեր, վասն զի
 մեր ոչ ունիմ զշահն՝ թէպէտեւ մեր, զի ոչ ձեր անդրէն, դար-
 ձեալ աւգտակարութեամբ ի մէնջ ի մեզ՝ որպէս թէ ի ճառա-
 15 գայթէ ընդդէմ փայլմանն: Եթէ աղքատաբոյժք եղայք, եթէ աւ-
 տարընկալք, եթէ զսրբոց ոտս լուացէք***, եթէ փափկացայք խա-
 փանեալ որովայնիւդ**** (քանզի տացի), եթէ պատուիրանաւքն
 փափկացայք, քան զոր փափկութիւն ոչ ինչ գոյ լաւագոյն, եւ
 ոչ մնացականագոյն, որք զուարճանալն ախորժեն: Եթէ զոմանս
 20 ի պաշտանէից սեղանոյն եւ գեղեցկապէս աղքատացելոցն
 A 156r (քանզի տու||ք ինձ զայդ ասել) ըստ կարողութեան հանգուցէք,
 զի առանց յապաղանաց առաւել սեղանոյն պարապեցին, եւ
 ընդունելով զձերն՝ զիւրեանցն փոխարեն ի ներքս բերիցեն,
 որպէս զի վատթարութիւն է զայդոսիկ եւ մեզ պահանջել, եւ
 25 ոչ տալ ձեզ: Ոչ խրատեցից զայդոսիկ, զի այնպէս ինձ լինիցի,
 վասն զի լաւ է ինձ մանաւանդ մեռանել*****, քան եթէ սնոտի
 լինել իմ պարծանքս եւ անվարձ լիցի ինձ Աւետարանն աստ
 շահեալ: Զի աւետարանելս հարկաւորութիւն է, բայց պատուա-
 սիրութիւնն՝ առանց ծախոյ*****: Այլ զի դուք ուսանիցիք զբա-
 30 րիս առնել ի ձեռն եւ փոքունց բարի առնելոյ: Իբրեւ ամենայն

* Հմմտ. Մատթ., ԺԳ, 8:

** Հմմտ. Մնունդք, ԻԶ, 13:

*** Հմմտ. I Տիմոթ., Ե, 10:

**** Հմմտ. I Կորնթ., Զ, 13:

***** Հմմտ. I Կորնթ., Թ, 15:

***** Հմմտ. I Կորնթ., Թ, 18:

9 զիսահակ | զՄաակ B. 10 աշտիճանաց AC. 14 մէնջ | ձէնջ B. 15 փայլակմանն
 B, փայլմանէ D. աղքատաբոյժք եղեք B, եղաք D. 17 տացի | +եւ B. 25 այնպէս |
 այդպէս B. 28 հարկաւորութեանն B. 30 ի ձեռն | B

- որքան ինչ ես, բայց ի մեղացս եղեւ յաղագս իմ, նոյնպէս եւ զնուազագոյնս իմոցն յինքն ընդունի: Եւ եթէ զյարկն տայցես, եթէ ի հանդերձէն, եթէ ի բանդի այց արասցես, եթէ զհիւանդացեալն տեսցես զանարգագոյնն, եթէ բաժակաւ ցրտով միայն զովացուցես զլեզուն պապակեալ՝ որպէս կարաւտանայր Ղազարու աղքատին՝ վտանգեալ ի բոցոյ ընչեղն: Եւ զի՞նչ աստ ի փափկանալոյն փոխարէն նա ոչ առնոյր անտես առնելով զՂազարոս զքաղցեալն եւ զվիրաւորեալն անդ՝ կարաւտեալ Ղազարու ոչ հանդիպիւր:
- 10 է Արդ՝ զորս ի ձէնջ պահանջեմ՝ այսոքիկ են եւ գիտեմ, զի A 156v ոչ ամաչէք, || ոչ ի մէնջ պահանջելով բան եւ ոչ ի վերջնում աւուրն՝ (ի) յոր զամենայն հաւաքէք զմերս ըստ ասացելումն: Եւ ես գամ զխորհուրդս եւ զգործս ձեր ժողովել՝: Եւ ասամարդ, եւ գործ իւր, եւ վարձ իւր ընդ ինքեան**:
- 15 Բայց եւ զմերս, եւ որք յանապատս են առ ձեզ բերեմ: Վասն զի եւ Հեղիաս իմաստասիրէր ի կարմէղոս, եւ Յովհաննէս յանապատին, եւ Յիսուս ինքն յանապատսն իրրեւ բազում անգամ մնայր: Զի՞նչ արէնս, գրելով որպէս եւ կարծեմ: Զի՞նչ եւ հանդարտանալն՝ որպէս անպղտորաբար խաւսեսցի ընդ աստուծոյ, եւ սակաւ ինչ ի վեր ածել զմիտս ի մոլորականացն: Իբրեւ ոչ եթէ ինքն կարաւտանայր հեռանալոյն (քանզի եւ ոչ ունէր իսկ յոր ինչ ամփոփիցին, աստուած եւ որ զամենայն լնու), այլ զի մեք ուսանիցիմք զգործոյն ժամանակ, քան զպարապելոյն բարձրագոյն: Արդ՝ զի՞նչ ամայութեանն, վասն զի կամիմ իբրեւ զբարի վաճառական ամենայն ուստեք շահել եւ աստուատ ինչ բերել ձեզ շահ:
- 25 Ը Զի գնայի այնպէս առանձինն՝ ի խոնարհել աւուրն: Եւ ծովեզրն զգնալոյն տեղի, զի եւ սովորեցի իմն այնպէս զաշխատութիւնսն, զբաւսանաւքն այնպիսեալք լուծանել, վասն զի
- 30 եւ ոչ բերէ իսկ զքաջապնդութիւնն միշտ լարն պրկեալ եւ կարաւտանայ փոքր ինչ ի խառիցն ի բաց լուծա||նել, եթէ հանդերձեալ իցէ դարձեալ լարիլ, եւ ոչ անպիտան լինել դարձեալ աղեղնաւորին, եւ ոչ անաւգուտ ի ժամանակի պիտոյիցն: Արդ՝
- A 157r

* Հմմտ. Եսայի, 42, 18:

** Հմմտ. Եսայի, Խ, 10:

10 ձէնջ] մէնջ B. 14 օրէնք B. եւ] B. 19 որպէս] † զի B. անպղտորաբար] անպտղաբար D. 27 զի գնայի] զգայի AD. 30 լարն] շարն D. 32 դարձեալ] B

- զգնայի եւ ոտքս բերեալ լինէին, բայց աչքս հայէին ի ծովն: Եւ տեսութիւնն էր ոչ ախորժելի, թէպէտեւ այլազգ հեշտալի յորժամ հանդարտութեամբ ծիրանենայ եւ կամ խաղայ ընդ եզերսն հեշտութեամբ ինչ եւ հանդարտութեամբ: Այլ զի՞նչ ասեմ (արդէն իսկ իբրեւ զբանս գրոց) մեծաւ հողմով շնչեցելով՝ ի վերյառնէր եւ մոնչէր իբրեւ յալեացն պարտ էր հանդիպել յայնպիսի շարժմունսն ի հեռուստն ի վեր կանգնիլ եւ առ սակաւ սակաւ բարձրացեալ եւ ապա նուազանալով՝ առ եզերսն լուծանել: Եւ այլք զդրացին վիմաւքն անկեալք եւ բախեալք ի մանրութիւն 10 փրփրական եւ ի բարձրագոյն ցնդէին: Ուրանաւր խիճքն եւ մամուռքն եւ սպունկքն եւ խեցեմորթացն անաւորագոյնք արտաքս մղին եւ ի բաց թքանին է ինչ, որ եւ յափշտակեալ լինէր դարձեալ հեռանալով ալեացն: Ո՞ որք էին անշարժք եւ անթաւթափելիք, ոչ ինչ նուազ եւ վտանգեալք ոչ յոմեքէ, բայց որքան ընդ ալեաւքն անկանել:

- Թ՛ Անդանաւր գիտեմ իմն առ յիմաստասիրութիւնն աւգտեալ եւ (որպիսի որ || են զամենայն կարկառելով առ իմինքն որպէս զի մանաւանդ հանդիպիցիմ ի դիպուածոցն ցնորել, զոր եւ այժմ կրեցի) ոչ վարկպարազի ընկալայ զերեւելն ինձ զտեսութիւնն եւ խրատ եղեւ ինձ: Քանզի ասասցի ես ծով զմեր կենցաղս եւ զմարդկայինս (զի յոլով է աստ աղտաղտուկն եւ անկայունն), եւ հողմք՝ անկեալք փորձութիւնք, եւ որք միանգամ յանկարծելեացն: Զոր ինձ թուի եւ սքանչելոյն Դաւթայ իմացեալ՝ «կեցո՛ զիս, տէ՛ր, ասէր, զի մտին ջուրք մինչեւ յանձրն իմ»** եւ փրկե՛ա զիս ի խորոց ջուրց: «Եկի ես ի խորս ծովու եւ պտոյտք ընկլուզին զիս»***: Եւ ի փորձեցելոցն ոմանք թուէին ինձ թեթեւագոյնք եւ առանց շնչելոյ մերձ քարշեցեալք, եւ ոչ փոքր ինչ հանդարտեալք առ ի դաւաճանութիւնսն, զի եւ ոչ ունէին իսկ յինքեանս կարծրութիւն, եւ ծանրութիւն խորհրդոյ ողջախոհի, եւ առ ի դիպուածսն ընդդիմանալոյ: Եւ կէսք են վիմաց նմա վիմի արժանաւորք, յորոյ վերայ հաստատեալ եմք, եւ զորս պաշտեմք, որք միանգամ իմաստասէրք վարելով բա-

* Հմմտ. Յովհ., 2, 18:

** Սաղմ., 4Ը, 2:

*** Սաղմ., 4Ը, 3:

1 բայց] և B. 6 իբրեւ] որպէս B. 10 փրփրական] փրկական D. 11 խեցեմարտացն D. 13 ալոյն B. ո] B. 14 ոչ] որ D. 16 առ] + ի B. 17 իմինքն] ի մենքն D. 19 զերեւել D. 25 ես] C. 26 փորձելոցն D. 30-31 վիմաց նմա] վէմ այնմ BCD

նիւ, եւ գեր ի վերոյ հաստատեալք, քան զբազմացն նուաստութիւնսն, զամենայն բերեն առանց սասանելոյ եւ թաւթափելոյ, A 158r եւ ծաղր առնեն, եւ կամ ող||որմին սասանեցելոցն (է ինչ, որ իմաստասիրութեամբ եւ է ինչ, որ մարդասիրութեամբ): Բայց 5 ինքեանք ի վատթարութեանցն դնին հեռաւորագոյնք եւ զդժընդակութիւնսն արհամարհեն, մանաւանդ եթէ ոչ դժուարութիւնս կարծեն, որք ի մերձակայիցն յաղթին եւ յայնցանէ, յորոց ի յանցաւորացս իբրեւ ի կայուն եղելոյ եւ ի ժամանակի արտաքոյ իմաստասիրել ի ձեռն որոյ անիմաստասիրութիւն երեւի. որպէս եթէ ոչ զինքն քաջ ըմբիշ վարկանիցի եւ ոչ իջանիցէ ի հանդէսն եւ կամ նաւուղիդ, ի քաջահաճոյիցն յանքոյթ ի արուեստիւն մեծամեծս խորհեսցի եւ յալէկոծութիւնս ի բաց թողու զղեկսն:

Ժ Եւ յորժամ միանգամայն յասպիսումս կացի ի բանս, եւ 15 առ այլ իմն եկի կերպարան յոյժ մերձակայիս հանդիպեալ: Թերեւս արդեալք զիս ծեր և առասպելաբան վարկանիցիք, եթէ եւ զայս ձեզ ծանուցից. սակայն ծանուցանելի է, զի եւ զԳիրս գիտեմ բազում անգամ այսպիսեալք վարեցեալ յերեւելագոյն յայտնութիւն: Է իմն առասպելաւն տունկ, որ ցցուի հատեալն 20 եւ ընդ երկաթոյ մաքառի, եւ եթէ պարտ իցէ հրաշափառագոյնըս ասել յաղագս սքանչելոյ իրին: Մահուամբն կեայ եւ տնկի A 158v եւ աճէ ծա||խեալն զայսոսիկ առասպելն եւ ինքնաւրէնութիւնն ստեղծուածոյն: Բայց ինձ թուի յայտնապէս այսպիսի լինել իմն իմաստասիրելն: Եթէ քաջահաճոյ իցէ ախտիւքն եւ նիւթ առաքինութեան առցէ զտրտմականսն, եւ հակառակաւքն զարդարիցի՝ ոչ աջուք զինուցն արդարութեան ամբարձեալ, եւ ոչ ահեկեալքն խոնարհեալ, այլ նոյն ինքն յայսպիսիսն միշտ կայցէ մնայցէ, եւ կամ փորձագոյն եւս՝ իբրեւ ի հնոցի ոսկի գտանիցի: Եւ դիտեսցուք այսպէս: Բարեսոհմիկ իցէ, ցուցցէ 30 զքաջ արիւնակ բարուց արեամբ, որպէս զի երկոքումբք կողմամբք քաջահաճոյ լինիցի ազգաբանեալ, եւ տեսեալ վատթարազգի պատկերն եւ կան (իբրեւ մեծ ինչ կաւ ի կաւոյ զանազանի) հակառակ ի ներքս բերցէ զիմանալի քաջատոհմութիւնն, եւ որով իւրաքանչիւր ոք զինքն ստեղծանէ վատթար 35 եւ կամ լաւ: Քանզի եւ է իսկ ազգ երեք կին. մին ի վերուստ

4 է] D. 8 ի] B. 9 իմաստասիրութիւն ACD. 17 եւ] C. 24 իմաստասիրելն] իմաստասէրն եւ B. եւ] AC. 25 առնիցէ B. 26 աջովք B

սկսեալ, որով ամենեքեան բարետոհմիկ հաւասարապէս, վասն
 զի ըստ կերպարանի աստուծոյ եղաք* եւ միւսն ի մարմնոյ
 սկիզբն առեալ՝ ոչ գիտեմ եթէ բարետոհմիկ այնպիսին ապա-
 կանութիւն մերձ կացեալ: Եւ միւսն ի շարութենէ կամ յառա-
 քինութենէ ծանուցեալ, ուր զառաւելն եւ զնուազն ընդունե-

5
 A 159r լով, զոր, եթէ պահեսցուք, զկե||րպարանն եւ կամ ապակա-
 նիցիմք զայն, սիրեսցէ զբարետոհմութիւնն, որ ճշմարտապէս
 իմաստունն եւ իմաստասէրն է: Եւ զայլն տարագրեսցէ՝ որ սեր-
 մանին եւ կամ գրի, որպէս ոչ միոյ իրիք արժանաւոր եւ գար-
 10 շելի: Քանզի զշորրորդ ազգն, յայնժամ արժանաւոր արարից
 բանի, որ գրովն եւ հրամանաւքն է, յորժամ զգեղեցկութիւն
 ընկալայց, որ գունովքն է եւ կապիկ պատուեալ եղեց՝ առիւծ
 լեալ հրամայեալ:

15 ԺԱ. Մանուկ իցէ, ընդդէմ ախտիցն արիասցի եւ այնուիկ
 վայելեսցէ ի մանկութիւնն ոչ ինչ կրել զմանկութեանցն ախտս,
 այլ ցուցցէ ծերունական հանճար յարբունս մարմնոյն, եւ բերկ-
 րեսցի յաղթութեամբն առաւել, քան եթէ Յողիմպիականսն պը-
 սակեալ, վասն զի յաղթէ ի հասարակաց տեսարանիս յաշ-
 խարհի եւ զյաղթութիւն զանճառելին: Միտ է՞ առ ծերութիւնն:

20 Այլ մի՞ ծերասցի եւ հոգևով, ընկալցի լուծումն իբրեւ զկանուխ
 ուխտադրութիւնն զհարկաւոր ազատութիւնսն, հեշտութեամբ ի
 յառաջիկայսն փոփոխեսցէ, ուր ոչ է տարաժամ եւ ոչ ծերն, այլ
 ամենեքեան հոգեւոր հասական կատարեալք: Գեղեցկութիւն
 որ վիճակեցա՞ւ: Ըստ նմին փայլեսցէ գեղեցկութեամբն զգե-

A 159v զաղէշութիւն, զոգևոյն || մարմնոյն: Էանց ծաղիկն անդաւա-
 ճանելի, հայեսցի առ ինքն եւ ոչ գիտէ զտեսեալն: Վատթար է
 երեւումն, այլ քաջավայելուչ ծածկեալն՝ իբրեւ ի կոկոնի վարդ
 ծաղկաւոր ոչ ծաղկեալ եւ առանց հոտոյ: «Անուշահոտագոյնն
 զգեցիկ տեսանելով քան զորդիս մարդկան»** եւ ոչ ժամանակ
 30 տայ արտաքոյ տեսանել փոփոխեալ դարձուցանէ զտեսողն առ
 ներքին մարդն: Քաջառողջանայցէ, վարեսցի առողջութեամբն,
 առ ի լաւագոյնսն խրատեսցէ, սաստեսցէ բանիւ, համարձա-
 կեսցի, տքնեսցէ գետնախշտի լիցի, պահեսցէ, թափեսցէ զնիւթ-
 սըն, տեսցէ զերկրայինս եւ զերկնաւորսն զամենայն փութով,

* Հմմտ. Մնունդք, Ա, 27:

** Սաղմ., եհ, 3:

3-4 ապակութիւն B. 8 իմաստունն] իմն տուն D. 24-25 զգեղաշեղութիւն B.
 28 ծաղկեալ] ծածկեալն B. 30 տայ] տղա B. 31 վարեսցի] վառեսցի AB

- կրթեսցի ի մահն: Տկարասցի, մարտիցէ, եթէ պէտք իցեն՝
 յաղթեսցի, յաղթութիւն առցէ: Ոչ կռուելով փարթամասցի, ի-
 մաստասիրեսցէ ի բաց ընկենուն զինչսն, տացէ կարաւտելոյն
 ի գոյիցն իբրեւ զմատակարար այլոց, զի նա բարի կրեսցէ՝
 5 առնելովն եւ ինքն առ աստուած ժողովեսցի՝ ոչինչ ունելով՝
 բայց ի խաչէն եւ ի մարմնոյն: Աղքատ իցէ՝ ճոխասցի աստուա-
 ծութեամբն եւ ծիծաղելով զունողաւքն՝ իբրեւ զմիշտ ստացողք,
 եւ միշտ աղքատացելովք եւ կարաւտանալով աւելոյն եւ զըմ-
 պողաւքն՝ զի առաւել ծարաւեսցեն:
- 10 ԺԲ Քաղցնուցո՞ւ. ընդ թռչունս կերակրեսցի, որոց կեանքն
 A 160r անսերմ եւ|| անարար, եւ ընդ Եղիայի կեցցէ առ Սարեփթաց-
 տոյն: Սրուակ ձիթոյն ոչ պակասիցէ եւ սափոր ալելն ոչ նու-
 ազեսցէ*: Մին միշտ աղբիւր ասցի եւ միւսն մշակեսցէ առա-
 տարար, զի պատուեսցի այրին ատարասէր, եւ կերակրեսցէ
 15 զկերակրողն: Մարաւեսցի՞. աղբիւրք նմա եւ գետք ըմպելի,
 արբուցումն ոչ սխալակեցուցանելով եւ ոչ շափեալ՝ թէպէտեւ
 ամենայն պակասեսցի յաղագս երաշտութեանն ի հեղեղատէն
 թերեւ արբցէ ջուր: Յրտանայցէ՞. զայն եւ Պաւղոս, այլ ցո՞ր-
 քան: Է իմն վէմն զգետ հաւանեցուցանէ զքեզ եւ Յոբ ասելովն՝
 20 յաղագս ոչ ունելով ծածկոյթ՝ վիմաւք ծածկեսցին**: Դիտեա
 ինձ եւ զկատարելագոյնսն: Անիծանիցի՞. յաղթեսցէ ոչ անդրէն
 լուտանալովն: Հալածեսցի՞. ներեսցէ: Հայհոյեսցի՞. աղաչեսցէ:
 Բամբասեսցի՞. աղաւթեսցէ: Յաջումն ապտակեսցի տացէ եւ
 զմիւսն, եթէ զերրորդն ունէր եւ զայն եւս արդեաւք առաջի
 25 արկանէր, զի առաւել վարդապետիցէ երկայնամտել հարկա-
 նողին՝ գործովն խրատելով՝ զորս ոչ բանիւ կարողութիւն էր:
 Թշնամանեսցի՞. զայդ եւ Քրիստոս՝ պատուեսցի հաղորդութե-
 ամբ կրիւքն: Թէպէտեւ Սամարացի կոչեսցի եւ դիւահար բամ-
 բասեսցի***, ընդ աստուծոյ զամենայն ընդունի: Բազում եւս նու-
 30 ազիցէ, թէպէտեւ յոլովս կրիցէ, քացախ, լեղի, պսակ ի փշոց,
 A 160v գաւազան || եղեգնեայ, քղամիդ կարմիր, խաչ, բեւոք, աւա-
 զակք խաչակցեալք, մերձ անցեալք թշնամանողք: Վասն զի

* Հմմտ. III Թագ., Ժէ, 14:

** Հմմտ. Յովբ, XXIV, 8:

*** Հմմտ. Յովհ., Ը, 48:

2 յաղթեսցի] + առցէ B. 7 ստացողաւք B. 16 սխալակեցուցանող B. 17 երաշ-
 տութիւն D. 18 ջուր] B. 19 իմն] + ես B. 22 լուտալովն B. 31 քղամիթս CD. 32
 մերձ անցեալք] մերձանցեալք D

պարտ եւ արժան է առաւելագոյն ունել աստուծոյ՝ ի համբերեալն անպատուեալ:

ԺԳ Ոչինչ անըմբռնելագոյն քան զիմաստասիրութիւն եւ ոչ անուանելի: Ամենայն ինչ տեղի տայցէ, քանզի եթէ իմաստասիրութիւն, արդեաւք ցիռ է յանապատի*, ասէ Յոր, արձակեալ աղատ, ծաղր առնէ զբազմամբոխ քաղաքս զբամբասանս հարկահանի ոչ լսելով: Մի եղջերի է՝ կենդանի ինքնաւրէն, եթէ ախորժեսցէ քեզ ծառայել, եթէ կապեսցես զնա ի մտուր, եթէ ընդ լծով ածցես: Յորժամ յամենայնէ արգելցի ի վերայ երկրիս, պատրաստէ իւր թեւս իբրեւ զարծուոյ եւ դարձցի ի տուն վերակացուի իւրոյ՝ առ աստուած թռիցէ: Ասացից ինչ զգլուխ: Զերկուսս զայսոսիկ, երկուք անըմբռնելիք՝ աստուած եւ հրըշտակք, եւ երրորդ իմաստասէր, աննիւթ ի նիւթի, ի մարմնի անբաւանդակելի, ի վերայ երկրի երկնայինն, (ի) յախտս անախտն, ամենայնիւ յաղթահարեալ, բայց մտաւքն յաղթեալ լինելով զյաղթելն կարծողս: Եւ վասն զի զիմաստասէրս մեզ բանս դրեաց, ուստի ասացի՝ ի սկսանելն, բեր ի նոցունց զմերս տեսցուք (քանզի թուիմ եւ ես զհոգի աստուծոյ ունել**, եթէ յումեքէ յայնցանէ խոցոտելի ես եւ ըմբ/ունելի), զի եթէ պարտեալ գտանիցեն ատեցողքն եւ պատերազմողքն ներիցեն, քանզի ձեռնարկութեանս է, ապա եթէ վեհագոյնս քան զպատերազմողսն եւ բարձրագոյն կամ ի շարութենէն վճարեսցին եւ կամ նորագոյն ճանապարհ անիրաւութեանն իմացին, իբրեւ զմերձակայսն արհամարհելով եւ ոչ զաւրութեամբն. եւ անմտութեամբն բամբասիցեն իբրեւ ընդունայն անաւրինեալք եւ ոչ գիտողք զրկեալ, յոր փութանն:

ԺԴ Քանզի զի՞նչ տրտմեցուցեն յամենայն եկեալ տեսցուք, որովք զրկի ի մարդկանէ մարդ: Անուսո՞ւմն անուանեսցեն: Մի իմաստասիրութիւն գիտեմ՝ զերկնչելն յաստուծոյ (վասըն զի սկիզբն իմաստութեան երկեւղ տեառն եւ կատարած բանի զամենայն լուր յաստուծոյ երկիր): Զայս եւ Սողոմոն իմաստնագոյնն: Յուցցեն զահ եւ յաղթեսցեն մեզ այլով իմաստութեամբն, զմիովն զանց արարին եւ զմիւսն առնուլ աղաւթեն, եւ յուսումն վստահանալով ի հոգին: Աղքատութեամբ

* Հմմտ. Երեմ., ԽԸ, 6:

** Հմմտ. I Կոր., է, 40:

4 տեղի] B. քան B. 5 արձակեալ] + եւ B. 7 լսէ B. 10 թեւս] + թեթեւս D. 11 ինչ] ինձ B. 22 եւ կամ] կամ C. 23. անիրաւութիւն D. 24 անզօրութեամբ D. 29 իմաստութիւն B. 30 տեառնէ D. 32 մեզ] B. 34 յուսումն] յուսամ C

բամբասանսցեն իմով ճոխութեամբն: Երանի թէ մերկանայի եւ
 զգեստս զայսոսիկ, զի մերկ անցանէի ընդ փուշս կենցաղոյս,
 երանի թէ եւ զդուզնաքեայ զպարեգոտս զայս, որպէս զի արագ
 արագ առնուի զթեթեւագոյնն: Փախուցե՞ալ ի գաւառէ կոչիցեն՝
 5 իբրեւ զի փոքունս խորհին վասն մեր ստուգապէս թշնամա-
 A 161v նողք: Եւ աւտար||ացեալք է ինձ բոլորովին իսկ գաւառ աւերով
 բովանդակեալ, որոմ ամենայն գաւառ եւ ոչ մի: Բայց դու ոչ
 աւտար եւ պանդուխտ, ոչ գովեմ զքո պանդխտութիւնդ՝ եթէ
 այդպէս ունիս մի գուցէ ի ճշմարիտ գաւառէն արտաքս ան-
 10 կցիս, յոր ամբարել պիտոյ է զքաղաքականութիւն: Երու-
 թեամբս ո՞չ թշնամանսցես զմեզ եւ ո՞չ ախտաժեսու-
 թեամբ, ո՞չ բովանդակ այս նիւթոյս եւ բնութեան եւ զի տես-
 ցես ինչ յիմոց անճառելեացս է. զոր եւ խորհուրդք վատնեցին,
 զի փոքր ինչ պարծեցայց: Եւ ոչ դու քաջառողջ ինձ եւ մարմ-
 15 նարոյժ ախորժելի երեւիս: Երանի թէ եւ ալիք ծաղկեալ էին
 քեզ, եւ դեղնութիւն, զի հաւատարիմ լինէիր գոլ հանճարեղ եւ
 իմաստասէր:

ԺՅ Եւ զի՞նչ, եւս յաթոռո՞ց քակտեսցեն, յորո՞ց յորս ար-
 դեալք ախորժելովս է լի այժմ կամ յառաջնոյն, եւ երանե՞մ զե-
 20 լողսն: Դու ինձ զսոսա հեշտալիս առնես՝ այսպէս ի վեր ելեալ
 անարժանաբար եւ ո՞չ առաջին հանդիպեալք իմ բանքն ձեզ
 յայտնեցին, եթէ այն ի գովութիւն ինչ էր եւ այս ցանկութեան
 հարցաքննութիւն: Ամենայն արուեստաւորք այլոցն իրաւք զիւ-
 րեանցսն զոմանս կարծեն եւ զոմանս ասեն: Զի՞նչ խորտա-
 25 կումն եւ զի՞նչ նզովք, զորս ի բազմութեանն հակառակ մեզ
 ինքեան արարաք, եւ զի՞նչ արտասուք եւ ողորմելիք լինել ձեզ
 A 162r փոքր ինչ նուազ, եւ ատելի՞ք յաղագս վիճմանն: Ի նախա||թո-
 ռութենէ՞ս զրկիցեն՝ ընդ որ երբեմն եւ ոք ի զուարճացելոցն
 սքանչացաւ: Բայց այժմ եւ փախչել, որպէս ինձ թուի, առաջին
 30 իմաստութեանն է, յաղագս որոյ յամենայն դղրդին եւ սասա-
 նին մերքս, վասն որոյ տիեզերք աշխարհի շարակարծեալք եւ
 խոլ պատերազմաւ ոմամբ եւ ոչ անուանի: Յաղագս որոյ վը-
 տանգիմք մարդիկն գոլ յաստուծոյ լեալ եւ զմեծն եւ զնորն ի
 բաց ընկենուլ զանունն: Որպէս երանի եթէ եւ ոչ էր իսկ նա-
 35 խաթոռութիւնն եւ ոչ տեղոյն յառաջին պատիւ եւ բռնաւորա-

6 աւերով] † եւ ոչ մի դու B. 16 դեղնութիւն] դու նեղութիւն B. 19 յածաղա-
 գոյն BCD. 20 այսպիսի B, այսպէս ևս D. 21 բանքն] բարքս B. 30 իմաստութենէ
 B. 31 շար կարծեօք CD. 32 ոչ] AD. 33 Խարդկան B, մարտիկ D

կան նախամիայնութիւն, զի յառաքինութենէն միայնոյ ծա-
նուցեալք լինէաք: Իսկ այժմ աջս այս եւ ձախ, եւ մէջ, եւ բարձ-
րագոյն, եւ նուաստագոյն, եւ առաջի գնալն եւ ի միասին գը-
նալն. բազում արար զմեր խորտակումնն տարապարտ եւ զյո-
5 լովս ի խորխորատ ընկղմեաց եւ յուլուցն տեղին տարաւ, ոչ որ
ի խոնարհն են միայն, այլ ահա եւ ի հովուացն որք, վարդա-
պետքն Իսրայէլի լինելով, զայսոսիկ անգիտացան*:

ԺՁ Ի սեղանո՞յս արգելուցուն, այլ գիտեմ այլ սեղան, ո-
րոյ արինակք այժմու երեւեալքս, յորոյ վերայ մուրճ ոչ ել եւ
10 ոչ ձեռն եւ ոչ հնչեաց երկաթ կամ ինչ յարուեստականացն**
եւ ի զանազանից, այլ բովանդակ մտաց գործ եւ տեսութեամբ
ի վերելք: Նմա մերձ կացից, նմա ընծայեցից ընդունելիսն, զե-
A 162v նումն եւ պատարագ, եւ ողջակէզս լաւագոյնս, || քան զայժմու
մատուցեալսն, որքան վեհագոյն է, քան զստուերսն ճշմարտու-
15 թիւնն: Յաղագս որոյ ինձ թուի եւ Դաւիթ մեծն իմաստասիրէր
ասելով՝ մտից առաջի սեղանոյ աստուծոյ առ աստուած ուրա-
խացուցիչն հոգեւոր իմոյ մանկութեանս***: Յայսմ սեղանոյ ոչ
ի բաց տարցի զիս ամենայն, որ կամիցի: Ի քաղաքէ՞ս հալա-
ծիցեն, այլ ոչ եւ ի վեր կացելոցն: Ի սմանէ կարիցեն ատե-
20 ցողքն զմեզ եւ ստուգապէս, որք պատերազմեցանն, մինչեւ ոչ
կարասցեն շիթս արկցեն աւդովք, հարցեն կամ խաղայցեն ե-
րազս, այնպէս տեսանեմ զնոցա պատերազմ: Զի՞նչսն յափրշ-
տակիցեն, զո՞րս, զի եթէ զիմսն եւ զթեւսն ի բաց հատցեն՝
զորս ոչ ընկալայ, ապա եթէ զեկեղեցւոյս, այս է յաղագս որոյ
25 ամենայն պատերազմ, վասն որոյ նախանձի ընդ գանձարա-
նին գողն**** եւ աստուած մատնէ երեսուն արծաթոյ դժնդակա-
գոյն: Քանզի այնքանոյ ոչ մատնեալն, այլ մատնիչն էր արծա-
նաւոր*****:

Ժէ Ի տա՞նցն փակիցեն, զփա՞փկութիւնն հատանիցեն, զը-
30 բարեկա՞մսն աւտարացուցանիցեն, ամենեւին քաջ, որպէս տե-

* Հմմտ. Յովհ., Գ, 10:

** Հմմտ. III Թագ., 2, 7:

*** Հմմտ. Սաղմ., ԽԲ, 4:

**** Հմմտ. Յովհ., ԺԲ, 6:

***** Հմմտ. Մատթ., ԻԶ, 15:

5 ընկղմեաց] մղեց B. տեղի B. 8 սեղանոցս B. 11 բովանդակէ B. 12 վերելք] վեր
ելեալք D. 14 է] A. 16 մտից առաջի] մտի առի B. 21 կարիցեն B. խաղաղեցեն B

սանեսդ, եւ յոլովից ծանրացաք, թէպէտեւ ի կոչեցելոցն ոչ
 դժգոհանամ, թէ եւ ծանրացաք խնայելով առաւել, քան եթէ եր-
 թալով: Եւ պատճառն տուն ոմն հանգոյց զմեզ բարեպարիշտ
 A 163r եւ աստուածասէր, եւ որպէս զԾղիսէոս || Սոմնացին*, քանզի
 5 ազգակից էր հոգիովն ամենայն պատուասիրութեամբ, առ որս
 եւ ժողովուրդս այս հաստատեցաւ՝ գողանալով տակաւին, զորոյ
 զհետ երթայր զբարեպաշտութիւնն՝ ոչ առանց երկելի եւ
 ոչ առանց վտանգի: Անդրէն շափեսցէ նմա տէր յաւուր հա-
 տուցմանն: Զփափկութեան եթէ զկնի երթայցեմք՝ բերկրես-
 10 ցին ի մեզ ատեցողքն զմեզ, զի ոչ այլ ինչ մեծագոյն զիս ինքն
 նզովեմ: Ի բարեկամացն ոմանք շարշարանս կրելով՝ քաջ գի-
 տեմ՝ փախիցեն ի մէնջ (քանզի առնէ զրկանացն եւ ցաւոցն հա-
 դորդութիւն) եւ յոմանց արդէն իսկ մերկացաք, եւ անտեսք ե-
 ղաք՝ բերելով զարհամարհանսն: Քանզի ի բարեկամացն իմոց
 15 եւ ի մերձաւորաց կէսք երեւելապէս յանդիման մերձեցան եւ
 կացին եւ կէսքն մարդասիրագոյնս ի հեռաստանէ կացին**
 փոքր ինչ նուազ եւ ուրացան զիս եւ թերեւս ոչ լայ դառնապէս,
 զի բժշկեսցէ զմեզսն***:

ԺԸ Միայն համարձակագոյն ես եւ յանդանութեամբ լի՝
 20 որպէս երեւի. յատուկ բարեյոյս յահաւորսն միայն ժուժկալ եւ
 բազմութեանն առաջի եղեալ եւ ըստ իւրաքանչիւր ումեք ար-
 համարհեալ եւ Արեւելից եւ Արեւմտից պատերազմեալ ծանաւ-
 թագոյն: Ապարասանութիւնն: «Եթէ պատրաստեսցի ի վերայ
 իմ ճակատամարտ, ոչ երկիցէ սիրտ իմ, եթէ յարիցէ ի վերայ
 A 163v իմ պատերազմ՝ յա||յսմ ես յուսամ»****: Այսքան հեռի եմ
 ահաւոր վարկանել ինչ ի մերձակայիցս, մինչ զի զհակառակ
 իմն թողլով՝ ողբամ զտրտմեցուցիչսն: Անդամքն Քրիստոսի եր-
 բեմն անդամք պատուականք ինձ եւ ապականեալք անդամք
 հաւտիս այսորիկ, զոր մատնիցէք փոքր ինչ նուազ եւ նախ քան
 30 զհաւաքեալն: Զիա՞րդ աւձտեցայք եւ պառակտեցայք՝ իբրեւ
 որթք ի կապոյ արձակեալք: Զիա՞րդ սեղանոյ սեղան հակառակ

* Հմմտ. IV Թագ., 7, 8:

** Հմմտ. Սաղմ., 1է, 12:

*** Հմմտ. Սաղմ., 1է, 13:

**** Սաղմ., ԻԶ, 3:

2 դժգոհանաս B. 4 սոմանիտացոյն B. 7 զբարեպաշտութեանն ACD. 20 բարեյոյս] բարեբոյս B. 25 այսքան] այնքան B

- կանգնիցէք: Որպէ՞ս եղէք յամայութիւն յանկարծակի*։ Զիա՞րդ
 եւ դուք մեռայք հատմամբ եւ մեզ ցաւել արարէք: Որպէս պար-
 դամտութեամբ հովուաց ի հաւտին քակտումն վարեցայք: Քան-
 դի ոչ զնոսա բամբասեմ անհաւատ հմտութեամբն, այլ զձեզ
 5 ըստգտանեմ շարութեամբդ: «Ապականութեան քում, Իսրայել,
 ո՞ւ աւգնիցէ»**։ Զի՞նչ դեզ գտցի ողջացուցանող: Զո՞ր պատան:
 Զիա՞րդ ժողովեցից զպառակտեալդ: Որպիսեալք արտասուովք:
 Որպիսեալք աղաւթիւք բժշկեցից զխորտակումնդ՝ բայց եթէ՝
 այսո՞ւ աւրինակաւ:
- 10 ԺԹ Երրորդութիւն սուրբ եւ երկրպագեալ կատարեալ, եւ գե-
 ղեցկապէս ի մէնջ ժողովեալ եւ պաշտեցեալ քո գործ, քո ուղ-
 ղութիւն: Դու զսոսա դարձեալ այսրէն դարձուցես մեզ, այս-
 քան որոշեալս, որքան խրատ ընդունել բաժանմամբ առ ի
 A 164r համակամ/ութիւնն: Եւ մեզ ընդ աստ ի վշտացս հատուցես
 15 զերկնայինսդ եւ զանամբոխականսդ: Որոց է առաջին եւ մեծ,
 պայծառանալ ընդ քեզ կատարելագոյն եւ մաքրագոյն: Զի՞արդ
 նոյն ինքն եւ միայնակ համարի, եւ երրորդութիւն գտանի. զի-
 ա՞րդ ոչ ծնեալն, եւ ծնեալն, եւ յառաջ եկեալն՝ մի բնութիւն,
 երեք անձնաւորութիւնք, եւ «մի աստուած, որ ի վերայ ամենե-
 20 ցուն, եւ ընդ ամենեսին, եւ յամենեսին»***, ոչ յաւելեալ, եւ ոչ
 նուազեալ, եւ ոչ հատեալ: Է ինչ արդ հասու լեալ եւ է ինչ խնդրել
 երբէք, որքան եթէ, արդեալք հասանիցի, որք աստ գեղեց-
 կապէս խնդրիցեն ի ձեռն վարուցս եւ տեսութեան, որում ամե-
 նայն փառք եւ պատիւ եւ զաւրութիւն յաւիտեանս յաւիտենից:
 25 Ամէն:

* Հմմտ. Սաղմ., 2Բ, 19:

** Ամովս, ԺԳ, 9:

*** Եփես., Դ, 6:

4 անհաւատ] C. անհմտութեամբ C. 6 գտից B. 7 զպառակտեալդ] զպատկառե-
 ալդ B. 17 համարի] իմանի ABC. 19 եւ] B. 21 է ինչ] ինձ B. 24 յաւիտենից] B.
 5 Ամէն] B

Ա ծս սքանչանամ՝ զի՞նչ արդեալք իցէ, զոր առ իմ բանս ախտացայք եւ ուստի՞ այնքան յաղթեցայք ի մերմէ ձայնէս, յարտաքրս սահմանելոյս, եւ ի փոքուէս թերեւ եւ ոչ փափաքելի ինչ յունողէ, մինչ զի այնպիսի իմն ինձ թուիք առ մեզ կրել, զոր առ մագնիտացի քարն, երկաթն: Վասն զի յինքէն էք կախեալք եւ զիրերաց եւ մի ըստ միողէ յարմարեալք, եւ զաստուծոյ ամենեքեան, ուստի ամենայն եւ յոր ամենայն*։ Ո՞վ զարմանալոյ

A 164v շղթայիս, զոր յարմարէ || հոգին սուրբ անլոյծ կապանաւք ի միասին պնդելով: Եւ զպատճառն ոչ ինչ գիտեմ ես, քան զայլսրն իմաստնագոյն, որքան ինչ զիս ինքն ճանաչեմ. բայց եթէ սոյն ինքն այս ինչ զիմ իմաստութիւնն կարծիցէ գիտեալս ոչ իմաստուն եմ եւ ոչ ի ճշմարիտ, եւ յառաջին իմաստութիւնն մերձ, զոր բազումք յաղագս ինքեանց կարաւտանան կարծել այժմու իմաստունքս: Վասն զի դիւրին է զինքն խաբել եւ վարկանել թէ իցէ ինչ ոչ լեալ**, սնոտի կարծեալք փքացեալ: Ո՞չ առաջին ձեզ զուղղափառութեանն բան քարոզեցի, զոր մանաւանդ պինդ ունիք, զհետ այլոց շոգայ եւ դոցին ձերոցդ, քան զի ասացի ճշմարիտն՝ զի եթէ դուք Աղէքսանդրի աշակերտք առաքինւոյ, մեծի երրորդութեանն նահատակի, բանիւ եւ գործով զամբարշտութիւնն արտաքս սահմանողի: Վասն զի յիշէք ինչ զառաքելական աղաւթսն զայնոսիկ, որովք զառաջնորդ ամբարշտութեանն կործանեաց յարժանաւոր տեղիսն լեզուոյն միանգամայն ծորմամբ, զի թշնամանք ի թշնամանացն վրէժ առնուցուն եւ խայտառակեացի իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոգւոց:

Բ Արդ՝ ոչ ատար ձեզ աղբիւր պատառեցաք, զոր որպէս
A 165r Մովսէս եցոյց յանապատին յանջրդւոջ յԵգիպտոսէ հալածե-

* Հմմտ. I Կորնթ., Է, 6:

** Հմմտ. Գաղատ., Զ, 3:

3 այնքան] այսքան B. 6 յինքէն] զինէն ACD. եւ] B. 11 ճանաչել D. 12 կարծեալ D. 17 զուղղափառութիւն D. 22 ինչ] իսկ B. 28 Մուսէս B

լոցն*, այլ զծածկեալն եւ զթաղեալն վերստին բացաք՝ ըստ
 ծառայիցն Իսահակայ մեծին, որք ոչ փորեցին միայն ջրհոր
 կենդանուոյ ջրոյ, այլ եւ զծածկեալսն ի փղշտացւոցն վերստին
 մաքրեցին**։ Բայց եւ ոչ ի պաճուճելոյն ոք եւ ի հեշտալեացն
 5 եւ որք ողորանաւր գողանան զբարեմտութիւնն, որպիսիս տե-
 սանեմ զյուրովս ի քահանայանալն խոստացելոց, որք զպարզ
 եւ զանարուեստ զմեր զբարեպաշտութիւնս արուեստական ա-
 րարին, եւ առաքինութեան նոր իմն տեսակ ի գոեհից ի սրբու-
 թիւնս փոփոխեալ ի տեսարանացն, ի բազմաց անտեսանելի
 10 խորհրդածութիւն։ Մինչ զի լինել երկուս տաղաւարս խաղոյ,
 եթէ պարտ իցէ համարձակելով զայս ասել, այնքան յիլերաց
 զանազանեալս, որքան ի մին ամենեցուն մտանել եւ ի մեւսն ո-
 մանց, եւ զմեւսն ծաղր առնել, եւ զմեւսն պատուել՝ զմին տե-
 սարանին, իսկ զմեւսն հոգեւոր վարկանել։ «Դուք վկայէք եւ
 15 աստուած»***, ասէ աստուածային առաքեալն որպէս ոչ այնր
 մասին մեր, այլ որպիսիք զյիմարութեան եւ զվայրենութեան եւ
 զծառայութեան եւ զանազատութեան արագագոյն զստգտանս
 ընդունել, որք եւ առ ի յոյժ սիրելութիւնս մեր են, ուրանաւր եւ
 յորժամ երեւիմք խոշորացեալք, եթէ ինչ ոչ ըստ բանին առնել
 A 165v մեզ կարծիցեն։ Եւ զայս եցոյց յառաջագոյն || լեալն յաղագս
 մեր նորաձեւութիւնն, յորժամ նախանձու եւ սրտմտութեամբ ե-
 ոացեալ դուք ժողովուրդդ՝ գոչելով եւ ողբալով ի վերայ աթո-
 ոոյս այսորիկ եղիք, զոր ոչ գիտեմ եթէ բռնադատականն պարտ
 իցէ ասել եւ եթէ քահանայապետականն, եւ եղիք յաղագս սի-
 25 րոյն անաւրինելով։ Ուր այնքան զոմանս ի ջերմագունիցն
 դժուարացուցաք, մինչ զի ի բաց վազեցին ի մէնջ, զսիրելու-
 թիւնն ի թշնամութիւն դարձուցանելով։ Վասն զի ոչ որովք շնոր-
 հիմքն գիտեմք առաւել, քան եթէ որովք աւգտեմք։

Գ Արդ՝ զի՞նչ է պատճառք այնքան առ մեզ սիրոյս եւ առ
 30 բանս մեր։ Դուք ախորժէ՞ք յայտնել զայս եւ յանդիման կացու-
 ցանել, եւ զձեր սէրդ դուք ճանաչէք, ի ձեռն մեր զդոյն հրա-
 պարակատես արարէք, թէ որպէս եւ յայլսն մեաւք վարէիք յաւ-

* Հմմտ. Ելք, Ժէ, 6։

** Հմմտ. Մնունդք, ԻԶ, 18։

*** Թեաաղ., Բ, 10։

3 փախշտացոցն B. 4 պաճուճելոցն BC. 6 [խոստացելոց] խստացելոց B. 9 փո-
 խեալ B. 12 մեւսն] զմին B. 14 վկայք B. 17 զանազատութեան] զանազանութեան
 ACD. 18 սիրելագոյնսն B. 28 աւքտիմք B. 29 այսքան B. 32 վարիք B

- ժարամտութեամբ առաջնորդովք, զմերն քաջ գիտեմ, զի առնէք
 զբանն՝ որքան ի հանդարտութեանդ: Ապա ուրեմն լուարուք եւ գի-
 տիցէք, եթէ ոչ վատթար եմ ես այդպիսեացդ դատաւոր: Ինձ
 թուիք մանաւանդ՝ որպէս դուք կոչելով զմեզ՝ ձերոց իրաւանցդ
 5 աւգնել եւ դորին աղագաւ՝ յարմարիք ի ձերդ յորս: Եւ բնութիւն
 այս է առ ի յընտանեգոյնս ամենայն ընտանութեամբ ունել,
 եթէ ստացուած եւ եթէ ծնունդ, եւ եթէ բան, եւ կամաւոր բա-
 A 166r ռեմտութեամբ ձեռնարկել յիրեանց|| արժանաւորութիւնս: Երկ-
 րորդ՝ ոչ յումեքէ այնպէս պատկառեցէք, որպէս ոչ ի խստութե-
 10 նէ մերմէ եւ ոչ ի բռնութենէ, եւ ոչ ի տեսական, եւ կամ ի
 տանականս լինելոյ, այլ ի տեղի տալոյ եւ ի շափաւորելոյն, եւ
 որպէս յանհաւասար հաղորդութենէ եւ մի աւրինակ: Եւ համա-
 ռաւտագոյնս եւս ասել, իմաստասիրէ եւ ոչ զդոյն արուեստա-
 տրաբար, եւ քաղաքականապէս ի մէզ գտեալ, այլ պարզա-
 15 մըտութեամբ են հոգեւորապէս պատուեալ: Եւ ոչ զի հայցիցիմք,
 թաքչիմք եւ ոչ զի առաւելագունի արժանաւորք վարկանիցիմք
 պատուոյ՝ որպէս որք զգեղեցկութիւնն փոքր ինչ յառաջ երեւե-
 ցուցանիցեն եւ անդրէն զսպեն, զի փախչելովն ի նախաթոռու-
 թենէն եւ յառաջին աւրինաց եւ ոչ ինչ փոյթ առնել այնպիսեաց
 20 պատուոց՝ հանդարտութեամբն թուիցեմք: Երրորդ՝ տեսանելով
 զմեզ որպիսիս կրեմք յարտաքնոց պատերազմողաց եւ ի ներք-
 նոց դաւաճանողաց, վասն զի՝ ըստ Դանիէլի՝ եւ անաւրէնութիւն
 ի Բաբելոնէ ի ծերոցն, որք թուէին դատել զԻսրայէլ: Աւաղելով
 եւ դժուարելով ոչ ունէինք որպէս աւգնիցէք հարստահարեցե-
 25 լումն, միայն փոխանակ ամենեցուն ի ներքս բերէք, զարդա-
 հատեալն եւ արգահատանքն պատկառանաւք խառնեալ սիրե-
 լութին եղել: Եւ այս իմոյ պատուոյս էր խորհուրդ:

- Դ Բայց վասն զի բանք պատերազմականք եւ աւելորդ եւ
 A 166v խանդալի || այս լեզու, զորս արտաքնովքն հրահանգեալ բա-
 30 նիւք, աստուածայնովք քաջատոհմ արարաք եւ զդառն եւ զանըմ-
 պելի* զմեռայն կենաց փայտիւն, եւ քաղցրացուցաք, կրեցէք
 կիրս իմն բաւականապէս ազատ: Այդոքիւք սիրէք, յորում պա-
 տերազմիքս: Զի՞ ո՛չ զխուլն ողջ ունեցաք զուսումն, եւ ո՛չ
 զգաւսացեալն եւ ի ստորինս իջողն, զի՞ ընդ այս զուարճացե-

* Հմմտ. Եւր, ԺԵ, 23:

7 եւ] AD. բան եւ] + եթէ B. 10 տեսական B. 11 այլ ի] այլ B. 13 ասել] + ի
 CD. 18 եւ] + ապա B. 27 այս] + այն B. 28 պատերազմեալք B. 33 եւ] զի B

ալս զյոլովս տեսանելով, իմաստասիրել աւտարս եւ այլատոհմիկս, եւ առ հակառակադիր լեզուսն վիճիմք: Պարտ է յանդրգնութեամբ փախչել ի խորհրդոցն եւ հաւատ անուանել զահաբանութիւնն, զոր սիրեմ եւ ես ինքն քաջ գիտացէք զձկնորսսն: 5 եւ զի այս առ ձեռն պատրաստ յոլովից առ ի պատասխանիս անուամնարանութեանն՝ եթէ բան ունէի զնշանացն զաւրութիւն: Որովք կորնչէին ի մարդկանէ մախանքն, ծախողք ունդացն, ախտացելոցն ժանդք, որ միայն յախտիցն է անիրաւագոյն միանգամայն եւ իրաւացի. մին՝ ամենեքումբք վտանգի 10 շարեաւքն եւ մեան՝ զի հաշէ զունողսն: Քանզի եւ ոչ որք յառաջնումն գովեցինն զմեզ նզովեմ, զի եւ ոչ գիտէին իսկ զգովութեանցն կատարած, որպէս թուի ինձ, եւ թշնամանս յաւելուին, զի զմախանսն արգելուցուն:

Ե նա եւ զարուսեակն խաւարեցոյց, զանկեալն ի վայր ամ-
 A 167r բարտաւանութեամբն, վասն զի եւ ոչ || եբիր, թէպէտեւ աստուածային էր, ոչ եւս աստուած վարկանել, եւ զԱդամ արտաքս եհան ի դրախտէն՝ հեշտութեամբն գողանալովն եւ կնան: Զի հաւանեցաւ, իբրեւ աստուած գոլ յաշաղեցաւ՝ ի գիտութեան փայտէն առ ժամանակ մի արգելեալ: Նա եւ զԿային եղբայ-
 20 րասպան արար՝ զոչ ընձայողն զզոհ սրբագոյն: Նա եւ զաշխարհ ջրով ծածկեաց՝ անդարդացուցանելով եւ զՍողոմայեցիսն հրով այրեաց: Նա զԴաւիթ եւ զԱբիրոն յերկիր թաղեաց, հակառակ Մովսէսի զմոլեալսն, եւ զՄարիամ բորոտեցոյց զեղբարէն միայն տրտնջելով: Նա եւ մարգարէիցն արեամբ զեր-
 25 կիր պղծեաց եւ զՍողոմոն կանամբք դրդուեցոյց զիմաստագոյնն: Նա եւ զՅուդաս մատնիչ եցոյց, սակաւ արծաթովն գողացիալ, զխեղդանին արժանաւորն եւ զՀերոդէս մանկասպան, եւ քրիստոսասպան զՊիղատոս գործեաց: Նա զԻսրայէլ հոսեաց եւ ցրուեաց, յորմէ եւ ոչ այժմ հրաժարեն ի մեղաց: Նա եւ
 30 զապստամբն ի վերայ մեր յարոյց զբռնաւորն, որոյ եւ ցայժմ եւս տրտմեցուցանեն կայծակունքն, թէպէտեւ ի բոցոյն փախեայք: Նա եւ զբարիոք մարմին եկեղեցւոյ աւձտեաց՝ ի զանազանս եւ ընդդիմամարտս փոյթս բաժանելով: Նա մեզ եւ զՅերոբովամ ի վերայ յարոյց զժառայն մեղաց եւ լեզուոյն կա-

A 167v պանս եդ, վասն զի ոչ բերէ զերրորդութիւնն || պայծառացեալ,

1 իմաստասիրեմք B. 6 անուամնարանութեանն | անբանութեան BC. 7 կորնչին D. ծախք B. 8 յախտիցն | յախուռն B. 9 մի B. 15 եւ | A. 21 զարդացուցանելով B. 22 յերկիր | B. 23 զհակառակ D

- եւ բոլոր աստուածութեանն փայլեալ, եւ պատուականս արա-
 րեալ զմեզ հարազատաբար զիւր քարաւզս: Շաղակրատեա՞լ
 արդեաւք ձեզ թուիցեմք, այսպէս ձեզ նմանեցուցանելովս, եթէ՞
 յոյժ ուղղապէս զսիրոյդ զպատճառս գրիչ բանս նկարագրեաց:
 5 Արդ՝ յաղագս այսոցիկ այսպէս ճանաչեմ:
- 2 Բայց զի եւ թշնամանաւքն տեսանեմք զոմանս դժուա-
 րեալս, եւ թշուառութիւն ինքեանց արարեալ զանարգութիւնն
 մեր, բեր եւ յաղագս այդաւրիկ դուզնաքեայ իմաստասիրես-
 ցուք: Ես եթէ մարդկային ինչ եւ փոքր իմանայի կամ աթո-
 10 ոոյս բաղձայի, կամ ի սկզբանն ի վերայ կացի ձեզ՝ հանդերձ
 վարուքս այսոքիւք եւ հաշեցելովք հիւանդութեամբ եւ ժամա-
 նակաւ անդամովքս, վասն որոյ այժմ բերեմ զպատճառսս: Ա-
 մաչէի արդեաւք զերկինս եւ զերկիր, զորս եւ առաջնոցն սովո-
 րութիւն էր վկայ ունել, ամաչէի արդեաւք աթոռովս այսու, եւ
 15 աստուածային աթոռակցութեամբ եւ սրբով այսու եւ նորոգ
 հաստատելով ժողովրդեամբ: Յոր այսքան է շարեաց զաւրութե-
 անցն մարտ, զի նախ քան հաստատուն կալ լուծցի եւ յառաջ,
 քան զլինելն մեռցի ըստ Քրիստոսի արդէն իսկ պատկերեալ:
 Ամաչէի արդեաւք յիմոց աշխատութեանցս եւ ի վաստակոցս, եւ
 20 յայժեայ զգեստուէս յայսմանէ, եւ յամայութենէն, եւ ի հե-
 A 168r ոաւոր/ութենէն՝ ընդ որում կենակից եղէ յանպաճոյճ վարուց,
 եւ յանարգ սեղանոյն, սակաւ ինչ ի թռչնոցն նուագեալ: Ճշմար-
 տեսցեն եւ շունքն յաղագս մեր, եթէ կնոջ այլոյ ցանկացաք,
 որք եւ ոչ զմեր ունել ախորժեցաք: Կալցին եւ քան զմեզ Գաբաւո-
 25 նացիքն առաւելագոյն, զորս եւ ոչ ի փայտակիրս եւ ի ջրբերս
 գիտեմք, զի հոգին սուրբ ընդունիցի՝ որքան յառաջանան ի
 քահանայութիւնսն՝ հանդերձ այնպիսի վարուքն եւ խայտա-
 բղէտ բանիւք: Ապա եթէ ջատագովել եկաք բանի եւ այրոյ եւ
 առանց առն առ ժամանակ մի եկեղեցւոյ զաւրութիւն ի ներքս
 30 բերել՝ իբրեւ հազարապետք ոմանք եւ հոգաբարձուք, այլով
 փեսայածութեամբք, որ եթէ արժանաւոր գեղեցկութեանն երե-
 ւեսցի եւ առաւելագոյն առաքինութեանն աւժիտս ընծայեսցէ թա-
 գուհոյն, գովելի՞ք արդեաւք յաւժարամտութեամբս իցեմք, եթէ
 պարսաւելիք կարծեաւքն, զի այլոցն դատիմք ախտիւք: Որպէս
 35 դու, ով քաջդ, եւ նաւ ի ալէկոծեցելոյ եթէ ձեռն կարկառիցեմք

3 ձեզ թուիցեմք այսպէս] D. 11 վարիւքս B. 16 այնքան B. 19 եւ] + ի BC.
 20 եւ] + ի B. 24 ախորժեցուք C. 28 եթէ] + բանիւ B. ջատագով B. 35 ով]
 ACD

կամ պաշարեցելում քաղաքի, կամ հրոյ ծախեցելոյ տան մա-
կուկար, աւգնելով կամ գնդաւ, կամ շիշուցանելով, գործովք,
ամենայն իրար ընկղմիչս անուանես զմեզ, կամ քաղաքին,
կամ տան ցանկացողս, այլ ոչ վերակացուս եւ խնամակալուս:

- A 168v է Այլ ոչ այդպէս, ասէ, թուիս բազմաց: Եւ զի՞նչ ինձ
զանազանի, որո՞ւմ լեալ առաւելագոյն է բան, մանաւանդ ամե-
նեցուն: Վասն զի՞ այն կամ դատապարտէ, կամ արդարացու-
ցանէ, կամ հէքս առնէ եւ կամ երանելի: Բայց թուելն եւ ոչ
ինչ առ մեզ, որպէս եւ ոչ անուրջ աւտար: Ո՞չ այդպէս թուիս,
10 ասէ, յուրովից, մարդկային: Երկիր թուի թմբեցելոցն կա՞լ, ար-
բնեցելոցն լուրջքն լուրջք, այլ ո՞չ ի վերայ գլխոյն գնալ կամ
զայթակղիլ: Մեղր ո՞չ դառն է՝ յորժամ եւ որոց կարծիցին, ախ-
տաժեստացն եւ շարաշար անկելոցն: Բայց ոչ յաղագս այնորիկ
իրքն նոյնպէս ունին՝ որպէս թուին ախտացելոցն: Արդ՝ ցոյց
15 առողջս, որք այնպէսն կարծեն եւ յայնժամ զմեզ խրատեա՛
փոխադրել եւ կամ բամբասեա՛ զոչ հաւանեալսն, այլ ի նմին
կացեալ մնացեալ յիրաւունսն: Ո՞չ այդպէս թուիցիմ բազմաց,
աստուծոյ այդպէս եւ ո՞չ թուիմ յայտնի եմ, որ գիտեն զամե-
նայն նախ քան զլինելն ինքեանց, ստեղծչին միայնոյ զսիրտս
20 մեր եւ իմանողին զամենայն զգործս մեր*, զշարժմունսս եւ զի-
մաստսն մեր՝ հանդերձ որովք գործեցեալքն, որում զանխլանայ
էիցս եւ ոչ ինչ եւ ոչ զանխլանալն կարէ, որ այլ ազգ տեսանէ
զմերսս քան եթէ որպէս տեսանեն մարդիկ: Քանզի մարդ
զդէմսն, իսկ աստուած զսիրտն**։ Եւ լուար ի գրոց, որք ասեն,
25 եւ հաւատայ, որում հոգ տանելի է մանաւանդ, քան ամենեցուն
A 169r միանգամ||այն, այլոցն, որք զմիտսն ունին: Կամ եթէ երկուք
մարդովք խորհրդակցաւք վարէիր հանճարեղաւ եւ անուամամբ,
եւ ո՞չ արդեաւք բարւոք զմտաւ ածել թուէիր, եթէ զհանճարեղն
թողլով զանուամանն զհետ երթայիր: Քանզի եւ ոչ Ռորովամ
30 գովեցաւ, զի զխորհուրդ ծերոցն անպատուելով, զմանկագու-
նիցն կացոյց: Աստուծոյ եւ մարդկան քննողաց, եթէ նախա-
պատիւ առնիցես զմարդկանն, եւ ո՞չ դու արդեաւք զիս հաւա-
նեցուցես եւ խորհիս լաւագոյնս***։

* Հմմտ. Սաղմ., լԲ, 15։

** Հմմտ. I Թագ., ԺԶ, 7։

*** Հմմտ. III Թագ., ԺԲ, 8։

2 շիշուցանողաւք B. 5 թուիլ D. 10 թմբեցելոցն C. 11 լուրջք D. 13 շար
B. 16 նմին] մին D. 17 իրաւունս D. 25 հաւատոց D. 28 եւ] B. բարւոք] B. 29 եւ]
B. ոչ] + առ B

- Ը Այլ ամաշեմք ընդ քո, ասեն, թշնամանս: Ես ընդ ձեր, զի
 ոչ՞ ամաշեմ: Ոչ զի եթէ ուղղապէս զայդաւսիկ կրեմք, ամաշելի է
 առաւել մեզ, քան եթէ ձեզ եւ ոչ անպատուիմք մանաւանդ, քան
 եթէ եմք անարգութեանն արժանաւորք: Ապա եթէ՝ անիրաւաբար
 5 թշնամանողացն են բամբասանքն եւ նոցա առաւել քան, եթէ մեզ
 է զայրանալի, վասն զի նոքա են շարաշար ախտացեալք: Եւ եթէ
 զիս շար լեալ՝ բարի լեալ վարկանիս, զի՞նչ ինձ առնել պարտ
 է: Առաւել եւս՝ լինել շար, զի՞ յոլովագոյնս լինել հաճոյ քեզ
 լինիցիմ: Եւ ո՞չ երբէք զայս ինձ ինքեան խորհրդակից լինիմ:
 10 Նոյնպէս եթէ զուղղելն իմ սխալեալ կարծիցես՝ յուղղելոյն վասն
 քո փոխադրիցիմ, վասն զի կեամ ոչ քեզ մանաւանդ, քան ինձ
 ինքեան եւ խորհրդակից ունիմ յաղագս ամենեցուն զբանն, եւ
 զաստուծոյ իրաւունսն, յորոց ըմբռնիմ բազում անգամ՝ ոչ յու-
 մեքէ ամբաստանելով եւ թողեալ լինիմ, ի բազմաց դատա-
 A 169v պ||արտեալն: Եւ յայնմանէ միայն ոչ գոյ փախշել ի ներքս եւ ի
 մեզ ինքեանս յատենէն, առ որ հայել միայն զուղիղ ճանա-
 պարհն գնալի է: Բայց թուեալն՝ եթէ լինիցի՝ ընկալցուք, զի
 ասացից ինչ մարդկային, ապա եթէ ընդդէմ անկցի զուարճա-
 նալով թողցուք եւ ոչ ինչ որպէս եմքն յաղագս թուելոյն ի բաց
 20 բարձցուք:
 Թ Վասն զի այսպէս ունին, վասն զի իրիք աղագաւ զբա-
 րին գործէ, ոչ է հաստատուն յառաքինութեանն: Վասն զի մի-
 անգամայն անցանելով այն եւ բարին դադարէ, զոր աւրինակ,
 որ ի շահին սակս նաւէ, եթէ շահն ոչ իցէ մերձ, ոչ նաւէ: Իսկ որ
 25 յաղագս ինքեան պատուէ եւ յարմարէ, վասն զի կայականին
 ցանկայ, կայուն ունի եւ առ նա. զյաւժարամտութիւնն, մինչ զի
 աստուածային իմն կրելով եւ զաստուծոյն կարէ ասել՝ ես նոյն
 եմ եւ ոչ փոփոխիմ*: Ապա ուրեմն՝ ոչ փոփոխիցի եւ ոչ փոխա-
 դրիցի, եւ ոչ անկցի ժամանակաւք եւ իրաւք, այլ երբեմն՝ այլ
 30 լինելով, եւ յոլովս փոփոխմամբ առնելով գոյնս՝ որպէս վի-
 մացն բազմոտանիքն՝ յորս եթէ հպին կայ մնայ ինքն կառու-
 ցեալ՝ յոչ կառուցեալսն եւ յեղափոխեալսն անսասանելի. վէմ
 ոմն՝ առ արկածս, հողմոց եւ ալեաց, ոչ թաւթափեալ ծախէ առ

* Հմմտ. Մաղաք., Գ, 6:

1 ամաշէք B. 3 եթէ] + ի AB. ձեզ] մեզ B. 7 բարի լեալ] բարի B. 16 առ] այլ D. 18 ինչ] + եւ B. 21 զի] + որ ACD. 23 գոր] զայս B. 25 կայականին] կայանականին B. 26 մինչ] վասն B. 27 իմն] A. զաստուծոյն] զայն B. 31 յինքն D

ինքեան, զի վերայ անկեալսն: Արդ՝ այսոքիկ յայսքան, զի եւ ոչ ինձ պարապումն է ընդ լեզուան կռուել եւ այսոքիկ թերեւս
A 170r աւելի քան զպատշաճն ||:

Ժ Այսուհետեւ ինձ առ ձեզ է բանս, հաւտդ դուք: Եղերուք
5 ինձ, ասէ Պողոս, փառք եւ ուրախութիւն, եւ պարծանաց պսակ ինձ*, տուք պատասխանի, որ զիսն քննեն: Զի, զոր արինակ, ի հիւանականէն կամ ի գրողէն պահանջելով որ բան, բաւական է առ ի ցուցանել հիւանեալն կամ գրեալն եւ վճարի յիրացն (զի գործ քան զբանս, ասեն, հզարագոյն է): Նոյնպէս եւ ես զձեզ
10 ցուցանելով՝ գեր ի վերոյ լինիմ քան զթշնամիսն**: Եւ ի վերոյ լինիցիմ զիա՞րդ: Նախ առաջին՝ եթէ ի հայր եւ յորդի, եւ ի հոգին սուրբ զխոստովանութիւնն անխոտորելի, եւ հաստատուն պահիցէք, ոչ ինչ յաւելլով եւ կամ ի բաց բառնալով եւ ոչ փոքրկացուցանելով ի միոջէ աստուածութենէն (քանզի նուազութիւնն, ամենայնի է նուազութիւնն): Իսկ որք այլ ազգ ինչ խորհիցին կամ ասիցին կամ բնութեանցն շափովք զմին քակտիցեն, կամ երկպառակտիցեն՝ իբրեւ զժանդախտ եկեղեցւոյ եւ զճշմարտութեանն ժանդ՝ ի բաց առաքեցէք, ոչ ատելով, այլ ուրմելով զկործանումնն: Երկրորդ, եթէ զվարսն յարմարագոյն ուղիղ բանին տայցէք, զի իցէք յաջողակք առաքինութեամբն,
20 այլ ոչ միովն պակասեալք:

ԺԱ. Թագաւորք, պատկառեցէք ի ծիրանոյդ, վասն զի արինադրեսցէ եւ արինադրացդ բանս: Ծաներուք որքան է հաւատացեալ ձեզ եւ զինչ մեծ||ի ձեզ խորհուրդդ: Աշխարհ բովանդակ ընդ ձեռամբ ձերով, փոքր թագաւ եւ դուզնաքեայ կապերտաւ իշխեցեալ: Ի վեր՝ միայնով աստուծոյ եւ ի ստորինսս, եւ ձեաւք: Աստուածք լերուք, որք ընդ ձեաւքն են, զի ասացից ինչ եւ համարձակագոյն, սիրտ թագաւորի ի ձեռին աստուծոյ է եւ ասի եւ հաւատարիմ է: Աստուատ եղիցի զաւրութիւն ձեզ, այլ
30 մի ոսկեաւ եւ զաւրաւք: Եւ որք յարքունիսդ եւ յաթոռսդ՝ մի՛ յոյժ իշխանութեամբդ ամբառնայք եւ մի՛ անմահս զմտաւ ածիցէք յաղագս ոչ անմահիցն: Եւ հաւատարիմք կացէք մնացէք թագաւորացն, բայց աստուծոյ նախ առաջին, վասն որոյ եւ նոցա, որոց հաւատայքդ եւ որոց աւանդեցայք: Որք զազգդ հըռ-

* Հմմտ. I Թեսաղ., Բ, 19—20:

** Հմմտ. Տիտ., Գ, 14:

1 ցայսքան B. 4 բանս] բան իմ B. 5 ինձ] B. 10—11 քան... լինիցիմ] B. 17 երկպառակտիցեն B. 18 ժանդ] ժանկ B. 20 յաջողակք] յառաջուղղակք B. 23 է] B. 33 եւ] D. 34 նոցա] դոցա D

չակեցուցանէք, դբարուցդ արինակ, քաջատոհմիկս արարէք եւ կամ բարբառեցայց ինչ յանախորժելեացն: Սակայն ի քաջատոհմից ճշմարիտ բարետոհմութիւն էր արդեաւք ձեզ, եթէ ոչ տախտակքն զբարետոհմիկսն ձեզ գրէին:

5 ԺԲ Իմաստունքդ եւ իմաստասէրքդ, պանծալիք մաւրուաւքդ եւ աղաբաղոնաւդ, իմաստակքդ եւ դպիրքդ, եւ բազմամարդութեանց, որսորդք կայթմանց, ոչ գիտեմ զիա՞րդ իմաստունք կոչիցիք, զառաջին բանն ոչ ունելով: Որք յընչեղութեանդ էք լուարուք, որ ասեն՝ ընչեղութիւն թէ հոսեսցէ՞ մի՞ դնիցէք սրտիւ,

10 գիտացէք համարձակեալք անհաստատուն իրի*, թեթեւացո՞ ինչ

A 171r ի նաւէդ, || զի նաւեսցես թեթեւագոյնս, զթշնամւոյն ինչ թերեւս ի բաց բարձցես, յորում քոյն կայցցէ: Որք ի փափկութեանն՝ բարձէք ինչ զորովայնի եւ տուք հոգւոյ: Մերձ յաղքատն, ի հիվանդութեանն աւգնեա՞, ի նա զգայուեայ ինչ յաւելորդացն: Հի՞մ

15 եւ դու աշխատիս անհալութեամբքն, եւ նա՞ քաղցնլովն, դու՞ սխալակութեամբն եւ նա՞ ջրգողելովն, դու՞ զյագեցութիւնսն շուայտութեամբ ծանրացուցանելով եւ նա՞ թափառեալ: Մի՞ անտես առնէր զՂաղարոս աստ, զի մի՞ արասցէ զքեզ անդ ընչեղն: Դուք մեծ քաղաքդ, առաջինք յետ առաջնոցն վաղվաղակի կամ

20 թէ եւ ոչ զայդ ներէք, երեւեցարուք ինչ առաջինք, մի՞ շարութեամբ, այլ առաքինութեամբ, մի՞ լքմամբ, այլ քաջարէնութեամբ: Որպէս զի ամալթալի է քաղաքացի իշխել եւ ի հեշտութեանցն պարտութիւն ընդունել, եւ կամ յայլսն ողջախոհանալ, իսկ ի ձիւրնթացսն, եւ ի տեսարանսն, եւ յասպարէզսն, եւ ի

25 գազանամարտսն այնքան մոլել, մինչ զի զայն առնել կեանս, եւ քաղաք լինել խաղալկացն առաջնումս ի քաղաքս, որում եւ այլոց արինակ լինել բարիս յամենայնի վայելչական: Զայսոսիկ եթէ ոչ արհամարհիցէք՝ աստուծոյ քաղաք լինիցիք, ի վերայ ձեռացն տեառն կենդանագրիցիք եւ մերձ կացջիք հանդերձ մեաւք ի քաղաքացուցչին պայծառք՝ սլայծառապէս յետոյ: Զայս ձեզ աւետարանեմ ի նոյն ինքն ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս: Ամէն:

* Հմմտ. Սաղմ., ԿԱ, 11:

2 յախորժելեացն B. 7 որսորդք կայթմանց] որու որդք վայթմանց B. 8 բանն] B. 9 սրտիւ] B. 10 անհաստատուն] առ հաստատուն B. իրին D թեթեւացա D. 13 ի] B 16 սխալութեամբն D. 17 թափառիցի B. 19 առաջնոյն B. 25 մոլել] տալով B. կեանս] վանս B. 26 քաղաք] վերին քաղաքայինսն B. 27 բարո B. 32 փառք] + պասիւ և զօրութիւն B

Ա. Կարծէք զիս թերեւս, սիրելիք եւ եղբարք, եւ հարք,
 բաղցր եւ իրք եւ անուն, ողբս ի վերայ արկանել գնացելոյն եւ
 հառաչանս ընկալարուք յաւժարամտութեամբ զբանս, քան զեր-
 5 կայն ձգեալ եւ զպաճուճեալ զբանսն, որովք յոլովք զուարճա-
 նան: Եւ կէսք իբրեւ սգակիցք լինելով եւ ողբակիցք պատրաս-
 տեցելովքս իմով ախտիւ զիւրաքանչիւրսն արտասուեցէք, յորս-
 է եւ այսպիսի իմն պաճուճել զվիշտսն ի բարեկամացն կիր-
 10 Իսկ այլք լսելեալք խրախճանացարուք եւ հեշտագոյնս եղէց:
 Քանզի փափաքելի ձեզ զցոյցս արարից եւ զթշուառութիւնս՝
 որպիսի ինչ էր երբեմն մերս՝ յորժամ յարմարագոյն եւ բաւ-
 կանապէս յաւելորդսն, եւ ի նիւթն, եւ ի բանսն պատուասէրք:
 Նախ քան հայել ի ճշմարիտ բանն եւ զվերնագոյնն, եւ զամե-
 A 12v նայն տալ աստուծոյ՝ յորմէ ամենայն՝ զաստուած փոխա||նակ-
 15 ամենեցուն առնուլ: Մի՛ երբէք, մի՛ այսպիսի ինչ յաղագս մեր
 կարծէք, եթէ ինչ կարծել ախորժէք աջողակ: Ոչ ողբասցուք
 զգնացեալսն առաւել քան զեղեցկապէս ունել, որք եւ ոչ զայ-
 20 լոցն զայդպիսիսն ընդունիք, եւ ոչ գովեսցուք արտաքո քան
 զչափն, թէպէտեւ ընծա սիրելի եւ ընտանեգոյն, առաւել քան
 զայլ ինչ բանաւոր ի բան, եւ առաւելապէս սիրող ի զիմ զբանս.
 եւ զգովութիւն եւ ոչ ընծա միայն, այլ եւ պարտս քան զամե-
 նայն պարտս իրաւացի: Այլ որքան սրբել յաղագս այսոցիկ զաւ-
 25 րէնսն եւ զարտասուելն եւ զսքանչանալն (զի եւ ոչ այս արտա-
 քո է ըստ մեզ իմաստասիրութեանս, վասն զի յիշատակ ար-
 դարոց՝ հանդերձ գովութեամբք եւ ի վերայ մեռելոյ, ասէ, իջոյ
 ի վայր արտասուս եւ իբր դժնդակս ախտանալով սկսիր: Զողբսն
 հաւասարապէս ի վշտացն հեռացուցանէ զմեզ եւ յանչափութե-
 նէն): Յետ այսորիկ անդէն իսկ զմարդկային բնութեանս զտկա-
 րութիւն ցուցցուք եւ զոգոյս զարժանաւորութիւն յիշեցու-

շակեցուցանէք, զբարուցող արինակ, քաջատոհմիկս արարէք եւ կամ բարբառեցայց ինչ յանախորժելեացն: Սակայն ի քաջատոհմից ճշմարիտ բարետոհմութիւն էր արդեալք ձեզ, եթէ ոչ տախտակքն զբարետոհմիկսն ձեզ գրէին:

- 5 ԺԲ Իմաստունքդ եւ իմաստասէրքդ, պանծալիք մաւրուաւքդ եւ աղաբաղոնաւդ, իմաստակքդ եւ դպիրքդ, եւ բազմամարդութեանց, որսորդք կայթմանց, ոչ գիտեմ զիա՞րդ իմաստունք կոչիցիք, զառաջին բանն ոչ ունելով: Որք յընչեղութեանդ էք լուարուք, որ ասեն՝ ընչեղութիւն թէ հոսեսցէ՝ մի՛ դնիցէք սրտիւ,
- 10 գիտացէք համարձակեալք անհաստատուն իրի՞*, թեթեւացո՞ ինչ
A 171r ի նաւէդ, || զի նաւեսցես թեթեւագոյնս, զթշնամւոյն ինչ թերեւս ի բաց բարձցես, յորում քոյն կայցցէ: Որք ի փափկութեանն՝ բարձէք ինչ զորովայնի եւ տուք հոգւոյ: Մերձ յաղքատն, ի հիվանդութեանն աւգնեա՛, ի նա զգայուեայ ինչ յաւելորդացն: Հի՞մ
- 15 եւ դու աշխատիս անհալութեամբքն, եւ նա՛ քաղցնլովն, դու՛ սխալակութեամբն եւ նա՛ ջրգողելովն, դու՛ զյագեցութիւնսն շուայտութեամբ ծանրացուցանելով եւ նա՛ թափառեալ: Մի՛ անտես առնէր զՂազարոս աստ, զի մի՛ արասցէ զքեզ անդ ընչեղն: Դուք մեծ քաղաքդ, առաջինք յետ առաջնոցն վաղվաղակի կամ
- 20 թէ եւ ոչ շայդ ներէք, երեւեցարուք ինչ առաջինք, մի՛ շարութեամբ, այլ առաքինութեամբ, մի՛ լքմամբ, այլ քաջաւրէնութեամբ: Որպէս զի ամալթալի է քաղաքացի իշխել եւ ի հեշտութեանցն պարտութիւն ընդունել, եւ կամ յայլսն ողջախոհանալ, իսկ ի ձիրնթացսն, եւ ի տեսարանսն, եւ յասպարէզսն, եւ ի
- 25 գազանամարտսն այնքան մոլել, մինչ զի զայն առնել կեանս, եւ քաղաք լինել խաղալկացն առաջնումս ի քաղաքս, որում եւ այլոց արինակ լինել բարիս յամենայնի վայելչական: Զայսսոսիկ եթէ ոչ արհամարհիցէք՝ աստուծոյ քաղաք լինիցիք, ի վերայ ձեռացն տեառն կենդանագրիցիք եւ մերձ կացջիք հանդերձ մեալք ի քաղաքացուցչին պայծառք՝ սլայծառապէս յետոյ: Զայս ձեզ աւետարանեմ ի նոյն ինքն ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որում փառք յաւիտեանս: Ամէն:

* Հմմտ. Սաղմ., 4Ա, 11:

2 յախորժելեացն B. 7 որսորդք կայթմանց] որու որդք վայթմանց B. 8 բանն] B. 9 սրտիւ] B. 10 անհաստատուն] առ հաստատուն B. իրին D թեթեւացա D. 13 ի] B 16 սխալութեամբն D. 17 թափառիցի B. 19 առաջնոյն B. 25 մոլել] տալով B. կեանս] վանս B. 26 քաղաք] վերին քաղաքայինսն B. 27 բարո B. 32 փառք] † պաս.իւ և զօրութիւն B

Ա Կարծէք զիս թերեւս, սիրելիք եւ եղբարք, եւ հարք,
 բաղցր եւ իրք եւ անուն, ողբս ի վերայ արկանել գնացելոյն եւ
 հառաչանս ընկալարուք յաւժարամտութեամբ զբանս, քան զեր-
 5 կայն ձգեալ եւ զպաճուճեալ զբանսն, որովք յոլովք զուարճա-
 նան: Եւ կէսք իբրեւ սգակիցք լինելով եւ ողբակիցք պատրաս-
 տեցելովքս իմով ախտիւ զիւրաքանչիւրսն արտասուեցէք, յորս-
 է եւ այսպիսի իմն պաճուճել զվիշտսն ի բարեկամացն կիր-
 Իսկ այլք լսելեալք խրախճանացարուք եւ հեշտագոյնս եղէց:
 10 Քանզի փափաքելի ձեզ զցոյցս արարից եւ զթշուառութիւնս՝
 որպիսի ինչ էր երբեմն մերս՝ յորժամ յարմարագոյն եւ բաւա-
 կանապէս յաւելորդսն, եւ ի նիւթն, եւ ի բանսն պատուասէրք:
 Նախ քան հայել ի ճշմարիտ բանն եւ զվերնագոյնն, եւ զամե-
 A 12v նայն տալ աստուծոյ՝ յորմէ ամենայն՝ զաստուած փոխա||նակ-
 15 ամենեցուն առնուլ: Մի՛ երբէք, մի՛ այսպիսի ինչ յաղագս մեր
 կարծէք, եթէ ինչ կարծել ախորժէք աջողակ: Ոչ ողբասցուք
 զգնացեալսն առաւել քան գեղեցկապէս ունել, որք եւ ոչ զայ-
 լոցն զայդպիսիսն ընդունիք, եւ ոչ գովեսցուք արտաքո քան
 զչափն, թէպէտեւ ընծա սիրելի եւ ընտանեգոյն, առաւել քան
 20 զայլ ինչ բանաւոր ի բան, եւ առաւելապէս սիրող ի զիմ զբանս.
 եւ զգովութիւն եւ ոչ ընծա միայն, այլ եւ պարտս քան զամե-
 նայն պարտս իրաւացի: Այլ որքան սրբել յաղագս այսոցիկ զաւ-
 րէնսն եւ զարտասուելն եւ զսքանչանալն (զի եւ ոչ այս արտա-
 քո է ըստ մեզ իմաստասիրութեանս, վասն զի յիշատակ ար-
 25 դարոց՝ հանդերձ գովութեամբք եւ ի վերայ մեռելոյ, ասէ, իջոյ
 ի վայր արտասուս եւ իբր դժնդակս ախտանալով սկսիր: Զողբսն
 հաւասարապէս ի վշտացն հեռացուցանէ զմեզ եւ յանչափութե-
 նէն): Յետ այսորիկ անդէն իսկ զմարդկային բնութեանս զտկա-
 րութիւն ցուցցուք եւ զոգոյս զարժանաւորութիւն յիշեցուս-

ցուք, եւ զպարտական վտանկեցելոցն զմխիթարութիւն ի վերայ դիցուք, եւ փոփոխեացուք զտրամութիւն ի մարմնոյս եւ ի ժամանակէիցս ի հոգեւորսն եւ ի յաւիտենականսն:

Բ Կեսարեա հարք, զի աստուատ սկսայց, ուստի ձեզ վայելչական է, զորս ամենեքեան ճանաչէք եւ որոց զառաքինութիւն տեսանէք, եւ լսէք, նախանձիք եւ սքանչանայք, եւ պատմէք՝

A 13r որոց ոչն գիտեն: || Եթէ իցեն ոմանք ի մարդկանէ, այլ յայլ մասն ժամանեալ, վասն զի ոչ ամենայնի զնոյն կարողութիւն է եւ ոչ միոյ լեզուոյ գործ, թէպէտեւ յոյժ ոք իցէ յախքատասիրացն եւ ի պատուասիրացն, որոց բազմաց եւ մեծամեծաց գտեցելոց ի բարեբանութիւն (եթէ ոչ աւելորդ լեալ թուեցայց ընդ ընտանին սքանչանալով): մի մեծ քան զամենայն եւ իբրեւ զայլ ինչ նշանաւոր է բարեպաշտութիւնն: Զպանծալիսս զայսոսիկ ասեմ եւ զառաւելեալսս եւ զոչ ինչ նուազ յաղագս

15 առաքինութեանն պատկառելիս, քան եթէ ծերութեանն, որոց մարմինք ժամանակաւ աշխատեալք, բայց հոգովք աստուծոյ մանկացեալք են:

Գ Հայր ի վայրենի ձիթենոյ գեղեցկապէս պատուաստեալ ի բարիոք ձիթենոջ, որ եւ այնքան հաղորդեցաւ պարարտութեանն

20 մինչեւ զայլս եւս պատուաստել հաւատացաւ եւ զբժշկութիւն ընկալաւ հոգոց, բարձր բարձու ժողովրդեանս այսորիկ առաջինստեալ, Ահարոն ոմն երկրորդ, կամ Մովսէս, առ աստուած մերձենալ արժանաւոր լեալ եւ զաստուածային զձայնսն մատակարարել՝ այլոց ի հեռաստանէ կացելոցն. հեղ՝ առանց բարկանալոյ, խաղաղական՝ ի տեսանելն, ջերմ՝ հոգով, առաւելեալ՝ երեւումնն, առաւելագոյն՝ ծածկեալն: Զի՞նչ արդեւք ձեզ նկարագրեցից զժանուցեալսս, զի եւ ոչ եթէ երկայնագոյն ձգիցեմք զբանսս, ասացուք արդեւք այնպիսի, որքան արժանաւոր է եւ

A 13v որչափ իւրաքանչիւր ոք գիտէ եւ պահանջէ բանն, եւ լաւա||-

30 գոյն է մտածութեանցն թողացուցանել, քան եթէ բանիւ բազում ինչ ի բաց հատանել ի սքանչելեացն:

Դ Բայց մայր անդատին եւ ի նախածնողաց նուիրել աստուծոյ, եւ ժառանգութիւն հարկաւոր ոչ ինքեան միայն, այլ եւ որք յինքենէ իջուցանէ զբարեպաշտութիւն, ի սրբոյ՝ սկսմանէ ստու-

դապէս սուրբ զանգուած այնքան զնա աճեցոյց եւ առաւելա-
 ցոյց մինչ զի արդէն իսկ ոմանց ասացից (թէպէտեւ յանդգնա-
 գոյն է բանս) եւ ոչ առնն կատարելութիւն այլոյ ուրուք, քան
 թէ նորա գործ լինել՝ հաւատալ եւ ասել: Բայց ով սքանչելեացս
 5 մրցանակ՝ բարեպաշտութեան տուեալ մեծ եւ կատարելագոյն
 բարեպաշտութիւնն: Մանկասէրք երկոքեան եւ քրիստոսասէրք,
 հրաշափառագոյնն, մանաւանդ, եթէ քրիստոսասէրք առաւել
 քան, եթէ մանկասէրք, որոց եւ մանկանցն մի իմն վայելումն ի
 Քրիստոսէ, եւ ծանաւթ լինել, եւ վարկանելի, եւ ի քաջաման-
 10 կութենէ սահմանն առաքինութիւն, եւ առ ի լաւագոյնն ընտա-
 նութիւն: Բարեգութք, վշտակիցք՝ յափշտակելով զյոլովս զցե-
 ցոցն եւ զաւաղակացն, եւ զաշխարհակալին, ի պանդխտութե-
 նէս ի բնակութիւն փոփոխեալ կազմելով, եւ ժառանգութիւն
 մեծ՝ որոց զանդի պայծառութիւնն գանձելով: Այսպէս եւ ի
 15 պարարտ ժամանեցին ծերութիւն՝ համապատիւք առաքինութե-
 A 14r ամբն եւ հասակաւն, եւ լցեալ աւուրք մնացելովքն նմ||անա-
 պէս եւ անցելովքն: Այնքան իւրաքանչիւր ոք ունելով զառաջա-
 դիմութիւնն ի վերայ երկրի, որքան ի միմեանց յառաջանալն
 արգելեալ լինէին եւ զամենայն բարեպաշտութեան շափ լցին,
 20 բայց ի վերջնմէս յայսմանէ, որպէս կարծեսցէ ոք, եթէ փոր-
 ձութիւն պարտ իցէ ասել եւ եթէ տնտեսութիւն, որ է, որպէս իմ է
 բանս: Սխալագոյն զմանկունսն հասակաւ նախ առաքել այն-
 պէս լուծանել, ապա զկեանսն զգուշագոյն եւ առ վերին ամե-
 նեւին բնակութիւնն փոփոխումնն ընդունել:
 25 Եւ ընդ այսոսիկ անցի՝ ոչ զսոսա գովել կամելով, եւ ոչ ան-
 դիտացեալք, թէ հազիւ ոք արդեւք յարժանաւորութիւն հասա-
 նէր, եւ զբովանդակ պատճառ բանիս սոցա գովութիւն կացու-
 ցանելով: Այլ զի ցուցից ի հարց զպարտական Կեսարեա զա-
 ռաքինութիւնն եւ մի՛ սքանչանայք, մի՛ եւ անհաւատէք՝ եթէ
 30 այսպիսեաց արդեւք ծնողաց, այսքանեաց զինքն ետ գովութե-
 անցն արժանաւոր: Այլ զհակառակ նմին է, թէ առ այլ ևս հա-
 յեցաւ զընտանեացն եւ զմերձաւորաց անփոյթ արարեալ զաւ-
 րինակսն: Արդ՝ առաջինք այսոքիկ՝ որպէս պատշաճ լինել ստու-
 գապէս քաջատոհմիցն եւ որք դեղեցկապէսն կեալ հանդերձե-
 35 ալք են: Բայց զի, որ ի միջոցին է հատից, զդեղեցկութիւն եւ
 զմեծութիւն, եւ ի վերայ ամենայնի զառնն շնորհ, եւ որպէս ի

նուագս քաջայարմարութիւնն (զի եւ ոչ առ մեզ ընդ այնոսիկ է զարմանալ, թէպէտեւ այլոց ոչ փոքր երեւի), առ որս ի կարգին է երթամ բանիւս, զորս եւ ոչ՝ ախորժելով թողլոյ է դիւրին:

- Զ Ընդ այսպիսի սովորութեամբք սնեալք եւ խրատեալք եւ
 A 14v աստ ուսմամբք բաւականապէս հրահալլնգեալք, յորս նա արագութեամբ եւ մեծութեամբ բնութեանն եւ ոչ ասել ոք կարէ որքան գերազանցեաց՝ քան զբազումս: Զիա՞րդ առանց արտասուաց ընդ այսպիսի անցից յիշատակ եւ ոչ զիս անիմաստասէր յանդիմանեսցէ ախտս, թերի քան զխոստումնն, այլ յորժամ
 10 գնալոյն ժամանակ պատեհ թուէր եւ յայնժամ առաջին յիրերաց որոշեցաք՝ ես ի պաղեստինացոցն մնացի՝ ի վարժանոցս ծաղկեալսն յայնժամ ըստ ատենականացն ցանկութեան, իսկ նա յԱղէքսանդր՝ ի քաղաքն ժամանէր, ամենայն ուսմանց եւ յայնժամ եւ այժմ լեալ եւ թուեցեալ գործարան: Զի՞նչ առաջին եւ զի՞նչ մեծագոյն ասացից ի նորա բարեացն: Զի՞նչ թողից՝ ոչ մեծամեծաւք տուժելով զբանն: Ո՞ք քան զնա վարդապետացն հաւատարմագոյն: Ո՞ք ի հասակակցացն քաջուշեղագոյն: Ո՞ք ճողոպրեաց յառաւել շարագոյն ընկերութենէ եւ խասակցութենէ: Ո՞ք ի լաւագոյնսն յաւել զինքն առաւել այլովքն,
 20 եւ գաւառիս քաջատոհմութեամբ եւ ծանաւթութեամբք եւ բարեհաճոյք լինելով գիտացեալ՝ թէ եւ ոչ այս փոքր ինչ բերէ յառաքինութիւն եւ ի շարութիւն ընդելութիւն: Յորոց ո՞ք քան զնա յիշխանացն պատուականագոյն: Եւ ո՞ք քաղաքի եւ ամենեցուն, թէպէտեւ յաղագս մեծութեան յամենեցունց ծածկեալ կամ յողջախոհութիւն ծանաւթագոյն, կամ իմաստութեամբք երեւելագոյն:

- է Յո՞ր տեսակ ոչ եհաս ուսման, մանաւանդ եթէ յո՞ր որպէս միայն եւ ոչ մի այլ ոք: Ո՞ւմ ներեաց մերձ յինքն լինել գոնեա դուզնաքեա, ոչ միայն ըստ ինքեան եւ որք ի նմին հասակին, այլ եւ երիցազունացն եւ յառաջագոյն եղելոց յուսմունս: Զամենայն իբրեւ զմի հրահանգեցաւ եւ, փոխալլնակ ամենեցուն, զիւրաքանչիւր ոք թռչնոցն բնութեամբ աշխատասիրութեամբն յաղթեաց եւ քաջաց յաշխատութիւնս՝ մտացն արագութեամբ, մանաւանդ եթէ՝ արագութեամբ քան զարագունս
 30 եւ փութով քան զաշխատասէրսն գերազանցեաց եւ քան զերկաքանչիւրսն զաջողակսն երկոքումբք: Երկրաշափութենէն եւ աս-
- A 15r
- 35

տեղաբաշխութենէն եւ ի վտանգաւորսն այլոցն ուսմանց՝ որ-
 քան պիտանացու՝ ընկալեալ, այս էր ի յերկնայնոցն քաջայար-
 մարութենէ եւ ի կարգէ ընդ արարչին զարմանալ, որքան վնա-
 սակար էր ի յայսմիկ ի բաց փախեալ եւ ոչ բերման աստեղացն
 5 տալով զգոյսս եւ զլեալսս, որպէս որք միանգամայն ծառա-
 յութեամբն իւրեանց զարարածսն ի վերայ յարուցանեն արար-
 շին, աստուծոյ եւ զայն զամենայն, որպէս պատշաճ էր, ի վեր
 նուիրեաց եւ զնոցա շարժմունսն, թուոցն եւ խորհրդոց, եւ
 սքանչելոյ բժշկականին՝ որքան ինչ յաղագս բնութեանս, եւ
 10 խառնուածոց եւ սկսբանց հիւանդութեանցն իմաստասիրէր, որ-
 պեսզի արմատոցն ի բաց բարձեցելոց ընդ նմին հատանին եւ
 շառաւեղքն: Ո՞ այնքան անուսումն եւ հակառակասէր մինչ զի
 նմա տալ զերկրորդսն եւ ոչ սիրել, եթէ զկնի նորա վաղվաղակի
 թուիցի զերիցութիւնն երկրորդաւքն բերելով, եւ այսոցիկ ոչ
 15 բանս է անվկայ, այլ արեւելեա յանկումնն միանգամայն եւ
 արեւմտեա եւ յորքանս նա շոգաւ յետոյ ի նշանաւորս՝ կատա-
 րեալ իւրով ուսմամբն:

Ը Իսկ յորժամ զամենայն զառաքինութիւն եւ զուսումն՝
 իբրեւ զմեծ զբեռն եւ զբազմապատիկ շահաւորութիւն ի մի յիւր
 20 յանձնն հաւաքեաց՝ յիւրսն դարձեալ գայր, որպէս զի եւ այլոց
 A 15v տացէ ի բարեացն || շահեցելոցն իւր ուսմանն: Անդանաւր եւ
 հանդիպեցաւ իմն իր սքանչելագոյն, ոչ ինչ դուզնաքեա, քանզի
 եւ զիս առաւել քան զամենայն մանաւանդ զուարճացուցանէ այս
 յիշատակել եւ զձեզ հեշտացեալս արասցէ դուզնաքեաւք պատմել:
 25 Աղաւթէր մայր աղաւթս մայրականս իմն եւ մանկասէր, որպէս
 արտաքս առաքեաց զերկոսեան, նոյնպէս եւ հանդերձ միմե-
 ամբք եկեալս անդրէն տեսանել: Վանս զի լծակիցք թուէաք իմն
 եւ թէ ոչ այլովք, սակայն մաւրն աղաւթիւք եւ տեսլեամբ ար-
 ժանաւորաւ հանդերձ՝ իրերաւք երեւեալք՝ որ այժմ ի շարաշար
 30 մախանացն լուծաւ եւ աստուծոյ այնպէս շարժեալ, որ լսէ ար-
 դարոցն աղաւթից, եւ զսիրելութիւն պատուէ զծնողացն ի ման-
 կունս բարեբարոյս, ոչ ի միոջէ իմաստից, եւ ոչ ի ժամադրու-
 թենէ, ոմն յԱղէքսանդրեա, եւ ոմն յԵլլադեա՝ ի նմին ժամա-
 նակի ի նոյն քաղաք ոմն յերկրէ, եւ ոմն ի ծովէ ժամանեցաք:
 35 Եւ քաղաք էր Բիւզանդիոն, որ այժմ նախագահ նստի, Եւրոպեա

4 էր ի) էր B. փախ B. 5 զլիեալսս B. 5—6 ծառայութեամբն] ժառանգութե-
 ամբն B. 7 գայլն B. 16 նշանակօրս B. 24 դուզնաքօք B. 26 արտաքս A. 32 ոչ
 ի) որք ի B

քաղաք, որ այնքան կեսարեայ փառս ոչ բազում ժամանակի
անցելոյ եբեր, մինչ զի հրապարակի արձանս նմա եւ հարսա-
նեաց քաջահաճոյիցն: Եւ ի միասին կոչեցելոց ի խորհուրդ ըս-
տացուածն յաւելաւ եւ առ թագաւորն հրեշտակութիւն առ մեծն
5 ի հասարակաց աւանդութենէ զառաջին քաղաքն առաջնով բա-
նաւորաւքն զարդարեալ եւ պատուեալ (եթէ ինչ հանդերձեալ էր
նմա առաջին ճշմարտապէս լինել եւ անուանակցութեանն ար-
ժանաւոր) եւ այն եւս յաւելուած լինել յամենեսեան յաղադս
նորա պատմութիւնս կեսարեաւ զզարդն ընդունել բժշկաւ, եւ
10 բնակչաւ, թէպէտեւ հանդերձ այլովք պայծառութեամբքն, բաղ-
մաւք եւ մեծամեծաւք առ լցեալ էր արամբք ըստ իմաստու-
թեան եւ ըստ այլում // ուսմանց, այլ այսոքիկ բաւականացին:
A 16r Բայց որ յայնժամ լեալն այլոց դիպուած իմն թուեցաւ անբան
եւ առանց պատճառի որպիսի ինչ բերէ բազումս ինքնապիպու-
15 թիւն ի մեր իրս, այլ աստուածասիրաց եւ յոյժ քաջայայտ էր,
ոչ այլ ինչ դիպուածն լինել, քան եթե ծնողացն աստուածասի-
րաց գործ յերկրէ եւ ի ծովէ զմանկունսն հաւաքելով ի մի ա-
ղաւթիցն լրումն:

Թ Բեր եւ ոչ զայնոքիկ զկեսարեայ զբարեաւքն զանց արաս-
20 ցուք, որ այլոց թերեւս փոքր եւ ոչ յիշատակի արժանաւոր, բայց
ինձ եւ յայնժամ եւ այժմ մեծ թուեցաւ՝ եթէ ի գովելեացն իցէ եղ-
բայրասիրութիւն, եւ ոչ դադարեցից դնել ընդ առաջինսն՝ քանիցս
անգամ զնորա իրս պատմեցից: Ունէր զնա, որովք ասասցի, պա-
տուովք քաղաքն եւ ոչ եթէ ինչ լինիցի յապաղումն, ասէր, իսկ
25 ես անդրէն ձգեալ զաւրացայ՝ որքան զամենայն կեսարեայ առա-
ւելագոյն պատուական ծնողացն մաղթանսն ընուլ եւ գաւառի
զփոխարեն պարտն զիմ ինքեան զանձուկն առնուլ ի ճանա-
պարհին հաղորդ, եւ շահակից եւ նախապատիւ լինել ոչ քան
զքաղաքսն եւ զբազմութիւնսն միայն եւ ոչ քան զպատիւսն եւ
30 զշահսն, զոր յովովք բազում ուստեք, կէսք միանգամայն ցըն-
դէին նմա եւ կէսք վստահացուցանէին, այլ եւ քան զնոյն ինքն
զթագաւորն գրեթէ եւ զնորա հրամանսն: Անդանաւր ես իմաս-
տասիրել ընտրեցի եւ առ վերին կեանսն յարմարեալ՝ իբրեւ
զծանր զոք գտէր եւ զախտաժէտութիւն զչար՝ զամենայն զպա-
35 տուասիրութիւնն ի բաց մերժեցի, մանաւանդ եթէ փափաքումնն

Երիցագոյն էր, բայց վարքն՝ կրսերագոյն: Իսկ նա զառաջինս
 A 16v ուսմանն նուիրեաց իւրում գաւառի || եւ սքանչելի ցուցաւ ար-
 ժանաւորապէս աշխատութեանցն զկնի այնորիկ փառաց ցան-
 կութիւն հրաման տալ քաղաքին, որպէս զի հաւանեցոյց ի թա-
 5 գաւորական ապարանս տայր: Ոչ ամենեւին քաջ մեզ զսիրե-
 լութիւնն արարեալ եւ ըստ կամաց, քանզի պատասխանիս առ-
 նեմ առ ձեզ, զի բազմապատիկ կարգեցաւ յաստուծոյ լաւա-
 գոյն եւ բարձրագոյն, քան եթէ ի ստորին թագաւորին զառա-
 ջինսն բերել, սակայն ոչ արժանի բամբասանաց: Վասն զի ի-
 10 մաստասիրելն որքան մեծ է, նոյնքան դժուարին եւ աւզտակա-
 րագոյն, եւ ոչ բազմացն ձեռնարկութիւն, եւ ոչ այլոց, բայց
 յաստուածայնո մեծ խորհրդոյն կոչեցելոց, որ եւ յառաջ ասու-
 ցելոցս գեղեցկապէս ձեռն տա՝ ոչ փոքր է եթէ ոք, եւ զերկրորդն
 յանդիման կացուցէ զվարս, բարելաւութեան սեփական առ-
 15 նիցէ, եւ առաւել բան ունիցի աստուծոյ եւ իւրում փրկութեանն
 քան զստորին պայծառութեանս, յորում անյապաղ եւ զԿեսա-
 րիոս իմացեալ ճանաչեմք:

Ժ Արդ՝ կարգեալ լինէր յառաջին բժշկացն դասու եւ ոչ յո-
 լով ի աշխատութեան կարաւտացեալ, մանաւանդ եթէ դուզնա-
 20 քեա իմն ուսման իբրեւ նախաշաւիղ եւ ընդ սիրելիս թագաւո-
 րին վաղվաղակի թուեալ լինէր՝ զմեծամեծսն շահելով զպա-
 տիւս՝ անվարձ զարուեստին զմարդասիրութիւն ի կատարելու-
 թեան դնէր՝ գիտելով եթէ ոչ ինչ այնպէս իբրեւ զառաքինու-
 թիւն եւ ի բարին ճանաչել նախամեծար առնէ ի յառաջադիմու-
 25 թիւնսն: Եւ որոց կարգան երկրորդ էր, քան զնոսա բազմապա-
 տիկ էր փառաւք. ամենեցուն փափաքելի էր յաղագս ողջախո-
 A 17r հութեանն եւ || նորին աղագաւ զսենեակսն հաւատայր, ոչ ինչ
 Հիպոկրատեայ երդմանն կարաւտեալ՝ մինչ զի ոչ ինչ լինել եւ
 ոչ Սոկրատեայ պարզամտութիւնն առ նորայն տեսեալ ամենե-
 30 ցուն առաւել քան զկարգն էր պատկառելի: Մեծամեծացն միշտ
 մերձակայից արժանաւոր լեալ, մեծագունից եւս արժանաւոր
 վստահացելոցն ընտրեալ նոցին ինքեանց՝ որ թագաւորացն եւ
 որք մի անկամ զկնի նոցա զառաջինսն ունէին, եւ որ ինչ մե-
 ծագոյն էր, զի ոչ ի փառացն եւ ոչ ի մէջ փափկութեան ոգոցն
 35 քաջատոհմութիւն ապականեցաւ: Այլ բազմաց եւ մեծամեծաց
 եղելոցն նմա՝ առաջին էր պատիւ քրիստոնեայ եւ լինել եւ ա-

4 զի] զիս B. 29 Սոկրատեայ] B. 35 մեծամեծացելոց B. 36 եղելոցն] B

- նուանել եւ ամենայն միանգամայն խաղ իմն նմա եւ աղճա-
 տանք առ մի առ այս լինել: Վասն զի այլքն՝ իբրեւ ի խաղսն եւ
 այլոց գոյր հնար խաղալ արագ արագ երեւեալք եւ քակտեալք,
 թուի թէ ապականեալք դիւրաւ քան եթէ հաստատեալք եւ որպէս
 5 է տեսանելի բազմաց կենցաղոյս փոփոխմանց եւ ի վերեւ ի
 վայր փոխանորդութեամբ անկելոց բարաւրութեանց սեփական
 միայն բարի լեալ եւ մնացական զգուշապէս բարեպաշտութիւն:
 ԺԱ Այսոքիկ Կեսարեայ իմաստասիրէին եւ արժանաւոր
 զգեստու, այսոքիւք եւ եկաց մտածութեամբք եւ զնաց ընդ նո-
 սին, մեծագոյն քան զերեւելին ի հասարակաց բարեպաշտութե-
 անն, աստուծոյ ծանուցեալն եւ յանդիման կացեալ ըստ գաղտ-
 նի մարդոյն: Եւ եթէ պարտ իցէ՝ զամենայն թողուլ, զվերա-
 կացութիւնն, որոց ի յազգէն էին թշուառացելոց, զարհամար-
 հանս ամբարհաւաճութեան, առ բարեկամսն զուգապատու-
 15 թիւնն, առ իշխանսն զհամարձակութիւնն, յաղագս ճշմարտու-
 A 17v թեանն զհանդէս || եւ զբանսն, զոր բազումս յոլով անկամ եւ
 առ յոքունս հաստատեաց ոչ բանաւորապէս միայն, այլ եւ յոյժ
 բարեպաշտաբար եւ ջերմութեամբ, մի փոխանակ ամենեցուն
 ասել ի նորա իրացն զծանաւթագոյնն: Կատաղէր հակառակ մեր
 20 թագաւորն վատշուէր եւ ընդդէմ ինքեան նախ առաջին մոլե-
 ցաւ՝ ի Քրիստոս ուխտադրուծ լինելով, անըմբերելի այնուհե-
 տեւ այլոց էր՝ ոչ ինչ թերեւս քան զայլս քրիստոսամարտս մե-
 ծախորհրդապէս գրեալ յամբարշտութիւնն, այլ գողանայր զհա-
 լածումնն հեղութեան առեղծուածովն՝ ըստ կամակոր աւճին,
 որ կալան զնորա անձնն: Ամենայն մեքենայիւք ի վայր քարշէր
 25 զթշուառականսն յինքեան վիհն: Եւ առաջին նորա արուեստ եւ
 պատրանք, զի եւ ոչ ի նա հակառակութիւնսն պատուոյ հանդի-
 պիցիմք (վասն զի մախայր եւ ընդ այն քրիստոնէից զքաջն)
 շարշարեալս ոչ իբրեւ զքրիստոնեայս, այլ իբրեւ զշարագործս
 տանջէր: Երկրորդ՝ հաւանութեան անուն եղելոցն, ոչ բռնութե-
 ան, որպէս զի մեծ իցէ քան զվտանկն ամաւթն, ինքնայաւժարք
 դիմեսցեն առ ամբարշտութիւնն: Եւ զոմանս ընչիւք, եւ զկէսս
 արժանաւորութեամբք, եւ զայլս խոստմամբք, զկէսս ամենա-
 պատիկ պատուովք ի վայր քարշէր, զորս եւ ոչ թագաւորապէս
 35 մերձեցուցանէր, այլ եւ յոյժ ծառայաբար յամենեցուն ի դէմս,
 զամենեսեան կախարդութեամբ բանից եւ ըստ ինքեան աւրի-

նակաւ բազմապատիկ եւս հնարէր Կեսարեայ: Աւաղ խելագարութեանն եւ անմտութեանն, եթէ զԿեսարիոս զայնպիսին եւ զեղբայրն իմ եւ զայնպիսեաց զժնողաց կողոպտել վստահանայր:

- A 18r ԺԲ Այլ զի սակաւ ինչ յամեց||ից եւ զուարճացայց պատմութեամբքս՝ որպէս եւ մերձակա սքանչելեալք՝ մտանէր ի ներքս քաջն այն Քրիստոսի նշանաւն ամրացեալ եւ զբանն զիւր առաջի արկանէր առ բազմապատիկն զինուք եւ մեծ բանից դժբնդակութեամբ. ոչ ինչ հիացեալ եւ ոչ ողորբական ի վայր անկանէր մտաւք նահատակ, պատրաստական էր բանիւք եւ գործովք՝ առ երկոսեան կարող հանդիսանալ: Արդ՝ ասպարէսն այսպիսի եւ բարեպաշտութեան նահատակն այսպէս, եւ նահատակադիրն, աստի Քրիստոս իւրովք շարշարանաւքն զնահատակն զինէր, եւ անդի զժնդակ բռնաւորն բանիցն ընտանութեամբ ողորէր եւ իշխանութեան ծանրութեամբ զարհուրեցուցանէր: 10 Տեսարան յերկոցունց կողմանց բարեպաշտութեան մնացելոցն տակաւին եւ ի նմանէ յափշտակեցելոցն (ի) յոր կողմն հակամիտել նոցա իրքն գիտելով՝ ո ոք յաղթիցէ առաւելագոյն զհոգն ունելով՝ առ որ տեսարանն էր:
- 20 ԺԳ Իսկ արդ ո՞չ արդեւք զարհուրէիր յաղագս Կեսարեայ՝ մի գուցէ կրեսցէ ինչ յաւժարութեանն անարժան: Այլ քաջալերեցարուք, քանզի ընդ Քրիստոսի յաղթութիւնն էր, որ աշխարհի յաղթեաց*։ Արդ՝ ըստ իւրաքանչիւր ումեք յանժամ ասացելոց կամ առաջի եղելոց պատմել այժմէս, քաջ գիտացէք, բան զամենայն պատուեմ, վասն զի եւ բանականս իմն ունի դարձուածս պանծալիս, ինձ ոչ ինչ անախորժելիս զյիշատակն, բայց արտաքո լինի ամենել||ին ժամանակի եւ բանիս: Յորժամ զամենայն զնորա զբանիցն զմանուածս ելոյծ եւ զփորձութիւնն զամենայն զաներեւոյթն եւ զերեւելի՝ իբրեւ զիսաղ իմն ի բաց մերժեաց՝ մեծաւ եւ պայծառ ձայնիւ Քրիստիանոս եւ է եւ կալ մնալ քարողեաց: Իսկ նա այնպէս ամենեւին առաքեալ լինէր ի բաց, զի եւ զժնդակագոյն փափաքումն ունէր զթագաւորն ընդ Կեսարեայ մերձ լինել եւ զարդարել զինքն նովաւ: Յորժամ եւ հրշակելի այն յամենեցուն լսելիս հնչեաց: Ո՞վ հաւր բարեբաստի, 30 ո՞վ որդոց թշուառականաց: Վասն զի եւ զմեզ արժանաւոր արար պատուել հաղորդութեամբ անպատուութեանն, զորոց եւ զու-
- A 18v 15 25 30 35

* Հմմտ. Յովհ., ԺԶ, 33:

սումն յԱթէնս ծանեալ եւ զբարեպաշտութիւնն, երկրորդ՝ մտիւն յարքունիս վտարեաց զնորա բովանդակ (եւ յորժամ հակառակ պարսից զնա իրաւունքն գեղեցկապէս զինեցին), եկն առ մեզ փախստական երանելին եւ յաղթողն առանց արեան, եւ յոյժ 5 երեւելի անպատուութեամբն, քան եթէ պայծառութեամբն:

ԺԴ Զայն ես զյաղթութիւն եւ զմարտն նորա ձեռինն, եւ քան զբարձրագոյնն ծիրանիս, եւ զբազմապատիկ թագ առաւել բարձրագոյն վարկանիմ եւ պատուականագոյն, այսու պատմութեամբ յոյժ համբառնամ քան եթէ զնորա զթագաւորութիւնն 10 բաժանեալ էր: Զար ժամանակացն տեղի տայր եւ այն ըստ մերում օրին||ադրութեանն՝ ի վերայ կացելոյ ժամանակի վըշտանալ յաղագս ճշմարտութեանն, եւ ոչ մատնել երկշոտութեամբ զբարեպաշտութիւնն՝ ցորքան իշխանութիւն է, ոչ յառաջ կոչել զվտանկս հրամայէ, եթէ երկեղու մերոց անձանց, եւ 15 եթէ խնայելով յայնոսիկ, որք ի վերայ ածեն զվտանգն*: Իսկ յորժամ խաւարն քայքայեցաւ եւ այցելութիւնն գեղեցկապէս դատեցաւ, եւ սրեալ սուրն ամբարշտին ժամանեաց, եւ քրիստոնէից անդրէն դարձան իրքն, զի՞նչ պարտ եւ արժան է ասել, որքա՞ն փառաւք եւ պատուով վկայից, որքանեա՞ցն եւ որպիսե՞աց եւ որպէ՞ս տալ զշնորհն առաւել քան, թէ առնուլ: Յարքունիսն դարձեալ առեալ լինէր եւ փոխանորդ էր զառաջին պատիւն երկրորդն, զթագաւորն ժամանակն փոփոխեաց, բայց Կեսարեայ փոփոխութիւնն քակտելի էր եւ առ նոսա յառաջադիմացն, հանդէս թագաւորացն. ո ոք առաւել զԿեսարիոս ընտանեցուցէ եւ ում մանաւանդ նա անուանեցի սիրելի եւ ծանաւթ: Այսոքիկ Կեսարեայ բարեպաշտութեանն իրք եւ ի բարեպաշտութենէ: Լուիցեն մանկունք եւ արք, եւ ի ձեռն նորին առաքինութեանն առ նոյն երեւելի փառս ճեպեսցին (վասն զի բարեաց վաստակոց պտուղ բարեբաստիկ է), որքան եւ այս փութով 30 եւ մասն քաջափառութեան համարեալ լինի:

ԺԵ Այլ որպիսի՞ ինչ եւ այս նորա սքանչելեացն, միանգամայն եւ ծնողացն || բարեպաշտութեան եւ նմա մեծ ունի զըցոյցն: Ժամանակ ինչ յամէր ի Բիւթանացոցն քաղաք, յորում ոչ հեռագոյն ի թագաւորին յարմարեալ էր իշխանութիւն. եւ այն 35 էր ամբարեալ թագաւորին զինչսն եւ զգանձուց ունել զխնամակալութիւն: Վասն զի անդա՛հաւր նմա զմեծամեծ իշխանութե-

* Հմմտ. Մատթ., Ժ, 23:

անց թագաւորն նախաշաւիղ առնէր եւ յառաջագոյն կործանեալ ղնիկեայ շարժմանն եւ փոքր ինչ նուազ ամենայն քաղաքն ի վայր տապալեալ, մինչ ղի դժնդակագոյն քան զերբէք ուրեք յիշատակեալս ասին լեալքն, փոքր ինչ նուազ ամենայնի ժամանեաց եւ ղքաղաքին զգեղեցկութիւն ապականեաց, երեւելեաց միայն դուզնաքեա: Հանդերձ սակաւուք ի վտանկէ ճողոպրեցին շինուածք, եւ փրկութեամբ անհաւատալեալ նովիմբ ծածկեցան դիպուածովքն, եւ նուազ նշան վտանկին բերէին, որքան զերկիւղն դաստիարակ առնուլ մեծի փրկութեանն եւ բոլորովին վերնայնոցն լինել մասին փոխադրել զզինուորութիւնն ի վշտացն փոխեաց ինքեան եւ զարքունիսն: Զայն զմտաւ ածէր եւ փութով յինքեան աղաւթէր՝ որպէս առ իս գրեալ հաւանեցոյց՝ յափշտակել զժամանակն ի խրատ, զոր եւ այլ երբեմն առնելով ոչ դադարեաց՝ նախանձեցուցանելով զնորա զմեծախորհրդութիւն շրջել ի մէջ վատթարաց, եւ զիմաստասէր

A 20r զանձնն այնպէս ընդ դահիճսն յերկիր թաւալեցուցանել, եւ իբրեւ զարեգակն ամպով ծածկեալ: Այլ քան զշարժումն լաւագոյն եղեւ, բայց քան զհիւանդութիւն ոչ եւս, վասն ղի մարդ էր: Եւ մին առ անձինն իւր, իսկ միւսն հակառակ առ այլս: Մին՝ բարեպաշտութեան, բայց միւսն՝ բնութեան: Եւ նախ ժամանէր մխիթարութիւնն քան զախտն, ղի մահուամբ դղրդեալք՝ անկարծելեալ յայնժամ փրկութեամբն պարծիցիմք: Եւ այժմ մեզ Մեծն Կեսարիոս զերծաւ, հող պատուական, մեռեալ գովելի, գովութեամբ ի գովութեանց յուղարկեալ, ծնողացն սուրբ ձեռաւք պատեալ, մաւր պայծառազգեստութեամբ անդատին զբարեպաշտութիւնն փոխանակ ի ներքս ածեալ, արտասուաւքն յաղթահարեալ իմաստասիրութեամբն, սաղմոսերգութեամբ դադարեցուցեալ զողբսն եւ նոր ստացելոյ անձինն, զոր հոգին շրով վերստին կերպարանեաց՝ զպարգեւան շահելով:

30 ԺՁ Այս քեզ, ո՛վ Կեսարիոս, յինէն պատանք, այսոքիկ իմոց բանից պտուղք, զորս թաքուցանելով բազում անգամ մեղադրէիր՝ ի քեզ ինքն մերկացուցանելով հանդերձեալ էիր: Այս յինէն զարդ, քեզ քան զամենայն զարդ, քաջ գիտեմ, պատուականագոյն, ո՛չ կերպասուց շուրջ փաղփեալ եւ ոչ կակուղք անկուածք, որովք եւ ոչ մերձ եղելով զուարճանայիր որպէս բազումք՝ առաքինութեամբ միայն զարդարեալ, ոչ բեհեզի երեւե-

6 ի վտանկէ] A. 11 ինքէն B. 12 յինէն B. 14 դադարեացի A. 33—34 պատուասիրագոյն B

- լոյ անկուածք, եւ ոչ իւղոց բազմապատկաց ի վերայ հեղումն,
 A 20v զորս ի կան||ացիսն յուղարկէիր յառաջագոյն, եւ զորոց մի
 ար լուծանէ զանուշահոտութիւնն, եւ ոչ այլ ինչ ի փոքունցն
 եւ ի տրպաց պատուոցն, զորս զամենեսեան ծածկելոց էր ար-
 5 դելք այսար դառն կափարիչն հանդերձ բարի մարմնովդ: Ի
 բաց ապականեսցին ինձ հանդէսքն հեթանոսականք եւ առաս-
 պելքն, որովք երիտասարդք թշուառականք պատուեցան, նուա-
 զըս փոքունց նահատակութեանց առաջի դնելով մրցանակս եւ
 որք մի անկամ նուիրաւք եւ կմախաւք կամ պսակաւք եւ ծաղ-
 10 կաւքն հաւաքեցելովք սրբեն զգնացեալ մարդիկն՝ գաւառական
 արիւնաւք անբան ախտի առաւել քան եթէ բանի ծառայեալք:
 Բայց իմ ընծայս բան է, զոր թուի, թէ հանդերձեալն ընկալցի
 ժամանակ, միշտ շարժեցեալ եւ ոչ ներեսցէ իսպառ երթալ աստ
 ի փոփոխեցելումն՝ պահելով միշտ ի լսելիս եւ ի հոգիս զպա-
 15 տուեալն եւ քան զտախտակս յայտնագոյն առաջի դնէ զպատ-
 կերն յանձկալոյն:

- Ժէ Արդ՝ առ ի մէնջ այսոքիկ, թէպէտեւ փոքունք եւ քան
 զարժանաւորութիւն նուազք, այլ աստուծոյ սիրելի ըստ կարո-
 ղութեան: Եւ զմին տուաք, բայց զայլսն տացուք՝ ըստ տարոյ
 20 ընծայելով զպատիւսն եւ զյիշատակս, ի կենցաղումս մնացե-
 ալք: Դու մեզ յերկինս գնացեալ, ո՛վ աստուածային եւ պա-
 տուական գլուխ, եւ ի գոգսն Աբրահամու, որպիսի այնոքիկ են,
 հանգիցես եւ զհրեշտակացն, տեսցես պարաւորութիւն, եւ դե-
 րանելեաց զարանց զփառս եւ զպայծառութիւնս. մանաւանդ եթէ
 A 21r ընդ նոսա ապրեսցիս եւ զուարճասցիս, եւ զամենայն ի ձեռն ||
 հրեշտակաց զաստի բարձրութիւնս՝ զկոչեցեալ զճոխութիւնս,
 զապականեալ զարժանաւորութիւնս, զկենցաղոյս այսորիկ զդան-
 դաշմունս եւ որք՝ իբրեւ ի գիշերամարտութեան խառնակու-
 թիւնք, եւ անգիտութիւնք: Մեծի թագաւորին մերձ կացէր եւ
 30 անտի լուսովն լցար, զորոց փոքր ինչ զհոսումն աստէն ընդու-
 նելով, որքան հայելեաւ տեսանել եւ առակաւք, նմին ինքն աղ-
 բիւրն բարոյ յետ այսորիկ հանդիպեսցուք, մաքուր մտաւք
 զմաքուր ճշմարտութիւնն տեսանելով եւ զայն վարձ գտանեմք,
 փոխանակ աստի աշխատասիրութեանն զկատարեալ անդ բա-
 35 րոյն ընդունելութիւն եւ տեսութիւն՝ որպէս զմեր զվախճանն
 խորհրդածութեանն գիրք, եւ հոգիք աստուածաբանք աստուա-
 ծաբանեն:

24 զարանց] զանձանց B. 27. զարժանաւորութիւնս] + և զսուտ անուն պա-
 տիւս և զգալեացս մոլորութիւն B. 34 աշխատութեան B

- ԺԸ Զի՞նչ եւս այսուհետեւ, զբանիս բժշկութիւն վտանկե-
 ցելոց ընծայել: Մեծ է ի վշտակցացն դեղ, եւ որք հաւասար
 զկիրան ունիցին առաւել են ի մխիթարութիւն վշտացելոցն:
 Մանաւանդ այժմ առ այնպիսիսն է մեզ բանս, յաղագս որոց ա-
 5 մաշեմք արդեւք՝ եթէ ոչ որպէս զայլոց ամենեցուն զբարեացն,
 նոյնպէս զժուժկալութեանս զառաջինս ոչ բերիցեմք: Զի թէ-
 պէտեւ որդեսէրք քան զամենեսեան առաւել, այլ եւ քան զամե-
 նեսեան մանաւանդ իմաստասէրք եւ քրիստոսասէրք, եւ զաս-
 տի զփոփոխումն առաւելապէս ինքեանք հրահանգեալք, եւ ո-
 10 րոց յինքեանցն վարդապետեցին. մանաւանդ զբովանդակ զկե-
 անսն կրթութիւն լուծման կացուցին: Ապա թէ տակաւին եւս
 A 21v ախտն || դիտիցէ մտաւք, եւ իբրեւ զբիժ ինչ զակամք եկեալ,
 մաքրապէս տեսանել ոչ թողացուցանէ զպատշաճն: Եկայք ըն-
 կալարուք զմխիթարութիւն, ծերութիւնք ի մանկանէս եւ յոր-
 15 դոյս հարք, եւ որում խրատ ընդունել ի յայդպիսեացդ պարտ
 է, որք զբաղումս խրատեցէք եւ երկայն ժամանակաւ զհմտու-
 թիւնն հաւաքեցէք: Եւ սքանչանայք մի ինչ, եթէ մանուկս խրա-
 տեմ զծերսդ եւ այս ձեր է, եթէ ինչ քան զալիսդ վեհագոյն
 տեսանել ունիմ: Քանի՞ ինչ եւս կեցցուք ժամանակ, ո՞ պա-
 20 տուական ալիք եւ աստուծոյ մերձաւորք: Որքա՞ն ինչ աստ
 շարշարիցիմք եւ ո՞չ ամենայն մարդկան կեանք երկայնք՝ առ
 աստուածային բնութիւնն անվախճան համեմատեալք, թող թէ
 կենաց նշխարք եւ մուտքս՝ որպէս ասիցեմք մարդկան շնչոյս եւ
 ժամանակէ ի ասպարիսիս վերջինք: Ո՞րքան ինչ քան զմեզ յա-
 25 ուաջ ժամանեաց Կեսարիոս, քանի՞ ինչ եւս զգնացեալս սգաս-
 ցուք: Ո՞չ ապաքեն ի նոյն ճեպիմք յաւթեւան, ո՞չ նոյն ի վերայ
 դնի մեզ վաղվաղակի կափարիչ, ո՞չ նոյն փոշի յետ սակաւ ինչ
 եղիցուք: Ո՞չ այսքան շահ ի փոքունս յայսոսիկ յաւուրս,
 որքան զառաւել շարիս՝ զոմանս տեսանելով եւ զկէսս կրելով,
 30 զայլս եւ գործելով: Թերեւս սպաս տարեալ բնութեանս արինաց
 զհասարակաց հարկն զանշարժելի եւ ոմանց զհետ գալ, եւ քան
 զոմանս յառաջ երթալ, եւ զայլսն լալ, եւ յայլոցն ողբացեալ
 լինել, եւ ոմանց փոխարէն առնուլ, զոր յառաջագոյն ի ներքս
 բերաք այլոց զարտասուացն հանկանակ:
- 35 ԺԹ Այսպիսի են կեանքս մեր, եղբա՛րք, կենդանեացս ժա-
 A 22r ||մանակեայք, այսպիսի ի վերայ երկրի խաղք, ոչ եղեալք լի-

- նել եւ լեալք անդէն լուծանել: Երազ եմք ոչ կայուն*, երեւումն իմն ոչ ըմբռնելի, թռիչք հաւու՝ անցելոյ, նաւ ի վերայ ծովու հետս ոչ ունելով, փոշի, գոլոշի, առաւաւտնեայ ցաւդ**, ծաղիկ ի ժամանակի բուսեալ եւ ի ժամանակի խամրեալ: «Մարդոյ իբրեւ զխոտ աւուրք իւր, եւ իբրեւ զծաղիկ ի վայրի այնպէս ծաղկեսցի»*** գեղեցկապէս: Աստուածայինն Դաւիթ յաղագս տկարութեանս մերոյ իմաստասիրեաց եւ այնոքիւկ դարձեալ բանիւք: Զնուազութիւն աւուրց իմոց պատմեա ինձ, եւ քլաւ շափով զմարդկային զաւուրս սահմանէ****: Զի՞նչ արդեւք ասիցէ որ առ ի յԵրեմիաս, որ եւ զմայրն բամբասէ ընդ ծնելութիւնն դժուարելով եւ դայնոսիկ յաղագս այլոցն յանցանացն*****: Զամենայն տեսի, ասէ ժողովողն, ընդ ամենայն անցի խորհրդովք ընդ մարդկայինս, ընդ փարթամութիւն, ընդ փափկութիւն, ընդ զաւրութիւնս, ընդ փառս անհաստատունս, ընդ իմաստութիւն փախուցեալն առաւել քան ըմբռնեալ: Դարձեալ ի վերայ նոցին բազում անգամ վերստին յեղյեղէ, զորովայն ի զհեշտութիւնս, զդրախտս, զյաճախութիւն ստրկաց, զբազմութիւն ստացուածոց, զմատուակս՝ զարս եւ զկանայս, զէնս, սպասաւորս, զազգս առաջի անկեալս, զհարկս հաւաքեալս, զյան թագաւորութեան, որքան ինչ աւելորդ է կենցաղոյս, որքան հարկաւորացն, որով քան զամենեսեան գեր ի վերոյ ել եւ քան զթագաւորսն զառաջինս: Եւ զի՞նչ ի վերայ ամենեցուն այսոցիկ՝ ունայնութիւն ունայնութեանց, || «եւ յաւժարութիւն հոգոց»***** եւ կամ յարձակումն ինչ անձին անբանի, եւ զբաւսանք մարդոյ այս դատապարտեցելոյ՝ թերեւս յառաջին յանցանացն: Այլ զվախճան բանն, ասէ զամենայն լո՛ւր, յաստուծոյ երկիր, անդանաւր ի տարակուսանացն դադարէ*****, եւ այս քեզ միայն աստ ի կենացս շահ՝ առաջնորդեալ ի խոտվութենէ երեւելեացս եւ սասանութեանցս ի կայունսն եւ յոչ
- 30 շարժեցեալսն:
- Ի Արդ՝ մի՛ սգասցուք զկեսարիոս, յորպիսեաց ի բաց վճա-

* Հմմտ. Յովք, Ի, 8:

** Հմմտ. Ովս., ԺԳ, 3:

*** Սաղմ., ԺԲ, 15:

**** Հմմտ. Սաղմ., ԼԸ, 6:

***** Հմմտ. Երեմ., ԺԾ, 10:

***** Ժող., Ա, 14:

***** Հմմտ. Ժող., ԺԲ, 13:

րեցաւ շարեացս գիտելով, այլ զմեզ ինքեանս, յորպիսիս մնա-
 ցեալ եմք եւ զինչ գանձեսցուք, եթէ ոչ հարազատաբար առ-
 աստուած յաւելուցումք, եւ զանց առնիցեմք զանցաւորաւքս, ի
 վերին կեանսն ճեպիցիմք: Եւ եթէ առաւել եւս հաւանիցիմք՝
 5 լքանելով զերկիր՝ հոգովք բերեալք վերնայնոցն հարազատա-
 պէս զհետ երթիցեմք: Նոքին եւ վտանկաւորք կարճամտացն, եւ
 թեթեւք առաքինեաց մտաւք: Դիտեսցուք այսպէս: Ո՞չ իշխան
 լինի Կեսարիոս, այլ եւ ոչ իշխեսցի յայլոց: Ո՞չ զարհուրեցուցանէ
 10 զոմանս, այլ եւ ոչ երկիցէ ի ծանր տեառնէն, որում բազում
 անգամ եւ ոչ իշխան լինել էր արժանաւոր: Ո՞չ ժողովէ ինչս,
 այլ եւ ոչ լքցէ մախանս կամ զհոգին տուժեսցի շարաշար հա-
 ւաքելովն եւ այնքան միշտ զյաւելուածն առնուլ հայցելով, որ-
 քան ստացան: Վասն զի այս է փարթամանալոյն ախտի սահ-
 ման՝ երկնչել յառաւելութենէն ոչ ունի, այլ զտեղի միշտ ծա-
 15 րաւոյ պատճառ առնէ դեղ: Ո՞չ ցուցանէ զբանս: Այլ ի բանիցն
 A 23r սքանչացեալ լինի: Ո՞չ իմաստասիրեսցէ ըզՀիպոկրատեայ եւ
 զԴալինոսի եւ զընդդիմադրութեանցն այնոցիկ: Այլ եւ ոչ շարա-
 շար ախտակրեսցէ ինքեան յայլոց թշուառութենէն տրտմու-
 թիւնս հաւաքելով: Ո՞չ ցուցցէ զԵկլիդեայ եւ զՊտղոմեայ եւ
 20 զԵրովնայ: Այլ եւ ոչ վշտասցի անուամամբքն հպարտացելովք
 մեծամեծս: Ո՞չ զարդարի Պղատոնի եւ Արիստոտելի եւ Պիւտոնի
 եւ Դեմոկրիտեայ ոմամբք եւ Հերակլիտեայ եւ Անաքսագորի, Կլե-
 անթեայ եւ Եպիկուրացոցն եւ ոչ գիտեմ որովք ոմամբք, որք ի
 պանծալի ճեմարանէն են եւ յակադիմեայ: Այլ եւ ոչ հոգասցի,
 25 թէ որպէս լուծցէ զնոցա հաւանութիւնսն: Բայց զի՞նչ պարտ
 է ինձ յիշել զայլսն: Այլ այսոքիկ պատուականքս ամենեցուն
 եւ փութալիք ո՞չ մերձ կացցէ կին, եւ ո՞չ մանկոմք: Այլ եւ ոչ
 ողբասցէ զնոսա, եւ ոչ ողբասցի ի նոցանէ կամ լքցէ այլոց եւ
 կամ լքեալ լիցի թշուառութեանցն յիշատակ: Ո՞չ ժառանգեսցէ:
 30 զինչս: Այլ ժառանգեսցի յորոց պիտանացուն է եւ զորս ինքն
 կամեցաւ, զի ճոխասցի, փոփոխեսցի, զամենայն ընդ ինքեան
 բերելով: Ո՞վ պատուասիրութեանս, ո՞վ նորո մխիթարութեանս,
 ո՞վ մեծախորհրդութեանս ի վերայ անկելոց: Լսելի եղեւ քարո-
 զութիւն ամենայն լսելոյ արժանաւոր եւ մաւր ախտք թափին ի
 35 բարիոք խոստմանէն եւ ի սրբոյ տալ զամենայն որդոյ զնորա

15 գեղ | գեղ B. 20 գերեւա B. 22—23 կրեանթեա B. 27 կին եւ | առ B. 31
 ճոխասցի | ճոխ աստի A

փարթամութիւնն յաղագս նորին ընծա գերեզմանին եւ ոչ ինչ նուազանալ ի վստահացելոցն:

- ԻԱ ՉԵ՛ւ եւս այսոքիկ բաւականք առ ի մխիթարութիւնն,
 A 23v բերից ի վերայ || զմեծագոյն դեղն: Հաւանիմ իմաստնոց բա-
 5 նից, եթէ հոգի ամենայն բարի եւ աստուածասէր, յոր ժամի կապակցէն արձակեսցի ի մարմնոյ, աստի ի բաց վճարի վաղ-վաղակի ի սգայութեան եւ ի տեսութեան, որ մնայն նմա բարին լինի (զոր ի խաւարեցուցանողէն մաքրեալ կամ ի բաց եղեալ եւ կամ ոչ գիտեմ, եթէ զինչ ասել պարտ իցէ): Սքանչելի իմն հեշտութեամբ հեշտանայ եւ ցնծայ, եւ հեշտութեամբ երթայ առ իւր տէրն՝ իբրև ի շար կապարանէ իմեքէ աստի կենացս փախուցեալ եւ շուրջ կացեալ ի բաց մերժեալ զկապանսս, յորոց մտացն թեւք ի վայր քարշեալ լինէին, եւ անդէն վաղվաղակի իբրեւ երեւմամբք շահի զպտուղս առաջիկայ ի երանութեանն, փոքր ինչ յետոյ եւ զազգակից զմարմինն առեալ, որով եւ զանտիսն իմաստասիրեաց յայնմանէ, որ ետն եւ հաւատաց յերկրէն, զոր գիտէ զաւրինակն ինքն կապողն եւ լուծանող աստուած: Նովաւ հանդերձ ժառանգէ զանտի փառսն, եւ զոր արինակ, շարշարանացն ընդ նմա հաղորդեցաւ յաղագս տնակցութեանն, նոյնպէս եւ ի վայելչականացն նմա տայ բովանդակ ի նա ծախելով եւ լինելով հանդերձ նովաւ մի հոգի, եւ միտք, եւ աստուած՝ ընկղմեալ ի կեանսն մահկանացուիս եւ հոսեցելոյ: Լո՛ւր որպիսի ինչ յաղագս ի միասին կառուցման ոսկերացն եւ ջլաց իմաստասիրի աստուածայնոյն Եզեկիելի*, որքան ինչ
 25 զկնի նորա աստուածայնոյն Պաւղոսի վասն երկրաւ, որ խորանիս եւ անձեռագործ տաճարի, միոյ լուծելոյ, եւ միւսոյն կացելոյ մնացելոյ ի յերկինս**, եւ ի մարմնոյս || զմերկանալն զգենով զտէրն*** լեալ ասէ, եւ հանդերձ սովաւ զկեանսն իբրեւ զհեռաւորութիւն ողբայ եւ նորին աղագաւ փափաքէ եւ ճեպի ի լուծումն: Ընդէ՞ր կարճամտեմ ի յուսացեալսն: Հի՞մ լինիմ ժամանակեայ: Կացից մնացից հրեշտակապետին ձայնի, վերջնում փողոյն, երկնի փոփոխմանն, երկրիս փոխանորդութենէ, տարերցս ազատութեան, աշխարհի ամենայնի վերստին նորոգման****: Յայնժամ զԿեսարիոս տեսից, ոչ եւս գնացեալ,

* Հմմտ. Եզեկ., Լէ, 3:

** Հմմտ. II Կորն., Ե, 1:

*** Հմմտ. II Կորն., Ե, 6:

**** Հմմտ. I Կորն., ԺԵ, 52:

ոչ եւս բերեալ, ոչ եւս ողբացեալ, ոչ եւս ողորմելի, այլ պայ-
ծառ, փառաւոր, բարձրագոյն, որպիսի ինձ եւ յանուրջս երեւե-
ցար բազում անկամ, ով սիրելագոյն քան զեղբարսն ինձ եւ
եղբայրասէրդ, եթէ ախորժելով զայն տպաւորեալ եւ ևթէ ընդ
5 ճշմարտութեանն խառն լինել:

Ի՞նչ թողլով ողբսն, յիս ինքն հայեցայց՝ մի գուցէ ողբոց
արժանաւոր զանխլարար բերիցեմ եւ զիմ ինքեան գիտեցից:
«Որդիք մարդկան վասն զի փոփոխի առ ձեզ բանս, մինչեւ յե՞րբ
ծանրասիրտ եւ թանձրացեալ մտաւք, ընդէ՞ր սիրէք զնանրու-
10 թիւն եւ հայցէք զստութիւն»*: Մեծ իմն զաստի զկեանս եւ
զսակաւսս զայսոսիկ զաւուրս բազումս կարծէ՞ք, եւ զբաժա-
նումն ի լծակցութենէս զողջունելին եւ զյոյժ ախորժելին՝ իբրեւ
ի ծանուէ ումեքէ եւ ի սարսափելոյ ի բաց դառնա՞յք: Ո՞չ ծա-
նիցուք զմեզ ինքեանս, ո՞չ զերեւելիսս ընկեսցուք, ո՞չ յիմա-
15 նալիսն հայեսցուք, ոչ եւս տրտմել պարտ է: Հակառակ նմին
տխրեսցուք պանախտութեանս երկայնութեամբ** ըստ աւ-

A 24v տուածայնոյն Դաւթայ ||, որ խորանս խաւարի եւ տեղի շար-
շարանաց***, եւ տիղմ անդընդոց, եւ ստուերս մահու, որ
աստս են կոչել է, վասն զի յամեմք ի գերեզմանս զորս բերե-
20 քըս, զի իբրեւ մարդիկ մեռանիմք մեղացն մահու՝ աստուած
լեալք: Յայսմանէ ես երկնչիմ յերկեղէ՝ ընդ այս ի գիշերի եւ ի
տուրնջեան հոգամ, եւ ոչ ներէ ինձ շունչ կլանել անտի փառքն,
եւ որ անդ են իրաւունքն: Մինչ զի լքեալ լինիմ առ ի կարել ինձ
ասել՝ փափաքեա փրկութեան քում անձն իմ****: Եւ յոմանց սար-
25 սափեմ եւ ի բաց դառնամ, բայց յայնմանէ ոչ երկնչիմ՝ մի
գուցէ մարմինս ինձ՝ այս ցնդեալ եւ ապականեալ՝ ամենեւին
կորիցէ, մի գուցէ աստուծոյ ստեղծուած փառաւորս (վասն զի
փառաւոր է ուղղելովն, որպէս անպատուի մեղանշելովն), յո-
րում բան, արէնք, յոյս զնոյն ընդ անբանսն անարգութեամբն
30 դատապարտեսցի եւ ոչ ինչ առաւել յետ որոշելոյն ի լծակցու-
թենէն, յորոց պարտ էր շարեաց եւ անտի հրոյն արժանաւորաց:
Ի՞նչ Երանի եթէ սպանանէի՞ զանդամս զերկրաւորս*****, ե-

* Սաղմ., Դ, 3:

** Հմմտ. Սաղմ., ՃԺԹ, 5:

*** Հմմտ. Սաղմ., ԿԸ, 3:

**** Հմմտ. Սաղմ., ՃԺԸ, 81:

***** Հմմտ. Կողոս., Գ, 5:

րանի եթէ զամենայն հոգովն ծախէ՞ի ընդ նեղն եւ որ սակա-
 ւուցն գնալի է ճանապարհորդելով* ոչ ընդ լայնն եւ ընդ ար-
 ձակն, որպէս զի զկնի այնորիկ պայծառ եւ մեծ եւ բարձրագոյն
 քան զարժանաւորութիւնն էր յոյս: «Զի՞նչ է մարդ, զի՞ յիշես
 5 զնա»** զի՞նչ նոր յիս խորհուրդս: Փոքր եմ եւ մեծ, խոնարհ
 եւ բարձր, մահկանացու եւ անմահ, երկրաւոր եւ երկնային: Այ-
 նոքիկ հանդերձ ստորին աշխարհաւս, այսոքիկ ընդ աստուծոյ,
 A 25Ե նոքա ընդ մարմնոյս, սոքա || ընդ հոգոյն: Ընդ Քրիստոսի թա-
 ղիլ ինձ պարտ է, ընդ Քրիստոսի յառնել, ընդ Քրիստոսի ժա-
 10 ուանգել, որդի լինել աստուծոյ, աստուածայինքն տեսանէք: Ուր
 յառաջանալովն ի վեր եհան, զմեզ բանս: Փոքր ինչ եւ շնորհ խոս-
 տովանիմ ախտիս, որով զայսոսիկ իմաստասիրեցի, եւ յաղագս
 որոյ մանաւանդ ցանկացող եղէ աստ ի վեր յառնելոյս: Զայս
 մեզ մեծ խորհուրդն կամի, զայս մեզ, որ մարդն եղեւ յաղագս
 15 մեր եւ ախքատացաւ աստուած, զի ձգեսցէ զմարմինն եւ վերըս-
 տին կացուցէ զկերպարանն, եւ միւս անգամ ստեղծցէ զմարդն,
 զի լինիցիմք ամենեքեան մի ի Քրիստոս եղելովն ամենայն
 յամենայնի մեզ կատարելապէս, որքան ինչ է ինքն, որովք այ-
 ժըմ ի մեզ գտանի մարմնովք եւ մարդկութեամբ, զի մի եւս ի-
 20 ցեմք արու եւ էգ, բարբարոս, սկիւթացի, ծառայ, աղատ***,
 որք են մարմնոյս ծանաւթութիւնք: Այլ միայն բերիցեմք ի մեզ
 յինքեանս զաստուածային կերպարանն՝ յորմէ եւ ի յոր եղար,
 այնքան ի նմանէ պատկերեալք եւ տպաւորեալք, մինչ զի եւ
 զայնմանէ միայն ծանուցեալք:

25 Ի՞ Եթէ էաք որպէս յուսամք, ի շնորհս մեծին աստուծոյ
 մեծապարգեւին մարդասիրութեան, որ փոքր ինչ հայցէ եւ մե-
 ծամեծս շնորհէն այժմ, եւ առ յապա ժամանակն, որք հարա-
 զատաբար զնա սիրենն, ամենայնի ժուժկալելով, ամենայնի
 համբերելով**** յաղագս որ առ նա սէրն է եւ յոյս: Ի վերայ ա-
 30 մենայնի գոհանալ (ի) յաջ եկաց միանգամայն եւ յահեկաց, հեշ-
 տալեացն ասեմ տրտմականաց, վասն զի եւ զայնոսիկ փրկու-
 թեան զէն գիտէ բազում անգամ բանս, նմա աւանդեսցուք զմեր
 զանձինս, զյառաջագոյն վախճանեցելոցս, իբրեւ ի հասարա-

* Հմմտ. Մատթ., է, 14, Հմմտ. 13:

** Սաղմ., Ը, 5:

*** Հմմտ. Գաղատ., Գ, 28:

**** Հմմտ. I Կորն., ԺԳ, 7:

A 25v կաց ճանապարհի պատրա||ստեցելոցն, զոր եւ մեք արաս-
 ցուք: Աստի զբանս դադարեցուցուք, այլ եւ դուք՝ զողբսդ, ի գե-
 րեղմանն արդէն իսկ ճեպեսցուք ի ձեր, զոր պարգեւ ունի առ
 ի ձէնջ Կեսարիոս, տխրական եւ միայն ծնողացն պատրաստե-
 5 ալ, եւ ծերութիւն ըստ ժամանակի, բայց մանկան եւ տղայոյ
 պարգեւեալ ըստ ոչ կարծեաց, եւ ոչ հեռի ի կարծեաց, զորոյ
 զհետ երթան մերքս: Ով տէր ամենեցուն եւ արարիչ, եւ առա-
 ւելապէս այսորիկ ստեղծուածոյ: Ով աստուած ամենեցուն եւ
 տէր, ե՛ւ հայր ե՛ւ ուղղիչ: Ով կենաց եւ մահու տէր: Ով հոգոյ
 10 մերոց շտեմարան եւ բարեկամ, «որ առնես զամենայն»* եւ
 փոփոխեալ յաւրինես արուեստավոր բանիւդ ըստ ժամանակի,
 եւ որպէս դու գիտես խորին քով իմաստութեամբդ եւ մատա-
 կարարութեամբ, այժմ ընկալ զԿեսարիոս՝ պտուղ մերոյ գնա-
 լոյս՝ եթէ զվերջին առաջին թողլով բանիցս որովք ամենայն
 15 բերեալ լինի: Ընկալցիս եւ զմեզ յետոյ ի դեպ ժամանակի՝ մա-
 տակարարեալք ի մարմնիս որքան արդեւք իցէ աւգտակարա-
 դոյն: Եւ ընկալցիս յաղագս քոյոյ յերկեղին «պատրաստեալս
 եւ ոչ խոռվեալս»** եւ ոչ խուսափեալս ի վերջնում աւուրն, եւ
 բռնաւորութեամբ աստի ի բաց խզեալս, որ է աշխարհասիրաց
 20 հոգոցն ախտ եւ մարմնաւորաց, այլ յաւժարեալս առ այդր կե-
 անսդ երկայն յաւիտեանդ եւ երեւելիդ ի Քրիստոս Յիսուս ի
 տէր մեր, որում փառք յաւիտեանս յաւ[իտենից]: [Ամէն]:

* Ամովս, Ե, 8:

** Սաղմ., ՃԺԸ, 60:

22 որում... յաւիտենից] B

ՇԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

Ձևագրի համարը	Ժամանակը	Վայրը	Գրիչը	Անվանումը	Օգտագործված էջերը
1	2	3	4	5	6
5602	1177	Հաղպատ	Դաւիթ Բո- րայրեցի	Դ. Բորայրեցի՝ Մեկնութիւնք...	1ա—272բ
6363	1181	—	Յովհաննէս	Ժողովածու	85բ, 117ա—130բ
4146	1194	—	Աթանաս	«Առ որս» ճառք	1ա—242ա
948	1196	—	Յովհաննէս (որդի Սար- գիս բժշկի)	Ժողովածու	37բ—47ա, 187ա— 231ա
946	ԺԲ	—	Գրիգոր, Վա- հան, Վա՞րդ. Յովանէս	Գր. Աստուածա- բան՝ Ճառք	1ա—305բ
1522	ԺԲ	Յոհանա- վա՞նք	Յոհաննէս	Ճառքնտիր	375ա—381բ 385բ—386բ
1897	ԺԲ	—	Հայրապետ	Ժողովածու	79ա—107բ, 198ա— 283բ
2600	ԺԲ	Ամիրդօլու վանք (Բ)	Գրիգոր Գ կաթողիկոս, Վարդան (Բ)	Գր. Աստուածա- բան՝ Ճառք	1ա—255բ
3782	ԺԲ	—	Գրիգոր	Ճառքնտիր	12ա—13ա, 38բ— 51ա, 67ա, 67բ— 73ա, 104բ—109բ 156ա—163ա, 181բ —184բ
5607	ԺԲ	—	Ստեփանոս	Ժողովածու	81բ—87ա, 173ա— 192բ
7729	1200—1202	Աւագ վանք (Երզնկա)	Վարդան Կարնեցի	Մշո Ճառքնտիր	39բ—42ա, 151ա—բ, 185ա—187ա, 198բ —199ա, 205ա— 212բ, 300ա—303բ
2101	1223	Խորանաշատ վանք	Ստեփանոս	Ժողովածու	7ա—21բ
823	1226	Երզնկա	Աղթամարցի Յովանէս	«Առ Վնաւարկու- թիւն»	1ա—139բ 152ա— 171ա
8467	1226—1629	Իլով	Եսայի Սե- րաստացի, Ղուկաս Անանուն	Ժողովածու	175բ—176ա
6196	1227—1655	Խլա՞թ, Խարձի անապատ(Ա) Վերինգետ գիւղ (Բ)	Ներսէս (Ա) Սարգիս (Բ)	Ճառքնտիր	158ա—172ա

1	2	3	4	5	6
472	1229	—	Մարկոս	Ժողովածու	65 ք
1204	1231—1234	Սանահին	Մաթէոս	Ժողովածու	279ա—308ք
470	1260—1270	—	Վարդան կի- լիկեցի	Ժողովածու	3ա—116ա
5518	1271	Վանկունք վանք՝ ընդ հովանեաւ Ս. Աստուա- ծածնայ, Ս. Սարգսի և Ստեփա- նոս Նա- խավկայի վանուց	Յովանէս սարկաւազ	Ժողովածու	1ա—24ք
579	1276, 1279	—	Յովհաննէս, Ներսէս	Ժողովածու	27ա—72ա, 62 ք 118ա—131ք
5595	1279	Եղիազարու վանք	Ստեփանոս	Բարսեղ կեսա- րացի՝ Մատե- նագրու թիւնք	333ք—340ա, 344ք 351 ք
5254	1280	Դեղձուտի վանք (Մահ- կանաբերդ) Հաղրատ	Աւետիս, Գէ- որդ	Ժողովածու	93—145ք
1324	1281	—	Յոհան, Բար- սեղ, Աբրա- համ	Ժողովածու	443ա—451ք
1500	1282-ից առաջ	Գեղարդայ վանք	Մխիթար Այ- րիվանեցի	Ճառքնտիր	724ք—879ա
4207	1284	Ատանա	Կոստանդին Քուռաթ	Ժողովածու	126ա—ք
822	1285	—	Եզեկիէլ սարկաւազ (Գ մաս)	Բարսեղ կեսա- րացի՝ Պահոց դիրք	172ա, 183ա
500	1293—1305, 1665	Սիօն (Բ)	Վարդան (Ա) Եղիար (Բ)	Ժողովածու	61ք—62ք, 93ք. 307ա—327ք
59	ԺԳ—ԺԴ	—	Յոհ[աննէս] Երզնկացի, Ստեփանոս	Ժողովածու լուծմանց	42ա—153ա
715	ԺԴ	Ս. Պօղոս ա- նապատ (Ա)	Մարտիրոս Յոհանէս, (Ա) Դանիէլ (Բ)	Ժողովածու	45ք—51ք
1525	ԺԴ	—	Յովաննէս, Գէորդ	Ճառքնտիր	16ա—18ա, 88ա—ք, 186ա—ք, 404ա— 407ք
1879	ԺԴ,	—	Մովսէս	Գիրք պատճա- ռաց	159ա—229ա, 256ա —ք, 258ա—259ա
2601	ԺԴ, ԺԷ	—	Հեթում (Ա) Բարաղամ (Բ)	Ժողովածու	69ք—73ա, 117ք— 123ա
3710	ԺԴ	—	Յովհաննէս Աբբայեղ- բայր, Թո- րոս Ստե- փանոս Վահկացի	Ժողովածու	363ա—388ք

1	2	3	4	5	6
4150	ԺԳ	—	Ղազար	Ժողովածու	6ա—22բ, 43ա, 48բ —50բ, 52ա—54բ, 59բ, 76ա—բ
5443	ԺԳ	—	Վարդան, Ստեփաննոս	Ժողովածու	126բ—133բ, 402ա —բ
5596	ԺԳ	—	Աստուածա- տուր	Ժողովածու	4բ—48բ, 98բ—216բ
6120	ԺԳ	—	Ոհ [անէս]	Ժողովածու	147բ—162բ
598	1303	—	Աշակերտ Յովհ. Եր- զընկացւոյ	Ժողովածու	7ա, 8ա—բ, 19բ, 22բ—25բ, 28բ— 54բ, 99ա—101ա, 115բ—117բ
966	1304	Վժանայ վանք	Ներսէս	Մաշտոց	294ա—բ
4149	1304—1305	Երզնկա	Կարապետ, Սարգիս, Շահինշահ	Ժողովածու	139բ, 140ա—141բ, 142ա—բ, 143բ, 144ա
4234	1307	—	Պաշիկ	Ժողովածու	1ա—194բ
627	1314	Ճանճի խոռոչ	Պաշիկ, Երբիանոս	Գիրք լուծմանց	41ա—116բ, 121ա— 152բ
3651	1315—1615	Ս. Կարապե- տի վանք (Տարօն)	Առաքել (Ա), Աբրահամ (Ա) Մկրտիչ (Բ)	Ժողովածու	281ա—282ա
732	1322	—	Մկրտիչ	Ժողովածու	37ա—41ա, 212ա, 149ա, 315ա— 324ա, 332ա— 342ա
7441	1322	—	Վարդան, Աբ- րահամ	Ճառընտիր	177ա—178ա, 375բ —379բ
1138	1347	Սիս	Դաւիթ, Մը- կըրտիչ դպիր	Ժողովածու	215բ—216ա, 351ա —բ, 376բ—383ա
7443	1352—1353	Քիմճակ (Ղըիմ, Ա), Իլով (Բ)	Անտոն, Մել- քիսեդ (Ա), Յովհաննէս (Բ)	Ճառընտիր	4բ—9բ, 185բ— 189բ, 286բ, 511ա —512բ, 513ա—բ, 544ա—բ
5228	1364	—	Ալեքսան	Ժողովածու	134ա—136բ
3937	1370	—	Ստեփաննոս	Ժողովածու	68ա, 69բ—71բ, 119բ—120ա
6036	1371	—	Մկրտիչ, Գրիգոր	Ժողովածու	205բ
1980	1391	Եզընկայ	Մովսէս, Ղա- զար	Ժողովածու	293բ—340բ,
1555	1397	Երուսաղէմ	—	Ժողովածու	191ա—197բ, 198ա —210բ
60	ԺԴ	—	—	«Առ որս» ճառք	6ա—156ա
437	ԺԴ	Գլաճո՞ր	Եսայի Նշե- ցի, Սար- գիս, Սիմէօն	Ժողովածու	68ա—121ա, 330բ— 331ա
596	ԺԴ	—	—	Ժողովածու	181ա—188բ
626	ԺԴ	Ճանճի խոռոչ	Պաշիկ	Ժողովածու	28ա—133բ
866	ԺԴ	Փոսոյ վանք	Ստեփաննոս	Ճառընտիր	6բ—17բ, 161ա— 163բ, 180ա—182ա
1523	ԺԴ	—	Յովանէս (Ա), Աւետ, Գրի- գոր (Բ)	Ճառընտիր	5ա, 20ա—21բ, 25ա —31ա, 145ա—158բ, 301բ, 653ա—654ա

1	2	3	4	5	6
1649	ԺԴ, ԺԵ, ԺԶ	—	—	Ժողովածու	3բ—8բ, 396ա—400բ
1657	ԺԴ	Գլաձո՞ր	Գրիգորէս Երզնկացի, Բարսեղեքէց	Ժողովածու	142ա—304ա
1981	ԺԴ	—	Կիւր[ակո՞ս], Յովանէս, Մուխթիկ	Ժողովածու	200բ, 243բ—246ա
2173	ԺԴ	—	—	Յովհաննէս Եր- զընկացի՝ Մատե- նագրութիւնք	1ա—394բ
2549	ԺԴ	—	Յոհան Եզըն- կայեցի	Ժողովածու	183բ—189բ, 240ա —բ
2695	ԺԴ	—	Երեմիա	Յայտմաւորք	15ա—17ա
3787	ԺԴ	—	Գրիգոր, Սոս- թենէս, Աւագ	Ճառընտիր	38բ—51ա, 160ա— 163ա, 181բ—184բ, 196ա—198բ, 290ա —291ա, 316բ—317ա
4676	ԺԴ	—	Յովհաննէս, Ստեփաննոս սարկաւազ	Ճառընտիր	12ա—17բ, 185ա— 187ա
4682	ԺԴ	—	Հայրապետ, Կարապետ	Ճառընտիր	157ա—161ա
4709	ԺԴ	—	Յովանէս Դէ- ոսկորոս	Ճառընտիր	134բ—137ա
4785	ԺԴ	—	—	Գանձարան	97բ—102բ
7785	ԺԴ	Ղրի՞մ	Յովհաննէս	Գանձարան	97բ—101բ, 102ա, 155բ—156բ
8179	ԺԴ	—	Գրիգոր	Ժողովածու	19ա—20ա, 209ա, 280բ—285բ, 289ա —292բ
1524	1401	Վարագ	Աւետիս սար- կաւազ, Յով- անէս քա- հանա, Յո- վանէս կրօ- նաւոր	Ճառընտիր	54բ—56ա, 170բ— 173ա, 329ա—338բ, 698բ—701ա
4670	1401	Ոստան	Ծերուն	Ճառընտիր	166բ—168ա, 304ա— 312ա
1521	1404	—	Գրիգոր	Ճառընտիր	69ա—72ա
639	1409	—	Յոհաննէս	Ժողովածու	174բ—178բ
994	1409	Աղթամար	Դանիէլ	Ճառընտիր	198ա—199ա
9474	1424	Կարմուրջ գիւղ	Կարապետ	Ժողովածու	12ա—17ա
2678	1426—1476	—	Մատթէոս	Ժողովածու	131բ—133բ
996	1442	Սերկէիլի գիւղ	Ոհաննէս մի- այնակեաց	Ճառընտիր	33ա—35ա, 40բ— 49բ, 61բ—68բ
993	1456	Վերին Նորա- վան	Մատթէոս	Ճառընտիր	5ա—6բ, 24բ—25ա, 136բ—146ա
4696	1458	—	Աւագտէր, Աստուածա- տուր, Յով- հաննէս	Յայտմաւորք	297ա—299ա

1	2	3	4	5	6
115	1463, 1688	Աւագ վանք (Ա) նոր Զուղա՞յ (Բ)	Ստեփանոս (Ա), Աղէքսանդր Զուղայեցի (Բ)	Ժողովածու	2ա, 3ա—172բ, 173ա
6268	1474	—	Զաքէոս, Գալուստ, Յակոբ, Սրապիոն	Յայտնաւորք	287բ—290ա
4869	1482	Կտուց	Յովհաննէս	Ճառընտիր	140ա—146ա
113	1483	—	Յուսիկ	«Առ որս» ճառք	1ա—159բ
5785	1483	Գոմաց վանք (Բաղէշ)	Կարապետ Բաղիշեցի	Գանձարան	113ա—115բ
3275	1494	Կապուխ վանք (Երզնկա)	Մաղաքիա Բաբերթացի	Ժողովածու	2ա—258ա
3495	1495—1496	Եկեղեցաց դաւառ	Գրիգոր Տարօնցի, Կարապետ Բաղիշեցի	Ժողովածու	1ա—141բ
114	1495—1497	Կապուխ անապատ (Երզնկա)	Մաղաքիա Բաբերթացի	Ժողովածու	1ա—148բ
112	1497	Կալիփոսի վանք (Երզնկա)	Յոհաննէս	Ժողովածու	1ա—182ա
631	ԺԵ	—	Գրիգոր Սամսոնեցի	Ժողովածու	19բ, 44բ, 92բ—97բ, 152ա—180ա
1131	ԺԵ	—	Շահիկ	Ժողովածու	2ա—35բ, 149բ—150բ
1267	ԺԵ	—	Գէորգ, Պետրոս	Ժողովածու	23ա—բ, 24ա, 25բ, 28ա—32բ
1712	ԺԵ	—	Սահակ	Ժողովածու	210բ
1931	ԺԵ	—	Գրիգոր	Ժողովածու	177բ—180բ, 195ա—237բ
3791	ԺԵ	—	Կարապետ, Տէր Պօղոս, Աբղուսակի	Ճառընտիր	126բ—128ա, 252ա—261ա
3939	ԺԵ	—	Դիմէս	Ժողովածու	104ա—139ա, 162բ
4132	ԺԵ	—	Մարգարէ վարդապետ	Ժողովածու	113բ—147բ, 273ա—353ա
4505	ԺԵ	—	—	Ճառընտիր	294ա—304ա
4677	ԺԵ	—	Խաչատուր	Ճառընտիր	143բ—145բ
4802	ԺԵ	Տ2 ^ո դ (Ռըշտունիք)	Ստեփանոս սարկաւազ	Ճառընտիր	91բ—94ա
4803	ԺԵ	—	Գրիգոր	Ճառընտիր	94ա—95բ
5406	ԺԵ	—	Խաչատուր	Ճառընտիր	6ա—14բ
5657	ԺԵ	—	Խաչատուր (Ա), Յովհաննէս Կաֆացի (Բ)	Ժողովածու	155ա—207ա
6608	ԺԵ	—	Յոհաննէս (որդի Ամիրոսկերչի)	Ճառընտիր	159ա—164բ
9164	ԺԵ	—	—	Ժողովածու	1ա—14բ

1	2	3	4	5	6
9244	ԺԵ	—	—	Ժողովածու	74ա—76ա
6527	1528	Ղուլթիկ	Ստեփանոս	Գանձարան	204բ—207ա
4729	1578	ԳԻԴ ԽԼԻԹ	Մարտիրոս, Սարգիս, Միլտիշ, Յոբ, Աս- տուածա- տուր	Յայմաւուրք	291բ—293բ
4716	1581	ԽԼԻԹ	Սարգիս, Ներ- սէս, Վար- դան, Յով- հաննէս	Ճառընտիր	62բ—63բ
3078	1585—1608	Կարկան	Աստուածա- տուր, Յով- սեփ Մոնո- ղոն, Ալէք- սան, Պա- շատուր դը- պիր	Ժողովածու	154ա
10326	1587	Համիթ	Աստուածա- տուր, Յո- վանէս	Յայմաւուրք	280ա—281բ
892	ԺԶ	—	—	Ժողովածու	225ա—230բ
3206	ԺԶ	—	Մինաս, Պա- շատուր	Ժողովածու	128բ, 171ա—176բ
3246	ԺԶ	—	—	Ժողովածու	34բ—38բ
3406	ԺԶ	—	—	Ժողովածու	96ա—101բ
2672	1607	Կաֆայ	Ստեփաննոս Թոթաթցի	Գանձարան	59ա, 89բ—90ա
84	1614	—	Չաքարիա Երզնկացի	Ժողովածու	253ա—255բ
3672	1609, 1623	—	—	Ժողովածու	122ա—129ա
3506	1615, 1697	Լեհաստա՞ն (Ա), Կարէնէ (Բ)	Չատիք Պօղ- տանի, Կա- րապետ (Ա), Մինաս (Բ)	Ժողովածու	23բ—28բ
99	1617	Լէվ	Չատիկ Պօղ- տանի որդի	«Առ որս» ճառք	6ա—201բ
1480	1617	Բաղէշ	Վարդան շի- զանցի	«Գիրք պատճա- ռաց և լուծ- մանց»	109բ—242ա
3081	1617	Կաֆայ	Չաքարիա Երզնկացի	Ժողովածու	255ա—258ա
874	1618	Կարմիր վանք	Վարդան	Ժողովածու	94ա—96բ
6617	1618	Շօշ	Աւետիս	Ժողովածու	247բ—251ա
100	1619	Իլո՞վ	Սիմէոն Չա- մոսցացի	Լուծմունք «Առ որս» գրոցն	1ա—131բ
502	1619	Լով	Յոհաննէս	Ժողովածու	92ա—101բ, 102ա, 115բ—138ա, 187բ —190բ

1	2	3	4	5	6
5631	1620	Ս. Հրեշտակապետացի վանք (Սեբաստիա)	Խաչատուր	Ժողովածու	47բ—52բ
728	1621	Շատախ գիւղ (Գանձակ)	Ոհանէս	Ժողովածու	23ա—28բ
834	1621	Սպահան	Գասպար	Ժողովածու	123ա—130ա
2004	1623	—	Մկրտիչ սարկաւազ	Ժողովածու	55ա—60ա
614	1625	—	Սիմոն	Ժողովածու	193ա—195ա
4288	1630	Նոր Զուղա՞յ	—	Ժողովածու	219ա—236ա
697	1631	Սէշով (Սուշավա)	Ակորչայ Սոշովցի, Վարդան	Ժողովածու	102ա—114ա
6708	1635	—	—	Ժողովածու	123ա—133բ, 251ա—257բ
45	1642	Լիմ	Սարգիս Եղեւսիացի	Ժողովածու	106ա—115ա
588	1655	Ստ. Նախավկայի վանք (Շամբ)	Միքայէլ	Ժամագիրք	307ա—312ա
3979	1659	Ղուլթիկ գիւղ (Բաղէշ)	Պետրոս	Ժողովածու	161բ—164ա
9322	1659	Քորբէզ գաղաք	Մարտիրոս	Ժողովածու	98ա—110բ
7697	1660	—	Մկրտիչ կղերիկոս զբրշապետ	Հարցմունք Բարսղի...	1ա—48ա
527	1663	—	Տրդատ	Ժողովածու	90ա—97ա
613	1664	—	Զաքարիա	Ժողովածու	92բ—97բ
83	1664	Սպահան	Հէրապետ Զուղայեցի, Յովանէս	Ժողովածու	311ա—333բ, 359ա—367բ
7295	1666, 1698	—	Սամուէլ (Ա), Յովհաննէս (Բ)	Ժողովածու	100ա—104ա
3422	1668	—	Ղուկաս, Մելգոն	Ժողովածու	239ա—240ա, 242ա—250բ
497	1671	Ազուլիս (Թովմա առաքեալի վանք)	Սահակ, Սարգիս, Ղազար	Ժողովածու	458ա—463բ, 474ա—477ա
8507	1671—1673	—	Մարկոս	Ժողովածու	10բ—13բ, 27բ—36բ, 38ա—53բ, 97բ—100բ
799 3	1672	—	Ալէքսան (Ա)	Ժողովածու	155ա—156բ
149 5	1674—1684	Կ. Պօլիս	Եփրեմ	Ժողովածու	85ա—87ա
735 7	1675—1676	Կաֆայ	Խասսէլի	Յայտնաւորք	255ա—256բ
73 7	1680, 1711, 1717, 1719	Բաղէշ (Ա), Կաֆայ, Նընձուց վանք (Բ), Գլահայ վանք (Դ)	Տէր Աբրահամ (Դ), Սարգիս, Գրիգոր Բաղիշեցի (Բ)	Ժողովածու	37ա—39ա

1	2	3	4	5	6
1984	1682	—	Աստուածատուր (աշակերտ Աղէքսանդր կաթողիկոսի)	Ժողովածու	65բ—68բ
8608 2191	1686—1687 1687	Նոր Զուղա Մերաին (Ա), կտուց, Ս. Աստուածածին, Ամբրդօլու վանք (Բ)	Յովհաննէս Իգնատիոս (Ա), Մարտիրոս Համթեցի (Բ)	Ժողովածու Ժողովածու	201բ—240բ 143ա—145բ
61	1688	Նոր Զուղա՝	Յովհաննէս Իսապահանցի	«Առ որս» ճառք	209ա—266ա
8194	1688	Սպահան	Աւետ	Ժողովածու	136ա—164ա
941	1689	Երուսաղէմ	Տէր Գրիգոր Եփրեմ	Ճառքնտիր	172բ
2245	1689	—	Եփրեմ	Ժողովածու	238բ—241ա
1804	1690	Էջմիածին	Յովսէփ	Ժողովածու	332ա—342բ
8461	1690	Տաթև (Ա)	Աստուածատուր (Ա)	Ժողովածու	42ա—43բ
2251	1694—1698	—	Յովհաննէս	Ժողովածու	157բ—158ա
3006	1695	Քաշեր զիւղ (Գողթն)	Աստուածատուր Ըսպահանցի	Ժողովածու	6ա—11ա, 351բ
4765	1695	Կ. Պօլիս	Կարապետ	Ժողովածու	42բ—69ա
98	1696	Կ. Պօլիս	—	«Առ որս» ճառք	5ա—271բ
2909	1696	—	Սրապիոն	Ժողովածու	105բ—108ա
58	ԺԷ	—	—	Ժողովածու	1ա—292ա
567	ԺԷ	—	Սահակ, Մովսէս	Ժողովածու	123բ
571	ԺԷ	—	—	Ժողովածու	61ա—69ա
576	ԺԷ	—	Գրիգոր, Պետրոս	Ժողովածու	153բ—154բ
621	ԺԷ	—	—	Գիրք պատճառաց և լուծմանց	1ա—57բ, 216ա—244բ, 251ա—258բ, 259ա—328բ
706	ԺԷ	—	Ղազար	Ժողովածու	10ա—14բ, 195ա
1127	ԺԷ	—	—	Ժողովածու	117ա—133ա
1798	ԺԷ	—	—	Ժողովածու	409ա—410բ
2041	ԺԷ	—	Կարապետ, Էրեմիայ	Ժողովածու	72բ—76ա
2166	ԺԷ	—	—	Ժողովածու	81բ—166բ
2168	ԺԷ	—	—	Ժողովածու	133ա—138ա
2566	ԺԷ	—	Կիրակոս	Ժողովածու	150բ—157ա
3076	ԺԷ	—	—	Ժողովածու	124բ
3177	ԺԷ	—	Ազարէ	Ժողովածու	64ա—67բ
3237	ԺԷ	—	—	Ժողովածու	135բ—144ա
3260	ԺԷ	—	Մարկոս Նորընծա	Ժողովածու	178բ—180բ
3276	ԺԷ	—	—	Ժողովածու	34բ—35բ, 44ա—49ա, 50ա—53ա, 63բ—64բ, 73բ—76ա, 248ա—285բ

1	2	3	4	5	6
3680	ԺԷ	---	Յուսիկ ջահանդալ	Ժողովածու	177բ—186բ
3941	ԺԷ	---	Նահապետ Շոռոթեցի	Ժողովածու	290ա
4633	ԺԷ	---	---	Ժողովածու	69բ—70բ
5032	ԺԷ	---	---	Ժողովածու	205բ—221ա
5082	ԺԷ	---	---	Ժողովածու	151ա—179ա
6643	ԺԷ	---	Ղուկաս	Ժողովածու	217բ—220բ
6476	ԺԷ	---	---	Ժողովածու	285ա—բ
7102	ԺԷ	---	Ստեփան Դաշտկոնճալ	Ժողովածու	221ա—223բ
7170	ԺԷ	---	---	Բանք խրատականք	49բ—51բ
7276	ԺԷ	---	Գրիգոր	Ժողովածու	237ա—241ա
8076	ԺԷ	---	---	Ժողովածու	224բ—225բ, 226ա
8191	ԺԷ	---	---	Ժողովածու	—բ
8261	ԺԷ	---	Թումա	Ժողովածու	212բ—214ա
8565	ԺԷ	---	---	Ժողովածու	222ա—229ա
6146	1700	Նանէնց գիւղաքաղաք	Ներսէս	Ժողովածու	19ա—23բ 18բ—24ա
3413	1709—1710	---	Յակոբ Թոխատցի	Ժողովածու	4ա—12բ
2271	1724	Ասպահան	Աւետիս	Ժողովածու	108բ—110ա
7489	1725—1729	Երուսաղէմ, Կ. Պօլիս	Մարտիրոս	Ճանրնտիր	27բ—37բ, 54ա—62ա, 152բ—153ա, 156ա—158ա
1660	1734	Յովհաննավանք	---	Ժողովածու	170ա—181բ
8215	1734	Կ. Պօլիս (Ա.)	Կարապետ (Ա.)	Ժողովածու	52ա—123բ
1466	1750	Կարին	Մեսրոպ Գանձակեցի	Մեսրոպ Գանձակեցի՝ Մեկնութիւն «Առորս» և «Գրիտոս ծնեալ» ճառից...	1ա—384բ
6988	1763—1764	Թէոդուպօլիս	Մելքոն Կարնեցի	Ժողովածու	3ա—146բ
7943	1787	Կ. Պօլիս	Յարութիւն Վանեցի	Գր. Աստուածաբան՝ ճառք	5ա—135բ
2220	1789—1790	Էջմիածին	Ջաքարիա սարկավագ	Ժողովածու	197բ—201ա
436	1790	Կ. Պօլիս, Էջմիածին	Բրարիոն, Գէորգ	Ժողովածու	180ա—182բ
462	ԺԸ	---	---	Ժողովածու	24բ—25ա
600	ԺԸ	---	---	Ժողովածու	133ա, 137ա, 138բ, 140ա—բ, 141բ—142ա, 143ա, 146ա, 147ա, 148ա, 149բ, 153բ, 162բ, 163ա—բ, 166ա—167ա, 169բ

1	2	3	4	5	6
729	ԺԸ	—	—	Ժողովածու	12ա—166ա, 168ա — 215բ
841	ԺԸ	—	—	Ժողովածու	12ա—37բ
1960	ԺԸ	—	—	Ժողովածու	14ա, 17ա, 18ա, 21ա, 25ա, 31ա, 38ա, 46ա, 83ա, 85ա
3284	ԺԸ	—	Արիստակէս	«Առ որս» ճառք	1ա, 2ա—163ա
3295	ԺԸ	—	Եղեկիէլ	Ժողովածու	338ա, 348ա—բ, 357ա
3458	ԺԸ	—	—	Ժողովածու	81ա—84բ
5244	ԺԸ	—	—	Ճառքնտիր	50բ—65ա
6051	ԺԸ	—	—	Չափաբերա- կանք	30
6577	ԺԸ	—	—	Ժողովածու	67ա—68բ
8398	ԺԸ	—	—	Ժողովածու	1ա—41բ
10310	ԺԸ	—	Մեսրոպ	Ժողովածու	1ա—8բ
1938	1816	Զմիւռնիա	—	Ժողովածու	25ա—41բ
7313	1835	Երկոտասան առաքելոց վանք	Մկրտիչ	Ճառքնտիր	77բ—88ա
2615	1850	Տիգրիս	Ստեփաննոս Դեմիւրճօղ- լեց	«Առ նաւարկու- թիւն»	3ա—91ա
9416	1883	Չանջրլու ղիւղ	Սողոմոն Ա- ւետով	Ժողովածու	7ա—17բ
2715	ԺԹ	—	Յակոբ, Յո- վակիմ	Ժողովածու	74ա—բ
2786	ԺԹ	—	—	Ժողովածու	66ա—72ա
4381	ԺԹ	—	—	Ժողովածու	22բ—23բ, 37ա—38բ
6228	ԺԹ	—	—	Ժողովածու	3բ—28ա
8914	ԺԹ	Էջմիածին	—	Ճառքնտիր	88բ
9593	ԺԹ	—	Յովհաննէս Տէրոյեց	Գր. Աստուածա- բան՝ ճառք	1—226
10067	ԺԹ	—	—	Ժողովածու	25բ

ГРИГОРИЙ НАЗИАНЗИН В ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Резюме

Монографическое исследование древнеармянских переводов сочинений одного из «трех великих каппадокийцев» — Григория Назианзина, обусловлено прежде всего той значимостью и популярностью, которую они имели в армянской литературе периода ее становления и в последующих этапах развития. Это обстоятельство, разумеется, не осталось незамеченным, и арменисты не раз обращались к переводам сочинений этого византийского писателя, особенно, когда попытались установить литературные источники отдельных армянских книжников и историографов раннего средневековья. Но отсутствие изданий переводов ощутимо ограничивало рамки текстологических сопоставлений, и многие искомые пассажи оставались невыявленными. Нередко бывало и так, что по данным Айказнанского словаря исследователи находили аналогии, заимствованные у армянских книжников словосочетания и даже отрывки, но неустановленным оставался тот подлинный текст источника, к которому они принадлежат.

Изучение около 200 рукописных единиц, содержащих переводы гомилий, писем, эпитафий и других трактатов Григория Назианзина, дало возможность проследить все аспекты проблемы, связанные с переводом и функционированием наследия писателя в армянской действительности. В средневековых комментариях к переводам, в колофонах писцов, в свидетельствах историков и народно-приписках кодексов оказалось внушительное количество интересных и важных сведений по рассматриваемым вопросам. С их помощью подкрепляются те выводы, которые получены путем филологического анализа переводов в сопоставлении с греческими оригиналами. Это представляется особенно важным при определении хронологических рамок переводов, а следовательно, и тех памятников оригинальной армянской литературы, в сюжетах, композиции, лексике и идейной направленности которых сказалось влияние трактатов Григория. Если вкратце обобщить сделанную нами работу, то можно сделать следующие выводы:

1. На разных этапах учебы и литературно-церковной деятельности Григорий Назианзин общался с представителями армянского духовенства, преимущественно же с греческими деятелями армянского происхождения. В годы учебы в Афинах он, как и Василий Кесарийский, сталкивался со студентами, которые относились к выходцам из византийской периферии с некоторой предрешенностью. В числе учителей Назианзина своим авторитетом

и влиянием на молодые умы выделялся знаменитый ритор Проересий, которому Григорий посвятил стихотворное-восхваление. В период деятельности на родине Григорию Назианзину пришлось вести борьбу против влиятельного духовного предводителя христианства в Малой Армении—Евстафия Севастийского. Эти обстоятельства в той или иной мере отразились на творчестве византийского писателя, но нисколько не повлияли на его авторитет в армянской среде, ибо все это имело место не на этнической, а на вероисповедной почве.

2. В оригинальных памятниках армянской литературы V—XII вв. Григорий упоминается или цитируется в основном как «праведный отец вселенской церкви», в творчестве которого поборники армянского монофизитства находят немало положений, которые служат подспорьем при защите догматических начал местной церкви. В произведениях последующего периода армянские писатели ему посвящают гимны и восхваления, находя в его образе идеального «отца церкви», духовнослужителя и автора достойных подражания трактатов.

3. Сочинения Василия Кесарийского, Григория Назианзина и Григория Нисского на армянский язык переводились в одних и тех же культурных центрах средневековой Армении, нередко даже в один и тот же период и порой прилежанием одних и тех же переводчиков. Этот факт иногда приводил к тому, что сочинения одного из них приписывались другому, особенно когда эти сочинения имели сходные названия или особо не было оговорено—кто из «трех великих каппадокийцев» является автором. Так, в армянской рукописной традиции автором гомилии «О Мелите Антиохийском» и «Тем, кто утверждают, будто...» выступает Григорий Назианзин, хотя достоверно известно, что оба эти сочинения принадлежат перу Григория Нисского. В источниках мы сталкиваемся и с фактом обратного порядка, когда последнему приписываются принадлежащие Григорию Назианзину сочинения. Примечательно то, что, к примеру, Стефан Сюнеци, автор VII века, располагал текстом гомилии Назианзина, к тому времени уже отнесенной к числу творений Нисского.

4. На основе армянского перевода «Вопрошения» Василия Кесарийского и Григория Назианзина известного под названием «Созерцание о вере» в последствии в армянской литературе возникли три псевдоредакции, известные в нескольких десятках рукописных экземплярах. Источниковедческий анализ показал, что создание новых редакций относится к периоду не ранее, чем XI в., ибо историк конца X века Асолик пользуется подлинным текстом и не знаком с псевдоредакциями.

5. Начиная с X в. сочинения Григория Назианзина в армянской литературе представлены в виде четырех сборников-книг, названных сообразно с заглавием первого сочинения цикла—

«Քրիստոս ծնեալ» («Христе рожденный»), «Ան որս» («Тем, которые...»), «Յաղթեցալ» («Я побежден») и «Որք յԵգիպտոսէն եկ» («Вышедшим из Египта»). Когда именно и что побудило книжников составить эти своды—трудно определить. Можно предположить, что сочинения Назианзина по циклам были представлены и в тех греческих кодексах, на основании которых осуществлялись переводы. Порядок трактатов по книгам особенно четко и тщательно представлен в знаменитом «Изборнике» Мхитара Айриванеци (XIII в.).

6. Значительная часть литературного наследия Григория переведена на армянский язык в V—VII веках. Первоисточники его переводчиками называют Мовсэса и Давида, оба известные под эпитетом «Переводчик»—«Толкователь» (բարգմանիչ, բարգմանի). Но, к сожалению, крайне скудны данные, относящиеся к обстоятельствам переводов и личности переводчиков. Следовательно, ответ на данные вопросы может быть дан исключительно историко-филологическим анализом наличных текстов. Нами установлено, что автор «Жития Маштоца» Корюн знает «Эпитафию» Гр. Назианзина и в начальной части своего сочинения пользуется ею. Исследование текстов показало, что Корюном учтены не только теоретические и литературно-сюжетные, композиционные постановки «Эпитафии», но и дословно заимствованы отдельные слова и выражения. Следовательно есть основание полагать, что он под рукой имел существующий к тому времени древнеармянский перевод трактата Григория. Если это так, то перевод можно датировать 30—40-ми годами V в., ибо само сочинение Корюна написано между 443—451 годами. Впрочем, перевод «Эпитафии» изобилует кальками греческих слов, их непосредственным заимствованием, что принято считать показателем переводческой манеры т. н. грекофильской школы. Нам кажется, что древнеармянский перевод «Эпитафии» вынуждает пересмотреть этапы и хронологию грекофильской школы, принятые в арменистике.

7. К произведениям Григория Назианзина особенно часто обращается Мовсэс Хоренаци, историк второй половины V в. В его «Истории» мы находим разного объема свыше тридцати отрывков, взятых из восемнадцати сочинений Григория. Можно с уверенностью сказать, что историк пользуется именно армянскими их переводами, однако этого не достаточно, чтобы его считать переводчиком Григория. На наш взгляд, «переводчик Мовсэс» и «занимающийся переводами» Хоренаци не идентичны. Примечательно то, что на основании присутствующих в «Истории» Хоренаци отрывков можно внести коррективы в тексты переводов. Не менее существенны такие же коррективы в обратном применении.

8. Влияние наследия Григория на армянских авторов не ослабевают и в VII—XIII вв. Однако теперь к нему обращаются не столько для назидания читателя-верующего, сколько для опровержения разнородных толков антимонофизитского склада.

В сочинениях Анании Ширакаци, Ст. Сюнеци, Ст. Асолика, Иоанна Дьякона (Саркавага), Нерсэса Благодатного (Шнорали), Гр. Отрока (Тга), Вардана Айгекци, Иоанна Ерзынкаци нами выявлено большое количество заимствований из трудов Григория, которые прочно вписались в их тексты, причем они зачастую даже не подозревают, что имеют дело с пассажами творений византийского писателя. Учет данного факта несомненно окажет реальную услугу при научно-критическом издании армянских авторов. Эти фрагменты немаловажны и при исследовании идейной направленности отдельных памятников армянской литературы.

9. Еще одним доказательством функционирования творений Григория Назианзина в средневековой армянской литературе являются возникшие на местной почве толкования. Рукописи сохранили как толкования отдельных трудов Григория, так и книг или циклов гомилий. Их авторами выступают Н. Благодатный, Вардан Ахпатечи, Елия Сириин, Давид Кобайреци, Иоанн Дьякон, Григорий Абасян, Мхитар Гош, Георг Ерзынкаци, Фома Мецопаци и Месроп Гандзакеци. Этот перечень прежде всего говорит о непрерывности интереса к наследию Григория, о значимости тех литературных норм и моральных представлений, которые воплощены в сочинения византийского писателя IV века и которые находили широкий отклик и надлежащее применение в армянской действительности. Фактически мы можем говорить о приемственности как в рамках оригинальной армянской литературы, так и относительно ее истоков, отводя осязаемое место наследию Григория Назианзина.

10. Исследуя проблему «Григорий Назианзин в древнеармянской литературе» почти исключительно на основании рукописных текстов, мы вплотную подошли к новой задаче—издания древнеармянских переводов наследия Григория. Автором данной монографии выявлены и изданы переводы нескольких гомилий и знаменитой «Эпитафии». В приложении к этой книге осуществляется издание еще нескольких сочинений. Таким образом, наряду с изучением проблем истории древнеармянской переводной литературы, арменоведов-византиноведов предстоит осуществить научное издание переводов важнейших памятников греческой литературы византийского периода. Это относится и к древнеармянским переводам-редакциям литературного наследия «трех великих каппадокийцев».

Յ Ա Ն Կ Ե Ր

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ*

- Արգարյան Գ. 17, 18, 34
 Արդումսեխ (գրիչ) 244
 Արեղյան Մ. 13, 33, 60, 123
 Արրահամ (գրիչ) 241, 242
 Արրահամյան Ա. 33, 143—145
 Ազաթանգեղոս 34, 141
 Ադոնց Ն. 17
 Աղարէ (գրիչ) 247
 Աթանաս Աղեքսանդրացի (նաև՝ Աթանաս եպիսկոպոս) 7, 33, 39, 41, 78, 84, 86, 106, 117, 129, 131, 161, 166, 177
 Ալեքսան (գրիչ) 242, 245, 246
 Ալիշան Ղ. 14, 37, 38, 41, 46, 47, 48, 171, 172, 189
 Ալպոյաճյան Ա. 49
 Ակինյան Ն. 7, 8, 18, 40, 42—44, 47, 59, 70, 83, 105, 106, 108, 114, 171, 172, 178, 179, 183, 184, 193
 Ակորշայ Սոշովցի (գրիչ) 246
 Ահարոն վարդապետ 87
 Աղեքսանդր 71, 105, 106, 108
 Աղեքսանդր Զուղայեցի (գրիչ) 244
 Աճառյան Հր. 13, 18, 115, 189
 Ամբակում 76
 Ամփիլոքիոս 17
 Անանիա Նարեկացի 139
 Անանիա Շիրակացի (նաև՝ Անանիա վարդապետ) 29, 32—34, 143—146
 193
- Անանուն 168
 Անասյան Հ. 13, 44, 45, 53, 60, 68, 70, 75, 157, 179, 181, 183, 184, 188
 Անաքսագոր 132
 Անթիմոս 26
 Անտոն (գրիչ) 242
 Աշակերտ Յովհ. Երզնկացուց 242
 Աշոտ Սմբատ թագավոր 59
 Ապողինար Լավողիկեցի 27, 57, 98, 158, 161, 167
 Առաքել (գրիչ) 242
 Առաքել Բաղիշեցի 42
 Առաքել Դավրիժեցի 73
 Առաքելյան Վ. 114
 Առաքել վարդապետ տե՛ս Առաքել Բաղիշեցի
 Աստուածատուր (գրիչ) 242, 243, 245, 247
 Աստուածատուր (գրիչ), աշակերտ Աղեքսանդր կաթողիկոսի 247
 Աստուածատուր, Ըսպահանցի (գրիչ) 247
 Ավագ (գրիչ) 243
 Ավագտէր (գրիչ) 243
 Ավետ (գրիչ) 242, 247
 Ավետիս (գրիչ) 241, 245, 248
 Ավետիս սարկավագ (գրիչ) 243
 Ատիկոս 39, 87

* Ցանկում շենք արտացոլել. ա) ամենուր հանդիպող Գրիգոր Նազիանզացի անձնանունն իր զանազան դրսևորումներով (Անձիանձի, Ազաղի, Անցիանցի, Աղիւզոյ, Աղիազու, Նազազացի, Նազիանզեցի, Սուրբ Գրիգորիս (էջ 144), Գրիգորիոս Մեծ (էջ 20), Մեծն Գրիգոր Աստուածարան (էջ 153) և այլն, բ) աստվածաշնչական անունները, գ) հունարեն անձնանունները, որոնց հայերեն համապատասխանություններն ունենք նույն էջում:

- Արիոս (նաև՝ Արիանոս) 23, 27, 28, 39, 79, 87, 98, 99, 128, 134, 139, 155, 169, 173, 174, 176
- Արիստակես (գրիչ) 249
- Արիստակես վարդապետ տե՛ս Արիստակես կաստիլերցի
- Արիստոտել 187
- Արձան թագավոր 59
- Արթուրյան (գրիչ) 241
- Բարկեն կաթողիկոս 14, 41
- Բաղդասար դպիր 45
- Բարադամ (գրիչ) 241
- Բարթիկյան Հր. 31
- Բարսեղ (գրիչ) 241
- Բարսեղ Երէց (գրիչ) 243
- Բարսեղ Կեսարացի 6, 18—29, 32—34, 36, 37, 39, 40, 42, 44—49, 57, 59, 60—70, 71, 78, 85, 86, 89, 91, 96, 97, 100, 102, 103, 106, 110, 111, 116, 118, 119, 121, 122, 125, 129, 132, 133, 140, 141, 150, 155, 161, 172, 174, 177, 185, 187, 191, 192, 246
- Բյուզանդացի ն. 53
- Բողոյան Ա. 149
- Բրաբրիոն (գրիչ) 248
- Դաթրճյան Հ. 21, 57, 103
- Դալիմբեարյան Գր. 74—75
- Դալուստ (գրիչ) 244
- Դասպար 246
- Դեորգ (գրիչ) 241, 244, 248
- Դեորգ Երզնկացի (նաև՝ Գեորգ վարդապետ) 107, 189, 190, 193
- Դերմանոս 56, 148
- Դի կաֆոնտեն 51, 53, 74, 80
- Գորգոնիա (Նազիանզացու քույրը) 6, 16, 95
- Գրիգոր Արասա որդի (Արասյան) 10, 57, 59, 74, 94, 171, 183, 184, 192, 194
- Գրիգոր Բաղիշեցի (գրիչ) 246
- Գրիգոր (գրիչ) 242—244, 247, 248
- Գրիգոր Գ. 38
- Գրիգոր Եպիսկոպոս տես Գրիգոր Տղա
- Գրիգորէս Երզնկացի (գրիչ) 243
- Գրիգոր Լուսավորիչ (նաև՝ Գրիգորիոս, Գրիգոր Պարթև) 34, 35, 40, 59, 60, 62, 63, 190
- Գրիգոր կաթողիկոս տե՛ս Գրիգոր Տղա
- Գրիգոր Կեսարացի 14
- Գրիգոր Մագիստրոս 45, 88
- Գրիգոր (Նազիանզացու հայրը) 16, 95
- Գրիգոր Նարեկացի 44
- Գրիգոր Սքանչելագործ 34, 39, 40, 73, 166
- Գրիգոր Նյուսացի 6, 29, 32, 33, 39, 40, 52, 53, 54, 55, 56, 61, 63, 81, 96, 100, 101, 106, 148, 171, 172, 177, 184, 185, 192
- Գրիգոր Սամսոնեցի 244
- Գրիգոր Վկայասեր 14, 38, 45, 88
- Գրիգոր Տաթևացի 41, 190
- Գրիգոր Տարօնցի (գրիչ) 244
- Գրգիոր Տղա 12, 37, 144, 155, 156, 168, 193
- Գուշակյան Թ. 107
- Գևորգ Երզնկացի 171, 194
- Գևորգ Ուռնեցի 36
- Դամասիոս Հռոմա 32
- Դանիէլ (գրիչ) 241, 243
- Դավիթ 48, 62, 165, 203
- Դավիթ Ալավկա որդի 59
- Դավիթ Անհաղթ 47, 48
- Դավիթ (գրիչ) 242
- Դավիթ Թարգմանիչ (Թարգման) 193
- Դավիթ Հաղբատեցի 74, 192
- Դավիթ Հարքացի տե՛ս Դավիթ Անհաղթ
- Դավիթ Քորայրեցի (նաև՝ Դավիթ Մեկնիչ, Դավիթ վարդապետ) 8, 10, 57, 59, 60, 74, 107, 171, 173, 177, 179, 180, 181—186, 190, 192, 194
- Դիմես (գրիչ) 244
- Երբրիանոս (գրիչ) 242
- Եզեկիել (գրիչ) 249

- Եղեկիել սարկավագ (գրիչ) 241
 Եղնիկ Կողբացի 48, 59, 122
 Եղնիկ վարդապետ տե՛ս Եղնիկ Կողբացի
 Եղիա 206
 Եղիա Ասորի 10, 74, 170, 171, 173—
 175, 180, 181, 182, 194
 Եղիար (գրիչ) 241
 Եղիշե վարդապետ 59
 Եսայի Նշեցի 172, 242
 Եվագր Պոնտացի 29, 30
 Եվնոմիոս 28, 56, 73, 78, 169, 173,
 176, 180
 Եվսեբիոս Կեսարացի 24, 106
 Եվստաթիոս Սեբաստացի 49, 158, 191
 Երեմիա (գրիչ) 243
 Եփրեմ Ասորի 38, 44, 89, 161
 Եփրեմ (գրիչ) 246, 247
- Զատիկ Պօհտանի որդի (նաև՝ Զատիք
 Պօղտանի), գրիչ, 245
 Զարրհանալյան Գ. 6, 7, 9, 14, 19, 30,
 49, 53, 71, 83, 104, 105, 189,
 193
 Զաքարիա 38, 246
 Զաքարիա Երզնկացի (գրիչ) 245
 Զաքարիա սարկավագ (գրիչ) 248
 Զաքէոս (գրիչ) 244
- Էկլեսիաստիկոս 88
 Էպիկուր 132
 Էրեմիա (գրիչ) 247
- Ըստկարյան Վ. 13
- Թեոդոս Մեծ (նաև՝ Մեծն Թեոդոս,
 Կայսր) 29, 32, 33, 41, 174
 Թեոդոր Լպիսկոպոս 23
 Թովմա Արծրունի 138
 Թովմա Մեծուփեցի 171, 172, 194
 Թորոս (գրիչ) 241
 Թոփճյան Հ. 107
 Թումա (գրիչ) 248
- Իգնատիոս (գրիչ) 247
- Լիրանիոս (նաև՝ Ղիրիանոս) 18, 19
 Լյուբարսկի Յա. 121
- Խալաթյանց Գր. 7, 30, 53, 105, 127,
 128, 132, 135
 Խաղբակյանք 75, 178
 Խայամ 60
 Խաչատրյան Պ. 7, 43
 Խաչատուր (գրիչ) 244—246
 Խաչատուր դպիր (գրիչ) 245
 Խաչատուր Կեչառեցի 60, 52
 Խաչիկ (գրիչ) 242
 Խաչիկյան Լ. 40, 41, 49, 59, 60, 87
 Խաչիկ սարկավագ 84
 Խասպէկ (գրիչ) 246
- Ծերուն (գրիչ) 243
- Կալիսթենէս 105
 Կանայանց Ստ. 34
 Կարապետ (գրիչ) 242, 243, 244, 245,
 247, 248
 Կարապետ Բաղիշեցի 42, 43, 44, 244
 Կարապետ Փարխնդեցի 43
 Կարլ Կրումբախեր 27
 Կարմեղոս 202
 Կեղար 165
 Կեսարիոս (նաև՝ Կեսար) 6, 28, 85,
 86, 94, 132, 133, 135, 156, 162,
 164—166, 195, 196
 Կիպրիանոս 71, 72, 77, 104, 184
 Կիրակոս (գրիչ) 247
 Կիրակոս Գանձակեցի 32, 37, 45, 177
 Կիրակոս (գրիչ) 243
 Կղեղոնիոս 73, 79, 80, 98, 120, 152,
 155, 158, 159, 163, 166
 Կյուրեղ Աղեքսանդրացի 33, 34
 Կյուրեղ Երուսաղեմացի (նաև՝ Կյուրեղ
 Երուսաղեմի) 32, 33, 41, 106,
 139, 166
 Կոմիտաս Կաթողիկոս 12, 59, 167
 Կոստանդիանոս 167, 177
 Կոստանդին Միրանածին 31
 Կոստանդին Քուլաթ (գրիչ) 241

- Կորյուն 12, 104, 115, 116, 118, 120—
123, 126, 193
Կրուզյուլ Ա. 22
- Հակոբ Կլայեցի (նաև՝ Հակոբ Հայոց
կաթողիկոս, Յակոբ այր) 185, 186
Հակոբ Ղրիմեցի 167
Հակոբյան Վ. 8, 9, 40, 45, 57, 83, 87
Հայրապետ (գրիչ) 243
Հարությունյան է. 75
Հեթում 87
Հեթում (գրիչ) 241
Հեղիաս 202
Հերակլիտ 132
Հերապետ Զուղայեցի (գրիչ) 246
Հիմերիոս 18
Հոմերոս 18
Հովհան Մանդակունի 12
Հովհաննես 71, 202
Հովհաննես Երզնկացի 39, 57, 74, 144,
161—163, 165, 166, 168, 194,
241
Հովհաննես Իմաստասեր (նաև՝ Հով-
հաննես Սարկավազ, Յովհանէս
վարդապետ) 10, 11, 12, 37, 38,
73, 151, 152, 171, 186, 187, 193,
194
Հովհաննիսյան Ա. 2. 40, 87
Հովհան Ոսկերեբան 18, 31, 73, 74,
106, 161, 166
Հովհան Որոտնեցի 40, 41, 189
Հովհան Օձնեցի 38
Հովսեփ (կաթողիկոսական տեղապահ)
123
Հովսեփյան Գ. (նաև՝ Գարեգին կաթո-
ղիկոս) 14, 41, 71, 75, 178
Հուլիանոս 6, 16, 19, 28, 72, 81, 83,
101, 102, 103, 116, 117, 135,
137, 138, 139
Հուսիկ եպիսկոպոս 13, 23, 30
- Ղազար (գրիչ) 242, 246, 247
Ղազար վարդապետ 190
Ղազար Փարպեցի 13, 32, 33, 106, 141
Ղազինյան Ա. 42
- Ղուկաս (գրիչ) 246, 248
- Մալխասյան Ստ. 7, 13, 32, 106, 151
Մակարայեցի 77, 104
Մակար 146
Մակեդոն 28, 32, 39, 43, 87, 99, 141,
174, 176
Մաղաքիա Բաբերթացի (գրիչ) 244
Մամաս 76
Մամբրե 48
Մամիկոնյան Վ. 13, 32
Մանանդյան Հ. 72
Մանուկյան Գ. 9
Մատթեոս Ուռհայեցի 36
Մատթէոս (գրիչ) 241, 243
Մարգարէ վարդապետ (գրիչ) 244
Մարգարյան Հ. 171, 177
Մարկոս (գրիչ) 241, 246
Մարկոս Նորընծա (գրիչ) 247
Մարտիրոս (գրիչ) 241, 245, 246, 248
Մարտիրոս Համթեցի (գրիչ) 247
Մաքսիմոս Իմաստասեր (նաև՝ Մաքսի-
միանոս) 28, 81, 101, 132, 177
Մելգոն (գրիչ) 246
Մելիտոս Անտիոքացի (նաև՝ Մելիտոս,
Մելիտոս եպիսկոպոս, Մելիտոս
Անտիոքու) 29, 32, 52, 53, 54,
81, 82, 96, 192,
Մելիք-Օհանջանյան Կ. 32, 115
Մելքիսեդ (գրիչ) 242
Մելքոն Կարնեցի (գրիչ) 248
Մեծն Դավիթ 48
Մեսրոպ (գրիչ) 249
Մեսրոպ Գանձակեցի (նաև Մեղապարտ
Մեսրոպ) 10, 11, 169, 171, 189,
190, 194, 248
Մեսրոպ Մաշտոց 8, 13; 18, 41, 56,
60, 61, 69, 72, 74, 75, 77, 78,
107, 116, 118, 120—123, 137, 140,
166, 177, 195, 196
Մինաս (գրիչ) 245
Մինասյան Լ. 87
Միրումյան Կ. 187
Միքայել 69
Միքայել (գրիչ) 246

- Մխիթար Այրիվանեցի 8, 74, 75, 82,
 166, 189, 192, 241
 Մխիթար Գոշ 10, 60, 171, 184, 188,
 194
 Մխիթարյաններ 7
 Մխլայիմ 107
 Մկրտիչ (գրիչ) 242, 245, 249
 Մկրտիչ դպիր (գրիչ) 242
 Մկրտիչ էմին 151
 Մկրտիչ կղերիկոս գրչապետ 246
 Մկրտիչ սարկավազ (գրիչ) 246
 Մնացականյան Ա. 189
 Մոզեսաոս (Վաղես Թագավորի ներկա-
 յացուցիչ) 97
 Մովսես (գրիչ) 241, 242, 247
 Մովսես Թարգմանիչ 107, 193
 Մովսես Խորենացի 6, 7, 9, 12, 13, 32,
 53, 105, 115, 126, 127, 137, 138,
 139, 140, 141, 193
 Մովսես վարդապետ 44, 48
 Մովսեփիկ (գրիչ) 243
 Մուրադյան Կ. 17—19, 23—26, 48,
 49
 Մուրադյան Պ. 178
 Մօրիկ 64
- Յակոբ (գրիչ) 244, 245, 249
 Յակոբ Թոխատցի (գրիչ) 248
 Յարութիմ Վանեցի (գրիչ) 248
 Յոհան (գրիչ) 241
 Յոհան Եղբակայեցի (գրիչ) 243
 Յոհանէս (գրիչ) 241, 243, 244
 Յոհաննէս Իսպահանցի (գրիչ) 247
 Յոհաննէս, որդի Ամիր ոսկերչի (գրիչ)
 244
 Յոհան վարդապետ 38
 Յովակիմ (գրիչ) 249
 Յովանէս (գրիչ) 242, 243, 245, 246
 Յովանէս Դէոսկորոս (գրիչ) 243
 Յովանէս կրօնավոր (գրիչ) 243
 Յովանէս սարկավազ (գրիչ) 241
 Յովանէս քահանա (գրիչ) 243
 Յովաննէս (գրիչ) 241
 Յովհաննէս (գրիչ) 241—247
 Յովհաննէս Կաֆացի 244
- Յովհաննէս Տէրոյենց (գրիչ) 249
 Յովսէփ (գրիչ) 247
 Յովսէփ Մոնոզոն (գրիչ) 245
 Յուսիկ (գրիչ) 244
 Յուսիկ Զահանգալ (գրիչ) 248
- Նահապետ Շոռթեցի (գրիչ) 248
 Նեկտառիոս Կոստանդնուպօլսի 32
 Նեմեսիոս Եմեսացի 74, 187
 Նեստոր 99
 Ներսէս (գրիչ) 241, 242, 245, 248
 Ներսես Լամբրոնացի 44, 45, 74, 177
 Ներսես Մեծ (նաև՝ Ներսես Հայոց վե-
 րադիտող), 37, 41, 178
 Ներսես Շնորհալի 10, 12, 14, 37, 38,
 44, 74, 120, 144, 153, 154, 168,
 171, 172, 178, 192, 193
 Նոմիոս 39, 87
 Նոնա (Նազիանզացու մայրը) 16
 Նոննոս 72
 Նորայր Բյուզանդացի 6, 7, 127, 135,
 140
- Շահիկ (գրիչ) 244
 Շահինշահ (գրիչ) 242
 Շուշանիկ 120
- Ոհանէս (գրիչ) 242, 246
 Ոհաննէս միայնակեաց (գրիչ) 243
 Ոսկյան Հ. 13, 40, 43, 44, 107, 189
- Չամչյան Մ. 46, 47
- Պատկանյան Ք. 145—148
 Պետրոս (գրիչ) 244, 246, 247
 Պիոս 59
 Պողարյան Ն. 14, 28, 29, 42, 54, 87,
 106, 107, 170, 173, 183, 189
 Պողոս 48, 200, 206
 Պրոյերեսիոս (նաև՝ Պարույր Հայկա-
 զըն) 19, 49, 83, 191
 Պոռչյանք 75, 178
- Սահակ (գրիչ) 244, 246, 247
 Սահակ Պարթև 60, 107

- Սամարացի 206
 Սամվել Անեցի 186
 Սամվել Անեցու շարունակող 185
 Սամուէլ (գրիչ) 246
 Սարգիս (գրիչ) 242, 245, 246
 Սարգիս Եղեւացի (գրիչ) 246
 Սարգիսյան Բ. 29
 Սարկիթացի 206
 Սերենու 17, 34
 Սերերիանոս 89
 Սեղրեսարոս 53
 Սիմէոն (գրիչ) 242
 Սիմէոն Զամոսցացի (գրիչ) 245
 Սիմոն (գրիչ) 246
 Սոկրատ Սրուաստիկոս 15, 19, 29, 49, 53, 55
 Սողոմոն Ավետով (գրիչ) 249
 Սոսթենէս (գրիչ) 243
 Ստեփան Դաշտկոճեալ (գրիչ) 248
 Ստեփաննոս Դեմիւրճօղլինց (գրիչ) 249
 Ստեփաննոս Թոխաթցի (գրիչ) 245
 Ստեփաննոս սարկավազ (գրիչ) 243, 244
 Ստեփանոս Ասողիկ 12, 13, 35, 36, 68, 74, 150, 153, 166, 167, 168, 192, 193
 Ստեփանոս (գրիչ) 241, 242, 244, 245
 Ստեփանոս Սյունեցի 12, 34—36, 56, 144, 148, 149, 167, 168, 192, 193, 194
 Ստեփանոս Վահագցի (գրիչ) 241
 Ստեփանոս Օրբելյան 39
 Սրապիոն (գրիչ) 244, 247
 Սրապյան Ա. 60, 164, 165
- Վաղես (կայսր) 23, 25, 97, 177
 Վահան Ամատունի 123
 Վահրամ Վկայասեր 88
 Վանական վարդապետ 46, 47, 59
 Վարդան Այգեկցի 12, 144, 157, 158, 194
 Վարդան Արեւելցի 161, 167
 Վարդան (գրիչ) 241, 242, 245, 246
 Վարդան Կիլիկեցի (գրիչ) 241
- Վարդան Հաղբատեցի (նաև՝ Վարդան վարդապետ) 10, 171—173, 178—181, 194
 Վարդան Հիդանցի (գրիչ) 245
- Տաշյան Հ. 14, 28, 29, 42, 52—55, 57, 70, 75, 84, 87, 89, 105, 108, 172, 178, 183, 184, 186, 189
 Տեր-Ավետիսյան Ս. 71
 Տեր-Մինասյան Ե. 8, 18, 19, 22, 26, 27, 30, 53, 106
 Տեր-Մկրտչյան Գ. 13, 32, 34, 106
 Տեր-Մկրտչյան Կ. (նաև՝ Կարապետ Եպիսկոպոս) 8, 75, 87, 106
 Տեր-Մովսեսյան Մ. 19, 75
 Տեր-Պողոսյան Պ. 178, 184, 186
 Տէր-Արրահամ (գրիչ) 246
 Տէր-Գրիգոր (գրիչ) 247
 Տէր-Պօղոս (գրիչ) 244
 Տիմոթեոս Աղեքսանդրի 32
 Տրդատ 246
 Տուղեորդի 155
- Բաֆֆի 83
- Ուխտանես 167
- Փիլոն 140
- Քեշիշյան Մ. 38
 Քյոշկերյան Ա. 42
- Օգոստինոս Սեբուլա 75
 Օրիգենես 23
 Օրմանյան Մ. 48, 106
- Յարար Յ. 18, 51, 102,
- Агапит А. 15, 16, 17, 19, 20, 21, 23, 26, 29, 30
 Анания Ширакаци 253
 Армянские Аршакиды 7
 Асолик 251
- Вардан Ангекци 253

Вардан Ахпатечи 253
Василий Кесарийский 18, 250

Георг Ерзынкаци 253
Григорий Абасян 253
Григорий Нисский 251
Григорий Отрок (Тга) 253
Говоров А. 103

Давид Кобайреци 253
Давид (переводчик) 252

Евстафии Севастийский 251
Елия Сирин 253

Иоанн Дьякон (Саркаваг) 253
Иоанн Ерзынкаци 253

Корюн 115, 252
Круглов А. 15, 18

Маргарян А. 177
Мелитии Антиохийский 251
Месроп Гандзакеци 253
Михаил Пселл 121

Мовсэс (переводчик) 252
Мовсэс Хоренаци 252, 253
Мхитар Айриванеци 252
Мхитар Благодатный (Щнорали) 253
Мхитар Гош 253

Перфирий А. 103.
Плотников В. 17
Проересий 251

Степанос Таронский (Асолик) 36, 253
Стефан Сюнеци 251, 253

Фаррар Ф. 15, 16, 21, 22, 25, 29, 69
Фома Мецопеци 253

Халатьянц Гр. 127

Цветков Вл. 15, 20, 21

Эмин Н. 36
Gay Lafontaine 69, 83
Justian Mossay 83
Manandian A. 72
Otto Bardenhewer 28
օպո՞ծ ցարգաշելօ 120

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ագուլիս (Թովմա առաքելալի վանք) 246
Աթենք 17, 19—22, 46, 47—49, 122,
191

Աղեքսանդրիա 18, 22

Աղթամար 243

Ամենափրկիչ վանք 87

Ամրդօլու վանք 247

Անտիոք 18, 19, 53, 191

Ասորիք 19, 178, 198

Ասպահան 248

Ավագ վանք 244

Ավարայր 123

Ատանա 241

Արիանդ 15, 16, 30, 51

Արևելք 23, 27, 51

Բաղէշ 245, 246

Բյուզանդիա 11, 13, 29

Գեղարդայ վանք 241

Գլակայ վանք 246

Գլաձոր 87, 242, 243

Գոմաց վանք (Բաղէշ) 244

Դեղձուտի վանք (Մահկանաբերդ) 241

Եգիպտոս 64, 80, 82, 83, 100, 138, 192

Եզնկա 87, 242

Եկեղեաց դավառ 244

Եղիազարու վանք 241

Երկոտասան առաքելոց վանք 249

Երուսաղեմ 77, 195, 242, 247, 248

Եփեսոս 9

- Զանչրլու գիւղ 249
 Զմիւռնիա 249

 Էջմիածին 247, 248, 249
 Էտրէնէ 245

 Թեկղի անապատ 26
 Թեհրան 13
 Թէոդուպօլիս 248

 Իլով 242, 245

 Լեհաստան 245
 Լլվ 245
 Լիմ 246
 Լով 245

 Խլաթ 245

 Կայիփոսի վանք (Երզնկա) 244
 Կապոսի անապատ (Երզնկա) 244
 Կարին 190, 248
 Կարկառ 245
 Կարմիր վանք 245
 Կարմուրջ գիւղ 243
 Կաֆայ 245, 246
 Կեսարիա կապադովկացւոց 34, 76
 Կեսարիա (նաև Ղայսարիա) 15, 17, 18, 22, 25, 26, 27, 47, 48, 49, 101, 125, 174, 190, 191
 Կիլիկիա 37, 178, 179
 Կոստանդնուպօլիս 29, 30, 33, 41, 54, 56, 81, 88, 89, 96, 174, 177, 180, 188, 244, 246, 247, 248

 Հաղրատ-Սանահին 155, 241
 Համիթ 245
 Հայաստան (նաև Հայք) 7, 11, 39, 41, 87, 88, 103, 153
 Հնձուց վանք 246
 Հոռմ 49

 Դրիմ 243
 Դուլթիկ գիւղ (Բաղեշ) 245, 246

 Ըաննի Խուղ 242

 Մերտին 247

 Յովհաննավանք 248

 Նազիանզ (նաև՝ Նազիազ) 30, 46, 47, 107
 Նանէնց գիւղաքաղաք 248
 Նիկիա 174
 Նոր Զուլա 15, 87, 244, 246, 247
 Նոր Զուլայի Ամենափրկիչ վանք 57, 71

 Շատախ գիւղ (Գանձակ)—246
 Շօշ 245

 Ոստան 243

 Պաղեստին 18
 Պետերբուրգ 13
 Պոնտոս 22, 23, 24

 Սանահին 71, 241
 Սասիմա 25, 26
 Սելևկիա 26
 Սեպուհ լեռ 87
 Սերկեսիլի գիւղ 243
 Սէշով (Սուշավա) 246
 Սիոն 87, 88, 241
 Սիս 242
 Սպահան 246, 247
 Ստ. Նախավկայի վանք (Շամբ) 246
 Սուրբ Աստուածածին 241, 247
 Սուրբ Կարապետի վանք (Տարօն) 242
 Սուրբ Հրեշտակապետաց վանք (Սերաստիա) 246
 Սուրբ Պօղոս անապատ 241
 Սուրբ Սարգսի և Ստեփանոս Նախավկայի վանք 241

 Վանկունք վանք 241
 Վարազ 243

Վերին նորավան 243
 Վժանայ վանք 242
 Վիեննա 77, 78, 84, 177, 183, 184,
 195
 Վրաստան 7

Տաթև 87, 247
 Տիան 23, 26
 Տշող (Ռշտունիք) 241

Փոսոյ վանք 242
 Փորր Հայք 46, 49, 191

Քաշեր գիւղ (Գողթն) 247
 Քաջբերունի 41
 Քիմճակ (Ղրիմ) 242
 Քորբէզ քաղաք 246

Армения 250
 Афин 251

Египет 252

Малая Армения 251

Палестин 18

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Ն ե ր ա ծ ու թ յ ու ն 5

Գ Լ Ո Ի Խ Ա

Գրիգոր Նազիանզացու կյանքն ու դործունեությունը 13

Գ Լ Ո Ի Խ Բ

Նագիանզացին և հայերը

ա) Նազիանզացին հայ մատենագիրների վկայություններում 32

բ) Հայերի հիշատակությունը Նազիանզացու երկերում 46

Գ Լ Ո Ի Խ Գ

Մատենագրական ժառանգությունը

ա) Հեղինակային պատկանելության հարցեր և վերագրվող գրվածքներ 51

բ) Նազիանզացու գիրք-ժողովածուները և դրանց հայերեն խմբագրությունները, մատենագրական վաստակի ընդհանուր գնահատություն 69

Գ Լ Ո Ի Խ Դ

Նագիանզացու մատենագրական ժառանգության հայերեն քարգմանությունների հետքերը

ա) «Դամբանականի» թարգմանության բնույթն ու ժամանակը, «Դամբանականը» կորյունի աղբյուր 104

բ) Նազիանզացու գիրք-ժողովածուները Խորենացու աղբյուր 126

Գ Լ Ո Ի Խ Ե

Նագիանզացու նառերից և քղթերից կատարված հետազոտված ֆաղուսները և դրանց բնույթը 143

Գ Լ Ո Ի Խ Զ

Նագիանզացու մատենագրական ժառանգության հայերեն մեկնությունները 169

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

Հրատարակվող ճառերի ձեռագրերը և բնագրերի կազմության սկզբունքները 195

Յինքն յագարակէ անդրէն եկեալ 197

Յինքն եւ ի բանս երկրորդ 212

Ի Կեսարիոս եղբայրն իւր 221

Օգտագործված ձեռագրերի ժամանակագրական տախտակ 240

Резюме 250

Ցանկեր (անձնանուններ, տեղանուններ) 254

ԿԻՄ ՄԱՄԲՐԵԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՉԱՑԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Հրատ. խմբագիր Ա. Հ. Շաղգամյան
Նկարիչ Լ. Ա. Սադոյան
Գեղ. խմբագիր Հ. Ն. Գործակալյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ է. Ա. Սոխիկյան

ИБ 826

Հանձնված է շարվածքի 12.07.1982: Ստորագրված է տպագրության 7.04.1983 թ.:
ՎՅ 11375: Չափը 60/90: Թուղթ № 1: Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն: Տպագրական 16,5 մամուլ: Հրատ. հաշվարկ 16,65 մամուլ: Տպաքանակ 1500:
Պատվեր 716: Հրատ. № 5822: Գինը 2 ռ. 75 կ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ. 24 գ
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. էջմիածին
Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин.

Ἑλληνιστικὰ φωνητικὰ

ἔξρ	Σημ	Ἑλληνιστικὸν	Ῥωμαϊκὸν ἔξρ
32	6 φ.	ζωζερρ	ζωζερρ
49	10 ἡ.	ασιλέως	βασιλέως
69	7 ἡ.	принадлежит	принадлежит
78	11 φ.	ἔξ 783ρ—186ρ	ἔξ 783ρ—786ρ
81	7 ἡ.	αι	αι
81	1 ἡ.	ι	οι
103	14 φ.	Α. Περφίριϋ	Α. Πορφίριϋ
111	10 φ.	τῶ	ῶ
111	12 ἡ.	γλώσσης	γλώσσης
111	11 ἡ.	γλώσσης	γλώσσης
124	8 ἡ.	ρησρ.	ρσρ.
139	6 ἡ.	μπνεόμενα	ἐμπνεόμενα
143	11 ἡ.	ωη	ωη
194	3 φ.	ρησρ	ρησρ
195	2 ἡ.	ἐπα	ἐπα—
260	6 φ.	Περφίριϋ Α.	Πορφίριϋ Α.

ԿԻՄ ՄԱՄԱՐԵՆԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՁԱՑԻՆ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Գրքի անունը	Գրող	Գրքի քանակ	Գն
Գրք 1	Գրող 1	1	25
Գրք 2	Գրող 2	2	30
Գրք 3	Գրող 3	3	35
Գրք 4	Գրող 4	4	40
Գրք 5	Գրող 5	5	45
Գրք 6	Գրող 6	6	50
Գրք 7	Գրող 7	7	55
Գրք 8	Գրող 8	8	60
Գրք 9	Գրող 9	9	65
Գրք 10	Գրող 10	10	70
Գրք 11	Գրող 11	11	75
Գրք 12	Գրող 12	12	80
Գրք 13	Գրող 13	13	85
Գրք 14	Գրող 14	14	90
Գրք 15	Գրող 15	15	95
Գրք 16	Գրող 16	16	100
Գրք 17	Գրող 17	17	105
Գրք 18	Գրող 18	18	110
Գրք 19	Գրող 19	19	115
Գրք 20	Գրող 20	20	120
Գրք 21	Գրող 21	21	125
Գրք 22	Գրող 22	22	130
Գրք 23	Գրող 23	23	135
Գրք 24	Գրող 24	24	140
Գրք 25	Գրող 25	25	145
Գրք 26	Գրող 26	26	150
Գրք 27	Գրող 27	27	155
Գրք 28	Գրող 28	28	160
Գրք 29	Գրող 29	29	165
Գրք 30	Գրող 30	30	170

ИБ 826

Հանձնված է շարվածքի 12.07.1982: Ստորագրված է տպագրության 7.04.1983 թ.:
 ՎՅ 11375: Չափը 60/90: Թուղթ № 1: Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն: Տպագրական 16,5 մամուլ: Հրատ. հաշվարկ 16,65 մամուլ: Տպաքանակ 1500:
 Պատվեր 716: Հրատ. № 5822: Գինը 2 ռ. 75 կ.:

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ. 24 գ
 Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. էջմիածին
 Типография Издательства АН Арм. ССР, 378310, г. Эчмиадзин.